




ԱՐԿԱՑԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ՈՒՌՈՒՍ
ՆԵՅԹԱՆԻ
ԴԵՍՊՈՒՆԸ



NOV 19 1996
ՄԴ 84 Ռ
Մ 162
84 Ռ
Մ 84 Ռ
Մ 162

Ռուսերենից թարգմանեց ՇԱՎԱՐՇ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՄԱԼԻԿ Վ.

Մ 162 Ռուսու Շեյթանի դեռպանը: [Վեպ, Դպր. միջին և բարձր տարիքի համար] Վլադիմիր Մալիկ, [Պոլու. թարգմ. Շ. Գրիգորյանը, նկ. Ա. Կարադյան].— Արև. Արևիկ, 1987.— 592 էջ. 4 նկ:

«Ռուսու Շեյթանի դեռպանը» պատմա-արկածային վեպ է. օտարերկրյա զավթիչների դեմ ուկրաինական ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի մասին: Վեպի գործողությունները տեղի են ունենում XVII դարում:

4809000000(127)
Մ 708 (01) 87 87

ՄԴ 84 Ռ

© Издательство «Детская литература», 1973
© «Արևիկ» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1987

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ



ԳԵՐԻՆ



ԱՐՅՈՒՆՔԻ ՃԱՄՓԱՆԵՐՈՎ

1

Հենց լեռան կատարով առաջ էին շարժվում երկու հոգի: Նրանց մութ, կորացած կերպարանքները հստակորեն գծագրվում էին դեկտեմբերյան սառը երկնքի հենքին: Անծայրածիր տափաստանի լուսթյան մեջ արևի տակ պսպղում էր արծաթափայլ ձյունը, որ ճերմակ սավանով պարուրել էր գետինը, նստել լայնատարած չոր աղբախոտի վրա:

Սառած, կոշկոռած ճանապարհը անսպասելիորեն թեքվեց գեպի ներքև:

Բարձրահասակ, հյուժված ծերունին ձախ ձեռքով բռնել էր մոտ տասնհինգ տարեկան մի պատանու ուսից, իսկ աջով հենվել էր կեռզլուխ ձեռնափայտին: Ծերունու ոտքը կպավ մի մեծ կոշտի և քիչ մնաց գետին գլորվեք, բայց տղան հասցրեց բռնել նրան: Գորշ կտավից մեծ մախաղը, որ օրորվում էր ծերունու մեջքին, ետ թռավ ու զարկվեց նրա նիհար, սմբած մարմնին: Լարերի աղեկաուր ծնգծնգոց լսվեց:

— Ա՛յ գրողը քեզ տանի հա՛, Յացկու,— շղային փրնթփրնթաց ծերունին: — Էս ինչ դարուփոսերի միջով ես տանում... էսպես որ գնաց, մեկ էլ տեսար կորզան՝ շարդեցի կամ էլ ոտքս կոտրեցի:

— Չես կոտրի, պապիկ, մի՛ վախենա,— հանգիստ պատասխանեց տղան՝ ցրտից կապտած քիթը վեր քաշելով: — Քիչ մնաց... Հրեն, Սեչը երևում է:

¹ կորզա— ուկրաինական երաժշտական լարային գործիք:

— Ի՞նչ ես քեզնից բաներ հնարում: Էդ ո՞նց թե երևում է: Որտե՞ղ:

— Հենց մեր դիմաց:

— Ճի՞շտ:

Մերունին կանգ առավ և, բարակ, կնճռապատ վիզը առաջ ձգելով, աչքերին փոխարինող խոր ընկած մութ խոռոչները հառեց կապույտ սառցե լայնարձակությանը: Նրա այտերի վրայով արցունքներ էին հոսում:

Ջով քամի խփեց դեմքին:

Մերունին հանկարծ սկսեց ծանր շնչել և ոսկրոտ մատներով ամուր սեղմեց իր ուղեկցի ուտը: Հետո ծունկ շոթեց, մի կողմ նետեց ոչխարենու բրդոտ փափախը և մինչև դետին խոնարհեց ճերմակահեր գլուխը: Կրծքից ոչ այն է հառաչանք դուրս թռավ, ոչ այն է՝ կական: Շուտով տղան մի անհասկանալի մրմունջ լսեց. ծերունին հավանաբար աղոթում էր:

— Դե զնանք, պապիկ, թե չէ կօռենք կմնանք էո ոտքում... Ախր շորս կողմից փշում է,— սկսեց համոզել տղան՝ գլուխը քաշելով շուխաջի մաշված օձիքի մեջ:— Աղոթելու տեղ գտար... Եկեղեցում հո չես, ի՞նչ է:

Բայց ծերունին կարծես չլսեց այդ խոսքերը: Փեշով սրբեց արցունքոտված դեմքը, ոտքի ելավ և մի քանի անգամ օդ ներշնչեց, ասես փորձում էր համը:

— Ճիշտ որ Սեչն է,— խուլ ձայնով մրմնջաց նա:— Գարրնոցների ծխահոտն եմ առնում... Քամին երկաթի տաք-տաք պեծեր է բերում... Կա-չկա դարբինները երկաթը շատ են պահել քուրայում... Մեկ էլ նոր թխած հացի հոտ եմ առնում... Ջգո՞ւմ ես, Յացկո:

Յացկոն չպատասխանեց. նա ոչինչ էլ չէր զգում: Միայն քմծիծաղով գլուխը տմբտմբացրեց. համա թե բան ասաց ծերունին, հա՛... Երկաթի պեծեր... Նոր թխած հաց... Ախր մինչև Սեչ դեռ լրիվ հինգ մղոն կա... Գավազանովդ դեռ շատ կթխկթխկացնես... Փշելով կտաքացնես սառած ձեռքերդ... Թե որ թաթմաններ ունենար, լավ-վատ, էլի մի կերպ կդիմանար: Իսկ այսպես ճար ու հնար չկա: Մատների ծայրերն այնպես են փայտացել, որ սաստիկ ցավում են, ոնց մթ կտրված լինեն... Իսկ շուրջը մերկ, ամայի տափառտանն

է: Քամին ուժեղ չէ, բայց թափանցում է մինչև ոսկորները:
— Ինչո՞ւ չես խոսում,— բարկացավ ծերունին:— Չլինի՞
խաբեցիր ինձ, ավազակ, թե Սեչն արդեն երևում է: Հը՞:
Չլինի՞ ծիծաղում ես կույր ծերուկիս վրա:

— Հավես ունե՞մ,— փնթփնթաց Յացկոն: — Ինքս էլ
չտապում եմ էնտեղ, ոնց որ հարազատ մորս մոտ:

— Գուցե դա իսկի էլ Սեչը չէ՞,— հարցրեց ծերունին:—
Ասա ինձ, հովտում գետ տեսնո՞ւմ ես:

— Ախր ասում եմ, չէ՞, Սեչն է... Հրեն արևի տակ պըս-
պըղում է Դնեպրոյի բարակ սառույցը... Թե ջուրը... չգիտեմ,
էստեղից ինչ ջոկես... Փայլում է, ոնց որ արծաթ... Իսկ
թերակղզում երևում է ամրոցը: Լավ տեսնում եմ պարիսպ-
ները՝ սուր ատամներով: Եվ աշտարակն եմ տեսնում դար-
պառի վերևում... Մենակ չեմ ջոկում, թե էնտեղ, մեջտե-
զում ինչ շինություն է... Հեռու է: Քամին էլ աչքերս արցունք
է լցնում, ոչուփուչ լինի, հա՛:

Ծերունին դողացնում էր, ասես տենդի մեջ լիներ:

— Իսկ եկեղեցին... եկեղեցին տեսնո՞ւմ ես ամրոցի
մեջտեղում:

— Էն էլ ո՞նց: Հրեն ոսկեզօծ գմբեթը ոնց է պսպղում:

— Դա է, մեր մայր Սեչը,— շնչաց ծերունին և դատարկ
ակնախոռոչներն ուղղեց այն կողմը, որտեղ, ինչպես նրան
թվում էր, երևում էր կազակական եկեղեցին:— Վերջա-
պես հասա՛: Քսանհինգ տարի անց, բայց հասա՛... Կույր,
հալից ընկած... Բայց գոնե կմեռնեմ յուրայինների, տխ-
ւակեր-տղաների մոտ...

Նրա բարձրահասակ, նիհար կերպարանքն ասես քարա-
ցել էր երկնքի կապույտ հենքի վրա: Ծերունին ինչ-որ բա-
նով վիթխարի թուշուն էր հիշեցնում՝ և՛ թևերի նման առաջ
պարզած ձեռքերը, և՛ մեծ, կեռ քիթը, և՛ սպիտակ քաթանի
տարատի մեջ պարտակված ոտքերը. իսկ և իսկ մեռնող
թուշուն, որ մագլցել է ժայռի կատարը, վերջին անգամ
բարձունքից նայելու հայրենի հզերքին, որին հրաժեշտ տա-
լու ժամանակը հասել է արդեն:

— Իսկ ամրոցի առաջ ի՞նչ կա: Տներ չկա՞ն էնտեղ,
նորից հուզվեց նա:

— Կան: Ոնց որ գյուղ լինի: Մեծ, գեղեցիկ:

— Ճիշտ որ Սեչն է: — Մերունին իրար անցավ, աճապարեց և նորից խիլավոր ձեռքով բռնեց տղայի ուսից: — Դե, արագ: էլ մլուլ մի՛ տա: Գնացինք... Որպեսզի մինչև արևի մայր մտնելը էնտեղ հասնենք...

Մերունին վեր քաշեց մախաղը, որ համարյա իջել էր մինչև կրունկները, գավազանով թխկացրեց սառած, զրքնգուն գետնին, և շորորալով ցած իջան սարից:

2

Կոռնեյ Մետելիցան, հաղթահասակ ու մարմնեղ այդ գապորոժցին, որ երկար, սպիտակ մազափունջ ուներ և ոսկե գինդ՝ աջ ալանջին, միաժամանակ սրամարտում էր երեք հոգու՝ Սեկաչի, Տովկաչի և Արսեն Զվենիգորայի հետ: Նա երկու ձեռքում էլ թուր ուներ բռնած և այնպիսի ճարպկությամբ էր բանեցնում, որ կտրիճները, թեև նեղում էին ծերունուն, բայց երկյուղով էին նայում ողջ Զապորոժիեում հայտնի սրամարտիկի թրի կապտապողպատագույն շանթերին: Լավ է, որ դա խաղ էր, մի՛ անզգույշ շարժում՝ և սուր շեղբը դաստակը մինչև ոսկորը կկտրեր, կմաշկեր զուխը:

Զմեռային անուժ արևը թեքվել էր դեպի մայրամուտ, ծածկվել՝ բերդապատնեշի ետևում և կուրացնում էր հարձակվողներին: Խորամանկ Մետելիցան դիտմամբ էր ջանել հակառակորդներին դնում աննպաստ պայմանների մեջ: Կովի մեջ ամեն բան էլ նշանակություն ունի. և՛ հարձակման համար հարմար պահ ընտրելու հմտությունը, և՛ նահանջը, եթե հարկ լինի, և՛ խաբուսիկ հարձակումը, որը հարվածի տակ է դնում թշնամուն, և՛ տեղանքից օգտվելը, և՛ արևի լույսը: Մեր կազակն այդ բոլորից օգտվում էր բացառիկ հնարամտությամբ և միաժամանակ ձեռ էր առնում իր աշակերտներին:

— Սեկաչիկ, շալվարդ վեր քաշիր, թե չէ մեկ էլ տեսար ոտներդ ընկավ: Առանց շալվար, գրողը տանի, քեզանից ի՞նչ կազակ դուրս կգա: Խոնջանդ էլ պինդ կապիր:

Կաղակների ծիծաղի ու հռհռոցի տակ Սեկաչը ձախ ձեռքով վեր քաշեց լայն, կարմիր շալվարը և, գազազսծ ու կատաղի, առաջ նետվեց: Բայց Մետելիցայի հուժկու

հարվածը սառեցրեց նրա կրակը. թուրը ձեռքից թռավ ու զնդոցով գլորվեց գետին: Սեկաչը շվարած կանգ առավ և կոշտուկոռ մատներով սկսեց քորել ածիլած ծոծրակը:

Իսկ Մետելիցան շթողեց շունչ քաշեն:

— Է՛յ, Տովկաչիկ, ի՞նչ ես շշմել, ոնց որ թրջված հավ լինես: Արագ, արագ շարժվիր, շան ձագ: Կազակի նման պահիր քեզ, ոչ թե թամբալ-անբանի,— գռչեց նա և թրի տափակ կողմով դաղեց ծանրաշարժ հաստիկի լայն թիկունքը:

Սա ոտքերը բխոված ձիու նման գայթեց, թքեց, թևքով սրբեց քրտնած ճակատը և դուրս եկավ շրջանից:

Մնաց մենակ Ջվենիգորան:

Մետելիցան իսկույն լրջացավ: Չախ ձեռքի թուրը մի կողմ շարտեց: Կնճիոններով ու սպիներով ակոսված դեմքին կապույտ երակներ հայտնվեցին: Ամեն ինչից երևում էր, որ այս հակառակորդի հետ նա հաշվի էր նստում:

Ամբոխը նույնպես սսկվեց, իսկական խաղը նոր էր սկսվում միայն:

Ջվենիգորան հենց ընթացքից անցավ հարձակման. նրա հարվածից կապույտ կայծերի հովհարածև ցայտեր դուրս թռան:

Նա, սլացիկ, վայելչակազմ այդ ջահելը, որ մուգ շիկավուն, խուճուճ քաքուլ ուներ, այլ ոչ թե մազափունջ, որը հատուկ է դապորոժցիներին, կրակ էր կտրել: Նիհար, թուխ դեմքը ծածկվել էր քրտինքի մանր ուլունքներով: Արտահայտիչ թավ հոնքերի տակ մուգ մոխրագույն աչքերը փայլում էին հիացմունքից:

Թրերը չէին հանդարտվում ոչ մի ակնթարթ, կովողների ոտքերի տակ գվվում էր սառցից ճաքճքված հողը:

Ջվենիգորան ուզում էր ուժգին, խորամանկ մի հարվածով զինաթափ անել Մետելիցային կամ քշել խրճիթների արանքը, որ նույնպես ծերունու համար պարտոթյուն կնշանակեր: Նա, առանց ուշ դարձնելու այն բանին, որ իր կապույտ մահուղե բաճկոնը երկու տեղից ծակված էր, իսկ սպիտակ վերնաշապկի ձախ թևքը արմունկից վերև կարմրել էր տաք արյունից, այնպես հուպ տվեց, որ Մետելիցան հարկադրված եղավ նահանջել:

— Տես է՛, սատանա, կրակի կտոր է,— անշար, բամբ ձայնով ասաց Մետելիցյան. երևում է, սիրում էր ջահել կազակին: — Հապա, հապա, խփիր, տղաս: Մեր արջի կողերը խուտուտ տուր: Բայց թե ինքդ էլ զգուշացիր: Թեկուզ դու ջահել ես ու արագաշարժ, համա Մետելիցային հաղթելը դժվար է... Օհո-ո՛, տեսնում եմ հանաք չես անում, իսկապես ուզում ես փորս ծակել: Աստծուց վախեցիր, տղա... Ես դեռ միտք ունեմ մի շերեփ լիճք, ով իմանա, մեկ էլ տեսար երկու շերեփ արաղ կոնծել: Իսկ թե որ մեղք գործես, փորս ծակես, ստիպված պիտի նայեմ ուրիշներին, թե ինչպես են խմում, ու թուքս կուլ տամ...

Հաղթանդամ Մետելիցյան ճարպկորեն ետ մղեց ջահել հակառակորդի սուրը, որը սպառնալի մոտեցել էր իր իսկապես պատկառելի փորին: Զվենիգորան մի քանի քայլ նահանջեց, շունչ քաշեց, հետո նորից հարձակվեց և ծերուկին սեղմեց եղեգնյա տանիքով կուրենին¹:

Հանդիսատեսներն իրար անցան: Զահել կազակները բացականչություններով ու սուլոցներով սկսեցին քաջալերել Զվենիգորային.

— Մի՛ խնայիր, Արսեն, Հուպ տուր նրան:

— Մի տակառ արյուն բաց թող Մետելիցյա պապից: Դա վնաս չի տա նրան, էդ ծեր սատանային, ջահել կանանց հտեից քիչ կընկնի:

— Ծիշտ որ: Նրան հաղթել չես կարող:

— Հո՛-հո՛-հո՛: Հա՛-հա՛-հա՛:

— Այ էդպե՛ս: Տեղն է նրան: Տեղն է: Գրողը տանի:

— Ինչ է, Մետելիցյա պապ, շոգեցի՞ր: Էդ քեզ համար լու բռնել չէ, է՛, էստեղ թուր բանեցնել պիտի իմանաս, թո՛ւր բանեցնել...

Մետելիցյան թևքով սրբեց քթից կախված քրտինքի կաթիլը: Նրա լայն կրծքից ծանր հևոցներ էին դուրս գալիս:

Մեր կազակները, ինչ խոսք, Մետելիցայի կողմն էին: Փոքրիկ, թխամաշկ, վոբլայի նման չորացած Շևչիկ պապը,

¹ Կուրեն — հյուզակ, խրճիթ, տուն: Նաև զապորոժյան բանակի ստորաբաժանում և զինվորական ճամբար:

երկար, ճերմակած բեղերը ցցած, կարճ ոտքերի վրա մի կողմից մյուսը ցատկոտելով, հուշում էր ընկերոջը.

— Ձախից թրատիր, Կոռնեյ, ձախից: Մի՛ խնայիր Հոկաթնակերին, թող կորչի գրողի ծոցը:

Բոլորն էլ հասկանում էին, որ մենամարտը խաղաղ կվերջանա, օղու տակառի մոտ, բայց, ինչպես և ամեն մի խաղ, գոտեմարտը շիկացրել էր կրքերը, և հանդիսականները կռվողներից պակաս չէին տաքացել:

Վերջապես, սեղմվելով պատին, Մետելիցան թուրը դրեց պատյանը:

— Մի կվարտ¹ արաղ դիր, սովորեցնելու համար, սատանի ճուտ: Ու քիթդ էլ շատ մի՛ տնկիր, թե հաղթեցիր Մետելիցային, — ասաց նա և խստորեն ավելացրեց. — Իսկ ձախ հարվածներից զգուշացի՛ր...: Շուշիկ պապը ճիշտ է նկատել:

Ջվենիգորան մի արծաթ թալեր գցեց պանդոկապան Օմելկայի՝ դրամի համար դրված գավաթի մեջ: Եվ ձայն տվեց.

— Համեցեք, եղբայրներ:

Բայց կազակները դեռ շերեփները չէին լցրել, երբ դարպասի մեջ հայտնվեց կույր ծերունին՝ իր ուղեկցողի հետ: Մախաղի միջից դուրս էին ցցվել կոբզայի դեղին կոթն ու մուգ կաղնուց պատրաստած լարակոճերը: Ծերունին, երեվում է, շատ էր հոգնել, հազիվհազ էր քարշ գալիս:

— էս կողմ արի, էս կողմ, — կանչեց պարի սիրահար Սեկաչը: — Մի թաս կխմես ու մեզ համար հոպակ կզարկես:

Ուղեկցողը կույրին տարավ դեպի ամբոխը: Կանգ առան:

— Մենք Սեչո՞ւմ ենք արդեն, Յացկու, — հարցրեց ծերունին:

— Պարզ բան է: Ականջ դրեք, չորս կողմը կազակներ են: Կոբզարը² գլխարկը հանեց և, նուրբ լսողությամբ որսալով բազում մարդկանց շնչառությունը, դատարկ ակնա-

¹ Կվարտ — շափի միավոր:

² Կոբզար — գուսան (ուկրաինական):

խոռոչները հառեց նրանց կողմը: Հետո խոր գլուխ տվեց: Իսկ երբ գլուխը բարձրացրեց, բոլորը տեսան, որ ծերունու այտերն ի վար արցունք էր հոսում:

— Մի՞թե ես Սեչում եմ, եղբայրներ: Հավատալս չի գալիս:

— Սեչում ես, պապիկ, Սեչում,— աղմկեցին կազակները: — էդ ինչո՞ւ չես հավատում:

— Երկար պատմություն է, բարեկամներ... Ահա քսանվեցերորդ տարին է արդեն, ինչ ինձ բռնեցին Ղրիմցիները¹ ու ծախեցին որպես գերի: Հենց Ցարգրադի² մոտ... Քսանհինգ տարի է ես մեր Դնեպրի ջուրը չեմ խմել... Մենակ փափագել եմ, կարոտը քաշել... Դրա համար էլ աչքի լույսից զրկվեցի... Իսկ հիմա, մեռնելուց առաջ միայն, ես նորից Սեչում եմ: Տանը... Շնորհակալ եմ իմ բախտից, որ, թեկուզև օր ծերության, երեսը ինձ դարձրեց:

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ,— հանկարծ ասաց Մետելիցան: — Ախպերս, չլինի՞ դու Դանիլո Սոմն ես:

Մի աղոտ ստվեր անցավ կոբզարի դեմքով, կարծես նա ջանաց հիշել, թե որտեղ է լսել այդ ձայնը: Խորշոմապատ ձեռքերը դողացին, ճմռթեցին գլխարկը:

Հրապարակի վրա լուսություն կախվեց:

— Էն խաչը վկա, շճանաչեց քավթառ ծերունին:— Մետելիցան շրմփացրեց կոբզարի ուսին:— Մետելիցային շճանաչե՛ց: Լավա՞ծ բան է: Երևում է, էդ նզովյալ անաստվածները լավ են դադել, ախպերս:

— Մետելիցա՛:— Կոբզարը լայն տարածեց ձեռքերը: — Կոռնե՛յ: Իմ թանկագին ախպեր: Ինչքա՛ն ուրախ եմ, որ առաջինը քեզ հանդիպեցի:

Նրանք ամուր գրկախառնվեցին:

Իսկ շուրջն արդեն խոնվել էին մյուս ծերունի կազակները: Սոմին գրկից գիրկ էին տալիս: Պարզվեց, որ դեռ շատերն էին հիշում նրան:

— Հը, ո՞նց ես...

¹ Ղրիմցի ուս. (КРИМЧАТКА)— նկատի ունի Ղրիմում բնակվող թաթարներին:

² Ցարգրադ — Կոստանդնուպոլսի (այժմ՝ Ստամբուլ) հին ռուսական անվանումը:

— Որտեղի՞ց է գալիս Դի պատմիրը, տեսնենք, Դանիլու

— Կաց հլա, շինի՞, թե էն աշխարհից ես գնալիս:

— Սպասեք, եղբայրներ, սպասեք, — ասաց Սոմը:

— Ամեն ինչ կպատմեմ: Մենակ թե հետո: Իսկ հիմա ինձ տարեք կոշեռյի մոտ¹... Նրա հետ կարևոր գործ ունեմ:

— Գնա, գնա, Դանիլո, մենակ թե շատ վերադարձիր, քանի դեռ տակառի մեջ մի բան մնացել է, թե չէ առանց քեզ կցամաքեցնենք, — բամբ ձայնով ասաց Մետելիցան և Տովկաչին կարգադրեց. — Մերունուն ուղիղ Սերկոյի մոտ տար:

Տովկաչը բռնեց կորզարի ձեռքից, և հրապարակի միջով տարավ դեպի մեծ տունը, որ գույնզգույն ապակիներով պատուհաններ ուներ և լայն, զարդարված առևուտք:

Կազակները հետո միայն ուշադրութուն դարձրին կույր կորզարի ուղեկցողին:

Յացկոն մի կողմ էր քաշվել ու խոսակցությունների՞ն ականջ չէր դնում: Նա հիացմունքով գննում էր Սեչը:

Ահա, պարզվում է, թե ինչպիսին են այդ կազակները: Զարմանալի է նույնիսկ, թե որքան նման են նրանք Սմերեչովկայի՝ իր ծննդավայրի գյուղացիներին, որտեղից փախել էր նա ամառվա վերջին: Նույն աշխատանքից կոշտացած ձեռքերը և հողմահարված, անձրևից ու արևից կոպտացած դեմքերը: Շատերի հագին մաշված, կարկատած սվիտաներ², քուրքեր էին, ծամոված սապոգներ ու քաթանե տարատներ: Կազակներից քչերն էին միայն, որ աչքի էին ընկնում թանկարժեք պանական կունտուշներով³ կամ նոր գեղեցիկ քուրքերով...

Բայց միևնույն ժամանակ նրանք տարբերվում էին Սմերեչովկայի գյուղացիներից: Զապորոժցիներն ունեին խիզախ, հպարտ հայացք, որպիսին իր համագյուղացիների մոտ երբեք չէր տեսել: Բոլորի գոտիկից էլ թուր էր կախված, ատրճանակ, երբեմն մեկի փոխարեն երկուսը: Իսկ

¹ Կոշեռյ — կոշի (զապորոժյան կազակների գյուղ), ատամսե Այստեղ՝ պետ, հրամանատար:

² Սվիտա — ուկրաինական ազգային վերնազգեստի տեսակ:

³ Կունտուշ — վերնազգեստ, կապա հին ուկրաինացիների ու լեհերի մոտ:

գլխներին ուղիարի, աղվեսի կամ նապաստակի մորթուց փափախ էր՝ մորեգույն գլխակապերով... Ոչ, նրանք բնավ էլ այնպիսին չէին, ինչպես իր հայրենի Գուցուլիայում:

Հետո նրա հայացքն ընկավ երկար, ցածլիկ խրճիթ-կուրենների վրա, որոնք գրեթե կիպ կպած էին բերդապատեհ ռին: Եղեգնյա տանիքները ծածկված էին մանր ձյունափոշով: Տանիքների տակ սևին էին տալիս նեղ, հրակնատի նմանվող փոքրիկ պատուհանները: Զորական գրասենյակի և մեծավորների տունը բարձր էր, ավելի գեղեցիկ, ծածկված կավարով: Հրապարակի մյուս կողմում աչք էր շոյում Սեչի եկեղեցին՝ նախշազարդ պատերով ու ոսկեզօծ գմբեթով:

Նկատելով, որ կազակները հետաքրքրվում են իրենով, տղան շտապ հանեց գլխարկը, խոր գլուխ տվեց և խոպոտ ձայնով ասաց.

— Բարի օր, պան կազակներ:

— Բարով, տղա,— բոլորի փոխարեն պատասխանեց Մետելիցան: — Դե, մեզ հետ էդպես մի՛ խոսի, մեզ նման քրջոտներից ի՞նչ պան... Պաները ա՛յ էնտեղ են,— նա գլխով ցույց տվեց Սեչի մեծավորների տան կողմը: — Հասկացա՞ր:

— Հասկացա:

— Ծիշտ է, մեր եղբայրներից ոմանք էլ պակաս չեն: Դե, ասենք դա քո խելքի բանը չէ... Իսկ հիմա ասա, ինքդ որտեղացի՞ ես: Սոմին որտե՞ղ ես հանդիպել:

— Բոլորը, բոլորը կպատմեմ, ինչ որ հարցնեք... Մենակ թե նախ ես պետք է գտնեմ Արսեն Զվենիգորային:

Կազակները զարմացած իրար նայեցին:

— էհե՛, տես է, Զվենիգորային ազգական էլ գտնվեց: Ի՛նչ է, ինքդ նրան չե՞ս ճանաչում, մեր Զվենիգորային: Նա էստեղ է, մեր մեջ...

— Ոչ, չեմ ճանաչում... նրան լուր պիտի տամ...

Զվենիգորան առաջ եկավ: Նա հասցրել էր ձեռքի շանգրովածքները արաղով սրբել ու վրան վառող շաղ տալ: Ժուպանի՛ վրայից ուսերին էր գցել գեղեցիկ բանվածքներով

զարդարված քուրքը: Ե՛վ ժուպանը, և՛ քուրքը շատ տեղերից կարկատած էին՝ երևում է, մինչև կազակին հասնելը, շատ տերեր էին ունեցել:

— Ի՞նչ լուր ես ուզում հայտնել, տղա,— հարցրեց նա տարակուսանքով:

— Ես գալիս եմ Դուբովայա Բալկայից, ես...

— Դուբովայա Բալկայի՞ց,— առաջ մղվեց Զվենիգորան:

Նրա սիրտը ճմլվեց. ահա արդեն երրորդ տարին է, այն տեղ, Սուլայի ափին, առանց իրեն ապրում են հարազատները՝ մայրը, քույրը, պապը: Չլինի՞ նրանց բան է պատահել: Որևէ դժբախտություն: Նա սեղմեց տղայի ուսը:

— Մերոնք բեղ հետ լո՛ւր են ուղարկել: Մայրս ո՞նց է:

— Մայրդ հիվանդ էր: Ասացին, ինչքան հնարավոր է թող շուտ գա...

— Ի՞նչ է եղել: Դու տեսե՞լ ես նրան:

— Ոչ, չեմ տեսել: Քույրդ ասաց, երբ ես ու Սոմ պապը գիշերեցինք նրանց տանը:

— Ուրեմն դուրս է գալիս, որ ինքդ Դուբովայա Բալկայից չե՞ս:

— Ոչ, բեռի, ես Կարպատից եմ... Գուցե կիմանաս՝ Սմերեչովկայից... Պան Վերեչլակից եմ փախել... Լսած կա՞ս... Կատաղած, շար մարդ է... Աղքատ խոլոպների հետ վարվում է ոնց որ անասունների հետ, ծաղրում է նրանց... Իսկ հիմա ուզում եմ կազակ գրվեմ, թե որ կընդունեք:

Բայց Զվենիգորան արդեն տղային չէր լսում: Նրա դեմքը մոռայվեց, մոխրագույն աչքերը մթնեցին: Մտքով սլացավ Դուբովայա Բալկա: Մտավ անտառակի մոտ գտնվող փոքրիկ կավածեփ խրճիթը, կռացավ հասարակ փայտե մահճակալին, որ ինքն էր սարքել, խոնարհվեց մոր սնարին... Փորձեց պատկերացնել, թե ինչպիսին է հիմա... Երևի գունատ է, աչքերի տակ մանր կնճիռներ կան, խիտ մազերը վաղուց ծածկվել են սպիտակ եղյամով... էդ ի՞նչ ցավ է կպել նրան: Թե՞ ամուսնու՝ Արսենի հոր կարոտն է նրա սիրտը մաշում: Արդյո՞ք կենդանի կգտնի նրան: Թե որ ձի ունենար, երեք-չորս օրում կարելի էր տեղ հասնել...

— Մնաք բարով, բարեկամներ: Բարի հիշեք ինձ: Ցան-

սություն: — Նա դարձավ շորս կողմ և գլուխ տվեց հարբած կազակներին:

Պճնամուլ Սեկաչը, տեսնելով ընկերոջ քուրքի ա ժուպանի կարկատանները, ձայն տվեց:

— Կաց, Արսեն: Դեն գցիր հագիդ քրջերը, գրողը տանի: Կազակին վայել չէ, որ քրջոտ շորերով դուրս գա Սեչից: Մի՞թե կոշի եղբայրությունը չի կարող քեզ հագցնել, ինչպես պետքն է: Ահա, վերցրու:

Նա փութով հագից հանեց հոնգարական մահուդից կարված նուրբ, կապույտ ժուպանը և մոխրագույն կարակուլե փափախը:

— Հիմա սրանցով պսակվելն էլ ամոթ չէ,— գոհունակությամբ զննեց նա ընկերոջը, վրան քաշելով նրա մաշված շորերը: Եվ տեսնելով Տովկաչին, որը, ամեն ինչից անտեղյակ, մոտենում էր իրենց, բարձր ձայնով գոչեց.— Տովկաչի թրով կտրիր կոկորդը առաջին իսկ մահ՛րդու, ով որ կհամարձակվի զապորոժցուն խեղճ կամ թշվառ անվանել:

Ձեռքի պերճախոս շարժումը Տովկաչի թրի կողմը, որ պսպղում էր արևի տակ իր թանկարժեք քարերով, և թափանցիկ ակնարկը, որպեսզի Տովկաչն այդ թուրը նվիրի ընկերոջը, կազակների ծիծաղը հարուցեց: Բոլորն էլ գիտեին, թե Տովկաչն ինչպես է սիրում իր թանկագին թուրը: Նա ինքը, թերևս, ամենաաղքատներից մեկն էր համայնքի մեջ, ման էր գալիս ցնցոտիներով, բայց փոխարենը հարուստ, թանկարժեք թուր ուներ: Այդպիսի թուր նույնիսկ կոշևոյը չուներ:

Տովկաչը ճպճպացրեց սև աչքերը, որ եզան թարթիչներ ունեին, և կամաց-կամաց զոտուց սկսեց արձակել թուրը: Նրա ներքևի շուրթը դողում էր:

— Ես ուրախությամբ... Բա ոնց... Վերցրու, Արսեն,— թավ ձայնով ասաց նա: — Ընկերոջս բա՛ն կխնայեմ:

Բոլորը տեսան, որ, այնուամենայնիվ, նրա համար դրժվար էր թրից բաժանվել, և ծիծաղեցին կազակի վատ թաքցրած տխրության վրա: Մետելիցան ամբողջ մարմնով ցնցվում էր ծիծաղից ու ծանր բռունցքով արցունքները սրբում: Նրա հաստ, մսեղ այտերը մանրիկ թրթռում էին, իսկ սպիտակ բրդոտ փափախը քիչ էր մնում գլխից ընկնելու:

— Օգտուհի՛, էս գիշեր լվերը մեր Տովկաչիկին կկծեն: Զղայնությունից մինչև լույս չի քնի... Դարդ մի՛ անի, մեր տղա, էլի մի թաթար մուրզա՛ կպատահի, ու նորից էզպիսի մի խաղալիք կունենաս:

Ապա դարձավ Զվենիգորային.

— Իսկ ինձնից, Արսեն, ստացիր այս շիբուխն ու քիսան: Մխիթր, անուշ լինի:

— Շնորհակալ եմ, բատկո: Շնորհակալ եմ, բարեկամներ, — որտաշարժված շնորհակալություն հայտնեց Զվենիգորան:

Հենց այդ պահին գորական գրասենյակի առմուտքին հայտնվեց կոշևոյի ջուրան՝

— Զվենիգորա՛, — կանչեց նա: — Զվենիգորա-ա՛:

— Հը, ի՞նչ է, — պատասխանեց կազակը՝ կարգի բերելով իր նոր քուրքը:

— Շտապ արի կոշևոյի մոտ: Էլ մլուլ մի՛ տա...

Զվենիգորան զարմացած նայեց ընկերներին, կարծես հարցնում էր, թե ինչ է պատահել, բայց ոչ մեկը ոչինչ չգիտեր:

3

— Ողջունում եմ քեզ, վսեմափառ կոշևոյ, ատաման Իվան Սերկո, — հանդիսավորությամբ բարևեց ու խոր գլուխ տվեց կորզարը, երբ Տովկաչը նրան առաջնորդեց գորական գրասենյակի մեծ, ջքեղ կահավորված սենյակը և շնջաց, թե դիմացը կանգնած է ինքը ատամանը: — Քեզ հետ շտապ գործ ունեմ... Անհետաձգելի և գաղտնի...

Սերկոն նշան արեց Տովկաչին, որպեսզի դուրս գնա, իսկ ինքը ելավ սեղանի մոտից ու ասաց.

— Ես այստեղ մենակ եմ, կորզար... Նստիր, խոսիր...

Նա բռնեց ծերունու ձեռքից և տարավ դեպի լայն նըստարանը, որ ծածկված էր խավառատ գորգով: Մինչ կորզարը կնստեր, կոշևոյը հետ-հետ գնաց ու ձեռքով հենվեց սեղանին:

1 Մուրզա — իշխան, ազնվական տիղոս թաթարների մոտ:

2 Զուրա — (սկր.) — ծառա, կազակական ատամանների զինակիր
XVI—XVIII դարերում:

Դա թանձրամարմին, ամրակազմ մի կազակ էր: Մտովաթսուն տարեկան, սուր խոշոր կզակով և ուղիղ քթով: Մաքուր ածիլված դեմքից առողջութուն էր կաթում: Կեռ, փրշոտ հոնքերի տակից ուշադիր նայում էին զննող աչքերը: Սերկոյի հագուստը խոսում էր այն մասին, որ կազակը հող է տանում ոչ այնքան գեղեցկությանը, որքան հարմարությանը: Միրանագույն լայն տաբատ, որի փողքերը ամփնփված էին սեկե փափուկ սապոգների մեջ, և փրիսակի՝ մահուդից կարված սպիտակ ժուպան. ահա նրա ամբողջ հագուստը: Ձախ կողքից կախված էր թանկարժեք թուրը:

Կոշեռոյի ողջ բարեսես ու ամուր կազմվածքից զգացվում էին անզուսպ կենսական ուժերը, ներքին կրակը և արտամովոր վճռականությունը, բոլորը, ինչ որ այն դաժան ժամանակներում մարդուն մղում էին զինվորական առաջնորդների շարքերը:

— Լսում եմ, կորզար: Ի՞նչ գործ ունես ինձ հետ, — Ջարցրեց Սերկոն:

Կորզարը բարձրացրեց դեղնած, այլանդակված դեմքը, և նրա շուրթերին մի դառը ժպիտ խաղաց:

— Դու ինձ շե՞ս ճանաչում, Իվան:

Սերկոն բացասաբար օրորեց գլուխը, կարծես թե կույրը կարող էր դա տեսնել:

— Ո՛չ, շեմ ճանաչում:

— Եվ ճիշտ ես անում, մենք իրար հետ սազ շենք արածացրել... Բայց մեկ է, թե որ հիշողությունդ փորփրես, կհիշես կազակ Դանիլո Սոմին...

— Սպասիր, սպասիր... Մի՞թե դու այն Սոմն ես, որը Բերեստեչկայի մոտ համելնիցկուն լուր բերեց թաթարների դավաճանության մասին:

— Դե իհարկե... Ինչ որ ճիշտ է, ճիշտ է, ես էի, նզովյալս...

— Իսկ ինչո՞ւ նզովյալ:

— Որովհետև... Եթե ես չիմանայի խանի գաղտնի հեռանալու մասին և չտեղեկացնեի հետմանին, գուցե և ամեն բան

1 Փրիսակ — բրդյա խավովոր գործվածք:

այլ կերպ շուռ կգար... Գուցե խանը խարդախությամբ գերի չվերցնէր Բոգդանին ու շտաներ Ինգալեցի:

— Ինչքան գիտեմ, այն ժամանակ հմեկնիցկու հետ միասին դու էլ ընկար խանի ետևից:

— Հետմանը ոչ միայն ինձ տարավ: Ամբողջ հետմանական պահակազորը նրա հետ էր, երբ նա հետապնդում էր թաթարներին: Մեզանից շատերին նրանք տարան Ղրիմ, իսկ էնտեղ ծախեցին թուրքերին... Համարյա քսանհինգ տարի մնացի երկաթե կապանքների մեջ: Երկաթը կերավ ինձ մինչև ոսկորներս: Ահա... — Կորզարը քշտեց սվիտկայի թևքը և Սերկոյին ցույց տվեց կապույտ սպինները: — Չդիմացա, փախա... Բայց մի՞թե կփախչես: Դանուբի մոտ բռնեցին, աչքերս խարանեցին... Միայն դրանից հետո բաց թողին... Մի ամբողջ տարի թափառեցի Մոլդավիայում, մինչև որ հասա Պոկուտյա... էնտեղից էլ եկա էստեղ, քեզ մոտ... Եղբորդ մասին լուր եմ բերել...

— Եղբորս մասի՞ն: Ո՞ր եղբորս: — Սերկոյի ձախ այտը ցնցվեց:

— Մի՞թե դու եղբայրներ չունեիր:

— Ունեի... Բայց նրանք վաղուց են զոհվել: Մաքսիմը՝ Տիկիշում, թաթարների գնդակից... Ինքս եմ տեսել... Իսկ Նեստորը... Չնայած... Չլինի՞ նոր տեղեկություն ես բերել Նեստորի մահվան մասին:

— Ինչո՞ւ մահվան մասին: Նա ողջ է, ողջ...

— Ո՞ղջ է, — գոչեց Սերկոն: — Ուզում ես ասել, որ տեսե՞լ ես նրան: Որ նա քեզ հետ գերության մե՞ջ է եղել:

— Այո, ես ու Նեստորը միասին ենք եղել գերության մեջ: Վերջին տարիները իրարից անբաժան էինք:

Սերկոն անշարժացավ կորզարի կողքին: Շնչառությունը ծանրացավ: Նա գունատվեց, սկսեց կրծել արծաթած բեղը:

— Անհավատալի է... Ինքզ մտածիր, քանի տարի է մենք Նեստորին մեռած ենք համարել... Նրա այրին նորից մարդու գնաց... Ինչքա՞ն ջրեր են հոսել: Եվ հանկարծ այդպիսի նորություն: Գնդապետ Յակիմ Չեռնոբայը երզվեց, որ Նեստորը իր աչքի առաջ է մեռել...

— Յակիմ Չեռնոբա՞յը: — Սերունին թիկթիկացրեց զավազանով: — Գարշելի դավաճան է նա, վախկոտի մեկը,

ահա թե ով է... Եթե նա կամենար, կարող էր քեզ ճշմարտությունն ասել եղբորդ մասին... Բայց նա երբեք այդ բանը չի անի... Իսկ Նեստորը ինձ պատմել է, թե դա ինչպես է եղել... Կովի ժամանակ, երբ թաթարները նեղում են մերոնց, Նեստորի ձին ընկնում է: Չեռնոբայը կողքին է լինում: Նա կարող էր փրկել ընկերոջը: Հերիք էր, որ կռանար ու Նեստորի ոտքը ազատեր թամբից: Բայց Չեռնոբայը թրով հարվածում է իր հովատակին ու ծլկում... Շուտով վրա են հասնում թաթարներն ու օղապարանով բռնում Նեստորին: Չեռնոբայը սուտ է խոսել...

— Լավ, նստիր, Դանիլո,— զսպելով իրեն, ասաց Սերկոն: — էլ շխոսենք դրա մասին... Որտե՞ղ է Նեստորը: Ինչպե՞ս փրկենք նրան:

— Վերջին տարիներին երկուսս էլ մի հարուստ թուրքի մոտ էինք: Բուլղարիայում, Վառնայից ոչ հեռու... Ռուզնիկ գյուղ կա... Ես փախա... Նեստորը, երևի, մինչև հիմի էլ էնտեղ է:

— Թե որ ողջ է:

— Ողջ է... Նա ինձնից շատ է ջահել: Եվ պինդ է: Ի՞նչ պիտի լինի:

— Ինչո՞ւ նա էլ քեզ հետ չփախավ:

— Էն ժամանակ ես հովիվ էի, ապրում էի ազատ: Առանց հսկողության: Նա աշխատում էր մեկ քարհանքերում, մեկ խաղողի այգիներում: Միշտ վերակացունների հսկողության տակ էր... Բայց կարելի է ետ գնել: Եթե լավ վճարես, թուրքը բաց կթողնի: Նեստորը շատ անգամ է ասել, որ քեզ իմաց տամ: Նա միշտ էլ հույս էր դնում քո օգնության վրա: Մանավանդ այն բանից հետո, երբ իմացավ, որ դու կոչևոյ ես դարձել...

— Շնորհակալություն, Դանիլո: Դու մեծ ծառայություն մատուցեցիր ինձ:

— Ուրախ եմ՝ քեզ ծառայություն մատուցանելուս համար, Իվան... Բայց շարունակությունը լսիր. կաղակ Սոմը էլի մի կարևոր լուր է բերել:

— Ի՞նչ լուր,— Սերկոն զարմանքով նայեց ծերունուն:

— Ասում են, թե սուլթան Մուհամմեդը նորից է պատրաստվում արշավելու Կիևի վրա: Նզովվածը կատաղել-փրբ-

փրբել է, որ հետման Դորոշենկոն հանձնվել է Մոսկվայի ցարին, և ողջ Աջափնյա Ուկրաինան թուրքերի ձեռքից դուրս է պրծել: Մտքին դրել է գալիք ամռանը իր զորքերը շարժել Չիգիրինի ու Կիևի վրա:

Սերկոն վեր թռավ նստած տեղից: Խոժոռվեց:

— Էդ որտե՞ղ ես լսել, Դանիլո: Դա շատ կարևոր սևղե-կություն է:

— Վալախիայում¹ ու Բուչակում² էին խոսում էդ մասին... Խոսում են, էլի... բայց ծովան առանց կրակի չի լինում:

— Դու իրավացի ես... Նորից ու նորից շնորհակալություն. և՛ այդ նախազգուշացման, և՛ եղբորս մասին բերած տեղեկության համար: Ես ամեն բան կանեմ, որպեսզի փրկեմ եղբորս: Շատերին եմ փրկել, օտարներին, իսկ եղբորս համար կյանքս էլ կտամ: Փող չեմ խնայի: Մենակ թե՛ ինչպես անենք: Հո ինքս սուլթանին ղոնաղ չեմ գնա... Բայց սպասիր... Ես մի կազակ ունեմ... Զահել է, համա բլբլացնում է թուրքերեն, իսկը ոնց որ թուրք...

Սերկոն զնգզնգացրեց փոքրիկ արծաթյա զանգը, որ դրոված էր սեղանին: Ներս մտավ ջուրան...

— Կանչիր Զվենիգորային:

Կազակն անհետացավ դռան ետևում:

Սոմը ելավ նստած տեղից, ափիփելով գտավ գավազանը:

— Դե նստիր, նստիր,— քնքշորեն նրան տեղը նստեցրեց Սերկոն: — Թե՞ շտապում ես եղբայրության մոտ... Ո՞ւմ հետ ես եկել Սեչ:

— Յացկոյի հետ: Նա էր ինձ ուղեկցում... Որք է... նրան հանդիպեցի Կամենեցին մոտիկ մի գյուղում,— անուրախ ծիծաղեց Սոմը: — Նստել էի ցանկապատի տակ, գերաններին, շոր հաց էի ծամում: Մեկ էլ մի ձայն եմ լսում. «Պապիկ, մի փշուր հաց տուր»: Քիչ մնաց խեղդվեի: Էհհ, մտածեցի, դու դեռ էնքան էլ աղքատ չես, Սոմ, եթե քեզա-

¹ Վալախիա (պատմ.) — իշխանապետություն, որ վասալական կախման մեջ էր թուրքիայից: Հետագայում մտավ Ռումինիայի կազմի մեջ:

² Բուչակ (թուրք.) — վայր, տարածք Գնեստրի և Դանուբի գետերի սանհերի միջև, որտեղ քոչում էր Բուչակյան կամ Բելզորոգյան հորդան:

նից անոթին ու դժբախտն էլ կա: Տոպրակից հանում եմ հացի շորուկը, հարցնում եմ. «Դու ո՞վ ես» — «Ցացկոն եմ», — պատասխանում է ձայնը: «Որտեղի՞ղ ես գալիս և ո՞ւր ես գնում»: — «Գնում եմ Զապորոժիե, — ասում է: — Պանից եմ փախել»: Ահա, մտածում եմ, աստված ինքն է քեզ ինձ մոտ ուղարկել: Դու այդքան շատ կաղակ չես դառնա, բայց լավ ուղեկից կարող ես լինել: «է՛, ինչ արած, Ցացկո, ես էլ եմ գնում Զապորոժիե: Ընկերացիր ինձ, միշտ կուշտ կլինես, ասում եմ: Դու կլինես իմ աչքերը, ես էլ քեզ հաց կտամ, կկերակրեմ... Քանի դեռ կորզան ու ձայնս կան, շենք կորչի»: — «Լավ, պապիկ, — ասում է: — Մի կտոր էլ հաց տուր...» Ահա այդպես էլ նա կպավ ինձ: Իսկ հիմա ոնց որ հարազատ...

Սոմը լոռեց ու լարեց լսողութիւնը. արտասանդողքից ոտնաձայն լսվեց:

4

— Ողջույն քեզ, կոշևոյ ատաման, — բարեկեց Զվենիգորան՝ մտնելով շքասրահ: — Կանչե՞լ ես ինձ:

— Կանչել եմ, ներս արի:

Սերկոն ուշադիր տնտղեց կազակին: Նրա սևեռուն հայացքը որսաց Զվենիգորայի արտաքինի մեջ կատարված փոփոխութիւնը: Նաև ինչ-որ տազնապ նկատեց նրա աչքերում:

— Պատրաստվում ես որևէ տե՞ղ գնալ, Արսեն:

— Այո, գնում եմ Դուբովայա Բալկա, բատկո: Լուր առա, որ մայրս ծանր հիվանդ է... Ուզում եմ տեսության գնալ:

— Այ թե ի՞նչ, — մտախոհ ասաց Սերկոն: — Իսկ ես ուզում էի մի խնդիրքով դիմել քեզ... Մեծ խնդիրքով... Զգիտեմ էլ արժե՞ ասել, թե ոչ: Հիմա քո հոգսն էլ քեզ հերիք է:

— Լսում եմ, բատկո: Խոսիր:

— Լավ: Միայն թե իմացիր, իմ հանձնարարութիւնից կարող ես հրաժարվել, քանզի գործը շատ նուրբ է, իսկ գլխավորը՝ դժվար է ու վտանգավոր: Հասկանո՞ւմ ես:

— Հասկանում եմ,— կամացուկ ասաց Զվենիգորան:
— Ի՞նչ գործ է:

— Ուզում եմ քեզ ուղարկել Բարձր Դուռ¹: Մենակ: Որպես գաղտնի դեսպան: Իսկ թե դա ինչ է նշանակում՝ ինքդ գիտես: Ուստի մի անգամ էլ եմ ասում. ազատ կարող ես իմ առաջարկությունը մերժել:

— Ի՞նչ պիտի անեմ էնտեղ:

— Պիտի ազատես եղբորս... Կոբզարն ասաց, որ նա գեղութեան մեջ է, Վառնայի մոտ... Սակայն քո գլխավոր խնդիրն է՝ տեղեկանալ, ճի՞շտ է, արդյոք, որ թուրքերը պատրաստվում են հարձակվել Ուկրաինայի վրա: Այդ մասին խոսակցություններ կան: Իսկ եթե պատրաստվում են, ապա երբ, ինչ ուժերով...

Սերկոն լռեց: Նա արտաքուստ հանգիստ էր երևում: Բայց դժվար չէր նկատել, թե նրա կուրծքը ինչպես էր լնանանում սպիտակ ժուպանի տակ: Արևի շեղ ճառագայթը թափանցել էր կարմրանախշ ապակու միջով և ընկել նրա բեղերին: Ճերմակ մազերը փայլվում էին, ասես արցունքով էին ցողել:

— Ես կգնամ, բատկո,— հաստատ ասաց Զվենիգորան:

Սերկոն թափով՝ մոտեցավ նրան, գրկեց ուսերը:

— Շնորհակալություն, տղաս: — Կոշևոյը շթաքցրեց իր հուզմունքը: — Շնորհակալություն: Այդ դեպքում էլ ժամանակ մի՛ կորցնի, չէ որ դու էլ ես շտապում: Կայցելես մորդ, իսկ էնտեղից էլ ճամփա կընկնես... Իմ գործը շտապ չէ, կհասցնես... Սոմ, կազակին բացատրիր, թե որտեղ և ինչպես գտնի Նեստորին: Իսկ ես կպատրաստեմ այն ամենը, ինչ որ հարկավոր է:

Կոշևոյն անցավ հարևան սենյակը, որ ծառայում էր նրան որպես ննջարան: Կես ժամ անց նա հայտնվեց՝ ձեռքին կապույտ ժապավենով կապված մագաղաթի մի փոքրիկ փաթեթ և մի հնամաշ կաշվե գոտի:

— Այս նամակը կտաս մուրզա Քուչուկ բեյին,— ասաց

1 Բարձր Դուռ — Օսմանյան կառավարության պաշտոնական անվանումը եվրոպական դիվանագիտական փոտոաթղթերում և գրականության մեջ մինչև Թուրքական հանրապետության հռչակումը (1923 թ.):

նա՝ մեկնելով փաթեթը: — Չնայած կովի մեջ մենք շատ անգամ ենք մեր թրերը խաշաձևել, բայց խաղաղ ժամանակ նա սրտաբաց ու հյուրասեր մարդ է: Մուրզան քեզ կանցկացնի հորդայի միջով և դուրս կբերի Դանուբ: Իսկ Վալախիայում ու Բուլղարիայում դու արդեն քո գլխի տերն ես:

— Ես եղել եմ էնտեղ, քարավանների հետ, ճանապարհը դիտեմ: Ասենք՝ սովորությունները նույնպես... Մենակ թե թաթարները չբռնեն...

— Քուշուկ բեյը թույլ չի տա: Նա պարտական է ինձ. ես գերութունից ազատել եմ նրա երկու ազգականներին... էդպիսի բանը շեն մոռանում: Իսկ էս գոտին կապիր մեջքիդ, տաբատիդ վրայից, ու պահպանիր աչքիդ լույսի պես: Սրա մեջ ոսկե դրամներ են կարված՝ լեհական զլոտիներ, անգլիական գինեյներ, իսպանական դուբլոններ: Կարծում եմ կբավականացնի և՛ Նեստորին ազատելու, և՛ քեզ, ճանապարհի համար: Գոտին հին է, տեսք չունի, բայց արժեքը, ինքդ էլ հասկանում ես, բավականին մեծ է:

Գոտին իսկապես խղճուկ տեսք ունի, մաշված, քրքրված, բայց երբ Զվենիգորան ձեռքն առավ, զգաց ծանրությունը:

— Քեզ որքա՞ն ժամանակ է պետք պատրաստվելու համար: Ուզում եմ, որ դու հենց հիմա, իսկույն ևեթ ճանապարհ ընկնես և ոչ ոքի ոչինչ չասես քո զնալու նպատակի մասին: Ընկերներիդ կասես, որ ինձանից նամակ ես տանում հեռման Սամոյլովիչին:

— Կազակն ինչ ունի պատրաստվելու, — ասաց Զվենիգորան: — Ես արդեն պատրաստ եմ:

— Ավելի լավ: Դրսում ձին քեզ է սպասում:

— Ենորհակալություն: Մնաս բարով, բատկո կոշկոյս Մնաս բարով, կոբզար: Գարնան գալու հետ սպասեք ինձ:

— Հաջողություն քեզ, Արսեն: — Սերկոն փաթաթվեց կազակին ու երեք անգամ համբուրեց:

Զվենիգորան գոտին կապեց շապկի տակ ու դուրս եկավ արտասանողաբ: Այնտեղ արդեն կանգնած էր չուրան՝ ջահել, կրակոտ ձիու սանձը բռնած:

Կազակը արագ ցած իջավ, ոտքը դրեց ասպանդակին և ճարպկորեն թռավ թամբին: Խամացած ձին սկսեց պար գալ նրա տակ, սկանչները խլշացնել:

Որպեսզի երկար-բարակ զրույցի չընկնի ընկերների հետ, Ջվենիգորան միայն մի պահ կանգ առավ խմբի մոտ:

— Մնաք բարով: Կոշևոյն ինձ ուղարկում է հետմանի մոտ, նամակ եմ տանում. ճամփին էլ կմտնեմ Դուբովայա Բալկա:

— Գնաս բարով, տղաս,— ասաց արդեն հարբած Մետելիցան:

Ջվենիգորան, առանց ձիուց իջնելու, նորից մի անգամ խոնարհվեց ու բաց թողեց սանձը: Սեկաչն ու Տովկաչը նրան ճանապարհ դրեցին մինչև դարպաս: Այստեղ ընկերները բաժանվեցին: Սեկաչն ու Տովկաչը շտապ ետ դարձան, որպեսզի էլի մեկական շերեփ օղի կոնծեն: Իսկ Ջվենիգորան ետ նայեց, մի հայացք գցեց ընդարձակ հրապարակին, կազակների աղմկոտ ամբոխին, կուրենի ցածրիկ կավածեփ հյուղակներին և դուրս եկավ ամբողջից:

5

Առաջին երկու օրերն անցան առանց պատահարների: Ջվենիգորան գիշերում էր խոտոտներում, ծանոթ կազակների մոտ: Գնում էր տափաստանով, ուղիղ, կարճ ճանապարհներով:

Չոր, արևոտ եղանակ էր: Սառնամանիքները թուլացել էին: Առավոտները բլրավետ հովիտը մինչև հորիզոն կայծկրլտում էր թխակապույտ եղյամով, որ հաստ շերտով նըստում էր խավավոր փետրախոտի, տափաստանային շամբերի ու ազազուն, փշոտ աղբախոտի վրա: Ցերեկը տաք էր անում, եղյամը հալվում էր, տափաստանն իսկույն սևին էր տալիս և թախիժ ու տխրություն բերում:

Երրորդ օրը, միջօրեին Ջվենիգորան առչեւում թխագորշ ծուխ տեսավ: Մուխը թափանցիկ, գալարուն սյուներով բարձրանում էր լեռան ետևից և ձգվում դեպի կապույտ, անամպ երկինքը:

Ջվենիգորան մտրակեց ձիուն, քառատրոփ արշավեց: Մինչև որ դուրս եկավ զառիթափ լանջը, որտեղ կանգ առավ մեխավածի նման՝ ապշած անակնկալ տեսարանից: Բլուրն ի վար, սևին տալով, փռված էր մերկ անտառը, իսկ

ներքևում լուսթյան մեջ, դեղնին էր տալիս ընդարձակ մարգագետինը: Գետակի երկարութեամբ գալարապտույտ երկինք էին բարձրանում կրակի ալ կարմիր բոցերը, վառվում էր խուտորը: Երկինք էին բարձրանում ծխի գորշ սյունները: Բոցի ալ լեզուները բռնել էին գետնամած ցածլիկ շինութունները, և նրանց վերևում դողդողում էր շիկացած, կայծերով զարդարված տաք մշուշը:

«Թաթարները...»

Զվենիգորան ուշադիր նայեց շուրջը: Ահա, հովտի մյուս կողմում, նեղ ձորակով բարձրանում է հեծյալ ջոկատը: Կազակը սուր աչք ունի. նա տեսավ ձիավորների կերպարանքները՝ աղվեսի մալխայներով՝ նետ-աղեղները մեջքներին գցած: Իսկ նրանց արանքում հետիոտն եսիրը² տղամարդիկ, կանայք, երեխաներ:

Զվենիգորան կրճտացրեց ատամները՝ նզովյալ մարդասպաններ: Թալանը, կողոպուտը, գերեվարումը դարձրել են իրենց արհեստը, որը վիթխարի շահույթներ է բերում Ղրիմի ու Թուրքիայի ստրկավաճառ շուկաներում: Թե որ մի հարյուրյակ կազակ լիներ իր հետ, նա առանց երկար-բարակ մտածելու կհետապնդեր նրանց ու կազատեր մարդկանց: Իսկ մենակ ի՞նչ կարող է անել: Մնում է միայն շնորհակալ լինել բախտից, որ ինքն էլ նրանց ճանկը չի ընկել:

Կազակը հովիտ իջավ և դանդաղ առաջ գնաց բոցերով բռնված խուտորի փողոցներով: Զին տազնապած խլշկոտում էր ականջները, խեթ-խեթ նայում ծերունիների ու երեխաների դիակներին:

Բակերից մեկում տանձենու տակ հանկարծ կանացի մի կերպարանք հայտնվեց: Զվենիգորան մոտեցավ: Կինը նայեց նրան խելացնոր աչքերով: Նրա կողքին պառկած էին երկու երեխա՝ սպիտակ, արյունով ներկված շապիկներով:

— Դու նո՞ր ես դալիս, զապորո՞ցի: Հա՛-հա՛-հա՛
Ուշացել ես: Միխայլիկին տարան, երեխեքին սպանեցին...
Տեսնո՞ւմ ես... Ես մնացի կկվի պես. կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ...
Կթոնեմ կգնամ Միխայլիկի ետևից... Մինչև էն անտեր Ղրիմ

¹ Մալխայ — մորթի փափախ: Նակ՝ լայն կապա:

² Եսիր (թուրք.) — գերի:

կգնամ... Կս՛ւ-կո՛ւ քնեք, փմ բալեք, քնեք, մինչև ետ կգամ,
կս՛ւ-կս՛ւ, կո՛ւ-կո՛ւ...

Կնոջ մտքերը շաղկեցին: Նա փարվեց երեխաներին,
տնքաց, հառաչեց ճայի նման, ցնցվեց խուլ հեծկլտոցից:

Զվենիգորան ձգեց սանձը, խթանեց ձիու կողերը:

Ինչո՞վ կարող էր օգնել թշվառին: Խոստանա՞լ, որ կա-
զակները թաթարից ետ կխլեն նրա Միխայիլին, կամ օգ-
նել, որ երեխաներին թաղի՞: Նա դեռ երկար կթպրտա երե-
խաների գլխավերևում, մահացու վիրավորված կարապի
նման, մինչև որ, ուժասպառ լինելով, ինքն էլ կընկնի նրանց
կողքին:

Դուրս գալով բլրի գագաթը՝ Զվենիգորան ետ նայեց ծխից
սևացած հովտին և շրջվեց դեպի հյուսիս:

Որպեսզի չհանդիպի թաթարական ջոկատին՝ նա թեք-
վեց ծանոթ շավղից և գնաց զարտուղի ճանապարհով: Շու-
տով դեմ առավ մի մեծ գյուղի, որի ծայրին, տափաստա-
նային գետակի կեռամանում կանգնած էր ամրոցը: Նոր սար-
քած բերդապարսպի վրա դեղնին էր տալիս ամուր կաղնյա
ցցապատնեշը: Կենտրոնում մի ամրակառույց տուն կար՝
գեղեցիկ սանդղավանդով ու փայտե մարագով, և ջրհոր՝
բարձր կոունկը վրան:

«Տեսնես ո՞վ է կառուցել, — մտածեց Զվենիգորան: —
Այսպիսի պարիսպների ներսում ոչ միայն հորդաններից
կարելի է պաշտպանվել (հորդան չի սիրում գրոհով ամրոց
վերցնել, նա հարձակվում է գյուղացիների անպաշտպան
խրճիթների վրա), այլև վարձկան զորքերից ու ենիչերի-
ներից»:

Նա ցած իջավ ու կանգ առավ աղբյուրի մոտ: Խարխուլ,
մամուռից կանաչած տաշտակի մեջ կապտին էր տալիս զու-
լալ, սառնորակ ջուրը: Զին ախորժակով խմեց՝ ատամները
պինդ սեղմած:

Փողոցով շորս ձիավոր սլացան: Առաջինը, — նուրբ մա-
հուղից կարած մուգ ժուպանով, թանկարժեք սուրը կող-
քից կախ, — ծանոթ թվաց Զվենիգորային: Ինչ-որ տեղ տե-
սել էր ամուր սեղմած շրթունքներով, գունատ, եռանկյունի
այդ դեմքը: Բայց թե որտեղ՝ չկարողացավ հիշել: Ետևից
ոլանում էին ծառաները:

Մոտեցավ մեծահասակ մի գյուղացի՝ փայտե դուլերը ուսին: Դեռ հեռվից գլխարկը հանեց ու գլուխ տվեց կազակին.

— Բարի աջողում:

— Աստծու բարին,— պատասխանեց Զվենիգորան և մտրակով ցույց տվեց բերդը: — Ո՞վ է շինել էդ ապարանքը:

— Կա էդպիսի մեկը,— խուսափողաբար սկսեց գյուղացին, բայց, տեսնելով կազակի անկեղծ դեմքն ու բարյացակամ հայացքը, ավելացրեց. — Պետրո Չեռնոբայը... Դորոշենկոյի գնդապետի՝ Յակիմի տղան... Թեպետ ջահել է, համա գժուժ մարդ է: Պան դառնալու միտք ունի... Դրա համար էլ սա շինեց... Ուրիշների ձեռքով...

«Ա-ա՛, Չեռնոբայը... Ուրեմն քիչ առաջ նա էր ձիով սլացավ»,— մտածեց Զվենիգորան. իսկապես նրան առաջ էլ էր հանդիպել:

Նրկու տարի առաջ Չեռնոբայը եկել էր Զապորոժիե, նամակ էր բերել աշափնյա հետման Պետրո Դորոշենկոյից: Չեռնոբայը գոռոզ ու ամբարտավան էր պահում իրեն, և զապորոժցիները սպառնացին կապել նրան ձիու պոչից, եթե նա փասափուսան չբաշի Սեչից:

Տեսնելով, որ տաքգլուխները կարող են իրագործել իրենց սպառնալիքը, Սերկոն Զվենիգորային կարգադրեց մի տասնյակ կազակ վերցնել, ուղեկցել Չեռնոբային մինչև տափաստան ու բաց թողնել, ուր կուզի՝ թող գնա, ինչքան շինի պատվիրակ է:

— Դիտեմ էդ մեկին,— ասաց Զվենիգորան և, հիշելով թաթարների ձեռքով ամայացած խուսորը, ավելացրեց.— Սակայն զուր տեղն ես նրա վրա բարկանում... Թաթարները պտտվում են շորս կողմը, կանրելի է թաքնվել բերդում, սպասել մինչև շար ժամանակներն անցնեն:

— Թաթարները: Որտե՞ղ,— գյուղացին ցնցվեց:

— Կամիշովկան վառել են... քիչ էր մնում դեմ առ դեմ հանդիպելի նրանց: Բոլորին գերի են տարել: Իսկ երեխաներին ու ծերերին կոտորել են...

Գյուղացու դեմքը ալլալլվեց.

— Շնորհակալություն, կազակ, լուրերի համար: Դե ես վազեմ... Հարկավոր է տազնապ բարձրացնել...

Նա դուլերը գցեց գետնին ու արագ դեպի ամրոց վազեց։
Զիտն մի կուշտ շրեւուց հետո Զվենիգորան գյուղից
գուրս եկավ ու սլացավ դեպի տափաստան։ Քշում էր ամբողջ
թափով, չէր խնայում ձիուն։ Անմատթյուն կլինեիր դեռ նոր
ճամփա ելած՝ ընկնել թաթարի ձեռքը։ Նժույզը ծանր էր
չնշում, բերանից դեղին փրփուր էր շաղ գալիս։

Զիտ ընթացքը դանդաղեցրեց այն ժամանակ միայն, երբ
մտավ անտառ։ Նեղլիկ կածանով բարձրացավ բլրի կատարը
ու կանգ առավ։

Իրիկնանում էր։

Քամիներից լերկացած բլրակի գագաթին կանգնած էր
հին, ժամանակից սևացած հողմաղացը՝ կոտրված թևերով։
Շուրջը ոչ մի շունչ։ Նույնիսկ ճանապարհը և արահետները,
որ դուրս էին գալիս անտառից, ժամանակի ընթացքում
ծածկվել էին մուխոտերով ու թփուտներով։ Երևում է, վա-
ղուց արդեն աղուն չէին բերել այստեղ աղալու, աղացքա-
րերը վաղուց կանգ էին առել ու էլ չէին աղմկում։

Զվենիգորան ձին կապեց, իսկ ինքը, ընդարմացած ոտ-
քերը ձգելով, նստեց կաղնու բոթուկին, մեջքը հենեց աղացի
պատին ու աչքերը փակեց։ Զգաց, թե հոգնածությունից
ինչպես է մարմինը ջարդվում։

Իրիկնային լուսթյան մեջ անսպասելիորեն ինչ-որ խշխշոց
և խուլ հառաչանքներ լսվեցին։ Զվենիգորան տեղից վեր
թռավ ու շուրջը նայեց... Սա ի՞նչ բան է։ Ոչ ոք չկար։ Զլի-
նի՞ որևէ մեկը թաքնվել է աղացում։ Կամ գուցե իրե՞ն թվաց։

Նա խաղաղվեց, ականջը կպցրեց սառը, մամռակալած
տախտակին։ Եվ կրկին խշխշոց լսեց։ Հետո՞ խուլ, սրտա-
ճմլիկ հառաչանք։ Ասես մեկը լալիս էր անձայն։ Զվենիգո-
րան ոտքի ելավ ու դեպի դուռը շտապեց։ Դուռը փակված էր
երկաթյա շղթայով և մի պինդ կաղնե գերան էլ գեմ էր ար-
ված դրսից։

«Տարօրինակ է,— մտածեց կազակը, հանելով կեռիկը,—
տեսնես ո՞ւմ մտքով է անցել՝ փակելու էս ավերակը»։

Դուռը ճոռալով բացվեց։

— Ո՞վ կա էստեղ,— հարցրեց Զվենիգորան ներս մըտ-
նելով։

Լուսթյունն ու խավարը եղան պատասխանը։ Մի քանի

բայլ առաջ գնաց, և նրա թիկունքից ներս ընկած իրիկնա-
ջին լույսը ազոտ լուսավորեց հազարավոր ոտքերից տրոր-
ված հատակն ու փոշու մեջ կորած ողջ աղացը՝ ավրատունը,
աղացքարերը, նեղլիկ աստիճանները, որ դեպի վեր էին
տանում, սարդոստայնով ծածկված գերանները:

— Ո՞վ կա էստեղ,— նորից հարցրեց կաղակը՝ ուշադիր
զննելով դիմացի պատի տակ շարժվող սև առարկան:

Այնտեղից խեղդված հառաչանք լսվեց: Մութ գանգվածը
նորից շարժվեց: Զարմացած Զվենիգորան մոտեցավ և քիչ
մնաց ճշար անակնկալից. հատակին ընկած էին երեք աղ-
ջիկ: Ձեռքերն ու ոտքերը կապկպված էին պարանով, բե-
րանները լաթ էր խցկած: Երեքն էլ դողում էին ցրտից, թեև
տաք էին հագնված:

— Ովքե՞ր եք: Ինչպե՞ս եք ընկել այստեղ,— Զվենիգո-
րան նրանց բերաններից լաթերը հանեց, թրով կտրատեց
պարանները:

Վախեցած, ցրտից փայտացած աղջիկները հազիվ ոտքի
կանգնեցին: Բայց, մի քանի քայլ շարած, ուժասպառ նրս-
տեցին, տազնապով ու անվստահությամբ նայելով անծա-
նոթին:

Աղջիկները շատ գեղեցիկ էին, շնաշխարհիկ: Եվ Զվենի-
գորան գլխի ընկավ, թե ինչն է նրանց նետել այս խարխուլ
ջրաղացը:

Աղջիկները դողդողում էին, ինչպես բալենին փոթորկի
պահին:

— Որտեղի՞ց ես,— դիմեց նա շիկավարս աղջկան, որ
ավելի մոտ էր նստած:

— Զիգիրիներից,— կամացուկ պատասխանեց աղջիկը:
— Ես տերտերի աղջիկն եմ... Ինչ-որ անծանոթ մարդիկ
տնից գողացան ինձ...

— Իսկ դո՞ւք,— Զվենիգորան նայեց երկու թխամազ
աղջիկներին:

— Մենք քույրեր ենք... Կորսունից... Մեզ ճանապարհին
բռնեցին: Եղբորս հետ վերադառնում էինք Զերկասից, որ-
տեղ ապրում է մեր մորաքույրը... Եղբորս սպանեցին, իսկ
մեզ հայտնի չէ ուր բերեցին... Ու չգիտենք, ինչ է սպա-
սում մեզ...

— Դժվար չէ գլխի ընկնել,— կամացուկ փնթփնթաց
Զվենիգորան: — Ձեզ ուզում են ծախել թաթարներին՝ հարեմ
տանելու համար... Ինչ-որ ստահակներ կապվել են թաթար-
ների հետ և կենդանի ապրանքի առևտուր են անում:

Աղջիկները աղի արցունք թափեցին: Քույրերը փարվե-
ցին միմյանց, իսկ շիկահերը ձեռքերը պարզեց դեպի Զվե-
նիգորան.

— Բաց թող մեզ: Փրկիր:

— Ես ձեր կապերը նրա համար չկտրտեցի, որ պահեմ:
Փախեք էստեղից, դե շուտ:

Աղջիկները կրկին ոտքի ելան: Սակայն նրանց երջան-
կությունը շատ կարճ տևեց, նույնիսկ շհասցրին բակ դուրս
գալ: Դրսից սմբակների ձայն լսվեց: Հողմաղացի մոտ կանգ
առան երեք ձիավոր: Տեսնելով ձին և բաց դուռը՝ նրանք
արագ ցած թռան ձիերից և, դուրս քաշելով թրերը, նետվե-
ցին դեպի հողմաղացը:

Աղջիկների ճիշդ կտրատեց իրիկնային անդորրը: Զվե-
նիգորան պատյանից դուրս քաշեց թուրը, կանգնեց դռան
շեմին: Չնայած թանձր աղչամուղչին նա դեպի աղացը վա-
զողների մեջ ճանաչեց Չեռնոբային:

Ահա թե ում ձեռքի գործն էր այդ ստոր խայտառակու-
թյունը: Դորոշենկոյի նախկին ծառայողը, կորցնելով տի-
րոջը, որը հարկադրված եղավ հանձնվել ցարի և հետման
Սամոյլովիչի ողորմածությանը, հիմա դարձել էր իսկական
ավազակ:

— Կանգ առեք,— գոչեց Զվենիգորան: — Եթե չուր եկել
եք աղջիկների ետևից, ապա բան դուրս չի գա: Չեք տանի:
Ես թույլ չեմ տա խեղճերին ծախեք: Միայն իմ դիակի
վրայով կանցնեք:

— Եվ կանցնենք,— գոռաց Չեռնոբայն ու թուրը խա-
չածևեց Զվենիգորայի թրին:

«Վիճակս վատ է. ես մենակ եմ, իսկ նրանք՝ երեքով,—
մտածեց Զվենիգորան՝ ետ մղելով Չեռնոբայի առաջին հար-
վածը: — Շատ վատ է... Այ, եթե բախտս բերի Չեռնոբայի
հախից գամ, խոլոպներն՝ իրենք կծլկեն էստեղից»:

1 Խոլոպ — ճորտ, ծառայ

Զվենիգորան կանգնած էր աստիճանների վրա, հակառակորդից մի գլուխ բարձր: Սրերի շաշյունն ու զնագրը տառածվում էր լուռ ու ցրտաշունչ անտառում: Նրա ուժեղ ու ճարպիկ ձեռքն անվրեպ ետ էր մղում Չեռնոբայի կարճ, բայց վտանգավոր հարվածները: Թիկունքից լսվում էին աղջիկների վախեցած ճիչերն ու հեծկտոցը:

Զվենիգորայի ճնշման տակ Չեռնոբայը փոքր-ինչ նահանջեց: Բարակ, երկար քթով և կրծած շրթունքներով նրա գիշատիչ դեմքը լարումից քարացել էր ու հիմա դիմակի էր նման: Երբեմն-երբեմն ծանր խոխոց էր դուրս թռչում նրա կրծքից: Երևում է, Չեռնոբայը գլխի ընկավ, որ գործ ունի փորձված, հմուտ ուղղիկի հետ, և հարյուրապետի շունչը բռնվեց: Չախ ձեռքով նա պատռեց կունտուշի օձիքը:

— Շոգեցիր, Չեռնոբայ: Սպասիր, քիչ հետո կմրսես,— ձեռ առնելով ասաց Զվենիգորան, իմանալով, որ ծաղրը հակառակորդին հանում է հավասարակշռությունից:

— Դու գիտե՞ս իմ անունը,— բացականչեց զարմացած Չեռնոբայը:

— Իսկ ինչո՞ւ պիտի շիմանամ: Քեզ պես երևելի կազակի անունը ոնց կարելի է շիմանալ,— ձեռ առավ Զվենիգորան, ոչ մի վայրկյան աչքը չկտրելով հակառակորդի սրից: — Զապորոժցիները հիշում են, թե դու ինչպես եկար Սեչ, Դորոշենկոյի կողմից: Ափսոս, որ էն ժամանակ գլուխդ չթոցրինք. հիմի մեր աղջիկների առուծախով չէիր զբաղվի...

Չեռնոբայի դեմքը ծոմովեց, մեռելի գույն ստացավ:

— Տղե՛րք,— խոխոացրեց նա:

Ինչ-որ բան շաչեց օդում: Զվենիգորան շահացրեց մի կողմ թեքվել, և ձիգ օղակը սեղմեց նրա կոկորդը: Նա ուզեց սրով կտրել օղապարանը, բայց ուժգին ցնցումը նրան գետին տապալեց: Տղաները ձեռքից խլեցին թուրը, ատրճառնակները պահեցին նրա վրա: Ետևում լսվեց աղջիկների հուսահատ վայնասուներ:

Մանր հեալով՝ Չեռնոբայը կուացավ ու ֆշշացրեց նրա երեսին:

— Դե, շուն, բռնվեցի՞ր: Հիմա մենք ուրիշ կերպ կխոսենք:

Նրանք ուշադիր նայեցին միմյանց: Չեռնոբայը հեզան-

քով ու շարախինդ ծումոնց բարակ շուրթերը: Նրա անարյուն դեմքին քարացել էր դաժան ուրախության արտահայտությունը:

Զվենիգորան գիտեր, որ Զեռնոբայը ոչ մի գնով կենդանի չի թողնի իր զազրելի հանցագործության վկային: Եվ ոչ ոք էլ չի իմանա, թե ուր կորավ կազակը, ինչ պատահեց նրան: Հեռավոր Դուբովայա Բալկայում իր հիվանդ մայրը զուր տեղը խրճիթի պատահանից դուրս պիտի նայի, զուր տեղը պիտի իր ճամփան պահի, կոշկոյ Իվան Սերկոն իզուր պիտի լուրերի սպասի...

Իսկ Զեռնոբայը, ասես նրա մտքերը կարդալով, ատամների արանքից այնպիսի խոսքեր ասաց, որոնք ծվատեցին նրա սիրտը, ինչպես կեղտոտ ճանկերը վերքն են ծվատում:

— Լակո՛տ: Փսլնքո՛տ: էդ ո՞ւմ ճամփին ես կանգնում: Հա՛-հա՛-հա՛: Զեռնոբայի՞: Վերջին հիմարը միայն կարող է էդպիսի բան մտածել: Տեսնում եմ, դու արդեն զրդջում ես: Զես ուզում մեռնել: Բա ո՞նց: Դու արդեն հասկանում ես, որ Զեռնոբայի ճամփին կանգնելու համար քո հիմար գլխով ես պատասխան տալու: Դու արդեն փոշմանել ես, որ պաշտպան կանգնեցիր էս թռչնակներին: — Նա գրլխով ցույց տվեց աղացի կողմը, որտեղ իր տղաներից մեկը նորից կապկպում էր աղջիկներին: — Քեզ տանջում է այն միտքը, որ ոչ ոք այլևս չի իմանա քո մահվան մասին... Եվ չի էլ իմանա: Շուտով դու էն աշխարհը կգնաս... Իմ օգնությունը, իհարկե... Հա՛-հա՛-հա՛...

Զվենիգորան սարսուռաց այդ խռպոտ ծիծաղից, ասես օձի ձեռք տվեց: Հասկանալով, որ այլևս կորցնելու բան չունի, նա հանկարծ թափ առավ և ոտքով հարվածեց թըշնամու փորին: Զեռնոբայը ճչաց և գլուխկոնծի թավալվեց գետնին:

Նրա տղաները նետվեցին դեպի Զվենիգորան: Մեկը ատրճանակի կոթով ուժգին հարվածեց գլխին, մյուսը, աղջիկներին թողնելով, ամբողջ մարմնով վրա ընկավ ու կազակի ձեռքերը ոլորեց:

— Չսպանեք, — կուշուձիգ լինելով գոռաց Զեռնոբայը: — Ես ինքս:

Տղաներից մեկն օգնեց նրան ոտքի ելնելու: Կծկված ու փորը բռնած, պատյանից հանելով թաթարական կարճ դաշույնը, նա դանդաղ մոտեցավ Զվենիգորային: Ցավից կուշեկած և շարուխունից մեռելի պես դեմքը կապտած՝ նա ժպտաց անբնական վայրի ծամածուծությամբ:

«Որտեղի՞ս կհարվածի: Սրտի՞ս: Փորի՞ս: Թե՞ կոկորդս կկտրի», — անցավ կազակի մտքով:

Զգիտես ինչու նա բնավ վախ չէր զգում: Կարծես խոսքը նրա կյանքին չէր վերաբերում: Մարմինը կարծես իրենը չէր, օտար էր, փայտից: Միայն կրկին ուղեղում կայծակի նման փայլատակեց մի միտք. «Իսկ Թուրքիա գնա՞լը: Ի՞նչ կմտածի Սերկոն: Չէ՞ որ նա երբեք էլ չի իմանա, թե ինչ պատահեց ինձ... Իսկ մա՞յրս: Խեղճ իմ մայր...»:

— Տղերք, իսկույն մի շիփ-շիտակ բոխի գտեք, մաքրեք ու լավ սրեք ծայրը. էս գարշելուն ցցի նստեցնենք: Մենակ թե շուտ:

Տղաները վերցրին սրերն ու վազեցին դեպի անտառ:

Այդ պահին բլրալանջից մի զիլ սուլոց լսվեց: Ապա կրկնվեց: Ինչ-որ մեկը, հավանաբար, տագնապի ազդանշան էր տալիս...

— Ե՛տ դարձեք, — գոռաց Չեռնոբայը, և տղաները վազելով ետ եկան: — Կապեք դրան ձիու թամբից, հետներս կտանենք: Հիմա ծամանակ չկա: Բայց, երդվում եմ դժոխքով, նա այսօր կուշուծիկ կգա ցցի վրա:

Ֆսֆսացնելով ու հայհոյելով՝ տղաները քարշ տվեցին Զվենիգորային, գցեցին ձիու վրա, օղապարանով ձեռքերն ու ոտքերը պինդ կապեցին, ամրացրին թամբին: Հետո նույն կերպ վարվեցին աղջիկների հետ:

Զիավորը մոտեցավ:

— Ի՞նչ կա, — կամացուկ հարցրեց Չեռնոբայը:

— Մի մարդ է գնում լանջն ի վեր:

— Ա՛, գրողը տանի: Փակեք դրա բերանը, թե չէ մեկ էլ տեսար կսկսի գողգողալ:

Մի բրդոտ գարշահոտ լաթի կտոր խցկեցին Զվենիգորայի բերանը: Շունչը կտրվեց: Ատրճանակի հարվածից գլուխը դժժում էր:

— Դե, հայդա: — Չեռնոբայը հեծավ ձին: — Միտրոֆան, պահպանիր դրան աչքի լույսի պես: Վտանգի դեպքում դանակը կողը խրիր: Էնպես, որ ծպտուն չհանի:

Ջոկատը վարգոժ դուրս եկավ անտառային արահետ, որը ուրվում էր մերկ ծառերի միջև: Ոչ մեկը չէր խոսում: Զիբրի խուլ դոփյունն էր լսվում միայն:

Շուտով սկսվեց տափաստանը: Թանձր աղջամուղջը պատեց երկիրը:

Լուսինը դեռ դուրս չէր եկել, և ձմեռային ցուրտ երկինքը գորշ թասակի պես կախվել էր վերևից:

Զվենիգորայի ձեռքերն ու ոտքերը փայտացել էին: Գարշահոտ փալասը թույլ չէր տալիս շնչել: Նա ջանաց լեզվով բերանից դուրս գցել, բայց փոխարենը ահագին մազ կուլ տվեց:

Թվում էր, ճանապարհը վերջ չունի: Կեսգիշերին մոտ կանգ առան մի նոսր, ցանցառ թփուտում: Չեռնոբայը անհետացավ խավարի մեջ և շուտով վերադարձավ մի ձիավորի ուղեկցությամբ, Զվենիգորան տեսավ, որ թաթար է:

— Մեր ետևից եկեք, — տղաներին հրամայեց Չեռնոբայը, իսկ ինքը թաթարի հետ գնաց առջևից:

Նրանք իջան մի խոր ձորակ, որտեղ խարույկ էր վառվում: Չորալանջին արածում էին բխոված ձիերը: Ցուրտ, սառած գետնին նստած ու պռկած էին մարդիկ՝ գերված տղամարդիկ, կանայք, երեխաներ: Նրանց կողքին, մերկացրած կեռ թրերը ձեռքներին, անցուդարձ էին անում թաթար ժամապահները:

Նկողներին տեսնելով՝ խարույկի մոտից երկու հոգի տեղներից ելան, բռնեցին Չեռնոբայի ու նրան ուղեկցող թաթարի ձիերը:

— Ալի, — դիմեց Չեռնոբայը վերջինիս, — ապրանքն աչքի անցկացրու, ես ժամանակ չունեմ:

Այս խոսքերի հետ նա գլխով իր տղաներին նշան արեց, որ աղջիկներին իջեցնեն ձիերից: Սարսափից ու կրած ապարումներից սփրթնած՝ նրանք ահուգողով նայեցին թաթարին, որը ծտտացրեց լեզվով և ուրախությունից ժպտաց ճապաղ ժպիտով:

— Այ-վա՛յ: Յախշի¹: Դուժե դուպրե²,— նա իրար խառնեց թաթարերեն և ուկրաիներեն բառերը: — Յախշի խանում³: Աղան իր օգուտը գիտի: Զուր չէ, որ իմը էսպես վտանգավոր արշավանք կատարել: Կաֆայում⁴ ծախելու բան լինի:

Նա մոտեցավ աղջիկներին, կեղտոտ մատներով բարձրացրեց նրանց կզակները և, ծտտացնելով, ուշադիր զննեց նրանց: Թշվառները վախից պապանձվել էին, դողում էին զզվանքից, բայց Ալին ոչ մի ուշադրություն չդարձրեց նրանց վրա:

— Այ-վա՛յ: Յախշի խանում,— գոհունակությամբ կրկնեց նա: — Շնորհակալություն, իմ ազիզ բարեկամ, շնորհակալություն, աղա Պետրո:

— Խանի հարեմին արժանի ապրանք է,— ասաց Զեռնոբայը: — Ցնծա փողը, Ալի:

Թաթարի ծաղկատար դեմքը իսկույն դաժանացավ, դարձավ անթափանցելի:

— Ինչքա՞ն:

— Ամեն մեկի համար մեկուկես հազար ցեխին⁵:

Ալին թուքը կուլ տվեց, ասես խեղդվում էր:

— Ամեն մեկին հինգ հարյուր:

Զեռնոբայը գլուխը բացասաբար օրորեց:

— Վեց-վեց հարյուր: — Ալին լիզեց ցրտից շորացած շրթունքները:

— Դու ամեն մեկի համար երեք հազար կստանաս, Ալի: Ես գիտեմ: Ոչ Կաֆայում, ոչ էլ Ստամբուլում դեռ երբեք էսպիսի աղջիկներ չեն ծախել: Սրանք ավելին արժեն, քան քո բոլոր գերիները: — Զեռնոբայը աչքի պոչով նայեց եսիրի կողմը: — Ես էլ ձրի չեմ ձեռք բերել...

— Գիտեմ, ամեն մի որսորդ, որսի գնալով, վտանգի է ենթարկվում... Բայց դու նրանց համար փող չես տվել:

— Զարչարանքն էլ չարժե... Դե վերջին խոսքդ ասա:

1 Յախշի (թուրք.) — լավ:

2 Դուժե դուպրե (ուկր.) — շատ լավ:

3 Խանում (թուրք.) — կին, տիկին:

4 Կաֆա — Բուրգոսիայի հին անունը:

5 Ցեխին — վենետիկյան հին ոսկեդրամ:

— Ութ-ութ հարյուր, և մի ցեխին էլ չեմ ավելացնի:

— Լավ,— համաձայնեց Չեռնոբայը: — Բայց վտանգի դեպքում... ինքդ էլ հասկանում ես, նրանք ընդմիջտ պիտի լռեն: Ես գլխով եմ պատասխանատու:

— էդ խոսքերն ավելորդ են,— նեղացավ Ալին: — Ես երեխա չեմ, գիտեմ: Թրով զարկել, գլուխ թոցնել:

Ճարպոտ քուրքի տակից նա հանեց քսակը, փողը հաշվեց, հետո գլխով ցույց տվեց Ձվենիգորային.

— Իսկ սրա՞ն բանիսով կտաս:

— Դա ծախու չէ,— շղային պատասխանեց Չեռնոբայը:

— Ափսո՞ւ: Պինդ կազակ է երևում: Շատ լավ աշխատող դուրս կգա: Սրա համար ավելի մեծ փեշքեշ կտայի: Գուցե կծախես, հը՞:

Չեռնոբայի տղերքը իրար նայեցին: Նրանցից մեկը կոնչաց, երևում է, ուզում էր մի բան ասել: Բայց Չեռնոբայն խկույն վրա բերեց.

— Ոչ, նա պետք է ինձ: Մնաս բարով, ժուրգա: Մեր պայմանը մնո՞ւմ է ուժի մեջ:

— Բա ո՞նց... Ես կարծում եմ, Ուկրաինայում գեղեցիկ աղջիկներ դեռ շատ կան, հը՞: — Ալին հռհռաց: — Գնաս բարով, աղա Պետրո: Ալլահը թող քեզ պահպանի:

Չեռնոբայը հեծավ ձին, նորից ձեռքով արեց, հրաժեշտ տվեց Ալիին, և հինգ ձիավորներից բաղկացած փոքրիկ ջուկատը սուզվեց խավարի մեջ:

6

Սառած գետինը զրնգում էր ձիերի սմբակների տակ: Շրշում, խշխշում էր փշոտ, ցրտահարված մուլախոտը: Չեռնոբայը հարբածի պես օրորվում էր երկնքում, և թվում էր, կպոկվի ու իր ճաղատով կզարկվի գառիկող բլրին: Եվ այնժամ կիջնի խավարը:

Ձվենիգորան գիտեր, որ ոչ թե լուսինն է օրորվում, այլ ինքն է ճոճվում թամբի վրա: Մարմինը ամբողջովին ընդամացել էր: Պինդ կապկպված ձեռքերն ու ոտքերը փայտացել էին, այլևս դրանց գոյությունը չէր զգում: Կոշտ խցոցը քրքրել էր նրա լեզուն ու բերանը, ստիպված կուլ էր տալիս

իր սեփական աղահամ արյունը: Անասելի խմել էր ուզում: Նրան տանում էին մահվան: Նա դիտեր այդ մասին: Բայց թե որտեղ կիրագործվեր մահապատիժը և ինչպիսի գաժան մահ էր մտածել Չեռնոբայը՝ այլևս չէր հետաքրքրում նրան: Միայն թե շատ վերջանար...

Մի բարձր բլրի մոտ, որ ազոտ ուրվագծվում էր կապույտ երկնքի հենքին, Չեռնոբայը կանգ առավ:

— Միտրոֆան, կատարին քարեր շատ կան... Գնա մի քար բեր էս բայստրյուկի՝ համար Տես, շուշանաս: — Տղան նետվեց դեպի հողաթումբը, իսկ Չեռնոբայը դարձավ Չվենիգորային. — Մտքովդ թող շանցնի, սատանի ծնունդ, թե բեզ կխեղդենք: Չէ, սիրելիս, դա բեզպեսի համար շատ թեթև մահ կլինի... Մենք բեզ ցցի վրա կնստեցնենք ու կսպասենք, մինչև որ կոկորդիցդ դուրս գա... Այ թե ինչ մահով կմեռնես, սիրելիս... Փոխարենը էն աշխարհում էլ բոլորին խորհուրդ կտաս հեռու մնալ Չեռնոբայից... Իսկ հետո վզիցդ քար կկապենք ու կգցենք լիճը՝ ձկներին կեր: էնպես որ իզութողդ էլ չերևա... Հը, ո՞նց է: Դուրդ գալի՞ս է... Չէ՞... Այ թե փ՛նչ...

Նա դեռ երկար կխոսեր, քանի որ թշնամու համար պատրաստվող տանջանքների տեսարանը հաճույք էր պատճառում նրան, բայց տղան վերադարձավ՝ քարը ձեռքին, և ջոկատը շարունակեց ճանապարհը:

Մեկ ժամ անց նրանք դուրս եկան բանուկ ճանապարհ:

— Շուտով կհասնենք լճին, տղերք, — ասաց Չեռնոբայը: — Մի հինգ վերստ մնաց...

Հանկարծ նա լռեց ու սկսեց ականջ դնել:

— Դուք բան չե՞ք լսում:

Բոլորը կանգ առան:

— Ոնց որ ձիավոր է, — անվստահ ասաց լողող Միտրոֆանը:

— Իսկը որ ձիավոր է, — հաստատեց մյուսը, որ սպիտակ բաշլուղով էր: — Օ՛յ, լսո՞ւմ եք: Այստեղ է գալիս... Կարծես մենակ է:

Հեռվից ուժգին դոփյուն լսվեց: Ձին սլանում էր քասաատրոփ:

1 Բայստրյուկ (ուկ.) — բիճ, ապօրինի ծնունդ:

— Ինչ-որ մեկը աճապարում է Չեռնոբակա,— ասաց Չեռնոբայը և դարձավ բաշլուղավորին.— Սրան տար թփերի ետևը, իսկ մենք կսպասենք էստեղ, տեսնենք էդ ով է...

Խոռը Չվենիգորայի ձին քաշեց թփուտի ետևը:

Դոփյուժը մոտեցավ: Ահա երևաց ձիավորի մութ կերպարանքը: Նա ունեւում էր ամբողջ թափով: Գիշերային տափաստանի մեռյալ լուծյան մեջ զընգում էր սառցակալած գետինը:

Ճամփի վրա անծանոթների տեսնելով՝ հեծյալը կտրուկ կանգնեցրեց ձին:

— Ովքե՞ր եք,— տազնապահար հարցրեց նա:

— Իսկ դու ո՞վ ես և ո՞ր կողմ ես գնում,— իր հերթին հարցրեց Չեռնոբայը:

— Ես գնում եմ Չեռնոբակա:

— Ո՞ւմ մոտ:

— Պետրո Չեռնոբայի:

— Պետրո Չեռնոբայը ես եմ որ կամ: Ի՞նչ է պատահել: Ինչո՞ւ ես էդպես աճապարում: Մոտ արի:

Ձիավորը մոտեցավ, ուշադիր զննելով անծանոթներին՝ պատրաստ ամենափոքր վտանգի դեպքում ձիու գլուխը ետ շրջել:

Բայց ահա Չեռնոբայը գլուխը բարձրացրեց, և լուսինը նրա դեմքը լուսավորեց: Ձիավորի կրծքից թեթևացած մի հառաչանք դուրս թռավ:

— Օ՛Ֆ-Ֆ, էդպես է, որ կա, տերն է: — Նա մտրակեց ձիուն և ընդհուպ մոտեցավ... — Ես գնդապետի մոտից եմ գալիս...

— Ի՞նչ է պատահել հորս,— իսկույն վրա պրծավ Չեռնոբայը: — Մա՞նր է:

— Մեռնում է... Խնդրեցին, որ անմիջապես գաք: Գնանք... Ամեն բոպեն թանկ է:

— Տե՛ր աստված,— բացականչեց Չեռնոբայը: — Կհասցենե՞նք: Ձիս բոլորովին հալից ընկել է...

— Գուցեև հասցնենք: Ձի կարելի մլուլ տալ:

— Գնանք: Գերասիմ, արի ինձ հետ: Իսկ դու, Միտրոֆան, Խոռի հետ... — Չեռնոբայը ինչ-որ բան շշնջաց նրա ականջին և հենց տեղից ձին արշավակի բռնեց:

Գերասիմը և բանբերը սլացան նրա ետևից:
Խոռը, Զվենիգորայի ձիու սանձից քաշելով, դուրս եկավ
ճանապարհի վրա ու հարցրեց.

— Էդ ի՞նչ ասաց, Միտրոֆան:

— Որ սրա հետ ինչ-որ պետքն է մենք անենք:

— Էստեղ հիմար չկա: Տափաստաններում քաշ գալուց
ձանձրացել եմ: Գոնե իմանայինք ինչի... Չեոնոբայը մի
լիքը քսակ գրպանը դրեց, իսկ մեզ, առ հա, էս թողեց...
Տուն որ գնանք, կոկորդներս թրջելու բան էլ չենք ունենա:

— Ուրեմն ի՞նչ ես ասում,— բառերը հատ-հատ արտա-
սանելով հարցրեց Միտրոֆանը: — Հենց էստեղ վե՞րջ տանք
կազակին, էլ լիճ չհասցնե՞նք... Ինձ որ թողնեն, էդպես էլ
կանեմ: Չեոնոբայն ուզում էր տանջել նրան, իսկ դա մեր
ինչին է պետք: Թող թեթև մահով մեռնի:

— Համա թե դմբոն ես, հա՛, Միտրոֆան,— փնթփնթաց
Խոռը, բարձրանալով ասպանդակին, որպեսզի գոնե մի քիչ
հավասարվի բարձրահասակ, ձողի պես երկար ու լողլող
ընկերոջը: — Ամեն ինչ պիտի ծամեն բերանդ դնեն... Ես էն
եմ ասում, որ Չեոնոբայը աղջիկների համար մի զլոտի էլ
չի տա: Վատ չէր լինի, որ էս գործից մենք էլ մի օգուտ
ունենայինք...

— Էդ ի՞նչ օգուտ է,— աչքերը չոեց Միտրոֆանը:

— Արի հասնենք Ալու ետևից,— արագ-արագ շնչաց
Խոռը. — էս կազակին ծախենք նրան: Դու հո լսեցիր, Ալին
ուզում էր առնել: Ինչ ես կարծում, ինչքա՞ն կտա:

— Հո չե՞ս գժվել,— վախեցած ետ-ետ գնաց Միտրո-
ֆանը: — Չեոնոբայն իմանա, երկար-բարակ չի մտածի,
զլոտիներս կկտրի:

— Որտեղի՞ց պիտի իմանա: Հո ինքներս չե՞նք դուրս
տա... Կասենք. էսպես ու էսպես... ցցի նստեցրինք, իսկ
հետո քարը կապեցինք վզից ու ջուրը զցեցինք: Թող սկի,
ման գա... Ալուն կխնդրենք, որ ինքն էլ սուս մնա, իսկ էս
չահելին թող մի հեռու տեղ ծախի, ծովից էն կողմ:

Միտրոֆանը տատանվեց, իր թանձրամիտ ուղեղով ինչ-
որ բան ծանրութեթև արեց:

— Դե, էստեղ ի՞նչ կա երկար մտածելու,— չէր հան-
գրմանում Խոռը: — Թաթարը հարյուր ցեխիսից պակաս

չի տա սրա համար: Ամեն մեկս հիսուն ցելսին կղնի գըր-
պանը: Ինչ է, չլինի՞ թե փողի մեջ լվլվում ես:

— Որ ջահնամից: Նույնիսկ գարեջուր խմելու համար մի
գոռչ շունեմ: Միկիտանից եմ պարտք վերցրել...

— Իսկ էսպես միանգամից կհարստանաս: Ալին լավ
կվճարի, առաջին անգամ չէ, որ նրա հետ գործ ենք ունե-
նում... Գնանք, քանի չի լուսացել: Թաթարները որ ճամփա
ընկան, էլ նրանց հտեկից հասնել չի լինի:

Միտրոֆանը ծոծրակը քորեց:

— Ճիշտն ասած, վտանգավոր է...

Դա նշանակում էր, թե համաձայն է: Անհաստատ, ան-
վստահ: Բայց ավելին պետք էլ չէր Խոռին: Նա իսկույն շըր-
ջեց ձիու գլուխն ու սլացավ եկած ճանապարհով:

... Ալին երկար շտակարկեց: Շոշափելով Զվենիգորայի
մկանները՝ նա հասկացավ, որ իր առջև ամենալավ ապ-
րանքն է, և անմիջապես վճարեց փողը: Թմրած, ընդարմա-
ցած կազակին իջեցրին ձիուց և կապկպված ձեռքերով հրե-
ցին գերիների ամբոխի մեջ:

Գերիներին քշում էին ոտքով: Միայն հարեմի համար
նախատեսված ջահել, գեղեցիկ աղջիկներին էին ձեռքով
տանում. դա թանկ ապրանք էր: Տարեց կանանց ու երեխա-
ներին չէին կապել: Փոխարենը տղամարդկանց վրա խիստ
հսկողովություն էր սահմանված. տաս-տաս կապկպել էին
թամբերից ու քարշ էին տալիս անասունների պես:

Զվենիգորան իր տասնյակի հետ գնում էր առջևից.
ձեռքերը կապված էին մեջքին շղաբաղած կաշեփոկով, գո-
տու շուրջը փաթաթված արկանը անգթորեն ձգում էր առաջ
ու առաջ՝ դեպի Ղրիմ, գերության, մահ:

Երկրորդ օրը, երբ ջոկատը աճապարանքով (որպեսզի
կազակական պահակազորը հեռվից չնկատի) անցավ բարձր
բլրի մյուս կողմը, առջևից անհանգիստ, տագնապալից ձայ-
ներ լսվեցին:

Զվենիգորայի սիրտը զարկեց ուրախ: Մի՞թե զապորոժ-
ցիներն են:

Նա ջղաձգորեն շուրջը նայեց, հուսալով տեսնել հեծյալ-
ների ցրիվ եկած շարքը: Բայց ամենուրեք միմիայն անմարդ,

ամայի հեռաստանն էր: Բա ինչո՞ւ թաթարներն իրար անցան: Ի՞նչը անհանգստացրեց նրանց:

Ահա ջոկատից անջատվեցին հինգ ձիավոր և քառատրոփ սլացան հովիտ: Մուխոտերի միջից վախեցած վեր ճախրեց կուշտ կերած արոսների ծանր երամբ:

Զվենիգորան նայեց այն կողմը, դեպի ուր սլացան ձիավորները, և նրա սիրտը ճմլվեց: Հովտի հակադիր լանջով գնում էին երկու ճամփորդ: Մի տեսակ շատ ծանոթ բան կար նրանց աղոտ գծագրվող կերպարանքներում: Ովքե՞ր էին: Որտե՞ղ էր տեսել նրանց:

Այդ միջոցին ձիավորները ծածկվեցին հովտում: Ծամփորդները կանգ առան. ըստ երևույթին նկատեցին թաթարներին: Փութով սկսեցին վեր մագլցել: Բայց մի՞թե կփախչես թաթարական արագավազ ձիերից: Այդ լերկ, անտառագուրկ տափաստանում մի՞թե կթաքնվես թաթարի սրատես աչքից:

Ահա մեկը ետ նայեց, թողեց ընկերոջն ու առաջ սլացավ: Մյուսը կանգ առավ: Որոշ ժամանակ անշարժ մնաց, ասես ահանջ էր դնում ինչ-որ բանի, հետո, ձեռքերն առաջ պարզած, նույնպես վազեց: Սակայն վազում էր մի տեսակ անվստահ, անշնորհք, երերալով, գայթեղով, ընկնելով ու շարունակ դեպի ձախ գնալով:

«Կույր է,— սարսափեց Զվենիգորան: Եվ իսկույն ճանաչեց կորգար Սոմին ու նրան ուղեկցող Յացկոյին: — Համա թե ընկան էդ թշվառները: Ուղիղ տափաստանային գիշատիչների ճանկը»:

Նրանց բերեցին, երբ գերիների խումբն արդեն իջնում էր հովիտ:

Յացկոն լալիս էր ու հալածված գազանի պես վախեցած շուրջն էր նայում: Սոմը հանգիստ էր: Նրան կանգնեցրին Ալու առջև: Մերունին բարձրացրեց ալեհեր գլուխը,— գրլխարկը ինչ-որ տեղ կորցրել էր,— և թաթարի վրա սևեռեց զարհուրելի խոռոչները, որոնցում մի ժամանակ աչքեր էին եղել:

Ալին արհամարհական ժպտաց:

— Տղային կապեք: Պինդ: Ժիր լակոտ է, մեկ էլ տեսար

ճամփին փախաւ... Իսկ ծերունուն... ծերունուն բաց թողեք: Մենք հո նրան Ղրիմ շենք տանի... է՛յ, հալւոր, գնա քեզ համար: Լսո՞ւմ ես:

— Շնորհակալ եմ,— խուլ մրմնջաց Սոմը և անհաստատ առաջ գնաց:

Բայց այդ պահին, դուրս պրծնելով թաթարի կաշուն ձեռքերից, Յացկոն բղավեց.

— Պապիկ: Պապիկ: Ո՞ւր ես գնում: Բա ե՞ս...

Յացկոյի ձայնը լսելով՝ կորզարը կանգ առավ և ավիփեց մտրզայի քուրքը:

— Բաց թող էդ երեխին, բարի մարդ, ալլահը քո լավությունը չի մոռանա: Նա դեռ փոքր է... Որք է: Դու նրա համար շատ շեւ վաստակի: Հոգուդ մեղք մի՛ անի,— աղերսեց նա:

— Գնա: Գնա, գյավուր,— ծղրտաց Ալին ու մտրակով հարվածեց ծերունու գլխին:

Սոմը բռնեց արնաշաղախ ճակատն ու մի կողմ նետվեց: Նրա երկար, բարակ ոտքերը խճճվեցին մոլախոտերի մեջ, ասես փայտից լինեին: Մախաղը ցատկոտեց, զարկվեց թիկունքին: Խուլ տնքաց կորզան:

Ալին քաշեց աղեղը: Դրեց նետը:

— Պապիկ: Նրանք ուզում են սպանել քեզ: Փախի՛ր, շո՛ւտ,— զոռաց Յացկոն:

Ալին ձգեց աղեղնալարը: Լսվեց սև նետի սուր, կարճ սուլոցը: Կորզարը սայթաքեց, ձեռքերը թափ տվեց ու երեսնիվար ընկավ մոլախոտերի մեջ:

Թաթարները հռհռացին: Նրանցից մեկը դուրս քաշեց թուրը և նետվեց դեպի ծերունին, որպեսզի վերջ տա նրան, սակայն մտրզան կանգնեցրեց:

— Առանց դրան էլ կսատկի: Ես ճիշտ տեղին եմ խփել: Նա մոտ գնաց, կռացավ ու ծերունու թիկունքից դուրս քաշեց նետը:

— Հոտած շուն: Թալանչի: Ինչի՞ սպանեցիր պապիս: Ի՞նչ էր արել քեզ, հը՞... — ճչաց Յացկոն:

Ալին ատամները կրճտացրեց: Նրա նեղ աչքերում սև կրակի նման փայլեց զայրույթը: Լայն այտոսկրոտ դեմքը

ծումովեց շարախինդ քմծիծաղից: Նա ձին առաջ քշեց, մըտա
րակով կատաղի շրխկացրեց Յացկոյի գլխին: Տղան գլուխը
քաշեց ուսերի մեջ ու ձայնը կտրեց:

— Վազիր այստեղ,— ձայնեց Զվենիգորան:

Յացկոն ճարպկորեն խցկվեց գերիների ամբոխի մեջ:
Սրանք տղային առան իրենց մեջ ու փակեցին շարքը:

Ալին ձին ետ պահեց, զզվելի հայհոյանքներ տեղաց:

— Գյավուր: Շուն,— Ֆշշացրեց նա հեռանալով և առջե-
վից գնացողներին նշան արեց, որ շարժվեն:

— էս ո՞ւր եք եկել, այ խեղճուկրակներ,— կարեկցան-
քով հարցրեց կազակը: — Ձեզ համար նստեիք մնայիք Սե-
չում, էլի:

— Սոմ պապն ուզում էր տեսնել հարադատներին,—
հեկեկաց տղան: — էստեղ մոտերքում են ապրում... Լավ
հասանք, հա՛: Պապը հոգին տվեց աստծուն, ինձ էլ թա-
թարները բռնեցին հավի պես... ու-ու-ո՛ւ...

Յացկոն նորից լաց եղավ: Զվենիգորան փորձեց սփոփել
նրան, մտքերը ցրել: Բայց որտեղից: Մի դառը կոշտ դեմ
էր առել կոկորդին, իսկ սրտի վրա ասես մի ծանր քար էր
ընկել ու սեղմում էր:

... Պերեկոպն անցան իրիկնադեմին: Արևի հսկայական
սառը գոնդը գլորվեց հարթավայրի վրայով և արյունոտ
լույսով ողողեց նեղ պարանոցը: Ղրիմ: Թաթարերեն՝ Կիրիմ¹:

Զվենիգորային արդեն վիճակվել էր այդ կողմերում լի-
նել Սևրկոյի գլխավորած արշավանքի ժամանակ, և նա գի-
տեր, որ այդ վայրը կոչվում է «Արցունքի ճանապարհ»,
«Արցունքի դարպասներ», որովհետև թաթարները որտեղ էլ
որ եսիր էին վերցնում՝ Աշափում թե Զախափում,
Սլոբոժանշչինայում² թե Գալիցիայում, Դոնում թե Մոսկ-
վայի մոտ, անպայման Պերեկոպով էին անցկացնում:

1 Կիրիմ (թաթար.) — Պերեկոպ:

2 Սլոբոժանշչինա — Ուկրաինայի հյուսիսարևելյան մասը, որտեղ
բնակություն էին հաստատել փախստական կազակները և հարկ չվճարող
արհեստավորները:

նանի պահակազորը և մուքաշիրները¹, որոնք մշտապես գտնվում էին Պերեկոպի ամրոցներում, յուրաքանչյուր զերու համար յասակ² էին վերցնում: Այստեղ հեծյալ ջոկատները բաժանվում էին ոչ մեծ խմբերի, որոնք ցրվում էին ողջ Ղրիմով մեկ:

Քանի ղեռ գերիները քայլում էին հայրենի հողի վրայի վ, դեռևս լիովին չէին գիտակցում իրենց հասած դժբախտության ամբողջ խորությունը. նրանք հույս էին դնում մեկ ճանապարհին փախչելու, մեկ կազակների անսպասելի հարձակման, մեկ էլ աստված գիտի, թե ինչի վրա: Այստեղ նրանք կորցրին վերջին հույսը. առջևում օտար, զարհուրելի երկիրն էր, որը հրեշի նման ամեն տարի տասնյակ հազար մարդ էր կլանում և գրեթե ոչ մեկին ետ չէր դարձնում:

Բերնեբերան մի կարճ զարհուրելի բառ անցավ միայն՝ Ղրիմ: Նույնիսկ տղամարդկանց սրտերը թրթռացին: Գերիները նայեցին ետ, որտեղ գորշ, մառախլապատ հեռաստանում հավիեցին հայրենի տափաստանները, և նրանց աչքերից արցունքներ հոսեցին: Ողբում էին կանայք, լաց էին լինում երեխաները: Տղամարդիկ լալիս էին լուռ, անձայն: Արցունքներն ընկնում էին շոր, անթիվ ոտքերից տրորված հողին, որը հարյուրամյակների ընթացքում դարձել էր անպտուղ աղուտ: Միայն դառը ուսպ³ էր երբեմն հանդիպում նրանց, մեկ էլ փարթամորեն աճած կծու, խեղդող օշինդր:

Զվենիգորայի մտքով երբեք չէր անցել, թե իրեն էլ կվիճակվի այդ անիծված ճանապարհով գերության գնալ: Ահա և վիճակվեց: Կապկպված, կեղտոտ, տանջված-տառապած ստրուկի նման...

Պերեկոպն անցնելուց հետո ղեռ մի ամբողջ օր քայլեցին պարանոցով, և միայն իրիկնադեմին Ալին ջոկատը կանգնեցրեց մի մեծ անբարեհամբույր լճի ափին, որի ջուրը անշարժ էր ու գարշահոտ: Այստեղ նա նշան արեց եսիրը բաժանել:

1 Մուքաշիր (թաթար.) — հարկահավաքներ, որոնք ավարի մեկ տասնորդը խլում էին հօգուտ խանի գանձարանի:

2 Ցասակ — բնահարկ:

3 Ռապա — աղալճերի ջուր:

Ջարհուրելի ճիշտ ազադակ բարձրացավ: Թաթարներն իշան ձիերից և տղամարդկանց, կանանց ու երեխաներին առանձին-առանձին շարքի կանգնեցրին: Բուրդը դուրս արած, գզգզված կարճ քուրքերով, ուշխարենու և աղվեսենու մալախայ փափախներով, հորթի ու ձիու կաշվից կարած անճոռնի քոշերով՝ դրիմցիները նմանվում էին գայլերի ու զմակի, որը վրա է պրծել՝ ծվատելու իր զոհին:

Երբ բոլոր գերիներին շարք կանգնեցրին, Ալին առաջինը ջոկեց իր բաժինը:

Նա դեռ ճանապարհին լավ տնտղել էր գերիներին և իր համար ընտրեց ամենաուժեղ տղամարդկանց ու ջահել սիրունատես կանանց: Երկու զինվորներ աննահանջ հսկում էին երեք գեղեցկուհիներին և Չվենիգորային: Ցացկոն էլ բաժին ընկավ Ալուն:

Չվենիգորան գրկեց լացից ցնցվող մանչուկին: Ուզեց մի քանով մխիթարել նրան ու նորից շկարողացավ: Ինչ-որ ժանր մի բան ցավեցնելու շափ սեղմում էր կոկորդը: Հազիվ զսպեց իրեն, որպեսզի ինքն էլ շարտասվի: Ցացկոն սեղմվեց կազակի կրծքին, սսկվեց:

Ադուտ հարթավայրում սարսափահար փրար էին անցել, հեծկտում էին, թպրտում մարդկային վշտի ցավից և հուսահատությունից: Կանայք կառչում էին տղամարդկանցից, հափշտակիչների ձեռքից խլում էին իրենց երեխաներին: Երեխաները նետվում էին դեպի մայրերը, աղերսում էին իրենց էլ տանել հետները, լացուկոծ էին անում: Տղամարդիկ փորձեցին կտրատել պարաններն ու կաշեփոկերը, ընկան թաթարների վրա, բայց տեղնուտեղը ետ շարտվեցին մտրակների կատաղի հարվածներից, որը ծվատեց նրանց կաշին: Լացուկոծը, ճիշն ու կականը, հառաչանքներն ու անհեծքները միախառնվել էին հայհոյանքների ու սպառնալիքների հետ: Ցազնապահար վրնջում էին ահաբեկված ձիերը:

Բայց ավելի սարսափելին դեռ առջևում էր:

Երբ մուրզա Ալին առանձնացրեց իր եսիրը, զինվորները, միմյանց հրմշտելով, սկսեցին շարքերի միջից դուրս քաշել առավել ուժեղ գերիներին և ամենաջահել գերուհիներին: Այնպիսի տուրուղմփոց սկսվեց, որ Ալին թուրը քաշեց ու

գոռգոռալով վրա բրձամլ՝ զսպելու գազազած ցեղակիցներին:

— Վերջ տվեք, շեյթանի զավակներ: Փակիր բերանդ, Շարիֆ, թե չէ ես թրով կփակեմ: Բոլորիդ էլ հերիք կանի, գրողը ձեզ տանի,— գոռաց նա՝ վազելով մի կողմից մյուսը:

Նրա աչքերը կատաղի փայլում էին: Կարմրավուն մալխայի տակ զայրույթից կրակ էր կտրել տուռզ, սև ծաղկասպիներով ծածկված դեմքը:

Գերիների վայնասունին ավելացավ ավազակների հայհոյանքը, որոնք պատրաստ էին միմյանց կոկորդ կրծելու:

— Հեռու քաշվի, մուրզա: Դու արդեն քոնն ստացար, էլ մեր գործին մի՛ խառնվի,— գոչեց հսկա Շարիֆը, գրկած տանելով շիկավարս ջահել մի աղջկա, որը ճղավում էր ու ջղաձգորեն քացի-քացի անում: — Ավելի լավ է մի կողմ քաշվի:

Նա աղջկան գցեց գետին, ոտքը դրեց վրան և դուրս քաշեց կեռ թուրը, իր ողջ տեսքով մուրզային հասկացնել տալով, որ ուժով կպաշտպանի իր ավարը:

Ալին կանգ առավ, թուրը ցած իջեցրեց:

— Թո՛ւհ, նզովված շներ: Գրողը ձեզ տանի: Ինքներդ բաժանեք, քանի խելքներդ չեք թոցրել...

Նա շրջվեց ու գնաց դեպի իր խումբը, ուշադրություն չդարձնելով ետևից լսվող աղմուկին ու վայրի աղաղակներին:

Իսկ այնտեղ երկու ավազակների միջև կռիվ էր բորբոքվել մի դեռատի, տասներկու տարեկան տղայի համար: Տարբեր կողմեր քաշքշելով՝ նրանք քիչ էր մնում տղային ծվատեին: Տղան ճշաց, համառեց, դիմադրեց, բայց չկարողացավ ազատվել ոչ մեկից, ոչ էլ մյուսից: Ի վերջո նա ասամները խրեց թաթարի ձեռքը: Սա ոռնաց, կաղկանձեց ցավից, ոտքերը գետին զարկեց, ձեռքը ազատեց, հանեց թուրը և մի հարվածով կտրեց տղայի գլուխը:

— Հա՛-հա՛-հա՛: Հիմա վերցրու քեզ,— բղավեց մարդասպանը մի կողմ քաշված հակառակորդին: Բայց նա միայն ասամները կրճտացրեց քմծիծաղելով, գոհ այն բանից, որ տղան ոչ մեկին չհասավ:

Այլևս չկամենալով խառնվել իր մարդկանց տուրուղմ-

փողին, մուրզան հեծավ ձին ու հրամայեց ճանապարհ ընկնել: Նրա մերձավոր ազգականներից մի քանիսը, իրենց բաժին ավարը խլելով, միացան նրան:

Գրեթե կիսով չափ պակասելով՝ նրա ջոկատը արագորեն հեռացավ լճի ափից և շոր տափաստանով սլացավ հարավ, Կաֆայի կողմը:

Թալանչիներն այստեղ իրենց ապահով զգացին և արձակեցին գերիների կապերը: Ո՛ր պիտի փախչեն Չորս կողմը օտար հող է, շորս կողմը ծով:

Արագ էին գնում: Կանգ էին առնում միայն գիշերելու կամ ճաշելու համար: Թաթարները ձիու հում միս էին ուտում, որ կտրատում էին բարակ շերտերով ու ձիու մեջքին, սթարի տակ տաքացնելով՝ փափկացնում: Նույն ուտելիքն էին գցում նաև գերիներին: Զվենիգորան սկզբում զրկվանքով երես էր թեքում, բայց քաղցը անտանելի դարձավ և ստիպեց ուտել: Աչքերը փակ՝ նա կրծում էր հում, կարմիր փրփուրով ծածկված միսը, խմում էր ճանապարհին հազվագեպ հանդիպող առուների դառնավուն, պղտոր ջուրը:

Վերջապես երևաց անծայրածիր ծովը և մի մեծ քաղաք՝ մինարեթների բարձր, գեղեցիկ աշտարակներով: Ալին կանգնեցրեց ջոկատը, վզից հանեց փեշտիմալը¹, փռեց գետնին, ծունկ շոքեց ու երկար աղոթեց՝ շնորհակալություն հայտնելով արլահին անհավատների վրա կատարած բարեհաջող արշավանքի համար:

Կաֆան նրանց դիմավորեց ծովամերձ շուկայի աղմուկով, ձկան ու խորոված ոչխարի բուրմունքով:

Ալին իր կենդանի ապրանքը քչեց քարվանսարա: Հաջորդ օրը ժիր, ճղճղան հույն սափրիչները խուզեցին ու սափրեցին տղամարդկանց, իսկ ծառաները փայտե սկուտեղներով ոչխարի խաշած միս բերին՝ պղպեղով թունդ համեմված: Հիմա Ալին ուտելիք չէր խնայում. կուշտ, առողջ տեսքով ստրուկը շուկայում զգալիորեն թանկ է գնահատվում: Կանանց նա պահում էր հետագայի համար: Նրանց դեռ հարկավոր էր կերակրել, կարգի բերել, իսկ մի քանիսին նոր շոր հագցնել, հատկապես Չեռնոբայի գերիներին:

¹ Փեշտիմալ (թաթարերեն) — զոզնոց:

Շուկա տանելուց քիչ առաջ սափրիչները նրանց մարմինները շփում էին յուղով ու անուշահոտ խոտերով, ուղղում է հավասարեցնում էին հոնքերը, աչքերին սուրմա դնում։

Ալին լավ գիտեր հարեմի համար ապրանք ծախելու եղանակները և հույս ուներ խոշոր շահույթ ստանալ։ Այսօր նա շուկա տարավ միայն տղամարդկանց ու դեռահասներին։

Մովսիսորշի ափին ընկած շուկայի ընդարձակ հրապարակը բերնեքերան լցված էր մարդկանցով։ Մերձափնյա ու տափաստանային թաթարների, հույների, թուրքերի, վենետիկցիների, կարաիմների, աբխազների աղմկոտ խայտարղետ ամբոխը եռում էր, փոթորկվում, կռնչում, ճղճղում ու հռհռում, ինչ-որ տեղ էր շտապում, ինչ-որ բան էր առնում, ծախում։

Լեռնաշղթան քաղաքը պաշտպանում էր հյուսիսային սառը քամիներից, և, շնայած դեկտեմբեր ամիսն էր, այստեղ տաք էր ու խաղաղ։

Շուկայի ամբողջ ձախ կողմը հատկացված էր գերինների։ Այդ մասը քաղաքից անջատվում էր բարձր պատով, որ շարված էր սպիտակ շեշտ կրաքարից։ Պատերի երկայնքով գետնի մեջ ցցեր էին խրած։ Գերիններին կապում էին դրանցից։

Կենդանի ապրանքը շատ չէր շուկայում, և Ալին գոհունակությամբ նկատեց, թե ինչպես գնորդների բազմությունը վազեց փր սայլերի ետևից։

Ժիր ծառաները տղամարդկանց արագորեն կապեցին սյուններից։ Նրանք աշխատում էին փովթաջանորեն, մուրզան բւլորին լավ փեշքեշ¹ էր խոստացել։

Ջվենիգորան վերջինն էր։ Նրա ձախ կողմի հարևանը ամրակազմ, մորուքավոր մի աժդահա էր։ Չնայած ձմեռ էր, նա մինչև գոտին մերկ էր և ցրտից պաշտպանվելու համար փաթաթվել էր ուսերին գցած չուխայի մեջ։ Ցորենի դեզ հիշեցնող գզգզված քաքուլի տակից նայում էին խոշոր երկնագույն աչքերը։

— Տաքանո՞ւմ ենք, բատկո,— ուրախ հարցրեց Ջվենիգորան։

¹ Փեշքեշ (թուրք.) — պարզև, ընծա։

— Տաքանում ենք, տղաս,— քմծիծաղեց մորուքավորը՝ փայլեցնելով պինդ, ճերմակ ատամները: — Ամոթ չլինի հարցնելը, էդ ինչի՞ համար էդպես պատիվ արեցիր: Որտեղի՞ց հնարեցիր, որ ես քեզանից մեծ եմ:

— Ինչ իմանամ,— պատասխանեց Զվենիգորան: — Մեզ մոտ, Զապորոժիեում, ծերունիներն էլ են մորուքները սափրում: Դու, տեսնում եմ, ոտ՛ւս ես... Որտեղացի՞ ես, եղբայր:

— Դոնի կազակ եմ: Մեզ մոտ մորուքը սովորական բան է:

— Ուրեմն մենք իսկապես եղբայրներ ենք: Դոնից մինչև Զապորոժիե մի քայլ է:

— Վաղո՞ւց ես դուրս եկել Ուկրաինայից:

— Երկու շաբաթ է: Ամբողջ ժամանակ ճամփին եմ եղել:

— Ես էլ: Երեկ միայն քշեցին դեպի Կաֆա: Իսկ թե հետո ուր կտանեն, աստված գիտի... Տեսնո՞ւմ ես, այ էն ճարպակալած թուրքը վիճում է: Աստված շանի, մեզ առնի ու քշի թուրքի: Էնտեղից ոչ միայն շես փախչի, այլ նույնիսկ տան մասին էլ շես մտածի: Չէ՞, ավելի լավ է մարդ մեռնի էս գլխից, քան թե տանջվի նրանց կատորգաների՝ վրա կամ ստրուկի պես շունչը փչի Եգիպտոսի քարհանքերում:

— Մի՛ կոկոս, բարեկամ, փորձանք մի՛ բեր գլխներիս, նա ինքը մեզ կգտնի:

Դոնցին մոայլ ժպտաց:

— Ա-ա՛, երևի ինչ-որ մեկը ավելի շուտ է կռավել Սրանից էլ մեծ դժբախտություն կլինի՞: — Նա բարձրացրեց իր շղթայակապ ձեռքերը: — Թաթարի ու թուրքի գերությունից ավելի վատ բան չկա:

— Գերությունն էն ժամանակ լավ կլինի, երբ աստված դրանից մեզ հեռու պահի,— ասաց Զվենիգորան և ավելացրեց.— Նայիր, վաճառականը մեր կողմն է գալիս... որսի հոտ է առել:

Նրանց մոտեցավ շքեղ հագնված հաստամարմին մի թուրք՝ շալմայով: Նրա ետևից լուրջ ու հպարտ տեսքով գալիս էին երկու հսկա թանձրամարմին թիկնապահները:

1 Կատորգա (պատմ.) — նույնը՝ գալերա, տաժանանավ, թիանավ:

Դոնցի կազակի տերը և մուրզա Ալին հեռվից սկսեցին զլուխ տալ գնորդին, միմյանց ընդհատելով՝ հրավիրել իրենց մոտ:

— Աղա, այստեղ արժի, խնդրում եմ,— ձայն տվեց Ալին: — Իմ բուրբ գերիները կաղնու պես պինդ են: Ամեն մեկը երկու մարդու գործ կանի: էժան կտամ: Ահա, էս զապորոժցու մկանները հապա շոշափիր, ոնց որ երկաթից լինեն: Իմ ապրանքի կողքով մի՛ անցնի, պատվելի աղա, էսպիսի ապրանք Կաֆայում ուրիշ ոչ մեկի մոտ չես գտնի:

— Նայիր էս կազակին, էֆենդի,— կանչեց Ալու հարևանը՝ մատնացույց անելով կիսամերկ դոնցուն: — Սա տափաստանի վայրի ցուլ է: Չտեսնված ուժ ունի: Կարող է ձիեր, կովեր, անասուններ խնամել: Կատորգայի վրա երեք հոգու փոխարեն կթիավարի: Թե որ էս բատիրին՝ շառնես, կփոշմանես:

Թուրքը մոտեցավ Ալու գերիներին, շոշափեց նրանց կուրծքն ու ձեռքերը, նայեց բերանները, ասես ձի էր առնում: Թիկնապահները մի կողմ էին տանում նրանց, ում տերը հավանում էր: Ցացկոյին էլ տարան:

Թուրքը կանգ առավ Զվենիգորայի առջև, մետաքսյա ընտիր թաշկինակով սրբեց ճարպոտ, ածիլված ծոծրակը: Նա կլիներ քառասուն տարեկան, ոչ ավելի, բայց շափից դուրս գիրությունը նրան ծերացրել էր: Նա կկոցեց ուռած կոպերը և ծանր ձեռքը դրեց կազակի ուսին:

Զվենիգորան զզվանքով ետ շարտեց նրա ձեռքը:

Թուրքը զայրույթից կրակ կտրեց: Խոլորելով պղտոր աչքերը, որոնք ասես ուր որ է դուրս էին թռչելու կապիճներից, նա բռունցքը սեղմեց և ամբողջ թափով հարվածեց գերու դեմքին:

Կատաղությունից Զվենիգորան խելքը թոցրեց: Իրեն կորցրած՝ նա առաջ մղվեց, այնպես, որ նույնիսկ սարանները ճռթճռթացին: Գնորդը ետ-ետ գնաց, բղավեց, բայց արդեն ոչ էր: Գլխով նրա ձախ այտոսկրին հասցրած ուժգին հարվածը գետին տապալեց նրան: Վաճառականի շալման զլխից մի կողմ թռավ և ընկավ փոշիների մեջ:

1 Բատիր (թուրք.) — հսկա, աժդահա, դուցազն:

Այդ ամենն այնքան անսպասելի էր, նույնիսկ հենց իր՝ Զվենիգորայի համար, որ մի ակնթարթ բոլորը քար կտրեցին: Ալին սփրթնեց և ջղաձգորեն ափլփեց կողը՝ փնտրելով մտրակի կոթը: Թիկնապահները նետովեցին տիրոջը գետնից բարձրացնելու: Գերիները սկզվեցին, սարսափահար նայելով թուրքի շարությունից ծոմոված դեմքին և Զվենիգորային, որը, ծանր շնչելով, քաշվեց պատի տակ:

Առաջինը ուշքի եկավ վաճառականը: Նրա ծանր մտրակը մի փաթ տվեց Զվենիգորայի գլխի շուրջը: Կազակի ականջի մաշկը պլոկվեց, արյունը հոսեց պարանոցն ի վար:

Ապա վրա հասան թիկնապահները: Զվենիգորային գետին տապալեցին: Նա ձեռքերով ծածկեց դեմքը, որպեսզի աչքերը չհանեն: Մեկը նրա վրայից պոկեց ժուպանը: Քուրքը, որի մեջ կարված էր Սերկոյի նամակը, Ալին խլել էր դեռևս քարվանսարայում: Անընդմեջ տեղում էին հարվածները... Մտրակները պատառոտեցին շապիկն ու մարմինը: Զվենիգորան գլորվեց պատի տակ, որպեսզի մի քիչ գոնե թուլացնի հարվածների ուժը: Բայց թիկնապահները կանգնեցին մեկը գլխի, մյուսը ոտքերի մոտ, ինչպես կալ անողները կալատեղում, իրար դեմ-դիմաց: Հիմա պատը այլևս չէր խանգարում նրանց: Կազակի մեջքից հորդող արյան տեսքից նրանք ավելի զազազեցին և մահվան դուռը հասցրին:

Զվենիգորան գալարվում էր լորտուի պես: Ատամները սեղմել էր, որպեսզի չգոռար, միայն խուլ տնքում էր:

Ալին բռնեց վաճառականի ձեռքը, գոչեց.

— Աղա, ո՞վ պիտի ինձ վճարի էս գերու համար: Ախր կսպանեն նրան...

Հանկարծ դոնցին Ալուն ետ հրեց, ընկավ արնաշաղախ Զվենիգորայի վրա և իր մարմնով ծածկեց նրան: Չուխան ուսերից ցած ընկավ: Իսկույն մի քանի հարվածներ ալ կարմիր շերտեր քաշեցին նրա սպիտակ մեջքին: Տերը նետվեց դեպի նա, որպեսզի ետ քաշի. դուր տեղը կարող էր կորչել այդ աժդահա գերին: Բայց այդտեղ մեջ ընկավ թուրքը: Նա արդեն շալման դրել էր գլխին և մոռյլ հետևում էր, թե ինչպես են ծեծում գերուն:

— Օսմա՛ն, Քեմա՛լ: Բավական է: Դուք նրան մահվան

դուռը կհասցնեք: Ինձ էլ բաժին թողեք: Ես առնում եմ սրան... նրան էլ,— մատնացույց արեց նա դռնցունւ — Ինչքա՞ն արժեն:

Թիկնապահները մտրակներն իջեցրին, մի կողմ քաշվեցին, շունչ առան:

Աչին մի ակնթարթում դարձավ սիրալիր և խորամանկ կկոցեց աչքերը: Երևում է, ալլահը վաճառականի խելքը գլխից առավ. կարելի է առիթից օգտվել: Եվ նա այնպիսի մեծ գին առաջարկեց, որ հարևանը հոգոց հանեց. «Վա՛խ-վա՛խ-վա՛խ»: Բայց տեղնուտեղը նույնքան էլ ինքը պահանջեց դոնցու համար:

Թուրքը շսակարկեց, անմիջապես հաշվեց փողն ու երկու գերու համար էլ վճարեց:

Դոնցին օգնեց Զվենիգորային ոտքի ելնելու:

— Շնորհակալություն, բարեկամ,— կամացուկ մրմնջաց գլխորոժցին: — Անունդ փ՞նչ է:

— Ռոման... Ռոման Վոյնով: Ես տուլացի եմ, բայց դարձել եմ Դոնի կազակ... Գերմանացի բարոնից փախա, թուրքի գերության մեջ ընկա... Ափսո՛ս... Թող արյունը մաքրեմ. տես է՛, ինչ օրն են գցել, անիծյալներ: Կաշիդ ծվեն-ծվեն կախ է ընկել...

Ռոմանը մի կերպ շապիկով կապեց Զվենիգորայի մեջքը, ժուպանը գցեց ուսերին:

Նույն օրը նրանց լցրին մի մեծ սանդալ¹, և փակեցին նեղ գարշահոտ նավամբարում: Այստեղ մութ էր, խոնավ, բորբոսի ու ոչխարի մորթու հոտ էր փչում:

ԿՋԸԼ-ԻՐՄԱԿԻ ԱՓԵՐԻՆ

1

Մինչև նավը թուրքիա կհասնեք, մի քանի օրվա ընթացքում Զվենիգորան ուշքի եկավ, մեջքը ծածկվեց կոշտ թփուկներով ու սկսեց քոր գալ: Դա հաստատ նշան էր, որ վերքերը լավանում են:

¹ Սանդալ (թուրք.) — առագաստանավ:

Հասան թուրքական մի փոքրիկ քաղաք, և գերիններին դուրս բերին տախտակամած:

Մովից սառը քամի էր փչում, ծակծկող, մանր անձրևի կաթիլներ ու ծովային աղի փրփուր շաղ տալիս մարդկանց դեմքերին: Չգիտես ինչու երկար ժամանակ նավակամրջակը չէին իջեցնում:

Նավախելից լսվում էին կապուղան աղայի¹ և Համիդի վրդովված ձայները: Սկզբում Ջվենիգորան ուշադրություն չդարձրեց նրանց խոսակցությանը, բայց հետո սկսեց ականջ դնել:

— Ինձ գերիններ պետք չեն, — զայրույթով գոռում էր կապուղան աղան: — Մենք պայմանավորվել ենք, Համիդ աղա, որ դու փողով կվճարես:

Համիդը իրենն էր պնդում:

— Ճիշտ հաշիվ չէի արել, կապուղան աղա: Կաֆայում ծախսեցի: Ես դեռ երկար ճամփա պիտի գնամ, փող է հարկավոր: Քեզ համար մեկ է, ոչինչ չես կորցնում: Ահա վարձի մի մասը ստացիր փողով, փսկ մնացածի փոխարեն որ գերուն ուզում ես վերցրու: Կծախես, փող կստանաս: Գեռ մի բան էլ օգուտով դուրս կգաս...

— Ինձ օգուտ պետք չէ: Գերին կատկի կամ էլ կփախչի, և ես հիմար վիճակի մեջ կմնամ: Վճարիր իմ հասանելիքը և նավը աղատիր: Եթե ես իմանայի, աղա, թե դու այդքան ստոր մարդ ես, քեզ հետ գործ չէի բռնի:

— Լեզուդ քեզ քաշի, կապուղան աղա, թե չէ մեկ էլ տեսար կորցրիր, — ձայնը բարձրացրեց Համիդը: — Ուրեմն այսպես. վերցրու գերուն: Չես ուզում, ոչինչ էլ չեմ տա:

— Մարդ կարո՞ղ է քեզանից լավ բան սպասել, տո՛ւր, տո՛ւր: Սատանի հետ հաց ես կերել, քեզ հետ մարդավարի խոսել չի լինի: Մենակ թե ինքս եմ ջոկելու, իմացիր:

— Վաղուց եմ քեզ էդ բանն ասել, փսկ դու էշի պես կողիդ ես ընկել:

Այդ սիրալիր խոսքերը փոխանակելուց հետո կապուղան աղան ու Համիդը նավախելից ցած իջան: Կանգ առան գերինների մոտ:

¹ Կապուղան աղա (թուրք.) — նավապետ:

— Սրան,— կապուղան աղան մատով թխկացրեց Ռոմանի կրծքին: — Եվ փասսափուսադ քաշիր իմ նավից, կտրիր գրողի ծոցը:

Թիկնապահներ Օսմանն ու Քեմալը Ռոմանին նորից քարշ տալով նավամբար տարան:

— Մնաս բարով, Արսեն,— կանչեց դոնցին: — Բարի հիշիր ինձ: Թե որ հաջողվի սուն վերադառնաս, լուր տար Բոբրովսկ ստանիցա:

Նրա հտևից ղնգոցով փակվեց մուտքի կափարիչը:

Երբերուն տախտակների վրայով գերիներին դուրս բերին ափ: Հենց այստեղ էլ, փոքրիկ մրոտ մի դարբնոցում, բոլորի ձեռքերին շղթաներ հագցրին: Զվենիգորայի հոգեբան էլ կալանդեցին: Միայն Յացկոն կապանքներից զերծ մնաց:

Ճամփա ընկան կեսօրին: Համիդը, ձին հեծած, գնում էր քարավանի առջևից, որ բաղկացած էր մեկ տասնյակ բարձված էշերից: Գերիների հտևից գալիս էին Քեմալն ու Օսմանը: Փոքրիկ իշուկների վրա կուշ եկած այդ երկարատու լողլողները ծիծաղելի տեսարան էին ներկայացնում: Սակայն երկարականջները, կողերը ցցված այդ կենդանիները, կարծես չէին զգում նրանց քաշը. քայլում էին դանդաղ, անշտապ, գլուխները վերովար անելով:

Ուղևորության յոթերորդ օրը, փրիկնադեմին, Համիդի քարավանը լեռնագոգից իջավ ընդարձակ հովիտը և ուղղվեց դեպի մոսյլ, գորշ անտաշ քարով շարված ամրոցը, որ կանգնած էր բլրի վրա, լայն ու արագահոս գետից ոչ հեռու:

Շղթաները զնգացնելով՝ գերիները վերակացունների ուղեկցությամբ ամրոցի դարպասի նեղ դռնով ներս մտան և կանգ առան սաղարթախիտ ընկուզենու տակ, որ մենմենակ բարձրանում էր քարե պատերի միջև: Երկար, տանջալից ճանապարհից ուժասպառ եղած՝ նրանք փովեցին սառը քարերին, որով սալարկված էր ամբողջ բակը:

Ամրոցը միանգամից լցվեց աղմուկ-աղաղակով: Ներքին սրահներում իրար անցան սևազգեստ կանայք, նվերների սպասելով՝ ուրախությունից ճղճղացին երեխաները, որոնք ճնճղուկների երամի նման դուրս թափվեցին Համիդին ընդառաջ: Վազեցին եկան ծառաները:

Զվենիգորան անտարբեր նայում էր օտար այդ կյանք

քին: Երկաթից տրորված ոտքերը նվում էին, անասելի խմել էր ուզում: Ինչ-որ տեղից ջրի քչքչոց լսելով՝ նա տեղից ելավ ու նայեց փշոտ կանաչ ցանկապատից այն կողմ, որը մի փոքրիկ հատված անջատում էր բակից: Այնտեղ քարե մեծ թասի մեջ բլթբլթում էր ջինջ, զուլալ աղբյուրը: Զուրբ թափվում էր մամուկալած նովդանի մեջ և նրա միջով, ըստ հրևույթին, հոսում էր բերդի սահմաններից դուրս:

Կազակը դուրս եկավ ամբոխի միջից, շոքեց աղբյուրի մոտ և բոռով սկսեց խմել սառնորակ ջուրը: Զուրբ մի քիչ դառն էր, ինչպես արևբուրիկի թուրմը, և նուրբ ասեղների նման ծակծկեց բերանը:

Չեռքով սրբելով սևացած, մազակալած դեմքը՝ Զվենիգորան բարձրացավ տեղից: Հանկարծ մի ճիչ լսեց.

— Արսեն, դգուշացիր:

Չհասցրեց ետ նայել, ծանր մտրակը շրխկոցով իջավ գլխին: Անսպասելիությունից ու ցավից քիչ մնաց ջուրն ընկներ, բայց ետևից ինչ-որ մեկը բռնեց ժուպանից ու ետ քաշեց: Մտրակը նորից ու նորից շաշոցով կտրատեց օդը:

— Կեղտոտ գլավուր,— գերու գլխավերևում ֆշշաց Համիդը: — Դու ապականեցիր այն աղբյուրը, որտեղից ջուր են խմում ուղղափառները... Դու ինձ էլ փորձեցիր սպանել: Օ՛, ես քեզ լավ եմ հիշում:— Նա ակամա տրորեց այտը: — Էնպես եմ հիշում, որ դու երկար ժամանակ կափոսոսաս, որ շես սատկել: Այդ երկու մեղքերի համար արժեք քեզ կախել, բայց մահը էնքան էլ մեծ պատիժ չէ: Այ, երբ քո կյանքը անտանելի կդառնա, և դու ինքդ կցանկանաս էն աշխարհը գնալ, նոր կհասկանաս, թե ես ինչի մասին եմ խոսում, շուն: Իսկ հիմա կորի աշքիցս:

Համիդը մի անգամ էլ մտրակեց կազակին, և սա նետվեց դեպի գերիների ամբոխը, որոնք իրենց մեջ առան նրան ու թաքցրին:

Վերակացուները նրանց քշեցին խոր ու մթին մի նկուղ: Առաստաղի տակ բացված փոքրիկ վանդակապատ պատուհանի միջով աղոտ լույսի մի խուրձ էր ներս ընկել: Ինչ որ տեղ խոթխոթացնում էին առնետները: Քարե առաստաղից ու պատերից ժանգոտ ջրի շիթեր էին հոսում:

Գերիները խոնվեցին նկուղի մեջտեղում:

— Ահա այստեղ էլ մեր գերեզմանն է,— խուլ մրմնջաց գերիներից մեկը՝ Կվոչկան, որը գյուղացու զավակ էր: — Լավ խրճիթ է պատրաստել անիծված թուրքը մեզ համար, աշուփուշ լինի, հա՛: Նույնիսկ ծղոտ էլ է փռել, որպեսզի տակներս կակուղ լինի: Ով գիտի ծղոտն էլ է փտած... էդպես է, որ կա: էստեղ մեզնից առաջ էլ գերիներ են ապրել: Հենց նրանցից էլ մնացել է... — Նա շարացած մի քացի տվեց ծղոտի կույտին:

Ի մեծ զարմանս գերիների՝ այնտեղից մի խոպոտ ձայն լսվեց, կարծես հիվանդ խոճկոր էր խոխոտում:

— Ի՞նչ ճանճ է քեզ կծել: Քո՞ն ես, ինչ է, թե ձին է քացով գլխիդ խփել: Չե՞ս տեսնում, որ էստեղ մարդ է քնած:

— Այ քեզ բա՛ն,— բացականչեց զարմացած գյուղացին: — Որտեղի՞ց լույս ընկար, գրողը քեզ տանի: Եվ ո՞վ ես, որ մեր լեզվով ես բլբլացնում:

Ծղոտի կույտը շարժվեց, և տակից դուրս սողաց ինչ-որ տարօրինակ մի էակ:

Գերիները ահուղողով նայեցին անծանոթին:

Նա վրայից թափ տվեց ծղոտը, և բոլորը տեսան մաշված, հյուծված մի մարդու, որի աչքերը վառվում էին հիվանդագին փայլով: Ցնցոտիների միջից նմարվեց դեղնած, ոսկրոտ մարմինը: Նա ցրտից ատամներն իրար էր զարկում:

— Ի՞նչ: Լա՞վ է՞,— հանկարծ խոպոտ ծիծաղեց նա: — Ինչ է, սարսափելի՞ է նայելը: Մի՛ վախեցեք, շուտով դուք էլ իմ օրը կընկնեք... Աստծուց ու մարդկանցից անիծված էս բնում մի տասը տարի կապրեք, ոնց որ ես, նոր կիմանաք՝ ողջ կմնա՞ք, թե ոչ: Մի ժամանակ ես էլ ձեզ նման էի՝ ջահել, ուժեղ... Իսկ հիմա մենակ կաշիս ու ոսկորս են մնացել: Ծղոտի մեջ որ շուռումուռ եմ գալիս, ոնց որ տոպրակի մեջ պաքսիմատներ շխկշխկան:

— Անունդ ի՞նչ է, մարդ աստծո,— հարցրեց Զվենիգորան:

— Մի ժամանակ ինձ Սվիրիդ Մնոզոգրեշնի էին կանչում... Զգիտեմ իմ նախնիներից որ մեկն է շատ մեղք գոր-

ծել, որ էդ մականունը էդպես կպել է մեր ցեղին¹։ Բայց ով էլ որ էդ ապուրը եփած լինի, բոլորի փոխարեն ինձ է վիճակվել խաշտել։

— Դու հո հետման Գյումկա Մնոգոգրեշնու ազգականը չե՞ս։

— Եղել եմ ժամանակին... Եղել եմ,— անորոշ պատասխանեց նա։

— Քանի՞ տարեկան կլինես, հալևոր։

— Քանի տարեկա՞ն։ Հե՛հե՛հե՛հ,— ծիծաղից նրա անգույն շրթունքները ծոմովեցին։ — Եղած-չեղած քառասուն տարեկան եմ...

— Ձի կարող պատահել։

Ձվենիգորան հիշեց, որ Մետելիցան համարյա վաթսուն տարեկան է, բայց նա դեռ կարողանում է կոուփով շմեցնել եզին։ Իսկ սա քամուց օրորվում է։

— Տեսնենք, դու ինչ կդառնաս մի տասը տարի հետո, երբ Համիդը բոլոր հյուսիսներդ, բոլոր ուժերդ կքամի, երբ ձեռքերդ կախ կընկնեն ցողունի նման և ատամներդ կթափվեն, և ոտքերիդ հոդերը կուռչեն, և ոչիլները քեզ կուտեն, ոնց որ քոս ընկած գոճի... Այ էն ժամանակ դու կհիշես Մնոգոգրեշնուն ու կասես՝ ճիշտ էր ասում էդ թշվառականը...

— Մենք հիմա էլ ենք հավատում քեզ։ Երևում է, որ ոչ կուշտ քնում ես, ոչ էլ կուշտ ուտում...

— էստեղ քեզ կուշտ կկերակրեն։ Ո՞նց չէ... դեռ մի բան էլ ավելի,— Մնոգոգրեշնին ծիծաղեց։

Նա ցնցվում էր ծիծաղից, հազից ու ցրտից միաժամակ։ Փրշոտ, թավ մորուքի միջից դուրս էին ցցվել ծակծկող քիստեր։ Նիհար, ոսկրոտ ծնկները ծալվում էին, թվում էր, ահա, ահա, ուր որ է կկոտրվեն, ու ոսկորներով լցված այդ պարկը թրմփոցով գետին կտապալվի։

Նրանք կանգնած էին լուռ ու զլխահակ։ Բոլորն էլ պարզ տեսնում էին իրենց ապագան։ Կվոչկան ծանր հոգոց հանեց ու սկսեց վայ-վույ անել։

¹ Նկատի ունի ազգանվան բառացի իմաստը. Многогрешный (ոռու.) — նշանակում է՝ մարդ, որ շատ մեղքեր է գործել։

— Տեր աստված, տեր աստված, կորավ իմ խեղճ գլուխը: Զվենիգորան նայեց նրան, խստորեն սաստեց.

— Դե, դե, լացուկո՞ծ մի՛ դնի: Առանց էդ էլ մի լավ օրի չենք: Իսկ եթե ամեն մեկն իր հերթին նվնվա, իսկապես որ էս գարշահոտ ծակուռում հոգիներս կավանդենք:

— Դե ես բան չեմ ասում,— սկսեց արդարանալ Կվոչկան: — Ուղղակի սիրտս կտոր-կտոր է լինում...

— Բոլորի համար էլ դժվար է: Բայց կաղակի բախտն էլ է բերում: Մեկ էլ տեսար մի օր չէ մի օր դուրս պրծանք էստեղից:

— Դատարկ բաներ ես դուրս տալիս... Ես էլ մի ժամանակ էդպես էի մտածում,— մշմշացրեց Մնոգոգրեշնին: — Հույս ունեի, թե կփախչեմ... Ո՛նց չէ... Ո՛ւր պիտի փախչես, գրողը տանի: Ո՛ւր պիտի գնաս, երբ մինչև ծովը երկու շաբաթվա ոտքի ճամփա է, և ամեն մի քայլափոխին կարող են բռնել: Ասենք թե մինչև ծով էլ հասար, հետո ի՞նչ: Հո մի ծերից մյուսը չես թռնի կամ ծովի վրայով հո քայլելով չե՞ս անցնի:

Զվենիգորային համակեց զայրույթը: Այդ խրտվիլակը, որի մի ոտքը գերեզմանում է, ուզում է անվստահութուն սերմանել իրենց սրտերում, բոլորին տանել իր ետեից... Չէ, բան դուրս չի գա: Իրենք դեռ ջահել են, ուժեղ, և հույսը չպետք է կորցնեն: Զուր չեն ասում. հույսդ կորցրիր, ուրեմն ամեն բան կորցրիր:

Զայրույթը զսպելով՝ նա ձեռքը դրեց Սվիրիդի ուսին և մեղմորեն ասաց.

— Այ թե ինչ, քեռի Սվիրիդ, դու լավ կանես նորից մտնես քո բույնը և ավելորդ բաներ դուրս շտաս: Մեր սրտերը մի՛ թունավորի: Առանց էդ էլ մի լավ օրի չենք...

Զգալով, որ Մնոգոգրեշնին փորձում է հակառակվել, Զվենիգորան թեթևակի հրեց նրան, և նա հնազանդ սողոսկեց իր անկյունը: Ինչ-որ մեկը ցրիվ տվեց նրա տակի փտած ծղոտը:

Բազմօրյա ճանապարհից հոգնած՝ գերիները տեղավորվեցին գիշերելու: Թափվեցին իրար կողքի, սեղմվեցին միմյանց, որպեսզի չմրսեն: Շուտով փոքրիկ պատուհանից թափանցող լույսը բոլորովին աղոտացավ, մթնեց: Մարմին-

ների շատութիւնից, ծանր շնչառութիւնից նկուղի օդը տաքացավ, նույնիսկ դարձավ տոթ, հեղձուցիչ: Քունը սկսեց նեղել բոլորին:

Բայց շհաջողվեց քնել: Նորից դռները բացվեցին, և վերևում զնգացին շղթաները: Նկուղ իջան էլի մի քանի մարդ: Ինչ-որ մեկի ոտքերը տրորեցին: Տնքոց լավեց:

— Օ՛յ, գրողը ձեզ տանի,— լեհերեն հայհոյեց մեկը, սուր, զիլ ձայնից դատելով, մի լողող,— էստեղ արդեն լիքը անկող հյուրեր են: Գրիցկո, կրակ տուր, մոմը վառենք:

Կայծքարից կայծեր շաղ եկան: Բռնկվեց դեղին կրակը և լուսավորեց մոռյլ, սև կերպարանքները: Առջևում կանգնած էր բարձրահասակ, թիկնեղ մի տղամարդ՝ կոշտ, ճաղերի նման ցից բեղերով ու մեծ, կեռ քթով:

— Խաչը վկա,— նորից որոտաց հսկան,— էս նորեկները, էս խոլոպները գրավել են իմ տեղը: Սա ինչ խոզութիւն է. մտնում են ուրիշի խրճիթը ու գրավում ամենալավ անկյունը, խնդրեմ:— է՛յ, խոլոպ,— նա ոտքով հրեց Կվոշկային, որ կուշ էր եկել անկյունում,— տեղս ազատիր:

Սա քնաթաթախ աչքերը ճպճպացրեց ու դժգոհ փընթփնթաց.

— Դո՞ւ ով ես, ի՞նչ թռչուն ես:

— Օ՛, շար սաթայել, դեռ հարցնո՞ւմ ես. էստեղ բոլորն էլ ճանաչում են պան Սպիխալսկուն... Տոհմիկ շլյախտիչին¹: Ես մարշալեկ² Յաբլոնովսկու զորական ընկերն եմ եղել, խնդրեմ: Իսկ հիմի ինչ-որ խոլոպի մեկը համարձակվում է ինձ թռչուն անվանել: Հա՞:

— է՛, ի՞նչ անենք, թե դու մարշալեկ Յաբլոնովսկու զորական ընկերն ես եղել: Մեծ բան է, էլի: Ես էլ Գերվասի Կվոշկան եմ: Լսած կա՞ս:

— Չէ՛, լսած չկամ, խնդրեմ,— մի պահ շղկվեց պան Սպիխալսկին:

— Հենց էդ է, որ կա: Դու իմ մասին չես լսել, ես էլ քո մասին չեմ լսել: Չգիտես, թե փնչ մարդ է կանգնած քո դիմաց, համա գոռգոռում ես: Վայել բան չէ, պան:

¹ Շլյախտիչ (լեհ.) — լեհ ազնվական:

² Մարշալեկ (լեհ.) — զորքի հրամանատար, սկետ, ինչպես նաև ազնվականության պարագլուխ:

— Դե, ասա, խնդրեմ, դու ո՞վ ես:

— Քո սիրեցյալ մարշալեկ Յարլոնովսկու նախկին ճորտը, գետնի տակ անցնի նա: Հետո ազատ գյուղացի էի, հողագործ, քանի որ Զակոպանիից փախա ազատ երկիր... Հիմի ես էլ, դու էլ թուրք Համիդի գերիներն ենք: Դուրս է գալիս, որ երկուսն էլ մի սանրի կտավ ենք... էնպես որ մի փքվիր, պան, պառկիր կողքիս ու քնիր, թե որ ուզում ես քնել: Իսկ թե չես ուզում, պառկիր հենց էդտեղ, որտեղ կանգնած ես, ու մի՛ խանգարիր մարդկանց, թող ուժ հավաքեն:

— Օ՛ տեր աստված,— տեղից վեր ցատկեց պան Սպիխալսկին:— Ասել է թե պանը իմ երկրացին է: Զակոպանիից: Բա ինչո՞ւ պանը առաջուց շասաց: Ներող եղիր, պան Կվոչկա: Ի՞նչ նորություն կա Զակոպանիում:

— Պանը վաղո՞ւց է էնտեղից դուրս եկել:

— Արդեն երկու տարի է:

— Իսկ ես՝ չորս... էնպես որ պանը ինձնից քիչ բան կիմանա իր մարշալեկի մասին: Եթե պանին կհետաքրքրի իմանալ, թե ինչպես մի անգամ ընկերներին հետ ճիպոտով մի լավ քոթակեցի պան մարշալեկին...

— Օ՛: էդ ո՞նց է եղել:

— էսպես: Որոշեցի ընկերներին հետ փախչել տափաստան: Համա չէի ուզում պանին առանց հրաժեշտ տալու բաժանվել: Ձեզ պետք է ասեմ, որ մենք սրտակից բարեկամներ էինք. նա հաճախ էր մտրակով շոյում իմ՝ խոլոպիս մեջքը, ես էլ նրա դեզերն ու բարդոցներն էի վառում: էնպես ստացվեց, որ վերջին անգամ ես պարտքի տակ մնացի: Հո առանց հաշիվներս մաքրելու չէի՞ հեռանա պանից: Դե ես էլ տղերքին համոզեցի աչք պահել պանի վրա: Մենք նրան հանդիպեցինք Մատվեկի մեղվանոցի մոտ: Պան Սպիխալսկին հիշո՞ւմ է էն անտառակը, որ ընկած է տափարակում, Զակոպանուց Կրուզլիկ խուտորը տանող ճամփի վրա:

— էն էլ ո՞նց: Բա մի՞թե կարելի է մոռանալ էդ դրախտային տեղերը: Ամբողջ Մերձկարպատներում, երևի, դրանից ավելի սիրուն տեղ չկա: Ինքը բնությունը, խնդրեմ, դա մտեղծել է սիրո համար...

— Հենց էդ է, որ կա, պան մարշալեկն էլ էր էդպես

մտածում: Ու ոչ թե մենակ մտածում էր, այլև սիրահարված էր Զակոպանիի մոտերքում ապրող շլյախտիչի կնկանը: Ահա մենք էլ նրան բռնացրինք էն ժամանակ, երբ նա ձիով գնում էր էդ կնկա մոտ: Մեկը ձեռքը գցեց ձիու սանձին, իսկ ես ու ընկերս պայծառափայլ պանին ցած բերինք ձիուց, շարվարը հագից հանեցինք, տկլոր փորի վրա պառկեցրինք մրջնաբնի վրա և հակառակ կողմից մի լավ քոթակեցինք կեչու ճիպոտներով...

— Զար սաթայել: Թոկից փախած,— վրդովված գոչեց պան Սպիխալսկին: էդ ինչպե՞ս ես համարձակվել ձեռ առնել պան մարշալեկին: Տոհմիկ շլյախտիչին: Ախր դրա համար քեզ պես բռի, անտաշ մարդուն կախելն էլ քիչ է: Կտոր-կտոր պետք է անել: Մի մտածիր է՛. էն էլ որտեղ, մրջնաբնի վրա... Եվ դեռ կեչու ճիպոտներով... ոնց որ հասարակ ճորտի...

Բոլորն արթնացել ու ականջ էին դնում, թե ինչպես է շլյախտիչը հայհոյում, կատաղած ու վիրավորված՝ իր տիրոջ համար: Զվենիգորայի ծիծաղը գալիս էր. պան Սպիխալսկին ականհայտորեն մոռացել էր, որ հիմա ինքը տոհմիկ ազնվական չէ, այլ գերի:

Գերվասի Կվոչկան նույնպես ծիծաղում էր մորուքի մեջ: Երևում էր, որ նրան զվարճություն էր պատճառում այդ խոսակցությունը:

— Բայց ես ախր միայն պարտքս եմ վերադարձրել, ողորմած պան,— հանգիստ ասաց նա: — Ինքը տեր աստված պատվիրել է մեր պարտքերը անհատույց շթողնել... Եվ դեռ պատվիրել է հատուցել ական ընդ ական, ատամն ընդ ատաման...

— Շատ խելացին ես, պան Կվոչկա,— բարկությամբ գոչեց Սպիխալսկին: — Պան մարշալեկը, և հանկարծ մըրջնաբնի վրա: Երկնային պատիժը գլխիդ թափվի: Միսդ քրքրվի, գարշելի ավազակ: Քեզ ցցի պիտի հանեին, անօրեն, որպեսզի իմանայիր, թե ինչ է նշանակում ձեռ առնել պայծառափայլ պանին:

Նա անեծքների ու հիշոցների տարափ տեղաց և քիչ էր մնում բռունցքներով հարձակվեր գեղջուկի վրա: Շղթաները զնգացնելով՝ կատաղորեն աչքերը շոնց, իր ցցված շեկ բեղերը քաշքշեց:

Հանկարծ նա լռեց: Աչքերի մեջ տարակուսանք փայլատակեց: Եվ կամացուկ հարցրեց.

— Իսկ ինչպե՞ս վերջացավ էդ տխուր պատմությունը:

— Ինչպես որ պետք էր,— լուրջ պատասխանեց Կվոչկան: — Ուզածի պես քոթակեցինք պանին, շալվարը քաշեցինք վրան ու ձի նստեցրինք...

— Բա ո՞նց նստեց:

— Չնստեց, փորի վրա պռակեց թամբին ու էդպես էլ գնաց:

— Այս դու, ժանտախտ: Չէ՛, արժեր էդ տեսարանը թամաշա անել... Դե, իսկ էն կնի՞կը, պան Կվոչկա, ո՞վ էր: Դուք տեսա՞ք նրան: Դա պատահամա՞ք հո պանի Զոսյան շէ՞ր, պան Յաստրժեմբսկու կինը, Զալեշչիկից:

— Ոչ, պան Մարտին...

— Դու գիտե՞ս իմ անունը,— շշմեց Սպիրիալսկին: — Այքեզ սատանա՛: Որտեղի՞ց:

— Ոնց թե որտեղից: Մինչև օրս էլ պան մարշալեկի բոլոր մանկլավիկներին հիշում եմ:

— Դե՛, դե՛, լավ իմացիր ում հետ ես խոսում,— աքլորացավ պան Սպիրիալսկին: — Հարցիս պատասխանիր:

— Դե ես էլ պատասխանում եմ. ոչ, պան Մարտին: Բոլորն էլ գիտեն, որ պանի Զոսյայի մոտ դուք էիք գնում:

— Ըհը՛, ըհը՛... — հազաց պան Մարտինը:

— Իսկ պան մարշալեկը հրապուրված էր պան Մարտինի կնկանով...

— Ցո՞ւ,— տեղից վեր թռավ Սպիրիալսկին:

Նույնիսկ մոմի դժգույն լույսի տակ երևաց, թե ինչպես նրա դեմքը կասկարմիր կտրեց, իսկ աչքերը թռան ճակատին: Խելակորույս հայացքը շրջեց հյուղակում: Չնայած նրա սարսափելի, նույնիսկ ողբերգական տեսքին, գերիները չկարողացան զսպել իրենց և բարձրաձայն հռհռացին:

— Ինչ ասացի՞ր,— շփոթված կրկին հարցրեց պան Սպիրիալսկին: — Մի՞թե պանի Վանձյան...

— Այդ մասին նույնպես բոլորը գիտեին, բացի պանից:

Պան Սպիրիալսկին բռունցքները սեղմեց:

1 Ցո՞ (լեհ.) — Ի՞նչ:

— Դու կարո՞ղ ես ինձ ազնիվ խոսք տալ: Ասենք խոշոր պին ինչ ազնիվ խոսք... Կարո՞ղ ես երգվել, որ դա ճիշտ է:

— Ոնց որ աստծու առաջ:

— Նզովյա՛լ,— բացականչեց տարաբախտ պան Սպիխալսկին ու շղթայակապ ձեռքերով հարվածեց քարե պատին: Նզովյա՛լ: Ո՛ւմ հետ է փոխել նա ինձ: Ինձ՝ Սամսոնի՛ս, Հերկուլեսի՛ս: էդ նվազ, վատուժ մեռելոտի՛: էդ սառը, լպրծուն, զզվելի օձի՛... Թո՛ւհ... Բա պան մարշալեկը: Իմ հանդեպ որքան բարի ու քաղցր էր միշտ: Հիմա հասկանալի է, թե ինչու: Օ՛ Հիսուս, օգնիր ինձ դուրս պրծնեմ էս թուրքի գերությունից, նա ժամանակ ինքդ էլ կցնցվես պան Մարտինի վրեժից...

Նա հանկարծ լռեց ու նստեց հատակին: Անմիտ հայացքը հառեց անկյունին, ուշադրություն չդարձնելով շուրջը լսվող աղմուկին ու հռհռոցներին:

— Հերիք է սեպերդ բաց անեք,— գոռաց Զվենիգորան: — Մոմը հանգցրեք: Քնելու ժամանակն է: Դու էլ քնիր, պան Մարտին: Ժամանակ գտար խանդելու...

Հյուղակում աղմուկը հետզհետե դադարեց: Նոր ժամանած գերիները սեղմվեցին իրար, որպեսզի տեղ տան հնարակներին, որոնք, օրվա ծանր աշխատանքից ուժասպառ եղած, տնքտնքալով ու հայհոյելով տեղավորվեցին նեխած, գարշահոտ ծղոտի վրա: Ինչ-որ մեկը փչեց հանգցրեց մոմը, և իսկույն ակնակույր խավար իջավ հյուղակում:

2

Վաղ առավոտյան վերակացուները բոլորին բակ դուրս բռնեցին: Յուրտ էր ու մառախլապատ: Գերիները բարձրացրին օձիքները, փաթաթվեցին իրենց ցնցոտիների մեջ, իսկ եկվորները՝ դեռ չմաշված շորերի, որոնցից նույնպես թափանցում էր սուր, կտրող ցուրտը:

Նրանց կանգնեցրին պատի տակ, մի շարքով: Դիմացը կանգնեց ինքը՝ Նամիդը: Նրա ետևում՝ մի քանի թուրք վերակացուներ: «Աշխատանքի են բռնելու»,— մտածեց Զվենիգորան, ջանալով գուշակել, թե ուր կուղարկեն իրեն:

Երբ Օսման և Քեմալ վերակացուները հյուղակի դուռը

փակեցին ու կանգնեցին շարքի. տարբեր ծայրերում, Համիդը մոտ եկավ; մեկ առ մեկ նայեց գերիններին ու ասաց.

— Փախուստի համար՝ մահ: Անհնազանդության համար՝ մտրակ: Մուլության համար՝ դարձյալ մտրակ: Հասկա՞նալի՞ է:

Շարքը լուռ մնաց:

Համիդը արհամարհանքով ծոմոնեց մտտտ, քթեղ դեմքը՝ ծանր հայացքը սողաց մուսկլած գերինների վրայով:

— Այ դո՛ւ, և դո՛ւ,— Համիդը մատը տնկեց Յացկոյի և Մնոգոգրեշնու կողմը,— դուրս եկեք: Կանգնեք առանձին, ա՛յ էն ծառի տակ:

Յացկոն ու Մնոգոգրեշին մի կողմ քաշվեցին:

— Դու, զապորոժյան շուն, դու էլ դուրս արի,— դիմեց նա Զվենիգորային:— Քեզ հետ առանձին հաշիվ ունեմ:

Շղթաները զնգացնելով՝ Զվենիգորան առաջ եկավ:

— Նա, ով թեկուզ մտքով կանցկացնի մահափորձ կատարել տիրոջ կամ վերակացուի դեմ, կմեռնի դաժան մահով: Ինչպես էս կազակը... Բայց նախքան մեռնելը, դեռ երկար կխմի դառնության բաժակը... Օսման, զնդան պցիր սրան:

Օսմանը թրի պատյանով բռթեց Զվենիգորային.

— Գնա, գյավուր:

Զվենիգորան նայեց ընկերներին, նայեց Յացկոյին, որը, վախեցած, ինչպես փոքրիկ զազանը, սեղմվել էր ընկուզենուն և ահուդողով սպասում էր իր ճակատագրի վճռին: Արդյոք երբևիցե կտեսնի՞ նրանց, ձախորդության իր ընկերներին: Գուցե իրեն՝ Զվենիգորային, վիճակված է Համիդի զնդանո՞ւմ իր մահը գտնել:

Օսմանը նրան տարավ բակի միջով, թեք աստիճաններով փչավ խոր գետնափորը և ծանր բանալիով բացեց երկաթազամ դուռը:

— Մտիր,— և բռթեց Զվենիգորայի թիկունքից:

Զվենիգորան հայտնվեց նեղ ու խավար մի անձավում: Կեղտից ծանրացած, հեղձուկ օղբ խփեց նրա քթին, ու շունչը բռնվեց: Քանի դեռ Օսմանը դուռը չէր փակել, հասցրեց նկատել պատին գամված մի մարդու: Դժվար էր որոշել նրա տարիքը. գուռ, զզզված ճերմակ մազերը ծած-

հրում էին դեմքը: Հավանաբար, այդ գժրախտը շատ ամիսներ, գուցեև տարիներ էր անցկացրել այս զնդանում, որտեղ ոչ լույսի շող էր թափանցում, ոչ էլ մարդկային ձայն էր հասնում, բացի վերակացունների ձայնից:

Դուռը փակվեց: Գերեզմանային խավարն ու գերեզմանային անգորրը պարուրեցին շվարած կազակին: Մի բուռն լուռություն տիրեց: Հետո զնգացին շգթաները, խուլ, խոպոտ մի ձայն լսվեց.

— Ո՞վ ես, բարեկամ,— հարցը թուրքերեն տրվեց:

— Գերի:

— Բուլղա՞ր ես, թե կազակ: Ուռո՞ւս,— հարցրեց նա այս անգամ բուլղարերեն:

— Կազակ: Ուռուս,— պատասխանեց Զվենիգորան: Նա ուրախացավ՝ բուլղարերեն խոսք լսելով, որը լավ գիտեր և հիշեցրեց իր մայրենի բարբառը: — Իսկ դո՞ւ ով ես, բարի մարդ: Քե՞զ ինչի են գամել էս գերեզմանում:

— Մոտեցիր, ես ուզում եմ զգալ, որ կողքիս կենդանի մարդ կա... Ես ուզում եմ լսել քո ձայնը, մարդկային ձայնը... Քանզի արդեն հինգ տարի կլինի, հավանաբար, ինչ էստեղ եմ... Դու շեռ կարող պատկերացնել, թե որքան սարսափելի է լինել մեն-մենակ, գլխիդ վերևում շտեմնել արևն ու երկինքը, շսել թռչունների ծվվոցը, լեռնային հեղեղների խշշոցը, գարնանային քամիների երգը... Տուր ինձ ձեռքդ Օ՛, ինչ ուժեղ է ու տաք: Սա ուղմիկի ձեռք է, ուժեղ ու ազնիվ... Փառք ավահին, որ լսեց իմ աղոթքը և ուղեկից տվեց ինձ իմ փշոտ ճանապարհին: Մենք կկիսենք մեր վշտերը, և դրանք կրկնակի թեթև կթվան մեզ... էդ ի՞նչ է պատահել, որ Համիդը հանկարծ որոշել է քեզ ինձ մոտ գցել:

Հարցը անսպասելի էր, և Զվենիգորան շիմացավ ինչ պատասխանի:

— Գուցե նա մի քանի օրով է քեզ գցել այստեղ, որպեսզի հետո ես ավելի սո՞ւր զգամ մենակությունս,— խորհեց քանտարկյալը: — Նա ընդունակ է դրան...

— Գուցեև էդպես է,— ասաց Զվենիգորան՝ հիշելով Համիդի սպառնալիքները: — Կարծում եմ, որ ես էստեղ երկար չեմ մնա...

— Բայց նա սխալվում է, եթե կարծում է, թե դրանով

ինձ կկոտորի: Ես արդեն ամեն բանի վարժվել եմ: Այ դու հարցնում ես, թե ով եմ ... Ես թափառական դերվիշ եմ, մեղդահ¹... Ձեր լեզվով ասած՝ կորզար: Տարիներ շարունակ ոտքի տակ եմ տվել ողջ օսմանյան կայսրությունը, անցել եմ Եփրատից մինչև Դանուբ, Ղրիմի լեռներից հասել եմ մինչև հզոր ու փառահեղ Նեղոս գետը: Ամենուրեք ուրախություն մարդկանց և ուրախ կատակներ, պատմում էի հին աշխարհի հերոսների կամ հեռավոր երկրների մասին, որտեղ բախտ էի ունեցել լինելու: Բայց ահա ընկա Համիդի ճանկը...

— Ինչի՞ համար է էսպես պատժել քեզ, աղա:

— Օ՛, դա հին պատմություն է: Ես քեզ կպատմեմ այդ պատմությունը, որպեսզի ինձ հետ շմեռնի... Ասենք հոգիս էլ կթեթևանա, թե որ իմ վիշտը պատմեմ մեկնումեկին: Բայց արի նախաճաշենք, հետո: Ես լսում եմ վերակացուի ոտնաձայնը:

Ինչ-որ մեկը կողպեքը բացեց: Մեկ բոպե անց դռան արանքից առկայծեցին լուսայգի աղոտ շողերը, և վերակացուն բերեց երկու փոքրիկ բլիթ ու մի դուլջ ջուր: Լուռ դրեց նկուղի մեջտեղը ու քթի տակ փնթփնթալով դուրս եկավ:

— Խուլուհամր է խեղճը, — բացատրեց մեղդահը, կրծելով քարթու բլիթն ու վրայից ջուր խմելով: — Դա միակ մարդն է Համիդից բացի, որին ես տեսել եմ այս տարիների ընթացքում: Մեկս մյուսին չենք հասկանում: Իսկ Համիդի հետ սկզբնական շրջանում թունդ վեճեր ունեցա... Հիմա նա վաղուց չի երևում:

— Դե պատմիր, աղա, պատմիր և՛ քո, և՛ նրա մասին, — հիշեցրեց Չվենիգորան:

— Ես չեմ մոռացել, կազակ... Անպայման կպատմեմ այն մասին, թե ինչ պատահեց ինձ բուլղարական Ստարա Պլանինայում: Հիշողություններն այդ դեպքերի մասին հալածում են ինձ արդեն շատ ու շատ տարիներ... Նստիր ու լսիր:

¹ Մեղդահ (արաբ.) — մահմեդականների մոտ թափառաշրջիկ ասացող, հեթաթասաց:

— Ես ու Համիդը ծառայում էինք միևնույն հեծյալ գրնդում, որ կանգնած էր միջին Բուլղարիայում, — սկսեց մեղդահաչը: — Նա կրտսեր հրամանատար էր: Քսաներկու տարեկանում արդեն խազնադարի¹ պաշտոն էր զբաղեցնում, որին հասել էր իր հորեղբոր՝ բեգլերբեյի² շաուշի³ շնորհիվ: Թեև աստիճանով ես նրանից բարձր էի, բայց այնպես պատահեց, որ մենք բավականաչափ մտերմացանք: Չէ, ընկերություն չէինք անում: Բանը դրան չհասավ, քանի որ շնայած Համիդը շահել էր, բայց գաղտնապահ մարդ էր: Սակայն մենք հաճախ էինք ժամանակ անցկացնում մի շիշօղու շուրջ կամ թուղթ էինք խաղում:

Որքան ինձ հայտնի էր, նա ոչ մի եկամուտ չուներ, ինչպես և ես, ապրում էր համեստ, ծախսելով միայն այն, ինչ որ ստանում էր ծառայության համար: Մենք նախանձում էինք նրանց, ովքեր տնից մեծ գումարներ էին ստանում և ապրում էին բեգի նման: Բարեբախտաբար գնդում քիչ էին այդպիսիները, և նրանք շատ էլ չէին վրդովում մեզ:

Մեր կյանքն անցնում էր հանգիստ ու միօրինակ: Ծառայությունը դժվար չէր: Մերթընդմերթ կերուխումներ էինք սարքում քարվանսարայներում ու ախշիյնիցաներում⁴, մեկ էլ զանազան խաղեր էինք կազմակերպում, որոնցում, խոստովանում եմ, մեծ վարպետ էի:

Բայց մենք ասկյարներ էինք, այսինքն՝ զինվորներ, և մի ակնթարթում ամեն բան փոխվեց: Շեփորներն ու թրմբուկները մեզ արշավի կոչեցին: Նորից, արդեն որերորդ անգամ, բուլղարները զենք վերցրին մեր դեմ: Ապստամբություն էր բռնկվել Ստարա Պլանինայում, վայրի ու անմատչելի լեռներում, որ հատում էին ողջ երկիրը արևմուտքից արևելք: Հենց այնտեղ էլ ուղարկեցին մեր գումդը:

¹ Խազնադար (թուրք.) — գանձապետ:

² Բեգլերբեյ (թուրք.) — սուլթանի տեղապահ, նահանգի կառավարիչ:

³ Չաուշ (թուրք.) — աստիճանավոր՝ հատուկ հանձնարարությունների համար:

⁴ Ախշիյնիցա (բուլղ.) — պանդոկ, ճաշարան:

Ես չեմ պատմի, թե ինչպես մազլեցեցինք անմատչելի քարափները, անցանք խոր կիրճերն ու զառիթափերը, ինչպես կռվի բռնվեցինք ապստամբների հետ և առաջին կորուստները տվեցինք: Կասեմ միայն, որ երեք շաբաթվա ընթացքում մինչև կոկորդներս կշտացանք պատերազմից, թեև նոր էր բորբոքվել ու ծայրը չէր երևում:

Բացարձակապես մեր բախտը չէր բերում: Հայդուկները լավ էին ճանաչում իրենց հայրենի երկիրը և, օգտվելով տեղանքին ծանոթ լինելուց ու լեռնականների աշակցությունից, հարձակվում էին հանկարծակի, անակնկալ: Սպանում էին տասնյակ հեծյալների, գողանում էին մեր ձիերն ու անհետանում անտառի թավուտներում, կամ էլ հեռանում էին այնպիսի զառիվայր վտանգավոր կածաններով, որտեղ մենք սիրտ չէինք անում խցկվել մեր ձիերով:

Հետո վրա հասավ դժբախտությունը: Հայդուկները պաշարեցին մեզ մի խոր կիրճի մեջ, փակեցին անցումները, — իսկ դրանք ընդամենը երկուսն էին, — և կամաց-կամաց սկսեցին հրացանազարկ անել մեր ասկյարներին, որոնք անզգուշորեն քթերը դուրս էին հանում իրենց թաքստոցներից: Շուտով մեր դրությունը դարձավ անտանելի: Պաշարումը ճեղքելու մեր մի քանի փորձերը անհաջողությամբ պսակվեցին, միայն մեծ կորուստներ տվեցինք: Սկսվեց սովը: Բոլորն էլ հասկանում էին, որ մենք առանց օգնության այդտեղից դուրս պրծնել չենք կարող: Այն ժամանակ փաշան ավագներին հրավիրեց իր անձավը, կոշ արեց հանձն առնել կամավոր ճեղքել հայդուկների օղակը և զաղտնի ծրար հասցնել բեզլերբեյին՝ օգնության խնդրանքով:

— Կգնան երկու իգիթներ, — ասաց փաշան: — Եթե հայդուկները նկատեն, նրանցից մեկը պետք է զոհի իրեն՝ հանուն մեր բոլորի, և կասեցնի թշնամուն, իսկ մյուսն այդ ընթացքում պետք է կտրվի նրանից և ալլահի օգնությամբ հասնի մինչև Զագորա:

Զիմացա ո՛ր սատանան ինձ դրդեց, բայց ես վեր կացա ու ասացի.

— Պատրաստ եմ ծրարը տեղ հասցնել, հարգարժան փաշա:

— Կեցցես, գովելի է, — գոչեց նա: — Ես միշտ էլ գնա-

ճատել եմ քո քաջութիւնն ու նվիրվածութիւնը մեր պայ-
ծառափայլ սուլթանին, Յաղուբ աղա: Երկրորդն ո՞վ կլինի:
Նա հայացքը պատեց ավագների վրա:

Այդտեղ, ինձ համար անսպասելի, տեղից ելավ Համիդն
ու հայտարարեց, որ ինքը նույնպես համաձայն է մասնակ-
ցել այդ վտանգավոր գործողութեանը:

— Եթե Յաղուբ աղան կկամենա, որ ես ընկերանամ
իրեն, ապա ուրախութեամբ առաջարկում եմ իմ ժառայու-
թիւնը,— ասաց նա և ավելացրեց. — Ես հավատում եմ իմ
ճակատագրին, իսկ իմ քաջութեանը, կարծում եմ, ներկա-
ներից ոչ մեկը չի կասկածում: Ալլահը կօգնի մեզ, և մենք
ես կգանք բեգլերբեյի թարմ զորքով:

Գորովագութ ծերունի փաշան, որ հավանաբար այնքան
էլ հույս չէր տածում, թե իր ավագներն ընդունակ են անձ-
նագոհութեան, նույնիսկ փոքր-ինչ վեր ելավ փափուկ մին-
դարից¹, որպեսզի գրկի Համիդին:

— Երբեք չի խավարի Իսլամի արևը, քանզի ունի այս-
պիսի կտրիճ ու նվիրված պաշտպաններ,— բացականչեց
նա: — Հավատում եմ ձեր բախտավոր աստղին, դուք իմ
աչքի լույս: Մենք հուսով ենք, որ ձեզ կդիմավորենք ողջ
ու առողջ, երեք-չորս օր հետո, երբ այստեղ կառաջնորդեք
բեգլերբեյի զորքին:

Նա արձակեց բոլոր ավագներին, ծրարը ինձ տվեց, քա-
նի որ աստիճանով ավելի բարձր էի, հայտնեց նշանաբանը
բոլոր օրերի համար և նորից բարի ճանապարհ մաղթեց:

Չնայած որ այդ օրերին լուսինը իրիկունից մինչև առա-
վոտ լուսավորում էր, ես ու Համիդը մութն ընկնելուն պես
դուրս եկանք ճամբարից, բարձրացանք լեռնաշղթայի կա-
տարը և նրա հակադիր լանջով կամաց-կամաց սկսեցինք
իջնել դեպի հովիտ, որ ծածկված էր դարավոր անտառով:
Մինչև օրս էլ չգիտեմ, արդյո՞ք հաջողվեց թաքուն անցնել
հայդուկների ուղեկալի մոտից, թե նրանք հետևում էին մեզ,
որոշելով ավելի ուշ բռնել, ճամբարից հեռու, որպեսզի մե-
րոնք չիմանային, բայց, այսպես թե այնպես, մենք հեռա-

¹ Մինդար (թուրք.) — բարձ. օթոց նստելու համար:

ցանք կիրճից մեկ, գուցեև մեկուկես փարսաղ¹, առանց որևէ մեկին պատահելու: Ես արդեն հավատում էի, որ մեր բախտը բերում է, և նույն օրվա երեկոյան մենք բարեհաջող կհասնենք բեգլերբեյի բանակատեղը:

Գնում էինք մի նեղ արահետով: Արահետի երկու կողմերում սևին էին տալիս հաճարի ծառերը, իսկ վերևում, եղևնիներն ու սոճիները: Մուգ կապույտ երկնքում, լեռների արանքով գլորվում էր կլոր լուսինը: Շնչելը հեշտ էր: Գիշերային օդը հագեցած էր լեռնային մարգագետինների ու անտառների շոայլ բուրմունքով:

Հանկարծ մեր ետևում թփերը ճոթճոթացին, և ինչ-որ մեկը գոչեց բուլղարերեն.

— Կանգնեք, թուրք շներ:

Մյուս ձայնը նույն բանը կրկնեց թուրքերեն: Որոտացին ենիչերկայի² կրակոցները, բայց գնդակները ոչ ինձ կպան, ոչ էլ Համիդին:

Ես փութով ծրարը հանձնեցի Համիդին:

— Վազիր: Ես սրանց կպահեմ,— շնչացի նրան, Կոտլիս տակից դուրս քաշելով ատրճանակները և դեմքով շրջվելով դեպի անտեսանելի թշնամին:

Սակայն հենց այդ ակնթարթին թիկունքումս որոտաց կրակոցը: Ինչ-որ մի բուլ ճոթարկա հարվածեց մեջքիս: Ընկնելիս ես շուռ եկա ու տեսա, որ Համիդի ձեռքին ծխում է ատրճանակը: «Մի՞թե նա կրակեց ինձ վրա,— փայլատակեց գլխումս: — Ինչի՞ համար: Ես ի՞նչ վատություն էի արել նրան»: Ուզեցի գոռալ՝ չկարողացա: Ոտքերս ծալվեցին, շուրջս ամեն ինչ լողաց, լուսինն ասես դիվոտեց երկնքում. ոստոստաց, կայծկլտաց, հետո գլորվեց ներքև, ուղիղ ինձ վրա... Եվ ես գետին տապալվեցի:

Վերջինը, որ լսեցի, Համիդի խոսքերն էին: Նա ձայն տվեց հայդուկներին.

— Զկրակեք: Ես կարևոր տեղեկություններ ունեմ հայտնելու ձեր վոյեվոդային:

¹ Փարսաղ — երկարության չափ, հավասար է շորս կիլոմետրի:

² ենիչերկա (ուկր.) — հրացան, որով գինվում էին ենիչերիները:

Մինչև հիմա էլ այդ խոսքերը հնչում են իմ ականջներում, կարծես երեկ եմ լսել: Շատ բան է անհետացել իմ հիշողությունից, շատ բան է մոռացվել: Նույնիսկ ջնջվել են ինձ մտերիմ ու հարազատ մարդկանց պատկերները: Իսկ դավաճանի այդ խոսքերը ընդմիշտ խրվել մնացել են հիշողությանս մեջ:

Արթնացա կրծքիս սուր ցավից և երկար ժամանակ չէի հասկանում, թե որտեղ եմ: Աչքերս բացեցի, նայեցի շուրջս:

Ես պառկած էի գեղեցիկ փայտե մահճակալի վրա, մի փոքրիկ մութ սենյակում, որի պատերը շարված էին գորշ, անտաշ քարով: Դիմացի պատի բարձր նեղլիկ պատուհանը բերդի հրակնատ էր հիշեցնում: Հաստ կաղնեփայտ չոններից ոչ մի ձայն չէր թափանցում:

Ի՞նչ է պատահել ինձ: Որտե՞ղ եմ ես: Բարեկամների՞, թե թշնամիների մեջ: Ես չկարողացա պատասխանել այդ հարցին և պառկել էի անշարժ, քանի որ ամենափոքր շարժումից անգամ ցավից կուրծքս կտոր-կտոր էր լինում:

Հետո նորից գիտակցութունս կորցրի: Իսկ երբ ուշքի եկա, կողքիս հինգ-վեց տարեկան մի մանչուկ տեսա: Նա կանգնել էր մահճակալիս մոտ և ուշադիր ինձ էր նայում: Նրա սև, փայլուն աչքերի մեջ կոպում էին հետաքրքրասիրությունն ու երկյուղը: Երբ նա նկատեց, որ արթնացել ու նայում եմ իրեն, ուզեց փախչել, բայց, հավանաբար, հետաքրքրասիրությունը հաղթեց, և տղան մնաց:

Նրա հագին կարմիր թավշե բաճկոն էր և սև, ծնկներից ներքև ճարմանդներով ամրացված տաբատ: Մետաքսե վերնաշապկի ճերմակ օձիքը ընդգծում էր մանկական վզի նուրբ արևայրուկը: Նրա ամբողջ արտաքինը մանկորեն հաճելի էր ու միամիտ:

Նրա աջ ձեռքը արմունկից ներքև փաթաթված էր ճերմակ քաթանի կտորով:

— Դու ո՞վ ես, — հարցրեց նա ինձ բուլղափերեն:

Ես ենթադրեցի, որ բուլղար ապստամբների՝ հայդուկների մոտ եմ:

— Իմ անունը Յաղուբ է, — պատասխանեցի թուրքերեն: — Իսկ քո՞նր:

Մանչուկը նույնպես անցավ թուրքերենի, այն էլ այն-
քան գեղեցիկ, այնքան մաքուր, որ ես կասկածեցի իմ նախ-
կին ենթադրութեանը:

— Իսկ իմը Նենկո է,— պատասխանեց նա ու ավելաց-
րեց.— Ծս հայդուկ եմ: Իսկ դո՞ւ:

Այժմ արդեն կասկած չկար: Մանկական անմիջականու-
թյունը հօդս ցնդեցրեց իմ երկվությունը: Ուրեմն, ես հայ-
դուկների ձեռքում եմ, և ինձ բուժում են, վիրակապելով նույն-
պիսի ճերմակ քաթանով, ինչպես և այս տղային, ամենայն
հավանականութեամբ նրա համար, որպեսզի հետո հարցա-
քննեն ու անմարդկային տանջանքների ենթարկեն: Այդ նո-
րությունն ի վերջո փշացրեց տրամադրությունս, բայց
ես, թաքցնելով իմ հուզումը, պատասխանեցի.

— Իսկ ես թուրք եմ:

Իմ խոստովանությունը բնավ չվրդովեց նրան:

— Բա ինչո՞ւ դու սարսափելի չես,— զարմացավ նա:

— Չէ՞ որ դու էլ սարսափելի չես, շնայած հայդուկ ես,—
պատասխանեցի նրա տոնով:

— Հայդուկները հերոսներ են, նրանք պայքարում են
Թուղարիայի ազատութեան համար,— հպարտութեամբ ասաց
Նենկոն, հավանաբար կրկնելով ուրիշների խոսքերը: — Երբ
մեծանամ, հորս նման իսկական հայդուկ կդառնամ: Բոլորն
էլ սիրում ու հարգում են հայդուկներին, բացի թուրքերից
ու պոմակներից¹, որոնք սպանում են նրանց, նստեցնում են
ցցի վրա և հանում են աչքերը:

Ծս չիմացա ինչ պատասխանեմ. այն ինչ նա ասաց, բո-
լորը զուտ ճշմարտություն էր: Սպախիաններից² ոչ բոլորը,
բայց շատ շատերը, հատկապես ենիչերիները, իսկապես
դաժանորեն տանջում էին գերի հայդուկներին, և նույնիսկ
ավելի կատարելագործված ձևերով, քան կարող էր պատ-
կերացնել Նենկոն: Ծս խոսքս շուտ տվի:

— Ո՞վ է քո հայրը, Նենկո:

¹ Պոմակ (բուլղ.) — մահմեդականություն ընդունած բուլղարացի:

² Սպախիա (պարսկ. սիպահ բառից) — հեծյալ ռազմիկ, նույն ինքն՝
պաշտոնաթող կալվածատեր:

— Վոյեվոդա Մլադենը... Նա շուտով կհաղթի թուրքերին: Այն ժամանակ ամբողջ Բուլղարիան ազատ կլինի:

Տղան ավելի էր դուր գալիս փնձ, թեև նա իմ ականջի համար տհաճ բաներ էր ասում:

Ուրեմն, նրա հայրը վոյեվոդա Մլադենն է, խոովարարների առաջնորդը: Մենք շատ էինք լսել նրա մասին, գիտեինք նաև, որ նա էր պաշարել մեր գունդը էն անիծյալ հովտում, որտեղից ոչ մի ելք չկար:

— Իսկ մորդ անո՞ւնն ինչ է:

— Մորս անունը Անկա է,— կարճ պատասխանեց Նենկոն:

— Ձեռքիդ ի՞նչ է եղել:

Տղան նայեց ճերմակ վիրակապին:

— Բաղեն ճանկոնց: Ուզում էի նրան վանդակից դուրս հանել, իսկ նա էնպե-ե՛ս պինդ կպավ ինձնից ու քաշեց իրեն, որ հազիվ պոկվեցի: Ձեռքս էլ ծվատեց համարյա մինչև ոսկորս:

— Շա՞տ է ցավում:

— Ցավում էր: Բայց հիմա չէ: Արդեն լավացել է:

Չհասցրեցի նույնիսկ պատասխանել նրան, երբ Նենկոն արագորեն քանդեց վիրակապը և ինձ մեկնեց իր նուրբ, բարակ թաթիկը: Արմունկից մինչև դաստակը սևին էին տալիս երեք երկար սպի: Տեղ-տեղ թեփուկն արդեն թափվել էր, և փայլփլում էին թարմ, վարդագույն գուլերը:

— Դու չլացեցի՞ր:

— Լացեցի, բայց... քիչ: Հայդուկները շեն լալիս:

— Կեցցես: Ուզո՞ւմ ես քեզ համար հեքիաթ պատմեմ:

Տղան ճարակորեն փաթաթեց ձեռքը: Երևում է, միայն ինձ չէ, որ ցույց էր տալիս վերքը, և արդեն սովորել էր՝ ինքն էր վիրակապում:

— Ուզում եմ, եթե ավազակների կամ հերոսների մասին է... Բայց սպասիր, Ձլատկային կանչեմ:

— Ձլատկայի՞ն:

— Նա իմ քույրիկն է,— բացատրեց տղան:

Նենկոն անհետացավ դռների ետևում և շուտով բերեց երեք տարեկան մի աղջնակի, որը նման էր եղբորը, սակայն,

ի տարբերութիւնն նրա, կապուտաշ էր, թեև մազերը թուխ էին ու գանգուր:

Երեխաները բարձրացան մահճակալիս վրա, և ես սկսեցի պատմել Ալադինի հեքիաթը: Երեխաների աշուկները սեվեռովել էին ինձ, ինչպես ասեղներ, և ամբողջ հեքիաթի ընթացքում այդպես էլ չկտրվեցին ինձանից: Նենկոն մոռացել էր, որ ես թուրք եմ, ասենք ես էլ էի մոռացել, որ նա տղան է հայդուկների վոյեվոդայի, որի դեմ կռվել էի և որին պետք է ատել ամբողջ հոգով: Հրաշալի հեքիաթը հափշտակել էր և՛ երեխաներին, և՛ ինձ: Նենկոյի շագանակաթույր աչքերը փայլում էին հիացմունքից, իսկ ինձ թվում էր, թե աջ թիակիս տակ արդեն առաջվա պես չի մղկտում ու վառվում:

Առաջին հեքիաթին հաջորդեցին երկրորդը, երրորդը՝ Տղան, ամբողջովին ուշադրութիւնն դարձած, տեղից չէր շարժվում, և նույնիսկ երբ լսեց կանացի ձայնը, որ նենկո էր կանչում, շարձագանքեց, այլ մատը դրեց շրթունքներին, որպեսզի ես լռեմ:

Բայց Ձլատկան մահճակալից ցած թռավ և փափուկ կծիկի նման կիսաբաց դռնից դուրս գլորվեց: Իսկ մեկ րոպե անց շնձքին հայտնվեց մի ջահել գեղեցիկ կին՝ բուլղարական սև-սպիտակ ղգեստներով:

— Նենկո, տղաս, հոգիներս դուրս եկավ ամբողջ ամբողջում և բակում քեզ ու Ձլատկային փնտրելով: Դու էստեղ ի՞նչ ես անում:

— Ես հեքիաթ եմ լսում: Մի՛ խանգարի՛ր մեզ, խնդրում եմ,— դժգոհ պատասխանեց տղան:

Կինը զարմանքով նայեց ինձ, բռնեց երեխաների ձեռքերից ու լուռ դուրս ելավ սենյակից: Դուռը փոքր-ինչ կիսաբաց մնաց:

Ես աչքերս փակեցի ու նիրհեցի: Զգիտեմ, որքան ժամանակ էր անցել: Արթնացա տղամարդկանց ձայներից, որ հարևան սենյակից էին գալիս: Դրանցից մեկը ես իսկույն ճանաչեցի. դա Համփոփ ձայնն էր: Երկրորդը նույնպես ծանոթ էր թվում, բայց ես ոչ մի կերպ չկարողացա հիշել, թե երբ և որտեղ եմ լսել այդ ձայնը:

— Ես բոլորը պատմեցի, Մլադեն աղա,— ասաց Համփ-

դը: — Հայտնեցի բոլոր հինգ օրերի թեզկերեն¹: Դրանով քո զինվորները հեշտությամբ կարող են թափանցել մեր ղորքերի դասավորության մեջ և հանկարծակիի բերել նրանց: Նրանք քաղցի են մատնված և ձիու միս են ուտում, բայց դա էլ չի ճարվում, որովհետև փաշան արգելում է ձիերը մորթել: Ձիերի համար նա պատասխան պիտի տա, իսկ մարդկանց համար՝ ոչ: Այդպիսին է օրենքը: Հիմա մնում է միայն բաց թողնել ինձ, քանի որ դա է միակ պայմանը, որ ես դրեցի այն բանից առաջ, երբ անկեղծորեն բոլորը պատմեցի իմ ջոկատի մասին, ինչ որ գիտեի:

— Մի՛ շտապիր, ադա,— պատասխանեց մյուս ձայնը: — Քեզ բաց կթողնեմ, երբ կպարզենք ամեն ինչ, և քո բոլոր տեղեկությունները կհաստատվեն... Մի բան չեմ հասկանում. ի՞նչը քեզ ստիպեց դավաճանել ձերոնց: Դու նույնիսկ չփորձեցիր փախչել...

— Ես չէի կարող հեռու գնալ: Միևնույն է, քո մարդիկ կբռնեին, և ես վաղուց կամ ճյուղից կախված կլինեի, կամ ցցի կնստեի: Ոչ մեկը, ոչ էլ մյուսը ինձ չեն հրապուրում: Բացի դրանից, ես ուրիշ պատճառներ էլ ունեմ, որոնց մասին հիմա ոչինչ ասել չեմ կարող:

— Իսկ դու ինչո՞ւ փորձեցիր սպանել ընկերոջդ:

— Չէի կամենում վկա ունենալ:

Կռուծյուն իջավ: Կատաղությունից քիչ էր մնում խելքս թոցնևի: Ստոր արարած: Հիմա արդեն հաստատ իմացա, որ Համիզը կրակեց ինձ վրա: Եթե մինչ այդ դեռ տատանվում էի, մտածում, թե այդ ամենը թվացել է ինձ զառանցանքի մեջ, ապա այժմ Համիզը ցրեց իմ կասկածները: Աչքերիս առջև նորից դեղին օղակներ լող տվին, ես դողում էի ամբողջ մարմնով, ասես տենդի մեջ լինեի: Ուզեցի գոռալ, բայց կրծքիցս միայն մի թույլ հառաչանք դուրս թռավ:

Չգիտեմ, թե ինչպես շնորհա իմ մեջ լցված ատելությունից: Ես միայն մի ցանկություն ունեի. անմիջապես, տեղնուտեղը սպանել այդ ստոր շանը: Բարձից պոկվեցի, վեր թռա, բայց կրծքիս սուր ցավը ինձ նորից տապալեց անկողնին: «Պառկիր, Յաղուբ, պառկիր,— թվաց թե ասաց նա:

¹ Թեզկերե (թուրք.) — նշանաբան:

— Հիմա դու ոչինչ չես կարող անել եզան պես առողջ Համիդին: Ուժ հավաքիր, հարկավոր է նախ դուրս պրծնել հայրուկների ձեռքից, հետո նոր մտածել վրեժի մասին»:

Բացվեց դուռը, և ես տեսա միջահասակ, իմ տարիքի մի մարդու, մահուդե կունտուշով ու փափուկ յուֆտե սապոզնեքով, թուրը կողքից կախ և շոայլորեն դրվագված ատրճառակները բուլղարական լայն գոտու տակ խրած: Դա, անկասկած, վոյեվոդան էր, որը քիչ առաջ խոսում էր Համիդի հետ: Նա դուրս եկավ խոր դռնախորշից և, ժպտալով, մտահեցավ ինձ:

— Դու ինձ չե՞ս ճանաչում, Յաղուբ: Կարծես թե հիմա լավ ես, հը՞:

Պատահանի լույսն ընկավ նրա դեմքին, և ես, ի դեմս վոյեվոդայի, ճանաչեցի իմ նախկին դպրոցական ընկերոջը՝ Մլադենին: Ահա թե ինչու վոյեվոդայի ձայնը ինձ այնպես ծանոթ թվաց: Մլադենը, իմ պատանուության տարիների ընկերն ու բարեկամը, ապստամբների առաջնորդն է, հայրուկների վոյեվոդան: Ում մտքով կանցներ, թե այսպիսի կերպարանափոխություն տեղի կունենա: Հիմա հասկացա, թե ինչպես եմ հայտնվել այս սենյակում, և ինչու այնպես ջանասիրությամբ բուժում են ինձ, փոխանակ կախելու կամ գնդակահարելու: Մլադենը ճանաչել էր ինձ և հոգ էր տանում իմ մասին:

— Մլադեն,— բացականչեցի ես՝ հաղթահարելով ցավը: — Մլադեն, մի՞թե դու ես:

— Ինչպես տեսնում ես, Յաղուբ, իսկապես ես եմ,— պատասխանեց նա՝ կամացուկ սեղմելով ձեռքս: — Ահա թե ինչպես հանդիպեցինք, բարեկամս. մեկս մյուսիս թշնամի: Հավանաբար, արդեն գլխի ընկար, որ հենց ես եմ վոյեվոդա Մլադենը, որին նզովում են ձեր բոլոր մեչիդներում և կայսրության բոլոր ծայրերում: Ասենք դու էլ, ըստ երեվույթին, շատ անգամ ես դժոխք ուղարկել ինձ և կամեցել ես իմ գլուխը տեսնել սպախիայի նիզակի ծայրին...

— Դու չես չափազանցում, Մլադեն,— պատասխանեցի իս: — Համենայն դեպս ուրախ եմ քեզ ողջ-առողջ տեսնելու համար, թեպետ համոզված չեմ՝ խելքդ գլուխդ է, թե չէ:

— Ինչո՞ւ:

— Ես միայն խելացնորությամբ կարող եմ բացատրել

քո մասնակցութիւնը այս ձախորդ պատմութեանը, որն սկզբից ևեթ դատապարտված է եղել կործանման:

— Սխալվում ես, Յաղուբ,— առարկեց վոյեվոդան: Նրա ձայնը հնչեց, ինչպես ձգված աղեղնալար: — Ինչպես քեզ հայտնի է, ես բուլղարացի եմ, բուլղարացի իշխան, որից թուրքերը խլել են ամեն բան, բացի անունից. հայրենիքը, մարդկանց, հողը, անասունները: Մնացել է միայն այս լեռնային բույնը, որը դարձել է իմ ապաստարանը, իմ թաքստոցը: Ամենուրեք ես տեսել եմ ճնշում, հալածանք ու անարդարութիւն: Սուլթանը խլել է մեր բարեբեր հողերը, բաժանբաժան արել ու տվել իր զինվորներին: Մեր հողագործները հիմա պետք է աշխատեն այդ հողերի վրա, վճարեն խարջ՝ տասանորդ, որը միայն անունով է տասանորդ, իսկ իրականում համարյա եկամուտի կեսն է: Բացի դրանից, նրանք գանձարանին վճարում են ջիղե՝ շնչահարկ, և իսփենջ՝ արյան տուրք, տալիս են բուլղար երեխաներին, որոնցով հետագայում սուլթանը համալրում է իր ենիչերիական կորպուսը... Թուրքերը փակում են մեր եկեղեցիները, բնակչությանը զրկում բոլոր իրավունքներից: Բեգլերբեյը, սանջակբեյը՝ և փաշաները սև ագռավների նման թափվել են Բուլղարիայի, Բալկանների վրա ու արյունարբու ճանկերով ծվատում են ժողովրդի սիրտը: Ծս կարո՞ղ եմ արդյոք հանգիստ ու անտարբեր նայել այդ ծաղրուծանակին, նվաստացմանը, սպանութեանն ու կողոպուտին: Իմ սիրտը կարո՞ղ է արդյոք հաշտվել այդ սև անարդարութեան հետ: Մի՞թե քար է իմ սիրտը, կամ մի՞թե անկենդան ջուր է հոսում իմ երակներում և ոչ թե տաք արյուն... Ահա թե ինչու այսօր ես դարձել եմ բուլղար հայդուկների՝ ապստամբների, իրենց ժողովրդի և հայրենիքի ազատութեան համար պայքարող մարտիկների վոյեվոդան:

Նա խոսում էր ոգեշնչված: Աչքերը վառվում էին հավատով այն գործի արդարութեան հանդեպ, հանուն որի պայքարի էր ելել հողոր Բարձր Դռան դեմ: Լայն, ճերմակ ճակատը, երկար վարսերը, որ թուխ փայլուն ալիքներով իջ-

1 Սանչակ (թուրք.) — նահանգ: Սանչակբեյ — նահանգի կառավարիչ, նահանգապետ:

նում էին պարանոցին, փոքրիկ սև բեղերը նրա դեմքը դարձնում էին արտահայտիչ ու առինքնող:

Ես ամաչեցի իմ խոսքերից:

— Մլադեն, — ասացի, — երբ մենք սովորում էինք մեղրեսեսում, դու ինձ համար միայն ազնիվ, խելացի պատանի էիր, թեկուզև մի քիչ էլ տաքարյուն: Հիմա տեսնում եմ, որ քեզ լավ չեմ ճանաչել: Դու նաև ծածկամիտ էիր. երբեք ոչնչով չէիր մատնում այն, ինչ որ կար քո հոգում: Ու թեև գիտեի, որ դու բուլղար ես, սակայն ոչ մի նշանակություն չէի տալիս դրան, կարծում էի, որ թուրք դառնալը կամ թուրք լինելը պատվավոր ու շոյիչ է յուրաքանչյուրի, այդ թվում և բուլղարացի իշխանազն Մլադենի համար: Հիմա տեսնում եմ, որ շատ եմ սխալվել: Դու դարձել ես քո ճնշված ժողովրդի պաշտպանը և քաջություն ես գտել քո մեջ՝ բացեիքաց դուրս գալու հզոր ու անողոր թշնամու դեմ: Իմ խոսքերը ետ եմ վերցնում, Մլադեն, քանզի խոնարհվում եմ քո արիության առջև: Ես չեմ կարող քո համախոհը դառնալ և չեմ կարող քո համոզմունքներին համակիր լինել: Իմ հայրենակիցների դեմ մղած պատերազմում քեզ ոչ մի բանով չեմ օգնի, որովհետև չեմ ուզում լինել դավաճան, ինչպես Համիդը, որը կամեցավ սպանել ինձ և մեր բոլոր գաղտնիքները քեզ հայտնեց: Սակայն ամբողջ սրտով հավատում եմ, որ դու չէիր կարող պաշտպանել անարդարությունը, և համակրում եմ... Թող ալլահը միշտ պահապան լինի քեզ:

— Շնորհակալություն, Յաղուբ, — ասաց Մլադենը: — Շնորհակալություն, որ հասկացար ինձ: Բայց իմ մտքով չէր անցնում, թե դու ամեն ինչ գիտես Համիդի մասին:

— Ես ակամա լսեցի ձեր խոսակցությունը:

— Այդ դեպքում հասկանալի է... Համիդը սրիկա է: Նա երիցս կախաղանի է արժանի: Այն բանի համար, որ նա սպախիա է և կովում է մեր դեմ, որ դավաճանել է իր գրնդին և որ կրակել է իր իսկ ընկերոջ վրա... Բայց ես խոսք եմ տվել, ազնիվ խոսք, որ բաց կթողնեմ:

— Ե՞րբ:

— Երբ եմ խոսք տվե՞լ, թե՞ երբ եմ բաց թողնելու:

— Ե՞րբ ես բաց թողնելու:

— Երբ լիմանամ, որ նրա հայտնած տեղեկությունները ճիշտ են:

— Այսինքն՝ մեր գնդի վրա հարձակվելուց հետո՞:

— Այո:

— Մլադեն, ինձ զենք տուր, ինքս նրան կսպանեմ,— գոչեցի ես: — Դու խոսք ես տվել բաց թողնել, ինչ արած, բաց թող: Ես էլ երդվել եմ վրեժ լուծել...

— Հանգստացիր, Յաղուբ,— Մլադենը խոնարհվեց ինձ վրա: — Քեզ համար դեռ վաղ է զենքի ու վրեժի մասին մտածել: Դու ծանր վիրավորված ես և դեռ պետք է ապաքինվես: Իսկ վրեժ կարող ես լուծել այն ժամանակ, երբ կվերադառնաս ձերոնց մոտ: Ոչ թե ինքնազուխ, այլ օրենքով: Եվ նրան կգնդակահարեն որպես դավաճանի:

— Երբեկիցե կվերադառնամ՝ յուրայինների մոտ:

— Կվերադառնա՞ս... ես մեղք եմ գործում ընկերներիս առաջ՝ ազատ արձակելով երկու սպախիանների: Ինչ արած. մեկին՝ հանուն պատվի, մյուսին՝ հանուն բարեկամության: Դու առայժմ պակիր: Ես պետք է գնամ... Հիմա բժշկին կուղարկեմ քեզ մոտ:

Նա վեր կացավ, բայց չհասցրեց դուրս գալ: Սենյակ ներխուժեց նենկոն՝ ճշալով:

— Ես չեմ ուզում մնալ դայակ Պեկոյի մոտ: Ուզում եմ թուրքի մոտ մնալ:

Հորը նկատելով՝ տղան կանգ առավ, նրա ետևից ներս մտավ արագ շայելուց շիկնած վոյեվոդայի կինը:

— Ի՞նչ անեմ սրա հետ, Մլադեն,— գանգատվեց նա՝ մատնացույց անելով տղային: — Դայակին իսկի չի լսում: Հա ուզում է էստեղ գցել իրեն: Ասում է, թուրքը հետաքրքիր հեքիաթներ է պատմում...

— Ոչ մի վատ բան չի լինի, Անկա, եթե նենկոն որոշ ժամանակ այստեղ մնա: Ես լիովին վստահում եմ Յաղուբին: Մենք հենց նոր անկեղծորեն խոսեցինք. նա մեր որդուն մահմեդական չի դարձնի... Առանց վախենալու կարող ես տղային թողնել նրա մոտ:

Այդ խոսակցությունից հետո նենկոն ամեն օր վազում գալիս էր ինձ մոտ, և ես նրան հեքիաթներ էի պատմում ու զանազան պատմություններ իմ ղինվորական կյանքից:

Մենք բարեկամացանք: Նրա աշխույժ բլբլոցները ցրում էին իմ տխրությունը, իսկ նա, հավանաբար, ընկեր շունենալով իր մանկական խաղերի համար, ամբողջ հոգով կապվել էր մեծահասակ մարդու հետ, որը նույն ձևով էր պատասխանում նրան: Հաճախ նա իր հետ բերում էր Ջլատկային, և այն ժամանակ սենյակում աշխույժ իրարանցում էր սկսվում: Երեխաները վազվզում էին իրար ետևից, ճղճղում էին հաճույքից, ծիծաղում, իսկ ես նայում էի նրանց ու մոռանում, որ վիրավոր եմ, որ պառկած եմ մահճակալին այն մարդու, որի դեմ պետք է կռվեի, որ ընկերներս գուր են սպասում իմ վերադարձին: Մոռանում էի նույնիսկ Համիդին, թեև, մենակ մնալիս, նրա մասին եղած մտքերը ինձ հանգիստ չէին տալիս:

Այդպես անցավ մի քանի օր: Մի գիշեր էլ դժբախտություն պատահեց:

Լուսադեմին աղմուկ-աղաղակ, ոտքերի դոփյուն լսեցի ամբողջում: Կանացի հուսահատ ճիշեր հասան ականջիս: Ես չէի կարող տեղիցս վեր կենալ, դրա համար էլ համբերությամբ սպասեցի, մինչև մեկնումեկը կգար, և կիմանայի, թե ինչ է պատահել:

Որոշ ժամանակ անց իմ սենյակը մտավ մի ծեր հայդուկ, ջահը ձեռքին, բայց իսկույն էլ անհետացավ առանց մի խոսք ասելու:

Քիչ հետո ներս ընկավ լացակումած Անկան: Նրա աչքերում այնպիսի հուսահատություն տեսա, որ, չնայած կրծքիս սուր ցավին, գլուխս բարձրացրի ու հարցրի.

— Ի՞նչ է եղել:

— Տեր աստված, նենկոն ու Ջլատկան չկան,— տնքաց նա: — Այդ անփժված Համիդը սպանել է երկու պահակներին, դայակին և, երեխաներին գողանալով, փախել է ամբողջից:

Այդ լուրը շմեցրեց ինձ:

— Ո՞ւր է վոյեվոդան: Ո՞ւր է Մ : Հարկավոր է հասնել մարդասպանի ետևից:

— Մլաղենը բոլոր հայդուկների հետ դեռ երեկ մեկնեց դեպի Սպիտակ ժայռերը: Այնտեղ, հավանաբար, այսօր կռիվներ կլինեն: Ամբողջում ընդամենը հինգ պահակ էին

Մնացել է Մեկը հսկում էր Համիդին: Համիդը խեղդել է պահակին ու հագել նրա շորերը: Հետո իջել է ներքև ու սրախողխող արել մյուսին, որ դարպասն էր պահպանում...

— Իսկ երեխաները: Ինչպե՞ս է փախցրել նրանց:

— Մնացած հայդուկները քնած են եղել: Ոչ մեկը ոչինչ չի լսել: Երևի հենց այդ բանն էլ նրան դրդել է գողանալ երեխաներին: Խուժել է նրանց սենյակը, սպանել դայակ Պեկոյին, հետո քնաթաթախ երեխաներին գրկել ու դուրս է փախել: Ինձ արթնացրեց Նենկոյի սարսափելի ճիչը: Չայնը գալիս էր ելքի դռնից, ես նետվեցի այնտեղ... Բայց ուշ էր արդեն. Համիդը հեծավ դարպասի մոտ միշտ պատրաստ կանգնած ձին և, երեխաներին ձեռքից բաց չթողնելով, սլացավ գիշերվա խավարի մեջ...

Կինը մագերն էր պոկում, խելագարի պես պատեպատ էր զարկվում սենյակում:

— Ի՞նչ անեմ: Աստված իմ, ի՞նչ անեմ,— հեծեծաց նա գլուխը բռնած:

— Հարկավոր է իսկույն ևեթ երեք հայդուկներին ուղարկել նրանց փնտրելու: Թանկ է յուրաքանչյուր բոպեն,— ասացի ես, սրտիս մոտ ընդունելով այդ կնոջ վիշտը:

— Ես արդեն ուղարկել եմ... բայց նրանք դատարկաձեռն են վերադարձել,— արցունքների միջից մրմնջաց նա: — Մութ գիշեր էր: Ոչ մի հետք չի մնացել: Ո՞վ իմանա, թե ուր է փախել: Ո՞վ կարող է հիմա նրան բռնել խիտ անտառում: Երևի նա արդեն յուրայինների մոտ է...

Ես ինչպես կարող էի՝ մխիթարեցի այդ թշվառ կնոջը, բայց իմ բոլոր խոսքերը զուր էին: Ինձ էլ տանջում էր վիրավորանքը, իսկ ավելի շատ ճնշում էր այն միտքը, որ Համիդը, ըստ երևույթին, ընդմիշտ դուրս պրծավ իմ ձեռքից: Իսկ ես այնպես էի ուզում երես առ երես հանդիպել նրան: Ինձ հաջողվել էր համոզել Մլադենին, որ բաց չթողնի նրան այնքան ժամանակ, քանի դեռ ես ոտքի չեմ ելել, և վոյեվոդան խոսք էր տվել ինձ... Եվ ահա: Համիդը անհետացել էր, և հիմա արի ու գտիր, թե կարող ես: Իսկ ես պառկած էի օտարի մահճակալին ու չգիտեի, թե երբ վեր կկենամ և ընդհանրապես վեր կկենամ՝ արդյոք...

Երեկոյան իր հայդուկների հետ վերադարձավ Մլադենը:

Նա մեծ ավար էր բերել. զենք, ձիեր, հագուստ և զնդի՛ գանձարկղը: Իմ գունդը ջախջախվել էր, միայն քշերն էին փրկվել:

Լսելով Համիդի փախուստի մասին՝ Մլադենը, ինչպես պատմեցին ինձ հետո, առանց ձիուց իջնելու, ջոկատը շուռ էր ավել ու սլացել էր նրան փնտրելու: Նա ամբողջում հայտնվեց միայն հաջորդ օրը, ամբողջովին մթնած, անքնությունից թե արտասովելուց աչքերը կարմրած, կորացած ու միանգամից քսան տարով ծերացած: Նրա աչքերում սառել էր անասելի ցավը:

Նա և իր մարդիկ անցել էին բոլոր լեռնային ճանապարհներով ու կածաններով, տնտղել էին շրջակա հովիտները, պրպտել թփուտներն ու փոսերը: Ոչ մի տեղ ոչ մի նշան: Միայն ջոկատներից մեկին, որը հասել էր մինչև լեռնափեշերը, որտեղ չափշփում էին թուրքական հեծյալ պարեկները, հաջողվել էր հետքը գտնել: Մերունի հովիվը պատմել էր, որ նախօրյակին տեսել էր հայդուկի շորերով մի ձիավորի: Ձիավորը մի մեծ պարկ էր տանում ձիու մեջքին դրած, թե ինչ էր դա՝ հովիվը չէր նկատել. նա արագ դեպի Զագորա էր սլացել: Նրբ այդ մասին հայտնեցին վոյեվոդային, նա կարգադրեց որոնումները դադարեցնել: Նա հասկացավ. դա Համիդն է եղել իր երեխաների հետ, որը շտապել է Զագորա, բեգլերբեյի մոտ: Հիմա ոչ մի ուժ չենկոչին ու Զլատկային այլևս չի կարող պոկել նրանց ճանկերից:

Վշտալի օրեր սկսվեցին Չեռնավոդում: Անկան հիվանդացավ, բոլորը վախենում էին նրա բանականության ու կյանքի համար: Մլադենը նիհարեց, հալումաշ եղավ, բոլորի աչքի առաջ սկսեց ճերմակել: Հայդուկները ման էին գալիս գիշերվա պես մթնդած: Վոյեվոդայի Զագորա ուղարկած հետախույզները դատարկաձեռն վերադարձան: Հաստատեցին միայն, որ Ստարա Պլանինայի և նախալեռնային հովիտների բոլոր բնակիչներն արդեն գիտեն՝ վոյեվոդայի երեխաներն ընկել են բեգլերբեյի ձեռքը:

Չնայած վշտին ու ծանր ապրումներին, Մլադենը ինձ չէր մոռանում: Ամեն օր բժիշկ էր ուղարկում, իսկ երբեմն էլ ինքն էր գալիս: Նստում էր աթոռին, գլուխն առնում էր

ձեռքերի մեջ և ցրված հայացքով նայում էր իր առջև: Ես փորձում էի խոսակցություն բացել նրա հետ, մխիթարել: Բայց նա կարեկցանքի խոսքեր լսելով՝ միայն թափ էր տալիս ձեռքն ու ասում. «Դու բարի մարդ ես, Յաղուբ, շնայած որ թուրք ես, և քո խոսքերը սրտիցդ են գալիս, դրա համար զնահատում եմ քեզ և սիրում, որպես հին ընկերոջ: Բայց քո խոսքերից իմ սիրտը չի թեթևանում, և դու, բարեկամ, ինքդ էլ լավ գիտես դա»: Սենյակից դուրս գալիս միշտ կրկնում էր.

— Շնորհակալ եմ քեզնից, Յաղուբ:

Ինչի՞ համար էր շնորհակալ: Նրա համար, որ մխիթարո՞ւմ էի: Մեծ բան չէր: Ես ուզում էի անկեղծորեն, բարեկամաբար օգնել Մլադենին, բայց չէի կարող, ասենք չգիտեի նույնիսկ, թե ինչպես օգնեմ:

Շուտով լուր տարածվեց այն նոր անարգ ու անազնիվ հարվածի մասին, որ հասցրել էր ինձ Համիդը:

Ես արդեն սկսել էի ապաքինվել, քիչ-քիչ ման էի գալիս ու անհամբեր սպասում այն պահին, երբ կկարողանայի վերադառնալ յուրայինների մոտ: Կասկած չունեի, որ Մլադենը բաց կթողնի ինձ, հենց որ խնդրեմ: Բայց մտքովս կանցներ, թե գլխիս արդեն այնպիսի շարագուշակ ամպեր են կուտակվել, որոնց ոչ մի քամի չի կարող ցրել:

Մի անգամ ինձ մոտ եկավ Մլադենը երկու հայդուկների ուղեկցությամբ, որոնք բերեցին մի կապկպված ենիչերիի: Հայդուկները դուրս ելան, իսկ ենիչերին մնաց կանգնած սենյակի մեջտեղում:

— Սա տխուր լուրեր է բերել քեզ համար,— ասաց վոյեվոդան:— Դու շես կարող ձերոնց մոտ վերադառնալ:

— Ինչո՞ւ,— բացականչեցի ես:

— Համիդը հիմա վայելում է բեգլերբեյի ողորմածությունը: Նա կարողացել է բեգլերբեյին համոզել, որ դավաճանը դու ես, որ դու ես ինձ հանձնել փաշայի նամակը և հայտնել բոլոր նշանաբանները: Դու օրենքից դուրս ես հայտարարված... Քեզ համար, կենդանի թե մեռած, պարգև են խոստացել:

— Օ, ալլահ,— տնքացի ես՝ մինչև սրտիս խորքը խոցված այդ լուրից: — Մի՞թե դա ճիշտ է:

— Ճիշտ է աղա,— հաստատեց ենիշերին:— Սպիտակ ժայռերի հովտում սպախիանների գնդի ջախջախումից հետո մեզ մոտ մի գլուխ էր մասին են խոսում:

Մլաղենը ծափ տվեց: Ներս մտան հայդուկները և տարան ենիշերին:

— Հիմա արդեն ինձ համար հասկանալի է, թե ինչու Համիդը կրակեց քեզ վրա և թե ինչու իր գնդի մասին ամեն բան հայտնեց,— ասաց Մլաղենը, երբ դուռը ծածկվեց: — Մենք խլեցինք գնդի գանձարկղը, բայց այն դատարկ էր: Ըստ երևույթին, Համիդը դեռ մինչև արշավանքը կամ այն բանից հետո, երբ համաձայնեց քեզ հետ միասին գնալ բեզլերբեյի մոտ, գողացել է դրամը, և որպեսզի հետքերը կորցնի, որոշել է ամեն ինչ քեզ վրա գցել: Նա ամեն ինչ ճիշտ էր հաշվել. հայդուկները, նրանից կարևոր տեղեկություններ ստանալով, նրան շեն սպանի, իսկ գնդի գանձարկղը հարձակման ժամանակ կգրավեն, և Համիդը բոլոր հետքերը կկորցնի: Նա փորձեց քեզ սպանել, որպեսզի, քեզ դավաճանության մեջ մեղադրելով, իր վրայից կասկածը հեռացնի... Խորամանկ է, չէ՞: Նենկոյի ու Զլատկայի առեւանգումը, որ նույնպես լավ էր մտածված նրա կողմից, ավելի ևս օգնեց: Հիմա նրան մեծարում են որպես հերոսի. բա ո՞նց. փախցրել է վոյեվոդայի երեխաներին, սպանել է երկու հայդուկների և ինքն էլ դուրս է պրծել բանտից: Նրան հավատում են,— չէ՞ որ ոչ մի հիմք չկա շհավատալու,— և պարգևատրում են, բարձրացնում են պաշտոնը և նույնիսկ դրամ են տալիս, հագուստ, զենք և ձի առնելու համար... Իսկ քեզ բոլորը դավաճան են համարում:

— Երդվում եմ երկնքով, վրեժ կլուծեմ նրանից,— բացականչեցի ես՝ պատկերացնելով, թե ինչ անմարդկային տանջանքների եմ մատնելու իմ ռխերիմ թշնամուն, հենց որ ձեռքս կրնկնի: — Մլաղեն, աղաչում եմ, ինձ զենք տուր: Զի տուր ինձ: Ես պետք է գտնեմ ու պատժեմ այդ սրիկային:

Բայց Մլաղենը սառը ջուր լցրեց գլխիս:

— Ենիշերիներն անմիջապես կբռնեն քեզ: Շտապելու կարիք չկա: Հարկավոր է ամեն բան ծանրութեթև անել...

Ծն նույնպես վառվում եմ իմ զավակների համար Համիդից դաժանորեն վրեժ լուծելու ցանկությամբ: Արդեն հրամայել եմ իմ հավատարիմ մարդկանց, որպեսզի հետապնդեն նրան և սպանեն շան նման: Եթե դու էլ կաշես էդ գործին, ապա ես համոզված եմ, որ Համիդը երկար կյանք չի ունենա... Բայց դու չես կարող բացեիրբաց հայտնվել բեզլերբեյի ճամբարում, որտեղ, հավանաբար, գտնվում է Համիդը: Դու պետք է փոխես արտաքինդ: Այնպես փոխես, որպեսզի մերձավոր բարեկամդ էլ չճանաչի:

Մլադենը խելոք բան էր ասում: Ծն ուշադիր ականջ էի դնում: Եվ այդտեղ գլխումս մի միտք ծագեց՝ դառնալ դերվիշ կամ, ավելի լավ է մեդդահ: Ծն շատ հեքիաթներ, երգեր, առասպելներ գիտեի, լավ սազ նվագել գիտեի, և ինձ համար դժվար չէր այդ դերը կատարել: Հարկավոր էր միայն մորուք թողնել և համապատասխան հագուստ ու սաղ ճարել: Ծն այդ մասին ասացի վոյեվոդային, նա հավանություն տվեց իմ մտադրությանը:

Մի խոսքով, որոշ ժամանակ անց ես դարձա իսկական մեդդահ: Պոլոզ կաուկով՝ ու մաշված ջեբբեով¹, հորթի կաշուց կարված ծոմոված տրեխներով, մաղախը ուսիս, որի մեջ դրված էր սազն ու մի քանի զարբելիթներ, թանձր սև մորուքով. ահա այսպիսի տեսքով մի մութ իրիկուն ես դուրս եկա վոյեվոդայի ամրոցից և ճամփա ընկա դեպի Զագորա:

Այնտեղ ես համոզվեցի, որ իսկապես ինձ մեղադրում են դավաճանության մեջ, և որ իմ դլխի, ինչպես և վոյեվոդա Մլադենի գլխի համար բեզլերբեյը մեծ պարգև է խոստացել:

Այնտեղ տեղեկացա, որ բեզլերբեյը սկզբում ցանկացել է նենկոյին ցցի նստեցնել, որպեսզի վոյեվոդայի ուղիղ սրտին հարվածի, բայց շգիտես ինչու փոշմանել է և ուղարկել Ստամբուլ, ենիչերիների կորպուս, որտեղ փոքրիկ բուլղարացուն կարող էին դարձնել Օսմանյան կայսրության

¹ Կաուկ (թուրք.) — թաղիք գլխարկ:

² Ջեբբե (թուրք.) — թիկնոց:

հավատարիմ պաշտպան: Զլատկայի մասին ոչ ոք ոչինչ չգիտելու:

Մի բանում ես հաջողութուն չունեի՝ ոչ մի տեղ չկարողացա գտնել Համիդին: Նա կարծես գետնի տակն էր անցել: Երևում է, նախազգացել էր վտանգը և միառժամանակ անհետացել էր Զագորայից: Ես զգուշութամբ հարցուփորձ արեցի ենիչերիններին ու սպախիաներին, վաճառականներին ու բեզլերբեյի ծառաներին, բայց ոչ ոք չգիտեր, թե ուր է կորել նա, թեև երկու-երեք շաբաթ առաջ շատերն էին տեսել նրան բեզլերբեյի պալատում:

Դրանից հետո համարյա երեք տարի թափառում էի Բուլղարիայում՝ փնտրելով իմ թշնամուն: Եղա բոլոր գնդերում և ուղեկալներում, անցա բոլոր ճամփաներով, բայց իզուր: Համիդը ոտով-գլխով կորել էր:

Եվ այն ժամանակ որոշեցի շրջել ամբողջ երկրով մեկ, սկսած Ստամբուլից մինչև ամենահեռավոր անկյունները: Ամենուրեք հարցուփորձ էի անում, նայում էի շուրջս, ականջ էի դնում: Ոչ մի բան իմ ուշադրությունից չէր վրիպում: Այդպես անցավ էլի մի քանի տարի: Եվ վերջապես գտա նրան, որին այնքան երկար փնտրել էի:

Մի անգամ եկա Ակսու գյուղը, որ նույն սնունն էր կրում, ինչ-որ գետակը և այս անիծյալ դոլակը. ջորիս կապեցի ծառից և երգելով ինձ մոտ հրավիրեցի ուղղափառներին: Հանկարծ տեսա երեք ձիավորների: Նրանք գալիս էին իմ կողմը: Առջևից եկողը, շքեղ հագնված, ազնվացեղ ձին հեծած, ծանոթ թվաց: Միրոս մարեց, թեև, ճիշտն ասած, համարյա թե Համիդին հանդիպելու հույսը կորցրել էի և թափառում էի երկրով մեկ ավելի շատ ըստ սովորության, քան իմ թշնամուն գտնելու հույսով:

Երբ նրանք մոտեցան, քիչ մնաց ճշայի. իսկապես որ Համիդն էր: Նա գիրացել էր, ծանրացել, փոխվել, բայց նրան դժոխքում էլ կճանաչեի, եթե շեյթանի կերպարանք էլ առած լիներ:

Նա կանգ առավ իմ դիմաց և ձիու վրայից ամբարտավանորեն նայեց ինձ: Երևի սպասում էր, որ կխոնարհվեմ այդպիսի երևելի սպախիայի առաջ: Իսկ ես ասես պապանձվել էի. կանգնել էի ու ծպտուն չէի կարողանում հա-

նել: Միայն նայում էի աչքերս շռած և ժպտում էի հիմարի պես, ժպտում էի ուրախութունից, որ այդքան տարիների փնտրտութներից հետո, այնուամենայնիվ, հանդիպեցի նրան:

Վերջապես ուշքի եկա և գլուխ տվեցի:

— Փառք ավահին, որ այսպիսի ազնվազարմ բեգին տեսնելու երջանկությունը պարզեց, — ասացի ես: — էս լեռներում սովոր եմ հանդիպել միայն հովիվների ու կարաթուրքերի¹: Եվ նրանք բոլորն էլ այնքան աղքատ են, որ մեղդահը ստիպված էր կերակրվել քարթու բլիթներով ու աղբյուրի ջրով:

— Եթե քաղցրահնչուն երգերով ուրախացնես մեզ, ապա կարող ես հույս ունենալ, որ մի մեծ կտոր ոշխարի խորոված միս կստանաս՝ տաքդեղով և մի կուլա սյրան², — ասաց Համիդը:

— Շնորհակալ եմ, էֆենդի, — պատասխանեցի ես ուրախությամբ, քանի որ դոյակ հրավիրելը, ինչպես ես էի մտածում, մոտեցնում էր վրեժի ժամանակը: — Ե՞րբ գամ:

— Երեկոյան:

Արևը մայր մտնելուց առաջ արդեն դոյակում էի: Զբւրբիս տակ ատրճանակ կար, իսկ գաղտնի գրպանումս՝ մի փոքրիկ կեռ դաշույն:

Ամբողջ օրը տեղս չէի գտնում, մտածում էի Համիդի հետ հանդիպման մասին: Այդ հանդիպումից զանազան տեսարաններ էի պատկերացնում, մտքումս կրկնում էի այն խոսքերը, որ պետք է ասեի նրան: Ես պատկերացնում էի Համիդի դեմքը, այդ դեմքի արտահայտությունը, երբ մենք մենակ կմնայինք, ու նա կիմանար, թե ով եմ ... Զգիտես ինչու կարծում էի, որ ինձ թույլ կտան գիշերելու դոյակում: Մտածում էի, որ կմտնեմ Համիդի ննջարանը, և նա կմեռնի իր մահճակալի մեջ: Այդ մտքերով էլ ոտքս սելյամլիկի³ շեմից ներս դրեցի: Իմ մասին չէի մտածում: Ես վախ չունեի:

Բացի Համիդից, որ սուլթանի պես նստած էր բարձին,

¹ Կարաթուրք (թուրք.) — գլուղացի:

² Այրան (թուրք.) — թան:

³ Սելյամլիկ (թուրք.) — տղամարդկանց հարկաբաժին:

մետաքսն ամպհովանու տակ դրված բարձր փափուկ օթո՞ցին, սրահում կային նաև երկու-երեք թիկնապահներ, իսկ վերնասրահում, որ վարագուրված էր գույնզգույն մարմաշով, կանանց ու երեխաների ձայներ էին լսվում: Ըստ երեւոյթին, Համիդը հավաքել էր բոլոր տնեցիներին, որպեսզի լսեին թափառական մեղդահին: Մառանները սրահի մեջտեղում մի գեղեցիկ գորգ փռեցին, մի լայն բարձ դրեցին, կողքին էլ մի սափոր այրան, որպեսզի երգելու ժամանակ կոկորդս թրջեմ:

Ես սկսեցի հուզվել: Հին ատելությունը, բազմապատկված այն անասելի տառասյանքներից ու նեղություններից, որ կրել էի Համիդին փնտրելու բազում տարիների ընթացքում, ճնշեց կուրծքս: Ես նայեցի սպախիայի կուշտ ու ինքնագոհ դեմքին, հաստ մատների խոշոր ոսկյա մատանիներին, պատերից կախված թանկարժեք գորգերին, այն ողջ շքեղությանը, որ շրջապատում էր իմ թշնամուն, և հիշեցի թիկունքիս արձակած գնդակը, նենկոյի ու Զլատկայի առևանգումը, իմ գնդի կործանումը, ինձ դավաճանության մեջ մեղադրելը: Մի՞թե կարող էի երգել:

Զարմանալի չէ, որ երբ սկսեցի երգել, ձայնս սկսեց դողդողալ, ծնգծնգալ, ինչպես լարից ընկած սազ: Հետո պնդացավ, բայց էլի զգացվում էր հուզմունքը: Համիդը կասկածանքով նայեց ինձ և իր սևեռուն հայացքը այլևս չհեռացրեց իմ դեմքից: Զլինի՞ նա ինչ-որ բան նկատեց: Զլինի՞ գլխի ընկավ, որ մեղդահի դիմակի տակ թաքնված է գենքի իր նախկին ընկերը, որին մի ժամանակ ինքը այնպես ստորաբար դավաճանել էր:

Տեսնելով իրենց տիրոջ լարված դեմքը՝ ծառաներն ու տնեցիները գերեզմանային լռություն պահպանեցին նույնիսկ այն ժամանակ, երբ ես կատակերգեր երգեցի: Բոլորը կարծես բերանները ջուր էին առել:

Ակամա ջբբեհիս տակ արմունկով շոշափեցի ատրուճանակը. այն լիցքավորված էր ծանր արձձե գնդակով: Դա մի փոքր հանգստացրեց ինձ:

Ի վերջո, ես վերջին անգամ զարկեցի սազին և սափորից մի քիչ այրան խմեցի:

— Իսկ դու լավ ես երգել սովորել, Յաղուբ,— հանկարծ

ասաց Համիդը: — Ենորհակալություն, լավ ուրախացրիր հին բարեկամիդ:

Եթե իմ տակ գետինը շուռ գար, եթե երկինքը փուլ գար գլխիս, ինձ այնքան չէր շմեցնի, որքան այդ խոսքերը: Ես իսկույն հասկացա. եթե տեղնուտեղը, հենց նույն պահին, ես Համիդի վերջը շտամ, ապա ուշ կլինի: Ոտքի թռա, հանեցի ատրճանակը և, համարյա առանց նշան բռնելու, քանի որ շատ մոտիկ էր, կրակեցի:

Համիդը բարձր ճիչ արձակեց ու բռնեց ուսը: «Դիպուկ չկրակեցի», — մտածեցի ես և, մի կողմ նետելով ատրճանակը, որ այլևս հարկավոր չէր, դուրս քաշեցի դաշույնս ու նետվեցի նրա վրա: Վերնասրահից լսվող կանացի ճիչերը կարծես մտրակեցին ինձ: Եվս երկու ոստյուն, և ես ձեռնամարտի բռնվեցի Համիդի հետ: Բայց ինչ-որ մեկը ետևից ընկավ ինձ վրա ու տապալեց գետին: Զեռքերս ոլորեցին, ինչ-որ բուխ բանով հարվածեցին գլխիս: Ես դեռ թպրտում էի, դեսուդեն էի նետվում, ջանալով դուրս պրծնել, բայց ուժերն անհավասար էին: Երկու ածղահա թիկնապահներ բռնել էին ինձ, կատաղած շների նման:

Սփրթնած, մահու շափ վախեցած Համիդը նայելով իր ձախ ձեռքին, որից արյուն էր ծորում, գոռաց.

— Փալաս կոխեք բերանը: Կալանդներ դրեք ու տարեք գետնատուն: Դա մեղդահ չէ, դա հատուկ նպատակով ուղարկված մարդասպան է: Հետո ինքս կհարցաքննեմ նրան:

Ինձ մի խոսք էլ չթողեցին ասել: Կոպիտ ձեռքերը բերանս խոթեցին իմ սեփական կաուկը: Թիկնապահները ինձ դուրս բերին բակ, շղթաներով օղակապեր հագցրին ու գցեցին այս գետնատունը...

Գլխիցս արյուն էր ծորում, դուրս ընկած աջ ուսս ուռել և անտանելի ցավում էր: Սկզբում, չգիտեմ որքան ժամանակ, կատարվածից ցնցված, անշարժ պառկել էի սառը հատակին: Հետո ցավը ինձ հիշեցրեց, որ դեռ ողջ եմ և պետք է մտածեմ իմ մասին:

Իմ թափառումների երկար տարիների ընթացքում շատ բան էի սովորել, այդ թվում և բժշկության արվեստը: Նկատել էի, որ մարդկանց հարկավոր են ոչ միայն իմ երգերն ու սազի ծնգծնգոցները, այլև մխիթարելու և կարեկցանքի

խոսքը, արյունը կանգնեցնելու կամ, ընդհակառակն, բաց թողնելու հմտությունը, եթե մարմնի մեջ շատ անպետք արյուն է հավաքվել: Ես սովորել էի թափառաշրջիկ իմաստուն դերվիշներից, հեքիմներից ու մայրաքաղաքի բժիշկներից, որոնք իմ երգերի և անծանոթ, հեռավոր երկրների մասին իմ պատմությունների փոխարեն առջևս բացում էին իրենց գիտության գաղտնիքները: Ես ճանաչում էի զանազան խոտեր ու արմատներ, որոնք օգնում են տարբեր հիվանդությունների, կարողանում էի տեղը գցել դուրս ընկած հողը կամ ճիշտ միացնել կոտրված ոսկորները:

Երբ ցավը հիշեցրեց իր մասին, ես վեր կացա, վերնաշապիկով կապեցի գլխիս վերքը, և դուրս ընկած ուսս տեղը գցեցի:

Յավը հետզհետե սկսեց հանդարտվել: Բայց նրա տեղը բռնեցին մոայլ մտքերը: Մինչև օրս էլ շեմ կարողանում ազատվել դրանցից:

Այսպես ցավալի ավարտվեցին Համիդից վրեժ լուծելու իմ բազում տարիների ճիգերը: Վրեժ առնելու ուրախության փոխարեն այս սոսկալի ձախորդության դառնությունը ճաշակեցի: Համիդը ողջ-ողջ ինձ թաղեց այս ցուրտ, նեխած որջում, որպեսզի մշտապես զգամ, թե ինչպես եմ դանդաղ ու տանջալիորեն մեռնում: Երբեմն նա գալիս է այստեղ, մտրակով հարվածում է գլխիս ու ինքն իրեն խոսում. «Դու սուր հիշողություն ունես, Յաղուբ: Ծի՞շտ է: Որ այդպես է, ես քո գլխից դուրս կհանեմ այդ հիշողությունը: Համոզված եղիր, որ իմ խոսքը կանեմ, թեկուզ ստիպված լինեմ գանգըդ բաց անել»:

Քանի տարի է այսպես տառապում եմ ծեծից, քաղցից, ցրտից, մենակությունից ու մթից: Թե երբ կգա այս ամենի վերջը, միայն իրեն՝ ալլահին է հայտնի:

4

— Էս աշխարհում ամեն բան իր սկիզբն ու վերջն ունի: Հույսդ մի կորցնի, Յաղուբ տղա: Մի օր չէ մի օր էս դժբախտությունը վերջ կունենա,— ինչպես կարող էր՝ իր բախտակից ընկերոջը մխիթարեց Զվենիգորան:

— Ինչպես չէ, կվերջանա՛... — Մեղդահի ձայնի մեջ վիշտ ու դառնութիւն կար: Բայց նա անմիջապես անցավ ուրիշ բանի. — Դու խելացի մարդ ես, կազակ, և լավ էլ խոսում ես մեր լեզվով... Որտեղացի՞ ես: Ո՞վ ես դու:

Զվենիգորան մտածմունքի մեջ ընկավ: Յաղութի սովորական անմեղ հարցը տակնուվրա արեց նրա հոգին, փոքրիկ հիշողութիւնը: Աչքերի առաջ եկան հեռավոր մանկութիւնն ու պատանեկութիւնը: Թվում էր, ամեն ինչ հենց երեկ էր եղել. և՛ հայրենի տունը, և՛ երեխաների բազմութիւնը, և՛ դպրոցը, և՛ մոր քնքուշ ձեռքերը, որոնք շոյում էին նրա մուգ շիկավուն գանգուր մազերը, և՛ հոր ժլատ փաղաքշանքը, և՛ փոքրիկ քրոջ՝ Ստեշայի զրնգուն ծիծաղը:

Նա երկար ժամանակ չպատասխանեց Յաղութին: Հիշողութիւն մեջ վերականգնում էր անցած գնացած պատկերները, և բոլորը հետաքրքիր էին թվում նրան: Բայց արդյո՞ք դրանք հետաքրքիր կլինեին Յաղութի համար:

— Ես հիմա քսանչորս տարեկան եմ,— ցածրաձայն խոսեց Զվենիգորան: — Երկու անգամ փոքր եմ քեզնից, Յաղութ աղա: Ինձ հետ այդպիսի զարմանալի արկածներ չեն պատահել, բայց կյանքը ինձ էլ է մի քիչ ճմլել, տրորել և որոշ բաներ էլ սովորեցրել:

Իմ մանկութիւնն անցել է Պողոտիայի Կամենեցում: Երևի լսած կլինես: Ասենք ո՞վ չի լսել: Սրանից մի քանի տարի առաջ ձեր սուլթան Մուհամեդ Ավջին՝ հենց էնտեղ բերեց իր անթիվ անհամար զորագնդերն ու գրոհի անցավ... Բայց այդ մասին հետո: Մինչև էն սևավոր օրերը, երբ ենիչերիները խուժեցին քաղաք ու վառեցին, նա, ինչպես թվում էր ինձ, աշխարհիս ամենասիրուն անկյունն էր:

Մեր տունը գտնվում էր արագահոս Ամուտրիչի ափին, Քարվանսարայում: Տունը փայտից էր, բայց մեծ, ընդարձակ, բազմաթիվ մութ ու գաղտնի անկյուններով, որ լցված էին ամեն տեսակ հնոտիներով, և որոնց մեջ ես թաքնվում էի հորիցս, երբ ձանձրանում էի արհեստանոցում նրան օգնելուց: Հայրս հրաշալի վարպետ փորագրիչ էր: Նրա պատ-

1 Մուհամեդ Ավջի (ավջի — որսորդ, թուրք.) — սուլթան Մուհամեդ IV-ը:

րաստած իրերի համբավը տարածված էր ողջ Պոռտլիայում՝ դրանք հաճույքով առնում էին նույնիսկ Լեհաստանում ու Քուրքիայում։ Դա, ինչպես հետագայում հասկացա, լավ շահ էր բերում հորս։ Նրան համբարություն ավագ ընտրեցին։ Եվ նա, նախկին աղքատ գուցուլը, ենթավարպետը, մարդամեջ մտնելով, մտածեց տղային կրթության տալ։ Սկզբում ինձ բուրսա՝ տվեց, իսկ հետո՝ կոլեգիում¹։ Ուզում էր ինձ քահանա դարձնել... էնտեղ ինձ կրոն էին սովորեցնում, քերթողական արվեստ, ճարտասանություն, ինչպես նաև լատիներեն... Սակայն ես անհանգիստ էի, մի տեղ տիտիկ չէի անում և, շնայած գիտելիքները հեշտությամբ էի յուրացնում, շատ շուտ հասկացա, որ դա չէ իմ ճանապարհը։ Ուզում էի ապրել ազատ թռչնի պես։ Կարող էի ժամերով կանգնել վարժահրապարակում ու նայել, թե զինվորներն ինչպես են սրամարտել սովորում, ինչպես են կրակում շախմատավոր հրացաններով ու փշտովներով։ Առանց հոգնելու, անվերջ կարող էի լսել փորձված, աշխարհ տեսած մարդկանց պատմությունները։ Ինքս էլ ուզում էի ռազմիկ դառնալ։

Մեր կողքին, դուռ դռան կից, ապրում էր մի հարուստ հայ ընտանիք։ Վարպետ Քերոնենց Հովհաննեսը խանութներ ուներ քաղաքում և մեծ քարավաններով միշտ ապրանք էր տանում Քուրքիա։ Նա հորս հետ լավ հարաբերության մեջ էր, հաճախ մեծ քանակությամբ պատրաստի ապրանք էր առնում նրանից։ Ես ու նրա տղա Խաչիկը ընկերներ էինք։ Եվ քանի որ Քերոնենք մոռացել էին իրենց լեզուն ու թուրքերեն էին խոսում, ապա ես էլ Խաչիկից սովորել էի և ծերունի Հովհաննեսին զարմացնում էի իմ հիանալի թուրքերեն առողանությամբ։

Ըստ երևույթին հենց դա էլ դրդեց նրան՝ ինձ ծառայության վերցնել իր մոտ, այն բանից հետո, երբ փախա կոլեգիումից և հորս ասացի, որ ինչ ուզում է լինի, էլ այնտեղ չեմ դնա։ Ես Խաչիկի ու ծառաների հետ ուղեկցում էի վարպետ Հովհաննեսին Վալախիա, Քուրքիա, Բուլղարիա կա-

1 Բուրսա — հոգևոր դպրոց։

2 Կոլեգիում (լատին.) — ուսումնարան՝ հին ժամանակներում։

տարած ուղևորությունների ժամանակ: Երեք տարվա ընթացքում երեք անգամ եղա Բալկաններում: Ես ու Խաչիկն ապրում էինք եղբոր նման, հավասար կիսում աղն ու հացը: Միասին կանգնում էինք վաճառասեղանի մոտ, միասին կարդում էինք կյալիին և բանաստեղծ սուլթանին՝ արյունոտ Մուհամեդ նվաճողին, միասին արշավում էինք կրակոտ նժույզներով, թրերը կողքներիցս կախ ու ատրճանակները գոտիների տակ խրած, երբ ուղեկցում էինք ծեր վաճառականի քարավաններին...

Զգիտեմ ինչ կդառնայի այն ժամանակ, եթե մի օր էլ քաղաքի վրա շտարածվեր ահազանգը: Հարավից գալիս էին թուրքական անթիվ-անհամար հրոսակները: Ինքը սուլթանը հայտնվեց Կամենեցի պարիսպների տակ:

Քանի դեռ քաղաքի ելքերն ազատ էին, մորս, տասներկու տարեկան քրոջս ու մորական պապիս՝ հայրս ուղարկեց Վիննիցա, իսկ ինձ հրացան տվեց, և մենք գնացինք դեպի քաղաքի պարիսպները:

Սկսվեց պաշարումը:

Դա իսկական դժոխք էր: Քաղաքը պաշտպանվում էր քաջաբար, բայց չդիմացավ: Մարդիկ զոհվում էին, տները կորել էին բոցերի մեջ: Իմ աչքի առաջ Քերոնենցից երկուսը ընկան. ծերունի Հովհաննեսն ու Խաչիկը, հետո հայրս էլ զոհվեց: Ես նրանց թաղեցի մեր բակում, որտեղ արդեն ոչինչ չէր մնացել, բացի ածխացած փայտերից:

Շուտով ենիչերիները ներխուժեցին Կամենեցի: Ի՛նչ էր կատարվում, աստված իմ: Յաթաղանից ընկնում էին ծերերն ու մանուկները, կանանց կապկպում էին ու քշում գերության: Զինվորները զոհվում էին զենքը ձեռքներին:

Բախտը ողորմած գտնվեց իմ հանդեպ: Թեև մյուսների կողքին ես էլ էի կռվում, բայց ոչ մի քերծվածք չըստացա: Երեկոյան, երբ ընկան լեհական վերջին դրոշները, և ողջ մնացած զինվորներն սկսեցին հանձնվել հաղթողներին, ես ենիչերիի շորեր հագա (շուրջը ենիչերիների դիակներ նույնպես շատ կային) և անցա թշնամու բանակատեղով: Լուսադեմին արդեն բավականին հեռացել էի և բռնել էի Վիննիցա տանող ճանապարհը:

Ճանապարհին ամենուրեք տեսնում էի անվերված գյուղ

ղեր ու խուտորներ, մարդկային դիակներ. թուրքերը մորեխների նման անցել էին մեր երկրով: Ես հասկացա, որ մեզ համար միակ ելքը Աջափնյակ՝ մոսկովյան ցարի իշխանության տակ փախչելն է:

Վիննիցայից հարազատներիս վերցրի ու ճամփա ընկա: Մենք գնում էինք գիշերով, իսկ ցերեկները թաքնվում էինք թուրքական ջոկատներից: Մայրս, Ստեշան ու պապը անվերջ լալիս էին հորս համար և գլխի էլ չէին ընկնում, թե ուր և ինչու եմ տանում իրենց: Ճամփին մեզ էին միանում նույնպիսի փախստականներ, և, երբ Չերկասի մոտ Դնեպրն անցանք, մենք համարյա հարյուր հոգի էինք:

Աջափը մեզ դիմավորեց սիրալիր, ինչպես հարազատների: Լուրենի գնդապետը մի ամալի տարածություն հատկացրեց մեզ, որ կոչվում էր Գուբովայա Բալկա՝, և մինչև աշուն մի խուտոր դարձավ: Ես ու պապս մի խրճիթ սարքեցինք, վարեցինք մեր բաժին հողը... Բայց, երևում է, ինձ վիճակված չէր հողագործ դառնալ: Ուզում էի թուր վերցնել ձեռքս: Ասենք ժամանակներն էլ շատ խառն էին, դաժան:

Ջահելները մտնում էին հետման Սամոյլովիչի զորքը: Ես, թողնելով հարազատներիս, գնացի Ջապորոժիե, դարձա կազակ: Բայց էդ մասին մի ուրիշ անգամ: Երևի քնելու ժամանակն է, Յաղուբ աղա: Հիմա դրսում խոր գիշեր է:

Շղթաները զնգզնգացնելով՝ նրանք պառկեցին սառը հատակին: Յաղուբը դեռ երկար ժամանակ շուռումուռ էր գալիս ու հոգոց հանում: Իսկ Զվենիգորան աչքերը փակեց ու իսկույն խոր քուն մտավ:

5

Կարճ ձմեռն անցավ: Կալանավորների անվերջանալի զրույցները էլ ավելի կարճացրին այն: Յաղուբն այնպես գեղեցիկ ու հետաքրքիր էր պատմում, որ Զվենիգորան, ասես արթմնի նրա հետ միասին ճամփորդում էր անծայրածիր Օսմանյան կայսրությունում, մտնում էր կարաթուրքերի մուֆթ հյուղակները և սպախիանների ընդարձակ լուսավոր

1 Գուբովայա Բալկա — բառացի՝ կաղնու ձոր:

սրահները, ենիշերիների զորանոցներն ու ամրոցների մույլ աշտարակները, թափառում էր Ստամբուլի աղմկոտ փողոցներում ու հրապարակներում...

Այսպես ավելի քիչ էր զգացվում քաղցն ու գետնափորի գարշահոտ խոնավությունը, մոռացվում էր ծանր կյանքն ու անուրախ ապագան:

Մի անգամ խուլուհամր վերակացուի փոխարեն շեմքին հայտնվեց Օսմանը և բարձր ձայնով գոչեց.

— Է՛յ, անհավատ, շուտ դուրս արի:

Զվենիգորան վեր կացավ, սեղմեց Յաղուբի ձեռքը և բակ դուրս եկավ: Արևի պայծառ լույսը, որը վաղուց չէր տեսել, ցավեցնելու աստիճան ծակծկեց աչքերը: Զվենիգորան աչքերը կկոցեց ու շտապ իրեն գցեց ընկուզենու ստվերը, որը արդեն ծածկվել էր կանաչ, մատղաշ տերևներով:

Բակում անդորր էր տիրում: Օսմանը կորավ ինչ-որ տեղ: Լույսին վարժվելով՝ Զվենիգորան նայեց շուրջը: Բակում ոչ ոք չկար:

Անսպասելիորեն պատշգամբից ծիծաղի ձայն լսեց: Զվենիգորան գլուխը բարձրացրեց և հայացքը հանդիպեց Համիդին, որ զրուցում էր ջահել, թանկարժեք շորերով, մոնղոլի նմանվող մի մարդու հետ:

Զվականքից Համիդի դեմքը աղավաղվեց:

— Թու, իսկը կեղտոտ խոզ,— դեմքը ծոմոնց նա՛ նայելով կազակին:— Հլա մի նայիր, Ֆերհադ, էս հրեշին: Մարդ չէ, այլ գազան է: Մազումորուբի մեջ կորել է, ոնց որ գյավուրի տերտեր: Մատների եղունգները նույնիսկ ծոմովել, շուռ են եկել: Էնպես էլ զզվելի հոտ է փչում, որ մինչև էստեղ է հասնում: Ու էս սատկած լեշը ուզում էր ինձ սպանել:

— Էհ, ինչ արած, դու սպանիր նրան,— հանգիստ ասաց Ֆերհադը, կարծես թե իսկապես խոսքը ինչ-որ կենդանու մասին էր:

— Սպանելը քիչ է: Թշնամու մահը հաճույք է պատճառում միայն այն ժամանակ, երբ դու տեսնում ես նրա տանջանքներն ու սարսափը, նրա դեմքի ծամաժոռությունը: Թըշնամու արյան հոտը հարբեցնում է, ինչպես հին գինին: Սսսրան պահել էի, մինչև քո գալը, Ֆերհադ աղա, որպեսդի

ուրախացնեմ քեզ արտասովոր տեսարանով... Հե՛յ, Օսման,
վանդակը բաց:

Զվենիգորան դեռ չգիտեր, թե Համիդը ինչ է պատրաստել
իր համար, սակայն նրա խոսքերից մահացու վտանգ զգաց
իր հանդեպ: Մի հայացք գցելով բակին ու պատշգամբին՝
համոզվեց, որ Համիդն ու իր հյուրը միակ հանդիսատես-
ներն էին:

Նշանակում է, մտադրվել է արյունոտ տեսարան սարքել:
Որպեսզի հանկարծակի չբերեն՝ մեջքով հենվեց ընկուզենուն:

— Ըհը՛, վախենո՞ւմ ես, — հռհռաց Համիդը: — Իսկ ինձ
ասում էին, թե զապորոժցիները շեյթանից էլ չեն վախենում:
Ի՞նչ պատասխանես նրան: Զվենիգորան լուռ մնաց:

Զախ կողմից, աշտարակի տակ, ծխնինների ճոնչոց լսվեց:
Շրխկացին փայտե դռնակները: Զվենիգորան կտրուկ շուռ
եկավ և տեսավ բծավոր հովազի ձեռք մարմինը: Գազանը
դուրս եկավ վանդակից, որ գտնվում էր բերդապարսպի մեջ,
և կանգ առավ:

Սարսուռ անցավ Զվենիգորայի մարմնով: Ահա թե հյուրի
համար ինչ տեսարան է պատրաստել Համիդը: Գիշատիչ,
քաղցած գազանին ուզում է բաց թողնել անզեն, ուժասպառ
եղած, շղթայակապ մարդու վրա:

Ի՞նչ անել:

Կայծակի արագությամբ իրար հաջորդեցին մտքերը:
Մագլցել ծա՞ռը: Ոչ, դա չի փրկի: Հովազն այնտեղ էլ կհաս-
նի: Բացի դրանից, Համիդը իրեն ծառից ցած կզցի նետով
կամ գնդակով: Փախչե՞լ: Բայց ո՞ւր: Բոլոր դռները փակ են,
դարպասը կողպված է... Կովի՞ բռնվել հովազի հետ: Հենց
դրա վրա էլ հույս է դրել Համիդը: Բայց դա ի՞նչ կտա:
Դատարկ ձեռքերով գազանին չես հաղթի: Գուցե քա՞ր
վերցնի: Էլի զենք է: Սուր քարով կարելի է ջախջախել գի-
շատի գանգը: Ավելի լավ չե՞ սպասել: Գուցե գազանը չի՞
հարձակվի:

Հովազը Զվենիգորային դեռ չէր տեսել: Զգմզվեց, հո-
րանջեց, լայն բացեց մեծ ժանիքներով երախը, ապա բա-
րակ, վարդագույն լեզուն հանեց ու լիզեց շրթունքները:
Դրանից հետո միայն հոտոտեց օդը, մի քանի քայլ առաջ
եկավ ու տեսավ մարդուն... Կանգ առավ, պպզեց ետևի թա-

Թերի վրա, ասես միտք էր անում, թե էդ ինչ տարօրինակ արարած է իր դիմաց: Ապա, ըստ երևույթին, վճռեց, որ դա որս է, որը կարող է հագեցնել իր դատարկ ստամոքսը. արդեն երկրորդ օրն էր նրան չէին կերակրել, և նա սաստիկ քաղց էր զգում: Ճիշտ է, մարդը վտանգավոր թշնամի է: Հովազը դա գիտեր: Համենայն դեպս ոչ նապաստակ է, ոչ էլ վայրի այծ: Նույնիսկ ոչ էլ լեռնային ոչխար: Բայց ճարն ինչ: Քաղցը զնալով ավելի ու ավելի էր նեղում, և հովազը կկոցեց նեղ, դեղնավուն աչքերը, որպեսզի լավ ծանրութեթև անի ու ճշգրիտ թռիչք գործի:

Զվենիգորայի մկանները նույնպես լարվեցին: Նա դանդաղ վեր բարձրացրեց կեղտոտ ձեռքերը՝ երկարած եղունգներով, որ նման էին գիշատչի ճանկերի:

Մեղմ զնգացին կալանդները: Գազանը, կասկածելի, անծանոթ ձայնից անհանգստացած, ականջները տազնապալի ցցեց:

Վերնասրահից լսվում էր Համիդի, ու Ֆերհադի հուզված շնչառությունը: Զվենիգորան մի պահ աչքի պոչով վեր նայեց: Եվ որսաց Համիդի աչքերում փայլող շարախնդությունը: Սպախիան նախապես ըմբռնվում էր մարդու և գազանի արյունոտ մենամարտը:

Հովազը լարվեց, պատրաստվելով ցատկի, բայց չհասցրեց ցատկել: Ստորին փակ պատշգամբից ոտնաձայներ, ծիծաղ ու ճղավոց լսվեց: Շրխկոցով բացվեցին դռները: Այնտեղից թափով դուրս վազեց մի մատաղատի աղջիկ՝ նախշուն տաբատով: Արագ վազելուց նրա դեմքը վառվում էր շառագույնից: Թիկունքում ծփծփում էին փարթամ սև հյուսքերը: Նրա ետևից, ծիծաղելով, դուրս թռավ նրանից փոքր, նրանից ավելի նուրբ ու փխրուն մի աղջնակ ու նետվեց վազողի ետևից:

Համիդն ու Ֆերհադը տեղներից վեր թռան և սարսուփած գոռացին.

— Ետ դարձեք: Ե՛տ:

— Օ՛, ալլահ ակբեր¹, դու փրկիր նրանց:

Աղջիկները նկատեցին հովազին, կանգ առան: Մահացու

¹ Ալլահ ակբեր (թուրք.) — մեծ աստված:

սարսափ հնչեց նրանց ճիշերի մեջ: Աղջիկները ետ փախան, բայց կրտսերը սայթաքեց, ընկավ մյուսի ոտքերի տակ, և երկուսն էլ գլորվեցին գետնին:

Հովազը շտատանվեց, շատածեց, թե հիմա ում վրա պետք է հարձակվի: Իհարկե, նրա, ով փախչում է, և ոչ թե նրա, ով վճռականորեն սպասում է հարձակմանը: Բժավոր դեղին մարմինը օդ նետվեց:

Պատշգամբում ծղրտաց Համիդը: Ֆերհադը բաղրիքից ցած էր կախվել և նույնպես խուսուտ վայրի ճիշեր էր արձակում:

Զվենիգորան շհասցրեց ծանրութեթև անել: Ինչ-որ մի ներքին ուժ թափով առաջ մղեց նրան, երբ գազանը օդում էր: Երկու մարմինները բախվեցին իրար: Հարված, և հովազը գլորվեց գետնին: Բայց կայծակնային արագությամբ վեր թռավ և, գլխի ընկնելով, որ չի կարող խուսափել ընդհանուրից, նետվեց Զվենիգորայի վրա: Գազանը կատաղած բացեց երախը: Փայլատակեցին սուր ժանիքները:

Զվենիգորան առաջ մեկնեց շղթայակալ ձեռքերը: Հովազը, փոխանակ ժանիքներով ու ճանկերով կառչեր նրա կենդանի մարմնից, կրծքով զարկվեց սառը մետաղին: Նույն ակնթարթին Զվենիգորան շղթան փաթաթեց նրա պարանոցին և ինչքան ուժ ուներ՝ սեղմեց կոկորդը:

Գազար կատաղի մոնչաց, դեսուդեն զարկվեց, շանալով ճանկերը հասցնել թշնամուն: Որպեսզի գազանին թույլ շտա իր կուրծքը պատառոտել, Զվենիգորան ետ թեքվեց: Հովազը հոխոաց, ետևի թաթերով զարկվեց գետնին: Առջևի թաթերով ճանկեց շղթան, բայց չկարողացավ ազատվել օղակից, որը գնալով ավելի ու ավելի էր խրվում նրա պարանոցը: Հովազը հուսահատ ճիգեր արեց, որպեսզի հասնի մարդու կրծքին, ու երբ հաջողվեց, արյունով ներկված հագուստի ծվենները դեսուդեն թռան:

Բայց Զվենիգորան այլևս չնահանջեց: Լարեց բոլոր ուժերը, որպեսզի ավելի պինդ սեղմի մետաղե օղակը:

Ճրթճրթացին ոսկորները: Գազանը ոռնաց, ցնցվեց ու ձայնը կտրեց: Առջևի թաթերը կախ ընկան: Դադարեց ծանր խոխոցը: Գիշատչի մարմինը կակղեց, թուլացավ, անշարժացավ...

Իսկ Զվենիգորան դեռ վախենում էր ճնշումը թուլացնել։ Հովազը դիմացկուն կենդանի է, նույնիսկ կիսախեղդ վիճակում էլ վերջին ակնթարթին կարող է մահացու հարված հասցնել։

Վերջապես ձեռքերը շդիմացան գերմարդկային լարումին։ Շղթան թուլացավ գաղանի պարանոցի շուրջը, և հովազն ընկավ հաղթողի ոտքերի տակ։

Ուժասպառ եղած, ծանր հեալով՝ Զվենիգորան մեջքով հենվեց ընկուզենուն։ Աչքերի առջև դեղին օղակներ էին լողում, ոտքերը դողում էին։ Ուզում էր փռվել գետնին, խորքուն մտնել։

Բայց նա իրեն հարկադրեց ոտքի վրա մնալ. նրան էին մոտենում աղջիկները։ Առջևից գալիս էր ավազը, ևտևից՝ կրտսերը։ Ինչքան էլ որ Զվենիգորան վատ էր զգում, այնուամենայնիվ, չէր կարող չնկատել, որ այդպիսի գեղեցկուհի, ինչպիսին սա էր՝ առջևից եկողը, իր կյանքում դեռ տեսած չկար։ Նա կլինե՞ր տասնվեց տարեկան, ոչ ավելի. դա այն տարիքն էր, երբ աղջիկը, մանավանդ հարավում, փարթամորեն ծաղկում է, փթթում։ Թեթև, մոխրագույն զգեստը գրկել էր նրա սլացիկ մարմինը։ Փոքր-ինչ երկարավուն, նուրբ դեմքը, ծածկված էր գարնանային թեթևակի արևայրուքով։ Երկար, սև թերթերունքներով ստվերված աչքերը միաժամանակ և՛ կապույտ էին թվում, և՛ սև։

Աղջիկը կանգ առավ Զվենիգորայից մի քանի քայլ հեռու և ասաց.

— Շնորհակալություն։ Դու փրկեցիր մեզ։

Զվենիգորան նկատեց, որ, երախտագիտությունից բացի, նրա հայացքում զարմանք ու ակամա զղվանք նշմարվեց։ Նա տանջալիորեն անհարմար զգաց իր երկար եղունգներով կեղտոտ ձեռքերի համար, շտանրված, երկարած, գզուզ մազերի համար, պատառոտված շորերի և այն ծանր, անտանելի հոտի համար, որ գալիս էր իր վաղուց չլվացված մարմնից։ Նա սովոր չէր իրեն դիտել որպես մեկ ուրիշ մարդու իր, ապրանք, ուստի չէր կարող մտքով անցկացնել, որ այդ աղջիկը և նրա ընկերուհին իրեն նայում են ոչ թե որպես կազակի, այլ որպես անասունի, որը պատկանում է նրան կամ նրա ընտանիքի անդամներին։

Աղջիկը կանգնել էր նրա առջև ու շնորհակալութիւնն էր հայտնում փրկվելու համար, իսկ ինքը հաճույքով կուզենար գետնի տակ անցնել, հասկանալով, թե որքան անպետք, կեղտոտ և նույնիսկ զզվելի թվաց ինքը աղջկան, թեև փրկել էր նրան ստույգ մահից:

— Ես ուրախ եմ, որ ամեն ինչ բարեհաջող վերջացավ ձեզ համար, ջանիմ¹, — ասաց Զվենիգորան թուլութիւնից ու հուզմունքից խռպոտված ձայնով, դժվարութեամբ գտնելով թուրքերեն բառերը: — Իսկ ինձ համար...

— Քեզ համար նույնպես, — խոսեց կրտսերը: — Ասա նրան, Ադիկե:

— Անշուշտ, — հուզված խոսեց կապուտաչյան: — Խատչեն ճիշտ է ասում: Խատչեն իր հոր՝ մեր Համիդ աղայի սիրելին է:

— Դա դեռ հայտնի չէ, — մոռալ պատասխանեց Զվենիգորան: — Երևի, աղան ուրիշ բան է մտածում...

Ներքևում թափով բացվեց դուռը: Դուրս վազեցին Համիդն ու Ֆերհադը, նրանց ետևից էլ՝ Օսմանը: Սպախիայի շալ, ուռած դեմքը վախից կապտել էր: Նա նետվեց դեպի Խատչեն, գրկեց աղջկան:

— Խատչե, սիրելիս, դու ո՞ղջ ես: Փառք ալլահին, որ քեզ փրկեց...

— Սա մեզ փրկեց, հայր, — Խաչտեն մատնացույց արեց Զվենիգորային, — էս ստրուկը...

Համիդը գլուխը բարձրացրեց: Նրանց հայացքները թրերի նման խաչաձևվեցին լարված լուսթյան մեջ: Զվենիգորան նկատեց, որ Համիդի պղտոր, եզան աչքերում ինչ-որ բան փայլեց ու անցավ, ասես մի սև խուփ կիսաբաց եղավ և նորից փակվեց:

— Դու մահվան ես արժանի, գյավուր, — խոսեց Համիդը երկար խորհելուց հետո: — Եվ դու շատ լավ գիտես էդ բանը...

— Հայր: — Խատչեն կախ ընկավ նրա ձեռքից: — Խնդրում եմ: Ներիր նրան հանուն ինձ ու Ադիկեի: Թող ապրի...

¹ Զանիմ (թուրք.) — սիրելի, թանկագին:

Համիդը շոյեց աղջկա գլուխն ու ավարտեց իր միտքը, կարծես չէր լսել հատչեի խոսքերը:

— Սակայն քո քաջությամբ դու փրկեցիր իմ սիրելի աղջկան, որ նշանված է մեծապատիվ Ֆերհադ էֆենդու հետ: — Վերջինս գոռոզաբար գլխով արեց ու վեր ցցեց կլոր կզակը: — Ինչպես նաև Ադիկեին... Այդ շտեմնված արարքիդ համար քեզ միայն կյանք եմ բաշխում, բայց ոչ ազատություն... Դու սրանից հետո էլ կմնաս իմ ստրուկը: Եվ եթե բան է չհնադանդվես, քեզ կհիշեցնեմ անցածը: Իսկ հիմա շնորհակալություն հայտնիր հատչեին ու Ադիկեին: Այդ նրանց մանկամիտ արարքի սլատճառով էր, որ դու ողջ մնացիր, գլավուր:

Զվենիգորան լուռ գլուխ տվեց:

— Գուցե որևէ խնդրանք ունես, — հարցրեց Համիդը քիչ քիչ ուշքի գալով:

Զվենիգորան մի քայլ առաջ եկավ:

— Ունեմ, աղա:

— Խոսիր: Բայց...

— Շատ բան չեմ խնդրի, — իսկույն նրա խոսքը կրտրեց գերին: — Մի շնչին բան է ուզածս՝ սափրիչի ձեռք ընկնել և լողանալ...

— Դու շատ հանդուգն ես, գլավուր, — մոթմոթաց Համիդը: — Բայց թող քո ասածը լինի: Օսման, լս՛ում ես: Իսկ հետո նրան կուղարկես Բեքիրի ձիթհանքը: Նա բողոքում է, թե քիչ մարդ ունի:

— Լսում եմ, աղա: — Եվ Օսմանը Զվենիգորային նշան արեց՝ հետևել իրեն:

... Մերունի քշախոս թուրքը, որ քրջոտ կառկ էր հագած, արագորեն սափրեց գերուն և կրծքի ու ձեռքերի խոր շանգրովածքներին լեղի քսեց: Հետո Զվենիգորան մտավ գետակը և երկար ժամանակ չփչփացնում էր սառը ջրում: Օսմանը ման էր գալիս ափին ու անհամբեր ցած նայում, սակայն սիրտ չէր անում շտապեցնել գերուն. հիշում էր տիրոջ պատվերը: Երբ ցրտից կապտած Զվենիգորան դուրս եկավ ջրից ու սկսեց հագնվել, Օսմանը հովազի պատառոտած ժուպանի փոխարեն թուրքական մի բեշմետ շպրտեց նրան:

— Հադի՛ր: Շո՛ւտ, — բղավեց նա հեռվից:

Հագնվելիս Զվենիգորան զարմացավ. համենայն դեպս այդ թուրքերը տարօրինակ ժողովուրդ են: Որքան ժամանակ է ինքը նրանց ձեռքում է, բայց դեռ ոչ ոք չի հետաքրքրվել իր կաշեգոտու պարունակությամբ: Կամ, գուցե, մտքերով չի՞ անցնում, որ այդ քրջոտի մոտ ոսկի կլինի: Հենց այդպես է, որ կա: է՛, ինչ արած, ավելի լավ: Մի օր չէ մի օր պետք կգա:

Նորից զնգացին կալանդները, և նրան տարան ամրոց: Բայց այժմ արդեն նույնիսկ շղթաները առաջվա պես ծանր ու անտանելի չէին թվում: Մաքուր, սափրված, ջահելացած՝ նա կրկին կյանքի անդիմադրելի ծարավ զգաց: Գարնանային անուշաբույր օդը հարբեցրեց, գլուխը շմեցրեց, և նա ազահորեն ներշնչեց օդը, ինչպես բուժիչ բալասան:

Բակում Օսմանը Զվենիգորային թողեց մենակ, ինքը զնաց բանալիները բերելու: Կանաչ ցանկապատի ետևում երեխաները շիկ-դաստա էին խաղում: Դա աշխույժ խաղ էր, որ նման էր ուկրաինական կվաչին¹, և Զվենիգորան հափշտակված նայում էր թուրք երեխաներին, որոնք նրան հիշեցրին հեռավոր սիրելի հայրենիքում անցած իր մանկությունը:

Հանկարծ մի փոքրիկ փաթեթ ընկավ նրա ոտքերի տակ: Զվենիգորան անսպասելիությունից ցնցվեց ու նայեց պատը շգամբին: Այնտեղ, բաց պատուհանի մոտ, սև շալով փաթաթված, կանգնած էր Ադիկեն: Նեղ անցքից փայլփլեցին նրա խորունկ, կապույտ աչքերը: Աղջիկը ձեռքով հաղիվ նկատելի նշան արեց: Իսկ երբ տեսավ, որ գերին չհասկացավ և լուռ նայում է իրեն, կամացուկ շնչաց.

— Վերցրու Քեզ համար է:

Զվենիգորան փաթեթը վերցրեց, դրեց ծոցը:

— Շնորհակալություն, ջանիմ,— ասաց ու գլխով արեց: Աղջիկը մի ակնթարթ բացեց իր քոչը և տխուր ժպտաց: Այժմ նա էլ ավելի գունատ, ավելի թախծոտ թվաց: Իսկ դրանից էլ՝ ավելի գեղեցիկ:

Զվենիգորան լուռ նայում էր նրան, ինչպես մի հրաշքի, որը հայտնի չէ թե որտեղից և ինչպես հայտնվեց իր կյանքում:

¹ Կվաչ (ուկր.) — մանկական խաղ, բռնցի:

Ետևից ոտնաձայն լսվեց. Օսմանը վերադարձավ: Զվենիգորան սթափվեց. տեսիլքը շքվեց: Զքվեց և Ադիկեն: Եվ եթե չլինեին ծոցի փաթեթն ու բաց պատուհանը, կարելի էր մտածել, որ այդ բոլորը աչքին են երևացել...

Օսմանը նրան տարավ գերիներին հատկացված նկուղը և դուռը փակեց: Բանալու ճոնշոցը նույնիսկ հաճելի թվաց Արսենին: Ցուրտ, խավար գետնափորից հետո, այն բանից հետո, երբ նա իր վրայից մաքրեց բազում ամիսների կեղտը և այն հրաշք աղջկա աչքերում կարեկցանք տեսավ, նույնիսկ այս նկուղը նրա համար դրախտ էր թվում: Կարևոր չէր, որ փոքրիկ լուսամուտից շատ քիչ լույս էր թափանցում, իսկ հատակին լցված ծղոտը բոլորովին մզլած էր... Գլխավորն այն էր, որ ինքը ողջ է, ջահել, առողջ... Իսկ մնացածից մի կերպ գլուխ կհանի:

Ծոցից փաթեթը հանելով՝ նա մոտեցավ լուսամուտին ու բացեց: Այնտեղ մի գաթա կար, մի կտոր ոչխարի միս և և մի նուրբ մետաքսյա վզնոց, որը իր մեջ դեռ ինչ-որ անծանոթ բուրմունքներ էր պահել՝ վարդի և շտեմնված զարմանահրաշխտերի բուրմունք: Գաթան ու ոչխարի միսը հասկանալի էին: Իսկ վզնոցն ինչի համար էր: Մի՞թե աղջիկը դրանով կամեցել է մի անգամ ևս իր շնորհակալությունն հայտնել: Կամ, գուցե... Նույնիսկ այդ մասին մտածելն էլ ծիծաղելի է... Խելքի արի, կազակ: Քեզ մի միտքարի լուսեղեն երազներով...

Սակայն հոգու խորքում և՛ ուրախ էր, և՛ տագնապահույզ: Աչքերի առջև հայտնվեցին Ադիկեի ճկուն կերպարանքը, փարթամ սև հյուսքերը և թախծոտ աչքերը, որոնք դարնանային կապույտ աստղերի նման թափանցեցին սիրտը: Զվենիգորային թվաց, թե ճակատագիրը այդ օրհասական պահին դիտմամբ ուղարկեց աղջկան, որպեսզի փրկի իրեն: Ոչ թե ինքը փրկեց Ադիկեին ու Համիդի աղջկան, այլ նրանք փրկեցին իրեն...

Ի դեպ, ո՞վ է Ադիկեն: Համիդը միայն խատչեին անվանեց իր աղջիկը: Գուցե զարմուհին է կամ հեռավոր ազգականուհի՞ն: Ով գիտի...

Երեկոյան եկան հավաքվեցին գերիները: Առաջինը շղթաները զնգզնդացնելով հայտնվեց պան Սոլիխալսկին: Նրա

ետևից ծանր-ծանր ներս մտան լողլող մռայլ Կվոչկանս Երկուսից էլ ծխի ու թարմ հլածուկի՛ կծու հոտ էր գալիս։ Նրանց դեղնած, տանջահար դեմքերին ծանր հոգնություն էր գրոշմված։

Ներսում խավար էր և նրանք անմիջապես շճանաչեցին Զվինիգորային։ Կվոչկան ոտքը շեմից ներս դնելուն պես փսկույն փովեց իր անկյունում, իսկ Սպիխալսկին սկսեց ծղոտ կուտակել և իր համար՝ ավելի փափուկ մահիճ պատրաստել։

— Գրողի ծոցը գնա, գրողի,— հայհոյեց նա։ — Եզան պես աշխատում ենք, համա քնում ենք ոնց որ խոզը, խընդրեմ։ Ամբողջ օրը էնքան ենք ծուխ կուլ տալիս ու գլանի մոտ ետ ու առաջ քայլում, որ գլուխներս պտտվում են։ Գիշերն էլ գալիս է, նույնիսկ մի կարգին շենք հանգստանում։ էդ գարշելի Համիգն էլ,— най бы его шляк трафив...² Թարմ ծղոտը խնայում է...

— Նա էլ էնպիսին է, ինչպիսին ազնվազարմ պան Ֆարլոնովսկին է, պան Մարտին,— հոգնած ասաց Կվոչկան։ — Նա էլ իր ճորտերին մարդ չէր հաշվում։ Ասենք, ինքը՝ պան Մարտինը էդ բանը շատ լավ գիտի, քանի որ նա, մարշալելին հաճույք պատճառելու համար, շատ անգամ գլուղացիներից խլել է նրանց ունեցած-չունեցածը և թողել տկլոր ու սառած, ավերված խրճիթների մեջ։

— Ինչ կարիք կա հին դարմանը քամուն տալ...

— Որպես նախադգուշացում ապագայի համար,— խոսակցությանը խառնվեց Զվինիգորան և դուրս ելավ նկուղի կենտրոնը, որտեղ ավելի լույս էր։

— Տե՛ր աստված, պան զապորոժցին։ Սրտագին բարևներ,— ուրախ բացականչեց Սպիխալսկին։ — Ո՞ղջ ես։

— Ոնց որ տեսնում եք, ողջ եմ։

Կվոչկան նույնպես վեր թռավ տեղից, սեղմեց ձեռքը.

— Մենք էլ մտածում էինք, որ դու կենդանի չես։ Դուրս է գալիս, որ էնքան էլ հեշտ չէ մեր ախպորը դժոխք ուղարկել։ Շատ ուրախ ենք, որ տեսնում ենք քեզ։

— Շնորհակալություն։ Իսկ ո՞ւր է Յացկոն։

¹ Հլածուկ— կանճրակ՝ բույս, որից յուղ են ստանում։

² Най бы его шляк трафив (լեհ.) — գետնի տակ անցնի։

— Յացկոն մեղ հետ չէ,— աչքերը փայլեցրեց Կվոչկան։
— Դեռ ձմռանը նրան ու Մնոգոգրեշնուն Համիդը նվիրեց
ինչ-որ մեկին։ Ոնց որ շանը... Խոլերայի փայ դառնա, հա՛...

Զվենիգորան մոայլվեց։ Նրան համակած ուրախությունը
խամրեց, թառամեց ինչպես վաղ ծլած խոտը՝ սառնամա-
նիքից։

Ս Ե Լ Ա Վ

1

Մուխն ու մուխը կսկծացնում էին աչքերը։ Զվենիգորան,
Սպիխալսկին ու Կվոչկան կրծքով ընկել էին հաստ կաղնե
գերանի վրա և փայտե նավդանի մեջ պտտում էին ջրաղաց-
քարի նման կլոր, հսկայական քարը։ Քարը տրորում, ճզմում
էր հունդերը։ Թանձր, մածուցիկ ձեթից քարը դեղնականաչ
գույն էր ստացել։

Զվենիգորան ու Կվոչկան լուռ էին, իսկ պան Սպիխալսկին,
լարումից աչքերը չռած, ձեռ էր առնում կարաթուրք բան-
վորներին։

— Ինչ է, Յուսուպ, այսօր քեզ համար բայրամ չէ՞¹։

— Բայրամ է։

— Ոնց որ թե չի երևում։ Ամեն օրվա պես դու էլի կեղ-
տոտ ու մրոտ ես։ Էլ ի՞նչ բայրամ քեզ համար։

— Ձենդ կտրի, գյավուր,— ֆշշաց չորացած, սմբած ձե-
րուկ Յուսուպը և ոսկրոտ բռունցքով սպառնաց։ — Սիրտս
մի քրքրի։ Թե չէ, որ կատաղեցի, բռունցքով ականջակոթիդ
կհասցնեմ։ Հոտած շուն։ Էշակ։

Եվ Յուսուպը, և նրա ընկերները դեռ առավոտից չորացած
էին. նույնիսկ տոն օրով Համիդը նրանց ստիպել էր աշխա-
տել։ Նրա ի՞նչ գործն էր, թե ուղղափառները չէին կարող
լվացումն ու նամազը ժամանակին կատարել։ Նրան միայն
ձեթ տային։ Ամեն օր մեծ-մեծ տակառներով Ակսուից ձեթը
ուղարկում էին գավառի բոլոր ծայրերը։ Նրանց աշխատանքը

¹ Բայրամ— մահմեդական կրոնական տոն։

առվակներով գնում էր ուրիշ երկրներ, որպեսզի ոսկե հոսանքով վերագառնար տիրոջ գրպանը:

Բեքիրը հանգստացրեց Յուսուպին.

— Լեզուդ քեզ քաշի, Յուսուպ: Գյավուրը ճիշտ է ասում. շուն Համիդը արդեն մեր գլխին է նստել: Մեր հորենական հողը ու մեր հողը համարյա լրիվ նրա ձեռքին են: Մի փոքրիկ խրճիթ սարքելու համար մենք ստրկական կախման մեջ ենք ընկնում նրանից, դառնում ենք նրա պարտապանը: Ահա, վեց տարի է աշխատում եմ նրա մոտ, ոնց որ տաժանավայրում, իսկ վերջը դեռ չի երևում...

— Իսկ ես հորս պարտքերն եմ մարում իմ աշխատանքով, — ասաց Ռեջեպը, ջահել, երկար ձեռքերով մի մալդ, ու թքեց: — Ոնց որ տասնհինգ տարեկանից աշխատանքի եմ լծվել էդպես էլ մինչև հիմա գնում է... Կարծում ես, պարտքը պակասո՞ւմ է: Որտեղի՞ց: Ամուսնացա, ստիպված նորից պարտք առա Համիդից: Ամեն ձմեռ նորից եմ պարտք անում, որպեսզի սովից չսատկենք... էսպես շարունակ: Վերջ չկա: Գրողի ծոցը գնա էսպիսի կյանքը, Համիդն էլ հետը: Ասում են, Մուստաֆա Սևամորուքը իր տղաներով էլի երևացել է էշեկդաղի մոտ: Կթքեմ ամեն ինչի վրա ու նրա մոտ կերթամ:

— Խելքդ հո չե՞ս կորցրել, Ռեջեպ: Շեյթանը խելքդ գրլխիցդ առել է, ա՛յ անբախտ: Համիդը որ էդ խոսքերդ իմացավ, ոտով-գլխով կորած ես, — Ֆշշացրեց Յուսուպը և շարությամբ բղավեց այն գերիների վրա, որոնք աշխատանքը զաղարեցրել էին ու ականջ էին դնում խոսակցությանը. — Գլդոնը պտտեք, անիծված շներ: Ինչ եք ականջներդ կախ գցել: Կեղտոտ խոզեր...

Գերիները նորից կրծքով ընկան գերանի վրա: Նորից ճոնչաց գլդոնը, դնգացին շղթաները: Բայց հանկարծ դրսից սուր ճիչեր լսվեցին: Բոլորը նետվեցին դեպի դուռը:

Ակսուից եկող ճանապարհով ինչքան ուժ ուներ վազում էր մի աղջիկ՝ զամբյուղը ձեռքին: Դա իրադն էր, Բեքիրի աղջիկը: Օսմանը նրան հասավ ու փորձեց բռնել աղջկա ուսից կախված երկար սպիտակ վզնոցից: Նրանց ետևից, ձի հեծած, շորորալով գալիս էր Համիդը և ինչ-որ բան էր գոռում ու հետն էլ ծիծաղում:

Բեքիրը ուսերով դեսուզեն հրեց ընկերներին և դուրս

թոավ նրանց ընդառաջ: Թեև Օսմանը զինված էր ու մի գլուխ բարձր էր Բեքիրից, վերջինս բազեի նման թոավ նրա վրա և բռունցքով ուժգին հարվածեց ականջին: Իրազը դուրս պլըր-ծավ պահակի ձեռքից ու իրեն գցեց մարդկանց օղակի մեջ:

Անսպասելի հարձակումից շմամ՝ Օսմանը գլուխը կորցրեց: Նրա կուշտ, կլորիկ դեմքի վրա զարմանք նշմարվեց: Բայց անմիջապես էլ դեմքը կաս-կարմիր դարձավ: Թիկնապահը մտրակը ձեռքին հարձակվեց Բեքիրի վրա: Մանր հարվածների կարկուտ տեղաց:

— Կաց, Օսման,— մոտենալով զսպեց նրան Համիդը: — Ուզում եմ խոսել Բեքիրի հետ: Մտրակը դեն գցիր:

Օսմանը անեծքներ ու հայհոյանքներ տեղալով, մի կողմ քաշվեց: Բեքիրը նույնպես շուղեց պարտքի տակ մնալ և իրեն վիրավորողին սպառնաց վիզը ոլորել, անիծեց, որ սատկի քոսոտը շան պես, կամ վարակվի տասնյակ ամենավատ հիվանդություններով:

— Դե ձեռքերդ կտրեք, շեյթաններ,— գոռաց նրանց վրա Համիդը՝ իջնելով ձիուց:

Բեքիրը գնաց դեպի ձիթհանք: Համիդը հետևեց նրան:

— Ես չգիտեի, որ դու էդպիսի գեղեցիկ աղջիկ ունես, Բեքիր,— ասաց Համիդը: — Նա քանի՞ տարեկան է:

— Տասնհինգ, աղա,— մռայլ պատասխանեց Բեքիրը:

— Դու վաղուց ազատված կլինեիր քո պարտքերից, եթե նրան ուղարկեիր զղյակում աշխատելու: Նա բուրդ կմաներ, կգզեր կամ հարեմում կծառայեր...

Նրանք կանգ առան բլրակի մոտ:

— Յոխ, Յոխ՛,— գոչեց Բեքիրը՝ թափով շրջվելով սպախիայի կողմը: — Ձեռք շտաս նրան, Համիդ բեյ: Նա դեռ շատ է ջահել, տան գործն էլ հերիք է նրան: Կինս հիվանդ է...

Բայց Համիդը իրենը պնդեց:

— Դու արդեն շատ տարիներ աշխատանքով վճարում ես պարտքդ, որ վերցրել էիր խրճիթ շինելու համար, Բեքիր, բայց պարտքդ չի նվազում, քանի որ ալլահը մարդուն այնպես է ստեղծել, որ պետք է ուտի ու խմի... Իսկ էստեղ դու

1 Յոխ (թուրք.) — Ոչ

միանգամից պարտքիցդ կազատվես, ոնց որ լավացած վեր-
քից: Լավ մտածիր:

— Ես իմ աշխատանքով եմ վճարում պարտքս, Համիդ
բեյ: Երկու տարի էլ կաշխատեմ, բայց աղջկաս պալատ չեմ
ուղարկի: Դա ջահել աղջիկների տեղը չէ:

Համիդը տաքացավ:

— Մտածիր, թե ինչ ես դուրս տալիս, Բեքիր,— ֆշշաց
նա:— Ուշ, թե շուտ, միկնույն է, նրան կուղարկես ինձ մոտ:
Պարտքիդ ժամանակը վաղուց է անցել... Հը՛, էլ ինչ ես կողի
ընկնում: Բուլորի համար էլ լավ կլինի:

— Չէ՛, Համիդ բեյ, էդ բանը չի լինի,— վճռականորեն
պատասխանեց Բեքիրը: — Բուլորը գիտեն, որ պալատում
ծառայող աղջիկներին ոչ ոք կնության չի առնում: Ինչո՞ւ ես
ուզում միանգամից շորս մարդու դժբախտացնել՝ ինձ, կնոջս,
աղջկաս ու նրա փեսացու հոմեթին:

— Գարշելի շուն,— վնգստաց սպախիան: — Դու դեռ
կիտշմանես: Ես քո խոսքերը չեմ մոռանա... Կեղտոտ խոզ,
հոտած բորենի, ինչպե՞ս ես համարձակվում քո տիրոջ մա-
սին էդպիսի բաներ դուրս տալ: Քեզ երկու շաբաթ ժամանակ
եմ տալիս պարտքդ վճարելու համար: Եթե չվճարես կամ
կնոջդ ու աղջկադ հետ միասին շաշխատես, ես քեզ դուրս
կշարտեմ տնից ու Ակսուից կվճնդեմ:

— Լա հավլա՛,— ձեռքերը վեր պարզեց Բեքիրը: — Ինչ
որ լինելու է՝ թող լինի, բայց աղջկաս քեզ չեմ տա: Նրան
կարող ես խլել միայն իմ մեռնելուց հետո, Համիդ բեյ: Սա
է իմ վերջին խոսքը:

Բեքիրը այնպիսի վճռականությամբ ասաց դա, որ բուլորը
զարմացած նրան նայեցին: Մինչ այդ երբեք ոչ մի բանում
չէր հակառակել ոչ Համիդին, ոչ նրա փուշտիպաններին, արոնք
մշտապես ուղեկցում էին իրենց տիրոջը: Դրա համար էլ Հա-
միդը, Բեքիրին համարելով խելացի ու փորձված ձիթահան,
նրան ավագ էր կարգել մյուս վարձու աշխատողների ու գե-
րինների վրա: Իր աշխատանքը նա կատարում էր ջանասիրու-
թյամբ, և Համիդը գոհ էր նրանից: Հիմա Բեքիրին դժվար էր

1 Լա հավլա (թուրք.) — դարձվածք, մոտավորապես համապատաս-
խանում է «Ամեն ինչ աստուծու ձեռքին է» արտահայտությանը:

ճանաչել. աչքերը վառվում էին, բոունցքները սեղմվել էին, թվում էր, մի խոսք էլ ասես՝ կոկորդիցդ կբռնի:

Համիդը ոչինչ չպատասխանեց: Միայն սևեռուն նայեց իրազին, որ վախեցած գազանիկի նման ծիկրակում էր բանվորների թիկունքի ետևից, հեծավ ձին և, մտրակը շրխկացնելով, քառատրոփ հեռացավ: Օսմանը աճապարեց նրա ետևից:

— Շո՛ւն: Ճարպակալած խոզ,— խոպոտ ասաց Բեքիրը: — Ես ազատ թուրք եմ, իսկ նա ուզում է ինձ ստրուկ դարձնել: Ուզում է արատավորել աղջկաս պատիվն ու իմ պատիվը: Բայց դեռ կտեսնենք, թե ալլահը ում կպատժի: Մուսթաֆա Սևամորուքը զուր տեղը չի հայտնվել մեր կողմերում. գուցե նա Ակսուի պալատի ճամփան էլ կգտնի:

2

Մյուս օրը կեսօրին ամպեր կուտակվեցին: Օդը դարձավ ծանր ու հեղձուցիչ: Հարավում որոտաց ամպրոպը: Երկինքը ծածկվեց ամպերով: Կուրացուցիչ-ճերմակ կայծակները անդադար պատահոտում էին երկինքը: Թեև Ակսուի վրա փայլում էր պայծառ արևը, բատրակ կարաթուրքերը անհանգրստացան:

— Սելավ է լինելու,— ասաց Ռեջեպը: — Շուտ տուն գնանք, քանի ուշ չէ:

Զվենիգորան չգիտեր ինչ բան է սելավը և ինչու այդպես իրար անցան թուրքերը:

— Իսկապես որ սելավ է լինելու,— հաստատեց Բեքիրը և, նայելով բոված արևածաղկի սերմերի կույտին, ավելացրեց. — Եկեք շուտ վերջացնենք ու գնանք: Հո չենք կարող հենց էսպես անձրևի տակ թողնել...

— Իսկ ինչո՞ւ չէ,— հարցրեց Ռեջեպը: — Հո քոնը չէ... Թող մնա մինչև էգուց: Սատանան էլ ձեռ չի տա:

— Թե որ երեկվա վեճը չլիներ,— պատասխանեց Բեքիրը: — Հիմա վտանգավոր է... Համիդը որ իմացավ, ինձ համար ավելի վատ կլինի: Ասենք, ձեզ չեմ պահի, գնացեք: Ես ու ուսը գլուխ կհանենք...

Երբ բոլորը գնացին, Բեքիրը եռանդով գործի կպավ: Անվերջ դեսուդեն էր վազվզում, ասես թև էր առել: Մի ակըն-

Թարթում արևածաղիկը լցրեց քաթանն պարկերի մեջ, դրեց մամլիչի տակ: Նրա կլոր ածիլած գլուխը ծածկվել էր քրտինքով: Արևառ, նիհար դեմքը վառվում էր կրակի պես:

Գերիները նրանից ետ չէին մնում: Բեքիրը միշտ էլ լավ էր վարվում հետները, և հիմա, երբ նա դժբախտության մեջ էր, ուզում էին օգնել: Այնուամենայնիվ, աշխատանքը միայն իրիկնադեմին ավարտեցին: Մինչև հասան գյուղ, աղջամուղջը վրա տվեց:

Գյուղը, որտեղ ապրում էր Բեքիրը, գտնվում էր Կըղբլ-Իրմակի մեջ թափվող ոչ մեծ մի գետակի հակադիր ափին: Գետակը միշտ անցնում էին ծանծաղուտով կամ ջրից դուրս ցցված խոշոր գորշ գլաքարերի վրայով: Իսկ հիմա, մոտենալով գետակին, Զվենիգորան հեռվից լսեց ջրի մոնչոցն ու մարդկանց ճիչերը...

Բեքիրը արագորեն նետվեց դեպի ափ՝ բղավելով մի կարճ բառ միայն.

— Սելավ:

Գերիները նույնպես արագացրին քայլերը: Դեռ հեռվից տեսան, թե ողջ Ակսուի հովտով մեկ ինչպես էր մոնչյունով թավալվում ցեխաջրի ու քարերի սրընթաց հոսանքը: Զուրը շարունակ ավելանում էր և իր տակ առնում գյուղը: Պղտոր ալիքները զարկվում էին կավե խրճիթներին ու նրանց աչքի առաջ կլանում:

Ահա թե ինչ բան էր սելավը:

Զվենիգորան ընկերների հետ մոտեցավ Բեքիրին, որը, գլուխը բռնած, կանգնել էր ջրի ափին: Թուրքի սև աչքերում քարացել էր անսահման հուսահատությունը:

— Տեր աստված, ախր հիվանդ կինս ու աղջիկս էնտեղ են,— տնքած նա: — Սելավն արդեն մոտենում է մեր տանը: Մի բոպե հետո կսրբի, կտանի... Լսո՞ւմ եք, մարդիկ ինչպես են գոռգոռում: Նրանք դուրս են բերում բոլոր թանկարժեք իրերը, քշում հեռացնում են անասուններին... Ո՞վ պիտի օգնի մերոնց:

— Մարդիկ ձերոնց էլ կօգնեն,— հուսադրեց Զվենիգորան: Բայց Բեքիրը անհույս թափ տվեց ձեռքը:

— Դու լավ տեսար, իմ հարևաններն ինչպես օգնեցին

ինձ: Թողին ու գնացին, իսկ դու մնա, ոնց ուզում ես... Ձէ՛, հարկավոր է անցնել էն կողմը: Աստված կօզնի ինձ, ես լող տալ գիտեմ... էստեղ էլ, կարծեմ, շատ խոր չէ: Իսկ դուք,— դիմեց նա գերիներին,— ինքներդ գնացեք ամրոց... Դուք հո չեք փախչի, ճի՞շտ է:

Նա գնաց դեպի ջուրը և, վախենալով փոթորկվող սև զանգվածից, սկսեց դանդաղ անցնել գետը: Մեջտեղում սայթաքեց, ընկավ հոսանքի մեջ: Ուժգին հորձանքը խլեց նրան, պտտեց ու քշեց դեպի Կըզըլ-Իրմակ: Բեքիրը փորձեց լողալ, բայց անհաջող: Քշվեց հոսանքի մեջտեղը... Հանկարծ նա անհետացավ ջրի տակ: Իսկույն էլ դուրս եկավ, և ջրի մոնչոցի ու աղմուկի մեջ տարածվեց նրա սարսափահար ձիչը.

— Ա-ա-ա՛...

Հուսահատ ձիչը զարկվեց ուղիղ Ջվենիգորայի սրտին: Նա ցած նետվեց:

— Հո չգժվեցի՞ր: Ո՞ւր,— կանչեց Կվոչկան:

Բայց Ջվենիգորան արդեն ջրի մեջ էր: Եթե մի տարի առաջ որևէ մեկն ասեր, թե նա՛ դապորոժցի Ջվենիգորան, կյանքը կվտանգի հանուն թուրքի, առաջինն ինքը այդ մարդուն հիմար կանվաներ: Բայց տես, որ եղավ...

Նրա բախտը բերեց: Մի քանի գլաքարեր թափով անցան կողքից, բայց ոչ մեկը իրեն չգիպավ: Մանր կալանդները քաշում էին ներքև, պլոկում ձեռքերի ու ոտքերի կաշին, բայց նա դրանց ուշադրություն չէր դարձնում: Ճեղքում էր ջուրը՝ աչքերը չհեռացնելով այն տեղից, ուր վերջին անգամ տեսել էր Բեքիրին: Լայն լողիկը, որ սովորաբար, հագնում էր Բեքիրը, այս անգամ լավ ծառայություն մատուցեց տիրոջը. ալիքների միջից երևացին լողիկի փեշերը, և Ջվենիգորան բռնեց դրանից, իսկ հետո դուրս քաշեց Բեքիրին: Ջգալով, որ ոտքերը դետին առան, Ջվենիգորան նրան գրեց ուսին ու տարավ մյուս կողմը:

Երկար ժամանակ Բեքիրի բերանից ջուր էր հոսում, ու նա ծանր տնքում էր: Հետո աչքերը բացեց: Տեսնելով իր վրա խոնարհված Ջվենիգորայի դեմքը, թույլ ժպտաց.

— Շնորհակալություն, Արսեն... Օգնիր վեր կենամ... Հարկավոր է շտապել...

Նրանք միասին գնացին: Նորից Ակսու վերադառնալը

խելագարութիւն կլինէր, և Զվենիգորան որոշեց գնալ Բեքիրի հետ:

Մութը խտացավ: Պարզկա երկնքում վառվեցին աստղերը: Հեռվում ուրվականների նման վեր էին բարձրանում հսկա լեռնակույտերը: Գյուղից լսվում էին մարդկանց վայնասունը, անասունների բառաչն ու շների հաչոցը:

Բեքիրը և Զվենիգորան թեքվեցին դեպի կողքի նեղ փողոցը: Այստեղ արդեն ջուրը հասնում էր մինչև գոտկատեղ: Առջևում դեսուդեն էր ընկնում ինչ-որ մեկը և, մթության մեջ ճանապարհը չգտնելով, հայհոյում էր: Ինչ-որ տեղ կտուրում սրտաճմլիկ մլավում էր կատուն: Կավե ցանկապատներով բաժանված փողոցներում լողում էին ամեն տեսակ քրջեր, ծղոտ, ցախ:

Անկյունում նրանք դեմ առան մի մութ կերպարանքի:

— էս դո՞ւ ես, Բեքիր: Շտապիր: Քեզ դժբախտութիւն է պատահել...

— Ի՞նչ դժբախտութիւն,— առաջ նետվեց Բեքիրը:

— Իրազը կորել է:

— Խեղդվե՞լ է: Օ՛, ալլահ...

— Զէ՛, Համիդի մարդիկ են փախցրել:

— Համիդի մարդի՞կ, Նզովյալներ:— Բեքիրը ձեռքերը պարզեց դեպի սև երկինք: — Մի՞թե դա ճիշտ է: Օ՛, ալլահ, էդ ինչպե՞ս թույլ տվեցիր... ինչո՞ւ կայծակի բաժին չդարձրիր էդ շախկալներին... Իմ Իրազը, իմ մինուճարը, իմ միակ մխիթարութիւնը...

Հուսահատությամբ բռնված՝ նա արագ առաջ գնաց: Զվենիգորան հազիվ հասավ ետևից:

Գեռ հեռվից կանացի լացի ձայն լսեցին: Բեքիրը խելագարի նման գոռաց.

— Գյուրջա, ինչո՞ւ չկարողացար պահպանել Իրազին: էդ ո՞նց եղավ: Աստծու կրակը գլխիդ թափվի, շարաբախտ: Ինչո՞ւ չպահպանեցիր Իրազին:

Գզգզված, թրջված կինը ընկավ Բեքիրի կրծքին ու հեկեկաց:

— Ես չէի թողնում նրան... Ինքը գնաց Ակսու՝ սպիտակեղենը լվանալու: Ախ, իմ անմեղ աղջիկ... էնտեղ էլ բռնել էր նրան...

— Ո՞վ:

— Օսմանը... էլ ո՞վ:

— Կատաղած շուն: Իսմեթը գիտե՞ արդեն:

— Գիտե... Նրա երեսին նայել չի լինի: Վաղեց եկավ, որ ինձ փրկի սելավից: Մի քանի կապոց դուրս հանեց, ինչոր կարող էր, և անասունները դուրս քշեց... Հրեն նա էստեղ է գալիս:

Մինչև գոտկատեղը թրջված, ամբողջովին ցեխի մեջ կորած՝ նրանց մոտեցավ մի պատանի: Առանց բարևելու, ցածր ձայնով հարցրեց.

— Բեքիր աղա, Իրազի մասին ոչ մի նորություն չե՞ք լսել:

— Ոչ մի...

— Ես կսպանեմ Համիդին:

— Չէ՛, դու ինձ թող, էդ ես պիտի սպանեմ Համիդին, — հաստատ ասաց Բեքիրը:

— Այդ դեպքում միասին կսպանենք: Ես չեմ հանգստանա, մինչև որ նրա կատաղած արյունով ձեռքերս չլվանամ:

— Լավ տղաս, թող էդպես լինի: Մենք երկուսով կանենք էդ բանը, — համաձայնեց Բեքիրը:

Նրանք, մինչև կուրծքը ջրի մեջ, կանգնել ու զրուցում էին այնպես, ասես խոսք էր գնում եզան առուտուրի կամ շուկա գնալու մասին:

— Էդ ինչի՞ մասին եք խոսում, — ճշաց Գյուրյան: — Մի դժբախտությանը մեկելը մի ավելացրեք: Փրկեք մնացածը: Շուտով ջուրը ամեն բան կտանի...

Տղամարդիկ լուռ վերցրին թաց կապոցներն ու գիշերվա մթության մեջ շարժվեցին առաջ: Զվենիգորան, շղթաները զնգացնելով, պարկը շալակած, քարշ էր գալիս ետևից:

3

Սելավը նույնքան արագ հանդարտվեց, ինչպես որ վրա էր տվել:

Երբ արևը դուրս եկավ, Զվենիգորան դանդաղ քայլեց Կըզըլ-Իրմակի ափով: Թափառեց ջրիկ տիղմի մեջ, քարշ տալով ծանր կալանդները:

Գետի վրա տարածվեց այգալուստի վարդագույն մշուշը: Խուլ որոտացին պղտոր ջրերը: Դրանց աղմուկը Դնեպրի սահանքների շառաչն էր հիշեցնում:

Զվենիգորան կանգ առավ գառիկող ափի վերևում՝ ամբողջ կրծքով շնչելով գարնանային անուշաբույր օդը, հիանալով հեռվում բացվող լայնարձակ տեսարաններով:

Անսպասելիորեն թիկունքից ձիերի դոփշուն լսվեց:

— Այ թե որտեղ է նա, Համիդ բեյ, — լսվեց Օսմանի ուրախ բացականչությունը: — Բռնեցինք շանը:

Երեք ձիավորներ սլացան դեպի Զվենիգորան:

— Իսկ ես իսկի էլ փախչելու մասին չեմ մտածել, — հանգիստ ասաց Արսենը: — Իրիկունը փրկեցի Բեքիրին, որը Ակսուն անցնելիս քիչ էր մնում խեղդվեր: Դե գիշերն էլ էստեղ մնացի, նրանց մոտ...

Բայց Համիդը շարունակում էր գոռաց.

— Պոչ մի խաղացնի, գյավուր: Քեզ ոչ ոք չէր ստիպել, որ Բեքիրին փրկեիր: Թող խեղդվեր շունը... Դու գիտե՞ս, որ ամեն իրիկուն պետք է բերդում լինես: Բանտախուցը քեզ ոչինչ չի սովորեցրել: Մենք ամբողջ գիշերը քեզ ենք փրնտրել, սրիկա... Է՛յ, Օսման, առաջին անգամվա համար կըտրիր նրա ականջը: Դա նրան կհիշեցնի, որ ինքը եղած-չեղած ստրուկ է միայն: Ուրիշներին էլ խրատ կլինի:

Օսմանը բռնեց Զվենիգորայի ձեռքից, նրան օգնություն շտապեց Սուլեյմանը՝ գոտկատեղից հանելով ոչ մեծ կեռ դաշույնը:

Զվենիգորան արագ նայեց շուրջը, ասես փրկություն էր որոնում, և հանկարծ, իրենից ետ հրելով Օսմանին, բարձր ափից նետվեց ցած, ուղիղ կրզըլ-Իրմակի կարմրավուն ջրերի մեջ:

— Բռնիր նրան: Բռնիր... — գոռաց Համիդը՝ ասպանդակների վրա կանգնելով:

Բայց սրընթաց հոսանքը խլեց փախստականին ու տարավ գետի մեջտեղը: Օսմանն ու Սուլեյմանը վազեցին ափնի վար, քարեր շարտեցին: Սակայն նրան չկապավ: Հետապնդողները, ըստ երևույթին, ափսոսացին, որ հետները նետաղեղ չեն վերցրել: Հիմա միայն նետը կամ գնդակը կարող

էին հասնել գերուն: Ոչ Օսմանը, ոչ Սուլեյմանը ջուրը նետ-վելու ցանկություն չունեին:

Գետի մեջտեղում Զվենիգորան զգաց, որ ոտքերի տակ քարքարոտ ծանծաղուտ է: Դա իսկը ժամանակին էր. ինչքան էլ որ նա լավ էր լողում, Լրկաթը քաշում էր հատակը: Ձեռքերով շղթան բռնելով, որպեսզի չկառչի քարերից, վազելով անցավ ծանծաղուտը և կանգ առավ շունչ քաշելու:

Համիդը ափից գոռաց.

— Միևնույն է քեզ չի հաջողվի փախչել, ստրուկ: Ետ դառի քանի ուշ չէ: Թե չէ կյանքովդ կհատուցես...

Զվենիգորան չպատասխանեց: Լուռ նայեց գաղաղած սպախիային, որը դիվոտել էր մյուս ափին, մի հիստուն քայլ այն կողմ, և դայրույթից սիրտը տակնուվրա ելավ: Մի կարճատև ակնթարթ դիտակցության մեջ եկան իրար խառնվեցին այն բոլոր ստորությունները, ինչ ուրիշներից էր լսել սպախիայի մասին, ինչ ինքն էր քաշել նրա ձեռքից, և դայրույթից սարսուռաց: Ինչո՞ւ մինչև հիմա ոչ ոք չի սպանել այդ գարշելի արարածին: Այդ սրիկան ամենուրեք միայն վիշտ ու դառնություն է ցանում, բոլորին դժբախտացնում է ու միշտ ջրից շոր է դուրս գալիս:

Նա բռունցքով սպառնաց Համիդին, ձգեց շղթան և կլրկին նետվեց նեղ, բայց վտանգավոր գետակի մոլեգնած հոսանքի մեջ:

Դիմացի ափը մոայլ էր ու ամայի: Ոչ մի կենդանի շունչ չէր երևում: Հենց ջրի վրա կախվել էին հսկա ժայռերը, տեղտեղ հոնի ու որոճի թփերով ծածկված:

Զվենիգորան վեր մագլցեց: Համիդը ձիով դեռևս դեսուդեն էր նետվում մյուս ափին, իսկ փուշտիպանները սլացան ձիթհանք և սկսեցին կարգի բերել մակույկը: Շուտով նրանք լողացին դեպի այս կողմ: Այժմ հույսը միայն իր ոտքերի վրա էր: Մի խոշոր քարով Զվենիգորան ջարդեց կալանդները, շարտեց թփերի մեջ ու փախավ:

Առջևում երկինք էր խոյանում բարձր լեռնաշղթան, որ դողդողում էր կապտավուն մշուշի մեջ: Հովիտներում սևին էին տալիս փշոտ մացառուտները:

Նա վաղեց, մեկ-մեկ անցնելով սովորական քայլքի, մինչև

կեսօր, առանց հանգստանալու, շփարկով ոչ հոգնածութիւնն, ոչ քաղց: Վտանգը հալածում էր նրան: Նա վախենում էր հետապնդողներից ու պատահական մարդկանցից, որոնք կարող էին բռնել իրեն, վախենում էր մոլորվի ու ետ դառնա դեպի գետը կամ ժայռից ընկնի ու ձեռուտը կտորի: Այժմ, երբ գերութիւնից ազատվելու հույս էր ծագել, նա վախենում էր ամեն տեսակ անակնկալ խոշընդոտներից, որոնք ամեն ինչ կարող էին ոչնչի հանգեցնել...

Առանց հանգստանալու քայլեց մինչև իրիկուն: Շրջանցեց երկու գյուղ, աննկատելիորեն անցավ խաղողի այգիների երկայնքով, ուր աշխատում էին մի քանի կանայք ու անշափահաս երեխաներ, կտրեց անցավ շոր, անհրապույր բլուրների շարքը և, վերջապես, կանգ առավ փոքրիկ անտառում: Մի հաստաբուն, սաղարթաշատ ծառի վրա ճյուղերից բնի նման մի բան սարքեց և, շնայած քաղցը նեղում էր, քնեց պինդ, խոր քնով:

Արթնացավ, երբ արևը դուրս էր եկել: Անտառը զրնգում էր թռչունների երգեցողութիւնից ու ճվլոցից: Առանց մի րոպե իսկ հապաղելու Չվենիգորան իջավ ծառից, ինչ-որ դառը, ցողաշաղ խոտ ծամեց, որպեսզի ծարավը մեղմացնի, և գնաց արևին ընդառաջ:

Տեղանքը քիչ-քիչ սկսեց փոփոխվել: Լեռնաշղթան մնաց ետևում: Փախստականի առջև հայտնվեց բլրաշատ հարթավայրը, ուր տեղ-տեղ ցցված էին փշոտ մամխի ու մատղաշ բարձր օշինդրի թփերը: Չվենիգորան շէր շտապում: Հետապնդում չկար և, թվում է, չէր էլ լինելու. երևի հետքը կորցրել էին:

Երկրորդ գիշերը անցկացրեց անձավում, մեծ-մեծ քարերով մուտքը փակելով, քանի որ շուրջը բորենիների ու շնագայլերի ռոնոց էր լսվում: Քնեց ոչ այնքան խոր, մղձավանջային քնով, բայց այնուամենայնիվ, մի քիչ ուժերը վերականգնեց, իսկ մռայլ, ամպամած առավոտը հույս ներշնչեց, որ անձրև կգա:

Մագլցելով ուղղաբերձ գագաթը՝ Չվենիգորան շուրջը նայեց: Ետևում կապույտին էին տալիս լեռները, թեև այնտեղ ջուր կար, բայց ետ դառնալը անկարելի էր՝ և հեռու էր, և

վտանգավոր. կարող էր հանդիպել հետապնդողներին: Առջե-
վում անծայր անապատն էր՝ շոր, անմարդաբնակ, ամայի:
Միայն ձախ կողմում, հեռավոր մշուշների մեջ, ցածրիկ
լեռներ էին: Էհ, ինչ արած: Այնտեղ հավանաբար, կարելի
է ջուր և ուտելիք ճարել: Հիմա դրանք են փրկությունը:
Հատկապես ջուրը: Այսպես ուրեմն, միայն այնտեղ:

Քայլում էր արագ: Վազելով իջավ դիք լանջից: Հույսով
նայեց երկնքի գորշ ամպերին, նրանցից գեթ մի կաթիլ
անձրև սպասելով: Բայց ամպերը նոսրացան, հալվեցին, և
շուտով նրանց արանքից փայլփլեցին առավոտյան արևի
առաջին շողերը:

Կեսօրին Ձվենիգորան զգաց, որ այլևս առաջ գնալ չի
կարող: Քունքերում զարկում էր արձձի պես շիկացած, տաք
արյունը: Անողոք արևը նրանից խլում էր խոնավության
վերջին կաթիլները, անգթորեն այրում բաց գլուխը: Ոտքերը
թուլացել էին, հրածարվում էին տանել օտար, ծանր
մարմինը:

Բայց նա կանգ չառավ: Ոչ, ոչ, միայն թե կանգ չառնել,
չընկնել, դա մահ է:

Նրան թվաց, թե ինքը պառկած է ինչ-որ տեղ, քարքա-
րոտ, կրակի պես շիկացած գետնին, և շնագայլերն ու բորե-
նիները թաքուն, գաղտագողի մոտենում են իրեն: Ձեռքերն
ու ոտքերը ուժ չունեն, որ վեր կենա, հեռու քշի գազաննե-
րին, որոնք սպասում են այն պահին, երբ կարելի կլինի
ճաշակել անակնկալ ավարը: Հետո կթռչեն կգան գիշանգրղ-
ները, կկտցահարեն գազանների թողածը և սպիտակ ոսկոր-
ները շաղ կտան անապատով մեկ: Բը՛-ո-ո...

Ո՛չ, նա չի կարող այստեղ մեռնել: Ինչ-որ տեղ, հեռու-
հեռավոր Ուկրաինայում, սպասում է մայրը: Ամեն օր նա
կանգնում է Սուլայի բարձր քարափին ու նայում տափաս-
տանին՝ չի՞ գալիս արդյոք Արսենը, իր սիրեցյալ զավակը,
իր հույսը... Հետո լուռ ցած է իջնում, գնում է իր խրճիթը,
գրուցում պապի ու Ստեշայի հետ: Վերջապես պառկում է
քնելու: Բայց քունը դանդաղում է, մոտ չի գալիս, թախիծը
պատել է սիրտը, իսկ անկոչ դառն արցունքները մինչև առա-
վոտ կսկծացնում են նրա աչքերը... Ո՛չ, ինքը պետք է հաղթի
բոլորին, նույնիսկ մահին, պետք է առաջ գնա, որպեսզի գա

երանելի ուրախ օրը, երջանկությունից ժպտա մայրը և չ...
ծեռնակի ցատկով նետվի որդու կրծքին...

Ինքը չի կարող կյանքից հեռանալ նաև այն պատճառով,
որ իր խղճի վրա քարի պես ծանրացած է պարտքը կոշկոյ
Սերկոյի առջև, սեչի ընկերության առջև: Չէ՞ որ ատամանը
մեծ հույս էր կապել իր հետ: Ինչպես էր վստահում, հավա-
տում, թե ուղևորությունը բարեհաջող կլինի, որ Արսենը և՛
եղբորը կազատի գերությունից, և՛ կարևոր լուրեր կբերի:
Ուրախ, բախտավոր վերադարձի փոխարեն ընկավ գերու-
թյան մեջ: Հիմա իր մասին ի՞նչ կմտածի կոշկոյ Իվան
Դմիտրիևիչը: Աչքը ճամփի՞ն է: Հո՞ւյս ունի: Սպասո՞ւմ է:
Իգուր. կազակին շուտ չի վիճակվի ոտք դնել հայրենի հողին:
Եվ այդ բոլորը Չեռնոբայի պատճառով:

Չեռնոբայը, ահա թե մեկել ով է նրան ամուր պահում
այս աշխարհում: Այրող ատելությունը ճնշում է սիրտը, շա-
րունակ հրում է առտջ ու առաջ:

Կապրի, կվերադառնա, որպեսզի երես առ երես հան-
դիպի այդ սրիկային:

Զվենիգորան կեղտոտ թևքով սրբեց դեմքը, ուռած,
ասես թաղքացած լեզվով լիվեց շորացած, ճաքճքած շուկ-
թերն ու համառորեն առաջ գնաց...

Չորրորդ օրը, կեսօրից հետո, բոլորովին հալից ընկած,
նա մազլցեց լեռան կատարը և տեսավ ընդարձակ, թեք հո-
վիտը, և արածող ոչխարների մի մեծ հոտ:

Սիրտը ուրախ թպրտաց... Այնտեղ մարդիկ կան: Այնտեղ
ջուր կա: Հովիվները երբեք ջրից հեռու չեն գնում: Հավանա-
բար մոտերքում ջրհոր կամ առվակ կա, որտեղ նրանք ջրում
են ոչխարներին:

Զվենիգորան կանգ առավ և հազիվ շունչը տեղը բերեց:
Ուրախությունից քիչ էր մնում առաջ նետվեր, բայց ժամա-
նակին գլխի ընկավ, որ հովիվների հետ հանդիպումն էլ իր
համար կարող է վատ վերջանալ: Հովիվներն, անշուշտ, գին-
ված են նետաղեղներով, տեգերով, դաշույններով, իսկ ինքը
միայն մերկ ձեռքերով է, ասենք դրանք էլ հոգնածությունից,
քաղցից ու ծարավից հրաժարվում են իրեն ծառայել:

Կաղակը դարձավ որսին հետապնդող որսորդ: Զգուշու-
թյամբ, բռնելով իր ճամփին հանդիպող յուրաքանչյուր

Թիից, յուրաքանչյուր քարից, շրջանցիկ ճանապարհներով սկսեց մոտենալ հոտին: Գլուխը գվվում էր, ձեռքերն ու ոտքերը դողում էին: Բայց նա ավելի ու ավելի մոտ էր սողում:

Խելացի կլիներ, եթե մի կողմ թեքվեր ու հարևան հովտի կողմից մոտենար հովիվներին, բայց Զվենիգորան զգաց, որ դրա համար արդեն ուժերը չեն բավականացնի: Բայցի դրանից, ժայռի տակ, խարույկի վրա նա տեսավ մրոտված կաթսան, որից եփած մսի արտակարգ հաճելի, զրգոող բուրմունք էր տարածվում: Այդ բուրմունքը հարբեցրեց փախստականին ու մագնիսի նման ձգեց դեպի իրեն:

Գրեթե կես ժամ կորցրեց Զվենիգորան, որպեսզի աննկատ մոտենա խարույկին: Գաղտագողի մոտեցավ քամու հակառակ կողմից, որպեսզի շները հոտը չառնեն: Վերջապես, մի սուր քար ձեռքում սեղմած, թաքնվեց հսկա ժայռի ետևվում, սպասելով հարմար պահի, որպեսզի հարվածի հովվի գլխին: Մորուքավոր տարեց հովիվը, մաշված ջեբքե ու սրագագաթ թաղիքե կառուկ հագած, երկար փայլուն դանակով կաթսան էր խառնում: Հետո, դանակը մի կողմ դնելով, կաշվե մախաղից մի կապոց հանեց, երևի աղ էր, և, քթի տակ ինչ-որ երգ մոմռալով, սկսեց լցնել կերակուրի մեջ:

Վրա հասավ հարձակման համար ամենահարմար պահը: Տարված իր գործով՝ հովիվը չսեց կամացուկ, գաղտագողի քայլերի ձայնը: Զվենիգորան մի պահ քարացավ, ասես ուժ էր հավաքում: Քարը դանդաղ բարձրացավ մորուքավորի գլխավերևում: Բայց այդտեղ կարծես ինչ-որ բան զարկվեց նրա կրծքին, քարը բռնած ձեռքը դողաց ու ցած կախվեց: Գիտակցությանը հասավ հարազատ, դեռևս մանկությունից ծանոթ երգը.

Տուն են դառնում հոտ ու հոտաղ,

Ե՛վ ոչխարներ, և՛ եզներ...

Զրուցում է աղջիկն ահա

Կազակի հետ այն ջահեր:

Զվենիգորան ամբողջ մարմնով առաջ թեքվեց և խուլ ձայնով կանչեց.

— Եղբա՛յր... Երկրա՛ցի:

Հովիվը անակնկալի եկած՝ ձեռքից բաց թողեց աղի կապոցը և շժմած նայեց քարին, որ ընկավ ոտքերի տակ:

— Տե՛ր աստված, տե՛ր աստված. մա՞րդ ես դու, թե անասուն... Չքվիր, շար սատանա,— փնթփնթաց նա՝ ետ-ետ գնալով:

Զվենիգորան, ի զարմանս իրեն, հանձին հովվի՝ ճանաչեց Սվիրիդ Մնոգոգրեշնուն:

— Մի՛ վախենա, քեռի Սվիրիդ, ես էլ քեզ պես գերի եմ... զապորոժցի Զվենիգորային հիշո՞ւմ ես... Համիդի մոտ,— հանգստացրեց նրան Զվենիգորան:— Մեռնում եմ ծառայելից... Խմել եմ ուզում... Ի սեր բոլոր սրբերի, խմելու մի բան տուր: Հետո ամեն ինչ կպատմեմ...

Հովիվը, դեռևս երկյուղածությամբ նայելով այդ ցնցոտիավոր, մազմորուքի մեջ կորած անծանոթին, դժվարությամբ ճանաչեց աժդահա զապորոժցուն: Թաղիքի տակից դուրս քաշեց տիկն ու փայտե քասան և ջուր խառնած ոչխարի կաթ լցրեց:

— Խմիր, սա այրան է...

Զվենիգորան ագահորեն վրա պրծավ քասային, մի շնչով պարպեց: Այրանից տկի հոտ էր գալիս, բայց սառն էր, թրթվաշ և ծարավը կոտրեց: Չորրորդ քասայից հետո Զվենիգորան թիթիացած զգաց: Կուրծքը այրող, տոշորող կրակը սկսեց մարել:

Նա նստեց խարույկի մոտ: Տաք, արբեցնող խոնջանքը համակեց ողջ մարմինը: Կաթսայից տարածվում էր եփած մսի ու դափնետերևի բուրմունքը: Զվենիգորան ունզներով ներս քաշեց անուշ բուրմունքը, կուշտ ճաշ ակնկալելով: Այդ բանը նկատելով՝ Մնոգոգրեշնին ձայն տվեց իր ընկերոջը, որը հսկում էր հոտին.

— է՛յ, տղա, արի հաց ուտենր:

Մի քանի րոպե անց հայտնվեց երկրորդ հովիվը: Զվենիգորան զարմանքից ձեռքերն իրար զարկեց. Յացկոն էր:

— էս դո՞ւ ոնց ես ընկել էստեղ:

Տղան իսկույն ճանաչեց կաղակին: Աչքերը վառվեցին տրախությունից, ասես հարազատ հորն էր հանդիպել:

— Համիդը մեզ նվիրեց իր փեսա Ֆերհադին: Չէի ուզում մերոնցից բաժանվել, մտածում էի, թե բոլորովին կկորչեմ: Բայց հակառակը դուրս եկավ: Ինձ քեռի Սվիրիդին օգնական կարգեցին: — Եվ կամացուկ ավելացրեց. — Քեռի Սվիրիդը

պոտորնակ¹ է դարձել... դրա համար էլ նրա նկատմամբ ներողամիտ են: Տեսնում ես, առանց վերակացուի ենք ման գալիս, ուտելու ու խմելու բան ունենք, ոտուձեռքներփս կապանքներ չկան: Մյուս ստրուկները դժբախտության մեջ են: Աշխատում են եզան պես, բայց ապրում են փոսերում, ոնց որ գազաններ...

Մինչ այդ Սվիրիդ Մնոզոգրեշնին կաթսայից ոչխարի խաշած միսը դատարկեց ճաքճքված, բավականաչափ կեղտոտ փայտե ամանի մեջ և գետնին փռեց յուղոտ-ճարպոտ յափնջին:

— Նստիր, երկրացի: Աստծու տվածով ուրախանանք:

Զվենիգորային թվաց, որ ինքը կյանքում դրանից համեղ բան չէր կերել: Հովիվները նրա ամանի մեջ մսի փափուկ, մեծ-մեծ կտորներ ավելացրին և մի քսա լիքը թթու այրան լցրին: Երբ Զվենիգորան մի քիչ քաղցը հագեցրեց, նա համերկրացիներին պատմեց իր փախուստի, թափառումների ու շարշարանքների մասին: Հովիվների դարմանքին շափ ու սահման չկար: Յացկոն հիացմունքով նայում էր Զվենիգորային: Իմանալով, որ նա երեք օրում կտրել անցել է անջուր անապատը, բացականչեց.

— Զի կարող պատահել: Էնտեղ համարյա հիսուն փարսախ կլինի: Թուրքերն էդ սարավանդին ասում են Կարա-շեյթան — «Սև սատանա», քանի որ շատ քաջեր են էնտեղ մեռել:

— Բախտս բերեց, Լորայրներ, որ ձեզ պատահեցի, — ժպտաց Զվենիգորան: — Թե չէ ես էլ գլուխս վար կղնեի...

Կուշտ ուտելուց հետո նրա քունը տարավ: Աչքերը փակվեցին, գլուխը հակվեց կրծքին:

Մնոզոգրեշնին դա նկատեց:

— Է՛հե, բարեկամս, քեզ ոչ միայն ուտել ու խմել էր պետք, այլև մի կուշտ քնել: Հիմա ես քեզ համար տեղ կզցեմ շվաքում, քնիր:

Նա թաղիքը փռեց ժայռի տակ, ջեբբեն գլխի տակ դրեց: Զվենիգորան պառկեց, ճրթճրթոցով տարածեց մարմինը:

¹ Պոտորնակ (ուկր.) — մահմեդականություն ընդունած ստրուկ:

— Թե որ բան-ման պատահի՞ ձեն տվեք,— հազիվ հասցրեց խնդրել հովիվներին՝ թաղվելով խոր քնի մեջ:

Համարյա մի ամբողջ օր նա քնեց և արթնացավ այն բանից, որ մեկը ցնցեց նրա ուսը: Աչքերը բացելով՝ տեսավ Յացկոյի վախեցած դեմքը:

— Արսեն, վեր կաց: Շուտ փախիր ժայռերի ետևը: Մեր տերն է դալիս, Ֆերհազը,— շնչաց տղան:

Զվենիգորան տեղից վեր թռավ: Ուզեց փախչել, բայց արդեն ուշ էր. սրարշավ նրանց մոտեցավ ջահել, կլորերես մի թուրք՝ ոսկեթույր ձին հեծած: Զվենիգորան իսկույն ճանաչեց Ֆերհազին:

Նրա հագին թանկարժեք շորեր էին՝ կապույտ մահուդից, փափախի շուրջը սպիտակ մետաքսե փաթթոց էր, կողքից կախված էր կեռ թուրը՝ վրան թանկարժեք քարեր, գոտու տակ ատրճանակներ էին՝ սաղափազարդ կոթերով: Զին սովորությամբ էր շարժում քրտնած կողերը. երևում է, հեծվորը սիրում էր արագ քշել կամ շտապում էր:

— Օ՛, Ֆերհազ աղա: Սալամ,— խոր գլուխ տվեց Յացկոն: — Իմ պատվարժան տիրոջը ինչն է բերել արոտատեղ: Որտե՞ղ են փուշտիպանները:

— Նրանք գնացին մյուս սուրունների մոտ... Իսկ ես եկա էստեղ, որ ձիս մի քիչ բացվի, խամացել է,— խզխզացրեց Ֆերհազը: — Շուտ սուրուն քշեք տուն: Առնող է եկել, պիտի ծախենք: Էլ մլուլ մի տվեք: Լսո՞ւմ եք:

— Լսում ենք,— պատասխանեց Յացկոն:

Ֆերհազը ցած իջավ ձիուց:

Ուշադրություն չդարձնելով Զվենիգորային,— ըստ երևույթին նրան Սվիրիդի տեղը դրեց,— Ֆերհազը սանձը շարտեց Յացկոյին: Սկսեց անցուդարձ անել խարույկի մոտ, որպեսզի ոտքերի թմբածուխունն անցնի, հանկարծ շրջվեց Զվենիգորայի կողմն ու կանգ առավ: Զարմանքից նա քարացավ տեղում: Աչքերի մեջ կասկած հայտնվեց: Նա ձեռքը դրեց թրի երախակալին ու խստությամբ հարցրեց.

— Սա ո՞վ է:

Յացկոն կմկմաց.

— Սա ճամփորդ է,— ասաց նա անվճռական և ձեռքով ցույց տվեց անապատի կողմը: — Էնտեղից եկավ:

Ֆերհազը ուշադիր նայեց փախստականի մալածածկ դեմքին, փոշոտված շորերին ու նշատառոտված ոտնամաններին: Նրան, երևի, շրավարարից ստրուկի պատասխանը: Մոտեցավ Զվենիգորային, առաջ ձգեց ոսկրոտ դեմքը, ասես ուզում էր հոտոտել անծանոթին:

— Դու ո՞վ ես:

— Ծս բուլղարացի վաճառականի քարավանում ջորեպան եմ: Քարավանից ետ ընկա ու քիչ էր մնում անապատում կորչելի:

— Օ՛, գյավուր... — ատամների արանքից մոթմոթաց թուրքը: — Դուցե պարզապես փախստական ստրուկ ես: Հը՞: Հապա մի ցույց տուր ձեռքերդ:

Նա հանկարծ բռնեց Զվենիգորայի թևքը, վեր բշտեց ու տեսավ կալանդներից առաջացած կարմրակապույտ սպիները:

Մի ակնթարթ թուրքը շփոթվեց ու ետ քաշվեց: Զվենիգորան օգտվեց դրանից: Մնտոին հասցրած ուժգին հարվածով նա Ֆերհազին գետին փռեց: Գոտուց խլիլով ատրճանակը՝ կոթով հարվածեց հակառակորդի գլխին: Ֆերհազը մի ճիչ արձակեց ու սկսվեց:

Այդ բուրբն այնքան արագ կատարվեց, որ Յացկոն միայն կարողացավ բացականչել.

— Օ՛յ, օ՛յ, էս ինչ փորձանք էր: Հիմա ի՞նչ կլինի:

Հովտից, փայտե դուլից թափթփելով կաթը, վազելով եկավ Մնոգոգրեշին:

Զվենիգորան հազից հանեց ցնցոտիները ու արագորեն հագավ Ֆերհազի թանկարժեք շորերը, թուրը կապեց, ատրճանակները խրեց գոտին: Երբ Մնոգոգրեշին մոտ եկավ, սկզբում չճանաչեց կազակին, անծանոթ թուրքի տեղ դրեց նրան, և սկսեց լացուկոծ անել տիրոջ դիակի վրա: Բայց երբ ծերունին նկատեց, որ տերը գրեթե մերկ է, շշմած նայեց Զվենիգորային:

— էս ի՞նչ ես արել, ավազակ,— բռունցքներ արած՝ վրա պրծավ հովիվը: Հիմի ախր մեզ հում-հում կռտեն: Դու կհեծնես ձին և արի ու գտիր: Իսկ մեզ... Անիծյալ հրեշ, դու նույնիսկ մտքովդ էլ շես կարող անցկացնել, թե ինչ տանջանքներ կհնարի տերը մեզ համար: Նա մեր արյունը բաց

կթողնի, կաթիլ առ կաթիլ: Ողջ-ողջ փորններս կթափի, աչք-
ներս կհանի, ականջներս կկտրի, լեզուներս կպոկի... Ախր
ոչ ոք չի կարող հաստատել, որ ես ու Յացկոն չենք սպանել
Ֆերհադին: Ամբողջ մեղքը մեզ վրա կընկնի: Էսօր չէ էգուց
մեզ կըռնեն շախկալների պես ու կտանջեն, մահվան դուռը
կհասցնեն... Օ՛յ, օ՛յ, օ՛յ...

Յացկոն շվարած քաշվել էր մի կողմ և լուռ նայում էր,
թե ինչպես քեռի Սվիրիդը մեկ նախատում էր Զվենիգորային,
մեկ նետվում էր դեպի իր տիրոջ մարմինը, մեկ հուսահատ
կուրծքն էր ծեծում, մեկ մաղերը պոկում: Զվենիգորան, քթի
տակ ծիծաղելով, հետևում էր Մնոգոգրեշնու տառապանք-
ներին, բայց շուտով ձանձրացավ:

— Սպասիր, ծերուկ... Ձայնդ կտրիր,— վերջապես գոռաց
նա բարկովթյամբ:— Հարազատ ես գտել, գրողը տանի: Ինչ է,
չլինի՞ թե նա ցմահ քեզ վարձել է:

— Յմահ: Ո՞վ,— հարցրեց անհանգստացած Մնոգոգրեշնին
ու ճպճպացրեց մանր, կարմրած աչքերը: Բայց տեսնելով, որ
Զվենիգորան համենայն դեպս մտադիր չէ իրեն խփելու, նորից
ձայնը բարձրացրեց.— Յմահ է թե ոչ, բայց ոչ ոք ժամանա-
կից շուտ մեռնել չի ուզում: Թե որ դու ուզում ես դժոխք էր-
թաս, զապորոժցի, գնա, ուրիշներին ետևիցդ քաշ մի տա...

— Ինչո՞ւ դժոխք: Դուք էլ փախեք ինձ հետ: Մեկ էլ տե-
սար բախտներս բերեց, վերադարձանք տուն, մերոնց մոտ:

— Հիմար տերտերի աղոթքն էլ հիմար կլինի,— նորից
զայրացավ Մնոգոգրեշնին:— Դու ինչ է, բոլորովին խելքդ
թոցրե՞լ ես, տղա: Էստեղից դեռ ոչ ոք չի փախել: Հանաք չէ,
աշխարհի կեսը ոտի տակ տուր, մինչև տուն հասնես: Եվ ամե-
նուրեք քեզ փորձանքներ են սպասում՝ անանցանելի ծովեր
ու գետեր, ենիչերիներ ու զինված թուրքեր, քաղց ու ծարավ:
Հեշտ է ասելը՝ փախեք: Իսկ դու մտածե՞լ ես, թե ոնց ես
անելու:

Բայց այստեղ Յացկոն մեջ ընկավ.

— Ուզես թե չուզես, քեռի Սվիրիդ, ստիպված ես փախչել:
Ինքդ էիր ասում, թե տերը մեր վերջը կտա...

— Դու էլ ես էդ մտքին,— տղայի վրա գոմոաց Մնոգոգրեշ-
նին:— Անխելք, մենք էստեղ համարյա թե ազատ էինք, կուշտ,
սկզոր չէինք... էլ ի՞նչ էր քեզ հարկավոր:

Զվենիգորան զայրույթով լցվեց: Ուրեմն ահա թե ինչ է երգում էս նգովյալ պոտորնակը: Նա թքած ունի ազատության վրա, հայրենի հողի վրա: Մենակ թե փորը կուշտ լինի, իսկ մնացած ամեն ինչը՝ գրողի ծոցը: Ախ, լավ կլինե՞ր թրով զարկեր սրա հիմար գլխին, որ հասած դգմի պես ճաքեր: Բայց չէր կարելի շարաշահել նրա հյուրասիրությունը: Դրա համար էլ զուսպ պատասխանեց.

— Ազատությունը բոլորին էլ հարկավոր է, քեռի Սվիրիդ: Մի՞թե քեզ չեն քաշում տունը, երեխաներդ, կինդ, հարազատներդ: Իսկ եթե նրանք չկան էլ, ապա մեր լայնարձակ տափաստանները պիտի ձգեն քեզ, որտեղ բուրում են ուրցն ու ցորենը, լորենին ու հնդկացորենը...

Մնոգոգրեշին քորեց փրշոտ ծոծրակը: Մի պահ աչքերում կրակ բռնկվեց, ինչ-որ մի հուշ վաղուց կորցրած կյանքի մասին, բայց իսկույն էլ հանգավ: Մանր, շար աչքերը նորից խեթ-խեթ նայեցին Զվենիգորային:

— Սիրտս տակնուվրա մի անի, զապորոժցի: Գնա հեռացիր, կորի աչքիցս:

— Եվ կգնամ: Դուք մնացե՛ք: Գրողի ծոցը թե չեք մնա,— բարկությամբ գոչեց Զվենիգորան ու հեծավ ձին:

— Արսեն, սպասիր,— մոտ վազեց Յացկոն:— Գալիս եմ քեզ հետ:

Նա թռավ նստեց ձիու գավակին, Զվենիգորայի ետևը, և մի ակնթարթում նրանք անհետացան ապուշ կտրած Մնոգոգրեշու աչքից, որը գլխահակ, կանգնած մնաց գետնին փոված տիրոջ դիակի կողքին:

ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

1

Մի քանի օր Զվենիգորան ու Յացկոն գնում էին լեռների ու հովիտների միջև ընկած ոլոր-մոլոր ճանապարհներով, մինչև որ հասան Կրզըլ-Իրմակի կանաչ ափերին:

Դաշույնը քարի վրա սրելով՝ Զվենիգորան սափրեց գլուխը,

խուղեց մորուքը և նմանվեց թուրքի: Ֆերհադի գեղեցիկ հագուստը շատ լավ էր սազում նրան: Նրա նիհարավուն դեմքը, խիտ մուգ շիկավուն հոնքերով ու կեռ քթով, գեղեցիկ էր ու հպարտ: Հանդիպող կարաթուրքերը, տեսնելով այդ մեծասոհմիկ երևելի մարդուն, հեռվից գլուխ էին տալիս, համարյա մինչև գետին խոնարհվելով:

Ֆերհադի ոսկեդրամներով լեցուն քսակը նրանց առջև բացում էր ճամփամերձ պանդոկների դռները: Ոչ ոք չէր համարձակվում հարցուփորձ անել երևելի ճամփորդներին՝ ովքեր են և ուր են գնում: Դա մի միտք հուշեց Զվենիգորային՝ այդ ձևով կտրել անցնել ողջ Թուրքիան և հասնել Սև ծով:

Նրանք լաստանավով անցան Կրզըլ-Իրմակի աջ ափը: Այժմ ճանապարհը անցնում էր գետի վրայով. մեկ հեռանում էր դեպի լեռները, մեկ մոտենում գետին: Առավոտից մինչև իրիկուն փախստականները համառորեն գնացին դեպի հյուսիս և երկու օրվա ընթացքում քսան փարախ ճանապարհ անցան:

Մի անգամ, երբ նրանք անցնում էին մի նեղ կիրճի միջով, մացառների ետևից դուրս թռան մի քանի զինված մարդիկ ու կտրեցին նրանց ճամփան:

Զվենիգորան կանգնեցրեց ձին: Սև, մոռյլ կերպարանքները, կարճ յաթաղաններն ու նիզակները ձեռքներին, հարձակվեցին նրա վրա: Մեկը բռնեց ձիու սանձը, մյուս երկուսը նիզակները դեմ արին նրան:

— Զիուց իջիր, էֆենդի,— հրամայեց առաջինը, աժդահա մի մարդ, սև շեշոտ դեմքով, որ չգիտես ծաղկից էր մնացել, թե վառվելուց:— Տեղ հասաք:

Զվենիգորան ցած թռավ ձիուց, բայց չէր հասցրել մի երկու-երեք բռունցքի հարված պարգևել հարձակվողներին, երբ նրան զինաթափեցին ու ձեռքերը կապեցին մեջքին:

Յացկոն քաշվել էր մի կողմ. բոլորը մոռացել էին նրան: Տեսնելով, որ իր վրա ուշադրություն չեն դարձնում, տղան կամացուկ ետ-ետ գնաց և ծլկեց թփերի մեջ:

Մինչ Զվենիգորան ուշքի կգար՝ պարանը գցեցին վզին ու հազիվ նկատելի անտառային կածանով քարշ տվին դեպի վեր:

Երկար զնացին: Ետևից բերում էին ձին: Առջևից ու կողքերից զնում էին պահակները՝ նիզակները ձեռքներին:

Վերջապես խումբը հասավ մի ոչ մեծ լեռանային լճի: Այստեղ, լճափին անցուղարձ էին անում բազմաթիվ զինված մարդիկ: Ժայռերի տակ գորշ վրաններ կային՝ թաղիքներով ծածկված: Վառվում էին խարույկները: Դրանց վրա եռոտանիներից կախված էին պղինձները:

Բացատի մեջտեղում, քարայրի առջև, ծաղկավոր գորգի վրա մարդիկ էին նստած: Զվենիգորային քարշ տվին նրանց մոտ: Նստածները հետաքրքրությամբ զննեցին Զվենիգորայի շքեղ հագուստներն ու զենքերը, որ զինվորները դրեցին նրանց առջև, գորգի վրա:

— Ո՞վ ես դու, — Զվենիգորային դիմեց Թուխմորուք, միջին տարիքի մի մարդ, որը, դատելով շորերից ու զենքից, գլխավորն էր:

— Նախ արձակեք ձեռքերս, — մռայլ ասաց Զվենիգորան, զգալով, թե ինչպես են ընդարմանում պինդ կապված ձեռքերը:

Թուխմորուքը գլխով արեց պահակներին, և նրանցից մեկը դաշույնով կտրեց պարանը:

— Բացի դրանից կուզենայի իմանալ՝ ում մոտ եմ ընկել և ինչ իրավունքով եք ինձ ձերբակալել:

— էֆենտի, երևում է, ալլահը խելքդ գլխիցդ առել է, — ձայնը բարձրացրեց Թուխմորուքը: — Քո հարցնելու ժամանակն անցավ: Հիմա պատասխանիր՝ ո՞վ ես դու: Անունդ ի՞նչ է:

— Ես ստրուկ եմ, — պատասխանեց Զվենիգորան: — Զապորոժցի կազակ:

— Օ՛, — Թուխմորուքը բազմանշանակալի բարձրացրեց ցուցամատը: — Ես ասացի չէ՞ էֆենտին վախից խելքը թոցրել է, կամ ծիծաղում է մեզ վրա: Բայց իզուր ես խորամանկում: Ախր անունդ փորագրված է զենքերի վրա, որ խել էն իմ զինվորները: Ճիշտ՞ է, պատվարժան էֆենդի Ֆերհադ:

— Ես Ֆերհադը չեմ... — սկսեց Զվենիգորան, բայց Թուխմորուքը նրա խոսքը կտրեց:

— Ինձ հերթաթներ մի՛ պատմի: Թե մտքովդ անցել է մեզ հիմարի տեղ դնել, Ֆերհադ, էնպիսի բան հնարիր, որ բանի նման լինի: Էդ ո՞ր միամիտը կհավատա, թե փախստական-

ստրուկը ազնվացեղ ձի ունի, թանկարժեք զինքեր, ընտիր շորեր և դրանց ավելացրած՝ դինարներով ու զուրուշներով՝ լեփլեցուն քսակ:

«Ի՞նչ պատասխանեմ սրան,— մտածեց Զվենիգորան:— Որ ես սպանել եմ Ֆերհադին ու խլել նրա ունեցվածքը: Բայց ով իմանա՞ թուխմորուքը ինչպես կընդունի... Արդյո՞ք չի հրամայի կախել մարդասպանության համար... Սակայն եթե պնդեմ իմ խոսքը, առանց բացատրելու, թե որտեղից եմ վերցրել Ֆերհադի իրերն ու դենքերը, նույնպես վտանգավոր է... Ոնց գցում բռնում եմ, ելք չկա... Ավելի լավ է ճշմարտությունն ասեմ»:

— Ես սպանել եմ Ֆերհադին և տիրացել նրա ունեցվածքին,— ասաց Զվենիգորան:— Եթե ուզում եք դատել ինձ, ապա դատեք իմ մեղքի համար և ոչ թե ուրիշի:

— Դա էլ նոր բան է,— քմծիծաղով քրթմնջաց թուխմորուքը և դարձավ իր օգնականներին...— Հը, բարեկամներ, ինչ եք ասում, այս անգամ հավատա՞նք սրան:

— Ես նրան կհավատամ միայն այն բանից հետո, երբ օղակը այդ շան վզին կլինի,— գոչեց շեշոտ աժդահան, որը ղեկավարում էր ճանապարհի հարձակումը: Նա շարությամբ նայեց Զվենիգորայի ուռած աչքին:

— Ես էլ չեմ հավատում,— վրա բերեց գորգի վրա, թուխմորուքի կողքին նստածներից մեկը:— Մենք լսել էինք Ֆերհադի դաժանությունների մասին, հիմա էլ լսեցինք նրա կեղծավորության մասին: Ես առաջարկում եմ սրան հարցաքննել կրակով: Տեսնենք, թե ինչ կերգի սպախիան, երբ բոբիկ ոտքերով սլար կգա կրակարանի վրա:

— Հա՛: Հա,— գլխով արեցին մյուսները:— Հարցաքննել կրակով:

Զվենիգորան սփրթնեց:

Թուխմորուքը ծափ զարկեց, մոտ վազեց մի ջահել զինվոր, որ մոտակայքում պահակ էր կանգնած:

— Կրակարանը բեր:

1 Դինար — հին արաբական ոսկեդրամ: Զուրուշ — ընդհանուր անվանումը եվրոպական արծաթադրամի, որ տարածված էր Օսմանյան կալսրությունում:

Շուտով բերին կրակարանը վառվող ածուխներով ու դարբնի գործիքներով՝ աքցան, մուրճ, մի կարճ երկաթաձող: Կրակարանին մոտեցավ վնասված աչքով աժդահան, երկաթաձողը դրեց կրակի մեջ:

— Դե, հիմա Օձ Ահմեդը սրան կստիպի խոսել: Նա կբացի սրա լեզուն, — ձայնեցին այս ու այն կողմից:

Զվենիգորան դուրս պրծավ պահակների ձեռքից, բայց ինչ-որ ծանր բանով հարվածեցին նրա գլխին և օղապարանը գցեցին վիզը:

— «Ըհը՛, — մտածեց նա, — խաթի մեջ ընկա: Դեհ հիմա փորձիր դուրս պրծնել»:

— Սկսիր, — հրամայեց Թուխմորուքը:

Զվենիգորային պարանից բռնած քարը տվեցին կրակարանի մոտ:

— Սպասեք, սպասեք, — գոչեց նա: — Երգվում եմ, — ես Ֆերհադը չեմ: Ես զապորոժցի եմ: Ստրուկ...

— Վառեք դրան: Նա շուտ-շուտ է խոսքը փոխում, — գոռաց Թուխմորուքի շքախմբից ինչ որ մեկը:

Օձ Ահմեդը աքցանով բռնեց շիկացած երկաթաձողը և մոտեցրեց Զվենիգորայի ոտքին: Դարբնի մրոտված դեմքին մի պահ շփոթմունք երևաց:

Նա առաջին անգամ էր մարդ տանջում, և իր նոր պարտականությունը դեռ չէր վարժվել: Բայց նրան հետևում էին Թուխմորուքի և ջոկատի մյուս մեծավորների տիրական հայացքները. նրանք հարկադրում էին, հրամայում էին: Եվ դարբինը, աչքերը կկոցելով, շիկացած երկաթը դանդաղ մոտեցրեց կենդանի մարդկային մարմնին:

Հանկարծ այստեղ լսվեց մի սուր ճիչ: Աքցանը դողաց դարբնի ձեռքում, և երկաթաձողն ընկավ գետին:

Զինվորների ամբոխը ճեղքելով առաջ եկավ քրշոտ, նիհար մի մանչուկ, ամբողջ ուժով մի կողմ հրեց Օձ Ահմեդին և ընկավ Զվենիգորիայի ոտքերը:

— Ձեռք չտաք, — բացականչեց նա: — Ինչի՞ համար եք նրան տանջում:

Դա Յացկոն էր: Տղայի կապույտ աչքերը սարսափով նայեցին շիկացած երկաթին: Զախ ձեռքով նա գրկեց Զվենիգոր-

բայի ոտքերը, իսկ այլ վեր բարձրացրեց, կարծես պատրաստ-վում էր սլաշտպանվել հարվածից:

Օձ Ահմեդը, ամաշելով իր փոքրոգութունից, հսկա բռունցքը բարձրացրեց տղայի վրա, բայց Թուխմորուքը կանգ-նեցրեց նրան:

— Սպասիր: Վեր հանիր էգ բրջոտին: Ո՞վ է:

Տղային ոտքի կանգնեցրին: Յացկոն արագ-արագ վրա տվեց.

— Ահա, տեսեք, սա գերի է. իմ լարեկամ Աբսեն Չվենի-գորան: Նա Համիդ բեյի ստրուկն էր և փախավ նրանից: Նա-լեր նրա ձեռքերին ու ոտքերին, դրանց վրա գեռ մնում են կալանդների հետքերը:

Նա, հիշելով, թե այդ բանը ինչպես արեց Ֆերհապը, արագ վեր քաշեց Չվենիգորայի թևքերը: Բոլորն էլ տեսան ալ կար-միր հետքերը դաստակից վեր, նայեցին իրար երեսի: Թուխ-մորուքը գոչեց.

— Ալլահի բարկութունը ձեր գլխին թափվի: Ի՞նչ է նշա-նակում էս բոլորը:

— Դա նշանակում է, ատաման, որ դու բիշ մնաց սխալ-վելիք, երբ հրամայեցիր՝ տանջել կրակով, — պատասխանեց Չվենիգորան՝ հասկանալով, որ փրկվել է կտտանքներից: — էս տղան Ֆերհազի հովիվն է: Նա կարող է պատմել, թե ևս ինչպես սպանեցի իր տիրոջը:

Բայց ոչ Յացկոյին, ոչ էլ Չվենիգորային այլևս հարկ չե-ղավ իրենց պաշտպանելու:

Հանկարծ բացատում աղմուկ բարձրացավ, լսվեցին բա-ցականչություններ և Թուխմորուքին մոտեցավ մի ձիավոր՝ մոխրագույն ջեբբեով ու երկնագույն շալմայով, որ ստվերում էր ղեմքը: Նա ձիուց իջավ ու ողջունեց.

— Սալամ:

— Սալամ: Ալլահը թող բեզ պահպանի, Բեքիր, — տեղից ելավ Թուխմորուքը: — Ի՞նչ նորութուններ կան:

— Մենք բռնեցինք Համիդ բեյի սուրհանդակին, որ գնում էր փաշայի մոտ: Համիդ բեյը իր ամբողջ պաշտպանելու հա-մար ձիավորների մի ջոկատ է խնդրում: Իսկ այժմ գինել է ծառաներին, ուժեղացրել է հսկողութունը և իբր որջից քիթը դուրս չի հանում: Ինձ հաջողվեց սպասավորուհու անվան տակ

ամբողջ ուղարկել մի կնոջ. նա հայտնեց, որ իմ աղջիկ Իրազը էնտեղ է, ալլահը թող նրան երկար կյանք տա: Նա հայտնեց նաև, որ այս գիշեր արևելյան աշտարակի պատուհանից մի քար կշարտի, որից կապված կլինի ճուպանասանդուղը...

— Դա հո հրաշալի բան կլինի, Բեքիր: Հաշվիր որ ամբողջ արդեն մեր ձեռքում է: Հենց այսօր մենք նզովյալ Համիդ բեյի հաշիվը կմաքրենք: Դու մեծ ծառայություն մատուցեցիր ինձ, բարեկամս: Թեև ընդամենը երկու շաբաթ է, որ ջոկատում ես:

— Ես հասկանում եմ բո ուրախությունը, Մուսթաֆա, Ձէ՞ որ մեզ կապում է մեր թշնամու նկատմամբ ունեցած ընդհանուր ատելությունը: Բայց դեռ վաղ է ուրախանալ: Համիդ բեյը խորամանկ է աղվեսի պես, իսկ նրա ամբողջի պատերը շատ բարձր են: Միայն ալլահի ողորմածությունը կարող է օգնել մեզ՝ գրավելու Ակսու ամբողջը:

— Թող փառավորվի նրա անունը, — բարեպաշտորեն ձեռքերը խաչեց Մուսթաֆա Թուխմորուքը: — Բեքիր, դու գնա արշավից առաջ մի քիչ հանգստացիր, իսկ մենք կնախապատրաստվենք: Բայց նախ մաքրենք էս մարդկանց հաշիվները, որոնք իրենց ստրուկներ են համարում:

Բեքիրը շուրջը նայեց, և նրա աչքերը դարձանքից շովեցին: Նա ճանաչեց Չվենիգորային.

— Ալլահ ակրեր, Ախր սա Արսունն է: — Եվ դարձավ ջոկատի գլխավորին. — Մուսթաֆա, ի՞նչ մեղք է գործել իմ բարեկամը, որ ուզում ես տանջել նրան: Ես էստեղ տեսնում եմ կրակարանն ու Օձ Ահմեդին: Չլինի՞ դու տանջել ես կրակով:

Այս խոսքերի հետ Բեքիրը Չվենիգորայի վզից պոկեց օղապարանն ու գրկեց կաղակին:

Խուլ դժգոհություն տարածվեց ամբոխի մեջ: Թուխմորուքը ձեռքերը տաբածեց, շիմանալով՝ ուրախանա, թե բարկանա դեպքերի այդպիսի անակնկալ շրջադարձից:

Իսկ կապանքներից ազատված Չվենիգորան գրկելով մի կողմից Բեքիրին, մյուս կողմից Յացկոյին, ուրախ փայլեցրեց ճերմակ ատամները և դիմելով Մուսթաֆային՝ ասաց.

— Մուսթաֆա աղա, հիմա դու գիտես, թե ով եմ ես... Քո բարեկամի բարեկամը բո թշնամին լինել շի կարող: Եթե դու ինձ վերադարձնես Ֆերհադի ղենքերը, կամ ուրիշը տաս,

ապա քո շարքերը կհամալրես ևս մի ռազմիկով, որը Համիդ բեյին ավելի պակաս չի ատում, քան դու և Բեքիրը:

— Վերադարձրու նրա զենքերը, Մուսթաֆա, խնդրում եմ քեզ,— Թուխմորուքին դիմեց Բեքիրը:— Արսենը բոլորիցս լավ գիտե Ակսու ամրոցը: Նա երկար ժամանակ եղել է Համիդ բեյի ստրուկը և գիշերային գրոհի ընթացքում կօգնի մեզ:

— Բայց նա ախր գյավուր է...

— Է՛, հետո ինչ: Համիդ բեյը ուղղափառ մուսուլման է, համա օտարից ավելի վատ է թալանում ու կողոպտում մեզ, ծաղրածանակի է ենթարկում մեր ազջիկներին, խլում մեր հողերը...

Թուխմորուքը հայացքը շրջեց իր զինվորների կողմը: Բոլորը սպասում էին նրա պատասխանին:

— Ի՜շ ալլահ: Թող ալլահի կամքը լինի,— հանդիսավորությամբ ասաց նա:— Զենքերը վերադարձր՛նք էս քաջ գյավուրին, որը հաղթել է կատաղած շուն Ֆերհադին: Մենք հույսով ենք որ հյուսիսային գայլը կօգնի մեզ՝ պատառոտելու շախկալին՝ Համիդ բեյին: Իսկ հիմա բոլորը պատրաստվեն արշավանքին: Դուրս կգանք, հենց որ էշեկ-Դադի ստվերը ընկնի գիմացի ժայռին:

2

Ակսու հասան կեսգիշերին: Այնտեղ նրանց զիմավորեց Իսմեթը, որին Բեքիրը թողել էր, որպեսզի հսկի ամրոցին: Չորս կողմը լուռ էր: Ամրոցը քնած էր. Համիդը հարձակման չէր սպասում: Միայն արևելյան աշտարակի նեղ հրակնատում թարթում էր մենավոր դեղին կրակը:

Մուսթաֆան մարդկանց բաժանեց երեք խմբի: Զվենիգորան ու Յացկոն ընկան Բեքիրի ջոկատը, որի վրա էր գրված ամենակարևոր առաջադրանքը՝ աննկատելիորեն թափանցել ամրոց և բացել դարպասը:

Բեքիրը կարճ հրաման տվեց, և բոլորը շարժվեցին նրա ետևից, թաքնվեցին ճիշտ արևելյան աշտարակի զիմաց գտնրվող խանդակի մեջ: Ամրոցի ատամնավոր պարիսպների ուրվապատկերները հսկա մողեսի թեփուկավոր մեջքի էր նմանվում:

Մեկ ժամ անց, որը խռովարարներին հավիտենություն թվաց պարսպաստամների արանքում հայտնվեց սև շալի մեջ փա-

թաթված կնոջ մի կերպարանք և պատի վրայով ցած սահեց պարանասանդուղքը:

— ժամանակն է,— շշնջաց Բեքիրն ու վեր մազլցեց:

Նրա ետևից բարձրացավ Զվենիգորան: Մեկը մյուսի ետև-վից նրանց միացան: նաև մյուսները: Վերջինը բարձրացավ Իսմեթը: Նա վեր բեշեց սանդուղքը և զգուշությամբ իջեցրեց բակ: Այնտեղ մութ էր, ոնց որ ջրհորում: Միայն պահակատնակում թույլ առկայծում էր մոմի լույսը:

— Առաջինը ես կիջնեմ,— ասաց Զվենիգորան:— Ես գիտեմ ինչպես պետք է բացել դարպասը:

— Կավ,— համաձայնեց Բեքիրը:

Զվենիգորան զգուշությամբ սկսեց իջնել բակ: Վիթխարի սև թռչունի նման նա դանդաղ օրորվում էր ճոճվող սանդուղքի վրա և ավելի ու ավելի ցած իջնում:

Սանդուղքի վրայից աշտարակի լուսամուտից ներս նայելով՝ նա տեսավ երեք պահակներին, որոնք մոմի լույսի տակ դումար էին խաղում: Հակառակ տիրոջ հրամանին՝ նրանք թողել էին իրենց պահակակետերը և գիշերը կարճացնում էին ավելի հաճելի զբաղմունքով: Սեղանի վրա արծաթյա ակշեների՝ կույտեր կային: Մոմի թխակապույտ ծուխը բարձրանում էր դեպի առաստաղ:

Զվենիգորան բթի տակ ծիծաղեց, պատկերացնելով, թի ինչպես կայլավեն նրանք, երբ մի րոպե հևտո ինքը կրացի դարպասը, և ապստամբները կներխուժեն ամբողջ Բայց հենց այդ պահին երկրորդ հարկի ներքին սենյակներից կանացի հուսահատ մի ճիչ լսվեց: Ծիչը անմիջապես էլ կտրվեց, ընդհատվելով ամենաբարձր նոտայում, սակայն հասցրեց խառնել Զվենիգորայի բոլոր հաշիվները:

Պահակները ճիչը լսելուն պես վեր թռան տեղներից ու նետվեցին դեպի գնեքերը: Նրանցից մեկը շուռ տվեց մոմը: Մթնեց: Լսվեցին հայհոյանքներ: Դռները շրխկացին:

Զվենիգորան թռավ գետին: Ծրթճրթացին թփերը, դիվղբիկաց մի դատարկ տակառ, որ չգիտես ինչու դրված էր անկյունում:

Զվենիգորան վազեց դեպի աշտարակ: Այստեղ նրա դեմ

1 Ակշե (թուրք.)—թուրքական մանր դրամ:

դուրս եկավ վախեցած ժամապահը: Տեսնելով թրի շողքը, նա նետվեց հակառակ կողմը, սակայն Զվենիգորան հասցրեց ոտք գցել, և ժամապահը փռվեց գետնին:

Վերևում ինչ-որ տեղ վառվեց ջահը, խռովահույզ ձայներ լսվեցին:

Ընկերներին չսպասելով՝ Զվենիգորան փոթորկի նման սլացավ դեպի դարպասը: Թրի դաստակով դուրս գցեց ծանր կաղնե սեպը, և ապստամբների ճնշման տակ, որ սեղմում էին դրսից, դարպասի դռները կրնկի վրա բացվեցին: Ամբոխը ահեղ մոնչոցով լցվեց ամրոցի բակը:

Հարեմի վերին պատշգամբից մի քանի կրակոցներ թնդացին: Վառվեցին ջահերը՝ լուսավորելով բակը:

Դուրս վազեց Համիդի պահակախումբը: Զեռնամարտ սկսվեց: Զվենիգորան բոլորի հետ միասին վազեց, թրատեց, սպառնալիքներ տեղաց: Երբ առաջին հարձակումը իրենց վրա ընդունած պահակներն ընկան, երբ ապստամբները գրոհեցին տան վրա, պատշգամբից ու լուսամուտներից նրանց զխններին մետաղյա աշտանակներ, ապակյա սկահակներ, կավե կճուճներ, գորգեր, փետրաներքնակներ, ծանր կաղնե օթոցներ ու ամաններ թափվեցին:

— Դռները փակեք: Պահարանները դեմ արեք դռներին, — վերևից լսվեց Համիդի ձայնը: — Մենք ատրճանակներով կռչելացնենք էդ գարշելիներին:

— Ահ, դու որտեղ ես, կատաղած չախկալ, — կանչեց Մուսթաֆա Թուխմորուքը: — Երդվում եմ ալլահով, հասել է քո մահվան ժամը: Դուրս արի, վախկոտ, դուրս արի էստեղ, ազնիվ մարտ մղենք: Ես վրեժ կլուծեմ իմ ընտանիքի համար, որին դու դռնեդուռ գցեցիր, երբ ես մեր փազիշահին էի պաշտպանում անհավատներից: Իմ հողի համար, որը զավթեցիր դու խորամանկությամբ ու խաբեբայությամբ: Մեր աղջիկներին ու քույրերին անարգելու համար... Լո՞ւմ ես: Վախենու՞մ ես: Դու գիտես, ստոր արարած, որ բեղ գթություն չկա, և դողում ես քո գարշելի կյանքի համար: Դողում ես: Շուտով դու մեր ձեռքում կլինես... Հե՛յ, բարեկամներ, կրակ էստեղ բերեք, ծուխ տանք՝ աղվեսին բնից դուրս հանենք:

— Սպասիր, Մուսթաֆա, — կանչեց Բեքիրը: — Իմ աղջիկ իրազն էնտեղ է: Վառելու կարիք չկա: Մենք առանց դրան էլ

կրճենք Համիդին ու նրա շներին: Իսմեթ, Արսեն, բարեկամներ, մի գերան բերեք, դուռը ջարդենք: Համիդին ողջ-ողջ բռնենք:

Կովից տաքացած ամբոխը աղմուկ-աղաղակով, գոչյուններով մոտեցավ և ամուր գերաճով հարվածներ տեղաց կաղնեփայտ դռանը՝ մեկ, երկու... Փայտը ճրթճրթաց: Յնցվեցին բարե պատերը: Ապստամբները ներս թափվեցին մութ որմնախորշից, որտեղից փայլկտում էր կրակոցների բոցը:

Զվենիգորան առաջիններից մեկը ներս ընկավ, նրա հտևից ջահը ձեռքին վազում էր Յացկոն: Տղան ոչ մի բայլ ետ չէր մնում իր ավագ ընկերոջից:

Սելամիկի մութ ու մռայլ միջանցքներում, ջահերի արնագույն ցուբերի մեջ, Զվենիգորան իսկույն ճանաչեց Համիդ բեյին, որը դուրս վազեց կողքի սենյակից և, ապստամբներին տեսնելով, ծլկեց մի կողմի վրա:

— Կանգնի՛ր: Կանգնի՛ր, — գոռաց կազակն ու կրակեց: Բայց զնդակը, երևում է, չկապվ նրան, որովհետև սուլախիայի հաղթանդամ կերպարանքը անհետացավ մթության մեջ: Դիմացից դուրս սլացան Համիդի պահակները՝ Օսմանն ու Սուլեյմանը: Ճանաչելով գերուն՝ անեծքներ ու հայհոյանքներ տեղալով, մոնչյունով նետվեցին նրա վրա:

Ազատ տարածության մեջ նրանք, անշուշտ, առավելություն կունենային, բայց այստեղ, նեղվածք շինության մեջ, որ լուսավորվում էր միայն Յացկոյի ջահով, խանգարում էին միմյանց, և Զվենիգորան նրանց սեղմեց փոքրիկ հարթակին, որ սելամիկը միացնում էր հարեմին:

Հարթակում իսկույն ազատ զգացին իրենց: Օսմանը, որն ավելի խորամանկ էր ու հնարամիտ, Սուլեյմանին թողեց մեն-մենակ կռվելու Զվենիգորայի դեմ, իսկ ինքը մթության մեջ անցավ սյան ետևը, որպեսզի թիկունքից հարձակվի կազակի վրա:

— Արսեն, — թշնամուն նկատելով՝ գոռաց Յացկոն:

Բայց կովի թունդ պահին կազակը շսեց նրան. ետ մղելով Սուլեյմանի հարձակումը՝ թրի շեղբով խոցեց նրա կուրծքը:

Զմտածելով մահացու վտանդի մասին՝ Յացկոն կտրեց Օսմանի ճանապարհը, և երբ սա արդեն թուրը բարձրացրել էր Զվենիգորայի վրա, վառվող ջահով հարվածեց նրա դեմքին:

Սրտապատառ ճիշդ խլացրեց կովի աղմուկն ու դղրդոցը։ Օսմանը ցած գցեց թուրը և ետ-ետ գնալով ձեռքերով ծածկեց գեմքը։ Կաուկը մի կողմ թռավ գլխից։ Կայծակի նման շողաց Ջվենիգորայի սուրը և իջավ թշնամու փայլուն, ածիլված գազաթին։

Օսմանը դանդաղ տապալվեց գետին և խուլ դղրդոյունով փայտե աստիճաններով ցած գլորվեց։

— Շնորհակալութուն, ախպերս,— Ջվենիգորան գրկեց տղային։— Կեցցե՛ս։ Քեզանից իսկական զինվոր դուրս կգա։ Վերցրու Օսմանի թուրը. դա օրենքով քոնն է։

Ցացկոն հափշտակեց թուրը։ Գովեստից թևավորված՝ կարծես մեծացավ, բոյ քաշեց և պատրաստ էր գնալ Ջվենիգորայի ետևից ուր նա կասի, թեկուզ դժոխք։

Այդ ընթացքում Թուխմորուքի մարդիկ ներխուժեցին հարեմ։ Այնտեղից լսվում էին կանացի հուսահատ վայնասուն ու երեխաների լացուկոծ։

Առջևից սլանում էր Իսմեթը։ Ջահը մի ձեռքում, թուրը մյուս ձեռքում՝ նա վազում էր նեղ միջանցքներով։ Ոտքով տեղահան անում սենյակների դռները։

— Իրա՛գ, Իրա՛գ,— կանչում էր նա սուր ձայնով։

Թայց նրա կանչերը խեղդվում էին ընդհանուր աղմուկի և սուգուշիվանի մեջ։ Իրազը չէր արձագանքում։ Հավանաբար նա հարեմում չէր։ Մահու շափ վախեցած հարեմի կանայք երգվում էին, որ առաջին անգամ էին լսում Իրազ անունով աղջկա մասին։

Ապստամբները, որ լցվել էին հարեմը, սենյակներից դուրս էին տանում հագուստներ ու թանկարժեք իրեր և ամենից քիչ մտածում էին Իրազի մասին, թեև գիտեին, որ նա իրենց ընկերներից մեկի աղջիկն է։ Իրենց գոռգոռոցներով, վազվրջատութով ու հայհոյանքներով նրանք խանգարում էին Իսմեթին։ Նա, կորցնելով իր նշանածին գտնելու հույսը, նետվեց դեպի ելքը։

Այստեղ նրա բախտը բերեց. դեմ առ դեմ ընդհարվեց հաստիկ ներքինի Ալի Ռեզային, որը ջանում էր թաքնվել անկյունում։

Իսմեթը ուրուրի նման կպավ նրանից, սեղմեց պատին։

— Որտե՞ղ է Իրազը, կզլար աղա՛, ասա ինձ, որտե՞ղ է Իրազը:

Սարսափից չոված աչքերով՝ նա նայեց տղային ու չճանաչեց: Միայն ինչ-որ բան ծվծվաց:

Իսմեթը կրկնեց հարցը.

— Զգիտեմ... Աստված վկա, շգիտեմ,— պատասխանեց ներքինին:

— Ես քեզ կսպանեմ կեղտոտ խոզի պես, Ալի Ռեզա, և քո ճարպոտ դիակը շախկալները կխժռեն, եթե շասես, թե Համիդը որտեղ է թաքցրել Իրազին: Լսո՞ւմ ես: Դե պատասխանիր:

Նա բարձրացրեց յաթաղանը:

Ներքինին ճղճղաց ու ձեռքերով դեմքը ծածկեց.

— Կասեմ... կասեմ, բարբի աղա,— ծվծվաց նա և դսնդաղ, պարկի նման տապալվեց գետնին:

Իսմեթը գետնից բարձրացրեց ու ցնցեց սարսափահար եղած կզլար աղային:

— Որտե՞ղ է Տար նրա մոտ...

Ներքինին թեք աստիճաններով պատանուն տարավ ձեղնահարկ: Իսմեթը, մի ձեռքով ջահը բռնած, ետևից թրով բոթում էր ներքինուն: Զեղնահարկի մուտքի առաջ ներքինին կանգ առավ ու լուռ մատնացույց արեց փայտե պահարանը:

— Որտե՞ղ,— չհասկացավ Իսմեթը:

— Պահարանը բաց, այնտեղ մի դուռ էլ կա, որ տանում է գաղտնի սենյակ, որի մասին քչերը գիտեն: Իրազը էնտեղ էր:

Իսմեթը թափով ըացեց պահարանի դռնակը, դուրս շարտեց այնտեղ կախված հին քրջերը: Եվ իսկապես տեսավ դուռը: Ներքինին չէր ստել: Փականքի մեջ ցցված էր մեծ բանալին: Իսմեթը պտտեց բանալին, դուռը ճռոպլով բացվեց:

— Իրազ, ես եմ, Իսմեթը: Դու էստե՞ղ ես, Իրազ,— խավարի մեջ ձայնեց նա՝ չհամարձակվելով ներս մտնել, վախենալով, թե ներքինին դուռը կփակի իր վրա:

Խավարը լուռթյամբ պատասխանեց նրան:

Իսմեթը լուսավորեց ջահով: Կարմրավուն լույսը մի պահ

1 կզլար աղա (թուրք.) — հարեմի վերակացու: Բառացիորեն՝ կանանցի պետ:

մթության միջից դուրս կորզեց աղջկա կերպարանքը, մարմնի երկարութեամբ կախ ընկած անկենդան սպիտակ ձեռքերը, փոքրիկ բոբիկ ոտքերը:

— Իրա՛զ, — մի վայրի ճիշդ դուրս թռավ Իսմեթի կրծքից և զրնգոցով թավալվեց քիվերի տակ: — Իրա՛զ...

Մահու շափ վախեցած Ալի Ռեզան թավալզոր ցած սլացավ:

Իրազը լուռ էր: Բարակ պարանը լարի նման պրկել էր նրա պարանոցը: Իսմեթը թրով կտրեց պարանը, և աղջիկը ընկավ նրա գիրկը:

Իրազի սառը մարմինը այնքան օտար, այնքան ծանր թվաց տղային, որ նա քիչ մնաց ցած գցեր:

Իսմեթն զգուշութեամբ տարավ Իրազին, երեխայի պես գրկած, նայելով նրա կիսաբաց աչքերին, իսկ կրծքից տաք, խոսքեր դուրս թռան.

— Իրազ, հոգիս, ինչո՞ւ այդ բանն արեցիր: Ինչո՞ւ շապասեցիր ինձ, շխորհրդակցեցիր ինձ հետ: Գու ի՞նչ մեղք ունեիր, իմ գարնան ծաղիկ, ո՞ր ցուրտ, դաժան ձեռքը քեզ պոկեց: Ախր ինչո՞ւ շապասեցիր, հոգիս...

Նա գնում էր դանդաղ, ասես դատաստանի էր տանում: Նրա ետևից գնում էին ապստամբները, և նրանց ուղեկցող գերեզմանային լուսյունը փոթորիկից ավելի ահավոր էր:

Միջանցքում, ելքի դռան մոտ տխուր ու մռայլ թափորի գեմ դուրս եկավ Բեքիրը: Նա հեռվից ճանաչեց Իրազին: Ուղեց գոռալ, բայց նրա կրծքից միայն խուլ հառաչանք դուրս թռավ: Իսմեթը նրան մեկնեց իր ծանր բեռը:

— Վերցրու, հայր, — խեղդված ձայնով ասաց նա: — Իրազը չի կամեցել իր խայտառակությունը տանել, չի կամեցել նայել մեր աչքերին... Անխե՛լք... բայց, երզվում եմ ալլահով, ես դաժանորեն վրեժ կլուծեմ: Բարեկամներ, որտե՞ղ է Համիզը: Որտե՞ղ են նրա նգովյալ շան ձագերը: Ուզում եմ տեսնել, թե ինչպես է հոսում նրա արյունը, նրա երեխաների արյունը...

Խելաչարի նման նա դեպի հարեմ վազեց: Կանանց ու երեխաների ականջ ծակող ճիշը ցնցեց ամբողջը: Սակայն նա չկարողացավ կանգնեցնել պատանուն և այն ապստամբներին, ովքեր վազում էին նրա հետևից: Նրանք մորիկի նման ներս

թափվեցին սենյակները, և նրանց սրերը մահ սփռեցին՝ շխնա-
յելով ոչ կանանց, ոչ երեխաներին...

Միջանցքով մեկ, ինչպես բուք ու ձյուն, պտույտ էին գա-
լիս պատահողոված ներքնականներից թափված ճերմակ փետուր-
ները: Հատակի վրայով կարմիր առվակներ էին հոսում: Վայ-
րենի աղմուկ-աղաղակի վրա հարեմ մտավ Ջվենիգորան:
Նրան թվաց, թե ապստամբները բռնել են Համեղին, և ուրա-
խությունից են այգպիսի աղմուկ բարձրացրել: Սակայն գեր-
ված սպախիայի փոխարեն տեսավ մի գարհուրելի տեսարան:

Միջանցքի ծայրին, փակ դռան առաջ, մի պառավ կին
փակեց Իսմեթի ճանապարհը: Պառավի հագուստներից Ջվե-
նիգորան գլխի ընկավ, որ նա դայակ է: Իսմեթը ուղեց մի կողմ
հրել պառավին, բայց նա կատվի նման ամուր կառչեց Իս-
մեթից, թույլ չտալով նրան ազատորեն բանեցնել թուրը:

— Ներս մի՛ մտնի: Աղաչում եմ քեզ,— գոչեց կինը:—
Մի՛ սպանիր Ադիկեին: Նա Համիդի աղջիկը չէ...

Ադիկե անունը լսելով՝ Ջվենիգորան առաջ նետվեց:

— Կորի՛, պառավ ջադու,— մոնչաց Իսմեթը,— թո՛ղ ինձ:
Մահ Ահմեդի ազգուտակին:

— Խելագար: Ուշքի արի: Ադիկեն ինքը Համիդի զոհն է:
Նա բուլղար վոյեվոդայի դուստրն է: Նրա անունը Չլատկա է:
Խնայիր նրան... աղա: Ծս էլ եմ բուլղարացի: Համիդը ինձ
Բուլղարիայից բերեց, որպեսզի խնամեի աղջկան, քանի դեռ
նա փոքր էր:— Մարդ եղիր... Ուշքի արի: Ավելի լավ է ինձ
սպանիր, բայց նրան ձեռք մի՛ տա...

Ջվենիգորան, լսածից ապշած, քարացավ տեղում:

Իսկ Իսմեթը չհասկացավ պառավի հուսահատությամբ լի
խոսքերի իմաստը: Նա իրենից պոկեց պառավի շորացած
ձեռքերը, ետ հրեց դեպի պատը և թրով հարվածեց: Կինն ըն-
կավ: Իսմեթը ոտքով դուռը ջարդեց: Սենյակից աղջկական
հուսաբեկ ճիչ լսվեց:

— Իսմեթ, սպասիր,— գոչեց Ջվենիգորան՝ Իսմեթի ետե-
վից սենյակ վազելով ու նրա ճամփան փակելով:— Կաց, աղջ-
կան ձեռք չտաս:

Իսմեթը կարծես չհասկացավ, թե կազակը ինչ է ուզում
իրենից: Արնակալած աչքերով նա մոռյլ նայեց Ադիկեին, որը
կանգնել էր անկյունում դրված մահճակալի վրա, սպիտակ

գիշերաշապկով, ձեռքերը կրծքին խաշած: Նրա աչքերում սարսափ էր երևում: Մեռելային գունատութունը պատել էր դեմքը: Նա, ինչպես երևում էր, չճանաչեց Զվենիգորային, նրան ևս համարելով մարդասպան:

Տեսնելով, որ Իսմեթը փորձում է շրջանցել իրեն ու թրով զարկել աղջկան, Զվենիգորան բռնեց նրա ձեռքը՝ և ամբողջ ուժով ետ ուղորեց: Իսմեթը ճշաց սուր ցավից: Թուրը գետին ընկավ:

Ցավը սթափեցրեց ըմբոստին:

— Ի՞նչ ես ուզում, Արսեն: Ինչո՞ւ խանգարեցիր ինձ:

— Ուզում եմ, որ էդ աղջկան ձեռք շտաս: Դու հո լսեցիր. նա ինքը Համիդի գոհն է: Հասկանո՞ւմ ես:

Զվենիգորան բաց թողեց տղայի ձեռքը: Իսմեթը, գլուխը կախ, մի քիչ լռեց, ապա պատասխանեց.

— Ինչ ուզում ես, արա: Ինձ համար մեկ է: էլ չկա իմ Իրազը: Զկա իմ երջանկութունը...

Նա վերցրեց թուրն ու դուրս վազեց սենյակից:

Արսենը շրջվեց Ադիկեի կողմը: Աղջիկը դեռևս չէր հավատում, թե վտանգն անցել է: Կանգնել էր անկյունում և սարսափից չոված աչքերով նայում էր արյան շիթին, որ բարակ օձի նման միջանցքից սողում էր սենյակ:

— Ադիկե, ինձանից մի վախենա,— ասաց Զվենիգորան՝ ձեռքը նրան մեկնելով:— Արի էստեղ: Ես քեզ կպաշտպանեմ: Դեհ, գնացինք: էստեղ մնալը վտանգավոր է: Ցած իջիր մահճակալից, Ադիկե... Ավելի լավ է քեզ Զլատկա անվանեմ... Քեզ ծանոթ է այդ անունը: Հենց նոր քո դայակն ասաց...

— Որտե՞ղ է նա,— շնչաց աղջիկը, հայացքը չկտրելով արյան վտակից, որ արդեն հոսել էր սենյակի մեջտեղը:

— Նա այլևս չկա... Բայց իր մահով նա փրկեց քեզ...

Աղջիկը ձեռքերով ծածկեց դեմքը: Ուտերը ցնցվեցին հեկեկոցից: Արսենին թվաց, տեսնում է, թե նուրբ գիշերաշապիկի տակ ինչպես է թպրտում նրա սիրտը: Նա խեղդված ձայնով ասաց.

— Լաց մի՛ լինի... Հագնվիր շուտ, ես կսպասեմ դուան մոտ: Կազակը դուրս եկավ, պառավի դիակը քարշ տվեց հարևան սենյակը, որպեսզի աղջկա աչքին չընկնի:

Բակից լսվում էր ապստամբների ուրախ բացականչու-

թյունները: Յացկոն էլ չքվել էր ինչ-որ տեղ: Բայց հիմա Արսենը տղայի համար չէր վախենում: Փոքր չէ, գինվոր է արդեն և դա ապացուցեց կովում: Նա մտածում էր, թե ինչպես վարվի Զլատկայի հետ: Ո՞ւր տանի: Իր հետ ջոկա՞տ: Իսկ հետո՞...

Շուտով աղջիկը հագնված դուրս եկավ:

— Գնանք,— ասաց Արսենը և բռնեց նրա ձեռքը:— Ինձանից ետ մի՛ մնա:

Բակում վազելով նրանց մոտեցավ Յացկոն՝ հուզված, վառվռող աչքերով:

— Արսեն, ես ամեն տեղ քեզ եմ փնտրում: Հարկավոր է գերիներին բաց թողնել: Ես էնտեղ էի, բայց չկարողացա դուռը բանալ...

— Յացկո,— խստությամբ ասաց Զվենիգորան,— ես քեզ եմ հանձնում էս աղջկան, լավ նայիր... Կլխովդ ես պատասխանատու նրա համար: Էնպես որ ոչ մեկը մատով չդիպչի նրան, հասկացա՞ր: Սա Ադիկենն է: Զլատկան: Քեզ պատմել եմ նրա մասին: Դու նայիր... Ես գնամ նկուղի դուռը բացեմ:

— Հասկացա,— ասաց տղան, բայց դատելով այն բանից, թե նա ինչպես նայեց աղջկան, երևաց, որ դա բնավ էլ դուր չեկավ նրան: Սակայն Զվենիգորային հակառակել չհամարձակվեց, պատասխանեց մեծավարի, լուրջ.— Դե որ պետք է, ինչ անեմ...

Մինչ այդ երկինքը դարձավ վառ կապույտ, նույնիսկ փիրուղագույն: Ինչ-որ տեղ լեռների ետևում մայր մտավ արևը: Խոտվարարները բակ դուրս բերին թանկարժեք իրերը, դենքերը, մառաններից ուտելիքի սլաշար քարշ տվին: Զորս կողմը կանգնած էր այն նույն գոռոցոցը, աղմուկ-աղաղակը, որ այնքան բնորոշ է արևելյան շուկաներին:

Զարդելով նկուղի դռան փականքը՝ Զվենիգորան վաղեց ներքև: Գերիները վազուց քնած չէին: Կրակոցներից ու գոռոցոցներից արթնանալով՝ նրանք խոնվել էին պատուհանի մոտ փորձելով հասկանալ, թե ինչ է կատարվում վերևում:

— Եղբայրներ, ազատություն,— կանչեց Զվենիգորան:— Բոլորդ դուրս եկեք: Զարդեք կապանքները:

Նկուղն անմիջապես լցվեց ուրախ բացականչություններով,

ճիշ ու աղմուկով: Բոլորը նետվեցին դեպի ելքը: Պան Սպի-
խալսկին դապորոժցուն սեղմեց իր հզոր կրծքին, շաման-
չելով արցունքներից, որ հոսում էին նրա շեկ բեղերն ի վար:

— Այ գրողը տանի հա՛, ես գիտեի, որ մեզ համար այս
օրը կգա: Դու լսո՞ւմ ես, պան Կվոչկա: Ես քեզ չէի՞ ասում,
որ մենք նորից ազատ կլինենք: Իսկ դու մի գլուխ նվնվում
էիր՝ կորած ենք, հա՛, կորած ենք... Հիմա էլ չենք կորչի:
Թող կայծակը զարկի նրանց՝ պարզ երկնքից...

Դարբնոցում մի ծանր մուրճ գտնելով՝ Զվենիգորան արագ
իջավ գետնատուն: Յաղուբի ղեղանը վիթխարի ծանր դուռ
ունենր՝ ամուր փակված: Թեև բակում համարյա լույս էր, այս-
տեղ թանձր խավար էր:

Մի քանի հարվածից հետո կողպեքը դուրս թռավ: Դղրղոցով
բացվեց դուռը:

— Յաղուբ աղա, ո՞ղջ ես:

Զվենիգորան ներս ընկավ զնդան: Բաց դռնից ներս խուժեց
վաղորդյան կապտավուն լույսը: Մեղդահը շուռ եկավ, ձեռ-
քերով փակեց աչքերը: Նրա ճերմակ, գզգզված թավ բաշը
թափվել էր ուսերին: Զրնգացին շղթաները: Հյուժված, տառա-
պած դեմքին անվստահ ու թույլ մի ժպիտ փայլեց.

— Դո՞ւ ես, Արսեն: Ուրախ եմ, որ նորից լսում եմ քո
ձայնը, բարեկամս:

— Եկել եմ, որ ազատեմ քեզ, Յաղուբ աղա: Ինքդ էիր
ասում, թե լուսնի տակ ոչ մի բան հավերժական չէ: էսօր
վերջացավ քո գերութունը:

— Թող օրհնյալ լինեն քո կյանքի օրերը, — մաղթեց մեղ-
դահը: — Ինչպե՞ս հայտնվեցիր էստեղ: Եվ այն էլ զենքը
ձեռքիդ...

— Ամբողջը սպստամբած գյուղացիների ձեռքում է, Յա-
ղուբ: — Եվ Զվենիգորան մուրճով ուժգին հարվածեց պատի
մեջ ամրացված երկաթաձողին:

Չողը շարժվեց: Զվենիգորան Յաղուբին օգնեց դուրս
գալու զնդանից:

Տեսնելով, որ սելամլիկի շարդված դռներից ներս խուժեց խոռվարարների ամբոխը, Համիդը հասկացավ, որ ամեն ինչ կորած է, որ հարկավոր է փրկել կյանքը: Ուստի նա ամեն ինչ թողեց բախտի քմահաճույքին ու նետվեց դեպի գաղտնի ելքը: Մինչ թիկնապահները կովում էին միջանցքում, Համիդը իջավ գետնատուն: Իսկ կես ժամ անց, լավ բողարկված ելքով նա դուրս եկավ անտառ և իջավ դեպի թփուտներով ծածկված հովիտը:

Համոզվելով, որ մոտակայքում ոչ ոք չկա, նա արագ-արագ կտրեց անցավ նեղ բացատը, որի մյուս կողմում ճյուղերից հյուսված մի փոքրիկ ցախանոց կար: Նրան ընդառաջ նետվեց մի փոքրիկ փրշոտ շնիկ, բայց, ճանաչելով տիրոջը, լռեց: Շան հաշոցի վրա ցախանոցից դուրս եկավ քնած պահակը:

— Ո՞վ է քարշ գալիս էստեղ:— հարցրեց նա՝ խավարի մեջ նայելով:

— Շուտ ձի բեր,— ֆշշացրեց Համիդը:

Պահակը, տիրոջը ճանաչելով, լուռ ետ դարձավ ու բերեց թամբած ձին: Համիդը նրա ձեռքից սանձը խլեց ու թռավ թամբին: Խամացած ձին արշավակի առաջ սլացավ: Այդ հապշտապ փախուստից զարմացած պահակի վրա խոնավ հողակոշտեր թռան:

Իրիկնադեմին Համիդը զգաց, որ ուժերը բոլորովին լքում են իրեն, և որ ձիուն նույնպես անհրաժեշտ է հանգիստ տալ: Ուղիղ գծով սանջակբեյի՝ մոտ գնալու փոխարեն նա թեքվեց աջ, լաստով անցավ կըզըլ-Իրմակը և շուտով մտավ իր վաղեմի ընկերոջ ու խնամու՝ էնվեր Իսահակի ընդարձակ բակը:

Մառան սանձը բռնելով, Համիդին օգնեց իջնել ձիուց:

— Ի՞նչ է պատահել, թանկագին Համիդ բեյ,— ողջունելու համար ձեռքերը պարզած նրան ընդառաջ փութաց բարձրահասակ, ագռավի պես սև էնվեր Իսահակը:— Էս ի՞նչ օրի ես: Ձիդ քրտինքի մեջ կորել է... ասես մահացու վտանգից ես փախել:

— Հենց էդպես է, որ կա, թանկագին բարեկամ: Էս շորերն

¹ Սանջակբեյ (թուրք.) — նահանգապետ:

էլ իմ ծանոթ ղայֆեջուց¹ եմ ճարել, թե չէ լրիվ մերկ կլինի... Ապստամբները գրոհով վերցրին Ակսուն, գարշելի կարաթուրքերը: Ես չգիտեմ նույնիսկ, բացի ինձանից, ուրիշ մեկը կենդանի մնացե՞լ է, թե ոչ...

— Օ՛, ալլահ, էս ինչ է կատարվում աշխարհում,— բացականչեց Իսահակ աղան:— Կարծում էի, մենակ ես դարդ ունեմ:

— Դո՞ւ էլ դարդ ունես, պատմիր:

— Մի ինչ-որ ավազակ քիչ էր մնացել սպանի իմ սիրելի Ֆերհադին: Քո աղջիկը կարող էր այրի մնալ, Համիդ բեյ: Նրան փրկել է մի հավատարիմ գյավուր ծառա: Հիմա Ֆերհադի վիճակը լավ է: Եվ նա ուրախ կլինի թանկագին հյուրի համար: Խնդրեմ, Համիդ բեյ, շնորհ արա:

Ընթրիքին եկավ նաև Ֆերհադը: Նա արդեն գիտեր աներոջը պատահած դժբախտության մասին և զուսպ բարևեց, քանի որ ուղղափառին չէր սազում չափից դուրս հետաքրքրություն դրսևորել մերձավորի դժբախտության նկատմամբ:

Համիդը էլի առաջվանն էր դարձել. լվացվել էր, հագուստը փոխել, հագել էր Իսահակ աղայի լայն շորերը:

Այն բանից հետո, երբ հյուրը քաղցը հագեցրեց ու մի գավաթ քաղցր շերբաթ խմեց, տանտերն ասաց.

— Ես ու տղաս մտադիր էինք մոտ օրերս այցելել քեզ, թանկագին Համիդ բեյ:

— Ես ուրախ կլինեմ ձեզ իմ տանը տեսնել,— հարգալից պատասխանեց Համիդը, չհարցնելով ծրագրված այցելության պատճառի մասին և սպասելով, որ Իսահակ աղան ինքը բացատրի...

— Իմ հովիվն ասաց, որ Ֆերհադի դեմ մահափորձ կատարողը քո փախստական ստրուկն է եղել...

— Իմ ստրու՞կը,— զարմացած բացականչեց Համիդ բեյը.— Անիծյալ ուռուս: Այդ նա առաջիններից մեկը ներխուժեց իմ պալատը և փորձեց սպանել ինձ: Օ՛, թե որ իմ ձեռքն ընկնի...

— Մենք կբռնենք ուռուսին,— նրան ընդմիջեց Ֆերհադը:—

¹ Ղայֆեջի (թուրք.)— սրճարանատեր:

Եթե նա խոռվարարների ջոկատում է, ապա մենք ուղիներ կգտնենք այնտեղ թափանցելու համար:

— Ինչպե՞ս:

Պատասխանի փոխարեն Ֆերհադը ծափ զարկեց: Ներս մտավ ծառան:

— Կանչիր Սվիրիդին:

Այն բանից հետո, երբ Մնոգոգրեշին փրկեց երիտասարդ տիրոջը, Իսահակ աղան իր գերուն շրջապատեց մինչև այդ շտեմնված ուշադրութեամբ: Նոր հագուստ տվեց, հրամայեց կերակրել տիրոջ խոհանոցից, նույնիսկ խոստացավ ազատ արձակել: Սվիրիդին ասես ջահելացել էր: Մեջքը շտկվել էր, իր գերի ընկերներին սկսել էր նայել անսքող առավելութեան դիրքերից:

Մտնելով սենյակ՝ նա խոնարհ գլուխ տվեց և ցածրաձայն ողջունեց.

— Խաղաղություն ձեզ, ո՞վ ուղղափառներ, ողջունում եմ քեզ, իմ բարի պարոն Համիդ բեյ,— նա առանձին գլուխ տվեց իր նախկին տիրոջը:

Իսահակ աղան գլխով ցույց տվեց շեմքին փոխած թաղիքե փոքրիկ գորգը: Դա մեծ պատիվ էր երեկվա ստրուկի համար:

— Ալեյքում յուսսալամ, աղա Սվիրիդ,— պատասխանեց նոր տերը:— Նստիր, նստիր: Իմ որդի Ֆերհադը ուզում է խոսել քեզ հետ:

— Սվիրիդ աղան, հավանաբար, լավ է հիշում այն ավազակին, որը հարձակվեց ինձ վրա: Այդպե՞ս է, թե չէ,— հարցրեց Ֆերհադը:

— Այո, էֆենդի:

— Իմ մեծապատիվ հայրը և ես ազատություն ենք խոստացել քեզ, Սվիրիդ աղա, այն բանի համար, որ փրկեցիր ինձ... Բայց մեզ համար ևս մի ծառայություն պիտի անես: Դրանից հետո ինքս քեզ կտանեմ Ստամբուլ, կգտնեմ լեհ կամ մոլդովացի վաճառականների, և նրանք, իմ տված վարձի դիմաց, քեզ Ուկրաինա կհասցնեն...

— Ի՞նչ պիտի անեմ,— վատ թաքցրած ուրախութեամբ հարցրեց Մնոգոգրեշին:

— Դու պետք է գտնես այդ ստահակին և սպանես կամ

ինձ հայտնես նրա գտնվելու տեղը: Տեղեկություններ կան, որ նա միացել է թալանչիների ու մարդասպանների ավագակախմբին, որոնք իրենց ապստամբներ են անվանում: Դու կխցկվես նրանց մոտ փախստականի կերպարանքով: Կիմանաս որքան էն նրանք, ինչ ղենք ունեն և որտեղ է նրանց համբարը: Կջանաս դուր գալ նրանց գլխավորներին, և իմանալ թե ինչ մտադրություն ունեն: Եթե այս ամենը հաջողությամբ պսակվի, դու ազատ ու հարուստ կլինես:

— Շնորհակալ եմ, էֆենդի: Ինչ որ ձեռքիցս գա, կանեմ: Երբ հովիվը դուրս գնաց, Համիդը ոտքի ելավ:

— Թույլ տուր, հարգելի Իսահակ աղա, մի բիշ հանգիստ առնեմ, քանի որ լույսը բացվելուն պես պետք է հեռանամ այստեղից: Վաղը սանջակ բեյի զորքերով կշարժվեմ հակառակ ուղղությամբ և երկու-երեք օր հետո կովի մեջ կմտնեմ: Կսպասեմ քեզ, Ֆերհադ, կգաս քո ջոկատով: Կարծում եմ, ձեր մոտ հարյուրավոր քաջ ու նվիրված զինվորներ կգտնվեն:

Հաջորդ օրը առավոտյան բակ ընկավ սուլթանի շավուշը՝ բանբերը: Ձիուց դեղին փրփուր էր թափվում, իսկ ինքը հագիվ էր ոտքի վրա մնում, Մառաները նրան տարան սելամլիկ, որտեղ Իսահակ աղան, Ֆերհադն ու Համիդը նախաճաշում էին առավոտյան նամազից հետո:

— Կամբը և խոսքը խոնդքարի՜,— հոգնած հայտարարեց շավուշը բարևի փոխարեն:

— Թող փառաբանվի անունը նրա,— խոր գլուխ տվեցին սպախիաները:

— Սուլթանի հարգարժան պատգամաբերին ի՞նչն է բերել մեզ մոտ,— հարցրեց տանտերը, երբ բանբերը փախյով շարբաթ խմեց:

Սա լուռ ծոցից հանեց մազաղաթե փաթեթը: Իսահակ աղան զարմանքով բացականչեց.

— Խոնդքարի ֆերմանը²: Օ՛ ալլահ, պատերազմ անհավատների, ուռուսների դեմ:

¹ Խոնդքար կամ խյանդքար (թուրք. բառացի՝ «մարդասպան») — սուլթանի տիրապետներից մեկը, որը վկայությունն է նրա առսահմանափակ իշխանության:

² Ֆերման (թուրք.) — հրամանագիր, հրովարտակ:

Համիդն ու Ֆերհադը նայեցին միմյանց. այդ ֆերմանը պարտավորեցնում էր նրանց մի շաբաթվա ընթացքում հավաքել իրենց մարդկանց և պատրաստվել արշավանքի: Բայց հիմա ո՞ւմ կարող էր դուրս բերել Համիդը, նրա ամբողջ պահակախումբը ոչնչացել էր, իսկ գեները թալանված էր: Հո մենակ չէ՞ր գնա:

Երբ շավուշը, ուտելուց և փոքր-ինչ հանդստանալուց հետո մեկնեց, Իսահակ աղան ազատություն տվեց իր զգացմունքներին:

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ,— ետ ու առաջ օրորվեց նա՝ աղոթելու նման ձեռքերը բարձրացնելով,— էս ինչ դժբախտություն էր: Փաղիշահը շատ է ամբարտավանացել: Լյախիստանի՛ դեմ տարած հաղթանակը քիչ է նրա համար, հիմա էլ ուզում է ուռուսներին հնազանդեցնել... Համա էդ երկիրը ոչ սկիզբ ունի, ոչ՝ վերջ: Ժողովրդին թիվ ու հաշիվ չկա, անտառներն անանցանելի են, իսկ ձմեռը էնքան դաժան է, որ թռչունները սառչում են օդի մեջ... Վա՛յ, վա՛յ, վա՛յ ինձ: Իմ մինուճար տղան, ծերությանս օրերին իմ միակ մխիթարանքը պիտի գնա պատերազմ էդ հեռավոր երկիրը... Իմ երեք որդիներն արդեն գլուխները դրել են հանուն և ի փառս փաղիշահի... Ֆերհադը իմ վեջին ուրախությունն ու հույսն է... Եվ նրան էլ խլում են ինձանից... Օ՛, վա՛յ, վա՛յ...

— Հո բոլորը չեն մեռնում պատերազմում,— փորձեց հորը մխիթարել Ֆերհադը,— ինչո՞ւ ես վաղօրոք ողբում ինձ վրա:

— Ես գիտեմ ինչ բան է պատերազմը, տղաս: Պատերազմում մարդիկ սպանվում են:

Համիդը որոշ ժամանակ լուռ էր, մռայլ, հետո հայտարարեց.

— Մեծապատիվ Իսահակ աղա, իմ թանկագին Ֆերհադ, լսեք ինձ, ալլահը գայրադավ ինձ վրա, ուղարկեց ավազակների վայրագ խմբին, որոնք ավերեցին իմ բույնը, տարան իմ ունեցվածքը: Ես չգիտեմ իմոնցից որևէ մեկը ողջ մնացել է, թե ոչ... Սրտիցս արյուն է կաթում, իսկ բանականու-

1 Լյախիստան — Լեհաստանի անունը:

թյունը չի ուզում հավատալ այն ամենին, ինչ կատարվեց... Վրե՛ժ: Ահա թե ինչի եմ փափագում: Արջան վրեժ... Եվ, երդվում եմ ալլահով, ես կարող եմ վրեժ լուծել, թեկուզև հարկ լինի ոչնչացնել Ակսուի ողջ բնակչությանը... Բայց խոսքը այդ մասին չէ: Ես ափսոսում եմ Ֆերհադին, իմ սիրելի աղջկա՝ Խատչեի ամուսնուն: Թեպետ ես բավականին մեծ եմ նրանից, բայց դեռ կարող եմ թուր բռնել ձեռքս: Եվ եթե ձերդ ողորմածությունը համաձայն լինի, իմ թանկագին Իսահակ աղա, Ֆերհադի փոխարեն ես կկանգնեմ ձեր զորքի գլուխը: Իսկ Ֆերհադը կմնա տանը: Նա դրա համար պատճառ էլ ունի. դեռ լրիվ չի ապաքինվել:

Ֆերհադը, դժվարությամբ թաքցնելով ուրախությունը, ծուլորեն փորձեց բողոքել, բայց Իսահակ էֆենդին սրտաշարժված գրկեց Համիդին և սեղմեց իր կրծքին.

— Շնորհակալ եմ, Համիդ էֆենդի, ալլահը քեզ բարի սիրտ է պարգևել, նա իր ողորմածությունից բաժին կհանի քեզ պատերազմի ճամփաներում: Դու կվերադառնաս արշավանքից փառքով պսակված, հարուստ ավարով: Նորից կծաղկի Ակսուի հովիտը, նորից կեռա կյանքը քո կալվածքում, իսկ սերունդները կփառաբանեն քո սխրանքները:

— Ամեն բան ալլահի կամքով է,— հանդիսավորությամբ ասաց Համիդը...

4

Ակսու ամրոցի վրա կատարած հաջող հարձակումից հետո Թուխմորուքի ջոկատը արդեն երրորդ օրն է ինչ հանգստանում էր լեռնային լճի ափին ընկած անմատչելի կիրճում:

Վրանում, որտեղ խորհրդակցության էին հավաքվել ջոկատի առաջնորդները, որոնց մեջ էր նաև Զվենիգորան, անսպասելիորեն աղմուկ-աղաղակ լսվեց:

— Ի՞նչ է պատահել,— վրդովված հարցրեց Մուսթաֆան ժամապահին:

— Դետքերը ինչ-որ գյավուրի են բռնել: Նա էնպես ծեծված ու ջարդված է, որ հազիվ է ոտքի վրա մնում:

— Բեր նրան էստեղ,— հրամայեց Մուսթաֆան:

Քրտինքի մեջ կորած երկու պահակներ դեպի վրանը քարշտվեցին պատահուտոված, արնաշաղախ մի մարդու, որ համարյա կախվել էր նրանց թևերից:

Զվենիգորան հազիվ զսպեց իրեն, որպեսզի չզոռա զարմանքից. նրա առջև կանգնած էր Մնոգոգրեշին: Քրջերի միջից երևում էին մտրակի հետքերը մարմնի վրա. ձախ աչքի տակ մի խոշոր կապտուկ կար. պատուված շրթունքից թանձր սև արյունը հոսում էր մորուքն ի վար:

— Ո՞վ ես դու, — հարցրեց Մուսթաֆան:

— Ես էնվեր Իսահակ աղայի ստրուկն եմ: Թող անիծված լինի նրա անունն էլ, նրա որդի Ֆերհադի անունն էլ, — ասաց Մնոգոգրեշին կոտորոված թուրքերենով: — Նա ու իր տղան, որին փրկեցի մահից ու մեծ դժվարությամբ ոտի կանգնեցրի, քի էր մնում Երեք մաքիների հովտում ինձ սպանեին...

— Ինչո՞ւ հենց Երեք մաքիների հովտում: Եվ որտեղի՞ց գիտես դու այդ հովիտը, գյավուր:

— Ինչպես թե, մեծուպատիվ աղա, մե՞թե չգիտես, որ Համիդ բեյի և Ֆերհադ աղայի զորքը էնտեղ է կանգնած, — բացականչեց զարմացած Մնոգոգրեշին:

— Ուրեմն Համիդը ողջ է: Հաջողացրել է փախչել շունը, — լսվեց այս ու այն կողմից:

Զվենիգորան վեր թռավ տեղից ու կանգնեց Մնոգոգրեշնու դիմաց: Սա անմիջապես ճանաչեց զսպորոժցուն, և աչքերը փայլեցին շարությամբ:

— Ա՛, էդ դո՞ւ ես, կախելու մարդ, — գոչեց նա: — Կորի աչքիցս, շերևաս... Տես, թե ուր հասցրեց մեր հանդիպումը: Մարմնիս վրա ողջ տեղ չի մնացել...

— Հիմա խոսքը այդ մասին չէ, — ընդհատեց նրան Զվենիգորան: — Ինչքա՞ն զորք ունեն Համիդն ու Ֆերհադը:

— Ֆերհադը երեսուն զինվոր ունի, բոլորն էլ իր ծառուներն են... կես հարյուրյակ էլ Համիդն է բերել, կամ, գուցե, մի քիչ ավելի...

Զվենիգորան նրա ասածները թարգմանեց Մուսթաֆային ու նորից հարցրեց.

— Նրանք ի՞նչ են անում Երեք մաքիների հովտում:

— Օգնություն են սպասում սանջակբեյից, որը խոստա-

ցել է մի քանի օր հետո գալ ենիշերինների մեծ ջոկատով...

— Ի՞նչ մտադրություն ունեն:

— Ով գիտե... Պարզ է, գվարճուության համար չեն տա-
պակվում արևի տակ էս աստծուց անիծված կիրճում: Մա-
նավանդ Համիդը շատ է կատաղել... էնպես է շարացած, որ
պատրաստ էր առանց սանջակբեյի օգնության հարձակվել
ձեզ վրա...

— Քեռի Սվիրիդ, բա ինչպե՞ս եղավ, որ դու հանկարծ
նրանց մոտ հայտնվեցիր:

— Այն բանից հետո, երբ ես ոտի կանգնեցրի Ֆերհադին,
նա շնորհակալությամբ լցվեց իմ նկատմամբ և ինձ իր ծա-
ռան դարձրեց: Ամեն տեղ քարշ էր տալիս իր ետևից, կուշտ
կերակրում էր, ասես բտում էր... Շոր, ոտնաման հագցրեց,
ձի տվեց: Թվում էր, դրանից ավելի լավ բախտ էլ պետք
չէ գերուն...

— Բա ինչո՞ւ փախար նրանից:

Մնոգոգրեշին լիզեց պատուված շուրթը, մոռյվեց, մանր
դեղին աչքերը պսպղացին:

— Ինձ ուղարկում էին ձեզ մոտ լրտեսության: Ես էլ
հրաժարվեցի: Դրա համար էլ Ֆերհադը հասցրեց ատամնե-
րիս, իսկ Համիդը հրամայեց ինձանից խորոված պատրաս-
տել... Ճիշտ է, քիչ էր մնում էդպես էլ անեին շեյթանի
ծնունդները, համա ես գիշերը փախա: Ինձ հագիվ կենդանի
գտան ձեր մարդիկ...

Զվենիգորան Մնոգոգրեշու հետ ունեցած խոսակցու-
թյունը հաղորդեց Մուսթաֆային:

— Նա կարևոր լուրեր է բերել, եթե այդ բոլորը ճիշտ են,
իհարկե, — մտածկոտ ինքն իրեն խոսեց Թուխմորուքը: —
Անկասկած, Համիդն ամեն ինչ կանի, որպեսդի ջախջախի
մեզ: Բայց մենք ավելի խորամանկ կլինենք: Հարկավոր է
հենց այսօր հարձակվել Ֆերհադի ու Համիդի վրա, քանի
դեռ սանջակբեյը տեղ չի հասել: Մինչև Երեք մաքիների հո-
վիտը երկու փարսախ է: Եթե մենք մի ժամ հետո ճամփա
բնկնենք, ապա իրիկնադեմին մեր ճանկը կգցենք երկու
թշնամուն էլ միանգամից, նրանց մարդկանց էլ հետը:

Դետքերը հայտնեցին, որ Երեք մաքիների հովտում (այդպես էր կոչվում, հավանաբար, այն պատճառով, որ հովիտը բոլորող ժայռերը ինչ-որ բանով նման էին ոչխարների) կանգնած է թշնամու ոչ մեծ ջոկատը: Մուսթաֆա Թուխմորուքը հրամայեց հենց ընթացքից հարձակվել ջոկատի վրա և ոչնչացնել մինչև վերջին մարդը: Միայն ուղեց Համիդին կենդանի բռնել:

— Լսիր, ուռուս,— դիմեց նա Զվենիգորային, երբ կանգ առան լեռնանցքում, որտեղից բացվում էր նոսր թփուտներով ծածկված խոր հովտի տեսարանը:— Տեսնո՞ւմ ես կիրճը, որ աջից սահմանակից է Երեք մաքիների հովտին: Այդ կիրճը տանում է մինչև Կըզըլ-Իրմակ: Վերցրու քո ուռուսների ջոկատը և Բեքիրի մարդկանց մի մասը, էդ կիրճով անցիր Համիդի թիկունքը և կտրիր նրա նահանջի ճանապարհը, էնպես արա, որ ոչ մի շուն չպրծնի մեր ձեռից: Գնա, ալլահը բեզ օգնական:

Զոկատներից ամեն մեկը գնաց իր ճանապարհով: Զվենիգորան բարձունքից ետ նայեց ու տեսավ Սվիրիդի կուշեկած կերպարանքը, նրանից անբաժան էր Օձ Ահմեդը: Մուսթաֆա Թուխմորուքը դարբնին հրամայել էր աչքից բաց չթողնել գյավուրին:

Թփուտների մեջ Թուխմորուքի ջոկատը դեմ առավ թշնամու ծուղակին: Հնչեց տագնապալի մի ճիչ: Ու թեև երկու պահակներն ընկան թրերից, հովիտն իսկույն լցվեց գենքերի շաշյունով, ձիերի դոփյունով, ճիչ ու վայնասունով:

Մնողգրեշնին վազում էր բոլորի հետ միասին: Նրանից ետ չէր մնում Օձ Ահմեդը:

Տեսնելով, որ իր առջև նետահար եղած ընկավ մի ապստամբ, Մնողգրեշնին կռացավ ու սպանվածի սառչող ձեռքից խլեց յաթաղանը:

— Զհամարձակվե՛ս վերցնել, գյավուր,— գոռաց դարբինը:

Բայց Մնողգրեշնին կամ չլսեց, կամ ուշադրութուն չդարձրեց այդ խոսքերին և սլացավ առաջ: Օձ Ահմեդը նետվեց նրա ետևից:

Առջևում արդեն ձեռնամարտ էր բռնվել:

Տարված այն մտքով, թե այս անգամ Համիդը իր ձեռքից չի պրծնի, Մուսթաֆա Թուխմորուքը բարձրացավ մի մեծ քարի վրա և արագորեն աչքի անցկացրեց թշնամու ողջ ջուկատը: Համիդը ոչ մի տեղ չկար: Իսկ թշնամու զինվորները նման էին ոչ թե ծառաների, այլ ավելի շուտ լավ վարժեցված ենիչերիներին: Նրանք պաշտպանվում էին գոմշակաշվից պատրաստված ամուր վահաններով և ապստամբների ճնշման տակ դանդաղ ետ էին քաշվում դեպի հովտի կենտրոնը:

«Որտե՞ղ է Համիդը: Մի՞թե սա ուրիշ ջուկատ է, Թե՞ էն քավթառ գյավուրը մեզ խաբեց,— մտածեց ջուկատի առաջնորդը:— Անեծքը նրա զլխին թափվի: Հարկավոր է հարցաքննել նրան»:

Նա նկատեց Օձ Ահմեդին, որ ամբողջ մի զլխով բարձր էր ապստամբներից, իսկ նրա կողքին տեսավ գյավուրին: Մուսթաֆան ուղեց վաղել նրանց մոտ, բայց հենց այդ պահին հովտի երկու կողմերից տարածվեց ահեղ, բազմաձայն մարտակոչը:

Թուխմորուքի աչքերը շուրջին սարսափից: Գաղտնի դարաններից, կիրճից ու անձավներից, թփերի ու ժայռերի ետևից դուրս թափվեցին թշնամական թարմ ջուկատները և արագորեն շրջապատեցին ապստամբներին:

«Մեզ խաբել են»,— անցավ Մուսթաֆայի զլխով:

Առաջին պոռթկումը եղավ սպանել այդ գարշելի դավաճան գյավուրին, որն իրենց ծուղակն էր գցել: Սակայն չէր հասցրել քարից ցած իջնել, երբ Մնոգոգրեշին հանկարծակի շրջվեց իր պահապանի կողմը և յաթաղանը խրեց նրա կուրծքը: Օձ Ահմեդը անօգնական թափահարեց ձեռքերը, անձայն ճիշով լայն բացեց մեծ բերանը և դանդաղ փլվեց գետնին: Մարդասպանը արագորեն, ջահելի նման, նետվեց ընդառաջ Համիդի զինվորներին:

— Նզովյալ,— մոնչաց Թուխմորուքը:— Բռնե՛ք դրան: Սատկացրեք էդ շանը...

Մի քանի ապստամբներ նետվեցին փախստականի ետևից: Մեկը շպրտեց նիզակը, բայց չկապավ: Հետապնդողները, տեսնելով, որ իրենց վրա է գալիս թշնամու հեղեղը, ետ դարձան:

Նրանց կատաղի ճիշերն ու գողտունները անվստահություն ու սարսափ առաջացրին ապստամբների շարքերում: Որոշ ժամանակ Թուխմորուքը չէր իմանում ինչ անել: Խելագարի նման նայում էր երկու հսկա զանգվածներին, որոնք ուր-ուր է կարող էին միանալ և իրենց օղակի մեջ առնել կովի անվարժ ապստամբներին: Զոկատը ծուղակի մեջ էր ընկել: Ո՞րն է փրկությունը: Ի՞նչ անել: Տեսնելով, որ Զվենիգորան հարվածում է թշնամու թիկունքից, Մուսթաֆան քարի վրայից ցած թռավ և, երկար, կեռ թուրը գլխավերևում թափահարելով, նետվեց կովի ամենաթունդ տեղը:

— Առա՛ջ, բարեկամներ: Զարկե՛ք չախկալներին,— որո՞ւաց նրա ճայնը:— Իմ ետևից: Իմ ետևից...

Առաջնորդի վստահությունը ուժ ու համարձակություն հաղորդեց մարդկանց: «Ալլահ, ալլահ», բարձրաձայն կանչը մտրակեց նրանց ու առաջ քշեց: Գլխավերևում փայլատակեցին սրերը: Իրիկնային կապտավուն մշուշի մեջ պսպղացին սև նիզակները:

Հարձակումն այնքան ուժեղ էր ու անսպասելի, որ թշնամու զինվորների համարյա կեսն ընկավ ապստամբների ոտքի տակ:

— Հուպ տանք, էլի հուպ տանք, բարեկամներ,— իր մարդկանց ողևորեց Մուսթաֆա Թուխմորուքը:— Առա՛ջ, առա՛ջ, թույլ չտանք, որ մեզ շրջապատեն: Բեքի՛ր, ճե՛ղքիր աջ թևից...

Բեքիրը մի խումբ ապստամբների հետ փորձեց ճեղքել դուրս գալ դեպի Զվենիգորան, բայց ոչ մի կերպ չկարողացավ: Նրան քիչ զինվորներ էին մնացել: Մյուսները կամ զոհվել էին, կամ վիրավորվել: Սակայն նա խիզախորեն ընկավ թշնամու հեղեղի վրա՝ սրով ճամփա բացելով ընկերների համար: Նրա ետևից առաջ նետվեցին մնացածները...

6

Զլատկան նստել էր ժայռի տակ՝ Յացկոյի կողքին, ու ականջ էր դնում հեռվից լսվող աղաղակներին: Յացկոյի տրամադրությունը տեղը չէր: Նա չէր ուզում հսկել այդ թրրբուհուն, որի մասին հոգ էր տանում Զվենիգորան: Յացկոն

կուզենար իսկական կովի մասնակից լինել: Նա ամբողջի վրա կատարած գրոհը հաշվի չէր առնում: Մի՞թե դա իսկական կռիվ էր: Տղան այնպիսի կռիվ էր երազում, որտեղ իր վրա հարձակվեին տասնյակ թշնամիներ, իսկ ինքը թրի մի հարվածով կտրատեր նրանց ուսից մինչև գոտկատեղը... Եվ բուրբը ցնցվեին ջահել հերոսի արտասովոր քաջությունից...

— Ես էլ կգամ քեզ հետ, Արսեն,— խնդրեց Յացկոն, երբ Զվենիգորան պատրաստվում էր կովի:— Դե թույլ տուր... Զլատկան մենակ էլ կմնա:

Զլատկան նստած տեղից ելավ ու հոգոց հանեց, վերջին օրերին նա գլուխը կորցրել էր ջրապտույտի մեջ ընկած տաշեղի նման: Ակսու ամբողջի վրա ապստամբների կատարած հարձակումից հետո դեռ ուշքի չէր եկել, երբ նախ Զվենիգորայի, ապա Յաղուրի պատմածները իր հեռավոր հայրենիքի ու հարազատների մասին էլ ավելի տակնուվրա արեցին նրա հոգին: Սիրտը նվազում էր այն գիտակցությունից, որ ինքը մնացել է մեն-մենակ, ինչպես ճամփի վրա ընկած կոտորված ճյուղ: Մի՞թե կարող է ծնողներին հանդիպելու հույս ունենալ: Նրանք ասես գոյություն ունեին ուրիշ ժամանակի մեջ և ուրիշ աշխարհում: Նրանց հետ հանդիպելը նույնքան անկարելի էր, որքան նրանց, ովքեր գերեզմանում են: Երկյուղը պատեց աղջկան: Եվ նրան հուսահատությունից ետ էին պահում միայն Յաղուրի ջերմ, փաղաքուշ խոսքերն ու բնքշալից հայացքը խիզախ կազակի, որն արդեն երկու անգամ փրկել էր նրան:

— Զլատկա,— ասաց Զվենիգորան՝ աղջկա ձեռքը բռնելով,— վրա է հասել այն պահը, որը կարող է ընդմիշտ մեզ բաժանել իրարից: Կռիվ է լինելու: Իսկ կովի մեջ ամեն ինչ պատահում է, նույնիսկ՝ մահ: Դրա համար էլ ուզում եմ ասել, որ քեզ հանդիպելուց հետո ես բնավ չեմ ուզում մեռնել...

Զլատկան կասկարմիր կտրեց ու աչքերը խոնարհեց, սակայն ձեռքը ետ չքաշեց: Սիրտը տազնապահար թպրտաց: Ի՞նչ հաճելի է դա լսել, բայց չէր ցանկանա, որ այդ նվիրական խոսքերը, որոնց մասին երազում է ամեն մի աղջիկ, արտասանվեին այսպիսի պարագաներում:

Զվենիգորան ասես կարդաց նրա մտքերը, և փոքր-ինչ լռելուց հետո, ասաց.

— Եթե ես կենդանի շմնամ, հույսդ դիր Յաղուրի վրա, նա կգտնի Բուլղարիայի ճամփան: Եթե նրան էլ սպանեն, այդ դեպքում բո պաշտպանը կմնա մենակ Յացկոն: Թող խոսի ու համր ձեռնա, և դուք, որպես բույր ու եղբայր, մեկդ մյուսին օգնելով, կարող եք հասնել Բուլղարիա կամ Ուկրաինա: Աշխարհը մեծ է, դեռ կգտնես բո երջանկությունը... Որպեսզի ճամփին նեղություններ չքաշես, ես բեզ եմ թողնում իմ գոտին, սրա մեջ ոսկի կա: Քանի դեռ ողջ եմ, սա ինձ չի պատկանում, իսկ թե մեռնեմ, դու կարող ես օգտվել դրանից:— Նա ազջկան մեկնեց ծանր, լայն գոտին:

— Կապիր մեջքիդ:

Զլատկան այնքան էլ չհասկանալով, թե ինչի համար է դա, գոտին թաքցրեց շաղրայի տակ:

Հենց այդ պահին հովտից բարձրագույն աղաղակներ լքովեցին: Զվենիգորան սեղմեց ազջկա սառը մատները և շշնջաց.

— Զլատկա... Հոգիս...

— Ալլահը թող բեզ լինի պահապան,— շշնջաց աղջիկը հազիվ լսելի ձայնով:— Գնա, ես կսպասեմ բեզ...

Զվենիգորան իր ջոկատը մարտի տարավ:

Յացկոն մազլցեց ոչ մեծ ժայռի կատարը: Նրա սիրտը ճմլվեց, երբ տեսավ, թե ինչպես թշնամու հեղեղը, թաքստոցներից գուրս հորդելով, բոլոր կողմերից շրջապատեց ապրտամբներին: Կռիվը թեժացավ: Զվենիգորան կարող էր իր ջոկատով դուրս պրծնել թշնամու օղակից, բայց, երևում է, այդ մասին նա չէր մտածում, քանի որ գնալով ավելի ու ավելի էր խորանում ևնիշերիների շարքերի մեջ, և նրա թրի փայլատակումը սարսափի մեջ էր գցում նրանց: Թշնամիները ետ էին քաշվում Զվենիգորայի առջև, ճամփա էին տալիս նրան, ինչպես ոշխարի հոտը կատաղած ցլի առջև: Նրա կողքին կռվում էին Յաղուրն ու Իսմեթը, և այդ եռյակը սուպի նման ճեղքում էր թշնամու խիտ շարքերը:...

Արևը մայր մտավ, և լեռնային խոր կիրճը անմիջապես մթնեց. Յացկոյի աչքերի առջև ամեն ինչ իրար խառնվեց: Թվաց, թե մրջնանոց է վխտում: Շուտով խավարը սև բողով

պարուրեց և նրան: Լսվում էին միայն գազան կտրած մարդէկանց ահեղ գոչումները, զենքերի շաշյունը, մեկ էլ վիրավորների տնքոցներն ու անեծքները:

Կռվի աղմուկ-աղաղակը հետզհետե սկսեց հանդարտվել: Եվ տղայի սրտում աճեց տազնապը: Նա արդեն իրեն չէր սփոփում ապստամբների հաղթանակի մտքով,— լափվց դուրս անհավասար էին ուժերը,— սակայն հույս ուներ, որ յուրայիններից մեկն ու մեկը կփրկվի, և ինքը մենակ չի մնա այդ արյունոտ հովտում:

Բայց ահա նրա ականջին հասավ Զվենիգորայի ձայնը.

— Յացկո, փախի՛ր! Մեղ մի՛ սպասիր: Փախի՛ր...

Յացկոն ցնցվեց և, լարելով ողջ ուշադրությունը, աշխատեց գոնե մի բան տեսնել ներքևում կամ մի անգամ էլ լսել ավագ ընկերոջ ձայնը: Բայց ոչ մի բան ոչ լսեց, ոչ տեսավ: Կոփվը վերջացել էր: Լուսթյուն էր իջել, որը երբեմն-երբեմն խախտում էին հոգեվարժի ճիշերը կամ վիրավորների տնքոցները...

— Ի՞նչ անել: Զլատկայի հետ փախչել հեռանա՞լ այս սարսափելի վայրից: Իսկ Զվենիգորա՞ն: Գուցե նա վիրավոր ընկած է որևէ թփի տակ և օգնությա՞ն է սպասում:

Զլատկայի ուսերը ցնցվեցին անձայն հեծկտոցից:

— Մերոնք բոլորը զոհվեցին,— ոչ այն է հաստատեց, ոչ այն է հարցրեց նա:

— Գուցեև չէ,— փնշացրեց Յացկոն:— Թող լավ մթնի, կգնամ փնտրելու...

Այդ միտքը, զնալ փնտրելու, հանկարծակի եկավ նրա գլուխը և հանգիստ չէր տալիս նրան: Նա էլ չէր համբերում, ուզում էր զնալ, երբ հովտում հանդարտվեց հաղթողների վազվառուքը, որոնք իրենց վիրավորներին քարշ էին տալիս մարտադաշտից հեռու, դեպի սարի տակ բոցկլտացող կրակները:

Հեռվից լսվում էր, ինչպես էին իրար ձայն տալիս ժամապահները:

Զլատկային խստորեն պատվիրելով ոչ մի տեղ չգնալ՝ Յացկոն քարափից ցած իջավ և հովտով, թփուտների միջով սողաց դեպի կռվի դաշտը:

Մի ժամից ավելի նա դեսուդեն ընկավ՝ ջանալով դիակ-

ների բազմութեան մեջ գտնել Զվենիգորային: Մութ գիշեր էր, հեռավոր խարույկները միայն թույլ շողք էին գցում: Պատանին բարձրացնում էր սպանվածների գլուխները, շրջում էր խարույկների լույսի կողմը և կամացուկ իջեցնում գետնին: Զվենիգորան չկար ու չկար:

— Որտե՞ղ է նա: Գուցե վիրավորվել ու գերի՞ է ընկել:

Լիակատար հաղթանակ տանելով՝ թշնամու զինվորները տեղավորվեցին խարույկների շուրջը հանգստանալու: Միայն մի քանի ժամապահների ուրվականներ էին երևում ճամբարի շուրջը:

Յացկոն գաղտագողի մոտեցավ ճամբարին ու պառկեց թփերի տակ: Լսվեց մի թույլ տնքոց, որ թռավ եկավ գիշերվա խավարից, փսկ դրան հաջորդեց ժամապահի թունդ հայհոյանքը:

— Էդ էր մնացել, որ քեզ համար ջուր ման գայի, թշվառական: Առանց էդ էլ մինչև առավոտ կսատկես: Ձենդ կտրի, թե չէ հիմա վերջդ կտամ, շուն:

— Տեսնես ո՞ւմ է էդպես հայհոյում ժամապահը: Երևի ոչ իրենց վիրավորներին, այլ գերի ապստամբներին: Գուցե Զվենիգորա՞ն էլ է այնտեղ:

Յացկոն դուրս թոսավ թփուտների միջից և հայտնվեց ժամապահի կողքին, որ նստած էր մի քարի վրա՝ տակը ինչ-որ քրջեր փռած: Նրա առջև, ոչ խոր մի ձորակում, որ անձրևներն էին բացել, պառկած էին մի քանի կապկպված գերիներ: Յացկոն շէր կարող տեսնել՝ Զվենիգորան արդյոք նրանց մեջ է. մոտակա խարույկը արդեն սկսել էր հանգչել:

Տղայի սիրտը զարկեց արագ: Ուրեմն ոչ բոլոր ապստամբներն են զոհվել: Գուցե Զվենիգորան էլ նրանց մեջ է, չէ որ կռվի վերջում դեռ նա ողջ էր:

Այդ պահին ժամապահը շարժվեց, տեղից ելավ և դանդաղ գնաց դեպի խարույկը՝ ճանապարհին չոր խաշամ հավաքելով: Յացկոն, կուզեկուզ, մի ակնթարթում վազեց անցավ բաց տարածությունը և թռավ փոսի մեջ: Թեք լանջով գլորվելով ձորի հատակը՝ նա դեմքով զարկվեց ինչ-որ կոշտ քանի:

— Ո՞վ կա այստեղ, — լսվեց կամացուկ մի ձայն:

— Արսեն,— շնչաց Յացկոն:— Դո՞ւ ես: Ո՞ղջ ես: Հո վիրավոր չե՞ս:

— Յացկո,— ուրախացավ Զվենիգորան:— Ինչպե՞ս ընկար էստեղ:

Յացկոն շատաստանեց: Ձղաձգորեն շոշափեց կազակի կապկապած ձեռքերը և յաթաղանով պարանը կտրատեց:

— Շուտ,— շնչաց նա:— Քանի դեռ ժամապահը չկա՝ փախչենք:

— Իսմեթն ու Յաղուրն էլ էստեղ են: Իսմեթը վիրավոր է: Յաթաղանը տուր, ես պարանները կկտրեմ:

Նա արագորեն ընկերներին ազատեց կապանքներից և փոսից դուրս հանեց: Ժամապահը ետ էր գալիս:

— Ափսո՞ս, մինչև նրա գալը չենք հասցնի դուրս գալ: Ստիպված ենք գրողի ծոցն ուղարկել: Դու պառկիր, Յացկո, ես ու Յաղուրը գլուխ կհանենք: Թե որ տագնապ բարձրանա, փախիր, մեզ չսպասես:

Զվենիգորան ու Յաղուրը թաքնվեցին մեծ քարի ետևում: Ժամապահը, ոչինչ չկասկածելով, նստեց իր ջեբքեթի վրա ու բաղձր հորանջեց: Հենց նույն ակնթարթին էլ կոշտ բրդյա խցոցը փակեց նրա բերանը, իսկ Զվենիգորայի երկաթյա ձեռքերը սեղմեցին կոկորդը:

Ժամապահը թարտաց, դեսողեն զարկվեց, ջանալով դուրս սլոծնել, բայց Զվենիգորան իսկույն ստիպեց նրան հանդարտվել:

— Հայդե, բարեկամներ, գնացինք,— շնչաց նա և շալակեց Իսմեթին:

Ձախը, որ այդ պահին ենիշերիները լցրեցին խարույկի վրա, կրակը հանգցրեց, և շուրջը թանձրացավ խավարը: Երեք կերպարաններ սրընթաց աննկատելի անցան դաշտի միջով, որտեղ խառնիխառն ընկած էին ապստամբների ու ենիշերիների գլխակները: Գեանին, ամենուրեք պսպղում էին գեները: Փախստականները մեկական թուր վերցրին և արագորեն իրենց զցեցին կիրճը, որտեղ թաքնվել էր Զլատկան...

— Գնանք, Զլատկա,— շնչաց Զվենիգորան:

Շուտով նրանք հասան Կըզըլ-Իրմակի ափը: Այստեղ մի մեծ նավակ գտան: Թիերի փոխարեն երկար ձողեր կտրեցին: Զվենիգորան ձողը հենեց ափին: Բայց հանկարծ մի խուլ

անքոց հասավ նրա ականջին, հետո ոտնաձայն լսվեց: Փախըստականները անշարժացան, թաքնվեցին թփերի տակ: Ոչ մեկի մտքով չէր անցնում, թե կարող են հետապնդել իրենց: Լողալ դեպի գետի մեջտեղը՝ վտանգավոր էր, և Զվենիգորան ձեռքերով կառչեց ճյուղերից, որ կողմնակի աչքերից հրաշալի պաշտպանում էին նրանց:

Ինչ-որ մեկը արագ-արագ մոտենում էր: Ոտքերի տակ խշխշում էր խոտը, ճոթճոթում էին շորացած ճյուղերը:

Յաղուբը կառկոճ ծածկեց Իսմեթի դեմքը, որպեսզի վիրավորի հառաչանքը չմատնի իրենց: Յացկոն ձեռքի մեջ սեղմեց թուրը: Զլատկան կծկվեց՝ դողալով գիշերվա ցրտից ու սարսափից: Միայն Զվենիգորան իր սուր ականջով որսալով, որ գալիս է ինչ-որ մեկը՝ ծանր բեռը շալակին, հանգիստ սպասեց, մինչև որ գիշերային խավարը կուլ կտար անծանոթին:

Բայց անծանոթը կանգ առավ նավակի դիմաց և ինչ-որ անհասկանալի բան փնթփնթաց թփի տակ: Զվենիգորան մտրում հայհոյեց. երևում է, ստիպված պետք է լիներ գրողի ծոցն ուղարկել անկոչ հյուրին:

Չախ ձեռքով ճյուղից կառչած՝ Զվենիգորան դանդաղ թուրը դուրս քաշեց պատյանից: Բայց թփերի ետևից ծանոթ ձայն լսվեց.

— Ինձ թող էստեղ, պան Մարտին... էլ բարձր մի՛ տա... Սա էլ չեմ ապրի... Ինքդ փրկվիր քանի դեռ ուշ չէ...

— Է՛, պան Կվոչկա, դա ասպետությունն չի լինի,— ի պատասխան լսվեց Սպիրիտուսկու ձայնը:— Կայծակի փայ դառնամ, թե որ բնկերոջս թողնեմ դժբախտության մեջ:

— Ախր դու էլ կկորչես, ինձ էլ չես փրկի..

Զվենիգորան թուրը ետ դրեց պատյանը և թեթևացած շունչ քաշեց:

— Այս կողմ, պան Սպիրիտուսկի, այս կողմ,— շշուկով ձայն տվեց նա:— Կվոչկային իջեցրու նավակի մեջ:

— Ո՛վ Տիրամայր,— կանչեց պան Սպիրիտուսկին:— Լսո՞ւմ ես, պան Կվոչկա: Մերոնք են: Հիմա արդեն փրկված ենք:

Ափ դուրս եկավ ծանր բեռի տակ կռացած, արյուն ու

բրտինքի մեջ կորած լեհեր: Զվենիգորան նրանից ընդունեց վիրավորին ու պառկեցրեց նավակի հատակին:

— Շուտ նստիր, պան Մարտին, գնացի՛նք:

Սպիխալսկին նստեց: Զվենիգորան ուժգին ետ հրվեց ասփից, և նավակը, սրընթաց հոսանքի բերանն ընկած, լողաց դեպի գետի մեջտեղը:

ՖԵԼՅՈՒԳԱՆԻ ԾՈՒՂՈՒՄ

Ամբողջ մի օր լողացրն ծովում՝ առանց հանգստանալու: Միայն երկրորդ օրը, երբ քաղցը հաղթեց բոլորին, ասփ դուրս եկան մի ոչ մեծ գյուղի մոտ, և Յազուբը գնեց մի քանի տասնյակ շոր գարբբլիթներ ու մի գլուխ ոչխարի պանիր: Երրորդ օրը կըզըլ-Իրմակի ջրերի մեջ թաղեցին Իսմեթին: Իսկ ութերորդ օրը հասան ճահճակալած, եղեգնի մացառուտներով ծածկված գետաբերանին, որը Զվենիգորային հիշեցրեց Դենպրի անծայրածիր ճահճուտները: Ծահճի բուսականությունից ծանրացած, կանաչին տվող ջուրը ուրախ ծփում էր զով քամու պոռթկումներից: Խայտաբղետ թռչունների երամները այս ու այն կողմ էին սլանում թփուտների անծայրածիր տարածությունների վրա: Խաղաղ, պղտոր գետախորշերում ծուլորեն դես ու դեն էին գնում դանդաղաշարժ ձկնորսական նավակները:

Ուշ երեկոյան նրանք մոտեցան մի կղզու, որ ողողված էր ալեկոծությունից ու գետային ջրաբերուկներից: Զվենիգորան դուռ հեռվից նկատեց նեղլիկ վտակում կանգնած ֆելյուգայի ճերմակ առագաստը և նավակն ուղղեց այն կողմ:

Ափին կրակ էր վառվում, անուշ բուրում էր եփած ձուկը, խարույկի շուրջը նստած էին ձկնորսները և կաթսայից ախորժարեր ձկնապուր էին ուտում: Մթության մեջ նրանք շնկատեցին նավակը, որ անձայն մոտեցավ իրենց ֆելյուգային: Փախտականները անաղմուկ բարձրացան նավ և արագորեն սլարդեցին առագաստները: Թեքվելով ձախ կողմի վրա՝ ֆելյուգան հանդարտ առաջ սահեց վտակով, որ գետա-

¹ Ֆելյուգա — փոքր առագաստանավ:

բերանը միացնում էր ծովին: Այդ ժամանակ միայն լսվեցին ձկնորսների սուր ճղճղոցները, բայց շուտով դրանք լուծվեցին ալեկոծության աղմուկի մեջ:

Զվենիգորան կանգնել էր դեկի մոտ, և սիրտը լի էր ուրախությամբ, նրա առջև բացվել էր հայրենիքի ճանապարհը: Գերության մեջ անցկացրած ժամանակը ծանր երազ էր թվում, որ հեռացել էր անդարձ: Հիմա նա մի բան էր ուզում միայն՝ համընթաց բամի և հաջողություն: Իսկ հետո...

Ֆելյուզան արագ էր գնում: Ճոնչում էին պարանասարքերը, գվգվում էր առագաստը: Սրընթաց բամին նավն ավելի ու ավելի էր հեռացնում օտար ու մոռյլ ափերից:

Երկու օր անցավ առանց որևէ պատահարի: Ճանապարհին հանդիպած մի քանի նավերը ուշադրություն չդարձրին փախստականների վրա և անցան կողքից: Նավամբարում բավականաչափ տակառներով ջուր կար և շորացրած ձուկ: Ոչ մեկի մտքով չէր անցնում, թե կարող է դժբախտություն պատահել: Զվենիգորան հույս ուներ, թե ուր որ է կերևան թեք ափերը, իսկ այնտեղից ձեռք բերկարացնես՝ կհասնես Դնեպրին...

Բայց դժբախտությունը վրա հասավ անսպասելի, երբ ոչ ոք չէր սպասում:

Երրորդ գիշերը բամին հանդարտվեց, և առագաստը թուլացած լաթի պես կախ ընկավ: Ֆելյուզան կանգ առավ... Սակայն ծովը անհանգիստ էր, շառաչում էր տազնապահար, տնքում էր խուլ, իր հզոր կրծքի վրա թեթև տաշեղի պես օրորելով փոքրիկ նավակը:

Լուսինը թաքնվեց ամպերի ետևում, և շորս կողմը ծածկվեց անթափանց խավարով: Շնչելը դժվարացավ:

— Ամպրոպ է լինելու, — ասաց Յաղուբը՝ մոտենալով Զվենիգորային, որը դեկի մոտ հենց նոր էր փոխարինել Սպիլսակուն:

Զվենիգորան կոացավ նավեզրի վրայով, ձեռքի ափը սեղմեց ականջին: Հազիվ լսելի գվգոց հասավ նրա ականջին, որ կարծես ծովի խորքից էր բարձրանում: Նա գիտեր. այդպիսի գվգոցը տափաստանում հաստատ նշան էր այն բանի, որ հեծելագոր է գալիս: Իսկ ծովում... Մի՞թե փոթորիկ է լինելու: Մի՞թե, երբ մինչև Դնեպրի գետաբերանը մնացել է եր-

կու օրվա ճանապարհ, անսպասելի խտրնդոտը պիտի խանգարի իրենց:

— Առագաստն իջեցրեք: Մեկ էլ շմոռանաք յյուկը փակելու Շտապեք, բարեկամներ, — գոչեց նա՝ ականջ դնելով խուլ, հետզհետե սաստկացող գվվոցին:

Խավարի մեջ դժվար էր գլուխ հանել մեծ, ծանր առադաստից: Ծոպանները խճճվեցին: Ստիպված եղան կտրատելու Պաստառն ընկավ ցած, և դժվարությամբ տարան նավամբար:

Այդ ընթացքում ահեղ գվվոցը, որ, թվում է, գալիս էր բոլոր կողմերից, հանկարծ վերածվեց ծանր մոնչոցի ու շալչոնի: Ֆելյուզան ցնցվեց, թեքվեց ձախ կողին: Զվենիգորան ամբողջ ուժով ընկավ դեկի վրա, նավախելը շուռ տվեց բամու կողմը, որը իսկույն խլեց նրան փետուրի նման, տարուբերեց, պտտեց ու բշեց տարավ գիշերային խավարի մեջ:

Սառը ալիքները թավալվեցին տախտակամածի վրայով: Զվենիգորան դուրս թքեց ազի ջուրը և ամբողջ ուժով կառչեց թաց դեկից:

— Յաղուբ, Յացկո, ցած իջեք: Դուք էստեղ անելիք չունեք: Ես ու պան Մարտինը կմնանք վերևում, բավական է:

Մինչև վերջին թելը թրջված Յաղուբն ու Յացկոն, ճոպաններից բռնելով, անցան Ֆելյուզայի ցուկային մասը: Դրոնակը բացին և մի կերպ խցկվեցին նեղիկ նավախուցը: Անկյունում, մետաղյա շղթայից կախված կանթեղի մեջ ճոճվելով, դեղին կրակով մլմլում էր մոմը: Զլատկան նստած էր նստարանին, ձեռքերով փոքրիկ սեղանից պինդ բռնած, իսկ Կվոչկան պառկած էր հատակին: Նրա վերքը թարախակալի էր, ոտքը ուռել: Սաստիկ ցավերից վիրավորն ուզում էր գոռալ, ոռնալ, բայց ուժ չունեիր: Եվ միայն տնքում էր սրտաճմլիկ:

Յաղուբն ու Յացկոն անցան Կվոչկայի վրայով և տեղավորվեցին նստարանին, իրենց այնքան տարբեր, իրարից այնքան հեռու աստվածներին աղերսելով միայն մի բան, որ իրենց փրկի կատաղած տարբերից:

Փոթորիկը սաստկացավ: Զորս կողմը մոնչում էր, բլթբլթում, մուկզնում, ինչպես եռացող կաթսայում: Պոռթկուն բամին թեքեց կայմը: Տախտակամած նետեց ջրի հսկայական բլուրներ, կամենալով ինչ գնով լինի բարձրացնել, շուռ տալ

խարխուլ նազակը, սրբել նրան ծովի երեսից, ինչպես ցողը տերևի վրայից: Ֆելյուզան ճռնչաց, տնքաց, ճոթճոթաց, և, թվաց, թե ուր որ է փուլ կգա, ջարդուփշուր կլինի ևռացող, փոթորկածուփ խազարում:

Զվենիգորան ամբողջ մարմնով ընկել էր ղեկի վրա, զգալով, որ նազն այլևս իրեն չի հնազանդվում: Սպիխալսկին կախ ընկավ մյուս կողմից, և ընդհանուր ջանքերով միայն նրանք կարողացան ուղղել ֆելյուզան:

— Կդիմանա՞, — հարցրեց Սպիխալսկին:

— Ով գիտե: Հույսներս չպիտի կտրենք, եթե փոթորիկը չսաստկանա, գուցե մի կերպ զլուխ հանենք, — ի պատասխան բղավեց Զվենիգորան:

Մակայն քամու նոր պոռթկումը ֆելյուզան բարձրացրեց վիթխարի ալիքի կատարը, ապա թափով նետեց զարհուրելի անդունդը:

Կայմը ճոթճոթաց ու գղրգոցով տապալվեց ցուլի վրա: Մյուս ալիքը բեկորները բշեց անհետացրեց ծովի մեջ:

Անընդմեջ փայլատակում էին կայծակները: Սպիխալսկին դժգունած շուրթերով շնչաց. «Հիսուս, Մարիամ»: Զվենիգորան զգաց, որ կրծքի տակ սառչում է սիրտը: Ի՞նչ անհեթեթություն: Գերությունից ազատվել, այդքան վտանգներ հաղթահարել, որպեսզի խեղդվես ծովում...

Այդպես անցավ գիշերը: Առավոտյան Սպիխալսկին ինչ-որ բան առարկա նկատեց առջևում:

— Արսեն, ժայռ է, — գոչեց նա:

Երկուսն էլ ամբողջ ուժով ընկան ղեկի վրա: Ֆելյուզան թափով կտրուկ մի կողմ թեքվեց, աջ կողմ դնելով ալիքների ու քամու ուժեղ ճնշման տակ, համարյա թե պառկեց ալիքների կատարին: Եվ այդտեղ Զվենիգորան տեսավ, որ դա ժայռ չէ:

— Նավ է... գալերա՞ Շուտով ծովի հատակը կգնա: Պինդ կաց, Մարտին, հիմա մենք կզարկվենք գրան:

Նրանք է՛լ ավելի ուժգին սեղմեցին ղեկը, ջանալով մի կերպ սողոսկել անցնել տակնիվեր շուտ ևկած նավի կողքով: Բայց նրանց միջև եղած տարածությունն արագորին

1 Գալերա — խոշոր թիանավ:

կրճատվեց, և բախումից շկարողացան խույս տալ: Ֆելլու-
գան նավահանգիստով ուժգին զարկվեց գալերային: Լսվեց մի
խլացուցիչ ճայթյուն. դեկը կոտորվեց և ծածկվեց ալիքների
տակ:

Այժմ, երբ դեկը կոտորված էր, և ֆելլուգան պար էր գա-
լիս ալիքների վրա, նրանք այլևս անելիք չունեին տախտա-
կամածում, և մի կերպ մտան թաց ու մութ նավախուցը:

— Հը, ի՞նչ կա էնտեղ, — տնքտնքաց Կվոչկան: — Փոթո-
րիկը շա՞տ է կատաղած: Էնպես ճարճատեց ամեն ինչ, որ
մեզ թվաց, թե արդեն սուղվում ենք:

— Առայժմ դեռ չենք սուղվել, բայց... կսուղվենք, հա-
մողված եղիր, պան Կվոչկա, — մռայլ պատասխանեց Սպի-
խալսկին:

— Կսուղվե՞նք... — Կվոչկան երկար ժամանակ լռեց, ապա
կամացուկ ասաց. — Բոլորը իմ պատճառով...

— էդ ո՞նց թե, — հարցրեց Զվենիգորան:

— Կա մի հին կազակական հավատալիք. երբ ծով է
դուրս գալիս մեղավոր մարդը, ապա և՛ իր, և՛ ընկերների
զխին անպայման փորձանք է բերում: Փոթորիկը խորտա-
կում կամ ջարդուփշուր է անում նրանց նավը: Իսկ ես մեծ
մեղավոր եմ... Երբ փախա պան Յաբլոնովսկուց, մորս ու
եղբորս խոստացա, որ նրանց կազատեմ շլյախտական գե-
րությունից, կտանեմ ինձ հետ, որպեսզի սինլբոր պաները
չծիծաղեն նրանց վրա, ծաղրուծանակի չենթարկեն...

— Դե, դե, պան Կվոչկա, այդքան դաժան չեն լինի, —
ձայնը բարձրացրեց պան Սպիխալսկին: — Կարելի էր ուրիշ
խոսքեր գտնել:

— էլի եմ ասում. որպեսզի սինլբոր պաները չծիծաղեն
նրանց վրա, ծաղրուծանակի չենթարկեն: Բայց ոնց որ հե-
ռացել եմ, էդպես էլ մինչև օրս... Անիծված: Մոռացել եմ
մորս ու եղբորս... Թողություն չկա ինձ: Դրա համար էլ ասու-
ված պատժում է ինձ, ինձ հետ էլ՝ ձեզ:

— Հիմարություններ մի՛ դուրս տա, — ձայնը բարձրաց-
րեց Զվենիգորան, հասկանալով, թե խոսքը ուր է թեքում: —
Մենք բոլորս էլ մեղավորներ ենք, բացի Յացկոյից ու Զլատ-
կայից:

— Ինձ մի՛ համոզիր, Զվենիգորա, — բողբոջեց Կվոչկան: —

Զգում եմ, որ մոտենում է ժամանակը, երբ ես պետք է կանգնեմ աստծո առաջ: Այսպես ուրեմն. վերջին պահին գուցե օգնեմ ձեզ փորձանքից ազատվելու: Կվոչկայի համար ոչ ոք լաց չի լինի. կնիկս ու երեխեքս գերության մեջ են, մերս, երևի, վաղուց է մեռել... Իսկ եղբայրս լաց լինելու ժամանակ չունի. նա հաղիվ հասցնի պանի մտրակների տեղը տրորել, սատանի փայ դառնան նրանք:

— Ըհը՛, ըհը՛... — հազաց պան Սպիխալսկին, բայց լուռ մնաց:

Իսկ Կվոչկան շարունակեց.

— Իս լսել եմ ձերունիններից, որ եթե էդպիսի մեղսագործը փոթորկի ժամանակ իր հոժար կամքով ծովը նետվի, և վերջինս ընդունի զոհաբերությունը, ապա փոթորիկը կհանդարտվի:

— Հիմարություն է, — նորից բղավեց Զվենիգորան, սակայն նրա ձայնը անվստահ հնչեց: — Մենք թույլ չենք տա այդպիսի բան անես:

— Բարեկամս, նույնիսկ տեր աստվածն ինքը իշխանություն չունի մահվան վրա: Իսկ դու ուզում ես կանգնեցնել նրան: Զուր ջանքեր են:

Նրանք լռեցին: Ալիքները նավը շորացած կեղևի նման մի կողմից մյուսն էին շարտում: Ամեն ինչ ճոթճոթում էր ու ճոնչում: Յուրաքանչյուր բռակն կարող էր նրանց համար վերջինը լինել:

Կայծակի նոր ուժգին հարվածից ու քամու պոռթկումից հետո, երբ թվում էր, թե նավը ծառս եղավ և ուր որ է շուռ կգա, Կվոչկան, տնքտնքալով ելավ տեղից, նստարանի երկարությամբ դանդաղ զնաց դեպի դուռը և բացեց:

— Էդ ո՛ւր, — ուշքի եկավ Զվենիգորան:

Բայց Կվոչկան, ձեռքն առաջ պարզելով, կանգնեցրեց նրան:

— Մնաք բարով: Իմ օրերը հաշված են: Իսկ ձեզ գուցե դեռ բախտ վիճակվի հասնելու հայրենիք...

Նրա ձայնի մեջ ինչ-որ արտասովոր ուժ ու ջերմության կար: Զվենիգորան ցնցվեց, հասկացավ, որ այդպես կարելի է խոսել միայն մեռնելուց առաջ: Նա շհամարձակվեց ետ պահել այդ տառապած, բայց հոգով ուժեղ մարդուն:

Կվոչկան: թեթևակի ձեռքով արեց, ժպտաց, առողջ ոտքով հենվեց շեմին և դրեթի դուրս նևտվեց տախտակամած: Նույն ակնթարթին էլ վիթխարի ալիքը ամբողջովին ծածկեց նրան: Երբ ֆելյուզան դուրս եկավ ջրի տակից, տակտակամածին ոչ ոք չկար:

— Ո՞վ սուրբ Մարիամ, — հագիվ լսելի շշնջաց պան Սպի-խալսկին:

Բոլորը լուռ էին:

Հաջորդ օրն էլ ոչ մի թեթևություն չբերեց: Անվերջանալի ցնցումներից ու ծովային հիվանդությունից փախստական-ների դեմքերը կանաչել էին: Նրանց աչքերի առջև աշխարհը շուտ էր գալիս. մեկ գլորվում էր անդունդը, մեկ ծառս էր լինում՝ բարձրանալով սրբնթաց ջրապատնեշի կատարը:

Միայն երրորդ օրը փոթորիկը հանդարտվեց: Երկնքում լողում էին մռայլ գորշ ամպերը, ծովում լեռնանում էին ծանր, հսկա ալիքները և նավը ծղոտի նման դեսուղեն շարտում: Թե ուր էր գնում նավը առանց դեկի ու առագաստի, ոչ ոք չգիտեր: Ամպերի միջից անհնար էր տեսնել արևը կամ աստղերը, որպեսզի որոշեին, թե ուր են գնում: Ստիպված էին նստել ու համբերությունամբ սպասել իրենց բախտին:

Անցավ ևս մեկ օր, հետո՝ էլի մի գիշեր: Դանդաղ ցրվեց ծանր, գորշ մառախուղը: Եվ հանկարծ մառախուղի միջից աղոտ գծագրվեց բարձրադիր ափի ուրվագիծը:

— Ցամաքը, ցամաքը, — գոռաց Յացկոն:

Հոգնած, ուժասպառ փախստականները ուշադիր նայեցին անծանոթ երկրին: Ի՞նչ ափ է տեսնես: Մովը ո՞ւր է բերել իրենց: Դարձյալ Թուրքիա՞: Ղրի՞մ: Իսկ գուցե և Բուլղարիա՞:

Զվենիգորան հաստատ գիտեր, որ Դնեպրի գետաբերանը չէ և ոչ էլ Վալախիայի կամ Մոլդավիայի ափերը, որ ցածր են ու անտառազուրկ: Նշանակում է...

Բայց մտածելու ժամանակ չկար: Ֆելյուզան արագորեն մոտենում էր ափին: Արդեն լսվում էր ալեբախություն աղ-մուկը:

Անհանգստացած փախստականները պայմանավորվեցին, թե ինչպես պահեն իրենց, եթե պարզվի, որ նորից Թուրքիա են ընկել: Ամեն ինչ կախված կլինի հանգամանքներից: Բայց

բոլորը համաձայնեցին, որ Յաղուբը կներկայանա որպէս տրապիզոնցի վաճառական, Զլատկան՝ նրա աղջիկը, իսկ Զվենիգորան, Սպիրալսկին ու Յացկոն՝ գերիներ:

Ափի մոտ մի ցամաքալեզվակ երևաց: Նրանց հենց այնտեղ էլ թշում էր ալիքը: Հանդիպումը կարող էր ճակատագրական լինել ոչ միայն նավի, այլև մարդկանց համար: Թեև փոթորիկը հանդարտվել էր, բայց ալեբախությունը շատ ուժեղ էր:

Զվենիգորան կանգնեց Զլատկայի կողքին, որպէսզի հարկ եղած դեպքում օգնի նրան: Յաղուբը աղոթողի նման բարձրացրել էր ձեռքերը, կարծես ալլահից փրկություն էր աղերսում: Միայն Յացկոն էր հանգիստ. նա չէր պատկերացնում, որ ափի հետ հանդիպումը ոմանց համար կարող էր վերջանալ մահով կամ խեղանդամությամբ:

— Ափը ելլորովին ամայի է, — ասաց տղան՝ ղննելով լեռները, որ սանդղածն իջնում էին գրեթե մինչև ծով:

Սակայն ոչ ոք նրան չպատասխանեց: Ֆելյուգան անսպասելի կանդ առավ, ճարճատեց, ճթճթաց, և մարդիկ ճիչ ու աղաղակով թռան փրփրած պղտոր ջրի մեջ...



ՄՈՎԱՓՆՅԱ ԽՐՃԻԹԸ

1

Ափը միայն առաջին հայացքից էր ամայի թվում: Եթե Յացկոն ուշադիր նայեր, ապա կնկատեր սոճու անհարթ գերաններից կառուցված խրճիթը, որ պատսպարվել էր մի հարմարավետ ձորակում՝ ծովային քամիներից թեքված, կորացած ծառերի պաշտպանությամբ:

Խրճիթի ցածրիկ դուռը կրնկի վրա բաց էր: Շեմքին նըստել էր մի ծերունի՝ ձկնորսական ուռկանը ձեռքին: Ուռկանը ծածկված էր կեշու կեղևից պատրաստված պինդ լողաններով: Մերունին հերթով ստուգում էր դրանք իր խիլավոր մատներով, մեկ-մեկ շարժում էր, գտնում էր կտրված տեղերն ու ճարպկորեն կտրված ծայրերը կպցնում ոլորված կանեփաթելով:

Պապի դեմքը թուխ էր, կնճիռներով ակոսված, բայց ծերունական զեղնակություն ուներ: Սպիտակ մազերը երիզում էին բարձր, արևառ ճակատը և ծանր ալիքներով թափվում կողքերից: Սև, փոքր ինչ պղտորված աչքերը ուշադիր նայում էին փրշոտ հոնքերի տակից: Մաքուր, սպիտակ վերնաշապկի օձիքը կապված էր կապույտ ժապավենով, որ վկայում էր, թե տանը հոգատար կանացի ձեռքեր կան:

Եվ իսկապես, խրճիթի անկյունից դուրս վազեց միջահասակ, թմբկիկ մի աղջիկ՝ փայտե դուլը ձեռքին: Հուզմունքից այծի թանձր կաթը թափթփելով՝ նա նետվեց դեպի պապը:

— Լելե, մալե՛: Հալա մի ծովին նայիր, պապիկ: Նավը

¹ Լելե, մալե (բուլղար.) — օյ, մերիկ:

սուղվում է: Մարդիկ թափվում են ջուրը, մարդիկ... Պետք է փրկել: Վաղենք ծովափ: Շուտ:

Մերունին մի կողմ դրեց ուռկանը, ոտքի ելավ և, ձեռքը ճակատին դնելով, ծովին նայեց: Այնտեղ, ափամերձ քարերի մոտ, ջրի վրա սեին էր տալիս շրջված նավը: Ալիքները ծեծում էին նավը, քրքրում, քարշ տալիս դեպի ափ: Քիչ հեռվում, ջրի մեջ թպրտում էին մարդիկ: Ալիքների խշշոցի մեջ լսվում էին նրանց հուսահատ ճիչերը:

— Շո՛ւտ,— կանչեց ծերունին և անսպասելի արագությամբ, մի բան, որ բնավ չէր համապատասխանում նրա պատկանելի արտաքինին, ուստոստալով, աղջկա ետևից վազեց դեպի ափ:

Քամիներից լավ պաշտպանված մի փոքրիկ ծովախորշում կանգնած էր ձկնորսական նավակը: Աղջիկն առաջինը տեղ հասավ, վերցրեց թիերը: Մերունին շտապեց նրա ետևից:

— Կաց, Մարիյկա: Ես էլ եմ գալիս:

Նա ընթացքից ցատկեց նավակի մեջ: Թիերի ուժգին թափահարումով նավակն արագորեն դուրս եկավ ծովախորշից և, փրփրաբաշ կոհակները ճեղքելով, սլացավ դեպի ալիքների մեջ թպրտացող մարդիկ:

Առաջինը նավակ բարձրացավ Յացկոն: Նա օգնեց անսպասելիորեն հայտնված փրկարարներին՝ ջրից դուրս քաշելու Զլատկային ու Յալուբին, որը արդեն բոլորովին ուժասպառ էր եղել:

Զվենիգորան ու Սպիրիալսկին նավակ չբարձրացան, որպեսզի շուտ շքա, այլ նավելրից բռնած, լողացին կողքով:

— Նա քո հա՞յրն է,— հարցրեց աղջիկը՝ մատնացույց անելով Յալուբին, երբ ափ էին դուրս եկել:

— Այո,— պատասխանեց Զլատկան:

— Բա մա՞յրդ որտեղ է:

— Ես մայր չունեմ: Որք եմ:

Դա համարյա թե ճիշտ էր: Զէ որ Զլատկան ամենևին չէր ճանաչում իր ծնողներին: Ասենք հայտնի էլ չէր՝ նրանք դեռ ողջ էին, թե ոչ:

— Խե՛ղճ աղջիկ,— Մարիյկան խղճաց հյուրին և, նրան տուն տանելով, շոր դգեստներ ավեց, որպեսզի Զլատկան շորերը փոխի:

— Դարդ մի՛ անի: Լավ է, որ կենդանի ես մնացել: Իսկ որբեր աշխարհում շատ կան... Ես էլ եմ որբ:

— Մի՞թե նա քո հայրիկը չէ:

— Ոչ, նա իմ պապն է: Իմ միակ հարազատը: Հորս ու մորս ես չեմ էլ հիշում: Նրանց մահապատժի են ենթարկել, երբ ես դեռ շատ փոքր եմ եղել:

— Մահապատժի են ենթարկե՞լ: Ուրբե՞ր:

Մարիյկան կմկմաց, ասես տատանվեց՝ ասի՞, թե չասի: Նրա արևառ, թուխ դեմքին թախիժ իջավ, իսկ աչքերը խոնավացան: Աղջիկը ուժեղ, աշխատավոր ձեռքեր ուներ, տղայի նման լայն, բայց կանացիորեն կլորիկ ուներ: Ոչ բարձրահասակ, լիքը, ամրակազմ, ինչպես հասած, հյութալի խընձոր: Նա ուժեղ էր և յուրովի գեղեցիկ: Բոլորը, ուլբեր ճանաչում էին Մարիյկային, նույնիսկ պապը, նրան կոչում էին դունդա, այսինքն՝ հասուլիկ: Նա չէր նեղանում և սիրով արձագանքում էր այդ մականվանը:

— Այն ժամանակ մեր գյուղում հայդուկներ են թաքնված լինում, ապստամբներ, — ասաց Մարիյկան կամացուկ: — Ենիշերինները իմանում են այդ մասին ու վրա պրծնում: Բոլոր խրճիթները վառում են, իսկ մարդկանց տանջելով սպանում: Իմ ձնողներն էլ էդ ժամանակ են զոհվում: Պապիկին հաջողվում է ինձ դուրս բերել կրակների միջից ու փախչել սարերը: Այլևս ետ չի դառնում: Հստեղ խրճիթ է սարքում, ու էդ օրվանից երկուսով ապրում ենք ծովի ափին: Պապիկը ձուկ է որսում, իսկ ես այժմ ու ոչխար եմ արածացնում, անտառում ստնկ եմ հավաքում, ընկույզ, տանձ, սալոր...

— Իսկ հայդուկները, որոնց մասին ասացիր... Մինչև հիմա էստե՞ղ են, — Զլատկան ձայնը իջեցրեց:

— Ինչի՞ համար ես հարցնում:

— Վախենում եմ... Հանկարծ ու էստեղ գան...

— Խենթուկ... — Մարիյկան ծիծաղեց: — Հայդուկները բարի են, լավ մարդկանց ձեռք չեն տալիս... Դե դու էլ, չնայած թրբուհի ես, բայց տես մեր լեզվով ինչ լավ ես խոսում: Ոնց որ իսկական բուլղարացի:

— Իմ դայակը բուլղարուհի էր:

— Այ թե ի՞նչ...

Թեև Մարիյկայի ձայնը առաջվա պես մեղմ ու գորովա-

լից հնչեց, բայց աչքերում սառնութիւն նկատվեց: Ուշադիր նայելով Զլատկային՝ նա ելավ տեղից:

— Օյ, չեղե, մոռացել եմ, որ շորբան¹ կրակի վրա է:

2

Մարիչկան դուրս վազեց նախասրահ, իսկ ծերունին դիմեց իր հշտերերին.

— Խնդրեմ, դրուգարներ², համեցեք ծերունի Մոմչիլի տունը: Մարիչկան շորբա է եփել, հաց ու սպանիր էլ կճարվի: Ասենք, մի շիշ ռակիան³ էլ չի խանդարի:

— Շնորհակալ ենք, բայց Մոմչիլ, մենք հաճույքով կուտարվենք ձեր հշտրասիրութիւնից, — պատասխանեց Զվենիգորան: — Ճիշտը որ ասենք, փորներու մեջքներիս է կսկել:

— Որտեղի՞ց է գալներդ, դրուգարներ: Եվ ի՞նչ մարդիկ եք:

Զվենիգորան սպասում էր այդ հարցին: Ու թեև Մոմչիլ պապը ազնիվ մարդ էր թվում նրան, պատասխանեց, ինչպես որ պայմանավորվել էին.

— Տրապիզոնից նավով գնում էինք Վառնա: Մեր վաճառական տիրոջ հետ: Մենք կաղակներ ենք... հավատով՝ քրիստոնյաներ...

— Ասել է թե ռուսականեր⁴ եք, — ուրախացավ ծերունին: — Դե լավ է: Բայց ինչո՞ւ եք ձեր տիրոջը էզբան նրես տալիս: Կարելի է կարծել, թե նա ձեզ եղբայր է դալիս կամ՝ քեռի... Բռներ էդ թուրքի ոտներից ու ծովը շարտեք սաղայելին: Իսկ դուք՝ հայդե ձեր տները:

Փախստականները նայեցին միմյանց ու թեթևացած շունչ քաշեցին: Բանից դուրս է գալիս, որ բարեկամների մոտ են ընկել: Կամ, գուցե, խորամանկ ծերունին փորձո՞ւմ է իրենց: Բայց չէ, չի երևում:

— Ազատութիւն մասին մենք էլ ենք մտածում, բայց Մոմչիլ, — պատասխանեց Զվենիգորան: — Ո՞վ չի ուզի տուն վե-

¹ Չորբա (բուլղար.) — սպուր:

² Դրուգար (բուլղ.) — բնկեր, բարեկամ:

³ Ռակիա (բուլղ.) — օղի:

⁴ Ռուսնակ (բուլղ.) — ռուս:

րադառնալ, ազատ ապրել: Բայց դեռ ժամանակը չի եկել... Իսկ մեր տերը՝ Յաղութը, բարի մարդ է, շատ էլ թե թուրք է: Նրա աղջիկը՝ Ադիկեն էլ լավն է: Մենք շենք կարող նրանց շարիք պատճառել, իսկ եթե որեէ մեկը հարձակվի նրանց վրա, կպաշտպանենք: Էդպես չէ՞, բարեկամներ:

— Բա ո՞նց, — բացականչեց Սպիխալսկին: — Պան Յաղութի համար կյանքներս էլ շենք խնայի:

— Հը՛մ, համենայն դեպս երևում է, էդ թուրքը ձեզ ոնց որ թե աղջկան է դալիս, — զարմացավ Մոմչիլը: — Դե աստված նրա հետ... Դնանք հաց ուտենք:

Զվենիգորային թվաց, թե ծերունին կասկածանքով է նայում իրենց, բայց նշանակութուն չտվեց դրան: Ուզում էր շուտ ճաշել ու բնել: Ծովում անցկացրած ծանր, անքուն գիշերները զգացնել էին տալիս իրենց:

Ճաշը համեղ էր: Ոչխարի մսով անուշահամ չորքան բուրբիս գուր եկավ: Պան Սպիխալսկին մի գավաթ ոակիա խմելով մոռացավ շյախտական կանոնները և ազմուկով սկսեց խփշտել չուղալի ապուրը, ինչպես հասարակ խոլոպ: Զվենիգորան զգաց, որ խաղողի ոակիան բնավ էլ այդքան թունդ չէ, ինչպես զապորոժյան գորիլկան¹, բայց չցանկանալով վիրավորել հյուրընկալ տանտիրոջը, նա գովեց և՛ ոակիան, և՛ շորբան, և՛ աղի պանիրը:

Ճաշից հետո բոլորի բունը տարավ: Մարիյկան Զլատկային տարավ իր սենյակը: Իսկ տղամարդկանց համար անկողին գցեցին ձեղնահարկում: Այնտեղ թարմ խոտ էր լցրած, և ուժասպառ եղած փախստականները իսկույն բնեցին:

Երբ Զվենիգորան արթնացավ, արդեն ուշ էր: Ձեղնահարկում մոթ էր: Ե՛վ Յացկոն, և՛ Սպիխալսկին պինդ քնած էին: Զվենիգորան շուտ եկավ մյուս կողքին, բռունցքը դրեց գլխի տակ և կրկին աչքերը փակեց: Բայց այս անգամ նրան շհաջողվեց բնել: Նախասենյակից խուլ շշուկներ էին լսվում: Մոմչիլն էր խոսում:

— Սպասիր, Դրագան, ես կփակեմ ձեղնահարկի դռնակը, որպեսզի հյուրերը չլինի թե ցած իջնեն: Թող իրենց համար խումփացնեն մինչև առավոտ...

¹ Գորիլկա — զապորոժյան թունդ օդի:

Զվենիգորան շունչն իրեն պահեց: Ի՞նչ է պատահել: Ի՞նչ է կատարվում ներքևում: Մոմչիլը ինչո՞ւ է զգուշանում իրենցից:

Կամացուկ թրիկաց դոնակը, փականքը ճոնչաց: Նախասրահից կրկին ձայներ լսվեցին, բայց այս անգամ արդեն ոչինչ ջոկել չէր լինում: Հետո բացվեց դրսի դուռը, և լուծյուն իջավ:

«էհե՛, էստեղ ինչ-որ բան էն չէ,— մտածեց Զվենիգորան:— Զլինի՞ ծերունին չար մտադրություն ունի: Գուցե ուզում է մեզ հանձնել թուրքական իշխանություններին: Զէ՞ որ գերի փախստականներին բռնելու համար լավ փող են վրձարում»:

Արսենը մեկ ուղեց արթնացնել ընկերներին, բայց մտածեց, որ պետք չէ: Այս ականակույր խավարում երեքով այնպիսի աղմուկ կբարձրացնեն, որ Մոմչիլը և իր հանցակիցները իսկույն կլսեն: Զէ՛, ավելի լավ է ինքը ամեն ինչ իմանա:

Դեռ ցերեկը, քնելուց առաջ, կապակական սովորությամբ նա ուշադիր գննեց ձեղնահարկը և նկատեց, որ տանիքի տախտակներով ծածկված ճակատային մասում մի փոքրիկ զրոնակ կա, որտեղից, ըստ երևույթին Մոմչիլը խոտ էր լցնում: Զգուշությամբ, գերանները ափսոսելով, նա հասավ սլատին: Բարեբախտաբար զոնակը փակված չէր: Կամաց բաց արեց, դուրս նայեց:

Առջևում, ասաղալից մուգ կապույտ երկնքի հենքի վրա սեին էին սալիս լեռները: Ետևում, ինչ-որ տեղ, խրճիթի մյուս կողմում խշշում էր ծովը: Զվենիգորան իր Լտեից ծածկեց դոնակը և թեք կտուրից նայեց բակի կողմը: Այնտեղ գլուխ-գլխի տված կանգնած էին մի քանի մութ կերպարանքներ: Շրջանի մեջ ճերմակին էր սալիս Մոմչիլի քաթուղը: Մարիյկան, մի կողմ կանգնած, բռնել էր երկու ջորիների սանձերից:

Տղամարդիկ խոսում էին ինչ-որ բանի մասին, սակայն Զվենիգորան ոչինչ լսել չկարողացավ. ծովի աղմուկը խանգարում էր: Մոմչիլն ասաց.

— Ժամանակն է:

Մարիյկան քաշեց ջորիների սանձերից ու գնաց առջևից:

Նրա ետևից շարժվեցին տղամարդիկ: Մոմչիլն էլ հետները. նրանք շորս հոգի էին:

Զվենիգորան իջավ կտուրից և գնաց նրանց ետևից:

Նրանք թեքվեցին արահետը, որ տանում էր դեպի ծովափնյա սվազարլուրները: Ծանապարհը անծանոթ էր, և Զվենիգորան քայլերն արագացրեց, որպեսզի մթության մեջ չկորցնի գորշ կերպարանքները: Հանկարծ իրենից բիշ հեռու, մեծ քարածայռերի հտևում նա մի մարդ նկատեց, ոչը իր նման թաքուն հետևում էր Մոմչիլին ու նրա ընկերներին:

Անծանոթը Զվենիգորային շէր տեսել և կուղեկուզ, անձայն առաջ էր գնում Մոմչիլի ու նրա ուղեկիցների հետքերով:

Զատիկող, քարքարոտ ավիին Մոմչիլը կանգ առավ և ինչոր բան ասաց Մարիյկային: Աղջիկը ջորիներին պահեց: Տրդամարդիկ անհետացան մութ նեղլիկ անցքի մեջ, որ ողողված էր անձրևաջրերի բերած կրաքարից: Մի քանի բույսեր անց նրանք այնտեղից դուրս եկան ծանր կապոցներով:

— Վոյեվոդան բեղանից շատ գոհ կմնա, բայ Մոմչիլ,— ասաց ծերունու ուղեկիցներից մեկը:— Այս օգնությունը շատ ժամանակին է: Շուն Սաֆար բեյը հարձակում է պատրաստում Զեռնավոդայի վրա: Մենք էլ նրան կղիմավորենք արճճե նրվերներով:

— Էստեղ հինգ փութ արճիճ կա, նույնքան էլ՝ վառոդ,— պատասխանեց Մոմչիլը:— Մի շարաթ հետո, թե որ լավ եղանակ լինի, երկու էսքան էլ կստանամ: Ուրեմն, Դրագան, շորս հինգ ջորի բեր հետդ, հա՛, փող էլ շմոռանաս: Հարկավոր է սուաջուց վճարել:

— Ես Վոյեվոդային կհաղորդեմ...

Նրանք ծանր բեռները բարձրացրին ջորիներին ու ետ դարձան:

Զվենիգորան, ժայռին սեղմված, ոչ մի բառ բաց չէր թողնում: Նա քիչ բան հասկացավ նրանց խոսակցությունից: Սակայն համոզվեց որ Մոմչիլն ու նրա բարեկամները ոչ մի շարդիտավորություն չունեն իրենց նկատմամբ:

Հիմա նրան ավելի շատ անհանգստացրեց անծանոթը: Կտակած չկար, որ նա թշնամի էր: Բարեկամը թաքնվելու և ծածուկ հետևելու կարիք չունի:

Տեսնելով, որ բուլղարացիները ետ դարձան, անծանոթը

սեղմվեց գետնին, սպասեց մինչև քայլերի ձայնը լսեց, և ոտքի ելավ: Այդ պահին էլ մի ուժեղ ձեռք բռնեց նրա օձիքից.

— Օ՛, ալլահ,— դուչեց անծանոթը:

— Ո՞վ ես,— հարցրեց Զվենիգորան:— էստեղ ի՞նչ ես անում:

Ի պատասխան, անծանոթը դուրս քաշեց դաշույնը, բայց Զվենիգորան կանխեց նրան ու յաթաղանը խրեց նրա թիակների արանքը: Անծանոթ մի ճիշ արձակեց և, գետին տապալվելով, ձեռքից բաց թողեց զենքը:

Դոտոցի վրա վազեցին եկան բուզարացիները: Այդ միջոցին լուսինը դուրս եկավ, և Զվենիգորան տեսավ, որ նրանցից մեկը ջահել, շորշորուկ մի պատանի է, մյուսը՝ գիրուկ մի աժդահա, ճերմակ, անթև քուրքը հագին:

— Դո՞ւ ես ուսնակ,— զարմացավ Մոմչիլը՝ ճանաչելով Զվենիգորային,— ի՞նչ է կատարվում էստեղ: էդ ո՞ւմ ես սպանել: Ինչպե՞ս հայտնվեցիր...

Զվենիգորան պատմեց իր գլխին եկածը և վերջում ոտքով բռթեց անծանոթի դիակը:

— Իսկ թե ում եմ սպանել՝ չգիտեմ:

Մոմչիլը շուռ տվեց անծանոթի դիակը, նայեց նրա դեմքին:

— Վա՛հ, ախր սա վասիլենն է, ոտտիկանը կամեննայա բրողից: Պոմակ է: Զար մարդ էր: Նա երևի հետևել է մեզ: Դրագան,— ծերուկը դարձավ սպասանուն,— դուք անմիջապես պետք է հեռանաք էստեղից: Ինչ իմանաս, մոտերքում արդյո՞ք ոտտիկանների կամ ենիչերիների ջոկատ չկա:

— Իսկ մի՞թե ձեզ վտանգ չի սպառնում, բայց Մոմչիլ,— ի պատասխան հարցրեց Դրագանը:— Զեղ համար եմ անհանգստանում:

— Ուզում ես ասել Մարիյկայի համար, խորամանկ,— ճերմակ բեղերի մեջ ժպտաց Մոմչիլը:— Մի՛ վախենա: Քանի գեռ ձեզ չեն բռնել, մենք վախենալու բան չունենք: էդ շանը կզցեմ ծով, ոչ ոք էլ չի իմանա, թե ինչ եղավ, ուր կուրավ:

— Զեղ մոտ կգամ մի քանի օր հետո, բայց Մոմչիլ,— ասաց Դրագանը:— Օրվիննայա լեռը որ անցնենք, նրանից

հետո Գունդիոն կտանի ջորիները: Այնտեղ արդեն անվտանգ է: Իսկ ես ետ կգամ:

— Ոնց ուզում ես, — պատասխանեց Մոմչիլը և խնդրեց հաստիկ ածղահային. — Գունդիո, օգնիր ինձ՝ էս լեշը տանենք ափ, ես սրա վզից բար կկապեմ ու կշարտեմ ծովը՝ ափից հեռու:

Մոմչիլը ուզեց վերցնել ոստիկանի դիակը, բայց Գունդիոն կանխեց նրան: Գրկեց, ոնց որ մի խտիտ ծղոտ, ու վազեց դեպի ափ: Մի քանի բոպե անց վերադարձավ: Շունչը տեղը բերելով, բամբ ձայնով ասաց.

— Արդեն:

— Տարա՞ր:

— Շարտեցի:

— Ինչպե՞ս թե շարտեցիր: Ի՞նչ, — անհանգստացավ Մոմչիլը:

— Ծովը: Բռնեցի ոտքերից, պտտեցի ու շարտեցի: Մենակ զլզլացրեց:

— Ա՛խ, էդ ինչ ես արել, Գունդիո, — բացականչեց Մոմչիլը: — Ախր ծովը ափ կհանի:

— Զի հանի, — մոռյլ պատասխանեց ածղահայն:

— Եթե Գունդիոն է շարտել, չի հանի, — ծիծաղեց Գրագանը: — Երևի նրան ծովի մեջտեղն է հասցրել:

Բռնելով ջորիների սանձերից՝ տղաները հրաժեշտ տվեցին և անհետացան խավարի մեջ: Մարիյկան ուզում էր ուղեկցել նրանց, բայց Մոմչիլը թույլ չտվեց:

— Մի՛ գնա: Հարկավոր է շուտ տուն դառնալ: Վախենում եմ, որ վասիլը մենակ չի բարշ Լկել էստեղ, — և դարձավ Զվենիգորային. — Իսկ դու ջահել, կտրիճ աղա ես: Շնորհակալությույն:

3

Մինչև առավոտ այլևս ոչ ոք չբնեց: Բոլորը հավարվեցին իրճիթի ամենաարնդարձակ սենյակում և մոմի լույսի տակ մանրամասն քննարկեցին, թե ինչ անեն այնուհետև: Սպիտակիս անհանգստացավ ն առաջարկեց անհասլաղ թաքնվել լեռներում: Զվենիգորայի գլխում մի ուրիշ միտք էր հասու-

նացել: Մոմչիլից նա իմացավ, որ մինչև Բուրգաս կարելի է հասնել ծովով, մակույկով: Իսկ այնտեղից մինչև Ռուդնիկ, որտեղ պետք է որ լիներ Սերկոյի եղբայրը, երկու քայլ է:

Սակայն այդ մասին նա առայժմ բան չասաց:

Բաց դռնից լսվում էին Յաղուբի տնքտնքոցները: Զլատկան բոպեն մեկ վազում էր նրա մոտ, ջուր տալիս, կամ անկողինն էր ուղղում: Նրա ճկուն կերպարանքը մեկ հայտնվում էր կիսախավար սենյակում, մեկ՝ անհետանում խոհանոցի մթության մեջ: Զվենիգորան բռնեց իրեն այն մտքի վրա, որ նախանձում է Յաղուբին: Կուղենար, որ Զլատկայի ձեռքերը իր գլուխը բարձրացնեին, որ նա կավե գավաթով աղբյուրի սառը ջուր տար իրեն: Արսենն արդեն գիտակցում էր, որ սրտում մի քաղցր, արբեցնող զգացմունք է ծնվում, և դա ամենից շատ էր անհանգստացնում նրան: Աչքերի առջև շարունակ կանգնած էր Զլատկան: Նույիսկ քնի մեջ: Դրա համար էլ հիմա տանջվում էր կազակը, չէր իմանում ինչ վճիռ կայացնի՝ մնա այստեղ, որպեսզի պաշտպանի Զլատկայի՞ն, թե գնա Բուրգաս՝ նեստոր Սերկոյին փրկելու:

Լույսը սկսեց բացվել: Մովի վրա երկինքը շառագունեց: Մարիյկան նախաճաշ պատրաստեց, սեղանը ծածկեց ասեղնագործ սփռոցով: Մոմչիլը մառանից մի տակառիկ ռակիա բերեց: Զվենիգորայի գիշերային խիզախությունը հուզել էր ծերունուն և շքացրել փախստականների նկատմամբ ունեցած կասկածները: Բարձրացնելով թասը՝ Մոմչիլը հանդիսավորությամբ ասաց.

— Խմում եմ քաջ յունակ՝ Արսենի կենացը... Զեր հայրենիք վերադառնալու կենացը, դրուգարներ: Թող ոչ մի թուրջ չհանդիպի ձեր ճանապարհին:

Խոհանոցից դարձյալ լսվեց Յաղուբի տնքտնքոցը:

— Բացի մեր բարեկամ Յաղուբից, — ավելացրեց Զվենիգորան: — Որովհետև ամեն մի վաշենեց² բարեկամ չէ, բայց Մոմչիլ, և ոչ բոլոր թուրքերն են թշնամի... Պատահում է, քո աղգակիցը թաթարից էլ վատ է դուրս գալիս. ծախում է ու փողերն է հաշվում, դնում գրպանը...

1 Յունակ (բուլղ.) — հերոս:

2 Վաշենեց (բուլղ.) — հայրենակից:

Նա կոնծեց գավաթը: Ռակիան հաճելի էր, անուշաբույր: հետք լեռնային արմտիրեների թուրմ էր խառնած:

Մոմշիլն էլ խմեց և պինդ, ճերմակ ատամներով կրծեց ոչխարի խորովածը: Երբ Զլատկան նորից գնաց Յաղուբի մոտ, նա ասաց.

— Դա էդպես է, խլապ¹: Բայց ոչ մի կերպ չեմ հասկանում, թե էս թուրքն ու թուրքի աղջիկը ինչու են էդքան թանկ ձեզ համար:

Զվենիգորան ձեռքի ափով սրբեց բերանը:

— Հիմա մենք այլևս թաքցնելու բան չունենք, բայց Մոմշիլ: Յաղուբը մեր բարեկամն է: Նա մեզ հետ մասնակցել է խոսովությանը սպախիայի դեմ, որը նրան պահում էր զնպանում: Եվ իսկի էլ նա վաճառական չէ: Մենք միտսին փախանք ծովով, որպեսզի տուն գնայինք, բայց փոթորիկը ֆելլուզան դուրս բերեց Բուլղարիա: Ահա թե ինչու մենք հայտնությունք աչստեղ: Հիմա մեր բախտը ձեր ձեռքին է, բայց Մոմշիլ: Թե կկամենաք Մարիյկայի հետ մեզ օգնել, անչափ շնորհակալ կլինենք, չեք կամենա՝ մենք իսկույն ևեթ կհեռանանք լեռները: Յաղուբին էլ հետներս կտանենք: Մենք չենք կարող լքել նրան:

Մոմշիլը բացասարար օրորեց գլուխը:

— Ի՞նչ ես ասում, դրուգար: Բուլղարացիները է՛ն գլխից ազնիվ մարդիկ են: Ազնիվ ու բարի: Նրանք երբեք բարությունը շարությամբ չեն հատուցի: Յաղուբը աղջկա հետ թող մնա մեզ մոտ: Իսկ դուք թաքնվեք լեռներում, մինչև նա կլավանա, ոտքի կելնի...

— Ես լեռներում թաքնվելու միտք չունեմ, ես պետք է հասնեմ Բուրգաս, էնտեղից էլ՝ Ռուդնիկ:

— Ռուդնի՞կ, — հարցրեց Մոմշիլը: — Ես Մարիյկայի հետ եղել եմ էնտեղ: Բայց ի՞նչն է քեզ ստիպում գնալ Ռուդնիկ, Արսեն:

— Ես էնտեղ պետք է գտնեմ մի գերու և ազատեմ փրկագնով: Թե կարող ես մի մակույկ տալ ինձ, բայց Մոմշիլ, որ հասնեմ մինչև Բուրգաս, շատ շնորհակալ կլինեմ քեզանից:

— Բայց դու մենակ չես կարող գլուխ հանել ճանապարհից:

— Պան Մարտինը ինձ կօգնի...

¹ խլապ (բուլղ.) — տղա:

— Հարկավ,— փնշացրեց Սպիխալսկին՝ բեղերը ցցելով:

— Ես դա չեմ ասում,— առարկեց Մոմչիլը:— Դուք օտարական եք և պահակները իսկույն կբռնեն ձեզ: Եթե էդպես է հարկավոր, ուրեմն ավելի լավ է ես գամ ձեզ հետ: Գիտեմ ճանապարհը, կարգուկանոնը...

— Չէ, պապիկ,— մեջ ընկավ Մարիլկան, որ ուշադիր ականջ էր դնում նրանց զրույցին,— եթե բանը դրան հասնի, ապա ես կգնամ: Ով իմանա, քանի օր կտևի էս ճամփորդութունը, իսկ դու պետք է տանը լինես: Մոռացե՞լ ես, որ մոտ օրերս գալու է ստամբուլցի հյուրը: Ասենք Դրագանն էլ շուտով կվերադառնա...

— Ճիշտ որ,— մաքի մեջ ընկավ Մոմչիլը:— Ես չեմ կարող գնալ: Ստիպված դու պիտի ուղեկցես մեր հյուրերին, Մարիլկա:

Զվենիգորան տարակուսանքով նայեց աղջկան: Մոմչիլը որսաց նրա հայացքը:

— Կասկածո՞ւմ ես նրան: Կաղակ, դու լավ չես ճանաչում մեր լեռնցի կանանց: Մարիլկային ամենարաջ տղայի հետ էլ չեմ փոխի:

— Պապիկ,— կարմրեց աղջիկը:

— Լավ, լավ, էլ չեմ ասի թոռնիկս: Գնա ճանապարհի պատրաստութուն տես: Մի շաբաթվա պաշար վերցրու: Էլ մլուկ մի՛ տա: Մի ժամ հետո պետք է ճամփա ընկնենք:

4

Մակույկը, թեթևորեն օրորվելով ալիքների վրա, արագ առաջ էր գնում: Սպիխալսկին փռեց ձկնորսական շոր ուռկանները, պառկեց դրանց վրա: Եվ շուտով լավեց նրա ուժգին խոմփոցը: Զվենիգորան նստած էր դեկի մոտ, իսկ Մարիլկան մտասույզ նայում էր հեռավոր կապույտ ավերին, որ սահում անցնում էին աչ կողմից:

Երկրորդ օրը, իրիկնադեմին, հեռվից երևաց Բուրգասը: Որոշեցին մակույկը թողնել Սպիխալսկու հսկողության տակ, ինչ-որ գետակի խաղաղ գետաբերանում, երեղնուտների մեջ: Ընթրեցին և պառկեցին քնելու:

Գիշերը հանգիստ անցավ: Մովի ետևից բարձրացող արևի

առաջին շատադայթները հետ Զվենիգորան ու Մարիյկան ճամփա շնկան։ Արագ էին գնում, քանի որ ուզում էին մինչև իրիկուն ետ դառնալ։

Ճանապարհը անվերջ բարձրանում էր սարն ի վեր ու պտույտներ գործում խաղողի կանաչ այգիների մեջ։ Նրանց ընդառաջ էին գալիս ծանր, անճոռնի սայլեր՝ սուր եղջյուրների վեղերը լծած։ Սայլերի վրա նստած էին վեհատես բուրդարացիներ՝ սպիտակ տարատներով, սև մահուդե բաճկոնակներով ու ոչխարենու բարձր փափախներով։ Նրանց նիհարավուն արևահարված դեմքերը դածան էին, ասես քարից էին տաշված։

Ամեն տեսակ բարիքներ՝ է՛լ մորթիներ, է՛լ հացահատիկ, շամիչ, էլ պտտաշ, այդ սայլերին բարձած, գնում էին դեպի Բուրգաս նավահանգստային քաղաքը, որտեղից էլ ծովով տանում էին Ստամբուլ կամ ուրիշ անդրծովյան երկրներ։

Ոչ ոք ուշադրութուն չէր դարձնում ջահել, գեղիրան տղամարդու և աղջկա վրա, որ շտապում էին, մտահոգ, փոշի բարձրացնելով։ Կեսօրին նրանք կանգ առան մի բարձր լեռնանցքում. այստեղից երևում էր մի ընդարձակ հովիտ, ուր փոված էր գյուղը՝ կարմիր կղմինդրե և գորշ եղեգնյա տանիքներով։

— Սա Ռուդնիկն է, — ասաց Մարիյկան։ — Այ, էն էլ սպախիայի դաստակերտն է։

Դա մի քարե տուն էր՝ շրջապատված տնտեսական շինություններով, որոնք գտնվում էին բարձր քարե պարսպի կտեվում։ Հեռվից տունը նման էր ամրոցի։ Իսկ իրականում դա թուրք սպախիայի սովորական դաստակերտ էր, կառուցված ռայայի՝ ճորտ գյուղացիների ձեռքով։ Սակայն տների, ձիանոցի և մյուս շինությունների հաստ պատերը հուսալիսրեն պաշտպանում էին տանտիրոջը հանկարծակի հարձակումներից և, անհրաժեշտության դեպքում, կարող էին դիմանալ հայդուկների պաշարմանը։

Պարզվեղ, որ ղղյակը կաղնե դարպասներ ունի, և Զվենիգորան բռունցքով թակեց դարպասը։ Նախ բակից շան հայոց լսվեց, իսկ հետո դռնակի վրա մի փոքրիկ ակնատ բացվեց, և հայտնվեց պահակի զզգզված քաթուղն ու քնատ դեմքը։

— Ի՞նչ մարդիկ եք: Ո՞ւմ եք ուզում,— բվի կլոր աչքերը ճակպացրեց նա:

— Մենք ուզում ենք տեսնել տանտիրոջը,— ասաց Զվենիգորան և մի արծաթադրամ ակնատից ներս մտցրեց:— Շնորհարա, ներս թող, բարի մարդ:

Դապասը բացվեց, և Զվենիգորան ու Մարիյկան մտան ընդարձակ բակը:

— Խնդրեմ, համեցեք, նստեք էս նստարանին,— գլուխ տվեց թուրքը:— Սպասեք, մինչև իմանամ՝ տերս թույլ կտա՞՞ ձեզ ներկայացնել իր պայծառափայլ տեսությանը:

Շուտով պահակը վերադարձավ և նրանց տարավ մի փոքրիկ սենյակ: Սենյակի մեջտեղում մի ցածրիկ սեղան էր դրված, որի շուրջը դեղնին էին տալիս փափուկ բարձերը:

— Աղան թող էստեղ սպասի,— ասաց ծերունին:— Տանտերը հիմա դուրս կգա:

Նա ետ տարավ ծանր գորգը, որ դռանն էր փոխարինում, ու ծածկվեց նրա ետևում: Մի քանի րոպե անց սենյակ մտավ տարիքն առած, ուռուցվորած դեմքով սպախիա՛ն: և մանր աչքերով, քնաթաթախ նայեց օտարականներին:

— Երկինքը թող բարեգութ լինի քո հանդեպ, մեծապապիվ Սարաջողու աղա,— գլուխ տվեց Զվենիգորան:— Ներող եղիր, որ անհանգստացնում եմ քեզ այն ժամին, երբ ուղղափառները պետք է հանգստանան:

Սպախիան անտարբեր գլխով արեց և փափուկ, սառը ձեռքը մեկնեց հյուրին: Զվենիգորան զզվանքով սեղմեց նրա ձեռքը: Ասես լպրծուն դողոշ լիներ:

— Ասացին, որ գործ ունես ինձ հետ,— խուլ ձայնով խոսեց թուրքը՝ մի քայլ ետ գնալով:

— Այո, մեծապատիվ աղա, լսել եմ, որ դու գերիներ ևս ծախում...

— Հիմարություն է: Ով որ ասել է, սուտ է ասել: Ես ինքս կես տասնյակ գերիներ կգնեի. ջահելներ, իհարկե: Առանց էդ էլ ծերունիներ ինչքան ասես կան ինձ մոտ:

— Իսկ ես ծերունիների կգնեի: Մեզ հենց ծերունիներ էլ պետք են:

Սպախիան ծտտացրեց հաստ շրթունքները, ինչ-որ բան մտմտաց, հետո ասաց.

— Եթէ, ավելորդ փողերը քեզ հանգիստ չեն տալիս, ապա
Կարող եմ ազատել էդ փորձանքից: Ինձ մոտ կան մի քանի ծեր
գերիներ:

— Կարելի՞ է տեսնել նրանց:

— Ինչո՞ւ չէ: Գնանք:

Նրանք բակ դուրս եկան:

Սպախիան ծափ տվեց: Վաղելով եկավ պահակը, որը բա-
կի խորքից հսկում էր նրանց:

— Գերիներին դուրս թող, — հրամայեց տերը:

Պահակը քարե նկուղի առջև զնգզնգացրեց բանալիները:

— Դուրս եկեք: Է՛ջ, դուք, — գոռաց նա՝ կողպեքը հանե-
լով:

Զվենիգորան ցնցվեց: Վաղո՞ւց էր արդյոք, որ ինքն էլ
այդպիսի գարշահոտ, սառը փոսի մեջ էր բնում: Վաղո՞ւց էր
արդյոք, որ իր վրա էլ էին գոռում այսպես, ինչպես անա-
սունի վրա:

Նկուղից լավեցին շղթաների զնգոցներ, հառաչանքներ: Թեք
աստիճաններով բարձրացան մարդիկ՝ կեղտոտ, ճերմակամազ,
նիհար, դեղնած, ինչպես մեռելները, և, արևի պայծառ լույ-
սից աչքները կկոցելով, շարք կանգնեցին տիրոջ առաջ:

— Սրանց համար թանկ չեմ ուզի, — ասաց սպախիան: —
Վերցրու:

Զվենիգորան լարված, ուշադիր նայում էր անծանոթ մարդ-
կանց դեմքերին: Սրանցից ո՞վ է Նեստոր Սերկոն: Մարդիկ
մռայլ մեկ սպախիային էին նայում, մեկ՝ տարօրինակ վա-
ճառականին, որը չգիտես ինչու ուզում էր գնել նրանց՝ այդ
կենդանի մեռելներին:

— Ողջ լերուք, հայրենակիցներ, — ողջունեց հուզված
Զվենիգորան:

— Դու էլ ողջ լեր, հայրենակից, — աններդաշնակ, զատ-
զատ պատասխանեցին նրանք:

— Պատահաբար ձեր մեջ չէ՞ Նեստոր Սերկոն:

— Նեստոր Սերկոն, — գարմացան գերիները: — Ով ես
դու, բարի մարդ: Որտեղի՞ց ես ճանաչում Նեստոր Սերկոյին:

Զվենիգորան հասկացավ հուզմունքն ու ուրախությունը
գերիների, որոնք, գուցե շատ տարիների ընթացքում առաջին
անգամ ազատ մարդու բերանից լսում էին հարազատ բար-

բառը: Սակայն նրանցից ոչ մեկը չպատասխանեց իր հարցին, և դա խոսովեց նրան.

— Դե, պատասխան տվե՞ք, երբ ձեզ հարցնում են,— գրեթե գոռաց նա բարկությամբ:

— Նա մեր մեջ չէ,— կամացուկ պատասխանեց մեկը:

— Ձեր մեջ չէ՞: Բա որտե՞ղ է:— Զվենիգորան ցնցված էր:

— Տերը ծախեց նրան... Թիանավի վրա է, ասում են...

— Ծախե՞ց: Ե՞րբ:

— Մի քանի շաբաթ առաջ, Լուրեր են պատվում, թե սուլթանը պատերազմի է պատրաստվում: ու թե նրան թիավարներ են պեսաբ: Բոլոր ջահելներին, ասենք տարիքոտ, բայց դեռ ուժը տեղը գերիներին էլ սարան սուլթանի մարդիկ: Նեստորն էլ ընկավ նրանց մեջ: Չնայած նա հիսունն անց է, բայց դեռ պինդ է:

Զվենիգորան տխրեց: Նրա բոլոր հույսերը, որ փայփայում էր վերջին ժամանակները, թե վտանգավոր արկածները երջանիկ ավարտ կունենան, իսկույն ցնդեցին ծխի պես: Ստիպված էր տուն վերադառնալ՝ առանց Սերկոյի պատվիրանը կատարելու:

— Գուցե կիմանա՞ք, ուր նն ուղարկել նրան — հարցրեց կամացուկ:

— Որտեղի՞ց,— պատասխանեց ածխի պես սև աչքերով, ճերմակամորուս մի ծերունի:— Ուղարկեցին, և վերջ... Սպախիան ինքն էլ չգիտե, թե ուր...— Նա սևեռուն նայեց Զվենիգորային, հետո կամացուկ հարցրեց.— Իսկ դու չլինի՞ թե եկել ես Սերկոյին ազատելու:

— Այո,— անհույս ձեռքը թափ տվեց Զվենիգորան:

Գերիներն իսկույն աղմկեցին:

— Որ էդպես է, մեզ աղատիր:

— Տղաս, քանի ողջ ենք, կաղոթենք քեզ համար:

— Հենց որ տուն հասնեմ, ողջ ունեցվածքս քեզ կտամ: Բոլորը, ասես խոսքները մեկ արած, ծոնկ չոքեցին Զվենիգորայի առջև: Զվենիգորան շվարեց: Շփոթված նայեց սպախիային:

— Էդ ի՞նչ են ասում,— հարցրեց նա:

— Խնդրում են, որ փրկագնեմ իրենց:

— Իսկ դու ի՞նչ ես մտածում,— քմծիծաղեց սպախիան:— Տեսնո՞ւմ ես ինչ տարանք է: Չե՞ս ուզում գնել: Նրանք ինձ համար ավելորդ բերան են: Ոչ պահելու են պետք, ոչ գցելու... Սրանցից աշխատանք կսպասես, ոնց չէ: Ժամանակն է կախելու կամ խեղդելու այս նզովյալներին... Բայց հույս չունենաս, թե էժան կտամ: Տեսնում եմ սրանք պետք են քեզ ինչ որ բանի համար:

Գերիները ըստ երևույթին գլխի ընկան, թե խոսքն ինչի մասին է, քանի որ, տիրոջ վերջին խոսքերը լսելով, սկսեցին աղաչել, պաղատել...

— Գնիր մեզ, գնիր բարի մարդ...

— Մեկ է, նեստորին էլ չես գտնի, մենք էլ քրիստոնյա ենք, հայրենակիցներ...

Զվենիգորան սարսուռով նայում էր նրանց աղերսող աչքերին, շորացած, վաստակած ձեռքերին, երկար, ճերմակ մորուքներին: Եվ նրա հոգում պայքարում էին այդ թշվառների նկատմամբ եղած խղճահարուսթյունն ու կոշկոյի առջև ունեցած պարտքի զգացումը: Ամեն տեղ էլ գերիներ կան, և շա՛տ, բոլորին չես փրկագնի: Իսկ ի՞նչ կասի Սերկոն, երբ իմանա, որ փողերը ծախսվել են ոչ իրենց նպատակի, այլ ինչ-որ օտար անօգնական մարդկանց վրա:

Սակայն խղճահարուսթյան զգացմունքը հաղթեց: «Փողը հո տուն չեմ տանի: Ավելի լավ է էս թշվառների համար ազատութուն գնեմ»:

— Ինչքա՞ն ես ուզում սրանց համար, աղա:

Թուրքի դեմքը, որ կարծես ասամի ցավից ծովավում էր, խաղաղվեց: Կրակներ փայլեցին նրա աչքերում:

— Էս բոլորի համար՝ հինգ հարյուր լեհական ոսկի:

— Թանկ է: Երկու հարյուր: Էլ ոչ մի դուրուշ:

Զվենիգորան մոտավոր հաշիվ արեց, որ, նույնիսկ, եթե հինգ հարյուր ոսկի վճարի, էլի այնքան կմնա, որ հարկ եղած դեպքում նեստորին փրկագնելու համար կհերիքի:

— Գործը գլուխ չի գա,— համառեց սպախիան:— Դու ուզում ես ինձ խաբել, գյավուր:

— Ինչպե՞ս կարող եմ քեզ խաբել: Միթե՞ շուկայում էս կմախքների համար ավելի շատ են տալիս:

— Դե որ դու առնում ես, երևի օգուտի հույս ունես:

— Ի՜նչ, իհարկե, հույս ունեմ: Դրա համար էլ ավելին չեմ տա:

— Զորս հարյուր կտաս:

— Երկու հարյուր հիսուն: Դա իմ վերջին խոսքն է:

— Դու ինձ թալանում ես, անհավատ շուն,— գոչեց սպախսիան, բայց առանց շարության: Ուռած կոպերի տակից նայեցին խորամանկ շագանակագույն աչքերը:— Կավ, թող բոսսածը լինի, տուր:

— Կայքագիր գրիր ու թուղթ ազատման մասին:

Մեկ ժամ անց սպախսիան հանձնեց թղթերը, իսկ Զվենիգորան փողը հաշվեց տվեց: Պահակը բացեց կանդալների փականքները և գերինները, ուրախությունից արտասվելով, նետվեցին դեպի իրենց փրկարարը: Ամեն մեկն աշխատում էր գրկել նրան, ձեռքը համբուրել: Թխաչ ձերունին Զվենիգորայի ձեռքը սեղմեց իր կրծքին:

— Որդիս,— շնչաց նա հեծկլտալով,— հիմա Իվան Կրուկի համար դու ամենահարադատ մարդն ես... Թե որ Զիգիլինում լինես, շնորհ արա, համեցիր իմ խրճիթը:

— Իսկ ես Կորսունից եմ...

— Ես Բրացլավից եմ...

Իրար խոսք կտրելով՝ ամեն մեկը հրավիրում էր իր մոտ, և Զվենիգորան դառնությամբ մտածում էր, որ տան ճանապարհը և՛ իր համար, և՛ նրանց համար դեռ շատ հեռու է: Այդ ճանապարհին դեռ շատ հայտնի ու անհայտ վտանգներ կհանդիպեն: Եվ ով գիտե, նրանք Երբ կհասնեն իրենց հարազատ հանգրվանը, իրենց հարազատ անկյունը...

Մերունիներին գյուղից դուրս բերելով՝ Զվենիգորան թղթերը տվեց նրանց ու ասաց.

— Դե, գնաք բարով, հայրենակիցներ: Թող բախտավոր լինի ձեր ճանապարհը: Պլանինայով ուղիդ գնացեք Վալախիա: Էնտեզից էլ՝ Զապորոժիե: Հայտնեք Կոշևոյին, որ թուրքերը պատերազմի են պատրաստվում: Մերոնք թող պատրաստ լինեն:

Մերունիները ծունկ շոքեցին: Կրուկը բռնեց կազակի ձեռքը, համբուրեց:

— Ամեն բանում հաջողությունը թող միշտ բեղ հետ լինի, զավակս: Պահպանիր քեզ:

Հուզված Զվենիգորան հազիվ դուրս պրծավ նրանց տաք պրկից, բռնեց Մարիյկայի ձեռքն ու գնաց: Իսկ ծերունիները, երջանկությունից արբած, դեռ երկար կանգնել էին սարի կատարին ու արցունքից կարմրած աչքերով նայում էին նրա ետևից:

Ուշ երեկոյան Զվենիգորան ու Մարիյկան սարի կատարից տեսան ծովը: Մինչև ծովը դեռ բավականին ճանապարհ կար, բայց լուսնի լույսի տակ կայծկլտում էր հազարավոր առեղծվածային կրակներով և, ասես կենդանի արարած, արագորևն ընդառաջ էր գալիս իրենց: Նրանք արագացրին քայլերը: Ոտքերի տակից բարձրանում էր ճամփի փոշին, ատամներ կափկափում էին: Ծովից փչում էր սառը քամին, հովացնում ցեբեկվա ընթացքում շիկացած մարմինները:

Նղեզնուտի մեջ գտնելով հազիվ նկատելի արահետը՝ նրանք թեքվեցին դեպի գետակը:

— Պան Մարտի՛ն, որտե՞ղ ես, — խուլ ձայնով կանչեց Զվենիգորան:

Պատասխան չեղավ: Նրանք փութացին առաջ: Ոտքերի տակ խշխշում էին անցյալ տարվա շորացած եղեգները: Կռկոցով օդ թռավ վախեցած բաղը:

— Պան Մարտի՛ն...

Նրանք վաղեցին հասան այնտեղ, ուր թողել էին մակույկը: Նրանց առջև փռված էր արծաթյա ջրերի անծայրածիր հարթությունը: Լուռ էր: Ոչ մի շունչ... Որտե՞ղ է Սպիխալսկին: Զվենիգորան շուրջը նայեց: Հաստ եղեգները, որ առավոտյան կռթնել էին երկնքին, այժմ փռվել էին գետնին տրորված, կոխկրտված, ասես ձիերի երամակ էր անցել այստեղով: Ափի մոտ երևաց կիսով չափ ջրի մեջ սուղված մակույկը: Քիչ հեռվում տիղմի մեջ ցցված էր կոտրված թիակը:

— Պան Մսլոտի՛ն, — հուսահատ կանչեց Զվենիգորան՝ հասկանալով, որ դժբախտություն է պատահել:

Ի պատասխան, աղմկեցին միայն գիշերային հավրերը: Եվ կրկին ճնշող, տազնասուլի լուսություն իջավ:

Զլատկան նստել էր պատուհանի առջև: Դեմքը սրվել էր, նիհարել, բայց դրանից նա ավելի քնքուշ ու գեղեցիկ էր թրվում: Խախժոտ, մուգ կապտավուն աչքերը անթարթ նայում էին պատուհանի փոքրիկ ապակու միջով: Աղջիկը մտքով ծովի հետ էր, որտեղ, գուցե, հենց այդ պահին, Զվենիգորան թիերով ճեղքում էր ջուրը՝ փութալով իր մոտ:

Զարմանալի բաներ են կատարվում աշխարհում: Արսենն ու Զլատկան գրեթե իրար հետ ոչ մի խոսք չէին փոխանակել: Զէին խոսել իրենց զգացմունքների մասին: Բայց հրկուան էլ գիտեին, որ թունդ սիրում են միմյանց: Հայացքների լուռ խոստովանությունը ավելի շատ բան էր ասում նրանց, քան հազարավոր խոսքեր: Եվ նրանք խնամքով թաքցնում էին իրենց զգացմունքները, լավ խմանալով, որ ոչ մի խոսք ի վրձակի չէ ավելի գորեղացնելու այն:

Աղջիկը մտամոլոր մի կտոր ազի պանիր դրեց բերանը և մտքով պատկերացրեց հովազին հաղթող շվթայակապ գերուն: Մազակալած, կեցտոտ, արնաշաղախ... Բայց դա չէր, որ ժամանակին հուզեց նրա սիրտը: Նրան զարմացրել էր խիղախությունը: Նա հասկացել էր, որ հովազը պատահականորեն չհայտնվեց բակում, որ նրան առաջուց պատրաստել էին գերու հետ գոտեմարտելու: Իսկ ավելի շուտ նրան ապշեցրել էր անծանոթի հայացքը, որի մեջ և՛ զարմանք կար, և՛ հիացմունք, և՛ շփոթմունք, ամոթիածություն հետ խառը: Դեռ ոչ ոք իրեն այդպես չէր նայել: Նա մեծացել էր մոռյլ ապարանքում, Համիդի կանանց ու դայակների մեջ, երբեք ջահել տղաներ չէր տեսել, մանավանդ այնպիսի կտրիճների, որոնց մասին այնքան հետաքրքիր բաներ էին պատմվում երգերում ու հեքիաթներում: Հանկարծ հայտնվում է հեքիաթների քաջարի յունակը, — ինչ անենք թե գերի է, — և փրկում է իրեն վայրի գազանի սարսափելի ճանկերից: Աղջիկը անսահման հրախառապարտ էր կաղակին: Եվ աշխատում էր ինչ-որ բանով օգնել նրան անուրախ կյանքում: Երկտր, անվերջանալի երեկոններին մտածում էր նրա մասին: Հավանաբար այդ մըտքերից ու զգացմունքներից էլ ծնվեց նրա առաջին սերը...

Որտե՞ղ է նա հիմա: Արդեն շորս օր է անցել: Իսկ ծերուկ Մոմչիլը դեռ երրորդ օրվա հրեկոյան էր սպասում նրան:

Անսպասելիորեն ձիու սմբակների խուլ դոփյունն հասավ նրա ականջին: Նա շփոթված նայեց մեկ Մոմչիլին, մեկ Յացկոյին: Ելավ տեղից:

— Լսո՞ւմ եք:

Մոմչիլը վեր թռավ նստած տեղից: Նա էլ լսեց, որ ձիավոր ջոկատ է մոտենում խրճիթին: Դրանք միայն ենիչերիներ կարող էին լինել: Ի՞նչ գործ ունեին նրանք այստեղ:

— Յացկո, հայդե, շքվիր խրճիթից: Էնպես թաքնվիր, որ քեզ չտեսնեն,— նա բոթեց տղայի ուսը, իսկ Յաղուբին ու Ջլատկային ձեռքով արեց, որպեսզի մնան իրենց տեղում:— Դուք թուրք եք, ձեզ ձեռք չեն տա:

Յացկոն արագորեն անհետացավ բակում: Մոմչիլը նրա ետևից դուրս եկավ: Ջիավորները մոտեցան խրճիթին: Մթուփյան մեջ Մոմչիլը չկարողացավ ջոկել, թե քանի հոգի են՝ հինգ, տասը, գուցե, ավելի շատ: Տեսնելով, խրճիթի տիրոջը՝ առջևի ձիավորը մոտեցավ նրան և մտրակով բոթեց ծերունու կուրծքը:

— Ո՞վ ես դու:

— Ողջությունդ, աղա,— գլուխ տվեց Մոմչիլը:— Ես Մոմչիլ կրայլեն եմ: Իսկ դո՞ւ ով ես:

Պատասխանի փոխարեն գինվորը զարմացած շվվացրեց և գլուխը ետ շրջեց:

— Է՛յ, կրակ տվեք:

Հեծյալներից մեկը ձիուց իջավ: Չախմախը հանեց ու վառեց ջահը: Արնագույն լույսը սկսեց պարել գինվորների դաժան դեմքերին ու քրտնակալած ձիերի վրա:

— Մոտ բեր,— հրամայեց առաջինը:

— Լսում եմ, Սաֆար բեյ:— Եվ գինվորը ջահը մոտեցրեց համարյա ծերունու մորուքին:

Մոմչիլը հայացքը հառեց աղայի դեմքին: Ահա թե ինչպիսին է նա՝ Սաֆար բեյը, բուլղար ճորտ գյուղացիների այդ դահիճը, լեռնական հայդուկների ահն ու սարսափը: Դեռ շատ ջահել է: Նրան տեսնողը կրքեք չի մտածի, որ բուլղարները վախենում են նրանից, ինչպես կրակից կվախենան: Նրա կերպարանքում, նրա դեմքին ոչ մի սարսափելի բան

չկար: Միջահասակ էր, նուրբ, գեղեցիկ դեմքով, որի վրա սևին էին տալիս երկար արտևանունքներով ծածկված գեղեցիկ աչքերը: Չեռքը, որ հանգչում էր սրի դաստակին, սպիտակ էր ու նուրբ, ասես աղջկա ձեռք լիներ... Մի՞թե այդ ձեռքն է մտրակածեմ անում, ոչ միայն տղամարդկանց, այլև կանանց ու աղջիկներին, մի՞թե այդ ձեռքն է, ինչպես ասում են, շիկացած ձողով այրում փախստական գերիների աչքերն ու կախադան բարձրացնում ապստամբ հայդուկներին:

Մինչ այդ մտքերն էին անդնում ծեր Մոմչիլի մտքով, Սաֆար բեյը անբարտավանորեն ժպտաց՝ մտրակը օդում շրխկացնելով: Հետո ասաց.

— Ահա թե ինչպիսին ես դու, հայդուկ շուն: Քավթառ, շախկալ, Կեղտոտ բուլղարական ծնունդ: Մենք վաղուց էինք կասկածում, որ դու ծառայում ես վոյեվոդա Մլադենին: Ալլահի պատիժը թող նրա գլխին թափվի.— իսկ հիմա համոզվեցինք... Խոստովանիր, էդ դու ես սպանել ոստիկան Վասիլին: Մեր մարդիկ գտել են նրա դիակը ափի մոտ:

— Ես ոչ մեկին չեմ սպանել,— հանգիստ պատասխանեց Մոմչիլը:

— Ուրիշ պատասխան չէի էլ սպասում քեզանից, ավագակ,— ճշաց Սաֆար բեյը:— Դուք, բոլոր բուլղարացիներդ հաշել գիտեք շան պես, ստախոս... Այդ զեպրում, գուցե, կասե՞ս, թե որտե՞ղ է թաքնված վոյեվոդա Մլադենի սուրհանդակը: Հր՞:

Մեր բուլղարացին լուռ էր: Սաֆար բեյի յուրաքանչյուր խոսքս կրակի պես դաղում էր նրա սիրտը: Նա հասկացավ, որ խոսքը Դրագանի մասին է, որ աչսօր կամ վաղը պիտի ժամաներ այստեղ: Ըստ երևույթին, Սաֆար բեյի մարդիկ հետևել էին նրան ու նրա հետքերով եկել էին խրճիթ:

— Ինչո՞ւ չես խոսում,— Սաֆար բեյը մտրակի կոթով մշտեց ձեռունու ուսը:— Թե ուզո՞ւմ ես, որ մենք բաց անենք քո ստախոս լեղուն:

— Ես ոչինչ չունեմ քեզ ասելու, պատվարժան Սաֆար բեյ: Ալլահի թող երկար կյանք տա բեյ: Չար լեզուները զրպարտել են, դու էլ հավատացիլ ես նրանց, աղա... Վոյեվոդա Մլադենի մասին ես լսել եմ: Չեր նրկրում ո՞վ չի լսել նրա մասին: Բայց ես նրան չեմ ճանաչում, և նրա կողմից

եկած ոչ մի պատվիրակ էլ չկա իմ տունը: Չեք հավատում՝
փնտրեք:

— Կտեսնենք: Զինվորներ, խուզարկեք ամբողջ շրջակայ-
քը, եթե որևէ կասկածելի բան գտնեք, իսկույն բերեք ինձ
մոտ:

Զինվորները ձիերից իջան և նետվեցին այս ու այն կողմ:

— Յույց տուր քո որջը, ժերուկ:— Սաֆար բեյը սանձը
զցեց ջուրային և գնաց դեպի դուռը:

Նրանք խրճիթ մտան:

Ահարեկված Զլատկան, գլուխն ու ուսերը նուրբ սև քո-
ղով ծածկած կանգնած էր սենյակի մեջտեղում: Յաղուբը
նստած էր սեղանի մոտ:

Սաֆար բեյը կասկածանքով նայեց նրանց.

— Հայդուկներ՞ եք:

— Ոչ, ես վաճառական եմ, աղա: Իսկ սա իմ աղջիկն է՝
Աղիկեն, — ասաց Յաղուբը:

Սաֆար բեյը դարձավ Մոմչիլին:

— Ինչո՞ւ սրանց մասին շասացիր: Անժանոթ մարդ-
կանց ես թաքցնում:

— Մի՞թե շեռ տեսնում, աղա, սրանք ձեր մարդիկ են,
Տրապիզոնից: Նավը ջարդուփշուր էր եղել... Ես փրկեցի
սրանց, — պատասխանեց ծերունին:

— Դե լավ, մենք հետո գլուխ կհանենք սրանից, երբ
Զագորայում կլինենք:— Ասաց Սաֆար բեյը և բռնեց Զլատ-
կայի ձեռքից:— Հապա մի երեսդ բաց, տեսնենք: Թոչնակ:
Գուցե դու բեղ ու մորուրո՞վ ես:

Զլատկան ետ-ետ գնաց, բայց Սաֆար բեյը հասցրեց
նրա վրայից պոկել թիկնոցը: Աղջիկը ճշաց, սակայն շուտ
չեկավ և երեսը շծածկեց, ինչպես որ կաներ ամեն մի ջահել
թրբուհի, եթե նրա տեղը լիներ, այլ միայն զայրույթով նա-
յեց աղային:

Սաֆար բեյը բաց թողեց նրա ձեռքը: Նա ցնցվել էր
աղջկա արտասովոր գեղեցկությունից: Զինվորները, որ
լցրել էին խրճիթը, նույնպես հետաքրքրասիրությամբ նա-
յում էին նրանց:

— Օ՛ ալլահ, ի՞նչ աստվածային գեղեցկություն է, — բա-
ցականչեց Սաֆար բեյը:— Ես խոսքերս ետ եմ վերցնում,

ջանմ: Հազիվ թե հայդուկների կանանց մեջ այսպիսի մի դեղեցկուհի ճարվի: Նրանք բոլորն էլ կոշտ ու կոպիտ են, էդ անտաշ լեռնուհիները՝ աշխատանքից ճաքճքված ձեռքերով, կեղտոտ, գզգզված մազերով:

Զլատկան շիկնեց: Աչքերում արցունքներ հայտնվեցին: Բռունցքները սեղմվեցին: Թվաց, թե ուր որ է կհարձակվի աղայի վրա, բայց այդ պահին առաջ եկավ Յաղուբը:

— Ուշքի արի, աղա: Քո առջև ոչ թե գյավուր ստրուկ է, այլև ողջ Տրապիզոնում հարգված վաճառականի աղջիկ: Ինչպե՞ս համարձակվեցիր պոկել նրա ֆերեջեն¹: Ես կբողոքեմ բեգլերբեյին կամ հենց իրեն՝ Ստամբուլի վեզիրին:

Սաֆար բեյը ձեռքը դրեց կրծքին.

— Հանգստացիր, էֆենդի. ես չէի կամենում վիրավորել ոչ քեզ, ոչ քո աննման աղջկան: Ուրախ եմ, որ ճակատագիրը ծանոթացրեց ձեզ: Ուրախ կլինեմ, եթե դուք ինձ հետ գաք Սլիվեն և օգտվեք իմ հյուրասիրությունից...

— Մենք կմնանք այստեղ, աղա, — նրա խոսքը կտրեց Յաղուբը:

— Դուք այստեղ չեք մնա, — կտրուկ նրան ընդհատեց Սաֆար բեյը: — Այս ծերունուն ես կասկածում եմ հայդուկների հետ կապ ունենալու մեջ, և նրան բանտ կգցեմ: Հետո կորոշենք, թե ինչպես կվարվենք նրա հետ: Իսկ դուք կգաք ինձ հետ և իմ հյուրը կլինեք:

— Բայց...

— Ոչ մի բայց... Դուրս եկեք խրճիթից: Մեկ րոպե անց մենք վառելու ենք:

Դա այնքան կտրուկ ասվեց, որ Յաղուբը ավելի լավ համարեց չհակաճառել: Նա բնավ Սլիվեն գնալու մտադրություն չունեք, բայց երևում է, այդ ամբարտավան աղան իր խոսքից ետ չի կանգնի:

Յաղուբը բռնեց Զլատկայի ձեռքից և գնաց դեպի դուռը: Զինվորները ետ քաշվեցին ու ճամփա տվին նրանց:

Բակում նրանք տեսան կապկապված Մոմչիլին: Նրա շուր-

¹ Ֆերեջե — փարսջա (թաթար.) — կանացի կիսաթափանցիկ ծածկոց, աչքերի համար բացված անցքերով:

չը կանգնած էին մի քանի ասկյար: Մյուսները, ջահերը ձեռքներին, դես ու դեն էին նետվում ծովափին:

— Հը, ի՞նչ կա,— հարցրեց Սաֆար բեյը մոտ եկած ասկյարին:

— Ոչ ոքի չգտանք, աղա:

— Վառեք խրճիթը:

Մի քանի ջահեր թռան սենյակ, խոհանոց, կտուր: Բռնկվեց շոր եղեգը: Ճթճթաց խեժոտ փայտը: Մի քանի բուրբակներ քրտնալուծվեցին լեզուն վեր սլացած դեպի մութ, տազնապալից երկինք:

Մոմշիլը մռայլ նայում էր, թե կրակը ինչպես է լսվում խրճիթը, և նրա մթնած կնճիռներով ակոսված դեմքից գլորվում էին արցունքները:

Յաղուբը մոտեցավ Սաֆար բեյին, գլուխ տվեց.

— Աղա, ես աղջկաս ու իմ կյանքը պարտական եմ էս ձեռքներին... Նա փրկեց մեզ մոլեգնած ծովից: Եթե էս բուրբակներն չլինեին, ես հիմա բախտ չէի ունենա զրուցելու քեզ հետ, տեսնելու իմ սրտի ուրախությունը՝ իմ սիրելի աղջիկ Ադիկեին:

— Ադիկե... Ի՞նչ սիրուն անուն է,— նրա խոսքը կտրեց Սաֆար բեյը՝ բազմանշանակալից նայելով աղջկան:

— Բաց թող նրան, աղա,— պաղատեց Յաղուբը:— Նա անվնաս մարդ է:

— Զուր ես պաշտպանում նրան, էֆենդի: Նա հայրուկ է,— կտրեց Սաֆար բեյը և հրամայեց ճամփա ընկնել:

Ասկյարները ձիեր բերեցին Յաղուբի ու Զլատկայի համար: Օգնեցին հեծնել: Շուտով ջոկատը անհետացավ հրդեհի ցուրբերով լուսավորված գիշերային խավարում:

Երբ հեռվում լուրջ ձիերի դոփյունը, ծովի կողմից վառվող խրճիթին մոտեցավ մի մարդ: Նրա շորերից ջուր էր հոսում: Մարդը քայլում էր դանդաղ, լարված նայելով խավարին, որը սև պարսպի նման շրջապատել էր Մոմշիլի բակը: Համոզվելով, որ ձիավորները հեռացել են, անձանոթը արագորեն հագից հանեց շորերը, քամեց ու կախեց որոճի թփերից, իսկ ինքը նստեց կրակից ոչ հեռու շուռ տված մակույկի վրա, որպեսզի տաքանա: Նրա ծանրության տակ մակույկը ճռճվեց, և նրա տակից լսվեց մի ճիչ: Անձանոթը խայթվածի

նման վեր թռավ տեղից, սակայն անմիջապես էլ հանգստացավ: Նա մտածեց, որ հավանաբար, ասկյարը թաքնվելու կարիք չունի, և շուտ տվեց մակույկը: Նրա տակ պառկած էր մի պատանի: Տեսնելով, որ իրեն հայտնաբերեցին, տղան փորձեց փախչել, բայց անծանոթի ուժեղ ձեռքերը բռնեցին նրան:

— Սպասիր: Ո՞վ ես դու, — հարցրեց անծանոթը:

— Յացկոն եմ... — վախից կմկմալով պատասխանեց տղան: — Իսկ... դո՞ւ ով ես:

— Յացկո... Ռուսնակ... Գիտեմ, Իսկ իմ անունը Դրագան է: Խոսիր, շուտ: Հանուն բոլոր սրբերի, ասա, որտե՞ղ է Մաբիկան: Որտե՞ղ է Մոմչիլ պապը: Սաֆար բեյի զինվորները սպանե՞լ են նրանց: Վա՛յ ինձ: Ախր ե՞ս նրանց բերեցի այստեղ: էդ բոլորի համար ես եմ մեղավոր:..

— Դո՞ւ ես մեղավոր: Ինչո՞ւ:

— Դեռ Խլաղնայա լեռան մոտից մի կասկածելի լեռնական պոչ դառավ ինձ. ես պետք է ետ գնայի կամ սպանելի էդ սրիկային: Իսկ ես արհամարհեցի բանակաճառագրի խորհուրդը և շարունակեցի ճանապարհս մինչև այստեղ... Եվ նշանակում է, ետևիցս քարշ տվեցի լրտեսին: Իսկ նա իմ հետքի վրա գցեց Սաֆար բեյի ջոկատը: Անիծված լինի նրա անունը: Երբ նկատեցի, որ հետապնդում են ինձ, դեպի լեռները փախչելն արդեն ուշ էր, ուղիղ նրանց ձեռքը կրնկնելի: Այնժամ ես սլացա դեպի ծովը: Դա իմ երկրորդ սխալը եղավ: Չնայած այնպես թաքնվեցի, որ ոչ մի շուն ինձ չէր տեսնի, — լողացի ծովի խորքը և նստեցի ջրի մեջ: Ի՞նձ փնտրելիս, ասկյարները գտան մի մատնիչի դիակ, որին մի քանի օր սրանից առաջ սպանել էր քո երկրացի Զվենիգորան: Մենք դիակը շարտել էինք ծովը, բայց ալիքները ափ էին հանել: Ես լսեցի, թե ինչպես էր հայհոյում Սաֆար բեյը: «Սա քավթառ շեյթան Մոմչիլի արածն է, — գոռում էր նա: — Ես վաղուց էի կասկածում, որ նրա խրճիթը հայդուկների բույն է դարձել: Վասիլևի մահը նրա ձեռքի գործն է»: Իմ ներսում ասես մի բան փլվեց: Գիտեի, թե Սաֆար բեյը ինչպես է դատաստան տեսնում բուլղարների հետ. կոտորում է ամբողջ ընտանիքներ, ողջ-ողջ այրում է, ցցի նստեցնում, կամ վաճառում է ստրկկության: Եվ նա իր ջոկատով սլացավ դեպի ինձ համար ամե-

նաթանկ մարդիկ՝ դեպի Մարիյկան ու Մոմշիլ պապը: Ինչ կարող էի անել: Ինչո՞վ կարող էի օգնել նրանց...— Դրագան լոնց ու կախեց գլուխը: Նրա թուխ աչքերում փայլեցին արցունքները՝ արտացոլելով կրակը: Վիշտը հաղթահարելով՝ շարունակեց պատմել.— Ես լողացի ափ, թեև չէի պատկերացնում, թե կդիմանամ արդյոք, որպեսզի չհարձակվեմ թշնամիների վրա, երբ նրանք ծաղր ու ծանակի կենթարկեն Մարիյկային ու Մոմշիլ պապին: Բայց չհասցրի մոտենալ խրճիթին, երբ տեսա, որ վառվում է... Աստված իմ, ի՞նչ ապրումներ ունեցա այդ բոպեին: Ուզում էի հարձակվել թշնամիների վրա, սպանել թեկուզ նրանցից մեկին և ինքս էլ նետվել կրակների մեջ: Միայն Սաֆար բեյից վրեժ լուծելու ցանկությունը ինձ ետ պահեց այդ մտքից:

— Կարիք չկա հուսահատվելու, Դրագան,— ասաց Յացկոն:— Լավ է, որ Մարիյկան տանը չէր, նա Զվենիգորայի և Սպիտակուհու հետ գնացել էր Բուրգաս... Իսկ Մոմշիլ պապին, Յաղուբի ու Զլատկայի հետ միասին թուրքերը տարան:

— Ի՞նչ: Ուրեմն Մարիյկան ո՞ղջ է,— գոչեց Դրագանը և կառչեց Յացկոյի հագուստներից:

— Դե ողջ է, ասում եմ: Զվենիգորան շուտով ուր որ է կգա: Ես ու Մոմշիլ պապը դեռ երեկ էինք սպասում նրան: Նրա հետ Մարիյկան էլ կգա...

Տղան հազիվ դուրս պրծավ ուրախությունից խելքը թոցրած Դրագանի զորեղ ձեռքերից և դարձացած նայում էր, թե ինչպես նա հանկարծ սկսեց անասելի թափով ինչ-որ վայրի պար պարել:

6

Զվենիգորան ու Մարիյկան եկան հաջորդ օրը, կեսօրին, երբ Դրագանն ու Յացկոն անվերջանալի սպասումից հոգնած, շինարի ստվերում նստած հաց էին ուտում:

— Օ՛յ, մերիկ, էս ինչ է եղել,— գոչեց Մարիյկան՝ բարձրանալով քարափի գագաթը և այնտեղից խրճիթի փոխարեն հրդեհի սև հետքեր տեսնելով:

Զվենիգորան նրա ձայնի մեջ սարսափ որսալով, աճապարանքով նետվեց քարափի կատարը և կանգ առավ ցրնց-

ված: Մի դարհուրելի տեսարան բացվեց նրա աչքերի առջև: Գեղեցիկ հովտում միայն խանձողների սև կույտ էր թափված, որոնց վերևում այսուայնտեղ դեռ կապտավուն ծուխ էր բարձրանում: Ոչ Զլատկան կար, ոչ Յաղուբը, ոչ Յացկոն, ոչ Մոմշիլը... Խոր վշտով համակված՝ նրանք լուռ նայում էին մոխրակուլյտին, ուժ շունենալով մի խոսք արտաբերել: Հանկարծ կողքին մի ուրախ ճիչ լսվեց: Զեռքերը թափահարելով նրանց կողմն էին վազում Յացկոն ու Դրագանը:

— Ողջ է,— բացականչեց Դրագանը և, չբաշվելով Զվենիգորայից ու Յացկոյից, պինդ գրկեց աղջկան:— Ո՞ղջ է:

Մարիյկան շիկնեց, բայց դեմքը չփախցրեց նրա կրակոտ համբույրներից:

Սակայն հանդիպման առաջին ուրախությունը շուտով անցավ: Իմանալով որ Սաֆար բեյի զինվորները տարել են Մոմշիլ պապին, Մարիյկան աղի արցունք թափեց: Նա լավ գիտեր, որ դեռ ոչ մի բուլղարացի կենդանի դուրս չէր պրծել Սաֆար բեյի ձեռքից:

Զվենիգորան ջանում էր ցույց շտալ, թե այս բոլորը որքան ծանր է իր համար, բայց հոնքերի արանքում առաջացած խոր կնճիռը, մթնած աչքերը և ամուր սեղմված շուրթերը, գորշ շերտով ձգված, առանց խոսքի վկայում էին նրա հոգեկան վիճակը:

— Ո՞ր տարան:

— Երևի Սլիվեն,— պատասխանեց Դրագանը:

— Ուրեմն մենք էլ կգնանք Սլիվեն,— վճռականորեն հայտարարեց Զվենիգորան:

— Ոչ, մենք կգնանք Զեռնավողա,— առարկեց Դրագանը:— Սլիվենում Սաֆար բեյի ասկյարները անմիջապես կբռնեն մեզ, իսկ Զեռնավողայում վոյեվոդա Մլադենն է: Նա խորհուրդ կտա, թե ինչպես ազատենք Մոմշիլին: Մլադենը սիրում է ծերուկին:

Զվենիգորան դարձացած նայեց Դրագանին: Վոյեվոդա Մլադենը: Դա, երևի Զլատկայի հայրն է... Սակայն նորից զսպեց իրեն, ոչնչով չբացահայտեց իր զգացմունքները:

1

Երրորդ օրը հասան Խլադնայա սարին: Այստեղից սկսվում էր հայդուկների երկիրը: Լեոնանցքում նրանց կանգնեցրին պահակները:

— Ովքե՞ր եք, — լսվեց թփերի միջից:

Բոլորը կանգ առան: Դրազանն առաջ գնաց.

— Դրազանը, բարեկամ:

— Ասա նշանաբանը:

— «Бий железото, докато е горещо»¹, — կամացուկ ասաց տղան:

— «Так, бия се до победа»², — լսվեց ի պատասխան և թփերի միջից դուրս եկան երկու հայդուկներ:

— Իսկ սրա՞նք ովքեր են, — հարցրեց սպիտակաբեղը անհանգստացած:

Դրազանը կարճ բացատրեց, թե ովքեր են, և ավելացրեց:

— Մենք շտապում ենք հասնել Չեոնավոդա, վոյեվոդա Մլադենի մոտ:

— Ի՞նչ է պատահել:

— Կարևոր լուրեր կան:

Սպիտակաբեղ հայդուկը գլխով արեց իր ընկերոջը՝ երկայնաբազուկ հսկային, որ կանգնած էր կողքին:

— Գանչո, ուղեկցիր սրանց Պետկովի մոտ:

Գնում էին լուռ, անխոս: Արդեն մութն ընկել էր, երբ Գանչոն նրանց բերեց ոչ մեծ մի լեոնային դյուղ՝ շրջապատված քարե պարսպով:

Հոգնած ուղևորները վերջապես մի նեղլիկ, քարահատակ բակ մտան: Նրանց ընդառաջ եկավ մինչև աչքերը սև մորուքի մեջ կորած, մռայլ մի մարդ:

¹ Մեծիր երկաթը, քանի դեռ տաք է (բուլղ.):

² Ուրեմն ձեռքի մինչև հաղթանակ (բուլղ.):

— Ուվքե՞ր եք, — հարցրեց մարդը: — Ի՞նչ գործով եք եկել: Ես կմետ՝ Պետկովն եմ:

— Ես կարևոր բան ունեմ հաղորդելու վոյեվոդա Մլադե-նին, — առաջ եկավ Դրագանը: — Մեզ ուտելիք և ձիեր տվեք, որպեսզի հասնենք Չեռնավոդա:

— Սպասիր, սպասիր, գնալու կարիք չկա: Վոյեվոդան ինձ մոտ է: Հիմա կտեսնեք նրան, — ասաց նոթոտ մորուքավորը և նրանց առաջնորդեց ամուր ցանկապատով շրջապատված խրճիթը: Հետո բարձրացան վերնահատիկ, մի ընդարձակ կիսախավար սենյակ, որի կենտրոնում եղևնու փայտից պատ-րաստված մի կոպիտ, անտաշ սեղան էր դրված: Պատերի երկարությամբ լայն ու երկար նստարաններ էին շարված, իսկ պատերից գեներ էին կախված՝ թրեր, յաթաղաններ, աղեղներ՝ կապարճով, ենիշարկա հրացան և երկու բուլղու-գան², կոթերի վրա պինդ կաշեփոկ օղակներով:

Սեղանին, բարձր արծաթյա աշտանակի մեջ վառվում էր մոմը: Այստեղ դրված էին կերակուրներով լի ամաններ, գա-վաթներ և գինով լիքը կավե մի շիշ:

Սեղանի մոտ նստած էր միայն մի մարդ: Դրագանը առաջ եկավ:

— Ողջուն, վոյեվոդա:

Զվենիգորան աչքը չէր կտրում այդ արտասովոր մարդուց, որի մասին այնքան շատ բան էր պատմել Յաղուրը: Ահա թե ինչպիսին է նա՝ վոյեվոդան: Միջահասակ, նիհար, գունատ դեմքով: Խիտ, գանգուր մաղերը ետ էին սանրված և նրանց մեջ արդեն պսպղում էր արծաթյա եղյամբ:

Վոյեվոդան թափով ելավ տեղից, բարձրացրեց մոմը.

— Դո՞ւ ես, Դրագան: Ի՞նչ է պատահել: Ինչո՞ւ ես այս-տեղ:

— Դժբախտություն, վոյեվոդա: Սաֆար բեյը վառեց բայ Մոմչիլի խրճիթը, իսկ իրեն տարավ: Վախենում եմ...

Դրագանը հանկարծ լռեց և տագնապով նայեց Մարիչկա-յին: Աղջկա ծնոտը ցնցվում էր: Վոյեվոդան փութաց մեղմել տղայի թույլ տված սխալը:

¹ Կմետ (բուլղ.) — գյուղական համայնքի ավագ, նրա ամենա-հարգված անդամը:

² Բուլղուգան (բուլղ.) — մարտական մական, լախու:

— Եկեք լալ մտածենք: Ե՞րբ են բռնել Մոմշիլին:

— Շաբաթ օրը:

— Նշանակում է, Սաֆար բիշը արդեն Սլիվենում է, և թե ճամփին էլի որևէ տեղ վայրագություն չի արել: Դե ուրեմն, պետք է ամեն ինչ իմանանք և փորձենք սղատել Մոմշիլին:

— Շնորհակալություն, վոյեվոդա,— շնջաց Մարիյկան և, բոլորովին թուլացած, ընկավ նստարանին:

— Տանտեր,— դարձավ վոյեվոդան կմետ Պետկովին,— դուրս գարներին ընթրիքի հրավիրիր:

Կմետը նստարանները մոտեցրեց սեղանին: Բոլորը նըստեցին:

— Դու լեռնցի շե՞ս, բարեկամ,— քիչ անց Զվենիգորային դիմեց վոյեվոդան:— Քո դեմքը անծանոթ է ինձ:

— Ես կազակ եմ, բայց Մլադեն... Ուկրաինայից,— պատասխանեց Զվենիգորան:— Ես ու Յաղուբը փախել ենք թուրքական գերությունից...

— Ո՞ր Յաղուբը:

— Մեղրեսեի քո ընկերը՝ Յաղուբ Մահմեդ աղան:

— Ի՞նչ: Դու ճանաչո՞ւմ ես Յաղուբ Մահմեդ աղային:

— Այո, նա իմ բարեկամն է:

Վոյեվոդան փութով վեր կացավ սեղանի մոտից: Նրա գունատ այտերը հուզմունքից շառագունեցին:

— Պատկերացրեք, քանի՞ տարի ոչ մի տեղեկություն չեմ ունեցել Յաղուբի մասին: Եվ հիմա, այ բեզ բա՛ն: Դուրս է գալիս, որ նա ողջ-առողջ է և ոտս կազակի հետ փախել է թուրքական գերությունից... Զարմանալի է... Բարեկամս, դու անհապաղ պետք է պատմես բոլորը, ինչ որ գիտես Յաղուբի մասին:

— Կպատմեմ, բայց Մլադեն,— տեղից ելավ Զվենիգորան,— բայց մենք մենակ պետք է լինենք: Ես ուրիշ կարևոր լուրեր էլ ունեմ հայտնելու:

Վոյեվոդան սուր, թափանցող հայացքով նայեց կազակին և հանկարծ գունատվեց: Մի անհավատալի միտք շամփրեց նրա սիրտը:

— Ուղում ես ասել, որ... Սպասիր: Դուրս գանք այստեղից: Պետկով, ուղեկցիր մեզ, շուտ:

Վոյեվոդայի ձայնը դողաց: Կմետ Պետկովը կասկածանքով նայեց անծանոթին, հայացքով տնտղեց նրա շորերի ամեն մի ծալքը, ջանալով համոզվել՝ արդյո՞ք նրա մոտ զենք չկա:

— Բայց, բայ Մլադեն...

— Ոչ մի վատ բան մի՛ մտածիր, Պետկով: Առաջնորդիր մեղ:

Կմետը նրանց տարավ մի փոքրիկ սենյակ, որը իրեն ննջարան էր ծառայում, վառեց մոմի ճրագը և, հնազանդվելով վայեվոդայի սիրական հայացքին, բացահայտ չկամությամբ դուրս գնաց ու իր կտևից ծածկեց դուռը:

— Դու որևէ բա՞ն գիտես իմ որդու մասին, բարեկամ,— հարցրեց վոյեվոդան՝ սեղմելով Զվենիգորայի ձեռքը:

— Ոչ: Նենկոյի մասին ես ու Յաղուրը ոչինչ չգիտենք:

— Բա էլ ի՞նչ ես ուզում ասել:

— Զլատկան ողջ է: Մենք նրա հետ միասին հասանք Բուլղարիա:

Վոյեվոդան տիրտը բռնեց:

— Զլատկա... Զավա՛կս...— մրմնջաց նա շնչահեղձ լինելով:— Ո՞ւր եք թողել նրան ու Յաղուրին:

— Ե՛վ Յաղուրին, և՛ Զլատկային տարավ Սաֆար բեյը:

— Ի՞նչ:

— Տարավ Մոմչիլի հետ միասին: Յաղուրը ձեռացնում է, թե Զլատկան իր աղջիկն է:

— Նրան վտա՞նդ է սպառնում:

— Չեմ կարծում: Յաղուրը թուրք է:

— Դա ճիշտ է: Թեև փրկություն չէ: Հարկավոր է անհասպաղ մի բան անել նրան Սաֆար բեյի ճանկերից ազատելու համար:

— Ես էլ այդպես եմ կարծում,— ասաց Զվենիգորան:

— Մենք հիմա եեթ կգնանք Չեռնավոդա:

Վոյեվոդա Մլադենը շթաքցրեց իր հուզմունքը: Ներս մըտնելով վերնասենյակ՝ նա կմետին կարգադրեց անմիջապես ձիեր պատրաստել բոլորի համար:

Ձիււղորնների շոկատը վոյեվոդա Մլադենի գլխավորութեամբ ուշ գիշերով Չեռնաւոլոդայի ամրոցի դարպասից ներս մտավ:

Հուսնկա գիշեր էր: Սառը, հանդարտ լեռները քնած էին լոյն ու խաղաղ, կապույտ մշուշով պարուրված:

Վոյեվոդայի ամրոցը, որ ընկած էր արևելյան Պլանինայի անմատչելի կիրճում, իր քարե պարիսպներով մոայլ տեսքով բարձրանում էր մի նեղ ելուստի վրա: Ներքևում խշշում էր լեռնային խոխոջուն վտակը:

Վոյեվոդային սպասում էին: Դարպասն անաղմուկ բացվեց, սպասավորները բռնեցին ձիերի սանձերից, և եղևնու ջահերով ճանապարհը լուսավորելով, տարան մի մեծ քարաշին տան դռների մոտ: Երբ բոլորը իջան ձիերից, վոյեվոդան ասաց.

— Բարեկամներ, բոլորս էլ հոգնած ենք, ուստի բոլոր գործերը կհետաձգենք առավոտվան: Հիմա ձեզ կուղեկցեն օթևան... Սակայն ուզում եմ զգուշացնել այստեղ ընդունված կարգուկանոնի մասին: Որքան էլ ուշ պառկեք քնելու, արևի հետ ոտքի վրա պիտի լինեք: Հանգիստ քնեք, ձեզ կարթնացնեն... На добраночь, другари!...

Առավոտյան սպասավորներից մեկը մոտեցավ Չվենիգորային.

— Բարեկամ, վայեվոդան սպասում է: Արի իմ ետևից...

Ոչ մեծ սենյակում, ուր առաջնորդեց նրան ծառան, Չվենիգորան տեսավ վոյեվոդային, որը, սեղանի վրա խոնարհված, արագ-արագ ինչ-որ բան էր գրում: Պատասխանելով Չվենիգորայի բարևին, վոյեվոդան ավագ շաղ տվեց թղթի վրա ու մի կողմ դրեց:

— Հիմա մենք կարող ենք հանգիստ խոսել գործերի մասին, — ասաց նա՝ ձեռքի շարժումով Չվենիգորային առաջարկելով նստել: — Այնպես պատահեց, բարեկամ, որ դու հայտնվեցիր իրադարձութունների ամենաթեթ տեղում, որոնք, ահա քանի ամիս է անհանգստացնում են ինձ... Վտանգավոր իրադարձություններ:

¹ Բարի գիշեր, բարեկամներ (բուլղ.)

— Որևէ նոր բա՞ն ես լսել Զլատկայի մասին:

— Զլատկայի մասի՞ն: Ոչ, ետոքը ուրիշ բանի մասին է: Վոյեվոդան ուշադիր նայեց կազակին, կարծես ուզում էր թափանցել նրա ամենախոր գաղտնիքների մեջ:

Այժմ, ցերեկվա լույսի տակ, Զվենիգորան տեսավ և՛ վոյեվոդայի սև աչքերում փայլող հոգնածությունը, և՛ աչքերի տակ գոյացած մանր կնճիռների ցանցը, և՛ ճերմակած հոնքերը: Տեսքից նա հիսուն տարեկան կլիներ: Հագնված էր պարզ, բայց ճաշակով: Սև թավշյա կունտուշը պինդ գրկել էր նրա հաղթ ուսերը: Գոտու տակ երկու ատրճանակ կար, իսկ կողքից կախված էր շքեղ դրվագանախշ թուրը:

— Թանկագին բարեկամ,— տեղից ելավ վայեվոդան,— թույլ տուր քեզ ծանոթացնել կնոջս՝ Անկայի հետ: Նա ինքն է ուզում հարցուփորձ անել մեր աղջկա մասին: Բայց խորհրդում եմ շատ շխտեսու Մեզ սպասում են ուրիշ ավելի կարևոր գործեր...

Վոյեվոդան բացեց ծանր կաշնեփայտ դուռը, որ տանում էր ներքին սենյակները:

— Անկա:

Իսկույն շեմքին հայտնվեց վայելչակազմ, գեղեցիկ մի կին՝ սև զգեստներով: Նրան տեսնելով՝ Զվենիգորան քիչ մնաց ճշար, այնքան որ նա նման էր Ադիկեին: Այժմ արդեն ոչ մի կասկած չկար, որ Ադիկեն հենց վոյեվոդայի աղջիկ Զլատկան է:

— Ես անհամբեր սպասում էի լույսը բացվելուն,— ասաց կինը բարեկուլ փոխարեն, ձեռքը մեկնելով Զվենիգորային:— Դու մեր ամենացանկալի հյուրն ես, քանի որ երջանկություն ես բերել մեզ, որին ես վաղուց արդեն դադարել էի հավատալ: Նստիր, խնդրեմ, թանկագին հյուր:

— Ես էլ եմ ուրախ, տեսնելով, որ Զլատկան իսկապես ձեր աղջիկն է...— Արսենը նայեց Մլադենին ու Անկային:

— Նա այդքան շա՞տ է նման ինձ:

— Կասկած չկա: Նույն աչքերն են. այդպես մուգ կապույտ, որ թվում է սև են, նույն քիթը, բերանը, նույնիսկ ձայնը, պանի Անկա... Քանի դեռ ես ձեզ չեի տեսել, սրտիս խորքում երբեմն կասկածներ էին առաջանում... Հիմա այդ

կասկածները ցրվեցին, և ես ուրախանում եմ ձեզ հետ միասին:

— Դեռ վաղ է ուրախանալու համար... Զլատկան չկա, և մենք չգիտենք, ինչ է պատահել նրան,— ասաց Մլադենը:

— Կարևորն այն է, որ նա ողջ է: Եվ այնքան ժամանակ, քանի դեռ Սաֆար բեյը չգիտե, թե նա ում աղջիկն է, նրան վտանգ չի սպառնում: Համենայն դեպս՝ նրա կյանքին: Իսկ այդ ընթացքում մենք ամեն բան կանենք, որպեսզի ազատենք նրան:

Վոյեվոդան ու կինը նայեցին միմյանց:

— Մենք ամբողջ գիշեր այդ մասին ենք մտածել,— ասաց Մլադենը:— Ես արդեն հավատարիմ մարդիկ եմ ուղարկել Սրիվեն ու Զագորա: Վաղը կա՞ մյուս օրը մենք մանրամասն տեղեկություններ կստանանք Զլատկայի մասին, եթե նա չ'ընայնտեղ է: Շնորհակալ ենք, բարեկամ, որ այդպես անկեղծորեն պատրաստ ես օգնել մեզ՝ ազատելու մեր աղջկան, բայց, կարծում եմ, չենք կարող պահանջել, որ մասնակցես այդ գործին: Ամեն մեկն իր հոգսերն ունի, իր ճանապարհը:

— Այո, ես իմ ճանապարհն ունեմ: Բայց դա այնպես սերտորեն է միահյուսվել Զլատկայի ճանապարհին, որ հիմա միայն ինքը տեր աստվածը կարող է դրանք իրարից բաժանել: Ահն թե ինչու ուզում եմ և պետք է հանդիպեմ Սաֆար բեյին:

Վոյեվոդան ու կինը նորից հայացքներ փոխանակեցին: Բավականին թափանցիկ էր ասված: Կասկած չկար. կազակը սիրահարված է իրենց աղջկան: Նա չի էլ թաքցնում այդ բանը: Դա քիչ է, կարծես նույնիսկ հասկացնել է տալիս, որ նրա վրա ավելի պակաս իրավունք չունի, քան ծնողները: Դա սկզբում դուր չեկավ Անկային: Նա շրթունքները սեղմեց, մտածելով, թե ինչպես պահի իրեն օտարականի մոտ, որպեսզի և՛ չվիրավորի նրան, և՛ առիթ չտա հուսալու, թե խրախուսում են իր զգացմունքները:

Անկայի տրամադրություն փոփոխությունը նկատեցին և՛ Զվենիգորան, և՛ վոյեվոդան: Կազակը դրան կարևորություն չտվեց, իսկ վոյեվոդան, որ, ըստ երևույթին, այլ կերպ էր մտածում, քան կինը, աշխատեց մեղմել անսպասելի ծագած յարվածությունը:

— Եթե այդպես է, ուրեմն բանը վճռված է. քեզ, դրուգար Արսեն, հարկ կլինի մեկնել Սլիվին:

— Ես էլ այդպես եմ կարծում,— հանգիստ ասաց կազակը:— Բացի ինձանից, ձեր մարդկանցից ոչ մեկը չի ճանաչում ոչ Զլատկային, ոչ Յազուրին:

— Անշուշտ... Ուրախ եմ, որ երկուսս էլ նույն մտքին եկանք: Հիմա հարկավոր է մտածել, թե ինչպես անենք... Անկա, կարգադիր, խնդրեմ, թող մեզ այստեղ նախաճաշ մատուցեն:

Վոյեվոդայի կինը դուրս գնաց: Քիչ անց մի հայդուկ փայտե մատուցարանով բերեց հաց, սառը հորթի միս, մեղր և մի սափոր խաղողի ռակիա:

Վոյեվոդան գալաթները ռակիա լցրեց և ասաց.

— Շատ տարիներ է, այս սենյակում քեզանից ավելի թանկ հյուր չի եղել, դրուգար: Զլատկայի մասին քո ընթաց տուրը նոր ուժ տվեց մեր սրտին, կյանք վերադարձրեց մեզ... Քո կենացը, դրուգար: Մեր հաջողության կենացը!

— Ձեր հաջողության կենացը, վոյեվոդա,— դպացված ասաց Զվենիգորան:— Հյուրընկալ Բուլղարիայի կենացը:

— Դու որևէ բան լսե՞լ ես մեր հայդուկների ապստամբության մասին,— աշխուժացավ վայեվոդա Մլադենը:— Գիտե՞ս ինչ նպատակներ ունի Քեղ հայտնի՞ է, որ դուք ընկել եք այն մարդկանց մեջ, ովքեր երդվել են պենքը ցած չդնել այնքան ժամանակ, քանի դեռ բուլղարական հողը տնքում է թուրքական սուլթանի ու նրա կուսակալների իշխանության տակ:

— Այո, այդ մասին գիտեմ,— պատասխանեց Զվենիգորան:— Ես մի քանի անգամ եղել եմ Բուլղարիայում, ձեր պայքարի մասին շատ է պատմել Յազուրը... Հիմա էլ շատ րան տեսնում եմ սեփական աչքերով:

— Դու համակրո՞ւմ ես մեզ:

— Էն էլ ո՞նց: Մեր ժողովուրդները եղբայրներ են: Մեր թշնամին մեկն է: Ես ոչ միայն համակրում եմ, այլև պատրաստ եմ միանալ ձեզ: Բացի դրանից, ես մի հանձնարարություն ունեմ, որը չկատարած իրավունք չունեմ Ուկրաինա վերադառնալ...

— Ի՞նչ հանձնարարություն է: Մենք չե՞նք կարող օգնել:

Զվենիգորան պատմեց: Վոյեվոդան ձեռքերը տարածեց:

— Միայն երջանիկ պատահականությունը կարող է քեզ օգնել: Թուրքիան մեծ է, և այնտեղ մարդ գտնելը, այն էլ գերի, նույնքան դժվար է, որքան իաշխաշի հատիկը ավազուտ ծովափին: Ինչ վերաբերում է մյուսին... ապա ես էլ եմ լսել, որ սուլթանը պատերազմի է պատրաստվում Մոսկովի և Ուկրաինայի դեմ: Ճիշտն ասած, դա դեռ պետք է ստուգել: Վաղը կամ մյուս օրը դու կգնաս Սլիվեն՝ իմ մարդկանց հետ, որպեսզի աղատես Զլատկային, և այնտեղ դուք ստիպված կլինեք անպայման մոտիկից շփվել Սաֆար բեյի ու նրա շրջապատի հետ: Զանացիք ստուգել այդ տեղեկությունները: Ինչո՞ւ քեզ վրա կանգ առա, այլ ոչ թե մեկ ուրիշի: Քեզ ոչ ոք չի ճանաչում, դու բուլղարացի չես, որոնց թուրքերը չեն վստահում: Դու կարող ես ներկայանալ որպես եկվոր վաճառական:

— Եթե թուրքերն իմանան, որ ես ուկրաինացի եմ, ինձ տեղնուտեղը կրոնեն...

— Լեհ վաճառական ձևացիր: Հիմա սուլթանը սիլիբիլի է անում լեհաց թագավորի հետ, որպեսզի շմիանա Ռուսիային... Բացի դրանից, դու ազատորեն տիրապետում ես թուրքերենին: Դա դուր կգա նրանց, որոնց հետ կշփվես Սլիվենում: Քեզ իսլամի կողմնակից, կամ էլ իսկական փոթորնակ ձևացնելով՝ շատ շուտ կշահես նրանց վստահությունը: Եթե հաստատվի, որ թուրքերը պատրաստվում են պատերազմի, մենք հնար կգտնենք նախազգուշացնելու Զապորոժիեին և իշխան Ռոմոդանովսկու սպայակույտին: Այդպիսով դու կարող ես լավ ծառայել քո հայրենիքին և ծառայություն մատուցել մոսկովյան ցարին:

Զվենիգորային զարմացրեց այն, որ վոյեվոդա Մլադենը այնքան լավատեղյակ է իր հայրենի բալկաններից շատ հեռու կատարվող իրադարձություններին:

Վոյեվոդան, կարծես կռահելով կազակի մտքերը, շարունակեց.

— Բուլղարիան փոքր երկիր է: Բարձր Դոան դեմ կովելու համար մեր սեփական ուժերը քիչ են: Չափից դուրս քիչ են: Բացի դրանից, թշնամին անմիաբանություն է սերմանում մեր ժողովրդի մեջ. շատ բուլղարներ պոմակ են դարձել,

իսլամ են ընդունել: Սակայն բարեբախտաբար մենք մենակ չենք, մեզ հետ են և՛ սերբերը, և՛ վոլոխները¹, և՛ մոլդավները, իսկ Սև ծովի մյուս կողմում հայերը, վրացիները... Մեզ հետ են նաև հույները, արաբները... Նրանք բոլորն էլ սպասում են միայն բարեհաջող ժամանակի: Սակայն մեր ամենամեծ հույսը ձեզ վրա է, դրուգար: Ռուսիայի վրա... Կոռոզ սուլթանը թող միայն իր գլուխը խոթի հյուսիսային արջի երախը: Դա կլինի սկիզբը նրա վախճանի և մեր ազատագրության: Հիմա հասկանո՞ւմ ես, բարեկամ, թե ինչու են ինձ այնպե՞ս հետաքրքրում այդ տեղեկությունները:

Վոյեվոդան լռեց և նայեց կազակի աչքերի մեջ:

— Ես համաձայն եմ,— պատասխանեց Զվենիգորան:

— Բայց դու չես պատկերացնում վտանգի ողջ մեծությունը, որի հետ անխուսափելիորեն կհանդիպես այնտեղ: Ես պետք է նախազգուշացնեմ այդ մասին...

— Է՛հ, կազակի գլուխը միշտ էլ վտանգի տակ է:

— Դա բոլորովին ուրիշ բան է. կովի մեջ, երբ ընկերներդ քեզ հետ են, վտանգը այնքան էլ սարսափելի չէ: Իսկ այնտեղ դուք հանդիպելու եք Սաֆար բեյին:

— Է, հետո ի՞նչ:

— Նա մեր ամենաոխերիմ թշնամին է: Իսլամի ամենամոլեռանդ հետնորդն ու փորձված զինվորը: Ընդամենը երկու տարի է, ինչ այստեղ նա զլխավորում է ենիչերիների ջոկատը, բայց ավելի շատ աղետներ է բերել, քան շատ թուրք փաշաներ քսան տարվա ընթացքում: Այրում է գյուղերը, սպանում է բոլոր նրանց, ում կասկածում է մեզ հետ կապ ունենալու մեջ, անխնա դատաստան է տեսնում գերի հայդուկների հետ... Մենք վաղուց ենք հետևում նրան, բայց ապարդյուն: Խորամանկ ու նենգ թշնամի է: Լավ տիրապետելով բուլղարերեն լեզվին՝ նա հաճախ ինքն է ծպտվում, գյուղացու շորեր հագած պտտվում է շուկայում, հետամտում է, ականջ դնում անզգույշ լեռնցիներին, իսկ հետո իր ավագաններով հանկարծակի հարձակվում է գյուղերի վրա ու ամեն ինչ կրակի տալիս... Համոզված եմ, որ Մոմչիլի մասին

¹ Վոլոխ կամ վալախ (պատմ.) — Վալախիդայի բնակիչները, հետագայում՝ ռուսիներ:

էլ նա ինչ-որ բան հոտոտել է: Մոմչիլը իմ վաղեմի բարեկամն է, իմ աչքը՝ ծովափին, իմ հուսալի ձեռքը այնտեղ... Ես միշտ գիտեի, թե թուրքերը ծովափով որքան և ինչ տեսակ գորք են անցկացրել իմ թիկունքը: Մոմչիլի միջոցով Վենետիկի վաճառականներից վառող էինք ստանում, արճիճ, ֆուլեյա՜... Հիմա ծերուկը բռնված է: Նրա մասն էլ Սաֆար բեյի ձեռքով կլինի... Այդ սրիկային հարկավոր է... — Վոյեվոդան կտրուկ թևը թափ տվեց, որ մի բան կարող էր նշանակել միայն՝ գլուխը ուսերից պոկել:

— Հասկանում եմ, — ասաց Զվենիգորան:

— Բայց գլխավոր խնդիրը, Արսեն, իմ թանկագին բարեկամ, Զլատկային ազատելն է... Ամենից առաջ այս մասին պետք է մտածել...

— Սպասեք... Ես մի խնդիրք էլ ունեմ: — Շեմքին կանգնած էր Անկան: Նա ներս էր մտել անձայն և, հավանաբար, լսել էր Ղրուցյի վերջին մասը: — Շատ տարիներ են անցել այն օրից, երբ գողացան մեր զավակներին: Նոր մենք իմացանք Զլատկայի մասին: Իսկ նենկոն... Իմ սրտում մինչև օրս էլ ապրում է այն հույսը, որ ես երբևիցե հանդիպելու եմ մեր նենկոյին... Նա ողջ է: Մոր սիրտը զգում է... Դրուզար, գուցե թե հաջողվի հանդիպել էլի որևէ մեկին, ով հիշում է ստահակ Համիդին, զգուշորեն հարցուփորձ արա և այդ վաղեմի պատմության մասին: Մեկ էլ տեսար, որդուս հետքն էլ գտնվեց...

Վոյեվոդան հոնքերը կիտեց, մռայլվեց ու գնաց դեպի պատուհանը: Անկան կանգ առավ Զվենիգորայի դիմաց:

— Ես կաշխատեմ իմանալ, պանի Անկա, — մեղմ ասաց կազակը: — Բայց քանի՜ տարի է անցել...

— Մի՛ կարծիր, թե մենք չենք փնտրել նրան: — Կինը գունատվեց, աչքերը մշուշվեցին: — Մլաղենը ոչ ուժ ինայեց, ոչ դրամ... Սակայն որոշակի ոչ մի բան չենք իմացել: Համիդը կարծես գետնի տակ է անցել: Նրա հետ էլ անհետացել են մեր երեխաները... Մեն-միակ լուրը մեզ բերեց յամբուլցի մի պառավ ախշիյկա²: Նա պատմեց, որ մի անգամ իր տի-

1 Ֆուլեյա (ֆրանս.) — կայծքարով հրացան:

2 Ախշիյկա (բուլղ.) — խոհարարուհի:

րոջ պանդոկում կանգ է առել մի ջահել աղա՝ իր շքախմբով։ Նրա հետ եղել են երկու երեխաներ։ Աղան պառավին հրամայել է լողացնել երեխաներին։ Աղջնակը լուռ նստել էր անկյունում և, հալածված գազանի պես, երկյուղով նայում էր օտար մարդկանց, իսկ տղան անընդհատ լաց էր լինում, շէր ենթարկվում աղային, հրաժարվում էր ուտելուց և շատ կեղտոտ էր։ Պառավը տղային համոզել է շորերը հանել, նստեցրել է տաշտի մեջ ու սկսել է լողացնել։ Երբ աղան մի րոպեով դուրս է եկել, նա հարցրել է տղային, թե անունն ինչ է։ «Նենկո», — պատասխանել է նա։ Բայց այդ պահին աղան վերադարձել ու հրամայել է լռել։ Ախշիկյան չի հասցրել իմանալ՝ ովքեր են նրանք և որտեղից։ Սակայն շատ լավ հիշում է, որ տղայի ձեռքին, արմունկից ցած, երեք ճերմակ սպիներ կային... Մեր Նենկոն էլ այդպիսի սպիներ ուներ...

Կնոջ ձայնը դողաց. նա լռեց։ Վոյեվոդան գրկեց նրա ուսերը, մխիթարելով, և աննկատելիորեն նշան արեց Ձվենիգորային, որպեսզի մենակ թողնի իրենց։

Ձվենիգորան լուռ գլուխ տվեց ու դուրս գնաց։

3

Հաջորդ օրը Վրասնիկ կիրճում հայտնվեց վաճառականի մի մեծ գումակ։ Փրփրակալած ձիերը դժվարությամբ էին բաշում ծածկասալները։ Սալապանները հոգնած կենդանիներին մերթ ոգևորում էին բացականչություններով, մերթ շրխկացնում էին մտրակներով։

Գումակի առջևից, հարյուր քաջ հեռավորություն վրա, գնում էին երկու ձիավոր։ Մեկը Ձվենիգորան էր, մյուսը՝ Դրագանը։ Բայց նրանց դժվար էր ճանաչել. Ձվենիգորան լվովցի նարուստ թուրք վաճառականի զգեստներով էր, կողքից կախված էին դաշույնը և երկու ատրճանակներ, որոնց սաղափե կոթերը պսպղում էին արևի տակ։ Դրագանը համեստ էր հագնված. գլխարկի լայն եզրերը ստվերում էին նրա նիհար, հողմաձար դեմքը, ձեռքին մի ծանր, փայտե դագանակ կար։

Նեղ քարքարոտ ճանապարհը կտրուկ վեր բարձրացավ։

Ճանապարհի երկու կողմերում մռայլ պատի նման կանգնած էին սոճու ու եղևնու անտառները: Կանաչ անդորրը, ուր հագեցած էր խոտի ու խեժի թանձր բուրմունքով, տազնապալի հանգստություն էր շնչում՝ ուղևորներին ստիպելով ուշադիր հետևել խիտ թփուտներին:

— Դեռ շա՞տ կա,— հարցրեց Զվենիգորան:

— Հիմա արդեն լեռնանցքն է,— պատասխանեց Դրագանը:— Այդ ոլորանի ետևում սպասում են մեզ: Իսկ պահակային ուղեկալը քիչ այն կողմն է... Կրակոցներ լսեն թե չէ՝ կփախչեն:

Մի քանի րոպե անց գումակը հասավ լեռնանցքի կատարը: Այստեղ ընդարձակ էր: Նեղ ճանապարհն այնպես էր լայնանում, որ մեծ հրապարակ էր գոյացել՝ ծածկված հավամրգի թփերով ու մանր քարակույտերով: Հրապարակի ձախ կողմը վերջանում էր թեք զառիկողով, աջում անանցանելի եղևնուտն էր:

— Այստեղ,— ասաց Դրագանը և, բարձրանալով ասպանդակների վրա, սուլեց:

Եվ նույն պահին անտառում ճարձատեցին ատրճանակների և ենիչերկաների կրակոցները: Սայլապանները կանգնեցրին ձիերը, արագ-արագ սկսեցին ետ դարձնել սայլերը: Նորից որոտացին կրակոցները: Գլխավերևներով սուլեցին գնդակները: Գումակը թողնելով բախտի քմահաճույթին՝ Զվենիգորան ու Դրագանը խթանեցին ձիերի կողերը, սլացան առաջ՝ գոչելով:

— Օգնությո՞ւն: Օգնությո՞ւն: Կողոպուտ...

Հեռվից լավեցին զանգի զարկերը: Դրագանը էլ ավելի բարձր գոչեց:

— Հասե՞ր... Օգնությո՞ւն: Թալանո՞ւմ են...

Հրաձգությունը դադարեց: Սայլերը ետ դարձան, և սայլապանները ձիերին քշեցին դեպի ներքև: Ճանապարհին մնացին երկու տասնյակ զինված մարդիկ, որ դուրս թռա անտառից: Նրանցից մի քանիսը փորձեցին ընկնել Զվենիգորայի ու Դրագանի ետևից, բայց, տեսնելով պահակազորի հեծյալ ջոկատին, որ ճիչերով ու սուլոցներով դուրս թափվեց շեկ ժայռերի ետևից, ետ դարձան ու միացան իրենց ընկերներին:

— Ի՞նչ է կատարվում այստեղ, ավլահի բարկությունը ձեր գլխին թափվի,— փախչողների առաջ կանգնելով՝ ծղրրտաց տարիքն առած մարմնեղ, լայնաթավ մորուքով խալավուզը¹։

Զվենիգորան ցած թռավ ձիուց, գլուխ տվեց՝ ձեռքերը կաֆտանի փեշերին զարկելով։

— Ավազակները... Օ՛ ավահ։ Հասեք նրանց ետևից։ Նրանք տարան իմ բոլոր սալներն ու ապրանքը։ Վա՛յ, վա՛յ։ Ի՞նչ պիտի անեմ հիմա, դժբախտս... Խնդրում եմ, հասե՛ք։ Ես առատորեն կվարձատրեմ...

Սակայն պահնորդները տեղից չշարժվեցին։ Խալավուզը ձեռքը դրեց ճակատին և նայեց ճանապարհին, որտեղ հեռվում երևում էին հայդուկները։

— Շա՞տ էին,— հարցրեց նա։

— Ով իմանա,— խոսքին խառնվեց Դրագանը։— Գուցե քսան, գուցե հիսուն...

— Մենք թիչ ենք։ Չենք կարող հետապնդել,— նրան ընդհատեց խալավուզը։

Իրիկնադեմին «վաճառականները» երկու պահակների ուղեկցությամբ ժամանեցին Սլիվեն, որ միջին Պլանինայի հարավային նախալեռներում ընկած մի փոքրիկ քաղաք էր։ Ծուռուժուռ փողոցներով նրանք հասան շուկայի հրապարակ, թևքվեցին դեպի խան, որտեղ կարելի էր սնվել և գիշերել։ Խանի տերը՝ ծեր, բայց ժիր Լեբգի աղան, լավ էր ճանաչում մարդկանց և անմիջապես հագուկապերից գնահատեց նոր կենվորներին։

— Իմ ողջ տունուտեղը ձեր տրամադրության տակ է, մեծապատիվ աղա,— գլուխ տվեց Զվենիգորային։— Ի՞նչ կբարեհաճեք։

— Սենյակ՝ ինձ և իմ ուղեկցի համար։ Ընթրիք՝ երկու հոգու համար։ Եվ հանգիստ։ Ես ուզում եմ հանգստանալ այն ամենից հետո, ինչ քաշեցի վրատնիկում...

— Լեռնանցքում ավազակները ձե՞զ վրա էին հարձակվել։

¹ Խալավուզ (թուրք.) — պահնորդ։ Այստեղ՝ պահնորդների ավազ։

— Այո, նրանք տարան հորս ու խլեցին իմ ողջ հարըստությունը, որ բերել էի Լվովից:

— Ալլահ արբեր, ինչպիսի՞ կորուստ:

— Եվ որ ավելի վատ է, կարող էի ետ բերել իմ սալի-րը, եթե շվիներ պահակների Լրկչոտությունը. նրանք վախեցան հետապնդել հայդուկներին: Վախկոտ ավանակները: Թող իմացած լինեն, որ ես կբողոքեմ բեգլերբեյին:

— Օ օ՛, աղան քաջ մարդ է, եթե իսկապես կհամարձակվի այդպիսի բան անել:

— Կարծում ես, որ դա վտանգավոր է:

— Մեղ համար՝ այո, բայց դու օտարերկրացի ես: Մի խոսքով, եթե ինձ թույլ տրվի, ես կկամենայի խորհուրդ տալ ձեզ:

— Խնդրեմ:

— Բեգլերբեյի մոտ գնալու հարկ չկա: Որքան ինձ հայտնի է, Սլիվենի փաշան և Սաֆար բեյը արտակարգ լիազորություն ունեն շրջանի բոլոր գործերը տնօրինելու: Գիմիր նրանց, աղա:

— Դրա մասին արժե մտածել: Շնորհակալություն, Արդի աղա:

— Չարժե: Խնդրում եմ ներեք, ես շտապում եմ, այս կարևոր նորության մասին պիտի պատմեմ հարեանիս: Նա պատրաստվում է քարավան տանել Սուլալա, թող իմանա, որ Վրատնիկով գնալը վտանգավոր է, իսկ դուք հանգըստացեք: Ձեր տրամադրության տակ ամեն ինչ լավ կլինի:

ՍԱՅԱՐ ԲԵՅ

1

Նախաճաշից հետո Ջվենիգորան սափրվեց, փոքրիկ, մաշված հայելու առաջ և սկսեց հագնվել: Թանկարժեք հագուստը, որ ձեռք էին բերել վոյեվոդա Մլադենի մարդիկ, նեղ էր նրա վրա, բայց լավ էր ընդգծում նրա վայելուչ կաղմվածքը և ուսերի սրինդ մկանները:

— Համա թե վաճառական ես, հա՛,— քմծիծաղ տվեց

Իրագանը:— Իսկական Սամսոն: Անսովոր է վաճառականին ղինվորի կեցվածքով տեսնել:

— Սր՛սս,— աչքով արեց Զվենիգորան՝ ափի մեջ վեր-վեր գցելով լիբը քսակը:— Ահա ծանրակշիռ վկայությունն այն բանի, որ ես վաճառական եմ: Շնորհակալ եմ վոյեվոդայից, ժլատություն չարեց... Դե, իսկ հարկ եղած դեպքում նաև սուր երկաթի մի կտոր պիտի ունենաս մոտդ: Խոստովանում եմ, գրան ավելի եմ սովոր, քան ոսկուն:— Թաքուն գոտուց կուպեց սաֆյանե պատյանով փոքրիկ կեռ յաթաղանը, որը կորավ տաբատի լայն ծալքերի մեջ:

Լավեց աստիճանների ճոճոցը, և սենյակ մտավ պան-
դոկապետը:

— Խաղաղություն ձեզ, ուղղափառներ: Ես ուրախ եմ ձեզ ողջ-առողջ տեսնելու համար:

— Շնորհակալ եմ, աղա ջան,— պատասխանեց Զվենի-
գորան:— Ես բախտ եմ ունեցել շատ հարուստ խաներում լինել, բայց այսպիսի հյուրընկալություն ոչ մի տեղ չեմ տեսել: Սրանից հետո իմ բոլոր բարեկամները և ես միայն այս-
տեղ կիջևանենք:

— Պատվարժան Քուչուկ էֆենդին է՛լ ավելի բարձր կար-
ծիքի կլինի իր խոնարհ ծառայի մասին, երբ իմանա, որ ես
ուրախ լուր եմ բերել...— Ժպիտից ծերունի թուրքի դեմքը
աղավաղվեց:

— Ի՞նչ: Բռնել են ավազակներին: Ե՞տ են բերել իմ հա-
րըստությունը:

— Դժբախտաբար ոչ: Բայց քեզ իր մոտ է հրավիրում
բաղաբի փաշա Կալաջի բեյը: Նա ուզում է թո բերանից լսել
գումակի վրա հայդուկների կատարած հարձակման մասին:

— Ընդամենը,— Զվենիգորան շիթաքրեց իր հիասթա-
փությունը:

— Մի՞թե դա թիչ է,— դարձացավ թուրքը:— Մեր փաշան
ամեն մի օտարերկրացի վաճառականի, թեկուզ նա ուղղա-
փառ լինի, այդպիսի բարձր պատվի չի արժանացնում: Բայց
ավելի անկեղծ ասեմ. բանն այդ չէ: Ինձ հայտնի է դարձել,
որ այնտեղ է լինելու նաև Սաֆար բեյը՝ դժավուրների ահու-
սարսափը, իսլամի գլխավոր պաշտպանը:

— Նա կարող է օգնե՞լ ինձ:

— Անշուշտ: Հիմա նահանգի ամբողջ զինվորական իշխանութիւնը նրա ձեռքումն է: Բավական է նրա մի խոսքը, և հարյուրավոր ասկյարներ դուրս կգան ձեր գումակը փընտրելու: Իսկ դա մի բան արժե:

— Այդ դեպքում, իրոք որ շատ շնորհակալ եմ քո բերած լուրի համար, պատվելի Աբդի աղա: Կաշխատեմ օգտվել քո խորհուրդներից:

Հրապարակում փաշայի տան առջև մարդիկ էին հավաքված, հիմնականում զինվորներ և քաղաքացիական պաշտոնյաներ, և ցածրաձայն զրուցում էին:

Երբ Զվենիգորան ու Դրազանը մոտեցան դռներին, նրանց ճանապարհը կտրեցին երկու ասկյարներ:

— Ներս մտնել չի կարելի:

— Բայց ինձ Կալաջի բեյ փաշան է հրավիրել, — ասաց Զվենիգորան: — Ինչպե՞ս թե չի կարելի:

— Անո՞ւնդ:

— Քուշուկ վաճառական:

— Հիմա: — Եվ ասկյարը անհետացավ դռան ետևում:

Շուտով նա ետ եկավ մի ծառայի ուղեկցութեամբ, որը Զվենիգորային առաջարկեց հետևել իրեն: Դրազանը մնաց դրսում:

Փայտե ճոճուան աստիճաններով Զվենիգորան բարձրացավ երկրորդ հարկ և ծառայի ետևից մտավ մի մեծ դահլիճ, որտեղ շքեղ հագնված մոտ երկու տասնյակ մարդիկ խումբ-խումբ կանգնած զրուցում էին:

Մտան խոր գլուխ տվեց ու բարձր ձայնով հայտարարեց.

— Լվովցի վաճառական Քուշուկ աղան:

Զվենիգորան առաջ անցավ և նույնպես գլուխ տվեց.

— Խաղաղութիւն տանն այս: Ես ողջունում եմ քեզ, պայծառափայլ փաշա Կալաջի բեյ: Շնորհապարտ եմ, որ թույլ տվեցիր արժանանալ քո տեսութեանը և շոյել լսողութիւնս քո իմաստուն խոսքերով:

Խոսակցութիւններն անմիջապես դադարեցին, և բոլոր ներկա գտնվողները դարձան դեպի շարաքախտ վաճառականը, որի մասին երեկվանից խոսում էին քաղաքում:

Կալաջի բեյ փաշան, միջահասակ, քթեղ, հաստլիկ մի

մարդ, շնայած իր պարարտությանը, կտրեց անցավ դահլիճը և կանգ առավ Զվենիգորայի առջև։ Ի տարբերություն հյուրերի, նա տնային շորերով էր. հագել էր սև մետաքսե խալաթ, մեջքին կապել էր բարակ մետաքսե գոտի՝ ծայրերին գուլնզգուլն փյուսկուլներ։ Նրա ճերմակ փրշոտ հոնքերը զարմանքից վեր էին թռել. նա չէր սպասում, թե հեռավոր բարբարոս երկրներից եկած ինչ-որ ջահել վաճառական այդպես նրբորեն կարող է շողոքորթել իրեն։ Իսկ քծնանքն ու շողոքորթությունը օսմանյան կայսրության բարձր շրջաններում բարեկրթություն էր համարվում և պարսավանք ու զրգվանք չէր հարուցում։ Փաշայի դուրս պրծած շագանակագուլն աչքերը բավականությունից փայլեցին։

— Ուրախ եմ իմ տան մեջ ողջունելու մեզ բարեկամ կյախիստանից եկած վաճառականին։ Լսել ենք, որ մեր բարեկամին դժբախտություն է պատահել։ Նրա ունեցվածքը խլել են ավազակները։ Ես և իմ բարեկամները անկեղծորեն ցավակցում ենք... Ը-ը-ը՛... պատվարժան... Ը-ը-ը՛...

— Քուշուկ աղա, — հուշեց Զվենիգորան։

Փաշան գլխով արեց և շարունակեց.

— Ես բոլոր ուժերս կներդնեմ ավազակներին պատժելու համար։

— Եվ վերադարձնելու իմ հարստությունը, — վրա բերեց Զվենիգորան։

Բայց փաշան ձևացրեց, թե չլսեց այդ խոսքերը։

— Ես թեզ հրավիրել եմ, աղա, որպեսզի իմանամ այդ ավազակային հարձակման մանրամասները... Գուցե դա կօգնի փազիշահի փառապանծ պաշտպաններին, երեք մայրցամաքների տիրակալի անհաղթ զինվորներին՝ դարշեյի կողոպտիչների հետքը գտնելու։

Զվենիգորան ազատ զգաց իրեն։ Ամեն ինչ լավ էր գնում։ Թեթևակի հուզմունքը, որ ունեցավ նա դահլիճ մտնելիս, անհետացել էր։ Դրան փոխարինեց համոզմունքը, որ ամեն ինչ բարեհաջող կավարտվի։

— Շնորհակալ եմ կարեկցանքի համար, էֆենդի։ Ճիշտ է, ես շատ եմ վշտացած պատահածի համար։ Բայց, բարեբախտաբար, իմ հարստությունից բավականին բան մնացել

է ինձ մտտ՝ ոսկեղեն ու թանկարժեք իրեր, որոնցից ճանապարհին ես չեմ բաժանվում:

— Օ՛...— դուրս թռավ Կալաջի բէյի բերանից:

— Դա թույլ է տալիս ինձ, ով պայծառափայլ փաշա, քո նկատմամբ ունեցած իմ հարգանքը հավաստել մի համեստ նվերով...— Զվենիգորան գրպանից հանեց մի ոսկե մատանի՝ թանկարժեք քարերով զարդարված:

Մի դսպված գվիլոց թավալվեց դահլիճով մեկ: Հյուրերը վզները երկարացրին, որպեսզի ավելի լավ տեսնեն և՛ նվիրը, և՛ տարօրինակ վաճառականին:

Զվենիգորայի զննող հայացքից չվրիպեց, թե ինչպիսի ազահովթյամբ էին փայլում փաշայի աչքերը: Նա հաճույքով ընդունեց մատանին, դրեց մատին, որոշ ժամանակ հրճվեց գունագեղ քարերով, պահեց արևի շողերի դեմ, հետո թևանցուկ արեց Զվենիգորային:

— Շնորհակալ եմ, բարեկամ: Թույլ տուր քեզ ծանոթացնեմ իմ հյուրերի հետ: Սրանք մեր քաղաքի արժանավորագույն մարդիկ են, նմանապես և կտրիճ զինվորները արևափայլ փաղիշահի. ալլահը թող նրան երկար կյանք տա:

Նա Զվենիգորային տարավ հյուրերի շարքի երկայնքով ու մեկ-մեկ տվեց նրանց անունները: Վերջապես Զվենիգորան լսեց այն անունը, որ դուրս չէր գալիս իր գլխից.

— Սաֆար բէյ:

Նրա առջև կանգնած էր ջահել, գեղեցկատես աղան: Նա միջահասակ էր, նիհարավուն, բայց հաղթ ուսերով: Երևում է, օժտված էր արտակարգ ուժով և ճարպկությամբ: Նրա գունատ դեմքի վրա, որն ավելի հարմար էր կուսակրոնին, քան ռազմիկին, սեին էին տալիս հարցախույզ աչքերը:

— Ճանաչո՞ւմ ես ինձ,— հարցրեց Սաֆար բէյը, նկատելով, թե ինչպես աշխուժացավ օտարականը՝ իր անունը լսելիս:

— Անշո՛ւտ,— Զվենիգորան ներքուստ լարվեց, զգաց վտանգը:— Ո՞վ շքիտի Սաֆար բէյի սխրանքների մասին: Դեռ Բալիկանների մյուս կողմում ինձ պատմել են հայդուկների դեմ տարած նրա փառապանծ հաղթանակների մասին, հայդուկների, որոնք մորեխի նման պատել են այս երկիրը:

լսել եմ նաև Սաֆար բեյի երդման մասին՝ մինչև վերջին մարդը բնաջինջ անել վոյեվոդա Մլադենի խոռվարարներին:

— Շուն Մլադենի,— բացականչեց Սաֆար բեյը, և նրա աչքերը շարութեամբ փայլեցին:

— Եվ բոլոր նրանց, ովքեր պաշտպանում են այդ ավազակներին,— վրա բերեց Զվենիգորան:— Հենց դրա համար էլ այդպես ուրախացա, լսելով այդ պատվարժան անունը և իմ աչքերով տեսնելով հենց իրեն՝ Սաֆար բեյին:

— Շնորհակալ եմ,— չոր ասաց Սաֆար բեյը՝ այլևս ոչնչով շարտահայտելով իր զգացմունքները և բնավ չարձագանքելով շողոթորթութեանը:

— Երբ ես լսեցի այդ անունը, մտածեցի, որ աստված ինքն է ինձ առաքել՝ հանդիպելու քաջ զինվորի հետ: Զէ՞ որ եթե նա կամենա, ապա կարող է գտնել ու պատժել ինձ կողոպտող շարագործներին:

— Կարող ես համոզված լինել, Քուչուկ աղա, որ նրանք Սաֆար բեյի ձեռքից չեն պրծնի,— զրույցին խառնվեց Կալաջի բեյը:

— Այդ դեպքում ես կանխավ շնորհակալ եմ Սաֆար բեյից ապագայում հորս ազատագրելու համար, որին հայդուկները վիրավորեցին ու գերի տարան:

— Քո հայրը ընկել է այդ սրիկաների ձեռքը:

— Այո: Եվ դրա համար էլ որոշեցի մնալ այստեղ այնքան ժամանակ, քանի դեռ չեմ ազատել նրան կամ չեմ իմացել նրա ճակատագրի մասին: Իսկ դու, մեծարգո Սաֆար բեյ, թույլ տուր, ի նշան իմ անկեղծ երախտագիտութեան ու հարգանքի, նվիրել մի փոքրիկ զարդ՝ ոսկե մեղալիոն: Լյախիստանում լեհական ասպետները արշավանքների ժամանակ այսպիսի մեղալիոնների մեջ պահում էին իրենց սիրած աղջիկների խոպոպները...

Զվենիգորան բարձրացրեց նուրբ ոսկեշղթան, և մեղալիոնը օրորվեց ճոճանակի նման, փայլփլելով իր գունազեղութեամբ:

Սաֆար բեյի ճերմակ ատամները փայլեցին: Դեմքը փոքր-ինչ շառագունեց: Երևում է, ոսկու ցուրը ներգործեց և այս դաժան զինվորի վրա: Սակայն նա դուսպ սուսաց.

— Շնորհակալութուն: Նվերը պարտավորեցնում է հատուցել բարութեամբ: Ես ոչինչ չունեմ, բացի զենքից և

ձեռքերից, որոնք տիրապետում են այդ գեներին: Երդվում եմ ալլահով, բոլորիս համար ամենալավ նվերը հայդուկներին ոչնչացնելն է: Ուստի ես գեներես ցած չեմ դնի այնքան ժամանակ, քանի դեռ մի բուլղարացի ավազակ կշնչի օդը Ստարայա Պլանինայի՝ ինչպես ասում են նրանք Բալկաններին: Ես լիովին կհատուցեմ նրանց քո կորուստների համար, օտարական: Դու դո՞ւ հ ես:

«Ընկնավոր է,— մտածեց Զվենիգորան,— զուր չէ, որ վոյեվոդա Մլադենը տենչում է նրա մահը: Սա իսկապես վտանգավոր թշնամի է»:

Իսկ բարձրաձայն ասաց.

— Իհարկե դո՞ւ եմ, Սաֆար բեյ: Ավազակները ուրեքիմ թշնամիներն են խաղաղ վաճառականների, ովքեր նպաստում են երկրի բարեկեցությանն ու ծաղկումին:

Այդ պահին հրապարակից ինչ-որ տաղնապալի աղմուկ լսվեց: Բոլորը ականջ գրեցին: Կալաջի բեյը նայեց Սաֆար բեյին ու ասաց.

— Պարոններ, մեր բարեկամ Սաֆար բեյը ուզում է մեզ ցուցադրել այս տարի անհավատների, այսինքն՝ ավազակ հայդուկների վրա կատարած իր առաջին արշավանքի արդյունքները: Բոլորիդ ինդրում եմ դուրս գալ հրապարակ: Դու նույնպես, Քուչուկ աղա, շնորհ արա գալ մեզ հետ: Հիմա դու հնարավորութուն կունենաս համոզվելու, որ արևափայլ փաղիշահի ծառաները արմատախիլ են անում ճանապարհների ավարառութունը նույնպիսի հաջողությամբ, ինչ հաջողությամբ որ նվաճում են օտարերկրացի վաճառականների վստահութունը:

2

Տնից դուրս գալով՝ Զվենիգորան նկատեց, որ հրապարակում փոփոխութուն է կատարվել:

Ասկյարների ու քաղաքացիների առանձին-առանձին, ցրված խմբերի փոխարեն կանգնած էր մի վիթխարի քառանկյուն, որի ներսի կողմը կազմում էին ասկյարները, իսկ դրսինը՝ քաղաքի բնակիչները: Քառանկյան մեջտեղում դես-

ուղեն էին վազում մի քանի մարդ: Ինչ-որ բան էին սարքում:

Զվենիգորան շուրջը նայեց. Դրագանը շէր երևում:

Կալաջի բեյը նշանավոր քաղաքացիների ու գորական ավագանու հետ միասին բարձրացավ փայտե լաստակի վրա, որ շրջապատված էր ասկյարներով, թևանցուկ արեց Զվենիգորային, մտերմաբար շնչաց.

— Հիմա մենք կզվարճանանք մի գեղեցիկ տեսարանով: Նա գլխով արեց հրապարակում տնօրինութուն անող աղային: Սա սլացավ՝ կատարելու կարգադրութունը, որը, հավանաբար, նախօրոք հայտնի էր իրեն:

Ամբոխի մեջ տազնապը աճեց, հետզհետե լոեց մարդկանց աղմուկն ու խոսակցութունը, քարացան ասկյարների ճռայլ շարքերը, դրդացին թուլումբասները¹: Ծորուն ու սրտաճմլիկ հնչեց զուռնան: Ասկյարները ձգվեցին: Լսվեց հատու հրամանը, և զինվորների միջև բացված արանքում հայտնվեց մի աժդահա՝ կարմիր շորերով ու սև թասակով, որ ծածկում էր դեմքը: Թասակի վրա բացված անցքերից փայլում էին աչքերը: Աժդահան աջ ձեռքում, ինչպես խաղալիք, բռնել էր ծանր ու լայնաշեղք մի կացին:

«Դահիճ»:

Զվենիգորան ցնցվեց: Նախազգացումն արդարացավ: Այժմ հասկանալի էր, թե փաշան ինչ տեսարանի համար էր իրեն հրավիրել:

Դահիճը անշտապ դուրս եկավ զինվորների շարքերով կազմված քառակուսու կենտրոնը, գլուխ տվեց փաշային ու ավագանուն և թափով պոկեց ծածկոցը նոր տաշված կոճղի վրայից: Կացինը խրեց փայտի մեջ, մի քայլ ետ գնաց և, հաստ ու մազոտ ձեռքերը կրծքին խաչած, քարացավ:

Այդ նույն պահին լսվեց սմբակների դոփյուն, անխմնիկի դդրոց, և հրապարակ մտավ մի մեծ սայլ, որի մեջ կանգնած էին հինգ մարդ՝ կապկպված ու գլուխները բաց: Երբ սայլը մոտեցավ, Զվենիգորան մահապատժի դատապարտվածների մեջ ճանաչեց Մոմչիլին: Ծերունին կանգնած էր առջևում: Մեղմ զեփյուռը խառնում էր երկար սպիտակ գան-

¹ Թուլումբաս (թուրք.) — թմբուկ:

գուրնները: Նրա հայացքի մեջ սարսափ չկար, միայն թաք-
ցրած տխրություն էր նկատվում:

«Ի՞նչ անել,— խոնվեցին կազակի մտքերը:— Ինչպե՞ս
փրկել ծերունուն: Փաշայի՞ն խնդրել: Սաֆար բեյի՞ն: Բայց
ինչո՞վ հիմնավորել այդ խնդրանքը: Դա կարող է լուրջ կաս-
կածներ հարուցել... Կործանել բոլորին... Իսկ որտե՞ղ է
Զլատկան: Ի՞նչ է պատահել նրան, Յաղուբին: Մի՞թե նրանք
էլ այստեղ են, այս սարսափելի տեսարանը դիտողների մեջ»:

Մահապարտներին իջեցրին սայլից, շարք կանգնեցրին,
դեմրով դեպի կառափնարանը:

Իջավ շարագույժ լուռություն: Սարից թեթև քամի փչեց:
Դրոշակի պառտառը ծափ տվեց: Հրապարակը քարացավ:

Կալաջի բեյը ձեռքը թափ տվեց: Կառափնարան ելավ
բարձրահասակ, նիհար կազի յասախչին՝ ճերմակ շալմա-
յով, մագաղաթե փաթեթը ձեռքին, և բարձր ձայնով սկսեց
կարգալ: Թարգմանիչը իսկույն բառ առ բառ թարգմանեց
բուլղարերեն.

— «Հրաման, նահանգի փաշա մեծապատիվ Կալաջի բե-
յի: Մեր պայծառափայլ փաղիշահ Մահմեդ Զորրորդի անու-
նից ես՝ Սլիվենի փաշաս, հրամայում եմ փաղիշահի բոլոր
հպատակներին՝ գտնել և ոչնչացնել դավաճաններին ու ավա-
զակ հայդուկներին, նրանց հարազատներին աքսորել հեռա-
վոր վիլայեթները, իսկ ունեցվածքը և հողը հանձնել ի սեփա-
կանություն Օսմանյան տերության:

Բոլորին, ովքեր որևէ բան գիտեն հայդուկների մասին և
տեղյակ չեն պահում քաղաքային իշխանություններին, ձեր-
բակալել, իսկ նրանց տները այրել:

Ովքեր կապ են պահպանում ավազակների հետ, օգնում
են ուտելիքով, դենրով կամ պարզապես համակրում են
նրանց, անգթորեն մտրակահարել, իսկ ավելի կամակորնե-
րին ու շարագործներին՝ մահապատժի ենթարկել:

Սաֆար բեյի ենիչերիների ու սպախիանների ջոկատները,
որոնց վրա զրված էր ավազակների ոչնչացնելու և սկոլիա-
յում² խաղաղությունն ու անդորրը պահպանելու պարտակա-

¹ Կազի յասախչի (թուրք.) — գառական կատարածու:

² Սկոլիա — վարչական միավոր. շրջան և նահանգ:

նությունը, բռնել են մի քանի տասնյակ շարագործների: Նրանց բոլորին մտրակահարել են, իսկ հինգ հոգու՝ Մոմշիլ Կրայչեկին, Իվան Նենկովին, Գերասիմ Բուկովին, Ռայկո Դրագոմանովին և Լուկա Դուրային, հրամայում եմ, գլխատել հրապարակում, որպես փաղիշահի թշնամիներ: Յուրաքանչյուրը թող տեսնի, թե ինչ ճակատագիր է սպասում նրան, ով ձեռք կբարձրացնի ալլահից օրհնված Օսմանյան իշխանության վրա»:

Խարզմանչի վերջին խոսքերը խեղդվեցին թուլումբասների զղբոցունի և զուռնայի ոռնոցի մեջ, որոնց ավելացան ասկյարների ճիչերը՝ «ալլահ, ալլահ»:

Զվենիգորայի մեջքով սարսուռ անցավ: Նա վախեցավ, թե Դրագանը որևէ հանդուգն քայլ կկատարի Մոմշիլին փրկելու համար, և ինքը կկործանվի: Հայացքով փնտրեց նրան, որպեսզի ետ պահի անմտածված քայլից: Բայց Դրագանը ոչ մի տեղ չկար: Ասենք, մի՞թե այդպիսի ամբոխի մեջ կգտնես նրան:

Աղմուկն աստիճանաբար հանդարտվեց: Դահիճը բարձրացրեց կացինը, ձախ ձեռքի մատներով փորձեց՝ լա՞վ է սրված արդյոք շեղբը: Ոչ մի ընդհանր կարելի կորցնել: Զվենիգորան թեքվեց Կալաջի բեյի ականջին, շնչաց.

— Մեծապատիվ Կալաջի բեյ, հարյուր ղուրուշ եմ տալիս, եթե հետաձգես մահապատիժը այն բուլղարացու, որ կանգնած է առջևում... Եվս հիսուն ղուրուշ, եթե խնայես նրան ու ինձ տաս...

Զարմացած փաշան շուք աչքերը: Նույնիսկ երկյուղ առկայծեց:

— Ի՞նչ է նշանակում այդ բոլորը, իմ թանկագին հյուր:

— Ես ավելացնում եմ դինը ծեղրունու գլխի համար՝ հազար ղուրուշ: Զտեսնված դին է... Համոզված եմ, որ այդ հալիվորը իր այս տարիքում այլևս ոչ մի վնաս չի տա, իսկ ես նրան կարող եմ փոխանակել հորս հետ... Խնդրում եմ, էֆենդի:

Հրապարակում աղմուկը գրեթե դադարեց: Դահիճը հայացքը հառեց փաշային, սպասելով հրամանի՝ իր արյունոտ գործը սկսելու:

Զվենիգորան հասկացավ, թե ինչպիսի վտանգի է եմ-

թարկվում, փաշային առիթ տալով՝ կասկածել իրեն որպես հայդուկների հետախույզ:

Ի՞նչ կպատասխանի Կալաջի բեյը: Ինչո՞ւ է լուռ... Ահա աղմուկը արդեն բոլորովին հանդարտվեց: Մարդիկ լարված սպասում էին, թե ինչ է լինելու:

Զվենիգորան զգաց, թե լարումից ինչպես են ղողում ձեռքերը: Մի տհաճ սառնություն բռնեց սիրտը: Ամեն ինչ կորած է:

Ահա Կալաջի բեյը շրջվեց Սաֆար բեյի կողմը և երկար ինչ-որ բան փսփսաց նրա ականջին: Վերջինիս սառը, ծածկամիտ դեմքին զարմանք հայտնվեց: Բայց դա երկար չտևեց: Աղան հաստատակամ գլխով արեց և նայեց Զվենիգորային:

Վերջ արդեն: Կասկած չկա. փաշան հրամայեց բռնել իրեն: Մի բան է մնում միայն՝ սպանել Սաֆար բեյին:

Բայց այդտեղ Զվենիգորայի ականջին հասավ աղայի ձայնը.

— Ռեջեպ, Մոմչիլ Կրայչևի մահապատիժը հետաձգել... հաշվի առնելով նրա ծերությունը... Հաղորդիր զահճին և ասա՝ թող սկսի:

Կրտսեր աղա Ռեջեպը, թուրը ձեռքին, վազեց հրամանը կատարելու: Զվենիգորայի սիրտը տեղն ընկավ: Արյունը հորդեց դեպի այտերը: Կարծես թե նրա արտասովոր խրնդրանքը, որ պատճառաբանված էր հորն ազատելու ցանկությամբ, թուրքերի մոտ կասկած չհարուցեց:

Սկսվեց մահապատիժը: Զոհերի ու քաղաքացիների ճիչերը խեղդելու համար Կալաջի բեյը հրամայեց առանց ընդհատելու զարկել թուլումբասները: Դրանց տագնապալից, ձիգ հարվածները բռնեցին ողջ քաղաքը: Զվենիգորան սեղմեց աստմները: Շատ մահեր էր տեսել նա, բայց դա եղել էր կովի մեջ: Երբ մարդիկ համակվում են կատաղությամբ ու հաղթելու տենչով: Իսկ այստեղ սպանում էին կապկպված և, ամենից հավանական է, բոլորովին անմեղ գյուղացիների:

Երբ վերջին զոհին քարշ տվեցին կոճղի մոտ, Կալաջի բեյը դարձավ դեպի Զվենիգորան ու աչքով արեց.

— Զզվելի է, բայց և օգտակար: Այդպես չէ՞... Այսօր թափված արյունը երկար ժամանակ կհովացնի քաղկանցիների տաք գլուխները:

— Գուցե ավելի՞ կշիկացնի:

— Ձե՞մ կարծում, կապրենք, կտեսնենք: Բոլոր դեպքերում այսօրվա մահապատիժը լավ դաս կլինի անհնազանդ բուլղարացիներին: Այդպես կլինի բոլոր նրանց հետ, ովքեր կհանդգնեն ձեռք բարձրացնել Բարձր Դուռն հզորության վրա:

Վերջին անգամ ցած իջավ դահճի կացինը: Մի խեղդված հառաչանք անցավ հրապարակով: Լոռեցին թուլումբասները, իր սրտածմլիկ նվագն ընդհատեց դուռնան:

Կալաջի բեյը դարձավ դեպի իր շքախումբը: Բոլորը ետ քաշվեցին: Փաշան նայեց Ջվենիգորային.

— Ուրախ կլինե՞մ, Քուչուկ աղա, քեզ ճաշին ինձ մոտ տեսնել: Յտեսություն:

— Յտեսություն, էֆենդի,— գլուխ տվեց Ջվենիգորան, ուրախ այն բանի համար, որ արդեն մի շատ կարևոր ճակատամարտ շահել է: Դա հույս ներշնչեց, որ վերջիվերջո ինքը կհանդիպի Ջլատկային ու նրան կխլի Սաֆար բեյի ձեռքից:

3

Մարդիկ լուռ ցրվեցին: Արտաքին, շինծու հնազանդության տակ մոլեգնում էր փոթորիկը: Խոժոռված հոնքերը և սեղմված բոունքները, ճնշողների հանդեպ վայրագ ատելությամբ, ցատումով լի աչքերի ու հայացքների շոր փայլը վկայում էին, որ շորս գյուղացիների մահապատիժը չի վախեցրել բուլղարներին, ընդհակառակն, նրանց սրտերում ավելի է վառվում վրեժի ծարավը՝ ընդդեմ ատելի թշնամու:

— Մենք չենք մոռանա այս օրը, թող անիծված լինի նա,— Ջվենիգորայի ականջին հասան ջահել, բարձրահասակ լեռնցու խոսքերը:

— Կհատուցենք, ական ընդ ական,— ավելացրեց նրա ուղեկիցը:

— Շուն Սաֆար բեյի հախից կգանք,— ֆշշացրեց երրորդը ետ նայելով, որտեղ կանգնած էին ասկյարները: Նկատելով անծանոթին, նա ընկերներին աչքով արեց, և սրանք իսկույն անհետացան ինչ-որ մի խուլ նրբանցքում:

Ջվենիգորան քայլում էր անշտապ: Չէր ուզում հրմշտվե-

լով առաջ գնալ և փոշի կուլ տալ, որ բարձրանում էր հար-
յուրավոր ոտքերից, զրա համար էլ ամայի, անմարդ փո-
ղոցներ էր ընտրում, միտքը պահելով ճանապարհը, որով,
գուցե, դեռ շատ անգամ էր անցնելու նայում էր քարե ու
կավե շինութիւններին, որ կպած էին սարալանջին:

Նա կարող էր գոհ լինել այն բանով, ինչի որ հասավ Սի-
վեն ժամանելու հենց առաջին օրը. ծանոթութիւն հաստա-
տեց քաղաքի մեծավորների հետ, մահից փրկեց Մոմչիլին,
ու թեև ոչինչ չգիտեր Զլատկայի ու Յաղուբի մասին, հանուն
որոնց էլ, հատկապես, ընկել էր այստեղ, հույսը չէր կորց-
նում, որ կրկին բախտը կբերի: Ինչի՞ վրա էր հիմնված նրա
համոզմունքը՝ ինքն էլ չէր կարող բացատրել: Ինչ-որ ներ-
քին մի զգացողութիւն էր հուշում այդ բանը:

Անսպասելիորեն ինչ-որ մեկի ծանր ձեռքը իջավ ուսին:
Զվենիգորան թեքեց գլուխը:

— Սաֆար բե՛յ,— նա չկարողացավ թաքցնել իր շփոթ-
մունքը:— Զէի սպասում, հա՛:

— Դու զարմացած ես, օտարական: Իսկ ես քեզ էի
փնտրում: Ուզում եմ մոտիկից ծանոթանալ: Գնանք իմ տու-
նը:

Սաֆար բեյը թեանցուկ արեց Զվենիգորային: Ետևից մի
տասը մետր հեռավորութեամբ գալիս էին մի քանի ասկյար-
ներ: «Սաֆար բեյի անձնական պահակախումբն է... չր՛մ,
թվու՛ք է, վաղածամ էր իմ ուրախութիւնը,— մտածեց կա-
զակը:— Երևում է, ինձ պարզապես բռնել են: Ինչ արած,
հարկավոր է գնալ... և հույսը չկորցնել»:

Անկյունում Սաֆար բեյը թեքվեց մի նեղլիկ փողոց, որ
կտրուկ բարձրանում էր դարն ի վեր: Շուտով նրանք հայտ-
նըվեցին մի ոչ մեծ, բայց հզոր ամրոցի դարպասի առջև:
Ժամապահները ողջունեցին Սաֆար բեյին և նրանց ներս
թողեցին:

Բակը քարե պատով բաժանվում էր երկու մասի: Զախ
կողմում ցածլիկ, գետնամած կղմինդրե կտուրներով տնակ-
ների առջև դետուղեն էին վազվզում ասկյարները: Բակի մյուս
կեսը տանող ևս մի դարպաս կար, որի մոտ նույնպես պա-
հակ էր կանգնած: Սաֆար բեյը զնաց դեպի դարպասը: Ասկյա-
րը արագորեն բացեց դռնակը և մի կողմ քաշվեց:

— Շնորհ արեք իմ տունը,— հրավիրեց Սաֆար բեյը, հյուրին առաջ թողնելով:— Փամանակավոր, իհարկե... Մենք՝ դինվորներս, չենք հասցնում տնավորվել, երբ արդեն արշավի շեփոր են փչում: Ճիշտ է, վաճառականների՝ դ կյանքն էլ մի բան չէ, բիչ եք լինում տանը, ավելի շատ թափառում եք աշխարհով մեկ:..

Զվենիգորան չհասցրեց պատասխանել: Նա հայտնվեց փոքրիկ ու լքված պարտեզում, որ շրջափակված էր քարե պարիսպներով: Կազակը մի թռուցիկ հայացքով ընդգրկեց ողջ շրջակայքը: Պարտեզի ծայրին երևում էր մի մեծ տուն՝ բարձր առմուտքով: Դեպի այդ տունն էր տանում մի լայն շավիղ, որի երկու կողմերում քարե նստարաններ կային: Վաղուց շմշակված թփուտներում ծաղկել էին վայրի վարդերը, մագնոլիայի ճյուղերի մեջ գեղգեղում էին թռչունները, ստվերում, նստարաններից մեկին մարդիկ էին նստած:

— Օ՛, էստեղ հո իսկական դրախտ է,— բացականչեց Զվենիգորան սքանչացած այդ խաղաղ անկյունով:— Լիակատար երջանկության համար պակասում են միայն գեղեցիկ կանայք... Փա՛հ-փա՛հ-փա՛հ: Իմ խոսքերը ետ եմ վերցնում: Լիակատար երջանկության համար կարծես ամեն բան կա:— Եվ Զվենիգորան գլխով ցույց տվեց հեռավոր նստարանը, որտեղ նստած էին երկու հոգի՝ ճերմակահեր մի տղամարդ, սև շորերով, և փխրուն մի աղջիկ, որը, նկատելով անծանոթին, սև շալը քաշեց դեմքին:

Սաֆար բեյը գոհունակությամբ ժպտաց: Հյուրի խոսքերը նրա սրտովն էին:

— Դու հաճելի զրուցակից ես, Քուչուկ աղա,— գովեց նա վաճառականին:

Զայներ և քայլերի աղմուկ լսելով՝ ծերունին ետ նայեց: Զվենիգորան իսկույն ճանաչեց Յաղուբին: Մեր մեդդահի աչքերում դարմանք ու երկյուղ հայտնվեց: Աղջիկը նույնպես լարվեց, ասես պատրաստ էր պոկվել տեղից ու փախչել: Նույնիսկ քողի միջից Զվենիգորան տեսավ թանկ դիմադծերը: Տեսավ, թե ինչպես լայնացան Զլատկայի աչքերը, իսկ ձևերը դողողացին ու սկսեցին շորերի ծալքերը քաշքշել:

Կարծես ինչ-որ բան կանխադգալով՝ Սաֆար բեյը լարվեց: Նրա դեմքը վայրկենապես քարացավ, իսկ աչքերը

փոքրացան: Մի ակնթարթ լարված լուսթյուն տիրեց: Ջվե-
նիգորան հասկացավ, որ ուր-որ է կարող է աղետալի վերջ
ունենալ: Կանխելով Յաղուբին, որպեսզի նա չհասցնի որևէ
անսպասեհ բան ասել, Ջվենիգորան վրա բերեց.

— Թանկագին Սաֆար բեյ, տեսնում եմ, որ այս անգամ
սխալվեցի: Գրազ եմ գալիս, սրանք քո հարազատներն են՝
հայրդ ու քույրդ:

— Դու դարձյալ սխալվում ես, Քուշուկ աղա,— մոռյլ
պատասխանեց Սաֆար բեյը:— Ես հարազատներ չունեմ:—
Այսինքն՝ նրանց չեմ ճանաչում: Այս մարդիկ իմ լավ բարե-
կամներն են:

— Ես ուրախ կլինեմ նրանց հետ ծանոթանալու համար:

— Ձեր դիմաց նույնպես վաճառական է,— Յաղուբին
մատնացույց արեց Սաֆար բեյը:

— Իսկապե՞ս: Հաճելի է, որ գնալով ավելի շատ թուրքեր
են հետաքրքրվում առևտրով: Առաջ նրանք արհամարհում
էին առևտուրը, ինչպես և արհեստները: Գտնում էին, որ
աշխարհում միայն մի բան կա, հանուն որի արժե ապրել՝
պատերազմը...

— Թուրքերը բնածին ղինվորներ են,— ոչ առանց փա-
ռասիրության ասաց Սաֆար բեյը՝ մի արտահայտիչ հայացք
զցելով աղջկա կողմը:— Սակայն հիմա շատերն սկսել են
այլ կերպ նայել կյանքին: Առաջ մեր հաղթական արշավանք-
ները մեր գանձարաններն ու զինվորների գրպանները լիքը
լցնում էին ոսկով ու թանկարժեք քարերով: Բայց, դժբախ-
տաբար, այդ ժամանակներն անցել են արդեն: Պատերազմ-
ները սկսել են ավելի քիչ եկամուտ տալ, քան պահանջվում
է ապրելու համար: Հենց այդ պատճառով էլ մերոնք ձեռք
են զարկում առևտրին ու արհեստներին:...

Նրանք ներս մտան: Ջլատկան իսկույն անհետացավ մյուս
սենյակում: Սաֆար բեյը հյուրին ու Յաղուբին առաջարկեց
նստել և, ներողություն խնդրելով, դուրս գնաց:

Ջվենիգորան արագորեն սեղմեց Յաղուբի ձեռքը:

— Էստեղ կողմնակի աչք ու ականջ չկա՞,— հարցրեց
կամացուկ:

— Ոչ,— շշուկով պատասխանեց Յաղուբը:— Ուրախ եմ,

որ տեսնում եմ քեզ, Արսեն, բայց ի՞նչ է նշանակում այս բոլորը:

— Ես եղա վոյեվոդա Մլադենի մոտ, տեսա նրա կնոջը՝ Անկային... Զլատկան շատ նման է մորը: Մենք պարտավոր ենք նրան խլել Սաֆար բեյի ձեռքից:

— Դա այնքան էլ հեշտ չէ: Նա մեզ հսկողութեան տակ է պահում, ինչպես կալանավորների, թեև մեր գոյութունն աշխատում է զարգարել սքանչելի խոհանոցով ու Զլատկայի համար ընտիր հանդերձներով: Նա սիրահարված է Զլատկային:

— Օ՛հ, Իսկ Զլատկա՞ն:

— Մի անհանգստանա, — ժպտաց Յաղուբը: — Զլատկան անտարբեր է նրա նկատմամբ: Սաֆար բեյը տեսնում է դա, բայց նա մի ուրիշ բան էլ գիտե. մեզ մոտ աղջկա կամքը երբեք չեն հարցնում, միայն թե ծնողները համաձայն լինեն, ծախում են աչքերը կապած, ոնց որ կատուն պարկի մեջ: Բայց Սաֆար բեյը զղվանք էլ չի հարուցում նրա մեջ: Զահել է, գեղեցիկ... Սիրուն ընծաներ է տալիս: Տեսա՞ր, ինչպես էր հագնված: Բոլորը նա է տվել:

Դուան շրխկոց լավեց: Յաղուբը փոխեց խոսքը: Սենյակ մտավ Սաֆար բեյը, իրենից առաջ ներս թողնելով ասկյարին, որը կլոր սկուտեղի վրա, կլոր քասաններով կերակուր էր բերում:

— Գործի մասին խոսելուց առաջ հարկավոր է փորը պնդացնել, — ասաց նա ուրախ, սրտաբաց տանտիրոջ նման: — Յաղուբ աղա, Ադիկեին խնդրիր, թող մեզ սպասարկի ճաշի ժամանակ, — ավելացրեց Սաֆար բեյը:

Երբ Յաղուբն ու ասկյարը դուրս ելան, Սաֆար բեյը նըստեց Զվենիգորայի դիմաց, փափուկ բարձին ու ասաց.

— Իմ թանկագին հյուրը, հավանաբար, գլխի է ընկել, որ իրեն իմ տունն եմ հրավիրել, ոչ միայն նրա համար, որ պատվեմ արևելյան համեմունքներով պատրաստած ուխարի խորովածով...

Զվենիգորան հարցական նայեց տանտիրոջը և ներքուստ լարվեց:

— Այսօր դու մեր փաշային՝ Կալաջի բեյին խնդրեցիր

բախշել ծերունի Մոմշիլ Կրայշևի կյանքը: Թույլ տուր իմանալ...

Սաֆար բեյը լոեց և խորաթափանց նայեց Զվենիգորային: Սա դիմացավ նրա հայացքին, թեև հասկացավ, որ հիմա կարող են հարցնել իրեն՝ օտարականը որտեղի՞ց է ճանաչում հայդուկին և ինչու է պաշտպանում նրան: Մի՞թե Կալաջի բեյը իր պատճառաբանությունը չի հաղորդել նրան: Ստիպված է կրկնել այն, ինչ հրապարակում ասաց փաշային: Իսկ եթե Սաֆար բեյը չհավատա՞... Ինչ արած, այդ դեպքում մի բան կմնա միայն. վերջ տալ նրան հենց այստեղ՝ չսպասելով ուրիշ հարմար առիթի:

Սակայն, ինչպես երևում է, ուրիշ բան էր հետաքրքրում Սաֆար բեյին, քանի որ նա շարունակեց.

— Թույլ տուր իմանալ՝ էն ավազակին ներում շնորհելու համար որքա՞ն խոստացար փաշային:

— Դա ինչո՞ւ է հետաքրքրում քեզ, — թեթևացած շունչ քաշեց կազակը:

— Գերիները իմն են, և ես չեմ ուզում, որ մեկ ուրիշը նրանց հաշվին վաստակի:

«Դուրս է գալիս, որ դու էլ, ախպերս, մտածում ես ոչ թե իսլամի պաշտպանության, այլ սեփական քսակիդ մասին», — մտածեց Զվենիգորան, իսկ բարձրաձայն ասաց.

— Ես փաշային խոստացա հազար դուրուշ, պատվելի Սաֆար բեյ, դրա կեսը ես կարող եմ քեզ տալ, քանի որ, ինչպես հասկանում եմ, դա քեզ է պատկանում: Բայց ի՞նչ ասեմ փաշային:

— Ասա, որ փողը ինձ ես տվել:

— Իսկ դա քեզ չի՞ վնասի:

— Մի՛ մոռանա, որ սա կյախիստանը չէ, այլ՝ Թուրքիան... Ես ենթարկվում եմ միայն բեզլերբեյին:

— Լավ: Ինձ համար միևնույն է, թե ում կվճարեմ, — համաձայնեց Զվենիգորան: — Բուլղարացուն ե՞րբ կհանձնեն ինձ:

— Հենց որ փողը ստանամ: Ի դեպ, Քուչուկ աղան ինչպե՞ս պիտի նրան փոխանակի իր հոր հետ:

— Ես միջոցներ կգտնեմ... Ինձ կօգնի Աբդի աղան: Այն խանի տերը, որտեղ իջևանել եմ:

— Աբդի աղա՛ն: Նա այնպիսի խորամանկ ու ճարպիկ մարդ է, որ փողի համար ամեն բան կանի: Բայց զգուշ մնա, կխաբի: Եթե նրանից բան դուրս չգա՝ ինձ մոտ արի: Գուցե այս հարցում էլ ես ավելի շատ կարողանամ օգնել, քան Աբդի աղան: Հասկանալի է՝ փողով... Հա՛-հա՛-հա՛:

— Հը՛մ, քեզանից, պատվելի Սաֆար բեյ, լավ վաճառական դուրս կգա: Դու կարող ես ուզածդ անել: Սակայն դու զինվոր ես, միայնակ և...

— Դժբախտաբար առանց փողի զինվորն էլ է անզոր: Մեր ժամանակներում ամեն ինչ փողով են առնում ու ծախում՝ պաշտոնը, աստիճանը, հողը, նույնիսկ փաղիշահի գահը... Ես երկար ժամանակ ապրել եմ մայրաքաղաքում և հնարավորություն եմ ունեցել համոզվելու, որ հիմա ուժեղը նա չէ, ով սուր ունի, այլ նա՛ ով հաստ քսակ ունի:

— Դու իմաստուն ես դատում: Դա ավելի է ինձ բերում այն համոզման, որ գործ ունեմ խելացի ու օրինավոր մարդու հետ: Ուրախ եմ, որ այդպիսի մարդիկ են իսլամի պաշտպանները:

— Դու շեռ սխալվում... Ես իմ սուրը բարձրացնում եմ հանուն և ի փառս ալլահի: Բայց ո՞վ չի հիշում նաև իրեն: Ճիշտ է, այս խղճուկ Բուլղարիայում այնքան էլ շուտ չես հարստանա... Չորս կողմը աղքատություն է:

— Դուք եք մեղավոր: Ձեր զինվորները ամայացրին այս բարեբեր երկիրը:

— Մենք չսկսեցինք պատերազմը: Բուլղարները իրենք են մեղավոր: Ապստամբում են, շեն ճանաչում փաղիշահի իշխանությունը:

— Ապստամբո՞ւմ են, երևի ոչ լավ կյանքից: Եթե դուք շատ եք ուզում պատերազմել, գնացեք Ուկրաինա, Ռուսիա, ... Այնտեղ հարուստ հողեր կան ու մարդիկ էլ շատ են: Անհաշիվ ստրուկներ, անասուններ ու փող կարելի է ձեռք բերել: Ինչ Պոսպոլիտան ձեզ դաշնակից կլինի, քանի որ էդ սխիզմաթ՛ կաղակները նրան նույնպես շատ հոգս են պատճառում:— Զվենիգորան լուեց: Կարթը գցված էր: Կհրատարվի՞ արդյոք:

¹ Սխիզմաթ (հուն.) — հերետիկոս, հերձվածող, ուրացող:

Սաֆար բեյը հետաքրքրությամբ նայեց հյուրին:

— Մերոնցից շատերն էլ այդպես են մտածում: Ուկրաինայի կեսը դուրս է եկել Այախիստանի ձեռքի տակից: Փաղիշահը թույլ չի տա, որ նա լիովին միավորվի Մոսկովի հետ: Դա մահացու սպառնալիք կլինե՞ր մեզ համար: Զուր չէ, որ Իբրահիմ փաշան՝ Մեծ վեզիրը, զորք է պատրաստում Գանուբի վրա արշավելու համար: Գեո այս տարվա մեջ...

Սենյակ մտան Յաղուբն ու Զլատկան, և Սաֆար բեյը խոսքը կիսատ թողեց: Որքան էլ Զվենիգորան ուզում էր տեսնել Զլատկային, սակայն ափսոսաց, որ նրանք այդպես անժամանակ եկան: Եվս մեկ բույե, և Սաֆար բեյը, հավանաբար, լրիվ կբացեր Բարձր Դռան գաղտնի մտադրություններն Ուկրաինայի նկատմամբ, բայց դրանից էլ, ինչ նա հասցրեց ասել, պարզ էր ամեն բան. ամռանը թուրքերը մեծ պատերազմ են սկսելու...

4

Ճաշից հետո, որի ժամանակ Զվենիգորան ավելի շատ լսում էր, քան խոսում, Սաֆար բեյը նրան հրավիրեց հարևան սենյակը: Ներսից դուռը պինդ փակեց և, համոզվելով, որ պատուհանի տակ մարդ չկա, ասաց.

— Թանկագին Քուչուկ աղա, ես զինվոր եմ, անկեղծ, շիտակ մարդ: Ինչ-որ մտքումս է, այն էլ լեզվիս վրա է: Կարծում եմ, շես վիրավորվի, եթե մի բան էլ խնդրեմ:

— Համեցեք,— գլուխ տվեց Զվենիգորան, շհասկանալով, թե խոսքը ուր է թեքում աղան:

— Նս ուզում եմ ամուսնանալ:

— Է, ինչ կա որ, շնորհավորում եմ: Կարծես թե գլխի եմ ընկնում ով է նա:

— Դժվար չէ գլխի ընկնել: Բայց ես դա չէի ուզում ասել... Ինձ փող է հարկավոր... Ուզում եմ քեզանից պարտքով վերցնել, Քուչուկ աղա: Հենց որ ճարեմ, կվերադարձնեմ:

«Լիրբ: Նա ուզում է լրիվ քամել ինձ... Գիտե, որ ես իր դեմ անպաշտպան եմ»,— մտածեց Զվենիգորան, իսկ բարձրաձայն ասաց.

— Իսկ ի՞նչ հույս կա, որ շուտով փող կճարես:

— Այսօր կամ վաղը ես արշավանքի եմ գնում:

— Բայց դա ախր վտանգավոր է,— դուրս թռավ Զվենի-
գորայի բերանից:

— Զլինի՞ կարծում ես, թե ինձ կսպանեն:

— Պատերազմում ամեն բան էլ լինում է:

— Ես հավատում եմ իմ բախտավոր աստղին և ալլահի
ողորմածությանը:

— Եթե այդպես է, ուրեմն ես կաղոթեմ ալլահին, որպեսզի
պահպանի քո կյանքը, Սաֆար բեյ:

— Ի սեր ի՞նձ, թե ի սեր փողի, որ քեզանից պիտի
պարտք վերցնեմ,— քմծիծաղ տվեց Սաֆար բեյը:— Ուրեմն,
կարո՞ղ եմ հույս ունենալ:

— Անշուշտ: Որքա՞ն է հարկավոր:

— Բացի այն հինգ հարյուրից, որ պիտի տաս Մոմչիլ
Կրայչեի համար, ևս հինգ հարյուր... Այսպիսով, ընդամենը
հինգ հարյուր դուրուշ: Երբ վերադառնամ հայրուկների դեմ
կատարած արշավանքից ու բերեմ քո հորը, հաշվիր որ էլ
պարտք չեմ:

— Կա՛վ, համաձայն եմ: Բայց ինչի՞դ է պետք այդքան
փողը: Զլինի ուզում ես մեծ փրկագին տալ Ադիկեի համար:

— Իսկ ինչո՞ւ չէ: Ադիկեն գեղեցիկ աղջիկ է: Եվ Յաղուբ
աղան, ուղի թե չուղի, միևնույն է, կդառնա իմ աները: Ես
այդ թուչնակին իմ ձեռքից բաց չեմ թողնի:

— Իսկապես որ Ադիկեն շատ գեղեցիկ է,— համաձայնեց
Զվենիգորան, մտքում երդվելով, որ կանի ամեն հնարավոր
ու անհնարին բան, որպեսզի Զլատկան չընկնի ինքնավատահ,
դաժան ենիչերիի ձեռքը:

— Հրաշալի է,— բացականչեց Սաֆար բեյը:— Ես էլ չէի
կամենա նրանց հսկողության տակ պահել մինչև արշավից
վերադառնալս... Բայց ստիպված եմ:

— Ինչ է, նրանք կարող են փախչե՞լ: Միթե Ադիկեն քեզ
չի սիրում...— Զվենիգորան դժվարությամբ թաքցրեց ուրա-
խությունը:

— Հենց դա է ինձ անհանգստացնում: Չնայած այն էլ
բավական է, որ ես սիրում եմ իրեն: Բայց աղջկա համար
հիմա եմ ուզում փրկագին վճարել, որպեսզի Յաղուբին խոսք-
կապ անեմ:

— Ուշինչ էլ չի պատահի նրան, թե որ մի շաբաթ հուսալի հսկողութեան տակ մնաւ Այստեղ հրաշալի տեղ է:

— Դու իրավացի ես: Շնորհակալ եմ,— ասաց Սաֆար բեյը՝ փողը գրպանը դնելով:— Ծերունո՞ւն ինչ անեմ, ո՞ւր ուզարկեմ:

— Ես իջևանել եմ Աբդի աղայի խանում: Երախտապարտ կլինեմ, եթե կես ժամ հետո ասկյարի հետ նա այնտեղ լինի... Ես գնացի, փաշայի մոտ ճաշի եմ հրավիրված: Շորերս պիտի փոխեմ:

— Նշանակում է, մենք շուտով կտեսնվենք: Յտեսութեան...

Սաֆար բեյը կանչեց ասկյարին և հրամայեց ճամփու դնել հյուրին: Որպեսզի ավելորդ ուշադրութեան չհրավիրվի իր վրա, Զվենիգորան ոչ մեկին ճանապարհը չհարցրեց, երկար պատվեց ծուռումուռ փողոցներով, մինչև որ վերջապես դուրս եկավ քաղաքային հրապարակ, այնտեղից էլ՝ խան: Դեռ հեռվից նկատեց ուրախութեանից շողշողացող Դրագանին: Յունակը նետվեց ընդառաջ.

— Շնորհակալութեան, Արսեն, չգիտեմ քեզ ինչպես հաջողվեց այդ բանն անել, բայց Մոմչիլ պապը վերադարձել է ողջ ու առողջ: Շուտ գնանք, ինքդ կտեսնես: Ասկյարը նրանից չի հեռանում: Ասում է. «Հրամայված է անմիջապես հանձնել Քուչուկ վաճառականին»:

Բակում կանգնած էր մոռյլատես տարեց մի ասկյար, պարանի ծայրը բռնած, որով կապկպված էր ծերունին:

— Ես եմ Քուչուկ վաճառականը,— ասաց Զվենիգորան և մի դրամ նետեց զինվորին:— Պարանը կտրիր ու գնա:

Սա բռնեց դրամը, յաթաղանով կտրեց պարանը և բակից հեռացավ:

Զվենիգորան գրկեց Մոմչիլին.

— Ուրախ եմ քեզ ողջ-առողջ տեսնելու համար: Եվ ազատութեան մեջ... Սակայն քեզ ու Դրագանին չի կարելի էստեղ մնալ: Շուտ փախեք էստեղից: Դրագան, պապին տար մի անվտանգ տեղ, իսկ դու վերադարձիր ընկերների հետ: Սպասիր ինձ անտառում, ինչպես պայմանավորվել ենք, գետակի մոտ: Դե, հայդա:

Դրագանն ու Մոնշիլը փութով դուրս եկան խանից, իսկ Զվենիգորան գնաց իր սենյակը:

Արևամուտից երկու ժամ առաջ նա անշտապ կտրեց անցավ քաղաքային հրապարակը: Ցերեկվա տոթից հետո սարից քաղաք էր իջնում զով քամին: Շնչում էր թեթև, ուրախ: Առայժմ ամեն ինչ լավ էր գնում: Դրագանը մարդիկ կբերի, և նրանք, հենց որ Սաֆար բեյը արշավի մեկնի, կհարձակվեն ամրոցի վրա և կազատեն Զլատկային ու Յաղուբին:

Հրապարակի դիմացի կողմում վրան էր զարկել մի ոչ մեծ հեծյալ ջոկատ: Սպախիտաները խարույկ էին վառել, դրանց վրա հարմարեցրել էին եռոտանիները՝ պղինձներով: Վրնջում էին քաղցած ու հոգնած ձիերը: Զինվորները նրանց համար տոպրակներով վարսակ էին տանում, անուշաբույր սարի խոտ:

Զվենիգորան նշանակութուն շտվեց դրան: Քի՞չ ամեն տեսակ զինվորական ջոկատներ էին տեղից տեղ քոչում Օսմանյան կայսրությունում: Կաղակը մտավ փաշայի տուն, և ծառան, հաճոյախուսութուններ շոսյլելով, նրան առաջնորդեց վերև, դեպի դահլիճ, որտեղից արդեն լսվում էր աշխույժ խոսակցության աններդաշնակ աղմուկը:

Ինչ-որ մեկի բարձր զոզոջոնն ձայնը շատ ծանոթ թվաց նրան, բայց նա չհասցրեց հիշել, թե դա ում էր պատկանում, երբ ընդառաջ վաղեց ժիր, կայտառ փաշան, թևանցուկ արեց և տարավ դեպի գունավոր ապակիներով նեղլիկ պատուհանը, որտեղ կանգնած էր մարդկանց մի ոչ մեծ խումբ:

— Մեծապատիվ հյուրեր, թույլ տվեք ձեզ ծանոթացնել մեր քաղաքը ժամանած կյախիստանցի վաճառական Քուչուկ աղային: Նա լավ է ճանաչում այն երկրները, որտեղ փաղիշահի քաջարի զինվորները, հավանաբար, շատ շուտով կփառարանեն ալլահի անունը: Կարծում եմ նա ուրախությամբ մեզ կպատմի անհավատների մասին իր տեսածն ու լսածը:

— Խնդրեմ, ես պատրաստ եմ:— Գլուխ տվեց Զվենիգորան և տեղնուտեղը ցնցվեց. ուղիղ իր առջև կանգնած էր Համիդը և զարմանքից չոված աչքերը հառել էր իր նախկին գերուն:

— Ալլահ աքբեր, — բացականչեց Համիդը: — Ուռուս Ար-

սե՛նը: Դու էդ ո՞նց ես ընկել էստեղ... Ինքը՝ երկնային տերն է քեզ իմ ձևոքն ուղարկել:

Նա ձեռքը տարավ թրի դաստակին: Բայց չհասցրեց դուրս քաշել: Կայծակի նման փայլատակեց Զվենիգորայի դաշույնը: Սակայն դաշույնի ծայրը սահեց անցավ զրահի հարթ պողպատի վրայով, որ հագել էր Համիդը շորերի տակից: Ինչպիսի՜ անհաջողություն... Հասկանալով, որ նորից հարվածել չի հաջողվի՝ Զվենիգորան ետ փախավ, որպեսզի, օգտվելով ընդհանուր իրարանցումից, դուրս վազի հրապարակ: Իսկ այնտեղ՝ միայն թե կարողանար ձի հեծնել:

Շվարած հյուրերին պեսուղեն հրելով՝ կազակը վազեց դահլիճի մեջտեղը: Ինչ-որ մեկի հուսահատ ճիչը ասես ձաղկեց նրան մտրակով: Սարսափահար եղած ծառան, որ դռան արանքից ներս էր նայում, փախստականի ձեռքին մերկացրած դաշույնը տեսնելով, մի կողմ նետվեց: Ճանապարհն ազատ էր:

Բայց վերջին պահին ճարպիկ Սաֆար բեյը ոտքը դեմ տվեց, և Զվենիգորան թափով փռվեց հատակին: Սաֆար բեյը, ինչպես վայրի կատուն, ցատկեց նրա վրա, ձեռքերը ոլորեց մեջքին:

— Բռներ գյավուրին: Կապե՛ք...

Մի քանի մարդ, այդ թվում նաև Համիդը, առաջ նետվեցին: Թափվեցին գետնին փռված կազակի վրա: Զվենիգորան, լարելով բոլոր ուժերը, դեսուղեն նետվեց, բայց թշնամիները ավելի ու ավելի էին նեղում: Նա այլևս ոչ մի մկանը շարժել չէր կարողանում: Պառկել էր բազմաթիվ մարմինների ծանրության տակ՝ տերևի նման տափակած: Մեկը կապեց նրա ձեռքերը՝ ոլորելով գրեթե մինչև թիակները:

— Պինդ կապեք, ուժեղ...

— Խլեր դաշույնը...

— Բարձրացրեք գյավուրին...

Զվենիգորան սկսեց ավելի թեթև շնչել: Լամբոխը ետ քաշվեց: Սաֆար բեյը ոտքով ուժգին հարվածեց նրա կրծքին:

— Վեր կաց, շուն:

Նրան տարան Սաֆար բեյի ամբոցը և նկուղը գցեցին: Լույսը թափանցույժ էր միայն առաստաղին բացված փոքրիկ երդիկից: Սև ուրվականների նման շրջապատում էին քարե պատերը: Նեխած օդից շունչը կտրվում էր:

— Պառկի՛ր, գյավուր,— բղավեց Սաֆար բեյը, շեմքից նկատելով, որ կալանավորը փարձում է բարձրանալ տեղից:— Շուտով մենք կվերագառնանք:..

Դուռը շրխկոցով փակվեց: Լուսթյուն իջավ:

Զվենիգորան ելավ տեղից, կանգնեց երդիկի տակ: Այնտեղից երևում էր իրիկնամուտի կապույտ երկնքի մի փոքրիկ պատառը: Ինչ արած, սա էլ վատ չ'... Կյանքի վերջին թռակներին գլխավերևում ունենալ շինջ, թեկուզև օտար երկինք:

Հանկարծ վերևում ինչ-որ բան փայլեց: Զվենիգորան մոտեցավ, ուշադիր նայեց: Երկաթի կեռիկ: Այն էլ ոչ մեկը, այլև մի ամբողջ շարք: Այ քեզ գյո՛ւտ:

«Հարկավոր է շուտ ձեռքերն ազատել... Նա քարի մի սուր ելուստ դտավ, մեջքով շրջվեց ու սկսեց պարանը քսել ելուստին: Ժամանակը տանջալիորեն երկար տևեց: Բայց ահա կապերը թուլացան, ապա ցած ընկան: Ընդարմացած ձեռքերը շփեց և մոտեցավ կեռիկներին: Ա՛խ. թե որ կարողանար գոնե գրանցից մեկը պոկել, հրաշալի գենք կլիներ: Պատկերացրեց, թե երկաթի այդ կտորը ինչպես է փառահեղ կերպով ծառայում իրեն այն պահերին, երբ ինքը պայքարում է հանուն կյանքի: Բայց ավա՛ղ, կեռերն այնպես ամուր էին գամված առաստաղի մեջ, որ գրանցից ոչ մեկը անձնատուր չեղավ նրա ուժեղ ձեռքերին: Չէ, առանց լինգի հնարավոր չէ պոկել, անմտություն է: Սաֆար բեյն էլ ամեն թույլ կարող է ներս մտնել: Իսկ եթե փորձի ոչ թե հանել, այլ ջարգե՛լ՝ նա երկու ձեռքով կառչեց ծայրի կեռիկից, ոտքերը դեմ տվեց պատին ու սկսեց ճկել: Երկաթը քիչ-քիչ տեղի տվեց: Զվենիգորան ավելի ուժեղ սեղմեց, այնպես որ արյունը զարկեց քունքերում, լարումից դողացին ոտքերը...»

— Դե, թափով, ո՛ւխիս:

Կեռը մի քիչ էլ ծովեց: Հիմա մյուս կողմից: Դե, ուժեղ...

Սեղմիր: Այդպես... Գնա՛ց... Գրեթե աննկատելի, բայց ծովում է...

Ամբողջ ժանրությամբ կեռի վրա ընկնելով՝ Արսենը դողաց լարվածությունից, պոկվեց ու ընկավ հողե հատակին: Որոշ ժամանակ պառկած մնաց, շունչ քաշեց, ապա նորից ելավ, ձեռքերով կառչեց կեռիկից, վեր ձգվեց, ոտքերով հենվեց պատին...

Եվ նորից պոկվեց:

Շոգեց: Քրտինքը լցվեց աչքերը: Զվենիգորան վրայից հանեց շորերը, մնաց միայն մի շապիկով: Եվ նորից գործի անցավ: Անցավ մեկ ժամ... երկու... Պինդ գամված կեռիկը դժվարությամբ էր ենթարկվում, դժվարությամբ էր ճկվում, բայց ճկվում էր: Առաջ-ետ... Առաջ-ետ: Ամեն մի ճիգի հետ ավելի ու ավելի է հնազանդվում: Բայց ուժերն արդեն չեն բավականացնում մինչև վերջ հասցնելու համար...

Բռնորովին մթնեց:

Հալից ընկած կազակը գլորվեց հատակին: Մի քիչ էլ, և կեռը կկոտրվեր: Բայց ուժերն սպառվեցին: Աչքերին արյունոտ մշուշ էր իջել: Արսենը ցավից տրաքվող գլուխը հենեց պատին և շնկատեց, թե ինչպես քունը տարավ:

Կազակի խոր քուն: Ամեն ինչ մոռացվեց՝ և՛ վտանգը, և՛ Սաֆար բեյը, և՛ Համիդը, և՛ այն, ինչի համար եկել էր այստեղ: Մինչև առավոտ ոչ մի բանով չխանգարվեց քունը:

Միայն երկաթագամ դռների դղրդոցը արթնացրեց Արսենին: Նա վեր թռավ տեղից: Ակամա կկոցեց աչքերը բակից ներս ընկած պայծառ արևից, ձեռքով ծածկեց դեմքը: Շեմքին կանգնեցին երկուսը:

«Է՛խ, քնով անցա: Ուշացա»:— Ոնց որ սիրտը գանակ խրեին: Անցողակի նայելով նախորդ օրը ծռած կեռիկին՝ Զվենիգորան քաշվեց գետնատան մութ անկյունը: Առջևից իջնում էր Սաֆար բեյը, ապա ծանր շորորալով գալիս էր Համիդը: Նրանց ետևից երկու ասկյարներ բերում էին պարաններ, մտրակներ, դուլլով ջուր:

— Հը, ո՞նց է զգում իրեն պան վաճառականը,— շարախինդ քմծիծաղ տվեց Սաֆար բեյը:— Ինքդ կխոսե՞ս, թե պիտի ստիպես քեզ օգնելու համար նեղություն քաշենք:

Զվենիգորան լուռ մնաց:

— Ա-ա՛, դու նույնիսկ կարողացել ես՝ ձեռքերդ ազատել: Կապե՛ք դրան: Ամո՛ւր:

Ասկյարնեբը նետվեցին դեպի Արսենը: Բայց սա մի հարվածով ետ շարտեց նրանց: Համիդը դուրս քաշեց թուրը, բայց Սաֆար բեյը բռնեց նրա ձեռքը:

— Չէ՛, չէ՛, կենդանի կվեցնենք...

Ասկյարնեբը կրկին հարձակվեցին Արսենի վրա, նրանց օգնեցին Սաֆար բեյն ու Համիդը: Տապալեցին գետին, կապկպեցին:

— Բարձրացրեք վելև,— հազիվ շունչը տեղը բերելով ասաց Սաֆար բեյը:— Կախեք կեռից: Ասկյարնեբը պարանը զցեցին կեռին, ներքևից ձգեցին: Սուր ցավը ծակեց դուրս ընկած ուսերը: Մի խուլ հառաչանք դուրս թռավ Արսենի բերանից...

— Դե, հիմա կերգես, գյավուր,— ֆշշացրեց Համիդը և ծանր մտրակով ուժգին սկսեց հարվածել, ինքն իրեն խոսեցնելով:

— Սա քեզ, ստրուկ, փախչելու համար: Սա իմ ավերված օջախի համար: Սա նրա համար, որ ես քեզ ատելով ատում եմ...

Մտրակը իջնում էր ուսերին, մեջքին, գլխին: Յուրաքանչյուր հարվածից հետո մաշկի վրա արնաներկ սպիներ էին գոյանում: Չվենիգորան ամուր սեղմել էր ատամները, որպեսզի չգոռա, փակել էր աչքերը:

— Իսկ սա, ստրուկ, իմ տնեցիների համար, որոնց դու սպանեցիր... Գյավուր: Կեղտոտ խող,— մոլեգնեց Համիդը, ավելի զազազելով ու ծանր շնչելով:

Սաֆար բեյը կանգնել էր կողքին: Նրա ունգները լայնացել էին: Մտրակը ցնցվում էր ձեռքի մեջ: Արյան հոտը արբեցրել էր նրան:

— Կաց, Համիդ բեյ, էդպես ծեծելով կսպանես նրան: Էդ շնից մի քիչ էլ ինձ բաժին թող,— գոչեց նա՝ տեսնելով, թե ինչպես ուժգին հարվածից հետո խոշտանգվողը ամբողջ մարմնով ջղաձգվեց:

Համիդը կանգ առավ, թևքով սրբեց ճակատի քրտինքը:

Արսենը բացեց աչքերը, արյան մշուշի միջից նայեց դահիճներին: Սաֆար բեյը դանդաղ քշտեց թևքը...

Վայրկենապես մի կողմ քաշվեց ծվատված մարմնի խելահեղ ցավը: Փոխարենը գլխում անսպասելիորեն հայտնվեց մի անհավանական միտք: Մի՞թե նա է՞ Սաֆար բեյի աջ ձեռքին, արմոնկից մինչև դաստակը, կարմրավուն մաշկի վրա երեք սպիտակ շերտով ձգվում էին բարակ սպիները...

— Դե, ինքնակոչ վաճառական, պատմիր. ինչի՞ համար էիր եկել Սլիվեն... Շտապիր... Մենք ժամանակ չունենք: Այսօր գնում ենք ջախջախելու Մլադենի հայդուկներին... Եթե ամեն ինչ ասես, քեզ թեթև մահ եմ խոստանում: Դե խոսիր, որտեղի՞ց ես ճանաչում Մոմչիլ Կրաչևին: Ո՞վ գլխի գցեց, որ ազատես նրան: Ո՞վ է քեզ ուղարկել այստեղ: Դե...

Սաֆար բեյը բռնեց Զվենիգորայի քանքուլից և գլուխը ետ շրջեց, ասես կամենալով կրակոտ հայացքով շանթահարել կազակին:

— Նենկո,— խոխուաց Արսենը:— Նենկո, մի՞թե դու ես: Սաֆար բեյը հտ-ետ գնաց, կարծես մեկը հարվածեց նրան:

— Ինչ ասացի՞ր: Նենկո՞,— հարցրեց նա տարօրինակ, մի տեսակ անկենդան ձայնով:— Դու որտեղի՞ց գիտես այդ անունը: Օ՛, ալլահ աբբեր: Դե, խոսիր, խոսիր...

Նրա հետ կատարված փոփոխությունը այնքան ապշեցուցիչ էր, որ Արսենը հասկացավ, իր դիմաց իսկապես Նենկոն է՝ Մլադենի տղան: Նշանակում է նա հիշում է իր նախկին մանկական անունը... Բայց արդյո՞ք որևէ բան մնացել է նրա հիշողության մեջ անունից բացի: Մանկական տարիներից է՞լ ինչ հիշողություններ է պահել:

— Արձակիր կապերս, Սաֆար բեյ: Ես բոլորը կբացատրեմ, եթե այստեղ չլինի...

Նա ուղում էր ասել. «Եթե այստեղ չլինի Համիդը»: Բայց չհասցրեց: Որոտաց կրակոցը, և կրակը խանձեց նրա քունքը: Գույնզգույն օղակներ լողացին կաղակի աչքերի առջև, և նա ասես թաղվեց սև խավարի մեջ:

Նկուղում դանդաղ սկսեց ցրվել վառոդի կծու ծուխը:

Արսենը կակղեց, թուլացավ, կախվեց պարանից: Կրծքին թեքված գլխից արյուն կաթեց հատակին:

— Ինչո՞ւ կրակեցիր, Համիդ աղա,— գոչեց մեռելի պես գունատված Սաֆար բեյը:— Ինչո՞ւ սպանեցիր նրան:

Նա սեղմեց բոունքները, ամբողջ մարմնով լարվեց:

— է, է՛, ինչ ենք մլուկ տալիս էս շան հետ:— Համիդի ուռուցվորած դեմքը ցնցվեց չգիտես շփոթմունքից, թե շարությունից:— Տեղն էր նրան: Գարշելի ստրուկ...

— Ի՞նչ արեցիր, Համիդ աղա: Այդ գյավուրը մի գաղտնիք գիտեր, որը հալածում է ինձ իմ ամբողջ կյանքում:

— Անհեթեթություն է: Ուշ մի՛ դարձրու էդ անմիտ մանկական երազներին: Հրամայիր գուրս տանեն, թաղեն էս լեշը:

Սաֆար բեյը սևեռուն նայեց սպախիայի դեղին, պլզած աչքերին, նկատեց նրանցում թաքնված տազնապը: Բայց մինչ կհասցնեն որևէ բան ասել, վերևում, աստիճանների վրա ոտնաձայն լսեց: Ներս ընկավ հեռասպառ ասկյարը: Ձգվեց.

— Նամակ բեգլերբեյից, աղա:— Եվ կնքված ծրարը մեկնեց նրան:

Սաֆար բեյը պոկեց քուղը, ծրարը բացեց, մոտեցավ լույսին: Նրա սիրտը կամաց-կամաց տեղն ընկավ, հանգստացավ: Նա լուռ աչքի անցկացրեց նամակը, հետո շրջվեց դեպի սպախիան.

— Համիդ աղա, լսիր, թե ինչ է գրում բեգլերբեյը: Կարևոր իրադարձություններ են սկսվում:— Դանդաղ ու բարձրաձայն կարգաց. «Սաֆար բեյին՝ հատուկ գիտվորական ջոկատի պետին: Գաղտնի: Շուտով մեր պայծառափայլ փաղիշահի անպարտելի զորքերը Բալկանների վրայով անցնելու են դեպի հյուսիս, և դուք պատասխանատու եք Վրատնիկ լեռնանցքի լիակատար անվտանգության համար: Հրամայում եմ, այս նամակը ստանալուն պես անհապաղ գուրս գալ արշավի և ոչնչացնել ավազակ Մլադենի հայդուկներին: Ուժերը դորացնելու համար ուղարկում եմ Իսմայիլ աղայի օժանդակ ջոկատը: Ձեզ կենթարկվի նաև Համիդ աղայի ջոկատը, որի մասին անձամբ կհաղորդենք իրեն»: Ի՞նչ կասես սրան, Համիդ աղա:

— Կասեմ, որ մեծ պատերազմ ենք ունենալու կալակներին ու Մոսկովի թագավորի դեմ, բայց դա արդեն վաղուց գաղտնիք չէ: Դեռ Ակսուում, երբ հրաման ստացա մեկնել Ստամբուլ, հասկացա, որ խոսք է գնում մեծ պատերազմի

մասին: Վաղուց ժամանակն է, որ մենք ամուր կանգնենք Սև ծովի հյուսիսային ափին: Ուկրաինան մեզ կտա հաց, անասուն և ստրուկ: Հանուն դրա էլ մենք սուր ենք բարձրացնում հյուսիսի դեմ... Ուրեմն, հենց այսօր պետք է դուրս գանք Չեռնավոդի դեմ:

— Անշուշտ, ժամանակ չկորցնենք, գնացինք:

Նրանք բակ դուրս եկան:

— Խոջա, բոլորին արշավանքի կոչիր,— հրամայեց Սաֆար բեյը, զուռնան կողքից կախած ասկյարին:— Իսկ դու, Ջարար, լավ լսիր. կմնաս ամբողջում, կհսկես իմ հյուրերին Ալու հետ միասին: Նա կլինի ավագը, ես բոլոր կարգադրություններն արել եմ նրան... Իսկ հիմա իջիր նկուղ: Այնտեղ կեռից կախված է մեռած գյավուրը: Նրան տար, թաղիր պարսպի ետևում, ձորի մեջ: Դե, հայդա:

Տագնասլահույզ մղկտաց զուռնան: Շենքերից ճիչ ու աղաղակով դուրս թափվեցին ասկյարները, ճանապարհին կարգի բերելով հազուստներն ու զենքերը: Համիդը շտապեց իր ջոկատի մոտ: Սաֆար բեյը վերադարձավ տուն. ուզում էր տեսնել Ադիկեին: Օրեցօր նա ավելի ու ավելի էր սիրահարվում աղջկան և առիթը բաց չէր թողնում մի ավելորդ անգամ երևալ նրա աչքին: Հակառակ իր դաժան ու սառը բնավորությանը, Ադիկեի մոտ նա ինչ-որ անհասկանալի ուրախություն էր զգում, և մի անհաղթահարելի ուժ շարունակ ձգում էր դեպի աղջիկը:

Պարտեզի դռնակի մոտ նրան հասավ շնչակտուր Ջարարը: Նրա երկարավուն կնճռապատ դեմքը ծածկված էր քրտինքի կաթիլներով, աչքերում փայլում էր տարակուսանքը:

— Ի՞նչ է պատահել, Ջարար,— խոժոռվեց Սաֆար բեյը:

— Աղա, էնտեղ... ներքևում... իսկի էլ մեռած չէ... էն գյավուրը... Աչքերը բացուխուփ է անում: Ինչ անեմ. վերջացնե՞մ, թե ողջ-ողջ թաղեմ:

— Ի՞նչ ես դուրս տալիս: Նա չէր կարող կենդանանալ: Քունը գլխից է, աչքիդ է երևացել:

— Ալլահը վկա, ես չեմ քնել և աչքիս էլ չի երևացել: էն գյավուրը ողջ է:

Սաֆար բեյը կտրուկ շուռ եկավ և գրեթե վազելով սլա-

ցավ ետ, դեպի նկուղ: Ասկյարը հազիվ էր հասնում նրա ետևից:

Իրոք որ Զվենիգորան ողջ էր: Ժամանակ առ ժամանակ նրա մարմնով սարսուռ էր անցնում, ցնցվում էր: Սաֆար բեյը յաթաղանը հանեց, կտրատեց պարանը: Կազակի ծանրացած մարմինը ընկավ նրա ձեռքերի վրա: Աղան նրան պառկեցրեց գետնին և Զաբարին հրամայեց մի գիրկ ծղոտ բերել և մի կտոր կտավ:

Վերքը կապելուց հետո Զվենիգորան սկսեց համաշափ շնչել ու դանդաղ բացեց աչքերը: Սաֆար բեյը ծունկի իջավ նրա կողքին:

— Դու լսո՞ւմ ես ինձ, գյավուր,— կռանալով հարցրեց նա:— Ուշքի արի: Վերքդ խոր չէ, դնդակը միայն քերծել է գանգո: Դու բախտավոր աստղի տակ ես ծնվել: Քեզ շմեցրել է միայն: Ուշքի արի:

Բայց Զվենիգորան, երևում է, շատ էր թուլացել: Թաց կոպերը կրկին փակվեցին:

Սաֆար բեյը վեր կացավ:

— Զաբար, էս կալանավորին թողնում եմ քեզ: Դու գըլխով պատասխանատու ես սրա կյանքի համար: Լսո՞ւմ ես, նա ինձ հարկավոր է միայն կենդանի: Նրան հաց ու ջուր կտաս... Աչքիդ լույսի պես պահպանիր մինչև իմ գալը: Հասկացար:

— Հասկացա, աղա: Հասկացա:

Սաֆար բեյը մի քիչ էլ կանգնեց Զվենիգորայի գլխավերևում, մտախոհ ճակատը կնճոտտելով:

— Տեսնես ի՞նչ գաղտնիք է թաքնված այդ գյավուրի հիշողության ծալքերում: Ինչո՞ւ և ինչպե՞ս խաշաձևեցին իրենց ճակատագրերը: Ինչո՞ւ նենկո անունը ամբողջ կյանքում հետապնդում է իրեն, թպրտում է սրտում: Արդյոք դրա հետ չի՞ կապված իր վաղ մանկությունը, որի մասին երբեմն-երբեմն առանձին աղոտ հիշողություններ են դուրս լողում: Ինչպե՞ս կուղենար թափանցել այդ հեռավոր անցյալի մեջ: Գուցե ի՞նքն էլ ինչ-որ մի տեղ ծնողներ ունի, եղբայրներ ու քույրեր: Նա գիտեր, որ մի քանի ենիշերիներ գտել են իրենց հարազատներին: Դո՞նե իմանար՝ ով է ինքը, որտեղից... Մուսլ խոհերի մեջ Սաֆար բեյը դուրս եկավ նկուղից:

Իրիկնադեմին Արսենի վիճակը լավացավ: Աչքերը բացեց ու մշուշված հայացքով նայեց նկուղի մոայլ պատերին: Լուռ էր: Մութ: Ո՛ւր կորան Սաֆար բեյն ու Համիդը: Մի՞թե նրանք ձանձրացան իրեն տանջելուց: Հա-ա՛... նրանք, կարծես թե, խոսում էին ինչ-որ արշավանքի մասին... Հայդուկների դեմ, Մլադենի դեմ...

Միտքը վայրկենապես պայծառացավ: Զվենիգորան բարձրացավ, նստեց տեղում: Քունքերը ցավում էին սաստիկ, Շոշափեց. պինդ փաթաթված էր կտավի պաստառով: Դա դարձացրեց նրան: Զէր հիշում, թե ինքը վիրակապել է իրեն: Այդ դեպքում ո՞վ է արել: Մի՞թե Սաֆար բեյը: Իսկ սա՞ ինչ է: Մի տես է՛: Նույնիսկ ջուր և ուտելիք են դրել:

Այդ հարցերից ոչ մեկին պատասխան չգտնելով՝ Արսենը փորձեց վեր կենալ:

Զնայած ինչ որ դրել էին, կերավ, բայց շատ վատ էր զգում: Անտանելի ցավում էր մեջքը, գլուխը պտտվում էր: Թուլությունն ու ցավը հաղթահարելով, պատից բռնած, նա ոտքի կանգնեց ու ականջ դրեց: Շուրջը խոր լուություն էր:

Աստիճաններով դանդաղ բարձրացավ դեպի դուռը, աչքը հպեց բանալու անցքին: Դրսում մութ էր: Հետաքրքիր է, հսկո՞ւմ են իրեն: Ուսով դուռը թեթևակի հրեց. դուռը ճռռաց:

Այդ նույն պահին մեկը հազաց: Զրխկաց փականը, և ասկյարը դուռն ճեղքից ներս նայեց:

— Ա-ա՛, գյավուր: Կա՞մ ես արդեն: Ուշքի եկա՞ր:

— Այո... սրանից լավ չի լինում, — պատասխանեց Զվենիգորան՝ պատռված շուրթերը հազիվ շարժելով:

— Դե ուրեմն հանգիստ պառկիր, մինչև աղան վերադառնա:

— Իսկ ե՞րբ կվերադառնա:

— Հենց որ ավազակ Մլադենին բռնի:

Այսպես ուրեմն, Սաֆար բեյը... Զէ՛, ոչ թե Սաֆար բեյը, այլ Նենկոն՝ վոյեվոդա Մլադենի որդին, իր զորքով դուրս է եկել հոր դեմ: Ճակատագրի ինչպիսի՞ դաժան խաղ... Թ՛նչ

դժոխսային մտադրությունն է ունեցել Համիդը այն օրվանից, երբ գողացավ վոյեվոդայի երեխաներին: Եվ ինչպես հիմա բոլորը միահյուսվել են մի անքակտելի հանգույցով՝ Մլադեն, Անկա, Սաֆար բեյ, Ադիկե... Միայն Յաղուբը, ինքը և Համիդը գիտեն այդ մարդկանց գաղտնիքը: Բայց Համիդը երբեք հոժարակամ գաղտնիքը չի բացի: Ինքն ու Յաղուբն էլ փակի տակ են:

Իսկ Սաֆար բեյն այդ ժամանակ իր մարդկանց հետ լեռնային կածաններով գաղտագողի սողոսկում էր դեպի Չեռնովոդա... Նա բավականաչափ զորք ուներ, որպեսզի ոչնչացնել վոյեվոդայի բոլոր մարդկանց, իսկ իրեն՝ Մլադենին, կենդանի թե մեռած, քարշ տար բեզլերբեյի մոտ:

Ինչ գնով ուզում է լինել, անհրաժեշտ էր Մլադենին նախազգուշացնել վտանգի մասին, իսկ գլխավորը՝ այն մասին, որ Սաֆար բեյը ինքը նենկոն է: Չի կարելի թույլ տալ, որ պեսզի որդին սպանի հորն ու մորը: Կամ, ընդհակառակը, ինքը՝ Սաֆար բեյը զոհվի Մլադենի կամ նրա զինվորների ձեռքով:

Բայց ինչպե՞ս նախազգուշացնել: Ինչպե՞ս դուրս պրծնել այստեղից:

Երկար շմտածեց Զվենիգորան: Ելքը մեկն է միայն՝ դուռը: Ուրիշ ելք չկա: Իսկ դուռը փակ է, բանալին էլ ասկյարի մոտ է: Հետևաբար... առանց կեռիկի ոչ մի կերպ զլուխ չես հանի: Ինքը՝ Արսենը, դեռ շատ թույլ էր, բայց դե կեռիկն էլ առաջվա պես պինդ չէր: Արսենը կրկին կառչեց նրանից, սկսեց ծոմոնել մի կողմից մյուսը՝ առաջ-ետ... առաջ-ետ... Ահա կեռիկը ավելի փափկեց և վերջապես հիմքից կոտրվեց: Սուր ծայրը քարերի արանքը մտցնելով՝ Զվենիգորան ուղղեց և, տարատի գրպանը պատռելով, դրանով փաթաթեց կոտրված ծայրը, որպեսզի հարմար լինի բռնելու համար: Սիրտը զարկեց ուրախ... Փա՛ռք աստծու: Հիմա զենք ունի: Իսկական, նույնքան վտանգավոր, որքան դաշույնը կամ նիզակը: Հիմա իր բախտը սեփական ձեռքերում է:

Փոքր-ինչ հանդստանալով և նորից մի քիչ էլ կերավ, որ ուժերը ամրապնդի՝ Զվենիգորան բարձր ձայնով ախուլախ արեց, տնքտնքաց: Լսվեց ասկյարի ձայնը.

— Քեզ ի՞նչ եղավ, գյավուր:

— Օ՛յ, մեռնում եմ... էստեղ: Շուտ...

Դուռը շրխկոցով բացվեց, շեմքին հայտնվեց ասկյարը՝ լապտերը ձեռքին: Նույն ակնթարթին Զվենիգորան գուրս եկավ խավարից և, ինչքան ուժ ուներ, կեռիկով հարվածեց կրծքին: Սա միայն տնքաց ու ծանրությամբ թրմփաց գետնին:

Զվենիգորան արագորեն հանեց ասկյարի շորերը, ինքը հագավ, վերցրեց յաթաղանն ու սլացավ վերև:

Թաքնվելով խավարում՝ զգուշությամբ մտավ պարտեղ, որ տանում էր Սաֆար բեյի տունը: Պահակ չկար: Պարտեղում բուրում էին վարդերը, սոսափում էին ծառերի կատարները, ոտքերի տակ կամացուկ խշխշում էին մանրիկ քարերը:

Պատուհաններից մեկում մի աղոտ լույս էր մլմլում: Արսենը անցքից ներս նայեց, հուսալով, որ կտեսնի Զլատկային, կամ Յաղուբին: Բայց այնտեղ, գլուխը սեղանին դրած, մի ասկյար էր ննջում:

— Շտապ հրաման Սաֆար բեյից, — պատուհանը թրխկ-թրխկացրեց Զվենիգորան:

Ոչ մի վտանգ չկասկածելով՝ ասկյարը հայտնվեց արտասանդուղքում, քորելով մերկ կուրծքը: Ասկյարը դեռ բերանը չէր բացել, երբ գագաթին իջած հարվածը նրան գետին տապալեց: Ձեռքերն ու ոտքերը կապելով՝ Արսենը նրան քաշքաշ տարավ սենյակ ու խցկեց մահճակալի տակ. թե կապրի՝ իր բախտից:

Հարևան սենյակից խուլ ձայներ լսվեցին: Զվենիգորան նետվեց դեպի դուռը: Դուռը փակ էր:

— Զլատկա, Յաղուբ: Այստե՞ղ եք:

— Ո՞վ է: Մի՞թե դու ես, Արսեն, — հուզված հարցրեց Յաղուբը:

— Ես եմ, շուտ բացեք:

— Հեշտ է ասելը: Մենք փակի տակ ենք:

Զվենիգորան բարձրացրեց մոմը, ետ քաշեց ծանր երկաթյա նիզը: Դուռը բացվեց: Շեմքին կանգնած էին տագնապահար Յաղուբն ու Զլատկան:

— Բարեկամս, ինչպե՞ս ես ընկել այստեղ: Մենակ: Գիշերով, — դարմացավ Յաղուբը: — Որտե՞ղ է Սաֆար բեյը:

— Ավելի լավ է հարցնես՝ ո՞վ է Սաֆար բեյը:

— Ի՞նչ ես ուզում ասել:

— Սաֆար բեյը ինքը նենկոն է, հասկանո՞ւմ ես, նենկոն, վոյեվոդա Մլադենի որդին, Զլատկայի եղբայրը...

Յաղուբն ու Զլատկան շմեցին: Նրանց աչքերում սարսափ հայտնվեց: Ասես մեխվեցին գետնին: Նորությունը ցընցեց երկուսին էլ:

— Չի կարող պատահել,— վերջապես դժվարությամբ խոսեց Յաղուբը:— Որտե՞ղ է նա հիմա:

— Ո՞վ կարող է իմանալ՝ որտեղ է հիմա: Դեռ առավոտյան գնացել է Չեոնավոդա, որպեսզի գերի վերցնի կամ սպանի Մլադենին:

— Օ՛ր ալլահ...— հռաչեց Յաղուբը:— Գուցե սխալվո՞ւմ ես, Արսեն: Գուցե Սաֆար բեյը իսկի էլ վոյեվոդայի տղան չէ՞:

— Ես նրա ձեռքի վրա տեսա երեք երկար սպիներ... Հիշո՞ւմ ես:

— Ինչպես չեմ հիշում:

— Ես տեսա նրա տագնապած աչքերը, երբ իմ բերանից լսեց «նենկո» անունը: Նա ինչ-որ բան հիշում է... Ուզում էր հարցուփորձ անել, բայց Համիդը կրակեց զլխիս: Ես կորցրի դիտակցությունս: Երբ ուշքի եկա, ոչ Համիդը կար, ոչ էլ Սաֆար բեյը:

— Ուրեմն Համի՞դն էլ այստեղ է:

— Բանն էլ հենց դա է:

— Ալլահ աքբեր...— տնքաց Յաղուբը:— Դու ուզում ես, որ ես նորի՞ց հանդիպեմ էդ ստահակին: Օղակը փակվում է նույն հողում, որտեղից սկսվել է: Դա լավ նշան է: Այժմ, Համիդ, իմ ձեռքից շեռ պրծնի... Բայց ի՞նչ անենք նենկոյի ու Մլադենի հետ: Մեծ դժբախտություն կարող է պատահել:

— Մենք պետք է կանխենք նրանց հանդիպումը: Ավելի լավ է ամեն ինչ անկեղծորեն պատմենք Սաֆար բեյին, որպեսզի իմանա՝ ով է ինքը և ով է վոյեվոդա Մլադենը:

— Ինչպե՞ս անենք: Մի՞թե կարող ենք էստեղից դուրս գալ:

— Դուք ազատ եք:

— Իսկ մեր պահա՞կը:

Զվենիգորան ցույց տվեց մահճակալի տակից դուրս ցըց-ված ոտքերը:

— Նա մեզ չի կարող խանգարել: Գնացինք:

2

Այն բանից հետո, երբ Համիդը հարձակվեց ամրոցի վրա Սլիվենի ճանապարհի կողմից, Սաֆար բեյը անցավ թիկունք և, սպասելով, մինչև հայդուկները մարտի կբռնվեն, գրոհի հրաման տվեց:

Վերևից, մեկը մյուսի ետևից սկսեցին իջնել ենիչերինները: Յուրաքանչյուրի ուսին պարանասանդուղք կար՝ ամուր, խոշոր երկաթե կեռ-ճանկերով:

— Գրոհի՛, գրոհի՛, — գոռաց Սաֆար բեյը:

Կեռիկները շաշունով վեր նետվեցին: Մի մասը ցած ընկավ, բայց շատերը կառչեցին պարսպից: Վեր մազլեցեցին առաջին խիզախները. քամուց փքվեցին, ծածանվեցին նրանց լայն տաբատները:

Հարձակվողների առաջին ալիքի ետևից մազլեցեց նաև Սաֆար բեյը:

Վոյեվոդա Մլադենը ամրոցում չէր: Հենց որ Սլիվենի ճանապարհից լսվեց կոժի աղմուկ-աղաղակը, նա մեկուկես տասնյակ հայդուկների թողեց ամրոցում, իսկ մնացածներին առավ իր հետ ու սլացավ յուրայիններին օգնության: Ամրոցում ավագ նշանակեց ածղահա Գանչոյին՝ խիզախ, բայց ոչ այնքան խելացի ու ողջամիտ հայդուկին: Այլ պարագաներում վոյեվոդան ամրոցը նրան չէր վստահի, բայց հիմա, երբ իլադնայա լեռան կողմից հարձակում չէր սպասվում, իսկ Սլիվենի ճանապարհին թեժ մարտ էր բորբոքվել, Մլադենը գտավ, որ լիովին կարելի է հույս դնել Գանչոյի վրա:

Բայց Գանչոն բոլորին կործանեց: Վոյեվոդայի մեկնելուց հետո հայդուկների մեծ մասը բարձրացավ արևմտյան պարսպի վրա, որտեղից երևում էր Սլիվենի ճանապարհը: Այստեղ եկավ և Անկան: Գանչոն հինգ հայդուկների հետ կանգնած էր հարավարևմտյան պարսպի վրա, հենց իլադնայա լեռան դիմաց: Բայց երբ սլիվենյան ճանապարհի կողմից աղաղակներ ու կրակոցներ լսվեցին, Գանչոն շղիմա-

ցավ և անցավ արևմտյան պարիսպ։ Եվ նրա ընկերները, որ շատ էլ չէին ենթարկվում Գանչոյին որպես ավագի, մեկը մյուսի ետևից նույնպես տեղափոխվեցին արևմտյան պարիսպ։

Թիկունքում ենիչերիների հայտնվելը բոլորին շմեցրեց։ Լսվեցին տազնապալից բացականչություններ. «Մեզ շրջապատել են։ Մենք կորած ենք...»։

Այնժամ Գանչոն հասկացավ, թե ինչպիսի սխալ է թույլ տվել։ Բայց սխալը կարելի էր ուղղել միայն սեփական կյանքի գնով։ Համենայն դեպս, մտքով էլ չէր անցնում զղյակը հանձնել և կենդանի երևալ վոյեվոդայի աչքին։ Հարկավոր էր փրկել այն ամենը, ինչը դեռ հնարավոր էր փրկել։

— Դրագոմիր, — դիմեց նա ծեր թնդանոթածիգին, — վոյեվոդային ազդանշան տուր, որ մենք վտանգի մեջ ենք, իսկ դուք, Սվետոզար և Պավելչո, պանի Անկային փրկեք։ Նրան դուրս բերեք ամրոցից։ Մյուսներն իմ ետևից։ Դուրս շարտենք ենիչերիներին կամ մեռնենք, դրուգարներ։

Նա առաջինը նետվեց թշնամիներին դեմհանդիման, որոնք արդեն հայտնվել էին բակում՝ վոյեվոդայի տան ետևից։ Միաժամանակ որոտաց թնդանոթը. դա Դրագոմիրն էր վոյեվոդային լուր տալիս ամրոցի վրա կախված սպառնալիքի մասին։ Տեսնելով, որ չի հաջողվի ենիչերիներին ետ շարտել, Գանչոն վճռեց նրանց կանգնեցնել տների արանքում, որոնք բակը երկու մասի էին բաժանում։

— Սայլերը շուռ տվեք։ Ինչ կա-չկա բոլորը քարշ տվեք էստեղ, անցուղին փակեք, — բղավեց նա՝ սրի մի հարված հասցնելով ենիչերիին, որը մյուսներից առաջ էր անցել։

— Դիմանանք, մինչև վոյեվոդան կգա։

Վայրկենապես անցուղին փակվեց։ Բացի մեծ սայլերից, որոնցով հայդուկները փայտ էին տեղափոխում, այստեղ թռան նստարաններ, տակառներ, գերաններ... Գանչոն մագըլցեց վերև, ընկերներին ոգևորելով, ճարպկորեն սկսեց բանեցնել ըողդուգանը։

Մարտը բորբոքվեց։ Հայդուկները մոլեգնորեն ետ էին մղում գրոհը։ Ընկան առաջին ենիչերիները։ Հարձակվողները մի պահ կարկամեցին... Ոչ մեկը չէր ուզում առաջ խրցելվել, որտեղ, սարսափ տարածելով, շաշում էր Գանչոյի

բողոքուգանքը: Սաֆար բեյը կրակեց, բայց Գանչոն կախարգ-վածի նման մնաց անվնաս: Միայն ժպտաց շարագույժ ու բողոքուգանքով շրխկացրեց առեղին: Առեղը ջարդվեց, և կտորները սուլոցով դեսուդեն թռան սարսափահար եղած ենիչերիների գլխավերևում:

— Զարկե՛ք կեղտոտ շներին,— թնդաց Գանչոն:— Հանուն Բուլղարիայի, հանուն Բուլղարիայի...

Թիկունքից նրան մոտեցավ Պավելչոն, քաշեց տաբատից.

— Գանչո, պանի Անկան հրաժարվում է ամբողջից հեռանալ: Ի՞նչ անենք:

Գանչոն ետ նայեց ու քարացավ: Բակի միջով իրենց կողմն էր գալիս վոյեվոդայի կինը՝ սևահանդերձ, բարձրահասակ, վայելչակազմ ու դաժան, սուրը ձեռքին: Նրա ետևից, ինչ-որ բան համոզելով, աճապարում էր Սվետոզարը՝ ջահել, շիկահեր հայդուկը: Երևում է, համոզում էր, աղաչում էր ետ դառնալ, բայց վոյեվոդայի կինը կարծես չէր լսում նրա խոսքերը:

Գանչոն ցած թռավ սայլի վրայից:

— Պանի Անկա: Մեր մայր: Կանգնիր:— Նա ձեռքերը տարածեց:— էլ չեմ թողն՝ առաջ գնաս: էլ չեմ թողնի առաջ գնաս: Էնտեղ մահ է: Ի՞նչ կասի վոյեվոդան...

— Մենք ամբողջը չպետք է հանձնենք, Գանչո: Ես կմնամ այստեղ: Ենիչերիները միայն իմ դիակի վրայով կանցնեն Մլադենի թիկունքը:

Որքան էլ կարճամիտ էր Գանչոն, այնուամենայնիվ հասկացավ, որ այժմ ոչ մի հորդոր չի օգնի: Անկան իր խոսքից ետ չի կանգնի: Ինչ արած, թող մնա: Գանչոն փսփսաց Սվետոզարի ականջին, որ նա ոչ մի քայլ ետ չմնա Անկայից, իսկ բարձրաձայն ասաց, որպես երգում.

— Պանի մայրիկ, մենք ոչ մի քայլ չենք նահանջի, հավատա: Միայն շատ եմ խնդրում, աղաչում եմ, մեզ մի՛ մոտենա: Թաքնվիր տանը կամ դարպասի տակ: Դե՛...

— Դու քաջ ես, Գանչո: Բայց ավելորդ խոսքեր հարկավոր չեն... Տես, ենիչերիները առաջ են խցկվում: Քո տեղը այնտեղ է:

Գանչոն շրջվեց: Մարտը ավելի էր թեժացել: Այսուայն-տեղ ենիչերիները արդեն բարձրացել էին պատնեշի վրա,

շողշողում էին արնաթաթախ սրերը: Ճիշ ու վայնասունով ընկնում էին վիրավորներն ու սպանվածները: Հայդուկները հազիվ էին կասեցնում թշնամու կատաղի գրոհը:

Լսվեց Սաֆար բեյի ձայնը.

— Առաջ, ուղղափառներ, ջարդեք գյավուրներին: Ոչ մեկին չլսնայեք: Մենակ էդ էգ վագրին կենդանի բռնեք...

Գանչոն կատաղած հովաղի պես նետովեց կռվի ամենաթունդ տեղը: Բողոզուգանով, ինչպես մուրճով, ճեղքեց մի հաստափոր ենիշերիի գլուխը, սայլից ցած դցեց մեկ ուրիշին և հանկարծ տեսավ շքեղ հագնված աղային՝ Սաֆար բեյին: Այ թե ում կուզենար հասնել:

Բայց նրա ու Սաֆար բեյի միջև երկու շարք ենիշերիներ կային: Մի՞թե հնարավոր է ճեղքել անցնել: Մի բան էր մնում, հրածեշտ տալ բողոզուգանին, որը հավատարմորեն ու ճշմարտությամբ ծառայել էր իրեն շատ տարիներ: Գանչոն դաստակից պոկեց կաշվե օղակը, գլխավերևում պատեց բողոզուգանը ու շպրտեց... Սաֆար բեյը տեղնուտեղը հրածեշտ կտար կյանքին, եթե նրա ու Գանչոյի արանքում չհայտնվեր մի ենիշերի: Թշվառականը ինքն ընկավ սուր նրիթակներով՝ ծանր, երկաթյա մականի վրա և փլվեց ջախջախված գլխով... Վախեցած Սաֆար բեյը նողկանքով սրբեց դեմքը, որ ցողվել էր իր փրկարարի արյունով: Նրա ոտքերի տակ ջղաձրգվում էր մեռնողը: Կողքին ընկած էր հայդուկի բոյդուգանը.

— Մեծ է ավահը,— մրմնջաց աղան անկենդան շուրթերով:

Աղային մոտ վազեց Կազամլիկ ասկյարը: Արագորեն կապարճից դուրս քաշեց նետը.

— Հիմա ես էդ փսլնքոտ գյավուրի օրը խավարեցնեմ...

Գանչոն ցնցվեց ամբողջ մարմնով, օրորվեց: Նրա դեմ-դիմաց հայտնվեց Կազամլիկը՝ ամենալավագույն նետաձիգը, որ անվրեպ աչք ուներ և ուժեղ ձեռք: Նրա արձակած նետը ծակեց հայդուկի կուրծքը, հենց սրտի տակ, ինչպես ասեղը կտավե շապիկը կծակեր: Գանչոն երկու ձեռքով բռնեց լուրավիկ նետը, զարմանքով նայեց պոչի նուրբ, սև փեռուրներին, ասես հարցնում էր. «Մի՞թե սա է իմ մահը», բայց

¹ Երիթակ — բութակ, սեպ:

այլևս վերքի միջից դուրս քաշելու ուժ չունենր: Աչքերը սառեցին, հզոր ոտքերը, որ հայդուկին յան էին ածել գրեթե ամբողջ անծայրածիր լեռնային Պլանինայում, ծալվեցին, և Գանչոն սայլի վրայից ցած ընկավ... Հասցրեց միայն գոչել.

— Դիմացե՛ք, ընկերներ:

Ենիշերիները ոռնացին ուրախութունից: Սաֆար բեյը թրով զարկեց մի հայդուկի ձեռքին ու թռավ սայլի վրա, որ լիքը լցված էր սպանվածներով ու վիրավորներով:

Հայդուկներն ընկնում էին մեկը մյուսի ետևից, բայց չէին նահանջում: Ահա մնացին ընդամենը հինգ հոգի: Ամեն մեկի վրա հարձակվում էին երկուական, երեքական թշնամի: Մնացած ենիշերիները սկսեցին քանդել, մի կողմ տանել կուտակված իրերը, որպեսզի անցնեն հայդուկների թիկունքը: Դղըրդոցով ցած ընկան գերանները, որ դիզված էին սայլերի ու տան միջև:

Ենիշերիները ճիչ ու վայնասունով նետվեցին դեպի Անկան: Վոյեվոդայի կինը բարձրացրեց սուրը և գնաց նրանց ընդառաջ:

— Դա ժիվեյա Բուլգարիա: Կեցցե Բուլղարիան,— գոչեց նա բարձր ձայնով: Չնայած իր քառասունհինգ տարիներին և հայդուկության ծանր բեռին՝ նա վայելչակազմ էր, ձիգ կեցվածքով, դեղեցիկ. «Մեր մայրը»,— այդպես էին կանչում նրան հայդուկները, այդ խոսքի մեջ դնելով իրենց ողջ քրնբուշ ու դաժան սերը:

Ենիշերիները նայեցին միմյանց: Ինչ իմանաս, գուցե հիշեցին Սաֆար բեյի հրամանը՝ այդ կնոջը կենդանի բռնելու մասին: Իսկ Անկան համարձակ գնում էր նրանց ընդառաջ, հպարտ, գլուխը բարձր:

Նրա ճանապարհը փակեց Սվետոզարը:

— Դրուզարի, ինձ մոտ,— գոչեց նա հուսահատ, հասկանալով, որ ինքը մենակ չի կարող դիմանալ:— Օգնեցե՛ք...

Նորից որոտաց թնդանոթը: Այս անգամ Դրագոմիրը նրա փողարերանը շուռ տվեց դեպի բակ, և քարե գունդը սուլոցով մխրճվեց ենիշերիների ամենախիտ տեղը: Թողնելով այժմ արդեն անպետք թնդանոթը՝ ծերունի թնդանոթաձիգը պարբայի վրայից ցած թռավ և, գլխավերևում թափահարելով բողբուղանը, նետվեց ընկերոջը օգնության:

— Դիմացի՛ր, Սվետոզար, գալի՛ս եմ:

Նա ժամանակին հասավ. ջահել հայդուկի գլխավերևում շողշողում էին ենիչերփնեթի սրերը: Դրագոմիրը մեկին տապալեց գետին, երկրորդը սկսեց նահանջել: Օգնությունից սիրտ առած՝ Սվետոզարը նետվեց նրա վրա և սրի դիպուկ հարվածով գետին տապալեց:

Բայց ուժերը չափից դուրս անհավասար էին: Ընկան ամրոցի վերջին պաշտպանները: Միայն Պավելչոն, արնաշաղախ, կտրված ձեռքով, մի կերպ դեռ ետ էր մղում հարձակումը:

— Օղապարանով բռնեք դրանց: Կենդանի վերցրեք,— հրամայեց Սաֆար բեյը:

Պավելչոյին գլորեցին գետին, բռնեցին: Անկայի, Սվետոզարի և Դրագոմիրի գլխավերևում շաշում էին բարակ, երկար օղապարանները, որոնց օղակներին ճարպ էին քսել, որպեսզի պինդ ձգեին: Անկային հաջողվեց կտրատել մեկը, բայց մյուսը փաթաթվեց նրա մարմնին, և կինը գետին տապալվեց:

Սվետոզարն ու Դրագոմիրը մուեգնորեն պաշտպանվում էին: Կանգնել էին մեջք-մեջքի տված և սրերով կտրատում էին պարանները, Տեսնելով, որ Անկային անկարելի է օգնել, նրանք կամաց-կամաց նահանջեցին դեպի դարպասը: Ենիչերփնեթի բազմությունը կրնկակոխ հետապնդեց նրանց:

Հանկարծ պարսպի մյուս կողմից բացականջություններ ու ոտքերի դոփշուն լսվեց... Օգնություն: Հայդուկները կրկնապատկեցին ուժերը: Սվետոզարը, որ կանգնած էր դեմքով դեպի դարպասը, թափով առաջ մղվեց, ճեղքեց թշնամու օղակը, նետվեց կամարի տակ և սրի երախակալով սողնակը դուրս գցեց: Բազմաթիվ մարմինների ճնշման տակ դարպասը լայն բացվեց: Ամրոց ներխուժեցին մոտ երկու տասնյակ հայդուկներ՝ վոյեվոդայի գլխավորությամբ:

Այն, ինչ տեսան նրանք ամրոցի բակում, կայծակի պես շանթահարեց բոլորին. շորս կողմը միայն ենիչերփնեթ էին: Լսվում էր բազմաձայն «ալլահը»: Առաջին պահ վոյեվոդան նույնիսկ շփոթվեց, սփրթնեց: Ամրոցը պաշտպանել գրեթե անհնարին էր: Իսկ ո՞ր է Անկան: Ի՞նչ է պատահել նրան:

Եվ, ասես պատասխանելով նրա մտքերին, Սվետոզարը ձայնեց.

— Նա այնտեղ է: Ողջ է: Բռնել են նրան:

Նույն պահին էլ Սվետոզարը երերաց. նետը խրվեց նրա ուսը: Յունակը նետը դուրս քաշեց ու մի կողմ շարտեց:

— Ուշինչ, սա կանցնի... — շշնջաց նա: — Անկային փրկեք:

Այս խոսքերը վոյեվոդային դուրս բերեցին ընդարմացումից: Նա հայացքով ընդգրկեց մարտի դաշտը. թշնամին, թարմ ուժերի հայտնվելուց զարմացած, վերադասավորեց շարքերը: Վոյեվոդան, աջ ձեռքում սուրը, ձախում՝ ատրճանակը, նետվեց առաջ: Նրա ետևից սլացան հայդուկները:

Մարտը բորբոքվեց նոր ուժով: Թեև հայդուկները բավական քիչ էին, բայց նեղ բակում ծավալվելու տեղ չկար, և նրանք համարյա երես առ երես կռվում էին թշնամու դեմ: Միայն թե ընկած ենիշերիի տեղը իսկույն կանգնում էր մյուսը: Իսկ սպանված կամ վիրավորված հայդուկին, — թեթև վիրավորները շարունակում էին մարտնչել, — այլևս ոչ ոք չէր փոխարինում: Ապստամբները կրկնապատկեցին, եռապատկեցին ճիգերը, որպեսզի փոխարինեն ընկածներին:

Մի ենիշերիի հետ մարտնչելիս վայեվոդան հանկարծ տեսավ կնոջը: Իրենց տան մուտքի մոտ երկու ասկյար ոլորել էին ձեռքերը, փսկ երրորդը կապկպում էր պարանով: Շորերը պատառոտված էին: Սև, փարթամ արծաթափայլ մազերը թափվել էին ուսերին:

— Անկո-ո՛...

Կինը ցնցվեց: Մի հուսահատ ճիչ դուրս թռավ նրա կրծքից.

— Մլադե՛ն:

Անկայի բերանը փակեցին, քարշ տվին տան ետևը:

Վոյեվոդան ատրճանակը դատարկեց մոտ կանգնած ենիշերիի կրծքին, թեև գնդակը պահել էր ծայրահեղ դեպքի համար, և, ցատկելով դիակների վրայով, սլացավ նրանց ետևից: Դա անխոհեմություն էր, քանի որ նրան կարողացավ հետևել միայն Սվետոզարը: Մնացած հայդուկների ճանապարհը փակեցին ենիշերիները, որոնք հասցրել էին խտացնել խախտված, ծվատված շարքերը:

Սաֆար բեյը, լսելով Անկայի ճիշը, հասկացավ, որ այստեղ է վոյեվոդան: Չարախինդ ժպիտը ծոմոնց նրա գեղեցիկ շուրթերը:

— Ա-ա՛, բռնվեցիր, լեռնային արծիվ,— ատելությամբ շշնջաց ինքն իրեն:— էլ ձեռքիցս չես պրծնի:— Նա ցած թռավ գերանի վրայից, որտեղ կանգնած ղեկավարում էր մարտը: Զիւ գոչուհով իր մոտ կանչեց մի տասնյակ ենիչերի:— Տեսնո՞ւմ եք այ չն հայդուկին: Սև ժուպանով: Դա հենց ինքը վոյեվոդա Մլադենն է... Անցեք նրա թիկունքը:

Սաֆար բեյը փակեց վոյեվոդայի ճանապարհը և սուրը խաշաձևեց նրա հետ: Մետաղը դարկվեց մետաղին: Վոյեվոդայի շուրթերն ամուր սեղմված էին, գունատ դեմքը ծածկված էր քրտինքով: Սաֆար բեյը, հավասարաշար ատամները բացած, ժպտում էր շարագույժ: Նա տեսավ, ինչպես ենիչերիները թիկունքից շրջապատեցին վոյեվոդային ու վիրավոր հայդուկին, ուստի շտապեց հարձակվել, այլ կամաց-կամաց նահանջեց, վոյեվոդային հրապուրեց տարավ բակի խորքը:

Վոյեվոդան գլխի ընկավ, որ իր դիմացինը հասարակ ենիչերի չէ, և ասաց.

— Աղոթիր, աղա, հիմա դու կգնաս քո ալլահի մոտ:

— Եթե ուղում ես իմանալ, իմ անունը Սաֆար բեյ է, հայդուկ շոն, — հեզնորեն քմծիծաղելով և խուլս աւալով վոյեվոդայի հարվածից, շարությամբ նետեց Սաֆար բեյը:

— Ա-ա՛, Սաֆար բեյ: Բուլղար կանանց ու երեխաների դահիճը: է՛, ինչ արած, առավել ևս մեծ է ցանկությունս բեզ այն աշխարհն ուղարկելու:

Վոյեվոդան իսկույն ասես ուժ առավ: Նրա հարվածները դարձան ավելի ուժգին ու ճարպիկ: Սաֆար բեյը դադարեց ժպտալ՝ հաղիվ դիմանալով հակառակորդի սրընթաց հարձակումներին: Բալկանի շեյթան: Դժվար կլինի նրան կենդանի բռնել: Բայց ափսո՛ս: Ինչպե՛ս կմեծանար Սաֆար բեյի փառքը, եթե կապանքներ դներ այդ գլավուրին և ամբողջ Բուլղարիայի միջով շղթայակապ տաներ մինչև մայրաքաղաք...:

Բայց վոյեվոդային սպանելն էր հեշտ չէր: Նրա գիպուկ ու արագ հարվածներից Սաֆար բեյի շորերը պատառոտվել,

ծվեն-ծվեն էին եղել, իսկ ձախ ձեռքից արյուն էր կաթկթում: Թիկունքից վոյեվոդային պաշտպանում էր Սվետոզարը:

Այդ ընթացքում մարտի աղմուկը հանդարտվեց: Մեկը մյուսի ետևից բնական բուրբ հայգուկները: Ենիշերիները սըրբեցին արյունաթաթախ զենքերը, կապեցին վերքերը և... հետաքրքրությամբ սկսեցին դիտել իրենց պարագլխի ու հայդուկ վոյեվոդայի գոտեմարտը:

Սաֆար բեյը շուրթերը կծեց: Դրան արդեն բնավ չէր սպասում: Փոխանակ անմիջապես բռնեին գյավուրների առաջնորդին, այդ վախկոտ շախկալները, այդ գարշելի շները որոշեցին զվարճանալ արտասովոր տեսարանով: Նա ավելի ու ավելի նահանջեց դեպի արյունով ողողված ու դիակներով ծածկված պարտեզը: Հետո հանկարծակի թափով հարձակում գործեց: Վոյեվոդան հարկադրված եղավ ընկրկել և դեմ առավ Սվետոզարի մեջքին: Զահել հայդուկի դեմ նույնպես միայն մի ենիշերի էր կռվում:

— Սվետոզար, լսիր ինձ ուշադիր, — գլուխը կողքի թեքելով՝ կամացուկ շնչաց Մլադենը: — Հիմա մենք կնահանջենք դեպի դարպասը... Դու մեր մեջ ամենալավ վազորդն ես: Փորձիր հասնել մերոնց մոտ... Հաղորդիր իմ հրամանը: Բոլորը թող դուրս գան մարտից ու ցրվեն լեռներում ու անտառներում: Հարկավոր է փրկել մարդկանց:

— Լավ, — շնչաց Սվետոզարը և հակառակորդին ստիպեց նահանջել:

Կռվելով, որին ուղեկցում էր ենիշերիների ամբոխը, նրանք հասան դարպասի կամարին, և Սվետոզարը, ուժգին հարվածով հակառակորդի ձեռքից սուրը ցած գցելով, դարպասից դուրս ծլկեց: Սկզբում ենիշերիները գլխի շրնկան, որ հայդուկը փախչում է, որովհետև ոչ ոք չհետապնդեց նրան: Իսկ երբ ուշքի եկան, արդեն ուշ էր: Մի քանի աղեղնավորներ նետեր արձակեցին, սակայն Սվետոզարը զառիթափից թռավ թիերի մեջ ու անհետացավ:

Սրտապնդված ջահել զինվորի հաջողությունից՝ վոյեվոդան վճռականորեն անցավ հարձակման: Գիտեր, որ մահվան է դատապարտված, և միայն Սաֆար բեյի մահն էր տենչում: Սաֆար բեյը նույնպես կռվում էր դատապարտյալի նման: Հպարտությունը թույլ չտվեց նրան օգնություն խնդրել իր

ենթականերից: Արտաքինից աննշան թվացող վերքից արյուն էր ծորում և անտանելի ցավում էր: Մեռելային գունատությունը վկայում էր, որ նա անսպասելիորեն լարել էր իր բուլոր ուժերը:

Սաֆար բեյն հասկանում էր, որ բավական է սայթաքի, և վերջ: Նա այլևս ուժ չունեիր խուսափելու անիծյալ գյավուրի սրի հարվածներից:

Իր աղայի այդ վիճակը նկատեց խորամանկ ու ամենահաս Կազամլիկը: Գոռալով՝ «Գյավուրը կսպանի նրան», ենիչերին գլխավերևում պտտեց օղապարանը, գցեց վոյեվոդայի պարանոցը և թափով քաշեց դեպի իրեն:

Վոյեվոդան ընկավ: Կազամլիկը թռավ և ոտքը դրեց վոյեվոդայի սրի վրա, որպեսզի նա չհասցնի կտրատել պարանը:

Սաֆար բեյը, ատելությունից և կրած սարսափներից կուրացած, սուրը բարձրացրած առաջ նետվեց, որպեսզի սպանի գետին տապաված թշնամուն:

Սակայն աղմուկ-աղաղակի, վիրավորների հառաչանքների ու ենիչերիների կանչվռտուքի միջից անսպասելիորեն նրա լսողությանը հասավ մի կարճ բառ.

— Նե՛նկո:

3

Սաֆար բեյը քար կտրեց և զարմացած շուրջը նայեց: Ենիչերիները, մտածելով, որ գոտևարտն ավարտված է, թափվեցին վոյեվոդայի վրա և սկսեցին կապկպել նրա ձևերը: Կազամլիկը մոտեցավ Սաֆար բեյին և միսմիտ տեսքով, որ լավ չէր սքողում նրա խորամանկութունը, ասաց.

— Ներող եղիր, աղա, որ խառնվեցի ձեր կովին: Ինձ թվաց, թե ուր որ է վերջ կտաս վոյեվոդային: Իսկ ես հիշեցի քո հրամանը՝ կենդանի բռնել նրան...

— Լավ, Կազամլիկ: Շնորհակալ եմ,— պատասխանեց Սաֆար բեյը և շրջվեց՝ բոլորովին ուրիշ մտքերով տարված:

Ո՞վ կանգնեցրեց իրեն: Ո՞վ արտասանեց այդ խորհրդավոր, այդ հանելուկային «Նենկո» բառը, որ հետապնդում է իրեն ողջ կյանքում: Նա շուրջը նայեց:

Գարպասից աճապարում էր մի ենիշերի: Նրա դեմքն ու քայլվածքը շատ ծանոթ թվացին Սաֆար բեյին: Վա՛հ: Ախր սա լեհ վաճառականն է... Այսինքն՝ կազակը... Ոչ, գերին... թո՛ւ... Ի դեպ միայն ալլահը գիտե՛ ով է նա իրականում: Գուցե ինքը սատանա՞ն է, մարդու կերպարանքով:

— Դո՞ւ ես,— նրան ընդառաջ նետվեց Սաֆար բեյը, դեռևս չհավատալով իր աչքերին:— Այստե՞ղ:

— Ես եմ, փառք աստծո, հասցրեցի,— ասաց Զվենիգորան՝ դեմքից սրբելով քրտինքը:

— Ի՞նչ է նշանակում այս ամենը: Ինչպե՞ս հայտնվեցիր այստեղ:

— Այդ մասին հետո: Ես տեսա, որ դու գերի վերցրիր վոյեվոդա Մլադենին: Ի սեր բոլոր սրբերի, ի սեր հենց քեզ, պահպանիր նրա կյանքը, մի՛ թույլ տա ծաղրուծանակի ենթարկեն նրան, քանի դեռ քեզ հետ շեմ խոսել...— Եվ ավելացրեց կամացուկ.— Առանձին:

Սաֆար բեյը մի տեսակ խորհրդավոր նայեց կազակին և կարգադրեց՝ վոյեվոդային ու նրա կնոջը տանել տուն և խիստ հսկողություն սահմանել:

Զգիտես արյան կորստից, թե երեկվա գերու հետ անսպասելի հանդիպումից, որին հայտնի է իր անցյալի գաղտնիքը, նա է՛լ ավելի էր գունատվել և արտակարգ հուզված էր երևում: Նրա սև աչքերը խամրել էին, դարձել պղտոր, մշուշված, կարծես ցավով ու դառնությունամբ էին լցվել:

Բայց ենիշերիներից ոչ մեկը չնկատեց նրա դեմքի փոփոխությունը:

Հրամայելով օգնության գնալ Համիդի ջոկատին և ամրոցի բակից դիակները հավաքել՝ Սաֆար բեյը մոտ կանչեց Կազամլիկին և, գլխով Զվենիգորային ցույց տալով, կամացուկ ասաց.

— Տեսնո՞ւմ ես էն ենիշերիին:

— Տեսնում եմ, աղա:

— Աչքդ վրան պահիր:

— Լսում եմ, աղա:

Սաֆար բեյը մոտեցավ Զվենիգորային, և միասին ուղղվեցին դեպի տուն: Կազամլիկը գնաց նրանց ետևից՝ հետևելով անծանոթի յուրաքանչյուր շարժումին:

Մուսյէ հայացքով Սաֆար բեյը անցավ դահլիճի միջով, որը դատարկ էր ու անհրապույր: Գլխավերևում գորշ քարե կամար. անհավասար քարե սալիկներով ծածկված հատակ, նեղ հրակնատ-պատուհաններ: Պատերի երկարությամբ՝ ծանր փայտե նստարաններ: Դահլիճի կենտրոնում նույնպիսի կոպիտ, ժամանակից սևացած եղևնափայտ սեղան: Դիմացից և աջից՝ կողքի սենյակները տանող դռներ:

Աղոտ հիշողություններ դուրս լողացին աղայի գլխում: Ուրախությունը, — վերջապես գրավել էին հայդուկների բույները, որը այնքան տարիներ հանգիստ չէր տալիս թուրքերին, — իր տեղը զիջեց խուլ տազնապին: Ինքը ե՞րբ է եղել այս տանը: Ինչո՞ւ իրեն թվում է, թե արդեն տեսել է այս գորշ սալիկները և պատերի երկարությամբ շարված այս լայն նրստարանները... Յնո՞րբ է սա, թե երազ: Չէ, երազ չէ, այնուամենայնիվ ինքը եղել է այստեղ: Միայն թե չի հիշում՝ ե՞րբ:

Սաֆար բեյը, շփոթված, ձեռքը տարավ ճակատին... Զվենիգորան ուշադիր հետևում էր նրան: Մի՞թե, այնուամենայնիվ, նրա գիտակցության մեջ արթնացան մանկության հեռավոր հուշերը:

Իսկ Սաֆար բեյը իսկապես որ լարել էր հիշողությունը: Նա կարծես հիշում էր, որ իր դիմացի դռան ետևում պետք է լինի մի սենյակ՝ բարձր պատուհանով: Այնտեղ պատերից կախված էին գազանների մորթիներ ու զենքեր: Իսկ այդ սենյակից էլ մի դուռ տանում էր մյուս փոքր սենյակը...

— Օ՛ ալլահ, մի՞թե ես մեղանչել եմ քո առաջ, որ ուզում ես խավարեցնել իմ միտքը, — մրմնջաց Սաֆար բեյը՝ բացելով մուգ կաղնի դուռը:

Ճիշտ որ սենյակը մի բարձր պատուհան ուներ: Պատերից կախված էին արջի, վայրի ու լիսարի ու բծավոր հովազի մորթիներ: Աջ կողմում մի դուռ էր բացվում դեպի հարևան սենյակը: Սաֆար բեյն այնտեղ էլ մտավ: Անմիջապես դռան ետևում մի լայն փայտե մահճակալ կար՝ ծաղկավոր բրդյա վերմակով ծածկված, մահճակալի սնարին՝ եղնիկի եղջյուր...

Սաֆար բեյը շփոթված նայեց Զվենիգորային, որ կրնկա-

կոխ հետևում էր իրեն և, տեսնելով շեմքին կանգնած Կալ-
զամլիկին, խոթոռվեց.

— Կորի աչքիցս: Դու էստեղ անելիք շունես...

Ջարմացած ու նեղացած Կազամլիկը ուսերը վեր քաշեց
ու իր ետևից ծածկեց դուռը:

— Ինչո՞ւ ինձ նենկո անվանեցիր,— առանց որևէ նախա-
բանի, ասես շարունակելով գետնատանն ընդհատված խո-
սակցությունը, հարցրեց Սաֆար բեյը:

— Այդ մասին կիմանաս մի քանի բոպե հետո, Սաֆար
բեյ, եթե թույլ տաս ... վոյեվոդայի ու նրա կնոջ ներկայու-
թյամբ..

— Այդ դեպքում գնանք նրանց մոտ,— համաձայնեց
աղան:

Նրանք վերադարձան դահլիճ: Կազամլիկը, նոթերը կի-
տած, կանգնել էր սեղանի մոտ, փայլեցնելով խոշոր, լայն
ու կլոր աչքերը: Դռան մոտ կանգնած պահակները ձգվեցին:
Սաֆար բեյը լուռ անցավ նրանց կողքով, սակայն ասես նա-
խազգալով, որ հիմա կարող է այնպիսի բան տեղի ունենալ,
երբ անցանկալի են ավելորդ վկաները, ենիչերիներին հրամա-
յեց դուրս գնալ:

Դռանից հետո միայն թափով բացեց դուռը: Դա բավա-
կանին մեծ սենյակ էր, երևի ննջարան: Վոյեվոդան ու Ան-
կան, կապկպված, նստած էին մահճակալին: Անկան, աչքե-
րը փակ, գլուխը դրել էր ամուսնուս ուսին: Տեսնելով Սաֆար
բեյին ու ենիչերիին՝ նրանք ուղղվեցին, բայց իրենց դիրքը
չփոխեցին: Նրանց հայացքները, լի ատելությամբ ու արհա-
մարհանքով, խոսում էին այն մասին, որ ոչ տանջանքները,
ոչ մահը չեն վախեցնում իրենց:

Զվենիգորան դուռը պինդ փակեց և կանգնեց մռայլ ու
անիոս, ասես լեզուն կուլ տված Սաֆար բեյի կողքին:

Մլաղենը մի ոչնչացնող հայացք գցեց նրանց վրա ու ոտ-
քի ելավ: Նրա աչքերում նախ զարմանք նշմարվեց, ապա՝
տազնապ ու կատաղություն:

— Զվենիգորա՞: Դո՞ւ... Սաֆար բեյի հե՞տ... Դավա-
ճա՞ն...— խոխոացրեց վոյեվոդան:— Հիմա պարզ է, ով է
օդնել շուն Սաֆար բեյին՝ թափանցելու ամբոցն ու գրավել:
Օ՞ աստված, ինչո՞ւ ինձ զրկեցիր բանականությունից, ինչո՞ւ

չօգնեցիր, որ հանձին այս մարդու ճանաչելի օձին: Ես կպոկեի անարգ դավաճանի թունավոր խայթը՝ գլխի հետ միասին...

— Դուք իրավացի չեք, վոյեվոդա,— մրմնջաց Զվենիգորան՝ հանելով յաթաղանը և կտրատելով գերիների ձեռքերի կապերը:— Ես դավաճան չեմ և ենիշերիներին չեմ օգնել... Միայն թե մի քիչ ուշացած կատարեցի ձեր պատվիրանը... Աղա, ցույց տուր նրան աչ ձեռքդ,— դարձավ նա Սաֆար բեյին:— Խնդրում եմ, թեքդ բշտիր: Այն ժամանակ ամեն բան կիմանաք:

Սաֆար բեյն ավելի սփրթնեց: Անհավատալի ենթադրությունը դանակի պես հարվածեց նրա սրտին: Նա լուռ բշտեց թեքը, առաջ պարզեց ձեռքը, որի վրա պարզորոշ աչքի էին ընկնում երեք երկար, բարալիկ սպիներ:

Ե՛վ Մլադենը, և՛ Անկան, նրա սպիները տեսնելուն պես, միաձայն գոչեցին.

— Նենկո... Նենկո...

Հիմա այլևս կասկած չկար: Ծնողները հանձին Սաֆար բեյի ճանաչեցին վաղուց կորցրած իրենց որդուն: Զվենիգորան քաշվեց սենյակի խորքը: Նա արեց այն ամենը, ինչ կարող էր:

— Որդի՛ս,— Անկան վեր թռավ տեղից, ուզեց ճշալ, բայց նրա կրծքից խապոտ մի հառաչանք դուրս թռավ միայն.— Որդի՛ս... Նենկո՛... Ինչպե՞ս թե... Աստված իմ... Դու... և... Սաֆար բեյը...

Նա երերաց, սկսեց կորցնել գիտակցությունը: Սաֆար բեյը գրկեց նրան ու տարավ մահճակալի մոտ: Մլադենը փութաց նրան օգնություն: Հոր ու որդու ձեռքերը հպվեցին միմյանց... Զվենիգորան ատամները սեղմեց:

Ծանր էր նայել այդ երկու մարդկանց, որոնք կես ժամ առաջ անողոք, մահու և կենաց մարտ էին մղում միմյանց դեմ, իսկ հիմա խոնարհվել էին նրա վրա, որը կյանք էր տվել մեկին, մյուսին հավատարիմ ընկեր էր եղել իր ամբողջ կյանքում:

Զվենիգորան շէր հիշում, թե երբ էր լաց եղել: Բայց հիմա զգում էր, թե ինչպես մի գունդ դեմ է առնում կոկորդին, իսկ աչքերին պատում է թափանցիկ մշուշը: Նա շրջվեց ու քաշվեց մի անկյուն:

Սակայն Անկան վոյեվոդայի կիսն էր և զուր չէ, որ նրա հետ կիսել էր դաժան կյանքի ծանրությունը: Նա շուտով ուշքի եկավ ու ոտքի կանգնեց: Հայր ու որդի նայեցին միմյանց, միաժամանակ հայացքները խոնարհեցին ու ետ քաշվեցին մահճակալից:

— Մլադեն, նա վիրավորված է,— բացականչեց Անկան, տեսնելով, որ Սաֆար բեյի ձախ ձեռքից արյուն է հոսում:— Մի բան տուր, կապեմ:

Մլադենը սնդուկից սպիտակ, նուրբ կտավի մի փոքրիկ փաթեթ հանեց, տվեց Անկային: Ջվենիգորան Անկային մեկնեց յաթաղանը: Սա ճարակորեն կտավից մի կտոր կտրեց, Սաֆար բեյի թևքը քշտեց ու կապեց վերքը:

Երեքն էլ լուռ էին: Նրանք այնպես ցնցված էին, որ բառեր չէին գտնում: Որոշ ժամանակ էր հարկավոր, որպեսզի ուշքի գային, հասկանային, թե իսկապես ինչ է կատարվում, գոնե մի քիչ կարգի բերեին խոռոված, տակնուվրա եղած մտքերն ու զգացմունքները:

Ջվենիգորան որոշեց միանգամից բաց անել բոլոր խաղաթղթերը: Չէ՞ որ նրանք դեռ ոչինչ չգիտեին Ջլատկայի մասին: Մլադենն ու Անկան ցնցված այդ անհավատալի հանդիպումից, մոռացել էին նույնիսկ հարցնել աղջկա մասին: Իսկ Սաֆար բեյն ընդհանրապես չգիտեր, որ ինքը բույր ունի:

— Դուք պետք է իմանաք նաև այն,— առաջ եկավ Ջվենիգորան,— որ Ջլատկան էլ է գտնվել...

Մլադենն ու Անկան սթափվեցին:

— Ո՞վ երկինք, էս ի՞նչ օր էր,— բացականչեց Մլադենը:— Որտե՞ղ է նա...

— Դրագանը նրան ու Յաղուբին տարավ կմեռ Պետկովի խրճիթը: Էնտեղ նրանք ապահով կլինեն:

— Շնորհակալ եմ քեզից, բարեկամս: Ներիր, որ բռնաժամանակ մոռանալի... Ամեն ինչ այնպես իրար իստանվեց այսօր... Ի՛ վիշտ, և՛ ուրախություն... Խելագարվել կարելի է,— հուզված ասաց Մլադենը:

— Եվ մի բան էլ պիտի ասեմ Սաֆար բեյին... — Ջվենիգորան զարձա՛վ աղային, որ քիչ-քիչ ուշքի էր գալիս: — Ջլատկան՝ բռնույր, Ադրիկեն է:

Սաֆար բեյը խայթվածի նման վեր թռավ տեղից:

— Ի՞նչ-չ...

— Դա ճշմարտութիւնն է: Ադիկենք քո քույրն է... Այդ մասին շատ լավ հայտնի է Համիդին:

— Համիդի՞ն: Նա՞ էստեղ ինչ գործ ունի:

— Այդ նա ձեզ բաժանեց ծնողներից: Փոքր հասակում գողացավ ու տարավ Թուրքիա: Քեզ տեղավորեց ենիչերիական կորպուսում, իսկ Ադիկեին իր հետ տարավ Ակսու... Մի՞թե դու չես հիշում էս սենյակը, որտեղ անցել է քո մանկութունը: Նայիր շուրջդ. էստեղ ես ծնվել ու մեծացել դու Զլատկայի հետ միասին...

— Ուրեմն... Ադիկեի՞ն էլ են գողացել: Իսկ ո՞վ է հապա Յաղուբը:

— Ես ազատեցի Զլատկային... Իսկ Յաղուբը... Դա երկար պատմութիւնն է: Հիմա դրա ժամանակը չէ, և ես չէ, որ պիտի պատմեմ այդ մասին:

Սաֆար բեյը ծանրութեամբ ընկավ նստարանին, գլուխը բռնեց ու անորոշ հայացքը հառեց անկյունին:

— Պատմեք,— տնքաց նա, ոչ մեկին շնայելով և կեցվածքը չփոխելով:— Ուզում եմ ամեն բան իմանալ. ո՞վ եմ ես, ինչո՞ւ և ինչպե՞ս է էդ բոլորը տեղի ունեցել...

Վոյեվոդան նայեց կնոջը, ասես հարցնում էր, թե ով պիտի խոսի, և անվճռականորեն թոթվեց ուսերը: Նկատվում էր, որ հանդիպումը որդու հետ ավելի վրդովել ու ալեկոծել էր նրան, քան ուրախացրել: Մերունի վոյեվոդան այսպիսին չէր պատկերացնում իրենց հանդիպումը, բնավ այսպիսին չէր պատկերացնում... Եվ դեռ չէր կարողանում լիովին գիտակցել այն զարհուրելի ճշմարտութիւնը, որ Սաֆար բեյը՝ հայդուկների ոխերիմ թշնամին, իր որդին է... Գլխում չէր տեղավորվում: Բայց կասկած լինել չէր կարող: Թևի վրայի այդ ծանոթ սպիները... Բա աչքե՞րը: Դրանք իր Անկայի աչքերն էին... Իսկ բարձր, ուռուցիկ ճակատն ու կոր քիթը... իրենն են, հորը... Կասկած չկա, իր տղան է... Ամեն ինչը հարազատ է... Մի բան է օտար, սիրտը...

Վոյեվոդան ծանր շունչ քաշեց և սկսեց պատմել: Հեռվից Այն օրվանից, երբ նենկոն լույս աշխարհ եկավ...

Սաֆար բեյը չէր ընդհատում, հարցեր չէր տալիս: Նըստեի էր լուռ, գլուխը կախ: Եվ դժվար էր հասկանալ, թե ինչ

մտքեր էին ծվատում նրա հոգին: Իսկ երբ լսեց Համիդի նենգ, կրկնակի դավաճանության, վոյեվոդայի երեխաներին գողանալու մասին, ավելի կուշ եկավ, ուսերը կախ գցեց, ձեռքերով ամուր կառչեց նստարանի եզրից:

— Հիմա ինձ համար ամեն ինչ հասկանալի է... — ասաց խուլ, ցավով: — Բայց բավական է հիշողություններով տարվել: Ես լսում եմ, այստեղ են գալիս: Դրանք հավանաբար, Համիդի բանբերներն են: Ես ինչպես վարվեմ ձեզ հետ...

Աղմուկ-աղաղակ լսվեց դռան ետևում. «Որտե՞ղ է աղան, որտե՞ղ է Սաֆար բեյը»:

Զվենիգորան դուռը կրնկի վրա բացեց: Ենիշերինները խոնվել էին դահլիճում: Տեսնելով աղային՝ նրանք գլուխ տվեցին, ուրախ աղմկեցին.

— Փա՛ռք ալլահին, հաղթեցինք: Մեզ Համիդն է ուղարկել:

— Գերի ենք վերցրել մի քանի տասնյակ հայդուկ:

— Շատ են սպանվածները...

Սաֆար բեյը ձեռքը բարձրացրեց: Աղմուկը դադարեց:

— Իսկ ո՞ւր է ինքը՝ Համիդ աղան:

— Նա չի կարող գալ: Վիրավոր է: Նրան Սլիվեն տարան...

— Այդպե՞ս... — Սաֆար բեյը մտքի մեջ ընկավ: — Լավ: Գնացեք... Ասենք չէ, սպասեք: Էս հայդուկին, որ ենիշերիի շորերով է, տարեք, — նա մատնացույց արեց Զվենիգորային: — Բայց զգուշ, նա զինված է:

Ենիշերինները վայրկենապես շրջապատեցին կառակին, ձեռքերից բռնեցին:

— Սաֆար բեյ, ախր դա ստորություն է, — գոչեց Զվենիգորան, որը բնավ այդպիսի բան չէր սպասում:

Սաֆար բեյը չպատասխանեց:

— Դրան տարեք գերիների մոտ: Ուժեղացրեք հսկողությունը: Ես շուտով կգամ:

Արսենին տարան: Սաֆար բեյը մենակ մնաց ծնողների հետ, որոնք լուռ էին ընկճված ու վշտաբեկ:

— Դե ահա, — կամացուկ մրմնջաց Սաֆար բեյը, — մենք մենակ ենք և կարող ենք անկեղծ խոսել... Ինչպես երևում է, ես պետք է հավատամ, որ ձեր որդին եմ: Բայց պետք է հիասթափեցնեմ ձեզ. դրանից ես առանձնահատուկ ուրախու-

թյուն շեմ զգում: Իմ ամբողջ կյանքում ես փնտրել եմ հարազատներին, կամեցել եմ հանդիպել նրանց: Բայց, ըստ երևույթին, խիստ եմ զայրացրել ալլահին, որ այսպես դժանորեն ծիծաղում է ինձ վրա: Մի՞թե սա ճակատագրի շարժադրը չէ, որ ես, պարզվում է, հայդուկների վոյեվոդայի որդին եմ:

— Նենկո,— բացականչեց Մլադենը,— ուշքի արի: Հայդուկներն էլ նույնպիսի ռազմիկներ են, ինչպես և դու, միայն թե նրանք պայքարում են իրենց ժողովրդի ազատության համար, իսկ դու ճնշում, կողոպտում ես նրանց: Դա քո մեղքը չէ, անշուշտ: Քեզ բռնի թուրքացրել են, դարձրել են ենիչե-րի...

— Դրա համար շնորհակալ եմ ալլահից,— ամբարտաժանորեն ասաց Սաֆար բեյը:— Ես հպարտ եմ, որ դարձել եմ ենիչերիների աղա: Ամեն մեկին այդպիսի պատիվ չի վիճակվում:

Վոյեվոդան լռեց և վշտահար օրորեց գլուխը: Անկան, քաթանի պես գունատ, ձեռքը մեկնեց որդուն.

— Նենկո: Զավակս: Մի՞թե մենք նորից պիտի քեզ կորցնենք:

— Ավելի լավ կլիներ շատնեիք:

Այդ խոսքերը մտրակի նման խարազանեցին մորը: Անկայի ձեռքերը կախվեցին, և նա իսկույն կուչ եկավ, թուլացավ: Աչքերում արցունքներ փայլեցին:

— Դահի՛ճ...— շշուկով ասված բառը քարի նման ցած ընկավ:

Սաֆար բեյը ցնցվեց.

— Ոչ, ես դահիճ չեմ: Եվ դա կապացուցեմ նրանով, որ կփրկեմ ձեր կյանքը, շնայած դա ինձ վրա, հավանաբար, թանկ կնստի... Այստեղից ելք կա՞:

Հայրն ու մայրը լուռ մնացին:

— Պետք է որ լինի: Այսպիսի ամբոցները միշտ էլ զաղտնի ելք են ունենում:

— Մենք այստեղից դուրս կգանք միայն կազակ Զվենի-գորայի հետ,— ասաց վոյեվոդան:

— Նա ձեզ հետ չի գա,— կտրուկ պատասխանեց Սաֆար բեյը:— Նա ինձ պետք է: Բայց խոստանում եմ նրա կյանքն էլ պահպանել: Որտե՞ր է ելքը:

Վոյեվոդան մի կողմ քաշեց մահճակալը, օղակից բռնած քարծրացրեց սալաքարը: Ներքևում բացվեց սև փոսը:

Սաֆար բեյը ծուռ ժպտաց.

— Գնացեք, շուտ:

Անկան առաջինը իջավ: Հետո՝ Սլադենը: Արդեն աստիճանների վրա կանգնած, այնպես որ միայն գլուխն էր երեւում, արցունքից մշուշված հայացքով նա նայեց Սաֆար բեյին: Փոքր-ինչ բարձրացավ, գրկեց նրա ծնկները:

— Ներիր ինձ, զավակս, որ չպահպանեցի քեզ: Ինքս եմ մեղավոր, որ կորցրի քեզ, որովհետև մինչև վերջ չկուահեցի շուն Համիդի նենգ ու խարդախ մտադրությունը... Մնաս բարով:

Նա անհետացավ խավարի մեջ:

Սաֆար բեյը երկար կանգնած մնաց փոսի վերևում: Հետո լուռ կուացավ, սալաքարով ծածկեց անցքը և մահճակալը քաշեց իր տեղը: Ցավագին հառաչանքով, որ հեկեկոցի էր նման, նստեց մահճակալին ու գլուխը դրեց սնարին:

— Ո՛վ ալլահ... — տնքաց նա խեղդված ձայնով: — Ինչի՞ համար ինձ պատժեցիր այսօր: Ինչո՞ւ կոտրեցիր իմ սիրտը և այնտեղ բնակեցրիր կասկածի օձը, ցավն ու տառապանքը: Ի՞նչ մեղք եմ գործել քո առաջ, ով ամենակարող, որ զրկեցիր ինձ ամեն տեսակ ուրախությունից ու հոգեկան հանգստից: Ես զգում եմ, ինչպես է դժոխային կրակը լափում իմ սիրտը ու ներսս այրում... Ալլահ աքբեր, ես փորձում եմ ամուր ու սառնասիրտ լինել, ինչպես քարը, դրա համար էլ ինձանից վանեցի այն մարդկանց, ովքեր ուզում էին ինձ տեղ տալ իրենց սրտերում... Ներիր ինձ, ո՛վ ալլահ, այս բոլորը ես անում եմ հանուն քո փառքի ու հղորության... Ես քո ստրուկն եմ, ես՝ քո որդին: Սովորեցրու՛ ինչպե՞ս իմաստուն դառնամ, և պաշտպանիր ինձ սատանայի նենգ փորձությունից...

Նա գլուխը գարկեց փայտի մահճակալի պինդ սնարին, ձեռքերը երկինք պարզեց և ջերմեռանդ սողոթքի ու անեծքի խոսքեր շշնջաց, խոհ նրա արթնացած, վշտահար ու ալեկոծված հոգում մինչ այդ չսված, շտեմնված գգացմունքներ ու մտքեր փոթորկվեցին...

Նա հիշեց, թե ինչպես իուր մթին գիշերներին մտածում

էր այն մասին, որ ինքն էլ՝ մենակյացը, անտոհմը, ենիշե-
րին, երևի ինչ-որ տեղ հայր, մայր ունի, հայրենիք ունի, որ
գուցե թե մի օր կհանդիպի նրանց... Եվ ահա հանդիպեց,
բայց այդ հանդիպումը ուրախութիւն չբերեց, ցավ ու տա-
ռապանք պատճառեց միայն... Դե մի՞թե ինքը կարող էր
վերցնել ու հենց այնպես, միանգամից, սրտով հնազանդվել
նրանց, որոնց երկար տարիներ համարել է իր ռիսերիմ թըշ-
նամիներ:

Իսկ Համի՞դը...

Նա ցնցվեց, հիշելով այդ ճարպակալած, պարարտ աղա-
յին, որին ամբողջ կյանքում, որքան հիշում էր, համարում
էր իր ավագ ընկերը և ուսուցիչը, ընդունում էր հա-
մարչա հարազատի պես...

— Օ՛ Համիդ, — գոչեց նա կատաղությամբ: — Դու մարդ
չես: Դու սողուն ես: Շեյթան: Կաց, դեռ կխոսես քեզ հետ...
Ու-ս՛ւ...

Ադիկեի մասին միտքը սուր յաթաղանի նման ծակեց սիր-
տը: Նա հասկանում էր, որ, կորցնելով նրան որպես սիրեց-
յալի, գտավ քրոջը, բայց չգիտեր՝ դրա համար ուրախանա՞
արդյոք: Նրա բորբոքված երևակայութեան մեջ ամեն ինչ
իրար էր խառնվել: «Անդիկե... Զլատկա... Քույր... Օ ալլահ:
Շնորհակալ եմ բեղանից թեկուզ հենց նրա համար, որ թույլ
չտվեցիր ինձ կին առնել քրոջս...»:

Հիշեց, որ ծառայութիւնը էնի շերիում՝ ենիշերիական
կորպուսում, ոչ երջանկութիւն բերեց, ոչ հարստութիւն, այլ
միայն դաժան մարդասպանի տխուր փառք:

«Բայց ես ամեն ինչ արեցի արեգնափայլ խոսնդբարի իշ-
խանութեան փառքի ու հզորութեան համար, — ինքն իր առջև
արդարացաւ Սաֆար բէյը: — Հանուն մարգարիի, հանուն
Օսմանյան կայսրութեան հզորութեան... Բայց գուցե այստե՞ղ
էլ են խաբել ինձ, օ՛ ալլահ»:

Մտածում էր նաև Զվենիգորայի մասին...

Ճակատագրի ո՞ր բմահաճույքով ինքը հանդիպեց այդ
զերուն: Եթե նա չլիներ, ամեն ինչ գուցե այլ կերպ գոսա-
փութեր...

Այլ կե՞րպ:

Բայց ինչպե՞ս: Կսպանե՞ր վոյեվոդային: Նրա կնոջը՝ իր

մորը, կհանձնեի բեզլերբեյին, տանջանքների ենթարկելու՝ և
Իսկ Զլատկայի հետ կամուսնանա՞ր...

Նա ցնցվեց: Չէ, լավ է, որ ալլահը թույլ չտվեց այդ ամե-
նը... Եվ իսկույն էլ մտածեց. ճիշտ վարվեց արդյոք, որ
բանտարկեց կազակին: Դա ըստեան կան պոռթկում էր՝ Հա-
միդին ու Զվենիգորային առերեսելու համար: Տեսնելու, թե
ինչպես պետք է դուրս պրծնի, արդարանա Համիդը: Եվ ի՞նչ
կասի, երբ իր նախկին ստրուկին տեսնի որպես վկա իր դեմ
եղած արդար դատաստանի: Իսկ գուցե ավելի լավ կլինի բա՞ց
թողնել կազակին... Այո, հարկավոր է բաց թողնել...

Զանազան մտքեր էին խոնվել Սաֆար բեյի գլխում, բշե-
լով, շտապեցնելով մեկը մյուսին, բայց ոչ մեկը թեթևացում
չբերեց, այլ միայն ցավ, հոգեկան տառապանք պատճառեց...
Մի բան հաստատ գիտեր. Մլադենին ու Անկային երբեք չի
կարող հարազատներ ճանաչել: Ո՛չ, ո՛չ... Դա զարհուրելի
բան կլինի... Թուրքը կկորչի, ինչի որ հավատացել է և ինչի
համար որ պայքարել է... Գիտակցորեն ընդունում էր, որպես
բացարձակ ճշմարտություն, — բոլոր ապացույցները առկա
էին, — իսկ սրտով չէր կարող ընդունել: Չէր կարող հաշտ-
վել այն բանի հետ, որ ինքը՝ Սաֆար բեյը, գարշելի հայդուկ-
ների առաջնորդի՝ գյավուր Մլադենի որդին է:

Սաֆար բեյը կատաղած ձեռքը բարձրացրեց և ուժգին
հարվածեց մահճակալին: Վերքի վրայից վիրակապը ցած
սահեց, արյունը հորդեց: Դեղին օղակներ լողացին աչքերի
առջև, պատերը օրորվեցին և նա, գիտակցությունը կորցնե-
լով, անզոր, թուլացած թրմփաց գետնին:

4

Երբ Սաֆար բեյը աչքերը բացեց, առաջին բանը որ տե-
սավ, Համիդի հարթ, թուխ դեմքն էր:

— Փառք ալլահին, ուշքի եկար, տղաս, — գոչեց սպախիան՝
թեթևակի կաղալով վիրավոր ոտքից: Նա մոտեցավ Սաֆար
բեյին ու ծանրությամբ նստեց մահճակալին: — Հա՛վ ես ար-
դեն: Ոչինչ, հույն Զաբարիադին բեղ արագ ոտքի կկանգնեց-
նի:

Այդ անսպասելի հանդիպումից կրկին օղակներ լողացին

Սաֆար բեյի աչքերի առջև, և նա նորից ուշագնած եղավ: Ուշքի եկավ այն բանից, որ Համիդը սառը ջուր ցողեց վրան:

— Ա՛խ, ինչպես ես արնաքամ եղել, ... — ասես մշուշի միջից լավեց Համիդի ձայնը: — Ինձ պատմել են, որ այդ վերքը քեզ հասցրել է քավթառ շուն Մլադենը... Ափսոս, որ նա փախել է իր վագրուհու հետ: Դու կարող էիր ուզածիդ պես նրա հաշիվը մաքրել...

— Իսկ գուցե հարկ կլինի քե՞զ հետ հաշիվ մաքրել, Համիդ, — ցածր ձայնով հարցրեց Սաֆար բեյը, զգալով, թե ինչպես շարունակյալ հետ միասին, որ ակնթարթորեն լցրեց սիրտը, վերականգնվում են և իր ուժերը:

Համիդը տարակուսանքով նայեց երիտասարդ տղային:

— Ի՞նչ ես ուզում ասել, տղաս:

— Չհամարձակվես ինձ այդպես անվանել, Համիդ, — ճշաց Սաֆար բեյը: — Ես ամեն բան գիտեմ:

— Ի՞նչ գիտես:

— Որ Չեռնավողայի ամրոցից գողացել ես ինձ ու քրոջս... Որ Մլադենը հայրս է... Անկան՝ մայրս... Իսկ դու... — Սաֆար բեյը լռեց և զայրույթով նայեց սպախիային:

Համիդը գույնը գցեց: Նա անձայն բերանը բացուխուփ արեց: Թվաց, թե ուր որ է բոլորովին շնչահեղձ կլինի: Նա այդպիսի շրջադարձ չէր սպասում. ամբողջովին կուշ եկավ և մտքերի մեջ ընկավ: Վերջապես կմկմալով սկսեց խոսել:

— Ուշքի արի, Սաֆար բեյ, ինչի՞ մասին ես խոսում... Դա իմ թշնամիների կեղտոտ շարախոսությունն է: — Նա ելավ տեղից և կաղալով սկսեց ման գալ սենյակում:

Սաֆար բեյը դառը ժպտաց, լիզեց շորացած, վառվող շուրթերը:

— Անմեղ ոչխար մի՛ ձևանա, Համիդ: Դու բոլորովին նման շես նրան... Որդի նման մի՛ գալարվի, հիմա այլևս շես պրծնի... Ես արհամարհում եմ քեզ, խարդախ շախկալ... Քո իղճի վրա է ընկած մի ամբողջ գնդի կործանումը: Դու մատնել ես քո ընկերներին այնպես, ինչպես հետագայում մատնել ես հայդուկներին: Դու գողացել ես ինձ, իմ քրոջը...

— Սաֆար բեյ, — ընդհատեց Համիդը: — Ալլահը խելքդ առել է գլխիցդ: Դու կփոշմանես, որ համարձակվում ես այդպիսի խոսքեր ասել... Թող ալլահը քեզ ների, թշվառական...

լավ մտածիր, քեզ հետ վարվել եմ, ինչպես իմ որդու։ Սովորել ես լավագույն մեղքիս հետ, հետո ենիչերիական կորպուսում։ Դարձել ես երևելի աղա... Մի՞թե քո ավազակ հայրը այդ բոլորը կարող էր տալ քեզ... Ոչ, այդ բոլորը ես եմ տվել, իսկ քո քույր Ադիկեն... Եթե ես այնպիսի սրիկան լինեի, ինչպիսին կարծում ես, ապա նրան կդարձնեի իմ կինը կամ հարճը... Բայց ես այդպիսի բան չեմ արել։ Նա դաստիարակվել է իմ աղջկա հետ, նրան հարազատի տեղ եմ դրել... Իսկ քեզ համար ճամփա եմ բացել պետութայն մեջ ամենաբարձր պաշտոնները գրավելու։ Դու կարող ես դառնալ փաշա։ Դա դեռ քիչ է, նույնիսկ բեգլերբեյ... Ովքե՞ր են քեզ համար Մլադենն ու Անկան։ Մի՞թե դու կկամենայիր վերադառնալ ծնողներիդ մոտ և բաժանել նրանց ճակատագիրը։ Օրենքից դուրս հայտարարված մարդկանց ճակատագիրը... Ավելի լավ է բնավ չճանաչել այդպիսի ծնողներին։ Հապա մի մտածիր. հազարավոր ենիչերիներ՝ քո զինակից եղբայրները, չեն ճանաչում իրենց հարազատներին և շատ լավ յուր են գնում առանց նրանց։ Խելքի արի, Սաֆար բեյ։ Ես փրկել եմ քեզ և ապագա եմ տվել...

Համիդը լռեց, մոտեցավ պատուհանին և ձևացրեց թե արցունքներն է սրբում։

Սաֆար բեյի դեմքը այլալվեց։ Ալլահ աքբեր։ Կարծես Համիդը կարդում է իր մտքերը... Մի՞թե ինքը չհրաժարվեց Մլադենին ու Անկային ճանաչել որպես իր ծնողներ, նրանց վանեց իրենից։ Իր տարիքի համեմատ նա շատ բարձր դիրք է գրավում ենիչերիական բանակում։ Եվ է՛լ ավելի բարձրի հույս ունի։ Ինքը մուսուլման է վերջապես։ Ուրեմն էլ ի՞նչ է ուզում Համիդից։ Ի՞նչ է կպել նրանից։ Չէ՛, ոչինչ էլ չի ուզում... Ուղղակի իրեն համար զգվելի են դարձել նրա հաստ մոտովն ու կեղծավոր աչքերը։ Ինքը չի ուզում, չի կարող նրա հետ միասին մի տանիքի տակ լինել։ Ոչ, ոչ, հեռու այստեղից, հեռու նրա աչքից։

— Ծնորհակալ եմ, Համիդ, — հեզնանքով ասաց Սաֆար բեյը։ — Բայց այն բանից հետո, ինչ իմացա Սպիտակ ժայռերում և Չեռնավորայի ամրոցում կատարած քո նողկալի շարագործությունների մասին, զգվում եմ քեզ հետ խոսել... Մի ծառայություն մատուցիր ինձ, կանչիր բժիշկ Զաքարիա-

դիին, Ես հենց հիմա ուզում եմ փոխադրվել իմ տունը: Խընդ-
րեմ, ձեռքդ երկարացրու, զանգը քաշիր:

— Սաֆար բեյ...

— Ոչ, ոչ, վերջ տուր դատարկ խոսքերին: Ես հենց հիմա
կգնամ... Իսկ դու, եթե խղճի գեթ մի կաթիլ ունես, անմի-
ջապես քո ջրկատով կհեռանաս Սլիվենից... Որպեսզի զահ-
լաս չտանես: Քո հին մեղքերի, մեր զորքի և ծաղուբ աղայի
դեմ գործած քո հանցանքների մասին ես կլռեմ: Իսկ դու
սուս կմնաս մեր այսօրվա խոսակցության մասին... Զանգը
տուր:

Համիդը մի բռնի մտածեց, հետո լուռ մտեցավ դռանը
և քաշեց կարմիր մետաքսե բուղը: Պատի ետևում լավեց խըռ-
պոտ, ձիգ զանգահարություն:

ՆՈՐԻՑ ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

1

Ստրուկների շարանը, որ բաղկացած էր շրջակա վայրե-
րից ու գյուղերից բերած բազմաթիվ շղթայակապ գերիներից,
քայլում էր ոլոր-մոլոր, փոշոտ, քարքարոտ ճանապարհով,
որ տանում էր Ստամբուլ:

Զվենիգորան ջանում էր մնալ շարասյան առջևում: Առջևից
գնալը հեշտ է. ետևից եկողները քայլերը հարմարեցնում են
բեզ, առաջինը դու ես խմում դեռ չաղտորված առվակի գու-
լալ, սառը ջուրը, կուլ չես տալիս հազարավոր օտքերից
բարձրացող ճանապարհի փոշին:

Նա սրտի ցավով էր նայում իր ուղեկիցներին: Սեպացած,
նիհար, քաղցից ու տանջանքներից հյուծված՝ քարշ էին գա-
լիս նրանք գլխահակ, գժվարությամբ փոխելով ուժասպառ,
արչունլիկ եղած ստեբրը: Այստեղ կային բուլղարացիներ,
լեհեր, վոլոխներ, ուկրաինացիներ, հունգարներ, իտալաթ-
ներ, գերմանացիներ, ալբանացիներ... Ումանց գերի էին
վերցրել պատերազմում, մյուսներին գնել էին գերիների շու-
կայում կամ հավաքել էին բանտերից: Անձայրածիր աշխար-
հի սաւրբեր կողմերից ճակատագիրը նրանց բերեյ հավաքել

էր իրար գլխի ու նետել սարսափելի մոլորքի¹, օսմանյան Դուան ոտքերի տակ, որը սարդի նման ծծում էր նրանց ուժերը, իսկ հետո ոչնչացնում:

Տկարները, վիրավորները չէին դիմանում ճանապարհին. թուլացած, անզոր ընկնում էին ուղեկցող պահակների ոտքերի տակ, և սրանք բողբոլափայտներով վերջ էին տալիս նրանց: Դիակները քարշ էին տալիս անտառ՝ գազաններին կեր դառնալու, կամ ժայռի գլխից նետում էին անդունդը:

Յոթերորդ օրը հանդիպեցին սուլթանական բանակի առաջին ջոկատներին, որ ընդառաջ էին գալիս իրենց:

Գերիներին դուրս հանեցին ճամփից: Նրանց կողքով անցան հետիոտն ու հեծյալ զինվորները՝ զենքերը փայլեցնելով, փողփողուն խայտաբղետ հագուստներով: Տաքացել էին շքեղ հագնված աղաների սպիտակաթույր ձիերը: Տունգում էին ծանր սայլերին լծված գոմեշները, գոռոզ-գոռոզ շորորում էին հյուսիսին անծանոթ երկսապատանի ուղտերը՝ հսկայական հակերով բռնված:

«Սկսվե՛ց,— մտածեց Զվենիգորան:— Տեսնես, այս բոլորը գնում են մեր երկի՞րը: Որքա՛ն մահ, որքա՛ն արցունք ու դժբախտություն են տանում իրենց հետ... Եվ Ուկրաինայում գիտե՞ն այն դժբախտության մասին, որը շուտով սև թաթառի նման սրընթաց կանցնի անծայրածիր տափաստաններով...»:

Նա նստեց ճամփեզրին և ուշադիր նայեց զինվորներին: Որոշեց նրանց տարիբը, զննեց զենքերը, հանդերձանքը, հաշվեց ջոկատները և մարդկանց բանակը նրանցից յուրաքանչյուրում: Ակամա համեմատեց զապորոժցիների, հետման Սամոյլովիչի Չախափնյա կազակների և մոսկովյան ստրելցեցների զենքի ու հանդերձանքի հետ: Դուրս եկավ, որ թուրքերի մոտ շատ է սառը զենքը՝ թուր, յաթաղան, նիզակ, բողբոլափայտ, բացի դրանից յուրաքանչյուր ձիավորի թամբին օղապարան էր ամրացված՝ գերի բռնելու համար: Փոխարենը քիչ էր հրազենը, եղածն էլ տարբեր տեսակի էր. ենիչերկաներ, վենետիկյան արկերուզներ, ռուսական պիշչալներ², լե-

¹ Մոլորք— դաժան և զոհեր պահանջող անողորմ ուժի խորհրդանիշ:

² Պիշչալ— երկարափող ծանր հրացան:

հական պատրույգավոր մուշկետներ, տակդիրով զապորոժ-
յան գակիվնիցաներ,¹ տարբեր տրամաչափի ատրճանակ-
ներ, Քոչվոր արաբների ջոկատը, որ գնում էր վտիտ, արա-
գավազ ձիերով, ուներ միայն թրեր ու նետաղեղներ:

Երբ զորքն անցավ, ուղեկցորդները գերիններին մտրակնե-
րով քշեցին ճամփեզրից, անխնա ծեծեցին բոլորին, նրանց,
ովքեր հտ մնացին: Նորից լսվեցին տնքոցներն ու հառա-
չանքները, նորից զնգացին շղթաները:

Վերջապես երևաց Ստամբուլը: Վիթխարի քաղաքը ծառս
եղավ թեք բլուրների վրա՝ մինարեթների բարակ սայրածո-
ղերով, ինչ-որ տարօրինակ քարե շենքերի գմբեթներով: Աջ
կողմում կապտին էր տալիս հանդարտ Մարմարա ծովը,
ձախում արևի տակ փայլփլում էր Ոսկեղջյուրը:

Գերիններին քաղաք շթողեցին. շարասյան գլուխը թեքեցին
դեպի նավահանգիստ: Այնտեղ նրանց լցրեցին քարե բարձր
պարիսպներով շրջապատված մի հսկայական բանտային
ճամբար, շարք կանգնեցրին և հանձնեցին մի ծանրաշարժ
աղայի: Երբ շարքն անշարժացավ, աղան դանդաղ անցավ նրա
առջևով, մեկ առ մեկ հաշվեց բոլորին, հետո խռպոտ ձայնով
ասաց.

— Այսուհետ դուք մեր պայծառափայլ փաղիշահի ստրուկ-
ներն եք: Անհնազանդության համար՝ մտրակ: Փախուստի
համար՝ մահ... Ով լավ աշխատի, օրը երկու անգամ ուտե-
լիք կստանա, ով վատ աշխատի՝ միայն մեկ անգամ... Եթե
ձեր մեջ կազակներ կան, թող հինգ քայլ առաջ գան:

Քսան մարդ շարքից դուրս եկան: Փոքր-ինչ տատանվե-
լուց հետո Զվենիգորան էլ դուրս եկավ: Հարցական նայեց
աղային: Տեսնես ինչի՞ համար են պետք կազակները:

— Դուք կգաք ինձ հետ, — ասաց աղան: — Մյուսները
կմնան այստեղ...

Շարքը խարխլվեց: Մարդիկ ցրվեցին ճամբարով մեկ,
որը ծածկված էր խլուրդի բուն հիշեցնող նկուղներով:

Կազակները դանդաղ, ոտքերը հազիվ քարշ տալով գնացին

¹ Գակիվնիցա — երկար ու ծանր հրացան, խզակոթի վրա կեռչան:

աղայի ետևից և շուտով հայտնվեցին մի մութ, բորբոսնած գետնատան մուտքի առջև, որտեղից նրանց վրա փչեց երկար ժամանակ անշարժ մնալուց նեխած օդը: Զվենիգորան ակամա ետ-ետ գնաց, բայց բռունցքի ուժգին հարվածը նրան ստիպեց արագացնել քայլերը:

Նկուղները լիքն էին մարդկանցով: Ոմանք պառկած էին կեղտոտ հողե հատակին, մյուսները նստած էին պատերի տազ, ոմանք խմբվել էին վանդակապատ դռան մոտ, որտեղ օդը մի քիչ զով էր: Պատառոտված շորերով, մազակալած, ինչպես վայրի գազաններ, նրանք ավելի շատ նման էին ուրվականների, քան մարդկանց: Բոլորի ոտքերին ու ձեռքերին երկաթե կալանդներ էին: Մի քանիսի ճակատներին կամ այտերին խարան էր դրված:

Շրխկշրխկացին դռները, շխկշխկացին փականքները:

Նորեկներին շրջապատեցին հնարես 'կալանավորները: Ամեն մեկն ուզում էր իմանալ ինչ կա դրսում, ազատության մեջ, տանը, Ուկրաինայում: Մազմորուքի մեջ կորած մի մարդ գրկեց Զվենիգորային, սեղմեց կրծքին.

— Արսեն, դ՞ու ես:

Զվենիգորան զարմացած նայեց անծանոթին: Ո՞վ է ճանաչում իրեն այստեղ: Մի՞թե զապորոժցի է:

Հանկարծ մորուքավորի դեմքին, ցորենագույն մազերի դեզի վրա լույս ընկավ: Ժպիտից փայլեցին սպիտակ ատամները և խոշոր երկնագույն աչքերը:

— Ի՞նչ ման վոյնով, — ուրախացավ Զվենիգորան: — Այքեզ հանդիպո՞ւմ:

Նրանք գրկախառնվեցին, համբուրվեցին: Նույնիսկ մոռացան ձեռքերն ու ոտքերը սեղմող կալանդների մասին:

Հարցերին վերջ չկար: Չնայած շատ կարճատև էր եղել հանդիպումը կաֆայում, բայց ընդմիշտ մտերմացրել էր երկու կազակներին՝ զապորոժցուն ու դոնցուն: Բարի խոսքք և բարի գործը երբեք չեն մոռացվում:

— Դե, պատմիր գլխիդ եկածը, տեսնենք, — հարցրեց Զվենիգորան՝ համառոտակի պատմելով իր դեզերումների ու ձախորդությունների մասին:

— Ինձ մոտ ամեն ինչ ավելի պարզ ու հասարակ ստացվեց, բայց ոչ հեշտությամբ,— տխուր պատասխանեց Ռոմանը:— Բերեցին Ստամբուլ, ծախեցին գալիերային¹, Լողացի անցա Սև ծովը, Սպիտակը²...

Նրանք քնեցին՝ անկյունում կուչ եկած: Շատ տոթ էր, հեղձուկ՝ կեղտոտ, վաղուց չմաքրված մարմինների բազմությունից, սահմուկեցուցիչ՝ հիվանդների հառաչանքներից ու տնքոցներից...

Առավոտյան պահակների ուժեղ հսկողությամբ կազակներին տարան Յոթնաշտարակ ամրոցը: Այդ հինավուրց ամրոցը, որ վերածվել էր բանտի, վատ համբավ ուներ: Նրա մոայլ քարե պատերը բազմաթիվ գաղտնիքներ էին պահում: Այստեղ, քարե արկղների մեջ, տառապում էին բուլղար ու սերբ ապստամբները, գյուղացիական խռովության առաջնորդները, սուլթանների դեմ կազմակերպված դավադրության մասնակիցները, և իրենք՝ սուլթանները, որոնց գահընկեց էին արել ավելի հաջողակ մրցակիցները:

Կազակներին լցրեցին երկաթազամ դռներով մի ընդարձակ բակ, որտեղ արդեն շատ գերիներ կային, շարք կանգնեցրին պատի երկարությամբ: Դարպասի մոտ պահակներ կարգեցին:

Շարքերում տարածվեց բազմահազար մարդկանց հուզված ժխորը.

— Սը՛ս! Կամաց, կամաց: Գալիս են:

Դռները բացվեցին: Լայն քարե արտասանդուղքում հայտնվեցին մի խումբ մարդիկ: Առջևում կանգնած էր միջահասակ կազակային ավազը՝ կարմիր ժուպանով, թուրը կողթից կախո՝ Նա ուղիղ նայեց գերիների շարքին, առանց գլուխը շրջելու: Մանր, դեղին աչքերը անշարժ նստած էին ուռած, կարմրած կոպերի տակ: Նրա ետևում կանգնած էին մի քանի կազակներ ու ենիչերիներ: Նրանց ուսերի ետևից երևում էր գլուխը քաշ գցած, ծեր ուղղափառ քահանան:

¹ Գալիերա— խոշոր թիանավ:

² Սպիտակ ծով (բուլղ.)— Եգեյան ծովը:

Գերիններն անհանգստացան, Կազակներ Ստամբուլում, Կույն կոշը պատգամավորութիւնն է ուղարկել, որպէսզի փրկագնի՞ իրենց: Երբեմն պատահում է այդպիսի բան...

Զվենիգորան ուժգին սեղմեց Ռոմանի ձեռքը, զգաց, որ նա էլ ամբողջովին լարված է: Մի՞թե հիմա գալու է իրենց գերութեան վերջը:

Ավագը առաջ եկավ:

— Կազակ եղբայրներ:— Նրա ձայնը խուլ հնչեց:— Գերի եղբայրներ: Ուղղահավատներ: Ինձ համար ծանր է նայել ձեզ, նայել ձեր շղթաներին, ձեր տառապանքներին, քանզի ես էլ ոչ վաղուց գերի եմ եղել: Բայց ամեն բան աստծու ձեռքին է, և ահա այսօր ես ազատ եմ ու զենքս ինձ հետ է: Զեզ համար էլ եղբայրներ, ճանապարհ կա դեպի ազատութիւն, դեպի հայրենիք: Միայն խելացի եղեք:

Զվենիգորան շհավատաց իր աչքերին ու ականջներին. Մնոզոգրեշին էր: Որտեղի՞ց լույս ընկավ նա: Ինչպե՞ս է հայտնվել Ստամբուլում... Այո, այդ նա էր: Մի քիչ գիրացել էր, սափրվել, երկար արխառն բեղեր էր թողել: Հայացքում և շարժումների մեջ հայտնվել էր ինքնավստահութիւն, ամբարտավանութիւն:

— Հը՛մ, տես ո՞ւր է խփում,— ասաց Զվենիգորայի առջևում կանգնած բարձրահասակ, տարեց գերին:

— Սուս մնա, Գրիվա, թող լսենք,— աղմկեցին շորս կողմից:

Մնոզոգրեշին մի բոպե լոնց, ասես ունկնդիրներին խորհելու ժամանակ տալով, հետո ձայնը բարձրացրեց.

— Եղբայրներ, հասել է մեծ ժամը: Սուլթան Մուհամմեդ Չորրորդը արշավի է ելել Ուկրաինայի վրա: Սուլթանը մեծ ողորմածութիւն է անում կազակ գերիներին. ուղքեր կմտնեն փաղիշահի բանակը, անմիջապէս ազատութիւն կստանան, իսկ Ուկրաինայում, որպէս պարզև, նրանց հող և դրամ կտրվի:

— Հե՛յ, շուն-շանորդի, վիժվածք,— նորից գոռաց Գրիվան՝ շղթաները զնգացնելով:— էդ ո՞ւր ես քշում մեզ, նզով-յալ հոգի:

Մի խուլ քրթմնջյուն գլորվեց շարքերով: Ճառասացը ձևացրեց, թե ոչինչ չի լսում, փոքր-ինչ լռեց, հետո ձեռքը բարձրացրեց.

— Դուք կազատվեք կապանքներից, տաժանակրությունից: Դուք կդառնաք ազատ մարդիկ և ինձ նման թուր կունենաք ձեր ձեռքում: Երկար խորհելու հարկ չկա, այսպիսի երջանիկ առիթ այլևս չի լինի... Ես էլ եմ գերի եղել, իսկ հիմա, ինչպես տեսնում եք, ազատ կազակ եմ: Դուք անմիջապես հագուստ ու ղենք կստանաք, իսկ մեկ-երկու ամիս հետո կլինեք հայրենիքում: Դե, ով ուզում է, թող առաջ գա: Հենց հիմա ձեր կալանդները կհանեն: Դե, համարձակ, եղբայրներ...

Մնոգոգրեշին լռեց՝ իր դեղնավուն աչքերով սպասողաբար շարքերին նայելով: Գերիները նույնպես լռեցին: Հանկարծ ձախ թևից առաջ եկավ լղար, հյուծված մի մարդ: Մանր կապանքները զնգացնելով՝ մոտեցավ առմուտքին, դիմքով դարձավ դեպի շարքը, գլուխ տվեց և խուլ ձայնով, կարծես խեղդվելով, ասաց.

— Ներեք ինձ, եղբայրներ, ու մի՛ անիծեք,— և կախեց մեծ քաբուլով սպիտակահեր գլուխը:

— Գրեշանի, դու էդ ի՞նչ ես ասում,— ձայնեց ինչ-որ մեկը:

— էլ դիմանալու ուժ չունեմ, եղբայրներ,— պատասխանեց Գրեշանին առանց գլուխը բարձրացնելու: Հետո շրջվեց դեպի առմուտք, գլուխ տվեց Մնոգոգրեշնուն.— Համաձայն եմ ծառայել քեզ, պան:

Սա ձեռքով արեց: Առմուտքից դուրս եկան դարբինները՝ բերելով շարածական զնդան, մուրճ և հատիչ: Հենց այստեղ էլ Գրեշանու ձեռքերի ու ոտքերի շղթաները հանեցին:

Ուրախ ժպտալով Մնոգոգրեշին գոչեց.

— Սկիզբը լավ է: Է՞լ ով է ուզում: Համարձակ, բարեկամներ:

Մեկն էլ առաջ եկավ՝ կարճահասակ, գունատ մի տղա, գրեթե անշափահաս: Լուռ խոնհակից, շղթայված ձեռքերը մեկնեց դարբնին: Նրա ձեռքերից արյան թանձր կաթիլներ ընկան գետնին: Տղան հյուծվածությունից օրորվեց: Կեղտոտ, պատառոտ-

ված քրջերի միջից երևում էր նրա նիհար, սսկրոտ մարմինը, սուր անրակները դուրս էին ցցվել:

Զվենիգորան, ասես տենդի մեջ, դողաց ամբողջ մարմնով. «Ախր էս ի՞նչ է կատարվում: էսպես մեկը մյուսի ետևից բոլորը դուրս կգան: էդ ո՞ւմ են հավատում սրանք: Մնոգոգրեշն՞ան: Թուրք փաշաների՞ն: Սուլթանի՞ն: Իրենց ոխերիմ թշնամիների՞ն:

Նա մի կողմ հրեց Ռոմանին ու Գրիվային, որ կանգնած էին իր առջևում, դուրս եկավ շարքից: Զարմացած ու զայրացած Ռոմանը բռնեց նրա թևքից.

— Հո խելքդ չթոցրի՞ր, Արսեն:

Բայց Զվենիգորան պոկվեց նրա ձեռքից ու արագ գնաց դեպի առմուտք:

Մնոգոգրեշին, չճանաչելով կազակին, ուրախացավ: Նրա կնճռապատ դեմքը ճապաղեց ժպիտից, նույնիսկ վարդագունեց:

— Այ, տեսնո՞ւմ եք,— կանչեց նա:— Զեր մեջ բավականին խելացի մարդիկ կան:

— Կա՛ն, անիծյալ պոտուրնակ,— մոտենալով, բարձր ձայնեց Զվենիգորան:— Այստեղ ոչ բոլորն են դավաճան, ինչպես դու և թո՛ մանկլավիկները:— Նա մատնացույց արեց առմուտքում կանգնածներին, ապա դարձավ գերիներին.— Ծղբայրնե՛ր: Կազակնե՛ր: Ծս ճանաչում եմ հուզա Մնոգոգրեշնուն: Նրա հետ եղել եմ գերության մեջ Կրգըլ-Իրմակի ափերին: Գուք ո՞ւմ եք հավատում: էս մատնիչի՞ն, որ մեր մարդկանցից քանի՛-քանիսին է կործանել: Ուրացողի՞ն, որը մոռացել է իր հավատն ու իր ժողովրդին... Հարցրեք նրան՝ ինչպե՞ս է հայտնվել էստեղ: Մախել է մեզ շունը, սրպեսզի իր կաշին փրկի... Հայրենիքը կնզովի նրան, ով սրա և հնիշերինեթի հետ միասին ձեռք կբարձրացնի իր վրա:

— Արսեն, զգուշացի՛ր,— լսվեց մեկի գի, ծանոթ ձայնը:

Զվենիգորան անմիջապես շրջվեց: Մնոգոգրեշնու գեղին աչքերից կատաղություն էր թափվում: Ներքեի ծնոտը ցնցվում էր ասես տենդի նոպայից: Երևում է, Զվենիգորայի սպանիչ, անոգոք խոսքերից զավաճանը շջմեց, կարկամեց շանթահար-

վածի պես: Վերջապես նրա խոսելու ընդունակութիւնը ետ
եկավ:

— Կո-րի-ի, շո՛ւն,— խոխոացրեց նա՝ թուրը դուրս քա-
շելով:

Զվենիգորան, ավելի շուտ բնազդորեն, քան միտումնավոր,
հարվածից պաշտպանվելով՝ շղթայված ձեռքերը բարձրացրեց
գլխից վեր:

Թուրը կրճատցով զարկվեց շղթային ու երկու կտոր եղավ:
Մնոգոգրեշնին զարմանքով ու շարութեամբ նայեց իր ձեռ-
քում մնացած պողպատի կտորին: Մի ինչ-որ կազակիկ ետեից
նրան տվեց իր թուրը: Բայց այդ ժամանակ գերիների շար-
քերը ցնցվեցին: Բազմահազար մարդիկ ճիչ ու աղմուկով
նետվեցին առաջ, դեպի արտասանդուղք: Զարագույժ կանչ-
վուտութենքը, ոտքերի դոփշուներ, շղթաների լընգոցը, բոլորը
միաձուլվեցին, դարձան ահեղ մոնշյուն...

Մեկը ուժեղ ձեռքերով բռնեց Արսենին, քարշ տվեց ամբո-
խի մեջ: Եվ հենց ականջի տակ փսփսաց.

— Արսեն: Եղբայրս: Այնուամենայնիվ էլի հանդիպեցի քեզ,
շան ձագ: Շուտ թաքնվիր մարդկանց մեջ:

Զարմացած Զվենիգորան զգաց պան Սպիխալսկու կոշո
բեղերի հպումը, որ ամբողջ ուժով իրեն քաշեց ամբոխի մեջ,
ամենախիտ տեղը:

Իսկ գազազած գերիները նետվեցին դեպի դավաճանը,
թափահարելով ժանգոտ շղթաները: Բոլոր կողմերից ձգվեցին
զարհուրելի, կուչ եկած ձեռքերը՝ ջանալով կառչել պոտուրնա-
կի կոկորդից:

— Պահակներ՛...— Մղրտաց Մնոգոգրեշնին՝ թաքնվելով
մի հաղթանդամ, կուզիկ թուրքի ետևում:

Ենիչերիները սակրերը առաջ մեկնած, իրենցով փակվեցին
դուռը:

— Դուր: Դուր՛: Ետ գնացեք, կեղտոտ խոզեր:

Պահակները ետ քշեցին, գերիներին: Ենիչերիները

¹ Դուր (թուրք.) — կանգնիր:

նիզակներով, սակրերով, թրերի տափակ կողմով մարդկանց ծեծելով՝ քշեցին բակի մեջտեղը:

Զվենիգորան ու Սպիխալսկին, իրար ձեռք բռնած, որպեսզի այդ կատաղի շրջապատույտի մեջ միմյանց չկորցնեն, դանդաղ շարժվեցին այնտեղ, ուր գլխների վրա բարձրանում էր Ռոման Վոյնովի ցորնագույն հերափունջը:

— Քշե՛լ տաժանակրության, բոլորին,— ետեից գոռացին Նոր մեկը:— Շղթայե՛լ թիերին:

Դարպասը լայն բացվեց: Հարյուրավոր ոտքերից փոշի բարձրացնելով՝ գերիների շարանը սողաց ետ՝ դեպի ծովը:

2

Վերջապես Սպիխալսկին, զանազան դեպքերի ու նորությունների կրճոտ սիրահարը, բավարարեց իր հետաքրքրասիրությունը՝ ունկնդրելով Զվենիգորայի մանրամասն պատմությունը այն ամենի մասին, ինչ կատարվել էր իր հետ, Բուրգասի մոտ, եղեգնուտում բաժանվելուց հետո: Զապորոժցին իր հերթին հարցրեց.

— Իսկ դու, պան Մարտին, դո՞ւ ինչպես հայտնվեցիր էստեղ:

— Կազակների մե՞ջ, Ես հույս ունեի, որ կհանդիպեմ իմ ծանոթներից որեէ մեկին, խնդրեմ... Եվ չսխալվեցի, ինչպես տեսնում ես:

— Դե չէ, դա չեմ ասում: Ինչպե՞ս ընկար ենիչերիների ձեռքը:

Սպիխալսկին աչքերը ճպճպացրեց ու շփոթվեց.

— Օ՛, դա երկար պատմություն է...

— Դու էլ կարճ ասա:

— Խնդրեմ... Ինձ բռնեցին առափնյա թուրք պահակները, գրողի ծոցը դնան դրանք: Զեր գնալուց անմիջապես հետո նավակի մեջ մի լավ անկողին պատրաստեցի շոր եղեգներից ու խոտերից, պառկեցի և...

— Եվ քնեցիր,— ժպտաց Զվենիգորան, լավ իմանալով իր

ընկերոջ թուլութունը:— Ախ, պան Մարտին, պան Մարտին,
Սպիտակակին է՛լ ավելի շփոթվեց.

— Այո, խնդրեմ, քնեցի... Եվ այնպես խոր, որ արթնա-
ցա, երբ հանկարծ անբաղաքավարութիւնս քացով հասցրին
կողքիս: Նայում եմ, գլխիս վերևում երկու թուրք են կանգնած,
ճպճպացնում են սև աչքերը և դեռ բրբջում են, երիցս անիծ-
յալ լինեն: Դե, հս տեղիցս վեր թռա և առանց երկար-բարակ
մտածելու մեկի դնչին հասցրի, մյուսի փորին: Տեղնուտեղը
ձենները կտրեցին, խնդրեմ: Ոնց որ մեկից պապանծվեցին:
«Ի՞նչ անեմ,— մտածեցի էգ ըռպեհին:— Փախի, պան Մարտին,
դեպի անտառ»: Նավակից դուրս թռա ափ ու ինձ գցեցի
եղեգնուտը: Բայց էնտեղ էլի երկու հոգի հարձակվեցին վրաս,
գցեցին գետին ու մտրակներով սկսեցին ծեծել, ոնց որ անա-
սունին, շան ծիծ կերածները: Իսկ հետո շորսով թափվեցին
վրաս, կապկպեցին և, խնդրեմ, բանտ գցեցին: Դե, էնտեղից
էլ՝ էստեղ: էսպիսի բան:

— Տխուր պատմութիւնն եկավ մեր գլխին...— մտախոհ
ասաց Զվենիգորան:— Շատ տխուր, ինչպե՛ս ազատութիւն
ձեռք բերինք, ինչքա՛ն վտանգներից փրկվեցինք, ի՛նչ տա-
ռապանքներ քաշեցինք, և ահա. նորից գերութիւն մեջ ենք:
էն էլ ինչպիսի՛ տաժանակրութիւն... Մի միտթարութիւն կա,
բարեկամ, որ մենք դարձյալ միասին ենք:

Վաղ առավոտյան, արևի առաջին ճառագայթների հետ,
ժանր, բայց արագընթաց «Սև վիշապ» թիանավը, որ յուրա-
բանչուր նավակողին երեք շարք թիեր ուներ, թեթև ու սա-
հուն հեռացավ Ստամբուլի. ուղմական նավահանգստի քարե
կառամատույցից:

Խուլ, ընդհատ-ընդհատ ներքին տախտակամածում դղրը-
դացին թմբուկի հարվածները՝ զըմբ-զըմբ, զըմբ-զըմբ: Այդ
հարվածների հետ միաժամանակ նավի երկու կողմերում բարձ-
րանում ու իջնում էին ամուր, երկար թիակները: Նավի շուրջը
ծփում էր կապույտ ջուրը՝ անհամար արծաթե կայծկլտուն
ցայտեր շաղ տալով: Վաղորդյան զովը, կանաչ պարտեզների
անուշահոտութիւն և վիթխարի քաղաքի բույրերի հետ միա-

սին, խուժում էր գերի-թիաւարներէ ննդլիկ, մզլահոտ բնակա-տեղին:

Բոսֆորի զառիկող, օտար ու անհյուրընկալ ափերի մոտով նաւը արագորին սլանում էր ավելի ու ավելի հյուսիս, դեպի Սև ծովի լայնարձակությունները: Հարավային համընթաց քամին և գերիների բազում տասնյակ մկանուտ ձեռքերի ուժը համառորին հրում էին նրան առաջ ու առաջ:

Բայց ավելի արագ, նավից առաջ անցնելով, սլանում էր ազատ, անկաշկանդ միտքը: Միտքն էլ քամու նման է: Նրա վրա լուծ չես դնի, չես շղթայի...

Զվենիգորայի աչքերի առջև դուրս էր լողում Զլատկայի տխուր, տանջալիորեն քնքուշ ու սիրելի դեմքը: Հիշում էր, թե նա ինչպես ընկավ իր գիրկը, երբ բաժանվում էին Վրատնիցկի կիրճի մոտ: Ինքը շտապում էր Զեռնավողա, որպեսզի Մլադենին զգուշացնէր վտանգի մասին, իսկ Զլատկան Յաղուբի ու Դրագանի հետ պետք է թաքնվեր մի ապահով տեղ, Պլանինայի անանցանելի վայրերում: Աղջիկն այն ժամանակ ոչինչ չասաց: Միայն լուռ գիրկն ընկավ, այտը սեղմեց իր այտին և, Արսենը նրա շուրթերին զգաց աղջկա արցունքների աղի համը: Զլատկան լաց էր լինում միաժամանակ և՛ երջանկությունից, և՛ վշտից:

— Զլատկա, որտե՞ղ ես դու հիմա: Արդո՞ք կհանդիպենք նորից: Թե՞ մեր ճանապարհները ընդմիջտ բաժանվել են, — շշնջաց նա ընդարմացած:

Հետո նրա մտքերը սլացան Ուկրաինա, արծաթալուծ Սոսլայի ափին ընկած խաղաղ ու կանաչ անկյունը: Մշուշապատ հեռաստանից, ինչպես երազում, հայտնվեցին մոր խամբած, վշտալի աչքերը, նա ուզում էր տեսնել մոր դեմքը, բայց ոչ մի կերպ չկարողացավ լրիվ պատկերացնել: Միայն արտասովից, տրտմալի աչքերը կենդանացան նրա հայացքի առջև, կապույտ մշուշում, տափաստանների ու ծովերի, լեռների ու հովիտների վրայով նայեցին իրեն, թափանցեցին իր սիրտը, կարծես հարցնում էին «Որտե՞ղ ես, որդիս: Ինչպե՞ս ես ապրում օտարության մեջ, հեռու երկրներում: Որ ճամփի վրա

սպասենք քեզ, ո՞ր թռչունից հարցուփորձ անենք, մի խարրիկ
առնենք քեզնից, որդիս»:

Ասես մամլակով սիրտը սեղմեցին: Աչքերը բացեց, գլուխը
թափ տվեց, տեսիլքը ցնդեց, անհետացավ ծիծեռնակի պես:
Նորից սկսեց ականջ դնել վաղուց չլուղված թիակալների
ճոնշոցին, ժանգոտված շղթաների զնգոցին: Հսկեց խարա-
զանի սուր շաչուն, և ինչ-որ մեկը բարձր ճղճղաց:

Հետո կրկին լուսթյուն իջավ: Ու մտքերը սլացան հեռո՛ւ-
հեռու...

Ականջին հասավ Սեչի ժխորը: Հիշողության միջից դուրս
լողացին Մետելիցայի, Սեկաչի ու Տովկաչի հաղթ կերպարանք-
ները: Ամբոխի մեջ մի պահ երևաց Շեչիկ պապի խորշումա-
պատ, դարչնագույն դեմքը: Եվ հանկարծ հայտնվեց նաև ին-
քը՝ կոշեռյ իվան Սերկոն: Նա խստահայաց էր ու լոակյաց:
Նրա գորշ-պողպատագույն աչքերի սուր հայացքը տակնու-
վրա արեց կազակի հոգին, ալեկոծեց իր լուռ, անձայն հար-
ցերով. «Որտե՞ղ ես դու, կազակ: Քե՞զ ինչ է պատահել: Ին-
չո՞ւ լուր չես տալիս քո մասին»:

«Ինչպե՞ս թե չեմ տալիս, — սիրտը թպրտացի: — Մի՞թե իմ
փրկագնած ծերունիները հայրենիք չեն հասել: Զէ՞ որ նրանց
միջոցով ես լուր էի ուղարկել՝ հարձակման սպասեք հարա-
վից... Մի՞թե Մլադենի սուրհանդակը չի հասել Սեչ՝ վեզիր
Իբրահիմ փաշայի արշավանքի մասին լուր տանելով: Բա ոնց,
բատկո: Ե՛վ հայտնել եմ, և՛ նախագգուշացրել: Պատրաստվեք՝
լցրեք զակիլնիցաներն ու մուշկետները, թամբեք սեաթույր
նժույզները: Թող դետքերը ավելի ուշադիր հսկեն մեր սահ-
մանները տափաստանում և ժամանակին վառեն ձյութի տա-
կառները, բոլոր կաղակներին ծանոթ նշանը, որ դաշտում
թշնամի է հայտնվել: Միայն թե ես ինքս չեմ կարող ժամանա-
կին լինել Զապորոժիեում, բատկո Կոշեռյ, և քեզ հաղորդել աչն
բուլսրը. ինչ տեսել ու լսել եմ էստեղ... Եվ չգիտեմ, քնդհան-
րապես կլինե՞մ արգյոք»:


Անցեում իշշում էին ձովի ալիքները՝ քրելով գերու ծանր
ու մոռյլ մտքերը, որ կուտակվում էին ամպերի նման: Քամին
սասականում էր հեռագհետե. նուշնիսկ շվյվացնում էր նապի

պարանասարքերի մեջ ու, առանց արգելքի հանդիպելու,
սլանում հեռու՝ փրփրաբաշ ալիքներ բարձրացնելով:

Մի՞թե Բոսֆորն անցել են:

Այո: Արդեն սկսվել էր ծովը: «Սև վիշապը», դուրս գալով
ծովի լայնարձակություն, փոխեց ուղղությունը և ահա արդեն
լողում էր ուղիղ դեպի հյուսիս:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ



**ՍՈՒԼՈՒՆԻ
ՅԵՐՄԱՆԸ**



ԿԱՏՈՐԳԱ

1

«Կատորգա»՝ թուրքերենից ժառանգած նոր հունարեն բառով անվանում են այն թիանավը, որ եռաշարք թիեր ունի: Միջերկրական ծովի երկրներում մեր պատմության տարիներին կատորգայի թիավարները ստրուկներն էին, ռազմագերիներն ու ծանր աշխատանքի դատապարտված հանցագործները: Այս բոլոր թշվառներին գամում էին նավին, լայնակի շարված նստարաններից, կամ իրար էին միացնում մի ընդհանուր շղթայով, որ անցնում էր նավախելի կամ ցուլի միջնապատերի մոտ հնարամիտ կողպեքերով փակվող կալանդների միջով: Այստեղ, վերակացուների մտրակների տակ, թիապարտներն անվերջ, անփոփոխ նստում էին ծանր, երկար թիերի մոտ, այստեղ ուտում էին ու քնում, այստեղ էլ հաճախ խելագարվում էին և մեռնում ուժասպառ լինելուց ու հիվանդություններից:

Ստրկության մեջ չկա ավելի զարհուրելի բան, քան կատորգան, կամ գալերան, ինչպես անվանեցին նրան շատ ավելի ուշ: Դրա համար էլ այդ բառը գրեթե բոլոր եվրոպական լեզուների մեջ մտավ որպես անմարդկային տառապանքների ու ծանրագույն պատիժների հոմանիշ:

* * *

Երբ «Աև վիշապը» Բոսֆորն անցավ ու տարուբերվեց ծովի հզոր կրծքին, տախտակամածի թմբուկն սկսեց ավելի հաճախ, ավելի ձիգ ու երկար հարվածել: Դա նշանակում էր՝ թիավարել ավելի ուժգին, ավելի արագ:

Գերիները շղթայված էին թիերին երեքական հոգով. մի ծայրին Զվենիգորան էր, մեջտեղում՝ Սպիրասուլին, իսկ Ռոման Վոյնովը նստած էր նավակողի մոտ, մի մութ ցածրիկ անկյունում:

Վերակացու Աբդուռահմանը, գեր, հաղթանդամ մի թուրք, այն թուրք կալանավորներից, որ բանտարկվել էր ծանր հանցագործության համար, իսկ հետո արժանացել բարեհաճության, կատաղորեն գոռաց.

— Ուժեղ թիավարեք, գարշելի խոզեր: Բոլորդ միասին, համերաշխ. բարձրացրու, իջեցրու: Բարձրացրու, իջեցրու:

Թիակները թռչկոտում էին, ինչպես թռչնի թևեր: Միալար զնգընգում էին կալանդները: Լսվում էր հոգնատանջ, ուժասպառ եղած մարդկանց ծանր, լարված շնչառությունը: Արդեն մի քանի ժամ էր անցել առավոտից, բայց թմբուկը անլուելի դղրդում էր, հա՛ դղրդում՝ տամ-տամ-տամ, տամ-տամ-տամ... Ավելի ու ավելի հաճախ... Ստիպում էր, հրամայում՝ թիավարի՛ր, թիավարի՛ր: Որքան ուժ կա ձեռքերումդ՝ թիավարի: Այլապե՛ս...

Թիավարների գլխավերևում շաշեց խարազանը և դադեց, փոթոթեց նրանց, ովքեր Աբդուռահմանի կարծիքով դանդաղում էին, հարկ եղածի պես ջանք չէին թափում: Վերակացուն անողոք էր: Նա ինքը մի քանի տարի թիավար էր եղել, ինքն էլ շատ անգամ էլ ծեծվել և հիմա, վախենալով դրկվել ազատ ու կուշտ կյանքից, ճիգ էր թափում հաճոյանալ կապուղան փաշային նրանով, որ իր նախկին դժբախտության ընկերներին հարկադրում էր թիավարել, ինչքան որ ուժ ուներ: Նրա ճարպոտ գեմքը փայլում էր քրտինքից. արևը ավելի ու ավելի վեր էր բարձրանում և գերիների նեղլիկ բնակատեղին անտանելի հեղձուկ էր դառնում: Բայց սպանցքները, որոնցից ժամանակ առ ժամանակ մի քիչ թարմ օդ էր ներխուժում, գրեթե չէին մեղմացնում տոթը:

Աբդուռահմանը ճակատից մաքրեց քրտինքի կաթիլները, նայեց Զվենիգորային՝ ծանր ու մոռյլ հայացքով: Արտենը հենց այդ միջոցին մի երկու խոսք փոխանակեց Սպիրասուլու հետ. և յե՛հ սրամիտ պատասխանը ուրախացրեց կնպակին: Թեթև մի ժպիտ հայանվեց նրա շուրթերին:

— Ա-ա-ա՛, նորեկ, գլավուր խոզ, գարշելի էջ: Ծիծաղում

ես, հա՞... Ես քեզ կստիպեմ աշխատել, ինչպես պետքն է,— գոռաց վերակացուն և մի քանի անգամ մտրակով շրխկացրեց դերու թիկունքին:

Սուր ցավը դաղեց, մղկտացրեց կազակի մարմինը: Զվենիգորան սարսուռաց: Աչքերը մթնեցին վիրավորանքից: Նա թիավարում էր ինչպես միշտ, նույնիսկ ավելի ուժեղ, քանի որ նա համեմատաբար ավելի շատ ուժ ուներ, քան բազում տարիներ թիերի մոտ նստած նիհար, հալից ընկած գերիները: Կատաղությունից դիտակցությունը մթագնեց: Թին բաց թողնելով, իրեն կորցրած, նա վրա պրծավ Աբդուռահմանին: Զրնգաց շղթան, և կալանդները ցավադին խրվեցին ոտքերի մեջ, բայց, այնուամենայնիվ, բռունցքը, որի մեջ Արսենը դրեց իր ողջ ուժն ու ատելությունը, հասավ վերակացուի ծնոտին: Կայծակնային հարվածը հաստափոր Աբդուռահմանին շրմփոցով տապալեց տախտակամածին: Նա ետ թռավ ու գլխով ուժգին զարկվեց պատին:

Դա այնքան անսպասելի եղավ, որ գերիները դադարեցրին թիավարելը: Թիերը խճճվեցին իրար: Գալերան նկատելիորեն սկսեց դանդաղեցնել ընթացքը: Աբդուռահմանը երկար անշարժ պառկած մնաց, միայն բերանը լայն բացած, չղաձգորեն օդ էր կուլ տալիս: Հետո ծանր տնքաց ու աչքերը բաց արեց:

Բոլոր թիավարները գլուխները շրջեցին և զարմանքով ու ահով նայեցին Զվենիգորային ու վերակացուին, որը ոչ մի կերպ չէր կարողանում տեղից վեր կենալ, միայն ցնորվածի պես կլոր, դուրս պրծած աչքերն էր բացուխուփ անում:

— Տեր աստված, Արսեն, էս ի՞նչ արիր,— բացականչեց զարմացած Սպիխալսկին և ցցեց վաղուց շխուզված շեկ քեղերը:— Ախր նա, էդ սատանի ծնունդը, հիմա կսպանի քեզ:

Ռոմանը լուռ էր, բայց նրա դեմքին էլ սարսափ կար:

Ծանր շնչելով՝ Զվենիգորան նստեց տեղը: Դողդոջուն ձեռքերով, ասես արջաններով, սեղմեց թիակի կոթը: Հասկացավ, որ հարկավոր է խելքը գլուխը հավաքել, հանգստանալ և մի բան մտածել, այլապես Աբդուռահմանը իսկապես որ կսպանի իրեն, մտրակով ծեծամահ կանի: Բայց ոչ մի խելացի բան չկարողացավ որոշել: Ասենք էստեղ էլ ինչ մտածես: Դրա հետ

միասին կատաղությունից ու հուզմունքից աչքերի առջև դեռ կարմիր օղակներ էին վառվում:

Այդ ընթացքում Աբդուռահմանը ուշքի եկավ և դանդաղ, մեջքը պատին հենելով, ոտքի ելավ: Պղտոր հայացքը գրեց անշարժ, մի տեսակ արտասովոր լարվածության մեջ քարացած թիավարների վրա: Թվաց, նա շհասկացավ ինչ է կատարվել իր հետ, և գերիններն ինչու են դադարեցրել թիավարելը: Հարվածը շմեցրել էր նրան: Գլուխը դեռ դժժում էր:

Բայց ահա նրա հայացքը ընկավ Զվենիգորային: Զար, քինոտ ծամածուծությունն աղավաղեց նրա բլիթի պես կլոր դեմքը: Նրա ողջ կարճիկ կերպարանքը լարվեց, իսկ ձեռքը ամուր կառնեց մտրակի կոթից:

Նա ուզեց մոտենալ, բայց հավանաբար հիշեց, թե քիչ առաջ ինչով վերջացավ իր ընդհարումն այդ նորեկի հետ, կանգ առավ ու բացեց ճերմակ ատամները:

— Գյավուր, գյավուրի շուն, շիինի՞ մտքովդ անցնում է, թե ալլահը քեզ անմահություն է պարգևել: Գու սխալվում ես: Քո մահը իմ մտրակի ծայրին է, ողորմելի, ստրուկ,— շարությամբ խոխոացրեց Աբդուռահմանը և հեռվից գազանաբար սկսեց ձաղկել Զվենիգորային:— Ա՛ն քեզ, ա՛ն քեզ... Կերա՞ր...

Արսենը ձեռքերով բռնեց գլուխը, կուռ եկավ: Սպիտակակին ու Վոյնովը աղմուկ-աղաղակ բարձրացրին: Նրանց միացան մյուս գերիները: Տարբեր լեզուներով, քանի որ այստեղ մարդիկ կային անընդգրկելի Օսմանյան կայսերության բոլոր ծայրերից և նրան սահմանակից շատ երկրներից, անեծքներ տեղացին:

— Աբդուռահման, արնախում շուն, էդ ի՞նչ ես անում,— լավեցին նավախելից:— Մոռացե՞լ ես, որ դու էլ ես թիավար եղել: Սպասիր, քո սև օրն էլ կգա:

— Կեղտոտ էջի ծնունդ:

— Ստոր արարած: Խոզերի լափ դառնաս դու:

— Ստամբուլցի գող, ավազա՛կ...

Բոլոր կողմերից լսվում էին վիրավորական բացականչություններ, հայհոյանքներ, բայց Աբդուռահմանը ուշադրություն չէր դարձնում դրանց: Հայհոյանքներն է՛լ ավելի կատաղեցրին նրան, և նա, խելքը թոցրած, աղցան շինեց Զվենիգորա-

յին: Գուցեն կսպաներ կազակին, եթե աստիճանների վրայից ոտնաձայներ չլսվեին: Մի քանի մարդ արագորեն ցած էին իջնում:

— Ի՞նչ է կատարվում էստեղ, ինչո՞ւ չեն թիավարում էս անիծված խոզերը, — լսվեց մի բարձր տիրական ձայն: — Ո՞ւր է Աբդուռահմանը: Ալլահի կրակը նրա գլխին թափվի:

Աբդուռահմանը հեռացավ Զվենիգորայից, ձգվեց՝ մտրակը ձեռքի մեջ սեղմած: Վայրկենապես դեմքից անհետացավ դատան, կատաղի ծամածուծությունը: Բոլորը տեսան, թե ինչպես են դռնում նրա ծնկները: Իսկ ներքևի ծնոտը սկսեց ուռչել ու ցած կախվել:

— Ստրուկները խռովություն են բարձրացրել, մեծապատիվ կապուղան փաշա Սեմեստաֆ, — բլբլացրեց նա խզված ձայնով: — էս անիծված գյավուրը գրգռեց սրանց, էս գառնի շունը, սրա հոտած գլուխը սատանեքի փայ դառնա, հա՛:

Վերակացուն մտրակի կոթով բոթեց Զվենիգորայի կողը: Կապուղան փաշա Սեմեստաֆը իջավ աստիճաններից և կանգ առավ Աբդուռահմանի դիմաց: Դա բարձրահասակ, տարեց, մի թուրք էր՝ ալեհեր մորուքով ու գեղեցիկ դեմքով: Նույնիսկ կարմիր շերտով այտը հատող սպին այդ գեղեցկությունը շէր աղավաղում:

— Մի՞թե քիչ գավազաններ կան իմ նավում, որպեսզի էս հայվաններին ստիպենք աշխատել ինչպես պետքն է, — մուսլորեն հարցրեց Սեմեստաֆ փաշան:

— Հենց էդ էլ ասում էի ձեր գալուց առաջ, պայծառափայլ փաշա, — խոնարհվեց Աբդուռահմանը: — Բայց էս գյավուրը խփեց դեմքիս:

Սեմեստաֆ փաշան մի հայացք գցեց Զվենիգորայի վրա: Այդ հայացքի մեջ ոչ հետաքրքրություն կար, ոչ շերմություն. այդպես նայում են այն իրին, առարկային, որը չգիտես ինչպես է ոտքի տակ ընկել, կամ համառ, կամակոր անասունին, որին հարկավոր է հնազանդեցնել:

— Նավի վրա խռովության պատիժը մահն է: Բայց մենք հո չե՞նք սպանի էս անհնազանդ էշերին. սրանց խարազանի մի քանի հարվածն էլ բավական է: Ա՛յ, էս ստահակին այնպես հասցրու, որ խելքի գա, բայց պահպանի ուժը թիավա-

բելու համար: Մովում ինձ կենդանի թիավարներ են պետք ոչ թե մեռած:

Բայց ի զարմանք փաշայի, գերին շտկվեց, հպարտորեն գլուխը բարձրացրեց ու մաքուր թուրքերենով ասաց.

— Հարգելի փաշան սխալվում է՝ ինձ էլ համարելով: Չնայած ես այսօր գերի եմ, բայց մարդկային արժանապատվութիւնս չեմ կորցրել, ինչպես այդ խոզ Աբդուռահմանը: Ուստի գերադասում եմ մեռնել, քան անտեղի վիրավորանքներ տանել:

Կապուղան փաշան անսքող հետաքրքրութեամբ զննեց գերուն: Աբդուռահմանը նույնպես աչքերը չոնց՝ գերի գլավորի բերանից ընտիր թուրքերեն խոսք լսելով:

— Դու թո՞ւրք ես, — հարցրեց Սեմեստաֆ փաշան: — Ո՞նց ես ընկել այստեղ:

— Ես վաճառական եմ, մեծապատիվ փաշա: Ինձ նենգութեամբ բռնեցին իմ թշնամիները և ստրկութիւն տվեցին: Այգպիսի բախտ կարող է վիճակվել ամեն մի ուղղահամարի, որից երես է թերում ալլահը. թող փառավորվի անունը նրա:

— Անունդ ի՞նչ է:

— Քուլուկ էֆենդի: Իբրահիմ Քուլուկ, վաճառական և որդի վաճառականի, իսկ հիմա՝ գերին մեր սլայծառափայլ փաղիշահի. թող որ նա տասը հազար տարի ապրի:

— Հը՛մ, հետաքրքիր է, — մոթմոթաց Սեմեստաֆ փաշան: — Իսկ հայրդ հարո՞ւստ է:

— Այնքան հարուստ է, որ կարող է «Սև վիշապի» նման այսպիսի մի նավ գնել իր բոլոր թիավարներով:

— Օ՛հ, — դուրս թռավ փաշայի բերանից: — Հապա ինչո՞ւ քեզ չի փրկագնում:

— Նա չգիտե, թե ուր եմ կորել: Իսկ ես չեմ կարող իմ մասին տեղեկացնել նրան: Ինչպես, հավանաբար, կռահում է մեծապատիվ փաշան, իմ վիճակի մեջ դժվար է այդ բանն անել: Բացի դրանից, հայրս, ալլահը թող երկար կյանք տա նրան, ապրում է կյախիստանի Կամենեց քաղաքում, որի պարիսպների մոտ մեր անպարտելի խանդբարը փառքով պսակեց իր անունը՝ շտեանված հաղթանակ տանելով անհավատների դեմ:

Զվենիգորան ջանում էր փաշային շահագրգռել, որպես

վաճառականի որդու՝ իրեն փրկագնելու հնարավորութեամբ: Դրանով նա մի նպատակ էր հետապնդում՝ ապահովել նրա հովանավորութունը Աբդուռահմանի առաջ, որը վառվում էր իրեն ծեծամահ անելու կատաղի ցանկութեամբ: Անշուշտ, վաղ թե ուշ սուտը կբացվեր, և այն ժամանակ, մեկ էլ տեսար, փաշան ինքը կհրամայեր սարսափելի տանջանքների ենթարկել խաբեբային կամ նույնիսկ մահապատժի ենթարկել: Սակայն հեռավոր ապագան քիչ էր անհանգստացնում կազակին: Կարևորն այն էր, որ խուսափեր անմիջական վտանգից: Իսկ թե ինչ կլիներ մեկ կամ երկու տարի հետո, Զվենիգորան նույնիսկ մտածել չէր ուզում:

— Ահա թե ինչ, Քուչուկ աղա, — ասաց փաշան, — մենք գնում ենք Քիլիա: Այնտեղ ես կաշխատեմ գտնել մի մարդու, որը քո մասին լուր կտա հորդ: Թող փողը պատրաստի: Բայց այնքան ժամանակ, քանի դեռ ես ստույգ չեմ իմացել, թե որքան կտա քեզ համար, դու նստած կմնաս այստեղ և կթիավարես բոլորի հետ հավասար: Իսկ եթե անհնազանդութուն ցուցաբերես, Աբդուռահմանը իսկույն կզսպի քեզ... Լսո՞ւմ ես, Աբդուռահման:

— Լսում եմ, ողորմած փաշա, — աղեղի պես կռացավ վերակացուն և շարութեամբ աչքի տակով նայեց գերուն:

— Իսկ հիմա՝ գործի, անպետք խոզեր, — անսպասելիորեն գոռաց փաշան, — եթե ուզում եք ձեր մի շանախ չորբան ստանալ... Աբդուռահման, մի՞թե քո խարաղանն այդքան թեթև է, որ չի կարողանում ստիպել էս հայվաններին՝ ավելի արագ շարժվել:

Աբդուռահմանը հենց այդ հրամանին էր սպասում: Խարաղանը բարձրացրած՝ նա հարձակվեց թիավարների վրա: Աչ ու ձախ տեղացին հարվածները.

— Թիերը գործի դրեք, նզովյալներ, թիե՛րը:

Գերիները հապճեպորեն սկսեցին թիավարել: Ամեն մեկն աշխատում էր խույս տալ հարվածից, Բայց Աբդուռահմանը ոչ մեկին բաց չթողեց, բոլորին բաժին հասցրեց, բացի Զվենիգորայից, որին առայժմ վախեցավ ձեռք տալ, չիմանալով, թե փաշան ինչպես կվերաբերվի դրան:

Յերեկները ծանր էին անցնում, իսկ գիշերները՝ ավելի ծանր: Հանգստի կարճատև պահերին, երբ նավը տարվում էր հոսանքով կամ գնում էր առագաստներով, եթե համընթաց քամի էր փչում, գերիները անցկացնում էին հենց այստեղ, լայն նստարանների վրա: Անմարդկային ճիգերից ուժասպառ եղած, քաղցած՝ նրանք երկար ժամանակ չէին կարողանում քնել, հառաչում էին, տնջում, աղոթում կամ կամացուկ անիծում իրենց բախտը:

Զվենիգորային գիշերները տանջում էին մղձավանջները, ծվատում էին սև, մռայլ մտքերը...

Չորս կողմը մութ էր, տոթ: Նավեզրից այն կողմ լսվում էր ալիքների խուլ թշուրջը, մեկ էլ գերիների խումփոցն ու տնջտնջոցը: Զվենիգորան հոգոց հանեց, թևքով սրբեց դեմքը ու հայացքը հառեց ցածրիկ տախտակե առաստաղին: Երկար պառկեց բաց աչքերով, փորձեց քնել, բայց չկարողացավ: Գըլխում խռնվել էին մտքերն ու հիշողությունները: Աչքի առաջ երևացին մայրը, Ստեշա քույրը, ծերունի պապը, որոնք, հավանաբար, իրեն ողջ տեսնելու հույսն էլ էին կորցրել, հիշեց Զլատկային... Բայց ում դեմքն էլ որ պատկերում էր նրան, անցյալի ինչպիսին տեսարան էլ որ անցնում էր նրա հայացքի առջևով, նա չէր կարողանում երկար վայելել, զմայլվել դրանցով, քանզի իսկույն նրան տիրում էր համառ, անդադրում, այրող միտքը՝ ինչպե՞ս ազատվել: Մի՞թե իրեն վիճակված է ամբողջ կյանքը թիանավի վրա անցկացնել: Մի՞թե փախուստի հնարավորութուն չի ներկայանալու:

Զգուշությամբ, որպեսզի ընկերներին չարթնացնի, Զվենիգորան վեր կացավ, նստեց տեղում և մտքում մեկ առ մեկ սկսեց քննել ազատադրվելու բոլոր հնարավոր տարբերակները:

Նավի վրա կհարձակվեն զապորոժցիները և կգրավեն: Ահա և ինքն ազատ է... Բայց արդյո՞ք կհարձակվեն: Արդյո՞ք ստիպված չի լինի սպասել դրան տասը, իսկ գուցե և քսան տարի և, վերջապես, առանց այդ օրվան հասնելու, մեռնի հուսահատության մեջ:

Գուցե ատաման Սերկոյի ոսկիների՞ց օգտվի... Բայց ինչպե՞ս: Եթե Սեմեստաֆ փաշան իմանա, պարզապես կխլի:

Գոտին ոսկիների հետ զուր տեղը կկորչի: Բացի դրանից Ռոմանն ու Սպիրիալսկին կմնան գերության մեջ: Իսկ դա նրա մտքով էլ չի անցնում: Եթե պետք է ազատվեն, ապա անպայման միասին:

Սպանել պահակներին և նավը գրավե՞լ... Մտածելը հեշտ է, բայց անելը դժվար. ոչ մի հնարավորություն չկա: Ամենից առաջ այդ անիծյալ կալանդների, շղթաների պատճառով, որի վրա շարել են իրենց, ինչպես ձուկը թելի վրա:

Պարզ դարձավ, որ փրկության միակ ճանապարհը շղթան կտրելն է: Մանր երկաթակուռ շղթան անցնում է թիավարների ոտքերի կալանդների միջով, օձի պես գալարվում է նըստարանների տակով և ոչ մի գերու թույլ չի տալիս թեկուզ մի քայլ հեռանալ իր տեղից:

Զվենիգորան մթության մեջ շոշափեց մի քանի օղակներ, բարձրացրեց դրեց ծնկին: Սովորական շղթա էր, որից լիքն էր Սեչում. դրանք կոում էին դարբնոցներում զանազան տընտեսական կարքների համար: Այստեղ սա միայն շղթա չէ, այլ թշնամի, որին անհրաժեշտ է հաղթել:

Բայց ինչպե՞ս:

Իրարից պոկե՞ս: Զևս պոկի: Պետք է ջարդես կամ սղոցես: Ինչո՞ւ:

Հապա ի՞նչ անել:

Զվենիգորան տասնյակ զանազան միջոցներ մտածեց, ծանրութեթև արեց: Սակայն ոչ մի խելացի բան չգտավ: Անզոր կատաղությանը շղթան փաթաթեց ձեռքերին ու ձիգ տվեց թափով... Երկաթը դրդաց, զրնգաց, ասես ծիծաղեց նրա անմիտ, անհեթեթ ճիգերի վրա: Նա շղթան շարտեց ոտքերի տակ, մթության մեջ անօգ ժպտաց իր միամտության վրա և, գլուխը բռնելով, մեկնվեց նստարանին:

Բայց մտքերը կրծում էին ուղեղը, ինչպես որդը ծառն է կրծում:

Այ, եթե մի կտոր ավազաքար ճարեր, դրանով քիչ-քիչ կարելի էր մաշեցնել օղակներից մեկը: Ո՞նց չէ: Որտեղի՞ց կճարես: Գերիներին թույլ չեն տալիս ափ դուրս գալ: Թուրքերից ոչ մեկը այդպիսի ծառայություն չի անի... Ուրեմն էլ ինչո՞ւ ես սին հույսերով մխիթարում քեզ...

Հանկարծ հիշեց, թե ինչպես տանը, դեռ Կամենեցում, մի

անգամ շունը պոկեց շղթան ու հարձակվեց բակ մտած մուրացկաններին վրա: Արսենն այն ժամանակ դեռ երեխա էր, բայց մինչև հիմա հիշում է, թե ինչպես խոշոր, փուշտ Գնչուն պոկվեց տեղից ու նետվեց դեպի մուրացկանները, ինչպես զրնգաց լարի պես ձգված շղթան, ինչպես գոռգոռացին վախեցած աղքատներն ու գավազաններով պաշտպանվեցին շնից: Հայրը դուրս թռավ արհեստանոցից և, շանը քարշ տալով, նորից իր բույնը մտցրեց: Մուրացկանները ասես երկինք համբառնեցին, իսկ հայրը, կատարվածից զարմացած, գետնից վերցրեց շղթան:

Շղթայի օղակները միացման տեղերում աջնպես էին մաշվել ժամանակի ընթացքում, որ տերևից էլ բարակ էին:

— «Տես է՞», — զարմացավ այն ժամանակ մանչուկը: — էսքան պինդ երկաթը ոնց է մաշվել»:

«Ժամանակը երկաթն էլ է ուտում, տղաս», — պատասխանեց հայրը և մուրճով կեռիկը բացեց, որպեսզի շղթան տա դարբնին՝ նորից կռելու:

Այն ժամանակ Արսենը չհասկացավ, թե ժամանակն ինչպես կարող է երկաթ ուտել: Իսկ հիմա, հիշելով այդ դեպքը, քիչ մնաց ճշար ուրախությունից, նույնիսկ տեղից վեր թռավ: Ցնցեց Սպիրալսկուն և Ռոմանին, արթնացրեց ու շնչաց:

— Վեր կացեք: Դե վեր կացեք ասում եմ: Հերիք է քնեք, գրողը ձեզ տանի:

— Ի՞նչ է պատահել, Արսեն: Ուտելի՞ք են տալիս, — քնաթաթախ շվշվացրեց Սպիրալսկին: — Բայց, ախր, շուտ է դեռ: Շան ծնունդներ:

Զվենիգորան ձեռքով փակեց նրա բերանը:

— Սը՛սս-ս, պան Մարտին... Մտքովս մի բան է անցել... Զէի՞ք կամենա էդ մասին իմանալ:

— Այ հարամ լինի գլխիդ, հա՛... Բա դրա համար գիշերով մարդուն քնից կհանե՞ն, — բարկացավ Սպիրալսկին՝ բարձր հորանջելով:

— Սուս մնա, պան Մարտին, — ջղային շնչաց Ռոմանն անկյունից: — Թող կարգին լսենք: Խոսիր, Արսեն:

Զվենիգորան թեքվեց նրանց կողմը ու փսփսաց:

— Բարեկամներ, փախչել, երևի, շուտ չի հաջողվի մեզ, բայց հարկավոր է պատրաստ լինել դրան: Տեսեք, ինչ եմ

մտածելու Այսպես, ուրեմն, հարկավոր է քաջուն տրորել, մաշեցնել շղթան, որպեսզի հարմար ժամանակ կտրենք ու փախչենք գալերայից կամ կուլի բռնվենք թուրքերի հետ: Դա մեր միակ հույսն է, ազատութեան միակ ճանապարհը:

Եվ Ռոմանն ու Սպիրալսկին բռնեցին Արսենի ձեռքերը:

— Ինչպես թե, բեզ մոտ շղթան սղոցելու բան կա՞:

— Չէ՛, բարեկամներ, ինձ մոտ ոչինչ էլ չկա... Բայց մեր համբերութիւնը երկաթն էլ կմաշի: Միայն մի օղակը կմնջենք՝ երկաթը երկաթին շփելով: Դուք երբևիցե հին շղթա տեսե՞լ եք: Չե՞ք նկատել, ինչպես մի բանի օղակներ այնքան են մաշվում, որ մեզ նման աժդահա կազակների համար դրա կտրելը հեշ բան է:

— Էս շղթան մաշե՞լ կլինի,— հիասթափված շշնջաց Սպիրալսկին:— Օ՛ տիրամայր:

— Իհարկե, ոչ մեկ, ոչ էլ երկու օրում, պան Մարտին: Գուցե կես տարում, գուցեև մեկ տարում... Մի օր չէ մի օր երկաթը պետք է որ մեզ հնազանդվի... Ուրիշ ի՞նչ կարող ենք անել: Մինչև մահ նստենք թիերի մո՞տ: Կամ գուցե, դու ավելի՞ լավ բան ես մտածել:

Սպիրալսկին միայն փնջացրեց:

Իսկ Ռոմանը արագ-արագ վրա տվեց.

— Իսկապես որ ուրիշ ելք չունենք: Եվ ինչքան շուտ սկսենք, այնքան լավ: Այսօր, հենց հիմա: Ես պատրաստ եմ գիշերը շքնել: Մինչև լույս կաշխատեմ: Էն էլ ո՞նց: Մինչև վաբդապետի խազը: Իսկ հաջորդ գիշերը՝ Զվենիգորան, հետո էլ՝ դու, պան Սպիրալսկի: Էսպես հերթով կփոխարինենք մեկս մյուսիս: Դե ինչպե՞ս է:

— Խելոք բան ես ասում, Ռոման,— գովեց Զվենիգորան:— Կաշխատենք միայն գիշերները:

— Գիշերով ինչպե՞ս գտնենք այն օղակը, որը պիտի մաշենք,— հարցրեց Սպիրալսկին:— Մենք հո կատվի աչք չունե՞նք:

— Է՛, թող միայն դա լինի դժվարը,— ասաց Զվենիգորան:— Հարեան օղակին մի լաթի կտոր կկապենք, դա էլ նշան կլինի:— Եվ պոկեց տաբատի նեղ եզրաշերտը:

Ամառն անցավ: Աննկատելիորեն վրա հասավ աշունը՝ սուր քամիներով ու տաղտկալի, մանրամաղ անձրևներով: Մովը դարձավ մռայլ, անհյուրընկալ: Նրա մակերեսից անհետացավ աչք շոյող, հաճելի լազուրը: Փոխարենը ավելի հաճախ էին հայտնվում փրփրաբաշ ալիքները, և ծանր սառը շիթերը թռչում էին տախտակամած, թափվում թիավարների վրա:

Գերիներին հին, ծակծկված կաֆտաններ ու բեշմետներ տվեցին, բայց դրանք ցրտից ու թանձր, խոնավ մառախուղներից չփրկեցին: Մարդիկ սառչում էին, փայտանում: Շատերին խեղդում էր հազը, և թիավարները հազում էին անվերջ, անդադար, հոգիները բերաններն էր գալիս:

«Սև վիշապը», ինչպես մյուս թուրքական ռազմական նավերը, ամբողջ ամռանն ու աշնանը երթևեկում էր Ստամբուլի և Դնեպրի, Դնեստրի ու Դանուբի գետաբերաններին ընկած ամրոցների միջև: Թուրքիան մեծ պատերազմ էր մղում Ռուսաստանի և Ուկրաինայի դեմ, Չիզիրիխի մոտ, և մեծ վեզիր Իբրահիմ փաշայի հարյուր հազարանոց զորքը պահանջում էր օգնական ուժեր, մեծ քանակությամբ զինամթերք և ուտելիք: Այդ ամենը տեղ էր հասցվում ծովով, գերիների ձեռքերի ուժով:

Ծողարձին բերում էին վիրավորներին, Ուկրաինայում թալանած հարստությունը և եսիր՝ կենդանի ապրանք:

Ամառվա վերջին, երբ Իբրահիմ փաշան սկսեց պարտություն կրել, «Սև վիշապը» ծեծված, հալ ու մաշ եղած զորքին փոխադրեց Բուլղարիա՝ ձմեռային զորանոցներ:

Գերիները դադար չունեին: Սեմեստաֆ փաշան, կամենալով աչքի ընկնել, ջանում էր մյուս նավերից ավելի արագ կատարել յուրաքանչյուր ուղերթը, դրա համար էլ պահանջում էր, որ վերակացուները քամեին թիավարների ողջ ուժերը:

Աբդուռահմանը կատաղել էր, ինչպես երբեք: Կարծես սատանա էր մտել մեջը: Նա տախտակամածին դեսուդին էր վազվզում, անեծքների ու հայհոյանքների տարափ տեղում, անխնա ծեծում էր յուրաքանչյուրին, ով թեկուզ մի ակնթարթ թուլացնում էր ճիգերը կամ մի խոսք էր փոխանակում հարե-

վանի հետ: Իր նախկին խարազանը նա փոխարինել էր ասպիրակով ու մամուխով: Պինդ խրձով կապված ասպիրակի ու կոշտ մամուխի ճիւղտոտները, ծածկված ասեղի պես ամուր ու սուր փշերով, կախված էին նրա խցիկի պատերից: Վարդագույն ասպիրակը, որ խիտ թփուտներով ծածկում էր ձորալանջերն ու իր հաճելի գույներով աչք էր շոյում, գերինների համար դարձել էր զարհուրելի կտտանք: Մանր ճիւղտոտները իրենց փշերով ծվատում էին մարմինը նույնիսկ ձմեռային հաստ, պինդ շորերի տակից: Ամբողջ ամառը Աբգուռահամանը Զվենիգորայի կողքով անցավ, հիշելով նրա խոսակցությունը Սեմեստաֆ փաշայի հետ, շնայած որ շարությամբ լի հայացքներ էր գցում նրա վրա: Բայց դա շարունակվեց միայն մինչև աշուն, մինչև այն օրը, որի մասին Զվենիգորան մտածում էր, թե կգա ոչ շուտ, քան մեկ կամ երկու տարուց հետո:

Այդ օրը Սեմեստաֆ փաշան իջավ գերինների մոտ, մերթընդ մերթ հայացք գցելով նավի բոլոր անկյունները, և Զվենիգորային ասաց.

— Քուչուկ տղա, ես տեղեկություն անա կամենեցից... Պարզվում է, որ այնտեղ իսկապես կան մի քանի թուրք վաճառականներ, բայց, դժբախտաբար, ոչ մի Քուչուկ չկա նրանց մեջ: Դա ինչո՞վ կբացատրի Քուչուկի տղան:

Զվենիգորան բնավ չէր սպասում, որ փաշան այդքան շուտ կբացի իր սուտը, և, հանկարածակիի եկած, մի պահ կարկամեց.

— Ինչպե՞ս թե չկա... Մի՞թե նա... մեռել է:

— Է-է՛, բանն այն է, որ նա իսկի էլ չի մեռել: Քուչուկ վաճառականը չէր կարող մեռնել, քանի որ ընդհանրապես գոյություն չի ունեցել աշխարհում, ողորմելի ստրուկ: Ես հավատացի բեզ, թշվառական, և հատուցեցի իմ միամտության համար. բանբերին մի քանի դուրուշ գցեցի, որոնք, ինչպես հույս ունեի, պետք է վերադառնային ինձ բազմապատկված: Իսկ հիմա գիտեմ, որ ընդմիշտ կորցրի դրանք:

Այդ ժամանակ Աբգուռահամանը կանգնած էր նրանց ետևվում և ուշադիր ականջ էր դնում դրույցին: Նրա տափակ դեմքին հաղթական շարախնդություն նշմարվեց:

— Տարօրինակ է,— իբր խորհելով՝ ասաց Զվենիգորան:— Իսկ այդ մարդը չէ՞ր կարող սխալվել, էֆենտի:

— Զեմ կարծում: Նա առաջին անգամ չէ, որ կատարում է իմ հանձնարարությունը:

— Այնուամենայնիվ, Կամենեցում խաբել են նրան:

— Ուվբե՞ր: Ինչի՞ համար:

— Իմ թշնամիները, որոնք ինձ վաճառեցին ստրկություն:

— Ես այլևս չեմ ուզում քեզ վրա ծախս անել, ստրուկ: Հերիք է: Հիմա ինքդ ուղիներ փնտրիր, որպեսզի լուր տաս հարազատներիդ... — շարտեց փաշան և, կտրուկ շրջվելով, դուրս գնաց:

Այդ նույն օրվա երեկոյան Աբդուռահմանը զաղանաբար ծեծեց Արսենին: Պատճառ չփնտրեց էլ իսկի: Պարզապես գտավ, որ եկել է նրա ժամանակը: Վերցնելով ամուր ու երկար ասպիրակի ճիպոտը, նա թուով դեպի կաղակը և թափով հարվածեց մեջքին: Բարակ փշերը խոր մեխվեցին մարմնի մեջ: Արսենը ճշաց անսպասելի ցավից, կոացավ, կուշ եկավ: Իսկ հարվածները տեղացին իրար ետեից...

Ասպիրակի ճիպոտը կարմրեց արյունից:

Աբդուռահմանի ձեռքերն ու շորերը ծածկվեցին արյան բծերով: Նա հաճույքով էր ծեծում գերուն, երկար էր սպասել այդ պահին ու հիմա վրեժ էր լուծում և՛ այն բանի համար, որ գերին խփել էր իրեն, և՛ այն ժամանակ իր կրած ստորացման համար:

Վոյնովն ու Սպիխալսկին սկսեցին զոռզոռալ: Նրանց պաշտպանեցին մյուս գերիները: Նրանց բարձրացրած ադմուկի վրա վազելով եկած նավատերը մի կողմ քաշեց Աբդուռահմանին և արնաշաղախ ասպիրակը զզվանքով շարտեց մի մութ անկյուն:

Զվենիգորան ցավից խելքը թոցրել էր: Ամբողջ մեջքը ծվեն-ծվեն էր եղել և վառվում էր կրակի պես: Ատամները սեղմած, որպեսզի չգոռա, նա հազիվ էր սրահում թիակի կոթը: Բաց թողնել չէր կարող. դա նոր խոշտանգումների առիթ կտար Աբդուռահմանին: Սպիխալսկին ու Վոյնովը նրա փոխարեն էլ էին թիավարում:

Այդ գիշեր շղթան քերելու հերթն Արսենինն էր, բայց նա ոչ միայն աշխատել, այլ նույնիսկ քնել չէր կարող: Պառկել էր փորի վրա և, աչքերը լայն շոած, նայում էր խավարին: Ռոմանը իր վրա վերցրեց Արսենի գիշերային աշխատանքը,

իսկ պան Մարտինը, թեև սիրում էր քնել, Աբղուռահամանի կատաղի հարձակումից ցնցված՝ չկարողացավ:

— Հարկավոր է մի բան մտածել, — եղբայրներ, — շընջաց նա: — Եթե մինչև ձմեռ շփրկվեցինք, ուրեմն, հավատացեք, մկնների պես կկորչենք էս նզովյալ թիանավի վրա: Գրողը տանի... Ես քեզ համար եմ վախենում, Արսեն... Աբղուռահամանը, էդ շան ծնունդը, քեզ օր չի տա, բարեկամ... Թո՛ւհ, գլուխս պայթում է մտածելուց, բայց ոչ մի խելացի բան չի գալիս միտքս:

— Դե էստեղ ի՞նչ կա մտածելու, պան Մարտին, — արձագանքեց Ռոմանը, ամբողջ ուժով տրորելով շղթան: — Շուտով կապանքներից կազատվենք: Էն ժամանակ էլ գուշակություններ կանենք... Արդեն քիչ է մնացել. կեսից ավելին մաշել ենք: Ահա մի քիչ էլ որ շարշարվենք, շղթան կկտրվի:

— Արի ու սպասիր: Իսկ մինչ այդ Աբղուռահամանը հին ժուպանի պես Արսենի կաշին կպլոկի... Ասենք՝ մերն էլ հետը:

— Ինչ արած, հարկավոր է կանխել նրան: Շանը պետք է խեղդել, քանի դեռ մեզ չի պատառոտել... Սրանից մի վեց տարի առաջ, երբ մեր հայրը՝ ատաման Ստենկա Ռազինը, Դոնում ու Վոլգայում շիլաշփոթ սարքեց և սկսեց ավերել բոյարական դաստակերտները, կառավարիչը, էդ արնախում շունը, տիրոջ մոտ շարախոսեց, թե ես տղերքին համոզում եմ, որ օգնության գնան Ռազինին: Պարոնը հրամայեց ինձ բռնել ու մահակներով ծեծամահ անել: Բայց թե ես էլ պակասը չէի: Հենց որ իմ հավատարիմ մարդիկ այդ մասին ինձ ասացին, ընկերներիս հետ դարանակալեցի կառավարչին, երբ նա տուն էր վերադառնում, բռնեցի ու կախեցի կեչու ծառից: Իսկ հետո սպասեցի մինչև մութն ընկավ, թաքուն մտա կալվածատիրոջ բակը, չոր խոտի դեզի տակ կրակ վառեցի ու մի լավ բորբոքեցի... Տասը վերստի վրա հրդեհը լուսավորում էր մեր ճանապարհը դեպի Դոն: Եվ ուրախ էի այն բանի համար, որ դատարկ ձեռքերով չէի գրնում փառաբանված ատաման Ռազինի մոտ...

— Հը՛մ, այ թե ինչ պտուղն ես դու, պան Ռոման, — մրմընջաց Սպիրիտսկին: — Իսկ ես չգիտեի՛... Համա թե բախտս բերում է ձեր հարցում, հա, թեթևսուլիկներ, կայծակը ձեզ զարկի... Մեկ պան Կվոչկային հանդիպեցի, լուս դառնա հո-

գին, հիմա էլ, ահա քեզ, Ռոման... Գուցե դու՞ էլ նրանց նման ես, պան Զվենիգորա: Հը՞:

— Բոլորս էլ նույն խմորից ենք, պան Մարտին,— ցավից կնճռտվելով՝ քթի տակ ծիծաղեց Զվենիգորան:— Բայց դու ավելի լավ է միտքդ դրանցով մի՛ զբաղեցնի: Մենք, մի խոսքով, բոլորս էլ լավ մարդիկ ենք...

— Հա՛, հա՛, հա՛,— հռհռաց Սպիրիսակին:— Ես դրան չեմ էլ կասկածել: Հիմա նույնիսկ ուրախացա այն մտքից, որ անպայման ավաղակության ու ազատության ոգի կստանամ ձեզանից: Իսկ երբ վերադառնամ հայրենիք՝ Լեհաստան, խոլոպներին կհանեմ ազնվատոհմ պաների դեմ և Կոստկա Նապերսկու՛ նման կգնամ շրջելու քաղաքներում ու շեներում: 0՞, պան Եզուս:

— Նախ մի էս ծակից դուրս գանք հետո, պան Մարտին:

— Դա էդպես է, որ կա. հարգելի պաներ... Այ, ես էլ մտածում եմ, թե պան Ռոմանը ինչո՞ւ հիշեց էդ պատմությունը: Լավ չի՞ լինի արդյոք, որ մենք էլ կանխենք Լեհոու-ոսհամանին և վերացնենք ավելի շուտ, քան նա մեր կաշիները կքերթի: Հը՞:

— Բա ինչ: Հրաշալի միտք է,— համաձայնեց Արսենը:— Մենակ թե թողեք մի քիչ խելքս գլուխս գա: Բայց շղթան որքան կարելի է պետք է շուտ մաշել: Փամանակը չի սպասում:

Նրանք դեռ երկար փսփոսացին մթության մեջ: Ոչ ոք ո՛չադրություն չէր դարձնում նրանց վրա, ոչ ոք նրանց փսփոսոցին ականջ չէր դնում: Միայն վերևում խուլ աղմկում էր քամին, ոռնալով նավի պարանասարքերի մեջ, մեկ էլ ասես ծովի խորքից սրտաճմլիկ ձայներ էին գալիս: Մերթ լավում էին գեթիների տնքոցները, որոնք զառանցում էին քնի մեջ, մերթ էլ կալանդներն էին զնգզնգում, երբ որևէ մեկը շուտ էր գալիս կամ ոտքերն էր երկարացնում:

¹ Կոստկա Նապերսկի (մոտ 1620—1651 թթ.)—1651 թ. Լեհաստանի գյուղաբնական ապստամբության առաջնորդ:

Հաջորդ օրը քամին սաստկացավ: Թիավարելը դժվարացավ: Նավը դեսուդեն էր նետվում օրորոցի նման:

Տախտակամածից լսվում էին նավի ավագների տազնապալից ձայները: Թիավարների խուցը հասնող հատուկենտ բառերից Ջվենիգորան մի բան հասկացավ. փոթորիկ է սկսվում: Նա այդ մասին իսկույն տեղյակ դարձրեց ընկերներին:

— Ռոման, ախպերս, ոնց ուզում ես արա, շղթան այսօր պիտի կտրվի: Ես ու պան Մարտինը մենակ կթիավարենք... Միայն զգույշ եղիր, որ Աբդուռահմանը հանկարծ չնկատի:

— Ի՞նչ կարիք կա վտանգի դիմելու,— զարմացավ Ռոմանը:

— Փոթորիկի ժամանակ ավելի հեշտությամբ կիրագործենք մեր մտադրությունը: Ասենք վերակացուին էլ հնարավոր կլինի բռնել: Տես ո՞նց է դես ու դեն ընկնում սատանան: Չի կարողանում իրեն պահել, մեկ էլ տեսար, իմ գրկում հայտնվեց: Հենց էդ ժամանակ էլ նրա վերջը կգա...

— Մի՛ հաշեք, շներ,— հեռվից գոռաց Աբդուռահմանը և մոտ վազելով Ջվենիգորային՝ մտրակի մի քանի հարված հասցրեց:

Գերիները գլուխները կախեցին և համերաշխ վրա ընկան թիերին:

— Դու դեռ սպասիր, շան ցեղ,— շշնջաց Սպիխալսկին,— հո կընկնես ձեռքս...

Ամբողջ օրը Ջվենիգորան ու Սպիխալսկին երկուսով բանեցրին ծանր թիերը: Ռոմանը, թիերի տակտի հետ օրորվելով, մոլեգնորեն իրար էր շփում երկաթե օղակները: Դրանք այրում էին ձեռքերը: Այդ ժամանակ նա թքում էր շիկացած մետաղի վրա և նորից, է՛լ ավելի մոլեգնած, շարունակում էր շփել:

Իրիկնադեմին «Սև վիշապը» զարկվեց ինչ-որ ստորջրյա խութի: Նավը ցնցվեց: Թիավարներին այնպես շարտեց, որ նրանք նստարաններից ցած ընկան: Մի քանի թիեր ճարճատյունով ջարդվեցին լուցկու նման: Աբդուռահմանը բերանքսնիվայր փռվեց գետնին ու էլ շքարձրացավ: Հսվեցին հուսա-

հատության ու սարսափի վայնասուններու ինչ-որ մեկը բարձր ձայնով սկսեց աղոթքի խոսքեր մը մնջալ:

Ռոմանը չկարողացավ բռնել թիակից, ճոճքը նրան մյուսներից ավելի ուժգին շարտեց մի կողմ: Նա ցած ընկավ նրստարանից, և, ձեռքերն առաջ մեկնած, որպեսզի գլուխը չզարկի կաղնե միջնապատին, դուրովեց նավի քթամասը: Ինչ-որ մի բան դադեց ոտքերը, աներևույթ մի ուժ պոկեց կալանդները մաշկի հետ միասին: Հենց նույն ակնթարթին Սպիխալսկին ցավից ճշաց: Նրա բամբ ձայնը կարծես խլացրեց և՛ գերինների հառաչանքները, և՛ ջարդվող թիերի ճարճատյունը, և՛ փոթորկի մոնչոցը:

Ոչ ոք անմիջապես գլխի շնկավ, թե ինչ պատահեց: Գերինները, ախուվախ անելով և կողերը տրորելով, դանդաղ վերելան տեղներից: Աբդուռահմանը սարսափից կանաչեց և գունատ շրթունքներով սկսեց աղոթք մը մնջալ:

Եվ այդտեղ հանկարծ բոլորը զգացին, որ նավը ճոճվում է ոչ առաջվա պես:

— Եղբայրներ սուղվում ե՛նք,— լսվեց մեկի վախեցած ձայնը:

— Սուրբ Մարիամ...— հոգոց հոնեց Սպիխալսկին:

Կրկին խելահեղ ճիչ ու աղաղակ բարձրացավ: Աբդուռահմանը նետվեց դեպի սանդուղքը և արագ-արագ վեր մագլցեց: Շուտով նա վերադարձավ նավատիրոջ հետ:

— Հանգի՛ստ,— բղավեց նավատերը:— Ի՞նչ եք գոռոռում, կատաղած էջեր: Նավը չի սուղվի: Փառք ալլահին, Սեմաստաֆ փաշան,— նրա կյանքը թող երկար լինի,— մեծ հմտությամբ նավը մտցրեց խաղաղ ծովածոց, և մենք էստեղ կսպասենք, մինչև փոթորիկը դադարի: Կարգի բերեք թիերը և բոլորդ գործի անցեք: Նավը հարկավոր է տանել անվտանգ տեղ, էնտեղ կգիշերենք:

Ազմուկ-աղաղակը դադարեց: Կոտրված թիերը մի կողմ շարտեցին: Գերիններն անցան իրենց աշխատանքին: Այլևս ոչ ոք նրանց վրա չէր գոռում, ոչ ոք չէր ծեծում, այժմ բոլորին համակել էր մահից փրկվելու ցանկությունը: Նույնիսկ Աբդուռահմանը կարծես սսկվել էր, և միայն աչքի տակով շարությամբ նայում էր թիավարներին:

Նորից թմբուկը զարկեց, սակայն նրա խուլ զարկերը այլևս

ժանր քարի նման չէին ընկնում գերիների սրտերին, ատելություն ու զզվանք չէին հարուցում. թվաց թե դրանք փրկություն են ավետում:

Զվենիգորան ու Սպիխալսկին նույնպես ամբողջ թափով կպան թիակներին: Իրականում միայն Սպիխալսկին էր թին ձգում, տնքտնքում էր, բայց ձգում էր, որպեսզի դուրս չընկնի համաշափ տեմպից, որպեսզի մյուսներից ետ չմնա: Արսենը շատ քիչ էր օգնում նրան. յուրաքանչյուր շարժումին ծվատված մեջքը այնպես էր ցավում, ասես բաց, արնածոր մկանների վրա տաք մոխիր էին լցնում:

Ռոմանն իր անկյունում տնտնում էր շղթայի հետ: Հանկարծ նա ցածրաձայն ծղրտաց.

— Եղբայրներ, պատրաստ է:— Ուրախությունից նրա ձայնը դողաց:— Տեսեք, շղթան կտրված է: Զուր չէ, որ քիչ էր մնում ոտքերս պոկեր... Զարհուրելի հարված էր:

Սպիխալսկին ուրախությունից վեր-վեր թռավ նստարանի վրա:

— Հա՛, սատանի ծնունդ: Վերջապե՛ս: Արսեն, ախպերս...

— Սըը՛ս: Հանգիստ, պան եղբայրներ,— շշնջաց Զվենիգորան միայն շրթունքներով:

— Ռոման, շուտ կպիր թիակին: Ոչ մի խոսքով, ոչ մի շարժումով չի կարելի մեզ մատնել: Հիմա առավել զգույշ պիտի լինենք... Կխոսենք գիշերը...

Ինքն իրեն չհավատալով՝ Ռոմանը դողդոջուն մատներով մի անգամ ևս շոշափեց շղթայի կտրված օղակը և բռնեց թիակը:

Դրսում մոլեգնում էր հյուսիսային քամին:

«Սև վիշապը», գիշերվա խավարում գրեթե աննկատելի, թեթևակի օրորվում էր բարձր բլուրներով եզերված ոչ մեծ, խաղաղ ծովածոցի ալիքների վրա:

Թվում էր ամբողջ նավը խորասուզված է քնի մեջ: Ժամապահները, ցուռկում և նավախելում, բաշլուղները ավելի խորն էին քաշել, պինդ փաթաթվել էին երկարափեշ աբա-

ների՝ մեջ և, խցկվելով քամուց պաշտպանված խորշերը, հանգիստ ննջում էին: Նեղվածք ու անձուկ խցիկներում խորմփացնում էին ենիշերիները: Ներքևի տախտակամածում ժամանակ առ ժամանակ քնի մեջ շղթաներն էին զնգացնում գերիներ:

Քնած չէին միայն Զվենիգորան, Վոյնովը և Սպիխալսկին: Լուռ պառկած էին խավարի մեջ: Սպասում էին, մինչև բոլորը քնեին:

Քամու ձիգ ոռնոցը և ալեկոծված ծովի ահեղ մոնչոցը նպաստում էին նրանց ծրագրի իրականացմանը:

Կեսգիշերին մոտ Ռոմանը զգուշությամբ կալանդներից դուրս քաշեց կտրված շղթայի աղատ ծայրը: Հետո օգնեց ընկերներին: Հիմա նրանք գրեթե աղատ էին: Ճիշտ է, կալանդները դեռ ոտքերին էր, գերիները դեռևս գտնվում էին նավի վրա, բայց դա արդեն այնքան էլ սարսափելի չէր:

Մեջքի ծվատող ցավը հաղթահարելով՝ Զվենիգորան առաջինը ելավ առելի նստարանից, անձայն մոտեցավ այն խցիկին, որտեղ քնած էր Աբդուռահմանը: Ուսով կամացուկ հրեց դուռը: Խցիկից լսվեց վերակացուի ուժգին խոմփոցը:

— Կաց, Արսեն: Ինձ թող,— շնչաց Սպիխալսկին և ներս խցկվեց: Մթության մեջ առաջ մեկնեց իր երկար, ուժեղ ձեռքերը և ափսիելով գտավ Աբդուռահմանի մահիճը:— Շան ցեղ: Վերջապես դու իմ ձեռքն ընկար...

Վզի վրա զգալով կոշտ մատների հպումը՝ վերակացուն արթնացավ և վախեցած ձիշ արձակեց: Բայց Սպիխալսկին իր հսկայական ափով փակեց նրա բերանը:

— Արսեն, սրան հասկացրու ինչն ինչոց է: Բացատրիր, որ, դժբախտաբար, ժամանակ չունենք և ուղարկում ենք էն աշխարհը, առանց ասպիրակով հյուրասիրելու, գրողը նրան տանի:

— Կարիք չկա: Շուտ վերջացրու, պան Մարտին,— շնչաց Զվենիգորան:— Մենք դեռ շատ գործ ունենք:

Աբդուռահմանը, հավանաբար, այդպես էլ չհասկացավ ինչ է կատարվում: Սպիխալսկու աջ ձեռքը արքանի պես սեղմեց նրա կոկորդը: Նա թպրտաց և շուտով սսկվեց:

¹ Աբա (թուրք.)— թիկնոց:

— Մեկը պատրաստ է,— կարճ տեղեկացրեց Սպիխալսկին և, ձեռքերը տաբատի վրա մաքրելով, զզվանքով թքեց։
Մինչ այդ, Ռոմանը բոլոր գերիներին արթնացրեց։

— Կամաց, եղբայրներ։ Շղթան քաշեք հանեք։ Շուտով մեր գերությանը վերջ կլինի։

Գերիները կալանդների միջից դուրս քաշեցին հաստ ու երկար շղթան, որը նրանց գամում էր թիակներին։ Շղթայից ազատվելով՝ մարդիկ վեր թռան նստարաններից, մթության մեջ կպան մեկը մյուսին, զնգացրին կալանդները։

— Կամաց, ասում եմ, գրողի տարածներ,— խեղդված ձայնով գոչեց Զվենիգորան։— Պահակները կլսեն...

Գերիները քարացան տեղերում։ Սպիխալսկին Աբդուռահմանի գրպաններում գտավ աբեթն ու կայծքարը, կրակ հանեց, վառեց ճրագը։ Աղոտ-դեղնավուն լույսի տակ նշմարվեցին լարված, քարացած դեմքերը։

Զվենիգորան առաջ ընկավ։

— Եղբայրներ, եկել է այն ժամը, երբ մենք կարող ենք ազատագրվել։ Ափը շատ մոտ է, երկու քայլի վրա։ Կհասնենք լողալով, բայց հարկավոր է մի բան անել, վերացնել վերին տախտակամածի պահակներին։ Եթե հաջողվի դա անել առանց աղմուկի, մենք փրկված ենք։ Ափին կալանդները կհանենք, և ով ուր ուզում է թող գնա։ Էնտեղ արդեն ամեն մեկը ինքն է իր գլխի տերը... Իսկ հիմա թող բոլորը լուռ մնան... Պահակներին մենք կվերացնենք։ Մեզ էլի մի ուժեղ երիտասարդ օգնական է պետք։ Ո՞վ է ցանկանում։

— Ես, եղբայր Զվենիգորա,— ցուկից լսվեց մի ձայն և խավարի միջից դանդաղ վեր ելավ բարձրահասակ, թիկնեղ մի կերպարանք։

— Ո՞վ ես դու, մարդ։ Որտեղի՞ց ես ճանաչում ինձ,— զարմացած հարցրեց Արսենը։

— Գրիվան եմ։ Հիշո՞ւմ ես... Յոթնաշտարակ ամրոցը Ստամբուլում։

— Էդպիսի մարդուն ո՞նց չես հիշի։— Զվենիգորան ուրախացավ, որ մի հաղթանդամ ու խիզախ կազակ էլ կլինի իրենց հետ, որի վրա ծանր պահերին կարելի է հույս դնել։

— Արի այստեղ, եղբայր։ Հապա ինչո՞ւ նշան չէիր տալիս։ Ինչո՞ւ չէիր մեզ հասկացնում...

— Զէի ուզում մի անզգույշ խոսքով քեզ մատնել անիծված Աբդուռահմանի մոտ: Համ էլ հեռու էի քեզանից, հարմար չէր, — ասաց Գրիվան, կալանդները բռնած և կոացած, որովհետև գլուխը հասնում էր առաստաղին:

Խորհրդակցությունը կարճ տևեց: Գրգռված գերիները խոնվեցին սանդուղքի մոտ՝ սպասելով ազդանշանին:

Զվենիգորան, Սպիխալսկին, Վոյնովն ու Գրիվան, կալանդները պինդ ձգելով, որպեսզի չզնգան, աստիճաններով անադմուկ վեր բարձրացան: Վերին տախտակամածում մութ էր, ինչպես նկուղում: Քամին վզզում էր պարանասարքերի մեջ և ծակծկող անձրևակաթիլներ էր շաղ տալիս դեմքերին: Աջ կողմում ահեղ խշշում էր ծովը, ձախում հազիվ նշմարվում էին բարձրադիր ափի աղոտ ուրվագծերը:

Մի քիչ կանգնեցին, նայեցին մթության մեջ, հետո Զվենիգորան ու Գրիվան ցռուկում նկատեցին ժամապահի մութ կերպարանքը և դանդաղ, գաղտագողի մոտեցան նրան:

Սպիխալսկին ու Ռոմանը գնացին դեպի նավախել:

Ժամապահը ննջում էր և շլսեց, թե ինչպես երկու հոգի մոտեցան իրեն: Գրիվան փթանոց բռունցքը բարձրացրեց, ու ամբողջ թափով հարվածեց թուրքի գլխին: Սա ծանրորեն փլվեց տախտակամածին:

Զվենիգորան վայրկենապես նրա վրայից հանեց յաթաղանը, գոտուց դուրս քաշեց զույգ ատրճանակները:

Գրիվան ուզում էր ժամապահի մարմինը ջուրը նետել, բայց Զվենիգորան կանգնեցրեց նրան.

— Սպասիր, շորերը վերցնենք հետներս, պետք կգա:

Շորերը հանելով և մի պինդ հանգույց կապելով՝ փախստականները ենիչերիի մարմինը շարտեցին ջուրը: Հիմա մնում էր սպասել Ռոմանին ու Սպիխալսկուն: Որտե՞ղ են նրանք:

Շուտով տախտակամածի մյուս ծայրից դուրս լողացին երկու սովեր: Սպիխալսկին հևում էր: Ծանաչելով յուրայիններին՝ վիզն առաջ ձգեց ու դավադրաբար, իբրև մեծագույն գաղտնիք, հաղորդեց.

— Եվս մեկը:

Բոլորը հասկացան՝ ինչ նկատի ուներ լեհը: Արսենը լուռ սեղմեց նրա ձեռքը և ասաց.

— Հիմա մնաց ափ հասնենք: Կանչեք մարդկանց, մենակ թե անաղմուկ: Ենիշերիներին չլինի, թե արթնացնեք:

Ռոմանը շտապեց ներքին տախտակամած: Շուտով, մեկը մյուսի ետևից այնտեղից սկսեցին բարձրանալ գերիները: Արագորեն, կատարելով Զվենիգորայի հրամանը, խարսխաշրջ-թայով ջուրն իջան և կորան անթափանց խավարում:

Զվենիգորան, Ռոմանի ու Սպիրխալսկու հետ միասին, վերջինը իջավ նավից: Սառը, աղի ջուրը կրակի պես այրեց Արսենի մեջքը: Ոտնաշղթաները քաշում էին ներքև: «Ոչ բոլորը ափ կհասնեն: Ով վատ է լողում՝ կխեղդվի»,— փայլատակեց մտքում: Բայց իսկույն էլ վանեց այդ միտքը. հարկավոր է հոգ տանել իր մասին: Որպեսզի ինքը ջրի երեսին մնա ու լողա մինչև ափ: Չեղբերի յուրաքանչյուր թափահարումը անտանելի ցավ էր պատճառում: Բացի դրանից, աղի ջուրը մոմոացնում էր վերքերը: Ուզում էր ոռնալ, ճշալ... Սակայն Արսենը պինդ սեղմել էր ատամները և լայն շարժումներով երկու ձեռքով ասես թիավարում էր:

Վերջապես զգաց, որ կալանդները կպան հատակին: Մի քիչ էլ լողալով առաջ գնաց և թեթևացած շունչ քաշեց. ոտքերի տակ մանր խիճ էր ու փխրուն ավազ:

Դուրս եկավ դիք, զառիկող ափը և ուժասպառ փովեց գետին: Մի քանի րոպե պառկեց, շունչ քաշեց:

Երբ փախստականները մի փոքր հանգստացան, ու ջոկվեցին երեք-երեք, ինչպես նստում էին նստարանին, պարզվեց, որ վեց հոգի չկան:

— Այլևս չենք կարող սպասել,— ասաց Զվենիգորան:— Թե որ խեղդվել են, ապա էլ չենք կարող օգնել: Իսկ թե ուրիշ տեղ են ափ դուրս եկել, ու իրենք են իրենց համար ճամփա բռնել, ուրեմն թող հաջողութուն լինի նրանց... Ասենք, մենք էլ հիմա պիտի բաժանվենք, բարեկամներ: Հսպես բոլորս միասին որ օտար երկրով գնանք, վտանգավոր է: Իսկ որ մեկ-մեկ, երկու-երեկու, երեք-երեք ցրվենք տարբեր կողմեր, էն ժամանակ՝ ման արի, որ գտնես: Ճիշտ չե՞մ ասում:

— Ճիշտ է, ճիշտ է,— համաձայնեցին բոլորը և, առանց ժամանակ կորցնելու, ոչ մեծ խմբերով ցրիվ եկան առափի խորքերը:

Արսենի հետ գնացին Ռոմանը, Ապիխալսկին և Գրիվան: Թրջված, սառած՝ նրանք մագլցեցին խիտ թփուտներով ծածկված մի բլրակ և արագ-արագ, որքան թույլ էին տալիս կալանդները, որոնցից մթության մեջ անհնար եղավ ազատվել, սկսեցին հեռանալ ծովից: Ծովի խուլ մոնչոցը աստիճանաբար նվազեց, հանդարտվեց և լուսադեմին բոլորովին դադարեց:

Լուսացավ: Յածրիկ երկնակամարի խորքում բացվեց մռայլ աշնանային օրը: Փախստականները քարերով ջարդեցին կալանդները, քամեցին թաց շորերը: Զվենիգորան հագավ ենիչերիի կաֆտանն ու շալվարը, գոտին խրեց ատրճանակները, որոնք, դժբախտաբար, չէին կարող կրակել, քանի որ վառողը թրջվել էր, յաթաղանը կապեց կողքից: Յաթաղանն այնպես սուր էր, որ Սպիխալսկին դրանով սափրեց Արսենի գլուխը, խուզեց, հավասարեցրեց մորուքն ու բեղերը, և կազակը նմանվեց իսկական թուրքի: Չնայած ցավից մղկտում էին մեջքի վերքերը, որոնք բորբոքվել էին աղից ու այրունահոսում էին, Արսենը ոչ իրեն, ոչ էլ ընկերներին թույլ չտվեց երկար հանգստանալ:

— Վեր կացեք, շեյթանի զավակներ,— ուրախ աչքով արեց ընկերներին:— Առաջ-առաջ: Մեր փրկությունը արագ քայլելու մեջ է:

6

Առաջին իսկ փոքրիկ գյուղում, որը ծվարել էր դիք սարալանջերի միջև եղած խոր ձորակում, նրանք հասկացան, որ ընկել են Բուլղարիա:

Որպեսզի իրենց հագուստով ու տեսքով հետաքրքրասեր բալկանջիներին՝ մոտ կասկած չհարուցեն, Ռոմանը, Սպիխալսկին և Գրիվան իրենց գերիների տեղ դրեցին, փակ Զվենիգորան՝ ենիչերիի, որը հսկում է նրանց:

Առաջին երկու օրերի ընթացքում նրանք մտան երկրի խորքը: Ապա կտրուկ շրջվեցին դեպի հյուսիս, որտեղ կապտին էին տալիս Ստարա Պլանինայի բարձր լեռները: Զվենիգորան ընկերներին տարավ դեպի Վրատնիցկու լեռնանցքը և

¹ Բալկանջի (բուլղ.) — լեռնեցի:

Չեռնավորա, հույս ունենալով այնտեղ հանդիպելու Մլադենի նոր շոկատներին և Ջլատկային:

Մեծ մասամբ անցնում էին շրջանցիկ ճանապարհներով, երբեմն հովիվներից հարցնելով ճանապարհը: Ստարա Պլանինյան լեռնաշղթայի խոր ձորերով ու անտառներով կտրատված, անմարդաբնակ, ամայի վայրերը հուսալիտրեն թաքցրնում էին նրանց կողմնակի աչքերից: Գյուղ մտնում էին միայն այն ժամանակ, երբ քաղցը նեղում էր, իսկ գրպաններում ուտելու բան չէր լինում:

Անցնելով փոթորկալից Լուդու-կամչիան, նրանք մտան հաճարենու խիտ անտառը: Սև ու մռայլ, տերևազուրկ անտառը խոր թախիժ էր ներշնչում: Փայլփլուղ, թաց ճյուղերից անընդմեջ ծանր, սառը կաթիլներ էին ընկնում: Ոտքերի տակ խշխշում էին թափված տերևները:

Ճանապարհը կտրուկ վեր բարձրացավ:
Իրիկնանում էր:

Առջևում, ինչ-որ տեղ, խիտ մացառուտների ետևում, խուլ խշշում էր ջրվեժը: Հոգնած, քաղցած փախստականները արագացրին քայլերը: Հարկավոր էր մի ավելի շոր տեղ գտնել գիշերելու համար:

Անխոնջ աժդահա Գրիվան ետ տարավ թփերը ու, մատը շուրթին դնելով, քարացավ տեղում:

— Սը՛ս-ս-ս:

— Աստծու սիրուն, էլի ի՞նչ կա,— հարցրեց հալից ընկած Սպիխալսկին: Նրա բեղերը կախ էին ընկել, և դրանց ծայրերին փայլվում էին ջրի կաթիլները:

— Խրճիթ է: Ներսում էլ մարդիկ կան... Նայեք, ծխնելույզից ծուխ է բարձրանում...

Փախստականները կանգ առան, թփերի ետևից նայեցին:

Նրանց առջև բացվեց մեծ, թեք իջնող մարդագետիներ, որ ձգվում էր զառիթափ լանջի երկարությամբ: Մարդագետնի կենտրոնում, մի պատով ժայռին հենված, կանգնած էր հին փայտե խրճիթը: Նրանից քիչ այն կողմ աղմկում էր փոքրիկ ջրվեժը:

Շուրջը ոչ մի շունչ: Միայն կապտավուն ծուխը, որ քուլաքուլա բարձրանում էր ծխնելույզից, ասում էր, որ խրճիթում կենդանի շունչ կա:

Ընկերներն իրար երեսի նայեցին:

— Ե՞տ դառնա՞նք, թե ներս մտնենք,— հարցրեց Զվենիգորան:

Բոլորը լռեցին: Բայց Ռոմանն ասաց.

— Մենք շատ ենք հոգնած ու մրսած... Մեզ համար ծանր է տեսնել՝ ինչպես ես դու տառապում, Արսեն: Քեզ հեքիմ է պետք, որ բուժի վերքերդ: Բոլորս էլ տեսնում ենք, թե ինչպես ես հալումաշ լինում... Կարծում եմ, մեզ վնաս չի տա, եթե ներս մտնենք տաքանանք, հանգստանանք: Մենք չորս հոգի ենք: Ումից ենք վախենում:

— Ես էլ այդպես եմ կարծում: Այստեղ, երևի, հովիվներ են ապրում կամ անտառաբնակներ: Հո ենիչերիներ չեն, ոչուփուլ լինեն դրանք,— Ռոմանին պաշտպանեց Սպիխալսկին:— Համ էլ ամեն մեկիս ձեռքին պինդ մահակ կա: Իսկ Արսենի մոտ՝ յաթաղան... էլ ումի՞ց ենք վախենում, խնդրեմ:

— Որ այդպես է, գնացինք,— համաձայնեց Զվենիգորան:

Նրանք դուրս եկան անտառից և դանդաղ մոտեցան խրճիթին: Արսենին թվաց, թե փոքրիկ լուսամուտում, որ ծածկված էր ոչխարի թափանցիկ փուշիկով, մի աղոտ ստվեր երևաց ու անցավ: Արդեն ինչ-որ մեկը նկատել էր իրենց: Բայց ոչ որ դուրս չեկավ դիմավորելու: Անհարթ փայտե դուռը պինդ ծածկած էր: Կազակը հրեց, ներս նայեց.

— Բարև ձեզ, բարի մարդիկ: Էստեղ որևէ մեկը կա՞ արդյոք:

Պատասխան չեղավ:

Զվենիգորան ավելի լայն բացեց դուռը, և չորսն էլ մտան խրճիթ: Դա բավականին մեծ սենյակ էր, որտեղ, անկասկած, հենց նոր մարդիկ էին եղել: Պատի տակ դրված լայն թախտի վրա երկու քուրք էր ընկած: Սեղանին մի մեծ կավե կճուճ կար, որ պոնկեպոունիկ լցված էր տաք չորբայով: Կճուճի կողքին՝ երկու փայտե գդալներ, հաց: Անկյունում վառարանն էր՝ անմշակ մոխրագույն քարից՝ քնատեղով: Վառարանի մեջ աշխույժ բոցկտում էին հաճարի չոր փայտերը: Կրակից կարմրավուն լույս ու հաճելի ջերմություն էր տարածվում անհյուրընկալ սենյակում:

— Հը՛մ, ինձ թվում է, մենք անկոչ հյուրեր ենք էստեղ,— ասաց Զվենիգորան:— Ամեն բանից երևում է, որ տանտերեր

նկատել են մեզ ու արագ թաքնվել: Որտե՞ղ: Համենայն դեպս նրանք դուրս չեկան մեզ դիմաՎորելու:

— Բայց էստեղ մի դուռ էլ կա, խնդրեմ,— Սպիխալսկին ցույց տվեց փայտե պատը, որը խրճիթը բաժանում էր երկու մասի:— Կայծակի բաժին դառնամ, թե որ էս դռան ետևում կանգնած չէ գոնե նրանցից մեկը, ովքեր հենց նոր պատրաստվել են խաչտելու էս համեղ շորբան, որը իր անուշ բուրմունքով խուտուտ է տալիս ունզներս, գրողը տանի:

Այս խոսքերի հետ պան Մարտինը հրեց կիսախավարի մեջ հազիվ նկատվող դռնակը, և զարմացած փախստականները խրճիթի երկրորդ կեսում տեսան մի քանի ոչխար, որ անխռով վայելում էին անտառային շոր խոտը, և մի բարձրահասակ ծեր լեռնցու:

— Բարի աջողում, պան տնատեր,— ողջունեց մյուսներից ոչ պակաս զարմացած Սպիխալսկին:

— Աստժո բարին,— պատասխանեց լեռնցին՝ մտնելով սենյակ: Հետո հոնքերը կիտած հարցրեց.— Ովքե՞ր եք:

Զվենիգորան առաջ անցավ.

— Ներիք, եղբայր, որ առանց հարցնելու մտանք քո տունը: Բայց մի՛ հարցնի, թե ովքեր ենք: Թե որ դու բարի մարդ ես, ապա ընդունիր մեզ քո սաք խրճիթը, թույլ տուր գիշերենք: Լեռնցին ուշադիր նայեց ենիչերի շորերով Զվենիգորային և, ճերմակ հոնքերը կիտելով, ձեռքով ցույց տվեց թախտը.

— Նստեք: Թե քաղցած եք, խնդրեմ, անուշ արեք իմ շորբան:

— Շնորհակալություն,— ասաց Զվենիգորան:

— Մենակ թե, ես տեսնում եմ, էստեղ երկուսով եք պատրաստվել ընթրելու: Դուր կգա՞ արդյոք նրան, էն մյուսին, եթե առանց նրա համաձայնության ուտենք իր բաժին շորբան:

— Ինձանից բացի ուրիշ ոչ ոք չկա խրճիթում, օտարական,— պատասխանեց ծերունին:— Իսկ երկրորդ գդալը, աղաթի համաձայն, ես դրել եմ նրա համար, ով ճանապարհին է:

«Հը՛մ, խորամանկ ծերուկ է, պոչ է խաղացնում,— մտածեց կազակը:— Բայց թե ինձ չես խաբի: Ես քո ասածներից չեմ... Այդ դեպքում հապա ինչո՞ւ է երկու քուրք փռած թախտին: Դա՞ էլ է հյուրի համա՛ր»:

Բալկանշին ևս երկու գդալ բերեց, և սովից ուժասպառ եղած փախստականները ազահուլթյամբ վրա պրծան տաք ապուրին: Խրճիթի լուռումունջ տերը սեղան շնստեց, Մի քանի շոր ծղաններ գցեց վառարանը, մի գիրկ բուրավետ խոտ բերեց և, փռելով անկյունում, վառարանի կողքին, խրճիթից դուրս եկավ:

— Ինձ դուր չի գալիս էս մարդու պահվածքը, — կամացուկ ասաց Ռոմանը: — Ձի խոսում ու խեթ-խեթ է նայում, նզովյալ անտառապան: Ավելի լավ չի՞ լինի փախչենք էստեղից, քանի դեռ նա ենիշերիններ չի բերել:

Սակայն ոչ ոք նրան չպաշտպանեց: Սպիխալսկին կուշտ ուտելուց հետո թուլացել էր և մշուշված աչքերով նայում էր փափուկ, անուշահոտ անկողնուն: Զվենիգորայի վիճակը ավելի էր ծանրացել: Մեջքը ծածկված էր մղկտացող խոցերով: Նա դողէրոցքի մեջ էր: Գրիվան, երևում է, նույնպես շերուզում հեռանալ այս տաք տնից:

— Լավ, լավ, մնում ենք: Պառկեք քնելու, բարեկամներ: Իսկ ես կհերթապահեմ մինչև կեսգիշեր: — Տեղի տվեց Ռոմանը: — Հետո կարթնացնեմ պան Մարտինին:

Բոլորը պառկեցին խոտի վրա, կողք կողքի: Սպիխալսկին ու Գրիվան իսկույն քուն մտան: Արսենն անհանգիստ շուռումուռ էր գալիս տաքության մեջ, զառանցում էր, բայց ի վերջո նա էլ քնեց: Միայն Ռոմանը կատաղորեն կռիվ էր տալիս քնի հետ: Երբ լեռնցին ներս մտավ և, մոմը հանգցնելով, պառկեց թախտին, դոնցին կսմթեց իր ականջը և աչքերը լայն բեցեց: Հետո փորձեց ականջ դնել գիշերային աղմուկին: Նայեց մթության մեջ: Սկսեց վերհիշել զանազան պատմություններ իր կյանքից... Հետո նրա շնչառությունը դարձավ համաշափ, կոպերը իրենք իրենց փակվեցին, և ինքն էլ շիմացավ, թե ինչպես խորասուզվեց քնի մեջ:

Առաջինը սուր ցավից արթնացավ Արսենը: Այն օրվանից, ինչ Աբդուռահմանը ծեծել էր նրան, նա քնում էր միայն բերանքսրվայր: Ուստի անմիջապես զգաց, որ մեկը նստեց իր մեջքին, ձեռքերը ետ ոլորեց ու սկսեց պարանով կապկալել: Նրա գոռոցից բոլորն էլ արթնացան:

Խրճիթը լուսավորված էր: Սեղանին վառվում էր մոմը: Մի քանի մարդ կանգնած էին փախստականների գլխավերևում՝

ատրճանակները ձեռքներին: Մյուսները կապկպում էին նրանց:

Հասկանալով, որ իրենք ծուղակն են ընկել, փախստականները որոշեցին հակահարված տալ: Գրիվան ձեռքերն ազատեց և բռունցքով հասցրեց հարձակողներից մեկի կրծքին, սակայն զլխին իջած ատրճանակի ուժգին հարվածից գետնին տապալվեց: Արսենին ու Ռոմանին էլ լավ բաժին հասավ: Միայն Սպիրալսկին, որ դեռ քունը գլխին էր, գետուզեն նետվեց ու հայհոյանքների մի ամբողջ հեղեղ տեղաց այն բանից հետո, երբ նրա ձեռքերը պինդ կապված էին շաբաղված կաշիփոկով:

Երբ ամեն ինչ վերջացավ և լսվում էր միայն կապկպված փախստականների ու նրանց հակառակորդների ծանր ֆսֆսոցը, հարձակվողներից մեկը ոտքով խփեց Արսենի կողքին.

— Է՛յ, դու, ենիշերի, վեր կաց: Պատմիր տեսնենք, էդ ո՞ր սատանան է քեզ բերել էստեղ: Եվ անկեղծորեն, ձեռքդ խղճիդ դրած, շուն: Մտքովդ շանցնի ստել:

— Բայց ո՞վ եք դուք, ախր, գրողը ձեզ տանի: Ենիշերինե՞ր եք, թե հայդուկներ,— հարցրեց զայրացած Զվենիգորան, ենթադրելով, որ իրենց դիմաց ենիշերիններ շեն, այլ ազատ լեռների տիրակալները:— Ինչո՞ւ շների նման հարձակվեցիք մեզ վրա: Դու էլ լավ ես հա՛, տնատեր, կորցրել ես խիղճդ ու պատիվդ: Ընդունեցիր, կերակրեցիր, և ինքզ էլ բաշիբոզուկների ձեռքը տվեցիր:

Մուսյլ տանտերը, խիստ հայացքով շամփրելով Արսենին, պատասխանեց.

— Ոչ ոք ձեզ չի հրավիրել այստեղ, դուք ինքներդ ներլսուժեցիք: Եվ շատ մի՛ գողգողա, անբան ավարա: Պատասխանիր, քանի դեռ մարդավարի հարցնում են: Որտեղի՞ց եք եկել: Ո՞վ է ձեզ ուղարկել:

— Ոչ ոք էլ չի ուղարկել: Ինքներս ենք եկել:

— Ո՞վ եք դուք: Ենիշերինե՞ր:

— Է՞դ որտեղից հնարեցիք:

— Պոչ մի՛ խաղացնի, մորթույցդ ենք տեսնում:

Զվենիգորան նայեց իր շորերին, քիի տակ ծիծաղեց: Իսկապես, նա կարող էր հայդուկների մեջ կասկած հարույցել, էթե իրոք դրանք հայդուկներ են: Թեև նրա շորերը ամբողջ

ըովին ցեխոտված էին ու խիստ ճմռթված, բայց դեռ պահպանում էին ենիչերական զգեստի նշանները:

— Էս մորթին կարելի է և դեն գցել:

— Դա քեզ չի փրկի, ենիչերի:

— Ով գիտե, մեկ էլ տեսար փրկեց... Ձեռքերս արձակեք... Խրճիթի տերը նայեց վայելչակազմ երիտասարդին, որը հարցաքննում էր:

... — Արձակե՞մ, Կոստա:

Սա դրականորեն զխոով արեց:

Մերունին ֆսֆսացնելով կոացավ ու դանակով կտրեց պարանը: Ձեռքերը տարածելով՝ Արսենն անշտապ հագից հանեց ենիչերական բեշմետը: Հետո անցավ շապկին: Ձրեց և սուրցավ զգաց ամբողջ մեջքով: Շապիկը շորացել կպել էր վերքերին: Ատամները սեղմած՝ ամբողջ թափով քաշեց հանեց հագից և, ճմռթելով, շարտեց անկյունը: Մեջքով դարձավ դեպի լույսը:

— Նայեք:

Խրճիթում լիակատար լուսթյուն տիրեց: Լսվում էր, ինչպես է ճռթճռթում մոմը:

— Օ՛ր լելե, — գոչեց Կոստան: — Էս ի՞նչ օրի ես, մարդ: Ամբողջ մեջքդ վերքերով ու արյունով է ծածկված:

Պատասխանելու փոխարեն Արսենը, ցավը հաղթահարելով, հարցրեց.

— Հիմա ասացեք՝ ո՞վ եք դուք:

— Մենք հայզուկներ ենք:

Զվենիգորան դժվարությամբ նստեց խոտի վրա, թևթևացած շունչ քաշեց:

— Ես էդպես էլ գիտեի... Մեղ տարեք վոյեվոդա Մլադենի մոտ:

Կոստան նայեց ընկերներին:

— Դու ճանաչո՞ւմ ես վոյեվոդային, օտարական:

— Այո:

— Ովքե՞ր եք դուք:

— Մենք գերիներ ենք: Կառորգայից ենք փախել..

— Ռուսներ եք:

— Այո:

— Հը՞մ... Այ քեզ հանելո՞ւկ, — շփոթեց քորեց Կոստան:

ծրկում է, նա շվարեց ու շէր իմանում ինչպես վարվի:— Վոյնվոդա Մլադենը հեռու է... Համ էլ իրավունք չունեմ ձեզ էս-տեղ տանել, օտարականների Գուցե էսպես անենք... Ձեզ կտանեմ Դրագանի մոտ, իսկ նա արգեն թող ինքը որոշի, թե ինչպես վարվի ձեզ հետ: Ճիշտ չէ՞, ընկերներ:

Հայդուկներն, իբրև համաձայնության նշան, գլխով արեցին.

— Այո, այո:

— Դրագանի մո՞տ: Ախր նա իմ ընկերն է,— բացականչեց Արսենը՝ ջանալով տեղից վեր կենալ:— Շուտ, տարեք նրա մոտ:

Սակայն ուժերը վերջնականապես դավաճանեցին նրան: Գլուխը պտտվեց, և նա, ամբողջովին արնաշաղախ, տապալվեց գետին: Ռոմանն ու Սպիխալսկին նետվեցին նրա կողմը:

— Գրողը տանի: Տանջեցին մարդուն, հոգին հանեցին, ի՞նչ օրի հասցրին...— Փնթփնթաց պան Մարտինը:— Խնդրեմ... Սրիկաներ...

ՄԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ

1

Լեռների բարձունքում, անմատչելի ժայռերի միջև, սոճիներով ու եղևնիներով ծածկված խաղաղ հովտում կանգնած էին մի քանի խրճիթներ: Կոպիտ, անտաշ գերաններից սարքած այդ խրճիթները հեռվից նման էին գաճաճ սունկերի, որոնց կատարներից ոլոր-մոլոր կապտավուն ծուխ էր վեր ելնում: Խրճիթների առջև իր անվերջանալի երգն էր մրմնջում փոքրիկ առվակը, որ վճիտ ու սառնորակ ջուր ուներ:

Այնտեղ, ուր առվակի դիմաց ամբարտակ էին կառուցել, փռվել էր մի փոքրիկ գեղատեսիլ լճակ: Լճակի ափին, տափակ քարի վրա մի աղջիկ էր կանգնած: Պինդ՝ կեչափայտի թակիչով ինչքան ուժ ուներ ծեծում էր թաց սպիտակեղենը, այդ հարվածներից շորս կողմը ցայտեր էին թուշում, որոնք պսպղուն կայծեր էին հիշեցնում:

Մարգագետնի մյուս կողմում, կաղնի մահակին հենված,

կանգնած էր սլատկատելի արտաքինով, միջին տարիքի մի մարդ, գեղեցիկ, նախշազարդ բուրբը հագին, և, ձեռքը աչքերին հովանի արած, ուշադիր նայում էր հազիվ նշմարվող կածանին, որ գալարվում էր ժայռերի արանքում:

— Ա՛խ, վա՛յ ինձ,— կանչեց նա:— էլի մեկին բերում են պատգարակով: Ախր նախազգուշացրի Դրագանին. «հնայիր մարդկանց, ոռանց այն էլ բիշ են մնացել, ենիշերինների հետ կովի շքոնվես: «Լեզու» բռնիր ու վերադարձիր»: Համա չէ...

— Ո՞ւմ են բերում, հայրիկ,— տեղից վեր թռավ Զլատկան:

— Հիմա կիմանանք, Զլատկա: Առջևից կարծես, գալիս է Դունդոն, նրա ետևից՝ Սլավչոն... Պատգարակն են բերում... Նրանց կողքին մեկն էլ կա, չեմ ճանաչում... Բեղավոր է: Ո՞վ կարող է լինել: Իսկ այ, Դրագանը չի երևում... Մի՞թե նրան են բերում: Սպանված է, թե վիրավոր:

— Դրագանը՞,— մոտ վազեց Զլատկան:— Խե՛ղճ Մարիյկա: Ոնց պիտի դիմանա... Հարկավոր է կանչել նրան:

Նա ամբողջովին լարվեց, թռչնի նման ասես ուզում էր վեր սլանալ ու ճախրել իր ընկերուհու մոտ:

Հայդուկների ճամբարում, Ստարա Պլանինայի հեռավոր մի անկյունում ապրելու միջոցին Զլատկան շատ մտերմացավ Մարիյկայի հետ, որը դարձել էր Դրագանի կինը: Նա շատ արագ ընդօրինակեց բալկանցիների սովորույթները, հայդուկների պարզ տնային տնտեսություն վարելու հմտությունը, սովորեց բռների մի ամբողջ շարք, որ հատուկ էր լեռնցիների խոսվածքին:

Հայրը ամեն օր աղջկան սովորեցնում էր ատրճանակով կրակել, սրամարտել ու ձիարշավել: Ծերունի վոյեվոդան գտնում էր, որ իր աղջիկը, ապրելով խոռվարարների մեջ, պարտավոր է սովորել այն ամենը, ինչ որ նրանք գիտեին:

Լեռների ազատ կյանքը, ռազմական վարժություններն ու ծանր, ուժից վեր աշխատանքը կոփել էին աղջկան: Նա պապանել էր իրանի ճկունությունը, դեմքի մեղմ քնքշությունը, բայց ձեռք էր բերել հպարտ, անկախ կեցվածք, սևացել էր արևից ու քամուց, աչքերի մեջ հնազանդության ու վախի փոխարեն հայտնվել էր հանգիստ հավասարակշռության, վճռականության ու ինքն իրեն պաշտպանելու պատրաստակամություն արտահայտություն:

Դա արգեն նախկին Զլատկան շէր. կյանքը շատ էր փոխել նրան: Այժմ, տազնապի պահին, վտանգի սպասելիս, այդ նոր հանգրը ավելի ցայտուն էին դրսևորվում նրա դեմքին: Ուրիշ անգամ վոյեվոդան կզմայվեր աղջկանով, այնքան որ գեղեցիկ էր նա: Բայց հիմա որա ժամանակը շէր:

— Սպասիր, — կանգնեցրեց հայրը: — Ժամանակից շուտ մի՛ վախեցնի Մարիլիային: Հրեն, կարծես Դրագանն էլ է տղաների հետ: Երևի նա ետ էր մնացել... Չէ՛, պատգարակի վրա ուրիշ մարդ է... Հապա մի վազիր, պատրաստիր ամեն բան, ինչ-որ պետք է վիրավորի համար:

Բայց Զլատկան անսպասելի ճշաց ու սլացավ առաջ, դեպի զառիթափի եզրը: Եվ անշարժացավ, մնաց տեղում, ձեռքի ափը շուրթերին սեղմած. կարծես ուզում էր ինչ-որ բան ասել և հանկարծ փոշմանեց: Սևևուն, առանց աչք կտրելու, նայում էր նրա՛, որը քայլում էր մոտեցող ջոկատի առջևից:

— Քեզ ի՞նչ պատահեց, աղջիկս, — անհանգստացավ վոյեվոդան: — Ի՞նչ ես տեսել էնտեղ:

— Հայրիկ, դու ասացիր, ինչ-որ բեղավո՞ր է: Ախր դա Սպիխալսկին է: Ես քեզ պատմել եմ նրա մասին...

Աղջիկը գունատվել էր: Վոյեվոդան գրկեց նրան.

— Մի՛ հուզվի՛ր, Զլատկա: Դա դեռ ոչինչ չի նշանակում: Ինչո՞ւ ես կարծում, որ անպայման Զվենիգորան էլ Սպիխալսկու հետ պիտի լինի:

— Զգլտեմ... Բայց սիրտս հանկարծ վատ բան կանխագ-
գաց...

— Հո՞նգստացիր, խենթուկս: Հիմա ամեն բան կիմանանք: Զլատկան ամբողջ մարմնով դողում էր: Մի՞թե հայրը կհասկանա, թե ինչու է այդպես թպրտում իր սիրտը, ինչու դեմքից անհևւացավ կարմիրը ու ձեռքերը սառեցին... Չեոնավոդա ամբողջում կատարված ողբերգական դեպքերից հետո, երբ հայդուկների ջոկատից ընդամենը մեկ երրորդը փրկվեց, և վոյեվոդան նրանց հետ բնակատեղ կառուցեց այս վայրի, անմատչելի տեղերում, իր հետ տանելով նաև Զլատկային, կարիճ կազակ Զվենիգորայի մասին այստեղ խոսում էին միայն անցյալ ժամանակով: Հիանում էին նրա քաջությամբ, գովում էին ընկերներին նվիրված լինելու համար: Բայց այդ խոսակցու-
թյունները լինում էին դեպքից դեպք: Նրա մասին պարզապես

հիշում էին երբեմն, առիթից առիթ: Եվ բոլորն էլ համոզված էին, որ կազակը սպանվել է: Նրա մասին մտածում էին միայն Զլատկան և քչերի հետ փրկված Յացկոն: Հավատում էին, որ նա օրերից մի օր, դուցե ոչ շուտ, կվերագառնա: Զլատկան հենց միայն այդ հույսով էլ ապրում էր:

Եվ ահա հայտնվում է Սպիրխալսկին: Ի՞նչ լուր կբերի Արսենից:

— Հայդուկները մոտենում էին: Երբ մինչև ճամբար մնում էր մի երեք հարյուր քայլ, Յացկոն տեղից պոկվեց, արագ վազեց վերև, Զլատկայի ու վոյեվոդա Մլադենի մոտ:

— Զլատկա, Զլատ-կա-աա՛.— լսվեց նրա ձայնը:

Աղջիկը բամու պես սլացավ ներքև: Վոյեվոդան շհասցրեց նույնիսկ ձեռքը պարզել, որպեսզի բռներ, Գուլլ շտար: Աղջիկը թեթև, ասես վայրի այծ, քարերի վրայից թռչկոտելով սլացավ հայդուկներին ընդառաջ: Յացկոյի ձայնը ամեն ինչ ասաց նրան:

— Արսեն՞ն է: Արսեն՞ն:

— Նա է: Ողջ է.— Յացկոն ուրախ ժպտաց:— Ընկերների հետ կատորգայից է փախել...

Տղայի վերջին խոսքերը նա այլևս չլսեց. նետվեց դեպի այտազարակը: Չնկատելով նույնիսկ, թե ինչպես, իրեն տեսնելով, բեղերը սղաչեց ու ժպտից ծաղկեց Սպիրխալսկին: Իսկույն ճանաչեց Արսենին: Միայն նրան տեսավ: Արսենը պառկած էր երեսնիվայր, գունատ, նիհարած, աչքերը փակ ու ներքին ջերմությունից շորացած շուրթերը պինդ սեղմած:

Զգուշությամբ բռնեց նրա ձեռքը: Արսենը բացեց աչքերն ու ցնցվեց.

— Զլատկա... Սիրելիս...

Աղջիկը արցունքների միջից անձայն, լուռ գլխով արեց ու սեղմեց կազակի ձեռքը, ջանալով տիրապետել իրեն: Արսենը այլևս ոչ մի խոսք չասաց, միայն Զլատկայի սառը մատները պահեց իր տաք ձեռքի մեջ և, քանի դեռ պատառակով վերև էին տանում, իր շողշողացող աչքերով անթիթ նայում էր աղջկա գունատ, բայց այնքան սիրելի, այնքան հարազատ դեմքին:

Երջանկութիւնն էլ գինու նման արբեցնում է... Տեսնելով Զլատկային, ապա նաև վայելողային ու Յաղուբին, Զվենիգորան զգաց, որ, ասես գինովութիւնից, գլուխը դժժում է: Սիրտը պատրաստ էր դուրս թռչել կրծքից: Կյանքում դեռ ոչ մի անգամ նա այդպես չէր հուզվել, ինչպես այսօր: Ուզում էր անմիջապես ամեն ինչի մասին հարցուփորձ անել, ամեն ինչ իմանալ:

Կարճ ողջույններից հետո նրան ներս տարան խրճիթ:

— Իսկ ո՞ր է Անկան, — հարցրեց Արսենը՝ իրենց դիմավորող հայդուկների մեջ նրան շտեննելով:

Վոյելովողայի դեմքը մթնեց:

— Նա չի կարող դուրս գալ, Արսեն: Ծանր հիվանդ է... Բայց դու կտեսնես նրան, հենց որ ոտքի ելնես:

Յաղուբն ու Դրագանը Արսենի շորերը հանեցին, պակեցրին թաղիքով ծածկված լայն թախտին: Երբ շապիկը հանեցին, Յաղուբը ախ քաշեց ու ատամները կրճտացրեց: Կազակի մեջքը ամբողջապես ծածկված էր սարսափելի խոցերով ու շապաքննված վերքերով:

— Ճանաչում եմ ասպիրակը, — մթնեց Յաղուբը: — Ինչպիսի՞ դաժանութիւն:

— Այո, սա ասպիրակի արածն է... Արգեն մի շաբաթից ավելի է անցել, բայց ոնց որ մինչև հիմա էլ փշեր են ցցված մարմնիս մեջ...

— Դե, մի բիշ դիմացիր... Ես կօգնեմ, Հիմա քեզ կլողացնեմ տաք ջրով, փշատերևի ու կաղնու կեղևի թուրմով: Հետո դարման կդնեմ: Եվ ամենագութ ալլահի օգնութեամբ շուտ ոտքի կկանգնեցնեմ, — խոստացավ Յաղուբը:

Նա ուրախացել էր Զվենիգորայի համար, ասես հարադատ որդուն էր գտել, և բոլոր ջանքերը գործադրում էր, որպեսզի թեթևացներ կազակի տառապանքները: Նրան ամեն ինչում օգնում էին Զլատկան ու Դրագանը:

Հաջորդ օրը երեկոյան, երբ Արսենը Յաղուբի բժշկութեան ու Զլատկայի հոգատարութեան շնորհիվ համեմատաբար իրեն լավ զգաց, վոյելովողա Մլադենը, Դրագանն ու Յաղուբը հավաքվեցին նրա մահճակալի մոտ:

Խրճիթում տաք էր ու հաճելի: Դեղին պատերից ձյուփի հոտ էր փչում: Վառարանի մեջ աշխույժ բոցկլտում էին շոր ճյուղերը:

Վոյեվոդա Մլադենը նրանցից բաժանվելու ընթացքում է՛լ ավելի էր ճերմակել ու նիհարել: Նա նստեց Արսենի կողքին, վիրավոր ոտքը դրեց թախտին: Դիմացը, սեղանի մոտ, տեղավորվեցին Յաղուբն ու Դրագանը: Զվենիգորան գիտեր արդեն, որ երիտասարդ հայդուկը վերջին ժամանակներս դարձել է վոյեվոդայի աջ ձեռքը և բալկանջիների մեջ համընդհանուր հարգանք է վայելում:

— Բարեկամներ, — ասաց վոյեվոդան, — բոլորս էլ շատ ուրախ ենք, որ նորից հավաքվեցինք իրար զլխի: Նթե շիներ Անկայի ծանր հիվանդությունը, հիմա մենք այստեղ հինգ հոգով կլինեինք: Բայց նրան չի կարելի հուզվել, ուստի այսօր ամեն ինչ կքնենք առանց նրա և նույնիսկ չենք ասի, թե ինչի մասին ենք խոսել:

— Որևէ լուրջ բա՞ն է պատահել, — տագնապած հարցրեց Զվենիգորան:

— Զէ... առանձնապես բան էլ չի եղել... Կարճ ասած, Համիդն... ու Սաֆար բեյը նորից են հայտնվել մեր կողմերում, — ցածր ձայնով պատասխանեց վոյեվոդան, և Արսենը նկատեց, ինչպես հիվանդագին ցնցվեց նրա ձախ այտը: Բայց Մլադենը հաղթահարեց իրեն և այնուհետև խոսեց հաստատուն ձայնով. — Օրերս Դրագանը իմ հրամանով հետախուզություն կատարեց Զագորայում և Սլիվենում: Մենք իմացանք, որ մեծ վեզիր Իբրահիմ փաշայի զորքը Ուկրաինա կատարած անհաջող արշավանքից հետո, որտեղ Չիգիրինի մոտ պարտություն կրեց, ետ է դարձել և ամբողջ ձմեռը մնալու է Բուլղարիայում: Սլիվեն են վերադարձել նաև Համիդն ու Սաֆար բեյը՝ իրենց ջոկատներով:

— Մի՞թե նրանք հաշտվել են, Դրագան, — անմիջապես հարցրեց Յաղուբը:

— Մեր մարդիկ պատմում են, որ նրանց հարաբերությունները խիստ սառն են: Նրանց ջոկատները տեղավորվել են քաղաքի տարբեր մասերում: Նրանք գրեթե իրար չեն հանդիպում: Չհաշված, որ պաշտոնական գործով լինում են նահանգապետ փաշայի մոտ:

— Սպասեք, սպասեք, ես ձեզ շեմ հասկանում... — ընկերներին ընդհատեց Արսենը: — Ինչի՞ մասին է խոսքը: էդ ի՞նչ վեճ է եղել Համիզի ու Սաֆար բեյի միջև:

— Դե, դու չգիտես, Արսեն,— ասաց Մլադենը: — Հիշո՞ւմ ես մեր խոսակցութիւնը Սաֆար բեյի հետ Չեռնավոզա ամրոցում: Դրանից հետո Սաֆար բեյը ընդհարվել է Համիզի հետ ու խզել բարեկամութիւնը: Նա հեռացել է նույնիսկ Զախարիազիից՝ նշանավոր բժշկից, որի մոտ բուժվում էր Համիզը: Իմանալով այդ մասին՝ Յաղուբը վերագարձավ քաղաք և երկու շաբաթից բուժեց Սաֆար բեյին:

— Նենկոյին,— վրա բերեց Յուզուբը: — Ես ոչ թե Սաֆար բեյին եմ ոտքի կանգնեցրել, այլ քո տղային, Մլադեն, որը առանց ինձ կարող էր գրկվել ձեռքից, նույնիսկ կյանքից... Նրա վերքը խոր չէր, բայց թի վտանգավոր էր: Նա շատ արյուն էր կորցրել: Շատ շարշարվեցի: Եվ կարծես, նա գոհ է ինձանից... Չնայած, իմ բոլոր հորդորները, որպեսզի նա թողնի ծառայութիւնը ենիչերիական կորպուսում և Մլադենին ու Անկային ճանաչի որպես ծնողներ, զուր անցան: Հենց որ Նենկոն առողջացավ, անմիջապես իր ջոկատով արշավանքի ելավ Ուկրաինայի դեմ:

— Հազարավոր, եթե ոչ տասնյակ հազարավոր զինվորների իրենց գլուխները գրեցին էնտեղ, իսկ Համիզն ու Սաֆար բեյը ողջ ու անվնաս ետ եկան,— դառնութեամբ ասաց Մլադենը:

— Մլադեն... էդպես մի՞ խոսիր Նենկոյի մասին:

— Ես այլևս զավակ չունեմ, Յաղուբ...

— Բայց ախր Անկան ուրիշ բան է մտածում:

— Նա մայր է: Բացի դրանից, ծանր հիվանդ է... Բայց հիմա խոսքը դրա մասին չէ, բարեկամներ: Ես այսօր ուզում եմ խոսել միայն Համիզի մասին: Մենք երեքս էլ Յաղուբը, Արսենը և ես, շատ պատճառներ ունենք ատելու այդ մարդուն վայրագ ատելութեամբ և փափագելու նրա մահը: Բայց, հակառակ մեր բուռն ցանկութեան, այդ ճիվաղը մինչև օրս ման է գալիս երկրի վրա և շարիք է սերմանում: Եկել է ծամանակը՝ մաքրելու նրա հաշիվները իր բոլոր շարագործութիւնների համար: Մենք չպետք է բաց թողնենք այսպիսի հարմար առիթը: Համիզը ամբողջ ձմեռ հարկադրված է մնալ

Սլիվենում: Ուրեմն օգտվենք այդ առիթից, բարեկամներ:

— Ես վաղուց եմ այդ մասին ասել, Մլադեն, — խոսեց Յազուրը:

— Այո: Սակայն Համիզը միայն հիմա է հայտնվել մեր կողմերում:

— Ես չէի կամենա անկյունից սպանել նրան: Դա նրա համար շատ թեթև մահ կլինի: Մենք պետք է գողանանք նրան ու դատենք մեր դատարանով, — տաքացավ Յազուրը:

— Ես լիովին համաձայն եմ, Յազուր: Իսկ ի՞նչ կասեն մեր ևրիտասարդ բարեկամները:

— Ես Համիզին չեմ ճանաչում, — ասաց Դրագանը, — բայց միևնույն է ձեզ հետ եմ:

— Միանում եմ ձեր դաշինքին, — ասաց Զվենիգորան: — Ես էլ իմ ասելիքներն ունեմ էդ վիժվածքին: Միայն թե թույլ ավեք ոտքի ելնեմ:

— Երկու շաբաթ հետո դու կատարելապես առողջ կլինես, Արսեն: Վերքերդ լավանում են, իսկ ուժերդ լիուլի հերիք կանեն: Եվ դեռ օրեցօր կավելանան, — կազակին մխիթարեց Յազուրը:

— Այսպես, ուրեմն, վճռված է. մեր բոլոր մտքերը, բոլոր ջանքերը ուղղված կլինեն այն բանին, որպեսզի պատժենք գարշելի շուն Համիզին, — ասաց Մլադենը: — Դրագան, զգուշացրու Սլիվենի մեր մարդկանց, որպեսզի հետևեն նրա յուրաքանչյուր քայլին:

— Էդ շունը շատ զգույշ է, — պատասխանեց Դրագանը: — Համարյա տնից դուրս չի գալիս: Իսկ եթե դուրս է գալիս, ապա միայն պահակների հետ:

— Է՛, ինչ արած, մենք էլ պահակների հետ կբռնենք: Ամբողջ ջոկատով կգնանք: Իսկ թե չհաջողվի բռնել, տեղում հաշիվը կմարրենք: Թշնամու դեմ ուրիշ ոչ մի գործողություն չենք ձեռնարկի, բանի դեռ էդ սրիկայի վերջը չենք տվել: — Մլադենը ձեռքը պարզեց, և իսկույն երեք ձեռքեր մեկնվեցին առաջ ու ձուլվեցին իրար: — Երգվում ենք. այնքան ժամանակ, բանի դեռ կենդանի է մեր թշնամին, չենք նահանջի մեր պայմանից: Եթե մահը տապալի մեզանից որևէ մեկին, մյուսները նրա համար էլ վերժ կլուծեն Համիզից:

— Երգվում ենք:

Անցավ մեկ ամիս: Զվենիգորան կազդուրվեց, հայդուկների ոտելիքն ու լեռների ազատ կյանքը ուժ տվեցին նրան, ոտքի կանգնեցրին: Այտերին կարմրություն երևաց, իսկ աչքերում հայտնվեց կենսախինդ փայլը:

Նրա ընկերներն էլ անճանաչելի էին դարձել: Ռոմանը ման էր գալիս հպարտ-հպարտ: Նրա ցորնագույն քաքուլի և մուս, կապույտ աչքերի հետ շատ էին սազում հայդուկի զգեստները. սպիտակ քուրքը՝ սև ու կարմիր բանվածքով և փողքերը նեղ յուֆտե սապոգների մեջ դրած, նեղ, սպիտակ տաբատը: Զվենիգորան կատակում էր. «Ռոման, ոնց որ մարդու տալու աղջիկ լինես»: Հասակն առած Գրիվան լրջացել էր, դարձել էր ավելի պինդ ու ամրակազմ, իսկ պան Մարտինը զգալով, որ երակներում նորից խաղում է արյունը, աստիճանաբար ընդունեց իր նախկին գոռոզ տեսքը: Քայլում էր հպարտ, գլուխը վեր տնկած, իսկ խնամքով խուզած բեղերը, որ առաջ զզգզված էին ու կախ ընկած, հիմա կտրիճի նման վեր էր ոլորում:

Սակայն հայդուկների ճամբարում ուրախություն չկար: Անկան ծանր հիվանդ էր: Վերջին օրերին նրա վիճակը շատ էր վատացել:

Զեռնավողայի կործանումից և որդու հանդիպելուց անմիջապես հետո նա երկար թախծեց, տկարացավ: Թանձր կապտավուն եղյամ էր նստել նրա խիտ վարսերին, աչքերի տակ խոր կապույտ ստվերներ էին հայտնվել: Սակայն ամռանն ու աշնանը, քանի դեռ տաք էր, նա ոտքի վրա էր, իսկ երբ Պլանինաում սկսեցին թափվել աշնանային անձրևները, ապա ոռնացին սառը ձյունամրրիկները, նրա վիճակն ավելի վատացավ: Բողոքում էր ձախ կողքի ցավից, տրտնջում էր, որ հևոցներ ունի, մրսում էր, շնայած որ հայդուկները առավոտից իրիկուն խրճիթը տաքացնում էին: Զլատկան մոր կողքից շէր հեռանում, նրան կերկարում էր այժի տաք կաթով ու վաչրի մեղրով, դեղեր էր տալիս, որ Յաղուրն էր պատրաստում, տաք թեփով ու ավազով լցված տոպրակներ էր դնում ոտքերին:

Վոյեվոդա Մլադինը նիհարել էր ու ծերացել:

Մի օր էլ ամբողջ ճամբարը իրար խառնվեց: Լուրը այն մասին, թե Անկայի վիճակը վատացել է, մի ակնթարթում անցավ խորճիթից խորճիթ, և հայդուկները դուրս թափվեցին տներից: Զվենիգորան ու Դրազանը մտան վոյեվոդայի տունը: Այստեղ խոտի ու կանաչ փշատերևի թուրմի հոտ էր փչում, որ շաղ էին տվել հողե հատակին:

Անկան պառկած էր բարձերի վրա ու ծանր էր շնչում: Նրա ոտքերի մոտ նստած էր Զլատկան: Աղջկա աչքերից արցունքներ էին զլորվում: Յաղուբը կրակի վրա ինչ-որ անուշահոտ ըմպելիք էր տաքացնում:

Զվենիգորան ու Դրազանը կանգ առան շեմքին:

Վոյեվոդան, խոնարհվելով կնոջ կողմը, շնչաց.

— Անկո, Աննուկո, մտքովդ էդ ի՞նչ անցավ ախր... Սպասիր, գարունը գա, տաք արև կլինի: Ես քեզ կգրկեմ, կբարձրացնեմ լեռան կատարը, այնտեղից դու կտեսնես ամբողջ Բուլղարիան: Գուցե նրա սիրելի, քնքուշ տեսարանները նոր ուժեր կներարկեն քեզ, իսկ Սպիտակ ծովից փչող տաք քամին կջերմացնի քո արյունը... Այդպիսի բան չանես, թանկագինս: Մի՛ վշտացնի ինձ, և Զլատկային, և մեր ողջ համայնքին: Անկո...

Նա ծունկ չոքեց մահճակալի առաջ, բռնեց կնոջ գոնատ, նիհարած, ձեռքերը, սեղմեց այտերին: Ուսերը ցնցվեցին հեկեկոցից, որը նա փորձեց զսպել կամքի անասելի լարումով:

Զլատկան թաց թաշկինակով ապարդյուն սրբեց արցունքները: Յաղուբը դադարեց կճուճը խառնել, ու շրթունքները կծեց: Զվենիգորան ու Դրազանը կախեցին գլուխները:

Անկան ժպտաց հիվանդագին, մեղավոր:

— Մլադեն, սիրելիս: Ես էլ չեմ տեսնի մեր հարազատ լեռները, մեր Պլանինան... Եվ դու ինձ չես տանի բարձր լեռան կատարը... Թե տանես էլ, միայն մեռած, որպեսզի հավետ նայեմ հարազատ Բուլղարիային... Բայց այնտեղից էլ չեմ տեսնի իմ որդուն... Իմ Նենկոյին... Ես շատ եմ ուզում տեսնել նրան... վերջին անգամ... Ուզում եմ մի կուշտ նայել նրան... մեռնելուց առաջ... Քանզի կյանքում չեմ նայել...

Նա լռեց և շուռ եկավ դեպի պատը:

Մլադենը շփոթված շուրջը նայեց:

— Բայց դա, ախր, անհնար է, սիրելիս,— ասաց նա կատա-
մացուկ:— Նենկոն ենիշերի է: Նա Սլիվենում է... Դու չես
կարող նրա մոտ գնալ, իսկ նա...

Խրճիթում երկար ու մռայլ լուսթյուն իջավ: Օջախի մեջ
ճոթճոթացին փայտերը, գվվաց խողովակը: Լավեց հիվանդի
խոպոտ, կցկտուր շնչառութիւնը:

— Իսկ նա... Ինքը կարող է գալ այստեղ,— հանկարծ
հնչեց Զվենիգորայի ձայնը:

Անկան ցնցվեց, բարձրացրեց գլուխը:

— Ինչպե՞ս:

Մլաղենը դարմացած, վշտահար նայեց կազակին, բայց
Արսենը չնկատեց էլ դա:

— Ի ներ նրան կրերենք այստեղ:

Վոյեվոդան ընդոտ ելավ տեղից: Նրա աչքերում բռնկվեց
զայրույթը:

— Արսեն, դու հասկանո՞ւմ ես, ինչ ես ասում:— Նվ,
ձայնը իջեցնելով շշուկի աստիճան, ավելացրեց.— Դու խելքդ
թոցրել ես: Սպասումը, հույսը ուժ են տալիս հիվանդին: Այս
օրերին նա պետք է ապրի, որպեսզի հանդիպի որդուն...
Բայց եթե Նենկոն չգա, դա կսպանի նրան:

— Նա կգա: Զի կարող չգալ: Իսկ եթե չուզենա գալ՝ զո-
ռով կրերենք:

— Էդ ինչպե՞ս պիտի անեք: Զեզ անմիջապես կրոնեն
Սլիվենում: Էնտեղ լիքը զորք է: Բացի դրանից, մենք վտանգի
տակ կդնենք մեր նոր բնակատեղը...

— Մլաղեն, դա... Իմ վերջին խնդրանքն է քեզ,— կամա-
ցուկ մրմնջաց Անկան:

Վոյեվոդան ուսերը կախ գցեց, թևաթափ եղավ, լռեց: Հե-
տո ձեռքը թափ տվեց.

— Լավ:

4

Ցուրտ, քամի օր էր: Մանր, ծակծկող ձյան փոխարեն, որ
գալիս էր լեռներում, այստեղ տաղտկալի մանրամաղ անձրև
էր թափվում: Հայդուկները փաթաթվել էին կոպտաբուրդ

յափնջիների մեջ, փափախները խոր քաշել էին գլուխները: Թրջված ձիերը փնչացնում էին ու թափահարում իրենց:

Դրազանը կանգ առնելու նշան տվեց: Չորս հեծյալները ձիերից իջան: Ձիերին քաշեցին նեղ ու մռայլ կիրճը, կապեցին ծառերից: Նրանց մոտ մնաց Դունդոն: Նա արջավարի գրկեց բուրբին.

— Հաջողութուն, ընկերներ:

Սրբ մութն ընկավ, Դրազանը, Յաղուբն ու Զվենիգորան «տան քաղաք: Նեղլիկ փողոցներով, որ ծածկված էին ջրիկ, ճլմփան ցեխով, նրանք հասան շուկայի հրապարակ: Դրազանը շուրջը նայեց և, համոզվելով, որ մոտակայքում ոչ ոք չկա, թակեց մի մեծ, բարձր տան խլափեղկը: Դուռը իսկույն բացվեց, հայտնվեց տանտերը:

— Ուրե՞ր եք, — հարցրեց նա՝ ուշադիր զննելով մութ կերպարանքները:

— Բայ Դիմիտր, ողջուն վոյեվոդայից, — շնչաց Դրազանը՝ մտնելով նախասրահ:

— Ներս համեցեք, բարեկամներ, — նույնպես շուրջով պատասխանեց տանտերը և, նրանց ետևից դուռը փակելով, կանչեց. — Մայկա, մայկա՛, մեզ ուտելու մի բան տուր:

— Ի՞նչ իմացար, բայ Դիմիտր, — հարցրեց Դրազանը՝ գավաթը սեղանին դնելով:

— Ինչ-որ պետք էր՝ իմացա: Սաֆար բեյը իր թոկից փախածներին տեղավորել է ամրոցում, իսկ ինքը իջևանել է հարուստ սպախիա օնբաշու մոտ:

— Դա լավ է: Ամրոցում դժվար կլիներ նրան բռնել:

— Օնբաշու տունը նույնպես խիստ հսկողության տակ է: Սաֆար բեյը ամեն տեղ պահակներ է դրել:

— Այ թե ի՞նչ:

— Բայց օնբաշու կողքին ապրում է իմ հին բարեկամ Ստանկոն: Աղան դա աչքաթող է արել, — ժպտաց Դիմիտրը: — Ճիշտ է, շատ շարչարվեցինք, մինչև Ստանկոյին համոզեցինք մեղ օգնել, բայց, համենայն դեպս, համաձայնեց: Նա դիշերը դարբասը բաց կթողնի, ինչպես նաև մարագից դուրս կհանի ելարանը. դրանից դուք կօգտվեք օնբաշու դաստակերտը

¹ Մայկա (բուլղ.) — մայրիկ:

Ստանկոյի բակից անշատող քարե պատը բարձրանալու համար: Իսկ մյուս կողմից կիջնեք պարանե սանդուղքով: Ես նախապատրաստել եմ...

— Շնորհակալություն, բայ Դիմիտր:

— Հիմա ուշադիր նայեր:— Բայ Դիմիտրը օջախից մի խանձող վերցրեց և սկսեց արագ-արագ նկարել սեղանի վրա:— Սա օնբաշու տունն է: Փողոցի կողմից միայն մի մուտք ունի, որտեղ միշտ պահակ է կանգնած... Երկրորդ պահակը կանգնում է անկյունում, պանդոկի մոտ: Երրորդը, որ ձիով է, շարունակ երթնեկում է մեկից մյուսի մոտ: Երևի նրա համար, որպեսզի չքնեն կամ որևէ տեղ չգնան... Մնացած ենիչերիները,— մի տասնյակից ավելի,— ապրում են օնբաշու սենյակներից մեկում, բայց նրանք սովորաբար հավերի հետ պառկում են քնելու: Դրա փոխարեն Սաֆար բեյը մինչև կեսգիշեր նստած է:

— Նրա դռան մոտ պահակ չկա՞:

— Ներսում չկա: Իսկ, ա՛յ, պարտեզում, զիպի ուր բացվում են Սաֆար բեյի սենյակի պատուհանները, երբ աղան պառկում է քնելու, անպայման մի ենիչերի է կանգնում: Դրա համար էլ մենք չպետք է ուշանանք:

— Կրկին շնորհակալ եմ, բայ Դիմիտր: Կարծում եմ, ամեն բան լավ կլինի: Հիմա հետամուտ եղեք մյուս գաղանին՝ Համիդին: Նրան բռնելը դժվար կլինի: Բայց պետք է բռնել: Տար մեզ, բայ Դիմիտր:

5

Յաղուբը փողոցը կտրեց անցավ ու կանգ առավ օնբաշու երկհարկանի տան դիմաց: Պատուհաններում առկայծում էր մոմերի թոթափող լույսը: Դռան առաջ կանգնած էր հերթապահ ենիչերին:

— Դուր: Ո՞վ է,— փակեց նա Յաղուբի ճանապարհը:

— Կագամլի՞կ,— ուրախացավ Յաղուբը:— էդ դո՞ւ ես: Մտքովս չէր անցնում, թե ծանոթի կհանդիպեմ: Հուսով եմ, Յաղուբին չե՞ս մոռացել:

— Ա-ա՛, հալւոր: Որտեղի՞ց լույս ընկար...— վիզն առաջ ձգեց ենիչերին և դեսուդեն պտտեց փոքրիկ, մականի պես կլոր գլուխը:

Լսեցի, որ աղան իր ջոկատով վերադարձել է կովից, և որոշեցի այցելել: Իմանալ առողջութունը: Թող ալլահը երկար կյանք տա նրան... Համ էլ գործ ունեմ հետը:

— Հր՛մ, ուրիշ ժամանակ չէի՞ր կարող գալ, այ հալևոր: Գրսում գիշեր է արդեն:

— Միայն իրիկունը: Իսկ ցերեկները Սաֆար բեյն ինձնով զբաղվելու ժամանակ չունի: Ծառայութիւն, ուղևորութիւններ, ընկերներ, բարեկամներ: Մի՞թե նա թեկուզ մի բոպե ժամանակ կգտնի ծեր հեքիմի համար, երբ ոչ մի տեղը չի ցավում: Մեզ նրանք հիշում են միայն էն ժամանակ, երբ որևէ բանից նեղվում են:

— Դե, նա միշտ էլ ուրախանում է քեզ համար: Ինչո՞վ ես գրավել նրա սիրտը:

Յաղուբը շպատասխանեց նրա հարցին:

— Ուրեմն կարելի՞ է մտնել:

— Դե լավ, մտիր... Նախ ուղիղ կգնաս, հետո վերջին դռնից կթեքվես ձախ: Պատկերացնում եմ, ինչպես կզարմանա աղան:

«Ես էլ եմ պատկերացնում»,— մտածեց Յաղուբն ու մտավ կիսամութ երկար միջանցքը:

Գտավ վերջին դուռը, թակեց: Լսելով բեյի ձայնը՝ թափով բացեց դուռն ու ներս մտավ: Սենյակը թույլ էր լուսավորված: Միայն մի մոմ էր վառվում, զրա համար էլ անկյունները թաղված էին թանձր խավարի մեջ: Գիմացի պատի տակ, ծուռ ոտքերով մի ցածրիկ սեղանի մոտ նստած էր Սաֆար բեյը: Նա իսկույն ելավ տեղից:

— Յաղուբ: Իսկի չէի սպասում: Ներս արի, նստիր: Սալամ:

— Սալամ: Չնայած գլավուր ուռուսները մի ասացվածք ունեն. «Անկող հյուրը թաթարից էլ վատ է»:

— Էդ ի՞նչ ես ասում, Յաղուբ: Ես միշտ էլ ուրախ եմ քեզ համար: Ինքդ էլ գիտես: Նստիր:

Յաղուբը նստեց ցածրիկ փափուկ թախտին, որ դրված էր երկու պատուհանների միջև, իսկ Սաֆար բեյը՝ դիմացը դրված աթոռին: Նա հոգնած ու գունատ տեսք ուներ: Աչքերը փոս էին ընկել, հոնքամիջում կնճիռներ էին հայտնվել:

— Ինչպե՞ս կովեցիք, Նենկու:

— Ինձ այդ անունով մի՛ դիմիր, Յաղուբ, — դեմքը ծամածոեց աղան և ձայնի մեջ դառնություն՝ ավելացրեց. — Ինչպես կուրեցի՞նք, Շատ վատ... Գլխավորները ոչ մի քայլ չնահանջեցին: Ու չնայած Զիգիրինի մոտ մենք երկու անգամ շատ կինք, չկարողացանք ամբողջ գրավել: Իսկ քանի՞-քանի իսլամի հավատարիմ պաշտպաններ իրենց գլուխները դրեցին կիսավայրենի սարմատական՝ տափաստաններում: Քանի՞ խիզախ ասպետներ պակասեցին փաղիշահի բանակից այդ նորովյալ քաղաքը մեկ ամիս պաշարելուց հետո:

— Դա ինչո՞վ կարելի է բացատրել:

— Այլահը երես է դարձրել փաղիշահի փառքի պաշտպաններից:

— Զէ՛, Նենկո, մեղքը ալլահի վրա մի՛ գցիր: Հավանաբար ամբողջ պատճառն այն է, որ կազակներն ու ռուսները պաշտպանում են իրենց հողը, իսկ դա կրկնապատկում է նրանց ուժը:

— Կարծում եմ, Յաղուբ, այս ուշ ժամին դու չես եկել ինձ խրատելու:

— Իհարկե, ո՛չ, Նենկո: Ես լուրջ գործով եմ եկել: Այստեղ մեզ ոչ ոք չի՞ լսում:

— Ոչ ոք: Խոսիր համարձակ:

— Նենկո, մայրդ մեռնում է:

— Ի՞նչ: — Սաֆար բեյը սպասում էր ամեն ինչի, միայն թե ոչ գրան: Դեմքով տառապալից մի ստվեր սահեց, որն աղան գուր տեղը փորձեց թաքցնել զրուցակցից. — Մա՞յրս...

— Այո, իմ սիրելի Նենկո: Նրա վիճակը շատ ծանր է:

— Ինչո՞վ կարող եմ օգնել նրան: Ես նույնիսկ չգիտեմ, թե որտեղ է:

— Նա ուզում է տեսնել քեզ:

— Բայց դա, ախր, անհնար է, — բացականչեց ապշած Սաֆար բեյը:

— Ինչո՞ւ է անհնար: Մինչև օրս ձեզ իրարից բաժանող պատը պետք է կործանվի նրա մահից առաջ, ով կյանք է տվել քեզ:

Սաֆար բեյը գլուխը խոնարհեց, Որոշ ժամանակ լուռ

¹ Սարմատ — հինավուրց ժողովուրդ:

մնաց: Մատները ահամա, արագ-արագ սկսեցին քաշքշել տարատի ծալքերը:

— Ո՞ր պիտի գնանք: Հետո՞ւ է,— հարցրեց խուլ ձայնով:

— Ես բեղ կուղեկցեմ... Ծրրորդ օրը դու էլի Սլիվենում կլինես:

— Եվ հայդուկները չե՞ն վախենա, որ ես մուտք գործեմ իրենց բանակատեղը:

— Մենք կկապենք քո աչքերը: Հայդուկներն ստիպված կլինեն այդ բանն անել:

— Դու այնպես ես խոսում, Յաղուբ, ասես ինքդ էլ հայդուկ ես...

— Հիմա խոսքը դրա մասին չէ: Ի՞նչ ես ասում:

— Յավում եմ, որ պիտի հիասթափեցնեմ քեզ, Յաղուբ: Բայց ես ոչ մի տեղ էլ չեմ գնա: Մի օր չէ մի օր բեզլերբեյը կհիմանա այդ մասին: Ես չեմ կարող իմ ապագան վտանգի ենթարկել:

— Կովի մեջ դու ամեն օր վտանգում ես քո կյանքը, Նենկո, և, համոզված եմ, չես վախենում:

— Էնտեղ բոլորովին ուրիշ է, պատերազմ է:

— Դա քո վերջին խո՞սքն է:

— Այո:

Յաղուբը ելավ տեղից, վերցրեց աշտանակը, մոտեցավ պատուհանին: Կանգ առավ խոր մտածմունքի մեջ, ծանր հոգոց հանեց ու ափսոսանքով օրորեց գլուխը: Եվ եթե Սաֆար բեյը այդպես հուզված չլիներ, կնկատեր, որ Յաղուբը, ուշադիր նայելով մութ պարտեզի կողմը, երկու անգամ բարձրացրեց ու իջեցրեց աշտանակը: Բայց, իր ծանր մտքերով տարված, աղան ուշ չդարձրեց դրան: Յաղուբը ետ եկավ և աշտանակը դրեց տեղը:

— Ես կարծում էի, դու փափուկ սիրտ ունես, Նենկո:

— Թե որ փափուկ սիրտ ունենայի, ես գինվոր չէի լինի, Յաղուբ:

Դրսից խշխշոց ու թխկոց լավեց: Սաֆար բեյը վեր թռավ տակից: Կասկածանքով նայեց Յաղուբին.

-- էդ ի՞նչ է:

— Մի՛ անհանգստանա, Նենկո: Քեզ վտանգ չի սպառնում:

Դուռը բացվեց, անաղմուկ սենյակ մտավ Զվենիգորան,

նրա ետևից՝ Դրազանը: Սաֆար բեյը նետվեց դեպի պատը, որտեղ կախված էին իր զենքերը: Բայց Արսենը կայծակնային արագությամբ կտրեց նրա ճանապարհը և ատրճանակի սև փողը դեմ արեց կրծքին:

— Հանգիստ, Սաֆար բեյ: Սալամ: Մի՞թե այդպես ևն ընդունում հյուրերին:

— Ին՞չ եք ուզում, — սփրթնեց աղան:

— Հարգելի աղա, Յաղուրն ամեն բան պատմեց քեզ: Բայց դու անսիրտ մարդ դուրս եկար: Դրա համար էլ ստիպված ենք մի քիչ այլ կերպ խոսել քեզ հետ: Տուր ձեռքերդ: Դրազան, պարանը բեր:

— Ուռուս, դու վրեժ ես լուծում ինձնից նրա համար, որ Չեռնավողայում քեզ զերությա՞ն ուղարկեցի: Բայց հավատա, ես հետո փոշմանեցի և ուզում էի հրամայել...

— Ես դա դիտեմ, — պատասխանեց Զվենիգորան: — Յաղուբը պատմել է ինձ: Թեև քո շնորհիվ համարյա մի ամբողջ տարի անցկացրի տաժանավայրում, մտադիր չեմ վրեժ լուծելու: Բայց այդ մասին ճանապարհին կհասցնենք խոսել: Այնտեղ ժամանակ շատ կունենանք: Կապիր Դրազան:

6

Հաջորդ օրը միջօրեին բոլոր երեսուն հայդուկները, որ մնացել էին ձմեռելու լեռներում, խոնվել էին վոյեվոդայի խրճիթի մոտ: Վոյեվոդան կանգնած էր առջևում: Միայն Զլատկան էր մնացել հիվանդ մոր մոտ:

Ներքևից օձապտուլտ գալարվող լեռնային կածանով հինգ ձիավոր էին բարձրանում: Հայդուկները լուռ, անձայն նայում էին նրանց, ավելի ճիշտ նրանցից մեկին, որի աչքերը կապված էին: Նա երկրորդն էր շարքում: Գալիս էր անմիջապես Դրազանի ետևից:

— Արա՛գ: Արագ... — Ժայռի գլխից ձայնեց Յացկոն՝ զըլխարկը թափահարելով:

Վոյեվոդան հուզվեց, թեև աշխատեց ցույց չտալ հուզմունքը: Սակայն տեսնելով, որ նա գունատվեց, իսկ հետո զըլխարկը հանելով սկսեց ճմռթել ձեռքերի մեջ, հայդուկները կա-

ըող էին գլխի ընկնել, թե ինչ զգացմունքներ էին փոթորկվում իրենց առաջնորդների հոգում: Սառցի պես կտրող քամին ծածանում էր նրա երկար, սպիտակ մազափունջը, ծակծկող ձյան փաթիլները զարկվում էին դեմքին, բայց Մլադենը կարծես չէր զգում ցուրտը, չէր նկատում: Զառիթափի գլխից անթիթ նայում էր իրեն մոտեցող սրբուն:

Վերջապես ձիավորներն անցան ժայռը, որի վրա էր մագլցել Յացկոն, և կանգ առան խրճիթի առջև, որտեղից բացվում էր մշուշով պարուրված խոր կիրճի տեսարանը: Արսենն արձակեց Սաֆար բեյի աչքերի կապը:

— Ողջույն, վոյեվոդա: Ողջույն, դրուգարներ,— բարևեց Դրագանը՝ ձիուց ցած թռչելով:— Կակվո՞ պրավիտե՛:

— Բարով, Բարով:— Մլադենը մեկ-մեկ ողջագուրվեց ժամանողների հետ և կանգ առավ Սաֆար բեյի դիմաց:

Խորունկ լուսթյուն իջավ: Բոլորը շունչները իրենց պահեցին: Հայդուկների մոռյլ քամահարված դեմքերը դարձան դեպի ենիչերի աղան: Հակասական զգացմունքներ փոթորկվեցին խոռվարարների սրտերում: Ուրեմն ահա թե ինչպիսին է նա, Սաֆար բեյը, իրենց ամենաոխերիմ թշնամին: Զահել, գեղահասակ, զարմանալիորեն նման տիկին Անկային՝ նա հմտորեն էր ձի հեծել և իր սև, ծակող աչքերով ուշադիր զննում էր հայդուկներին ու նրանց բնակատեղը: Չնայած հոգնածությանն ու հուզմունքին՝ նա ջանում էր հպարտ պահել իրեն, աչքերը չէր թարթում հայդուկների ծակող հայացքների տակ:

Ճանաչելով վոյեվոդային՝ նա արագ իջավ ձիուց, անշարժ ձգվեց տեղում, առանց սանձը ձեռքից բաց թողնելու:

— Բարով, որդիս,— կամացուկ մրմնջաց վոյեվոդան՝ սևեռուն նայելով աղայի աչքերի մեջ:

Սաֆար բեյը շփմացավ վոյեվոդայի հայացքին: Աչքերը խոնարհեց: Արսենը, որ կանգնած էր կողքին, կարող էր երգվել, որ նրա շուրթերը դողում էին:

— Բարով... տատե՞:

Հավանաբար այդ բառերը հսկայական ճիգեր պահանջե-

1 Կակվո պրավիտե (բուլղ.) — ինչպե՞ս են գործերը:

2 Տատե (բուլղ.) — հայր, ապի:

ցին Սաֆար բեյից, որովհետև նրա ձայնը դողդողաց ու խռպուս հնչեց:

Հավաքվածները հուզվեցին, ալեկոծվեցին, թեթև քամու սյուրփ մեջ գրեթե անխելի մի հառաչանք տարածվեց: Մերունի Մոմշիլը կռնչաց, ասես կոկորդը մրմռում էր: Յաղուբը շուտ եկավ և լուռ սրբեց մշուշված աչքերը:

— Շնորհակալ եմ, դավակս, որ եկար: Գնանք խրճիթ,— հրավիրեց Մլաղենը:— Քո մայկոն էնտեղ... քեզ է սպասում: Օ՛, աստված իմ, շա՛տ-շատ երկար սպասեց քեզ խեղճը...

Նրանք գնացին դեպի խրճիթ: Հայդուկները խմբով շարժվեցին նրանց ետևից, բայց դուռն մոտ կանգ առան:

— Հիմա մենք էնտեղ ավելորդ ենք,— ասաց Յաղուբը:— Թող մենակ մնան...

Բայց ամբոխը չցրվեց: Մարդիկ կանգնել էին քամու դեմ: Զյունը հարվում էր նրանց դեմքերին ու հոսում էր թաց քուրքերի վրա: Մթնած երկնքում զեղնին էր տալիս հազիվ նկատվող սառած արևի կլոր բիծը:

Որոշ ժամանակ անց Մլաղենը դուրս եկավ և գլխով արեց Արսենին.

— Արսեն, ներս արի:

Զվենիգորան ոտքը խրճիթի շեմքից ներս դրեց: Վերնատանը վառվում էր մոմը: Խրճիթում մեղրամոմի հոտ էր տարածված: Անկան պառկած էր փայտե լայն մահճակալին: Աչքերը փայլում էին, ծանր էր շնչում: Նրա մոտ նստած էր Զլատկան՝ դեմքը արտասուքից թրջված: Սաֆար բեյը կանգնած էր գրվապահներում, և մայրը բռնել էր նրա ձեռքը, ասես վախենում էր, թե ուր որ է նա կհեռանա իրենից: Խոռվք ու շփոթմունք կար Սաֆար բեյի դեմքին:

Անկան նկատեց կազակին, շշնջաց.

— Արսեն, մոտ արի:

Զվենիգորան մոտեցավ նրա մահճակալին: Կանգնեց Զլատկայի կողքին:

— Շնորհակալ եմ, որ որդուս բերեցիր... Ես շատ ուրախ եմ...— Անկայի ձայնը խզվեց: Նա դժվարանում էր խոսել, և Զվենիգորան մի շարժում արեց, կարծես ուզում էր ընդհատել նրան, բայց վերջինս բացասաբար օրորեց գլուխը.— Ո՛ր,

ո՛ւ, թող ասելիքս ասեմ... Շատ քիչ ժամանակ ունեմ... Դու
Զլատկային շա՛տ ես սիրում:

Հարցը անսպասելի էր, և Արսենը հանկարծակիի եկավ,
շփոթվեց: Բայց մեղմ ու հաստատուն պատասխանեց.

— Շա՛տ,— և նայեց Զլատկային: Աղջկա գունատ այտերը
բոցավառվեցին:

— Իսկ դո՞ւ, աղջիկս:

— Ես... նույնպես...— շշնջաց Զլատկան:

— Ձեռք ձեռքի տվեք, ա՛յ այդպես... Առաջ վախենում էի,
Արսեն, թե ինձնից կխլես աղջկաս, որին հաղիվ եմ գտել, իսկ
հիմա ինքս եմ հանձնում քեզ... Պահպանիր նրան... Այստեղ,
հայրուկների մեջ նա էլ է կյանքից ձեռ քաշել... Ես ուրախ
եմ ձեզ համար... Բախտավոր եղեք... Մլադեն, սիրելիս...—
Նա ազատ ձեռքը մեկնեց ամուսնուն, և վոյեվոդան, ծնկի
իջնելով, այտը հպեց նրա ձեռքին:— Ահա և մենք իրար գլխի
հավարվեցինք... Ամբողջ ընտանիքով... Ես այնպե՛ս երջանիկ
եմ, կրկին ինձ հետ են իմ զավակները...

Մլադենի ուսերը ցնցվեցին, կրծքից մի խոր ու զանազի
հեկեկանք դուրս թռավ: Զկարողանալով զսպել իրեն՝ հոնկուր-
հոնկուր լաց եղավ Զլատկան: Զվենիգորան զգաց, թե ինչպես
տաք արցունքները գլորվում են այտերն ի վար, բայց շհա-
մարձակվեց ձեռքը բարձրացնել, որպեսզի սրբի: Սաֆար բեյը
կանգնել էր գունատված ու շուրթերն էր կրծում: Նա դործի էր
դնում բոլոր ուժերը, որպեսզի, ինչպես սովոր էր մտածել,
փորրոգություն չդրսևորի, բայց թե նրա աչքերն էլ արցուն-
քով լցվեցին:

Անկան աչքերը փակեց ու ետ ընկավ բարձին: Ծանր էր
շնչում, ընդհատ-ընդհատ: Վերջին ուժերով սեղմեց որդու
ձեռքը: Վախենում էր թեկուզ մի վայրկյան բաց թողնել:

Փոքր-ինչ հանգստանալով՝ սթափվեց: Խոսեց մեղմ, ցածր,
բայց պարզ.

— Նենկո, որդիս... հարազատս... Գիտեմ, թե որքան
զովար է քեզ համար վարժվել այն մտքին, որ ես... քո մայրն
եմ... Ես քեզ հասկանում եմ... Դու կոտորված ճյուղ ես, որին
բամին պոկել է ծառից ու քշել հեռու: Դու չես էլ հիշում այն
ծառը, որի վրա աճել ես... Իսկ ես հիշում եմ քո առաջին ճի-
շը... Հետո առաջին թոթովանքը, բլբլոցը... Մինչև հիմա էլ

տեսնում եմ քո աշխույժ սև աշուկները, խիտ գանգուրները: Հիշում եմ քո յուրաքանչյուր քայլը՝ առաջին օրվանից մինչև այն պահը, երբ... երբ... Հետո ծանր ժամանակներ վրա հասան, որոնումների երկար տարիներ... Հույսեր ու հիասթափություններ... Եվ այդ ամբողջ ժամանակ դու ապրում էիր իմ սրտում Զլատկայի հետ: Փոքրիկ, թուխամազ մի մանուկ՝ թաթիկիդ երեք երկար սպիներ... Դրա համար էլ հեշտությամբ ճանաչեցի քեզ այդքան երկար տարիների անշատումից հետո... Զէ՞ որ դու իմ մարմինն ես... իմ արյունը...

Նա ջղաձղորեն սեղմեց Սաֆար բեյի ձեռքը: Աչքերը լայն բացած՝ երկար նայեց նրան, կարծես փորձում էր ընդմիջա հիշել նրա յուրաքանչյուր դիմագիծը, ապա հայացքը շրջեց Մլադենի վրա:

— Մլադեն... — շատ թույլ, հաղիվ լսելի մրմնջաց նա, — ամեն մի խոսքը մեծ դժվարությամբ արտաբերելով: — Մլադեն, դիր ձեռքդ... մեր... նենկոյի ձեռքին... Այ այդպես... Արսեն, Զլատկա... դուք էլ...

Արսենն ու Զլատկան մոտեցան մոր սնարին, իրենց ձեռքերը դրեցին Սաֆար բեյի ձեռքին:

— Իսկ հիմա երգվեք... երգվեք... որ ձեզանից ոչ մեկը երբեք ձեռք չի բարձրացնի մյուսի վրա, թեկուզև լինեք տարբեր բանակներում... Աղաչում եմ ձեզ... ձեռք չբարձրացնեք որդուս վրա...

— Երգվում եմ, — կամաց ասաց վոյեվոդան:

— Երգվում եմ, — խուլ արձագանքեց Զվենիգորան, և նրա ցածր ձայնին միացավ զեփյուոփ պես թեթև Զլատկայի ձայնը:

— Երգվում եմ:

Լուսթյուն իջավ, համր, տազնապալից:

— Նենկո, իսկ դո՞ւ...

— Երգվում եմ, — դժվարությամբ ասաց Սաֆար բեյն ու աչքերը խոնարհեց:

Զվենիգորային թվաց, թե տազնապներով, մահերով ու ձախորդություններով լեցուն իր ողջ կյանքի ընթացքում ինքը երբեք դրանից ավելի ծանր պահեր չի ունեցել: Նրա համար անտանելիորեն դժվար էր նայել այդ մարդկանց, որոնց ընտանիքի մեջ էր մտել ինքը, մասնակից դարձել նրանց տան-

չանքերին ու տառապանքներին: Կռիվների ու գերության մեջ կոպտացած նրա սիրտը տանջալիորեն ճմլվում էր, իսկ աչքերը լիքն էին արցունքով:

Մլաղենը զսպում էր հեկեկոցը, որ եռում էր նրա կրծքի խորքում: Բոլորը զուխները կախել էին: Միայն Զլատկան արցունքները չէր թաքցնում:

— Լաց մի՛ լինեք, — շնչաց Անկան: — Պետք չէ... Չէ՞ որ բոլորս միասին ենք... Ողջ ընտանիքով... Ես շատ բախտավոր եմ...

Հանկարծ նրա ձայնը խզվեց: Զեռքը դուրս սահեց Սաֆար բիչի ձեռքից ու ընկավ սպիտակ բրդյա վերմակին...

Զլատկայի ճշոցի վրա խրճիթ լցվեցին հայդուկները:

... Անկային թաղեցին հաջորդ օրը: Կռչակների զարկերի տակ, ուսերին առած կարմրածառի դագաղը՝ տարան Պլանինայի վրա հառնող լեռան ամենաբարձր կատարը:

Քամին հանդարտվեց, ամպերը ցրվեցին: Շողաց պայծառ արեր: Կապույտ երկնքում համր լուսնուն էր կախված, իսկ այդ լուսնյան մեջ հանգիստ ու հանդիսավոր ճախրում էին լայնաթիև, սև արծիվները:

Լեռան կատարից երևում էր ողջ Պլանինան՝ կուրացուցիչ ճերմակ ձյունով ծածկված հեռավոր գագաթները, մութ ու խորունկ կիրճերը, սոճու և կարմրածառի մուգ կանաչ անտառները, լերկ, մռայլ քարափները այնտեղ, ուր մարդը դեռ ոտք չէր դրել:

— Այստեղից, Անկա, դու կտեսնես ամբողջ Բուլղարիան, — ասաց Մլաղենը, առաջինը մի բուռ հող յցնելով գերեզմանին: — Նայիր նրան, իմ արծվամայր: Ունկնդրիր հարազատ Պլանինայով անցնող զարնահային քամիների երգերը, կանաչ անտառների սոսափը կիրճերում, վճիտ ու զրնգուն գետակների կարկաչելը... Իսկ երբ կհուզվի, կալեկոծվի Պլանինան, երբ կողոպտ հողը, իմացիր՝ ողջ է քո Մլաղենը, ողջ են բոլոր թառևանները՝ հայդուկները: Այդ նրանք են, որ սրերն ու փշտովները ձեռքներին, կրկին կովի են նետվում հանուն սիրելի Բուլղարիայի ազատության... Ճի՞շտ եմ ասում արդյոք, եղբայրներ...

— Ճիշտ է, ճիշտ է, վոյեվոդա: Ճիշտ ես ասում, մեր հայր, — արձագանքեցին հայդուկները:

— Դե հրաժեշտ տվեք: Հավիտենական քնով թող քնի մեր մայրը:

Լեռան կատարին արագորեն մի գերեզմանաթումբ բարձրացավ: Հայդուկները զոտիներից դուրս քաշեցին ատրճանակները, և կրակոցների որոտը ճեղքեց լեռների անդորր: Մի քիչ լուռ կանգնեցին և կամաց-կամաց սկսեցին ցած իջնել:

— Տատե, գնանք,— ձայն տվեց Զլատկան՝ քաշելով հոր թևքից:

— Դուք գնացեք: Ծս հետո կգամ,— ցածրաձայն պատասխանեց վոյեվոդան:

Նա կանգնել էր գլխաբաց, և նայում էր հեռաստանին, որտեղ երկինքը ձուլվում էր լեռներին: Չոր, կարմրած աչքերում արցունքներ չկային, միայն խորունկ վիշտ կար ու անասելի կսկիծ:

Բոլորն էլ հասկացան, որ վոյեվոդան ուզում է մենակ մնալ այդ թանկագին գերեզմանի հետ:

Արսենը գրկեց Զլատկայի ուսերը և տարավ նրան սարն ի վար: Երբ հասան առաջին գահավեժ սանդղավանդին, ևտ նայեցին: Լեռան կատարին, բացի վոյեվոդայից, մնացել էր նաև Սաֆար բեյը: Երկնքի վառ կապույտ հենքի վրա հստակորեն գծագրվում էին երկու մութ, անշարժ կերպարանքներ...

Մալդենն ու Սաֆար բեյը միայն իրիկնամուտին իջան լեռան կատարից: Ոչ ոք չիմացավ, թե ինչ կատարվեց այնտեղ, ինչի մասին խոսեցին: Խրճիթներն անցնելով՝ Սաֆար բեյը մոտեցավ դառիթափին ու նստեց սառը ձյունածածկ քարին: Նրա գունատ, հոգնած դեմքին տխրության ու թախծի արտահայտություն կար, վշտից ուսերը կախ էին ընկել:

— Դրագան, մարդ ուղարկիր, թող ուղեկցեն մինչև Սլիվեն,— կարճ հրամայեց վոյեվոդան:

— Ինչպե՞ս...— Դրագանն ուզում էր հարցնել՝ Սաֆար բեյի աչքերը կապե՞ն արդյոք, բայց լուեց: Վոյեվոդայի հայացքում, որով նա նայեց իր որդուն, մի անորսալի բան կար, որ զսպեց Դրագանին: Բայց Մալդենը հասկացավ իր երիտասարդ բարեկամին:

— Ո՛չ, ո՛չ, պետք չէ կապել,— իսկույն վրա բերեց նա... — Հարկավոր չէ... Ծս հավատում եմ... Նա չի կարող իր մոր գերեզմանի վրա ենիշերիներ բերել...

Համիզը նստել էր Սաֆար բեյի սենյակում, փափուկ բարձի վրա, և շարախնդորեն նայում էր ձևոքերը ոլորած, առաստաղից կախված բայ Ստանկոյի մեջքին խարազանի բացած ակոսներին: Դիմացը, հրամանի սպասելով, անշարժացել էին ներշերտները՝ Կագամլիկն ու ածղահա Աբդագուլը:

— Դու արդեն ծեր ես, բայ Ստանկո, բայց անխելք երեխայի պես ես պահում քեզ: Ա՛յ-ա՛յ-ա՛յ, — հանգիստ ասաց Համիզը: — էդ համառ լուսթյունը քո օգտին չի խոսում: Մի՞թե էդքան շատ ես ուզում, որ ջարդենք ոտքերդ, լեզուդ պոկենք ու աչքերդ խարանենք: Մեզ մի՛ ստիպիր էդ բանն անել: Ասա, ո՛ւր է չքվել Սաֆար բեյը:

— Զգիտեմ, աղա, — խոխոացրեց բայ Ստանկոն:

— Բայց ախր հետքերը քո բակն են տանում, կեղտոտ գլավուր: Ո՞նց կարող է չիմանաս:

— Որերորդ անգամն է ասում եմ. ալլահը վկա, չգիտեմ, թե ուր է չքվել Սաֆար բեյը:

— Այդ դեպքում ասա, որտե՞ղ փնտրենք Յաղուբին: Դու հո չե՞ս կարող ստել, որ ծանոթ ես էդ ավազակի հետ:

— էդ անունը առաջին անգամ եմ լսում:

— Հիմարովթյուններ մի՛ դուրս տա: Յաղուբը իրիկունը մտել է Սաֆար բեյի տունը՝ փողոցի կողմից: Նրան տեսել է Կագամլիկը: Բայց էնտեղից դուրս չի եկել: Դժվար չէ գլխի ընկնել, թե ավազակը կամ ավազակները, աղային գողանալով, որ ճանապարհով են հեռացել տնից: էստեղ առանց քո օգնության գործը գլուխ չէր գա, քոփակ շուն:

— Միևնույն է, ես ոչ մի Յաղուբ չեմ ճանաչում: Գետինը մտնեմ, թե խարում եմ...

Համիզը համբերությունից դուրս եկավ: Գոռաց:

— Աբդագուլ, էլի հասցրու էս ավանակին: Գուցե խելքի կգա ու կհիշի աչն, ինչը համառորեն ուզում է մոռանալ:

Լողլող Աբդագուլը կանգնեց սենյակի մեջտեղում, թևրով սրբեց ճակատի քրտինքը: Նորից շաշեց խարազանը: Զարհուրելի ցավից աղավաղվեց ծեր բուլղարացու դեմքը:

— Զարագործներ... — մրմնջաց թշվառ ձերունին: — էլ ուժ չունեմ դիմանալու...

Համիզը նշան արեց դադարեցնել կտտանքը:

— Դե խոսիր:

— Զուր տվեք:

Կազամլիկը ջրով լի թասը մոտեցրեց ձերունու շորացած, կծոտած շուրթերին: Բայ Ստանկոն ազահությամբ վրա պըրծավ թասին: Ծարավը հագեցնելով՝ կրկին լուռ մնաց: Մշուշված հայացքով նայեց սպախիայի մոայլ ու կոշտ դեմքին:

— Ես սպասում եմ, — ատամների արանքից մլուտաց Համիզը: — Ո՞ւր է անհետացել Սաֆար բեյը:

Ստանկոն շարզված ատամներից արյուն թքեց, բացասաբար օրորեց գլուխը: Դեմքը ուռել էր ձեծից, պինդ կապկպված ձեռքերը փայտացել էին: Ուժերն սպառվել էին: Եթե շիներ պարանը, որով նա կախված էր առաստաղից, մի րոպե էլ ոտքի վրա չէր կարող մնալ:

— Ես նրա երեսը չեմ տեսել... աղա:

— Ստո՛ւմ ես: Դու ես Յաղուբի հետ գողացել նրան:

— Երզվում եմ, ես ոչ մի Յաղուբի հետ ծանոթ լինելու պատիվը չունեմ:

— Ավազակի հետ ծանոթ լինելը մեծ պատիվ չէ... Պոչ մի՛ խաղացնի. դու շատ լավ ես ճանաչում Յաղուբին: Մենակ ասա՝ ո՞ւր է նա: Որտե՞ղ եք թաքցրել Սաֆար բեյին:

— Զուր տեղն ես ինձ տանջում, աղա: Ես ոչինչ չգիտեմ ոչ Սաֆար բեյի մասին, ոչ էլ Յաղուբի...

Ստանկոյի մեղմ, հանգարտ պատասխանը ի վերջո կատաղեցրեց Համիզին:

Անիծված գլավուր: Հոգին տալիս է արգեն, բայց էլի ստում է: Զէ՛, ինքը կբացի այդ կամակոր հայդուկի լեզուն: Պետք է բացի և իմանա, թե ուր է կորել Սաֆար բեյը, եթե նույնիսկ հարկ լինի տանջել, մեռնելու դուռը հասցնել ոչ թե մեկ, այլ հազար բուլղարացի շներին: Դրա համար Համիզը լուրջ պատճառներ ուներ:

Սաֆար բեյի խորհրդավոր անհետացման մասին նա իմացավ այսօր առավոտյան, Զագորայից, բեզլերբեյի մոտից վերագառնալիս: Լուրը շմեցրեց սպախիային: Չնայած գրեթե մի տարի էր արգեն նրանց հարաբերությունները

լարված էին, նույնիսկ թշնամական, Համիզը աչքից բաց չէր թողնում երիտասարդ աղային և շատ էր անհանգստանում, երբ նա փորձությունների էր հանդիպում: Բանն այն է, որ Համիզը շատ սնահավատ էր: Իսկ շատ-շատ տարիներ առաջ, երբ վոյեվոդա Մլազենի երեխաների հետ մտնեցավ Զաղորային և, հոգնած, նստեց ճամփեղրին, մի քարի վրա, հանգստանալու, անձայն ստվերի նման նրան մտնեցավ մի պառավ գնչուհի: Նրա խամրած թուխ աչքերը մեկվեցին աղայի դեմքին: «Մի ոսկի տուր, բարի աղա, և ես կպատմեմ բոլորը, ինչ-որ պատահելու է քո կյանքում»,— կռավեց պառավը:

Համիզը ուզեց վռնդել նրան, բայց գնչուհին կռահեց նրա մտադրությունը և կեռված թուխ մատներով կախ ընկավ նրա թևքից.

«Մի՛ վռնդիր, աղա... քո շորս կողմը արյուն է, շատ արյուն: Մռայլ մտքերը ակոսում են քո ճակատը... Ես չեմ խոսի եղած-չեղածի մասին: Ոսկի դիր բուռս, սիրուն աղա, և ես կասեմ, թե ինչ է սպասում քեզ: Մի ղուռուչը մի՛ խընայիր խեղճ գնչուհուն...»

Համիզը տատանվեց: Ապագան վախեցնում էր նրան: Պատահմամբ արյան մասին ասած գնչուհու խոսքերը նրան ստիպեցին ցնցվել: Գուցե, իսկապե՞ս պառավ վհուկը գուշակում է ապագան:

Նա գրպանից մի ղուռուչ հանեց: Գնչուհին ազահորեն խլեց դրամը և թաքցրեց խայտաբղետ զգեստների խիտ ծալքերի տակ: Արագ բացեց խաղաթղթերը:

«Քո ապագան լուսավոր է, բարի աղա,— նորից կռավեց նա:— Քեզ հարստություն կվիճակվի ու երկար ճանապարհ: Ե՛վ պատիվ, և՛ հարգանք: Դու ծանր փորձության առաջ ես կանդնած եղել, բայց հաջողությամբ դուրս ես պրծել: Դու մեծ շահ ունես երեխեքից: Նրանք արնակից չեն, հարազատ չեն քեզ, աղա, բայց ամուր կապված են քո բախտի հետ: Այնքան ամուր, որ նույնիսկ վախենում եմ ասել...»

«Խոսիր, պառավ...»— գուչեց տագնապած Համիզը:

«Մի ոսկի տուր, բախտավոր մարդ»:

Համիզը մի ղուռուչ էլ գցեց: Գնչուհին նայեց նրան պրզտոր աչքերով, խզխզացրեց. «Քո ճանապարհը շատ հեռուն

է գնում, բախտավոր մարդ: Եվ ամբողջ ժամանակ քեզ հետ
այդ ճամփով գնում են երկու հոգի: Մերթ նրանք հեռանում
են քեզանից, մերթ կրկին մոտենում: Ձեր ճամփաները հատ-
վում են, ինչպես իմ դեմքի կնճիռները: Եվ ի՞նչն է զարմա-
նալին. նույնիսկ քո մահը կախված է նրանցից մեկի մա-
հից...»

Համիզը փուչնը դցեց: Չայնը զոզոզաց.

«Ի՞նչ երեխաներ»:

«Նրանք, որ ուղեկցում են քեզ, ադա»:

Գնչուհին շքացավ նույնքան անձայն ու աննկատ, ինչ-
պես որ հայտնվել էր: Իսկ Համիզը դեռ երկար նստած մնաց
տաք բարին, լսածից ցնցված: Սարսափով նայեց սև ծած-
կոցին, որի տակ փաթաթված, ավելի ճիշտ կապկպված,
պռկած էին վոյեվոդայի երեխաները: Թո՛ւհ, շեյթան:
Մի՞թե իր բախտը հիմա կախված է այդ հայդուկի ճուտերի
ճակատագրից: Մի՞թե իր կյանքը երկարացնելու համար
ինքը պարտավոր է հոգ տանել և նրանց մասին...

Գնչուհու խոսքերը խոր մեխվեցին Համիզի սրտում:
Սնահավատ երկյուղը նրան ստիպեց երկար տարիներ պահ-
պանել նենկոյին ու նրա բրոջը, հոգ տանել նրանց մասին:
Երբ բեզլերբեյը, կամենալով անողոք հարված հասցնել
վոյեվոդա Մլադենին, ուզեց սպանել երեխաներին, Համիզը
նրանց համար ներում խնդրեց, իսկ հետո նենկոյին, Սաֆար
բեյ անունով, հանձնեց ենիշերիական կորպուսին, իսկ Չլաու-
կային իր երեխաների հետ պահեց իր տանը նրան տալով
Ադիկե անունը:

Իմանալով, որ երեք օր առաջ առեղծվածային պարագա-
ներում անհետացել է Սաֆար բեյը, նա անմիջապես սկսեց
որոնումները, որոնք առիթ տվեցին ենթադրելու, թե Սաֆար
բեյին զողացել են: Ո՞ւր է կորել նա: Ի՞նչ է պատահել: Ո՞րչ
է արդյոք: Դրանց կարող էր պատասխանել միայն մի մարդ՝
Ստանկոն: Հետքերը տանում են նրա բակը... Նա, հավա-
նաբար, կարող էր տեղեկություններ տալ Յաղուբի մա-
սին, որին Համիզը ոչ առանց պատճառի համարում էր իր
ոխերիմ թշնամին և ուզում էր շուտ վերացնել իր ճանապար-
հից: Սակայն անիծյալ բուլղարացին լուում էր: Չէր ուզում
ճշմարտությունն ասել: Չէ՛, ինքը նրա լեզուն կբացի:

Համիդն ինքը խլեց ծանր գավազանն ու սկսեց խփել բուլղարացու ձեռքերին, դեմքին, մեջքին:

Ստանկոն գալարվեց՝ փորձելով մի կերպ աչքերը պաշտպանել:

— Դու բոլորը կասես, դյավուր շուն, — շնչակտուր ասաց սպախիան՝ իր ողջ ուժը դնելով հարվածների մեջ: — Բոլորը կասես:

— Ես ոչինչ չգիտեմ... — տնքաց բայ Ստանկոն:

— Որտե՞ղ է Յաղուբը: Որտե՞ղ եք թաքցրել Սաֆար բեյին:

— Ես նրանց չեմ տեսել, աղա: Աստվա՛ծ է վկա:

Խարազանը նորից շաչեց: Համիդը դիվոտեց: Նույնիսկ Աբդագուլն ու Կագամլիկը քաշվեցին պատի տակ, վախենալով, որ իրենց էլ բաժին կհասնի:

Անսպասելիորեն դուռը ճռաց, և շեմքին երևաց Սաֆար բեյը: Համիդը քարացավ տեղում՝ խարազանը բարձրացրած: Աչքերում և՛ զարմանք հայտնվեց, և՛ շփոթմունք, և՛ ուրախություն, որոնք նա ի վիճակի չեղավ թաքցնել:

— Ի՞նչ է նշանակում այս բոլորը, Համիդ աղա, — հարցրեց Սաֆար բեյը՝ դուռը ծածկելով և զարմացած շուրջը նայելով: — Սալամ:

Համիդը հիմարավուն ժպտաց, ձեռքը մեկնեց Սաֆար բեյին, ասես սպասում էր, որ նա նետվելու է իր գիրկը: Սակայն Սաֆար բեյը ձևացրեց, թե չի նկատում սպախիայի պոռթկումը:

— Դե, ի՞նչ է կատարվում այստեղ, — կրկնեց նա իր հարցը:

Համիդը մի կողմ շարտեց խարազանը, մռայլվեց:

— Երբ իր սենյակից անհետանում է ենիշերիների ավազը, ես պարտավոր եմ իմանալ, թե նա ուր է չքվել:

— Եվ դրա համար դու տանջում ես այս դժբախտի՞ն: Դե՞, նա ի՞նչ է պատմել քեզ:

— Ես ասկյարներից իմացա, որ քեզ մոտ է եղել Յաղուբը...

— Էլ ի՞նչ:

— Ուրիշ ոչինչ: Բայց այդքանն էլ ինձ բավական էր:

— Յաղուբը իմ բարեկամն է, — սառնությամբ ասաց նա:

Համիդը բռնազրոսիկ ժպտաց:

— Սաֆայ բեյ, սիրելիս, մի՞թե մենք այսպես սենյակի մնջտեղը, ոտքի վրա պիտի խոսենք: Ես այսօր եմ վերագարձել բեզլերբեյի մոտից և բերել եմ սուլթանի շատ կարեվոր ֆերմանը: Նրանում գրված է ուռուսների դեմ նոր արշավանք կազմակերպելու մասին: Գուցե մենք առանձի՞ն խոսենք այդ բոլորի մասին:

— Կա՛վ,— մռայլորեն համաձայնեց Սաֆար բեյը:

— Այդ դեպքում հրամայիր դուրս տանեն էս շուն հայդուկին ու փակեն նկուղում,

Սաֆար բեյը գլխով արեց ասկյարներին.

— Դուրս տարեք ու բաց թողեք:

Կագամլիկն ու Աբդագուլը վրա պրծան Ստանկոյի կապերը քանդելու: Համիդը դժգոհ փնշացրեց.

— Սաֆար բեյ, դու սխալ ես թույլ տալիս: էս բուլղարացին մասնակցել է քո առևանգմանը: Հարկավոր է նրան հարցաքննել:

— Դու ինքդ ես սխալվում, Համիդ աղա,— հանգիստ սատասխանեց Սաֆար բեյը:— Ինձ ոչ ոք էլ չի առևանգել... Յաղուբը իսկապես եղել է ինձ մոտ: Նա կարևոր լուր էր բերել, որը և հարկադրեց ինձ ճանապարհ ընկնել:

— Ո՞ւր:

— Դա արդեն իմ փոքրիկ գաղտնիքն է, Համիդ աղա: Ինչպես, հավանաբար, հայտնի է քեզ, ես ներքինի շեմ: Ուստի դժվար չէ գլխի ընկնել, թե ինչ զգացմունքներ են ստիպել ինձ՝ կարճ ժամանակով հեռանալ իմ տնից...

Համիդը անվստահորեն խեթ նայեց Սաֆար բեյին, սակայն, ոչինչ շասաց: Կագամլիկն ու Աբդագուլը բռնեցին Ստանկոյի թևերից, քաշեքաշ դուրս տարան սենյակից:

Սաֆար բեյը փոփոխացրեց օթոցի վրայի բարձը, Համիդին առաջարկեց նստել:

— Հիմա խոսենք, Համիդ աղա: Ի՞նչ նորություն կա բեզլերբեյի մոտ: Ի՞նչ է գրում պայծառափայլ սուլթանը իր ֆերմանում:

Ստարա Պլանինան ամենալավ ապաստարանն ու թաքստոցն էր հայդուկների համար: Բոլոր գրեթե անմատչելի տեղերում՝ լեռնաբերձ մարգագետիններում, խորունկ ու մութ կիրճերում, դարավոր կուսական անտառներում, կառուցել էին խրճիթներ՝ սև սոճու փայտից, որ կտրել էին լեռնցի հովիվները, հայդուկների նախկին վոյեվոդայի հրամանով: Այդ խրճիթները ցածրիկ էին, գետնին կպած, անհրապույր, բայց հուսալիորեն պաշտպանում էին աշնանային անձրևներից ու ձմռան ցրտերից:

Վոյեվոդա Մլադենը իր ջոկատը բերեց այդպիսի մռայլ ձյունածածկ հովիտներից մեկը: Անկային հողին հանձնելուց հետո նա ոչ մի օր չուզեց մնալ այնտեղ, ուր ամեն ինչ կնոջն էր հիշեցնում: Բացի դրանից նրան Սլիվեն էր ձգում Համիդի վրեժ լուծելու ցանկությունը:

Մինչ հայդուկները փայտ կջարդեին, կվառեին վառարանները և տաք կերակուր կպատրաստեին, Դրագանը, որ երկար ճամփից հետո փոխել էր ոտնամանները և շոր սպառզներ էր հագել, մոտեցավ վոյեվոդային:

— Բայ Մլադեն, չէր խանգարի, եթե ես մի փոքր գրոսանք կատարեի մինչև քաղաք: Հարկավոր է տեղեկացնել մեր մարդկանց, թե որտեղ ենք տեղավորվել:

— Դու շատ ես հոգնել, Դրագան:

— Միևնույն է: Հանգստանալու ժամանակ չկա: Սաֆար բեյը արդեն հասել է Սլիվեն, և մեզ անհրաժեշտ է իմանալ, թե նա ինչ մտադրություն ունի մեր նկատմամբ: Հետաքրքիր է նաև իմանալ, թե ինչ է անում Համիդը...

— Դու իսկական յունակ ես, Դրագան: Եթե ես էն աշխարհը գնալու լինեմ, առանց ափսոսանքի հրաժեշտ կտամ երկրին. դու կշարունակես այն գործը, որի համար պայքարեցի ես իմ ողջ կյանքում:— Հուզված ասաց վոյեվոդան:— Է, ինչ արած, գնա, բայց զգույշ եղիր:

Դրագանը մեկնեց:

Անսպասելիորեն նա շուտ վերադարձավ, լուսաբացից առաջ: Մլադենը նրան սպասում էր միայն երկրորդ օրվա

երկոյան, դրա համար էլ շատ զարմացալ, երբ երիտասարդ բարեկամին, ձնակոլոլ եղած, տեսալ իր խրճիթում:

— Ի՞նչ է պատահել, Գրագան: Դու կես ճամփի ց ես վերադարձել:

— Այո: Բայց ոչ մենակ: Ինձ հետ է բայ Դիմիտրը: Երկուսիս բախտն էլ բերեց. նա Սլիվենից շտապում էր մեր ճամբարը, որտեղ ոչ ոքի չէր գտնելու, իսկ ես գնում էի Սլիվեն, որտեղ զուր տեղը պիտի փնտրեի բայ Դիմիտրին: Ուստի շնորհակալ լինենք բոլոր սրբերից, որ բուք սկսվեց: Բուքը մեզ քշեց Արջի քարանձավը, որտեղ և հանդիպեցինք, հուրախութուն մեր երկուսի:

— Բա ո՞ւր է Դիմիտրը: Կանչիր նրան այստեղ:— Վոյեվոդան քուրքը գցեց ուսերին, փչելով բորբոքեց օջախի կրակը:— Նա, երևի, շատ բան կարող է պատմել...

— Այո, նա դատարկ ձեռքով չի եկել: Հիմա ես նրան կբերեմ:

Քիչ անց խրճիթ մտալ Դիմիտրը, երկար բեղերից թափ տվեց ձյունը: Մլաղենը ողջագուրվեց նրա հետ, տարալ նստեցրեց կրակի մոտ: Խրճիթում բոլորը արթնացան՝ Զվենիգորան, Սպիխալսկին, Գրիվան, Զլատկան, Յաղուբը, Յացկոն: Յուրաքանչյուրին հետաքրքրում էր, թե ինչ լուրեր է բերել Գրագանը:

Մարիլկան հաց ու այծի տապակած միս դրեց սեղանին, բայց Դիմիտրը ուտելիքին ձեռք չտվեց: Վառարանի մեջ բռնկվեցին սոճու շոր ճյուղերը, և կրակը լուսավորեց բուլդարացու դեմքը, որտեղ ծանր խոնջանքի կնիքը կար. երևում է հեշտ չէր եղել զարտուղի ճանապարհներով թափանցել ձյունապատ լեռները: Աչքերի մեջ սառել էր տազնապար:

Բոլորն էլ, անշուշտ, հասկացան, թե շատ կարևոր պատճառ պետք է լիներ, որ ստիպեր բայ Դիմիտրին՝ հեռանալ Սլիվենից և ինքնուրույն, առանց հայդուկների կապավորին սպասելու, շարժվել դեպի լեռները:

— Ի՞նչ է եղել, բայ Դիմիտր,— հարցրեց վոյեվոդան՝ ձեռքը հյուրի ուսին դնելով:

Բայ Դիմիտրը ծանր հոգոց հանեց.

— Բայ Ստանկոյին տանջեցին...

— Ինչպե՞ս թե: Ո՞վ տանջեց:

— Համիդը... Ուղում էր իմանալ՝ անիծվածքը, թե ուր է շքվել Սաֆար բեյը: Հետաքրքրվում էր նաև Յաղուբով:

— Հետո՞:

— Բայ Ստանկոն ոչինչ չի ասել: Ասենք ոչինչ էլ չգիտեր, բացի նրանից, որ ես մասնակցել եմ էս պատմությանը: Բայց նա ինձ չի մատնել, իսկ կասկածը ընկել է նրա վրա այն պատճառով, որ մեր հեսքերը տանում էին նրա բակը...

— Ափսոս էր բայ Ստանկոն,— ասաց Գրագանը,— նա ո՞ղջ է: Ապահով տեղ է:

— Այո, ասկյարները քաշեքաշ դուրս են բերել նրան համարյա կիսամեռ ու շարտել բակում: Ոնց որ շուն... Բայց պինդ ծերուկ է: Կինը մի կերպ տուն է հասցրել նրան ու մաճառ խմեցրել, և նա անմիջապես պատվիրել է կանչել ինձ:

Բայ Դիմիտրը ձեռքով շփեց դեմքը՝ տաքությունից հալված հոնքերից ու բեղերից մաքրելով ջրի սառը կաթիլները:

— Որևէ կարևոր բան կա,— հարցրեց վոյեվոդա Մլադկենը:

— Շատ կարևոր նորություն հայտնեց ինձ բայ Ստանկոն... Համիդը նրա ներկայությամբ բերանից թոցրել է սուլթանի ֆերմանի մասին, որտեղ խոսք է գնում ուսանակների դեմ նոր պատերազմ սկսելու մասին, Կարծում եմ, հետաքրքիր կլինեն մանրամասն իմանալ դրա բովանդակությունը, բայ Մլադկեն, հը՞... Այ թե ինչի համար էի շտասյում ձեզ մոտ...

— Շնորհակալություն, Դիմիտր, բարեկամս,— հուզված ասաց վոյեվոդան:— Շնորհակալություն քեզ ամբողջ Բուլղարիայի կողմից՝ հավատարիմ ծառայության համար... Դու շատ կարևոր տեղեկություն ես բերել, և մենք հիմարոլորս միասին կմտածենք ոչ միայն այն մասին, թե ինչպես բռնենք Համիդին, այլև՝ թե ինչպես ձեռք գցենք սուլթանի ֆերմանը:

— Իսկ ի՞նչ բան է էդ ֆերմանը,— դանդաղ, ծոր տալով հարցրեց մշտապես լուրջ, քշախոս Գրիվան:

— Ֆերմանը, բարեկամներ, սուլթանի հրամանն է, հրովարտակը,— բացատրեց վոյեվոդան:— Եթե մեզ հաջողվի ձեռք գցել այդ ֆերմանը, մենք, հավանաբար, կկարողանանք

խիստ կարևոր և լուրջ տեղեկություններ իմանալ: Եթե նրանում իսկապէս խոսվում է Ուկրաինայի դեմ թուրքերի նոր արշավանքի մասին, ապա մենք կիմանանք, թե երբ է սկսվելու, կիմանանք զորքի քանակը և թե ով է գլխավորելու արշավանքը: Ճի՞շտ չեմ ասում:

— Հը՛մ, ճիշտը էն կլինի, որ մեր ձեռքը գցենք էդ ի՞քը,— իր բամբ ձայնով խոսեց Սպիխալսկին:

— Անպայման,— պաշտպանեց նրան Զվենիգորան:— Ինչ գնով ուզում է լինի, մենք անհապաղ պետք է մեկնենք Սլիվեն:

Արսենը հարցականորեն նայեց վոյեվոդային, սպասելով, որ նա կաշտպանի իրեն:

Վոյեվոդա Մլադենը որոշ ժամանակ լռեց, ըստ երևույթին մտքում ինչ-որ բան վճռելով: Հետո ասաց.

— Մի բան պարզ է. դա պետք է անենք անմիջապես: Բայց ինչպե՞ս: Ո՞վ կանի:

— Համիզը ապրում է Աբդի աղայի խանում,— վրա բերեց Դիմիտրը:— Նրան հսկում են:

— Ես ու Դրագանը մի անգամ արդեն եղել ենք էդ խանում,— ասաց Զվենիգորան:— Կարծում եմ, հիմա էլ մենք պիտի գնանք: Երկու հոգին լիուլի բավական են:

— Ոչ, գուցե երեքով ավելի լավ է,— կասկած հայտնեց Դրագանը:

— Այդ գեպքում ես կլինեմ երրորդը,— տեղից ելավ Սպիխալսկին:

— Ո՛չ ո՛չ, պան Մարտին,— Արսենն աճապարեց հրաժարվել իր շատախոս, տաքարյուն ընկերոջ օգնությունից:— Քո վրայով ենիչերիի շոր էլ չենք կարող ճարել:

— Որ այդպես է, ես կգամ,— ասաց Յաղուբը:— Ինձ... Բայց անսպասելիորեն նրան ընդհատեց Զլատկան.

— Ո՛չ, ո՛չ, երրորդը ես կլինեմ: Ես բոլորիցդ լավ եմ ճանաչում Համիզին, նրա սովորույթները: Նրա ոտնաձայներից հատակի տախտակների ճոճոցից կարող եմ ոչ միայն նրան ճանաչել, այլև իմանալ, թե ինչ տրամադրություն ունի...

— Ի՛նչ ես ասում, Զլատկա...— սկսեց Արսենը:— էնտեղ գինվոր է հարկավոր, որ կարողանա...

Աղջիկը կաղակին թույլ շտվեց միտքն ավարտել.

— ... որը կարողանա կրակե՞լ, ուզում ես ասել... Հայրիկ, դու խոսիր,— դարձավ նա վոյեվոդային:

Մլաղենը ձեռքերը տարածեց: Աղջկա անսպասելի ցանկությունը հպարտությամբ լցրեց նրա սիրտը: Նա հանկարծ Զլատկայի խառնվածքի մեջ տեսավ այն, ինչ ինքը ցանկացել էր իր դավակներին, երբ նրանք լույս աշխարհ էին եկել՝ համարձակութուն, վճռականութուն, նվիրվածություն հայրենիքին և նրա համար կյանքը զոհաբերելու պատրաստակամութուն: Բայց ինչպե՞ս թույլ տալ աղջկան՝ այդպիսի վտանգավոր գործի գնալու:

Նա տատանվեց:

— Այո, Զլատկան լավ կրակել գիտի,— ասաց նա մի պահ լռելուց հետո,— ձի է նստում... Բայց դու կկարողանա՞ս արդյոք,— դարձավ նա աղջկան,— տոկունություն և ոգու ուժ դրսևորել այն պարագաներում, որի մեջ կհայտնվեք:

— Տոկունությունը և ոգու ուժը կարելի է դրսևորել հենց միայն բարդ, գժվարին պարադաներում:

Այստեղ միջամտեց Դրագանը:

— Ես կարծում եմ,— ասաց նա,— Զլատկան ավելի օգտակար կլինի մեզ, քան մեկ ուրիշը: Նա հրաշալի թուրքերեն գիտի, միայն դա շատ բան է նշանակում: Բացի դրանից, հանկարծ ու ամեն ինչ այնպես դասավորվի, որ նա անհրաժեշտ լինի որպես խայծ Համիդին գայթակղելու համար:

Աղջիկը երախտագիտությամբ նայեց ջահել հայդուկին: Իսկ Արսենը դժգոհ մնաց իր ընկերոջ խոսքերից և ուզեց կտրուկ առարկել:

Սակայն Մլաղենը վերջ տվեց նրանց վեճին:

— Ես համաձայն եմ,— ասաց նա,— Վոյեվոդայի աղջիկը իրավունք ունի մյուսներին հավասար վտանգի ենթարկելու իրեն... Այժմ, բարեկամներ, ամեն ինչ լավ ծանրութեթե անենք և՛ բարի ճանապարհ...:

3

Ռոդոպից տաք քամի փչեց և ձյունը իսկույն լիակեց ու գորշ գույն ստացավ: Սլիվենի փողոցներում քըքացին արագահոս առվակները:

Աբղի աղայի խանի առջև կանգ առան երեք ձիավոր: Դատելով նրանց հագուստներից՝ հեծյալ ջոկատից երկու աղաներ էին և մի ջահել ծառա դիմվոր: Ձիերին կապելով պարանից՝ նրանք ուղղվեցին դեպի գուռը: Խանը մութ էր ու դատարկ, և թե՛ շահավենք այն շորս ասկյարներին, որոնք կուշտ ուտելուց հետո ննջում էին անկյունում, իրենց սեղանի շուրջը, մեկ էլ սրճարանատեր Աբղի աղային: Տեսնելով նոր, անծանոթ այցելուներին, սրճարանատերը, որպես ողջունչի նշան, ձեռքերը երկար, ճերմակ մորուքի վրա խաչած, իր տարիքի համար անսպասելի կայտառությամբ նետվեց հյուրերին ընդառուջ:

— Սալամ, ուղղափառներ: Իմ տունը ձեզ փեշքեշ:

Չնայած այն բանին, որ քաղաքը լիքն էր զինվորներով, խանի եկամուտները նրա տիրոջը չէին գոհացնում, և Աբղի աղան անկեղծորեն ուրախանում էր յուրաքանչյուր նոր մարդու համար, որ ոտք էր դնում խանի շեմից ներս՝ գրպանը դուրսնեցրով լի:

— Գիշերելու տեղ և ուտելիք երեք հոգու համար, — ասաց ժամանածներից մեկը, մի ոսկեդրամ նետելով սեղանին:

Աբղի աղան խոր գլուխ տվեց բարձրահասակ վայելչատես աղային, որը անփույթ թևթևությամբ ոսկե դինարներ էր շպրտում, ասես իսպանացի ինֆանտ՝ լիներ:

— Ամեն ինչ կլինի ձեր ուզածի պես, մեծապատիճ աղա: Նա եկածներին առաջնորդեց իր մեծ տան երկրորդ հարկը, բացեց որդը կերած, փտած գուռը, և մտան մի ընդարձակ սենյակ: Պատուհանների գունավոր ապակիներից քիչ լույս էր թափանցում և այստեղ էլ մութ էր, ինչպես ներքևում:

Սենյակում, որտեղ հազվագեպ էին մարդիկ ապրում, օղբ ծանր էր:

— Տեղավորվեք, մեծապատիվ հյուրեր: Հիմա ծառան ձեզ ճաշ կբերի, — ասաց Աբղի աղան և, նայելով բարձրահասակին, որին ավագի տեղ էր դնում, հարցրեց.

— Համարձակվում եմ իմանալ, աղա, երկա՞ր ևր մնալու մեր քաղաքում:

— Դա կախված կլինի շատ հանգամանքներից, դայֆեջի աղա:

¹ Ինֆանտ — արքայազն:

— Դուք առաջին անգամ եք լինում մեր քաղաքում: Ինձ թվում է, ես արդեն մի անգամ պատիվ եմ ունեցել հանդիպելու ձեզ...

— Սխալվում ես, դայֆեջի աղա: Ես առաջին անգամ եմ Սլիվենում, — պատասխանեց նա և մեջքով շրջվեց դեպի պատուհանը, որպեսզի լույսը հրեսին շրնկնի:

— Գուցե սխալվում եմ: Ինձ մոտ ամեն տեսակ մարդիկ են լինում, ասենք տեսողութունս էլ տարեցտարի թուլանում է: Թող ինձ ների հարգարժան աղան, — մոթմոթաց սրճարանատերը՝ հոտ-հոտ գնալով դեպի դուռը:

— Արսեն, ինչ ևս կարծում, նա քեզ ճանաչե՞ց, թե իսկապես դեմքդ ծանոթ թվաց նրան, — տազնապով հարցրեց ջահել ասկյաբը, երբ լոնցին դայֆեջի աղայի ոտնաձայները:

— Մի՛ անհանգստանա, Զլատկա: Էս շորերի մեջ ինձ հարազատ մերս էլ չի ճանաչի, ուր մնաց թե էդ ծեր թուրքը: Համենայն դեպս հարկավոր է զգույշ լինել, — պատասխանեց Զվենիգորան՝ հանելով թանկ մահուդից կարված արխալուղը: — Կարծում եմ ամեն ինչ լավ կլինի: Մանավանդ որ մենք այստեղ երկար չենք մնա:

— Միևնույն է, ևս դնում եմ ստուգեմ՝ հո մեղ չի՞ մատնում էդ ծեր աղվեսը, — ասաց երրորդ ասկյաբը: — Ինձ այստեղ ոչ ոք չի ճանաչում:

— Ինա Դրադան, բայց շուշանաս, — համաձայնեց Զվենիգորան: — Համիդը ուր որ է կգա...

Դրազանը դուրս գնաց:

Սենյակում տազնապալից-ուրախ մի լոռութուն իջավ. այդպես լինում է այն ժամանակ, երբ մենակ են մնում երկու սիրահարներ, որոնց միջև դեռևս չի հաստատվել այնպիսի մտերմութուն, որը թույլ տար աղատ-անկաշկանդ պահելու իրենց: Զլատկան մոտեցավ պատուհանին՝ ոչ այնքան ջանալով վաղուց չլվացված, պղտոր ապակու միջից դիտել հրապարակը, որքան փորձելով այդպիսի տպավորություն ստեղծել: Արսենը զմայլվում էր նրա փոքրիկ վայելչագեղ կազմվածքով, դեմքի նուրբ ձվաձևությամբ, բարախիկ սև խոպոպներով, որ դավաճանաբար դուրս էին թափվել ասկյաբի գլխարկի տակից:

— Զլատկա:

Աղջիկը իսկույն շրջվեց դեպի կաղակը, ասես հենց միայն այդ կանչին էր սպասում: Նրա աչքերը պեծին տվեցին: Արսենը թափով մոտեցավ, բռնեց աղջկա ձեռքերը:

— Սիրելիս, նորից եմ խնդրում քեզ, քանի դեռ ուշ չէ, ինձ ու Դրագանին մենակ թող: Սա շատ վտանգավոր գործ է...

— Արսեն, ինքս եմ պնդել այս բանը, և հայրս էլ թույլ է տվել...

— Իսկ ես թույլ չեմ տալիս:— Նա գրկեց աղջկան:— Լսո՞ւմ ես: Թույլ չեմ տալիս: Դու սարսափելի վտանգի ես ենթարկում քեզ:

— Քեզ հետ ոչ մի բան սարսափելի չէ ինձ համար, իմ յունակ: Ես հավատում եմ ամեն ինչ բարեհաջող կավարտվի...

Զլատկան փորձեց ազատվել նրա գրկից, բայց ավելի շուտ դա արեց բնազդորեն, քանի որ հոգին ձգտելով ձգտում էր դեպի նա: Շուրթերը վարդագույն դարձան, աչքերը շողացին: Հանկարծ աղջիկը տաք համբույր զգաց: Արսենի շրթունքները գտան նրա շուրթերը և այրեցին ծանոթ, քաղցր կրակով, որը թափանցեց սիրտը...

— Օ՛յ...

— Թանկագինս, գոնե հիմա լսիր ինձ: Ես հանգիստ կլինեմ, եթե իմանամ, որ վտանգից հեռու ես,— շնչաց Արսենը,— որ քեզ ոչինչ չի սպառնում... Ինչո՞ւ դու ինձ առաջուց շտեղծիր, դեռ էնտեղ, ճամբարում:

— Հիմա առավել ևս ոչ մի քայլ չեմ հեռանա քեզանից,— պատասխանեց Զլատկան:— Ես առանց քեզ չեմ ուզում ապրել...

Զվենիգորան զմայլված հիանում էր այդ սքանչելի արարածով, որը ավելի ու ավելի խորն էր մխրճվում իր կյանքի մեջ, դառնում այնքան հարազատ ու թանկ, որ ինքը պատրաստ էր նրա համար և՛ կյանքը տալ, և՛ բոլորը, ինչ ամենից թանկ էր:

Դռան ետևում ոտնաձայն լսվեց: Ներս ընկավ հուզված Դրագանը:

— Համենայն դեպս նա քեզ ճանաչել է, Արսեն,— խուճայնով բացականչեց նա:

Զվենիգորան ու Զլատկան նետվեցին դեպի հայդուկը, սակայն Դրագանը հանգստացրեց նրանց.

— Մի՛ հուզվեք: Ես հոգացի այն մասին, որպեսզի Աբգի աղան մեզ շխանգարի:

— Մի՛ երկարացնի, Գրադան: Բան ասա՛ բան հասկանանք: Ի՞նչ է պատահել:

— Ես ճիշտ ժամանակին իջա ներքև: Աբգի աղան մոտեցավ ասկյարներին, ուզում էր ինչ-որ բան ասել: Հենց էդ րոպեին ձեն տվի նրան: Ղայֆեջին, ինչպես նկատեցի շփոթվեց, դողաց, բայց համենայն դեպս մոտեցավ ինձ: Հարցրեց. «Ի՞նչ կբարեհաճի մեծապատիվ աղան»: Ես ասացի, որ ուզում եմ ձեռքիս արտոն տանել: Նա ինձ հետ բակ դուրս եկավ: Ախտում, ինչպես և ենթադրում էի, մեզնից բացի ոչ ոք չկար: Առանց երկար-բարակ մտածելու ես ոլորեցի ծերունու ձեռքերը, խցոցը կոխեցի բերանն ու փակեցի ախոռում: Թող սառի մնա էնտեղ, խարդախ շո՛ւն:

— Հա՛, լավ չեղավ: Եթե սկսեն նրան փնտրել, մեծ աղմուկ դուրս կգա:

— Մինչև էդ բանը պատահի, մենք արդեն հեռվում կլինենք: Համիզը հենց նոր ժամանեց իսան...

— Ճի՛շտ: Դու տեսա՞ր, որտեղ իջավ նա:

— Այո: Խանի մյուս թևը: Միայն մի ասկյար է նրան հսկում: Ննջում է պատուհանի մոտ գրված օթոցի վրա: Կարծում եմ, մենք հեշտությամբ նրա հախից կզանք: Իսկ այ էն շորսը, որ ներքևում են...

— Է՛, ինչ արած, ստիպված կլինենք հենց էստեղ վերջ տալ Համիզին, — ասաց Չվենիգորան:

— Ոչ, վոչեվոդայի հրամանը պարզ է. նրան պետք է կենդանի տեղ հասցնենք:

Չվենիգորան դրան չպատասխանեց, բայց դեմքի արտահայտությունից երևում էր, որ շատ էլ հավանություն չի տալիս վոչեվոդայի հրամանին: Իր կամքով լինե՞ր՝ սպախիայի հետ խաղ չէր անի:

Ատրճանակներն ստուգելով՝ նրանք դուրս եկան երկար կիսամութ միջանցքը: Միջանցքի ծայրին, պատուհանի մոտ կանգնած էր ասկյարը: Տեսնելով երեք անձանոթներին՝ դանդաղ դնաց նրանց կողմը, հավանաբար, որպեսզի լավ ղննի:

— Սալամ, — սիրալիր ասաց Չվենիգորան: — Ինչ է, հարգելիս, Համիզ աղան արդեն վերադարձե՞լ է:

Ասկյարը շէր սպասում, որ իր հետ կխոսեն իր տիրող մասին, և կասկածանքով նայեց անծանոթ սպախիւաներին:

— Դուք ճանաչո՞ւմ եք Համիդ աղային:

— Էն էլ ո՞նց: Վաղեմի բարեկամներ ենք: Մենք նրան բարև ենք բերել իր փեսա Ֆերհադից և աղջիկ եատչիկից, ինչպես նաև խնամի Իսահակ աղայից:

— Օ՛, աղան ճանաչում է իմ բարձ տերերին,— ուրախացավ ասկյարը:— Ի՞նչ նորություն կա մեր կողմերում: Աղան վաղո՞ւց է էնտեղից եկել:

— Այնքան էլ չէ:— Զվենիգորան բարեկամաբար թրփփփացրեց ասկյարի մեջքին, թևանցով արեց: Նրանք դանդաղ քայլեցին միջանցքի երկայնքով:— Ընդամենը մի ամիս...

Ասկյարը հանկարծ ցնցվեց. Դրագանի ուժեղ ձեռքը փակեց նրա բերանը, իսկ Զվենիգորան զրկեց նրան ուսեղմեց մամլակի պես: Զլատկան արագորեն բացեց մոտակա սենյակի դուռը, և հայդուկները մի ակնթարթում ասկյարին ներս խցկեցին: Վախեցած ասկյարը միայն աչքերն էր շուռումուռ տալիս, հետևելով թե ճարպիկ ձեռքերն ինչպես են կապկպում իրեն:

— Թե ուզում ես ապրել, հանգիստ պառկիր,— ասաց Զվենիգորան:— Իրիկունը ընկերներդ բեղ կգտնեն...

Որպեսզի զինվորը չզլորվի դեպի դուռը, նրան կապեցին մահճակալից:

— Համենայն դեպս,— մռթմռթաց Դրագանը, ավելի պինդ ձգելով հանգույցը:

Հայդուկները դուրս եկան միջանցք: Զլատկան նշան արեց, որ ամեն ինչ հանգիստ է, կարելի է Համիդով զբաղվել:

— Աջից նախավերջին դուռը,— շշնջաց Դրագանը, և ինքը մնաց հսկելու:

Արսենն ու Զլատկան մոտեցան դռանը: Ականջ դրեցին... Չեն-ձուն չկար: Նշանակում է Համիդը մենակ է սենյակում... Զվենիգորան գոտուց քաշեց ատրճանակը, հրահանը ձգեց, ձախ ուսով հրեց դուռը:

Համիդը նստած էր մեջքով դեպի դուռը: Ոչինչ չկասկածելով նա հանգիստ, առանց ետ նայելու, հարցրեց.

— Ի՞նչ է պատահել, էնվեր:

— Սալամ, Համիդ,— ասաց Արսենը՝ ատրճանակի փողն ուղղելով սպախիայի թիկունքին:

Համիդը վայրկենապես շրջվեց: Տեսնելով ատրճանակի փայլվուն փողը՝ հմայվածի նման շկարողացավ հայացքը կտրել դրանից: Դեմքը իսկույն քաթանի գույն ստացավ, ներքևի ծնոտը կախ ընկավ, զողզողաց... Վերջապես նա հայացքը բարձրացրեց անծանոթների վրա, որոնք այդպես առանց վախի, օրը ցերեկով, երբ քաղաքը լիքն է զինվորներիով, համարձակվել էին ներխուժել այստեղ... Ճանաչեց կազակին:

— Զվենիգորա՞: Ո՛վ ալլահ:

— Ոչ միայն նա,— առաջ եկավ Զլատկան՝ հանելով զլխարկը:— Ողջույն, աղա:

— Աղիկե՞,— տնքաց Համիդը սփրթնած:— Ի՞նչ եք ուզում ինձանից:

— Սուլթանի ֆերմանը,— Արսենը մոտեցավ:

— Ֆերմա՞նը.— Համիդը մնաց զարմացած. նա ավելի վատ բանի էր սպասում: Ֆերմանը ինձ մոտ չէ...

— Բա որտե՞ղ է:

— Տվել եմ Սաֆար բեյին:

— Ափսո՞ս... Այդ դեպքում ստիպված ենք առանց ավելորդ խոսակցությունների գնդակահարել քեզ:

Համիդը շփոթմունքից շկարողացավ խոսել:

— Զլատկա, լավ նայիր, գուցե ֆերմանը էստեղ է, Համիդը խաբում է մեզ:

Զլատկան գործի անցավ...

— Սպասե՛ք,— գոչեց սպախիան:— Միևնույն է, չեք գտնի: Եկեք այսպես պայմանավորվենք. ես ձեզ՝ ֆերմանը, դուք ինձ՝ իմ կյանքը: Համաձա՞յն եք:

Նա պատկերացրեց իր գրուսթյան ողջ անելանելիությունը, և դա նրա սիրտը լցրեց շարությամբ ու կատաղությամբ: Ով ալլահ, ի՞նչ է կատարվում իր հետ: Մեկ րոպե առաջ նա իրեն զգում էր լիակատար անվտանգության մեջ, իշխանություն ունեւր և համարվում էր երրորդը նահանգապետ փաշայից ու Սաֆար բեյից հետո, կարևոր անձնավորություն էր քաղաքում ու նահանգում: Իսկ հիմա... Մահը աչրերի մեջ է նայում, և ինքը չգիտի, ինչպես խույս տա նրանից,

դրա համար էլ ջղաձգորեն կառչում է փրկվելու ամեն մի հնարավորությունից: Ֆերմանը, անշուշտ, կարևոր փաստաթուղթ է, և դրա կորստի համար բեզլերբեյը իր գլուխը չի շոյի, բայց մոտալուտ մահվան առջև այդ մասին մտածելը անմիտ էր ու ծիծաղելի: Բեզլերբեյի հետ խոսակցությունը հետո կլինի... Իսկ գուցեև բոլորովին չլինի: Գլխավորը կյանքը պահպանելն է: Մի՞թե զրկվելու է կյանքից: Ով ալլահ արբեր...

— Մենք առևտրականներ չենք,— խստորեն ասաց Զվենիգորան:— Որտե՞ղ է ֆերմանը: Ես չեմ հավատում, թե Սաֆար բեյի մոտ է:

— Գտա,— բացականչեց Զլատկան՝ սև զարգատուփի միջից հանելով մագաղաթի պինդ փաթեթը:

Համիդը պոկվեց տեղից:

— Աղիկե, շհամարձակվես: Դա գաղտնի հրաման է: Դրա համար սուլթանը մեզ բոլորիս կգլխատի:

— Հենց դրա համար էլ հետաքրքիր է իմանալ, թե ինչ է գրում սուլթանը էդպիսի կարևոր ֆերմանում,— ասաց Աոսենը:— Զլատկա, կարգա:

Զլատկան աչքի անցկացրեց մագաղաթը:

— Օ, իսկապես որ կարևոր հրաման է,— բացականչեց նա:— Սուլթանը ծանուցում է զորապետներին ու զորքին, որ անցյալ տարի Զիզիրինի մոտ կրած խայտառակ պարտությունից հետո մեծ վեզիր Իբրահիմ փաշան և Ղրիմի խան Սելիմ Գիրեյը զրկված են բոլոր աստիճաններից և արտրված են Ռոդոս կղզի, որ գտնվում է Սպիտակ ծովում: Մեծ վեզիր է նշանակված Հասան Մուսթաֆա փաշան: Փաղիշահը հրամայում է նրան՝ երկրի երեսից ջնջել Զիզիրին նզովյալ քաղաքը, զավթել Կիսն ու Ջախափնյա Ուկրաինան, իսկ Զապորոժյան Սելը պայթեցնել: Բոլոր զապորոժյաններին պարաններով կապկպած քարշ տալ Բարձր Դուռ և վաճառել գալերաներին: Այս տարվանից ամբողջ Ուկրաինան պետք է դառնա Օսմանյան կայսրության վիլլայեթ:

— Աղիկե,— Ֆշշացրեց Համիդը:— Թշվառական, դու հասկանո՞ւմ ես, թե ինչ էս անում: Հույժ կարևոր պետական գաղտնիքն էս բացում: Այսօրվանից դու օրենքից դուրս ես և ոչ մեկի պաշտպանության վրա հույս դնել չես կարող...

Օ, վա՛յ, վա՛յ, ալլահը պատժեց ինձ այն բանի համար, որ ես բեզ իմ աղջիկը համարեցի և նույնպիսի կրթութիւն տվեցի, ինչպես խատչեին՝ գրել-կարդալ սովորեցրի, իսկ դա հակասում է Ղուրանի ոգուն: Օ՛, վա՛յ ինձ, վա՛յ...

— Համիդ աղան զուր է վշտանում ինչ-որ ֆերմանի համար: Սրա եղած-չեղածը հորթի մշակած կաշվի կտոր է, — ասաց Զվենիգորան: — Լավ կլինի քո մասին մտածես... Մենք միայն ֆերմանի համար չենք եկել...

Համիդի աչքերում կրկին փայլեց մահացու սարսափը: Հիմա միայն վերջնականապես հասկացավ, թե ինչ է սպասվում իրեն, եթե ընկնի Մլադենի ու Յաղուբի ձեռքը: Նա սահեց հատակին և ծունկ շոքեց Զլատկայի առաջ: Փաթաթվեց նրա ոտքերին, պարարտ այտերով հպվեց աղջկա թաց, սառը կոշիկներին: Հառաչանք պոկվեց նրա կրծքից:

— Աղիկե, Թանկագինս: Ախր ես բեզ համար հայր եմ եղել... Ակսուում դու չգիտես ինչ բան է վիշտը... Մի՞թե դու թույլ կտաս, որ ինձ տանջանքների ենթարկեն... Հիշիր խատչեին... Նա բույր է եղել բեզ... Մի՞թե ուզում ես որք թողնել նրան... Աղիկե, ես գիտեմ, որ սրիկա եմ... Ես զժբախտացրել եմ քո ծնողներին... Բայց ոչ դու, ոչ քո եղբայրը իրավունք չունենք վրեժ լուծելու ինձնից. ես ձեզ տվել եմ այն ամենը, ինչ իմ երեխաներին եմ տվել... Եթե դու ինձ չփրկես ալլահը կնզովի բեզ, Աղիկե...

Զլատկան քարացել էր անվճռականության մեջ: Զայրույթըն ու ատելութիւնը, որ համակել էին նրա ողջ էութիւնը, երբ իմացել էր, թե ով է Համիդը, այժմ գոլորշիացան, ինչպես վաղորդյան ցողը արևի շողերից: Նրա ոտքերի տակ, հատակին ընկած էր մի մարդ, որին նա ճանաչում էր շատ տարիներ, և որը, իսկապես, ոչ մի վատութիւն չէր արել իրեն, նվերներ էր բերել, պահել էր քաղցրավենիքով ու համեղ կերակուրներով, խատչեին՝ իր աղջկան, իր սիրեցյալին հավասար:

Աղջկա աչքերում արցունքներ փայլեցին: Նա աղերսալի հայացքով նայեց Արսենին՝ խորհուրդ ու օգնութիւն հայցելով նրանից:

— Հերիք է լեզվիդ զոռ տաս, Համիդ, — ասաց Զվենիգորան: — Վե՛ր կաց: Զփորձես աղջկա գութը շարժել: Զի

օգնի: Հիմա դու կգաս մեզ հետ... Եվ մտքովդ շանցնի, որևէ բան ասել բո մարդկանց կամ նշան անել, եթե չես ուզում տեղնուտեղը մեռնել:

— Ես քեզ հետ չեմ խոսում, գլավուր,— կատաղությունից գոմոաց Համիդը և նորից հավելց Զլատկայի ոտքերին՝ լացից ու սարսափից ցնցվելով:

— Արսեն, արի թողնենք նրան... — Զլատկայի ձայնը գողաց: — Վերջիվերջո որքա՞ն ժամանակ է անցել... Հորս ու Յազուբին կասենք...

Նա խոսքը շավարտեց: Դուռը կրնկի վրա բացվեց, և ներս մտավ Սաֆար բեյը, ետևից էլ՝ շփոթահար Դրագանը:

4

Տեսնելով Զվենիգորային՝ ատրճանակը ձեռքին, և Համիդին, որ սողում էր Զլատկայի ոտքերի տակ, Սաֆար բեյը մեխվածի պես կանգ առավ: Նա շրջվեց դեպի Դլագանը, որին Համիդի պահապանի տեղ էր դրել, բայց կարեկցանքի փոխարեն նրա աչքերում թշնամանք տեսավ, իսկ ձեռքին՝ ատրճանակ:

— Ալլահ աքբեր: Ի՞նչ է նշանակում այս ամենը,— բացականչեց նա շվարած: — Զլատկա, դո՞ւ ինչպես ես ընկել այստեղ:

Զլատկան չէր հասցրել պատասխանել, երբ Դրագանը Սաֆար բեյի գոտուց դուրս քաշեց ատրճանակը, իսկ պառչանից՝ թուրը: Ապա արագ ետ ցատկեց, կանգնեց դռան մոտ ու նեղ անցքից զննեց միջանցքը:

Դրությունը կտրուկ փոխվեց: Զվենիգորան նայեց Դրագանի երեսին. ի՞նչ անել: Սաֆար բեյի՞ն էլ տանեն հետները: Ուժերը քիչ են: Տանեն միայն Համիդին, իսկ Սաֆար բեյին կապկպեն, թողնեն սենյակո՞ւմ: Մի՞թե Սաֆար բեյը թույլ կտա իրեն կապկպեն: Անպայման կզիմազրի, որի ժամանակ և՛ ինքը վտանգի կենթարկվի, և՛ Զլատկան: Այդ դեպքում ի՞նչ կասի վոյեվոզա Մլադենը: Բացի դրանից, բացառված չէ նաև, որ Սաֆար բեյը այստեղ է եկել իր պահակախմբով, որը բոպե առ բոպե վրա կպրծնի ու կբռնի իրենց:

Մինչ Զվենիգորան ու Դրագանը հայացքներ էին փոխանակում, վճռելով ինչպես վարվեն, Սաֆար բեյը վայր-

կենսապես գլխի ընկավ, թե իր դալուց առաջ ինչ է կատարվել այստեղ: Նա տեսավ և՛ Զլատկայի ձեռքի ֆերմանը, և՛ կուշ եկած Համիդին, որ շարունակում էր շոքած մնալ, և՛ բրոջ շփոթմունքը: Տեսավ և ամեն ինչ հասկացավ: Իսկույն գլխի ընկավ, թե ինչպիսի բարդ իրավիճակի մեջ է հայտնվել: Տվյալ պահին ուժը, անշուշտ, իր կողմը չէր, առավել ևս Համիդի կողմը չէր: Իր կյանքի համար չէր վախենում: Հիշեց, թե ինչպես հայդուկները, այդ թվում և Զվենիգորան ու Դրազանը երգվեցին՝ իր վրա ձեռք շքարձրացնել: Իսկ ա՛յ, Համիդի կյանքի համար նա մի բոռ գոռ էլ չէր սա: Բավական է Զվենիգորան կամ Դրազանը սեղմեն ատրճանակի շնիկը, և Համիդը կհայտնվի ալլահի եղեմական պարտեզներում: Բայց ինքը՝ Սաֆար բեյը, չի կարող, իրավունք չունի թույլ տալու, որ իր աչքի առաջ հայդուկները սպանեն մուսուլմանին, փաղիշահի հավատարիմ պաշտպանին: Ոչ զինվորները, ոչ էլ բեգլերբեյը այդ բանը նրան երբեք չեն ների: Ուստի, վտանգն արհամարհելով, նետվեց դեպի Համիդը, բարձրացրեց նրան և, կանգնելով նրա առջև, խստորեն ասաց.

— Արսեն աղա, դու այստեղ ավագն ես, ուստի պետք է հասկանաս, որ ես թույլ չեմ տա անպատիժ կերպով դատաստան տեսնել Համիդ աղայի հետ: Պատվովս եմ երգվում: Եթե դուք համարձակվեք սպանել նրան, ապա ինձ էլ սպանեք... Բայց պետք է նախազգուշացնեմ. ներքևում բացի Համիդ աղայի զինվորներից, նստած են նաև իմ հինգ ասկյարները: Եթե նրանք կրակոցի ձայն լսեն...

— Ես բեդ հասկացա, Սաֆար բեյ,— ասաց Զվենիգորան՝ Զլատկայի ձեռքից վերցնելով ֆերմանն ու թաքցնելով իր ծոցում:— Ի՛նչ ես առաջարկում:

— Զեզ առաջարկում եմ ամենալավագույն ելքը. փախեք, լանի դեռ ուշ չէ: Բոպե առ րոպե այստեղ կարող են գալ մեր մարդիկ, և ձեզ համար վատ կլինի... Մտածեք Զլատկայի մասին: Այսպես ուրեմն, մեկ կամ երկու կյանքի դիմաց՝ երեք կյանք:

— Էդ գյավուրը թող ետ տա սուլթանի ֆերմանը,— ուշրի գալով մոթմոթաց Համիդը:

Զվենիգորան հեգնանքով ժպտաց: Սաֆար բեյը ձևացրեց, թե չի լսել Համիդի խոսքերը:

— Ճամանակ մի՛ կորցնեք, Արսեն սուգա:

Զվենիգորան նայեց Դրազանին: Սա հաստատակամ գըլխով արեց, բայց բարձրաձայն ասաց.

— Սաֆար բեյ, մենք հարկադրված ենք կապել քեզ ու Համիդին, որպեսզի կարողանանք անարգել դուրս գալ քաղաքից:

— Ես ձեզ ազնիվ խոսք եմ տալիս: Ձեզ հետ է իմ քույրը:— Սաֆար բեյը դառնորեն բժժիծաղ տվեց.— Մի՞թե թույլ կտամ ծաղրուծանակի ենթարկել նրան:

— Լավ: Համաձայն ենք,— ասաց Զվենիգորան:— Զլատկա, Դրազան, գնացինք: Իսկապես որ չի կարելի ժամանակ կորցնել:

Նրանք արագորեն դուրս եկան սենյակից: Դրազանը օթոցը դեմ տվեց դռանը:

— Մենք լավ ենք ճանաչում ենիշերիի ազնվությունը,— փնթփնթաց նա:— Է՛, գրողը տանի: Մենք ինքներս Համիդին ձեռքից բաց թողինք:

— Փոխարենը ավելի կարևոր բան ձեռք պցեցինք,— Զվենիգորան թփթփացրեց կրծքին, որտեղ թաքցրել էր ֆերմանը:— Դե, հայդե, արագ:

Նրանք հանգիստ ցած իջան, անցան Համիդի ասկյարների ու Սաֆար բեյի ենիշերիների կողքով: Թամբած ձիերը կանգնած էին բակում ու հրապարակում՝ ոչ մի շունչ: Արսենը օգնեց, որ Զլատկան բարձրանա թամբին, և երեք հեծյալներ ակնթարթորեն դուրս եկան դարպասից:

Եվ այդտեղ խանից հնչեց Համիդի սուր ճղավոցը.

— Ասկյարներ, զգուշ լղեք. հայդուկները դուրս են գալիս քաղաքից:

Նա գլուխը դուրս հանեց պատուհանից և ամբողջ Սլիվենով մեկ գոռաց: Արսենը ձեռքը տարավ ատրճանակին, բայց Համիդը ձայնը չկտրեց: Սաֆար բեյը ուժեղ ձեռքը փակեց նրա բերանը և շարտեց սենյակի խորքը: Բաց պատուհանից լավեց Համիդի հայհոյանքները: Նա ջանում էր դուրս պրծնել Սաֆար բեյի ձեռքից, և, հավանաբար, նրան հաջողվեց այդ բանն անել, քանի որ իսկույն աղմուկը դադարեց:

— Առաջ, բարեկամներ,— գոչեց Դրագանն ու քառատըրրոյի սլացալ Սլիվենի նեղ փողոցներով:

Նրա ետևից սլացալ Զլատկան իր աշխետ հովատակով: Զվենիգորան փոքր-ինչ ետ մնաց: Անկյունից թեքվելիս նա ետ նայեց. խանի դարպասից դուրս թռան շորս ձիավորներ և սլացան իրենց ետևից: Ուրեմն, հետապնդում: Համիդի ասկյարները հիմա այլևս ձեռ չեն բաշի իրենցից, կհետապընդեն, քանի դեռ ձիերը կգիմանան: Իսկ մինչև հայդուկների դարանակալ գորամասը գրեթե երկու փարսախ էր և ճանապարհն էլ շարունակ վեր էր բարձրանում:

Փախստականները փողոցներով սլանում էին անարգելք: Սմբակների տակից դուրս էին թռչում պղտոր ջրի ծանր ցայտեր և հալվող, թաց ձնակոշտեր: Ականջներում սուլում էր գարնանաբույր տաք քամին: Հեռվում կապտին էին տալիս մշուշաքող լեռները:

Բայց ետ նայելու ժամանակ չկար: Առաջ: Առաջ: Արա՛գ:

Բարձր բլրի կատարից մի անգամ էլ ետ նայեցին: Հետապնդողները քաղաքից դուրս եկան և երկար շղթայով ձգվեցին ճանապարհով մեկ: Նրանք արդեն ոչ թե շորս հոգի էին, այլ երկու տասնյակ: Երևում է, Համիդի գոռոցը ոտքի էր հանել ասկյարներին, և նրանց կուշտ, անգործութունից խամացած ձիերը դանդաղ, բայց համառորեն հասնում էին փախստականներին: Իսկ քաղաքից շարունակ դուրս էին սլանում նորանոր ձիավորներ... «Այո, շատ-շատ են, -- մտածեց Զվենիգորան:— Համիդի ամբողջ ջոկատն է մեր երեքի դեմ: Եվ թվում է, նրանք մտադիր են հետապնդել մեզ այնքան ժամանակ, մինչև փակուղի կբշեն: Ցավալի կլինի, թե որ չկարողանամ այս ֆերմանը Ուկրաինա հասցընել և գորբն ու ժողովուրդը չիմանա այն մահացու վտանգի մասին, որ ահա-ահա կհասնի հարավից»:

Ձախ ձեռքով նա շոշափեց ծոցի պինդ փաթեթը: Լսեց նոր մշակած մազաղաթի բնորոշ ճոճոցը և շարունակեց տենդորեն մտածել այն մասին, թե ինչպես կտրվի հետապընդողներից կամ խաբի նրանց: Եթե լլիններ Զլատկան, ավելի հեշտ կլիներ: Ինքն ու Դրագանը ձիերը կթողնեին որևէ կիրճում և կփորձեին խճճել իրենց հետքերը ձիերի համար անանցանելի տեղերում: Բայց Զլատկայի հետ...

Արդյո՞ք նա կկարողանա անցնել խիտ թավուտներով, ժայ-
սևտով ու բարափներով... Արդյո՞ք կզիմանա Աղջկա ոտքերի
համար շին այդպիսի ճանապարհները:

Հետապնդողները մոտենում էին... Մի բանի հեծյալներ
առաջ պոկվեցին: Նրանց մեջ առանձնանում էր Համիրի
հաստարհատ կերպարանքը: Արսենին նույնիսկ թվաց, թե
տեսնում է նրա լարվածությունից կարմրած դեմքը և շար,
դեղնավուն աչքերը: Հեռվից մի խռպոտ ճիչ լսվեց.

— Ուռու՛ս, հանձնվի՛ր:

Արսենը խթանեց ձիուն, թեև առանց այդ էլ նա սլանում
էր ամբողջ թափով: Լեռնային անցումներում դիմացկուն,
զիբ ու վտանգավոր կածաններին սովոր, ոչ մեծ, հաստատոթ
հովատակը շեր կարող մրցել ասկյարների արագոտն ձիերի
հետ: Կազակն արդեն իր թիկունքում պարզ լսում էր ձիերի
դոփյուտը, և ձիավորների կատաղի գոռգոռոցները: Ուր որ
է կհասնեն իրեն...

Հեռվում երևացին թփուտներով ծածկված լեռները: Շո՛ւտ,
դեպի այնտեղ, Թեև Զլատկան հոգնել էր կատաղի արշավից,
բայց ստիպված էր շտապել և փախչել ժայռերի ու փրշ-
փրշոտ տերևազուրկ թփուտների միջով: Զվենիգորան սեղմ-
վեց թամբադեղին: Ոտքերով ուժգին խթանեց բրտնամխած
ձիու կողերը: Բայց մի՞թե դրանով կստիպեր նրան արագ
վազել...

— Ահա և կիրճը: Եվս կես վերստ: Եվս...

Հանկարծ Արսենը ցնցվեց. Զլատկայի ձին սայթաքեց ու
ընկավ: Զլատկան գլուխկոնձի գլորվեց լիսկած ձյան մեջ: Դրա-
գանը ձգեց ձիու սանձը, ուզեց կանգ առնել, բայց Արսենը ամ-
բողջ ուժով գոռաց.

— Դրագան, փախիր: Թո՛իր մերոնց մոտ:

Դրագանը նորից առաջ նետվեց, Այդ միջոցին Զլատկան
ոտքի ելավ, և Արսենը, կռանալով, պոկեց նրան գետնից ու
զրկեց իր թամբին:

— Դե, հրեղեն ձի, փրկիր...

Շտուում գոռգոռացին, աղմկեցին հետապնդողները: Հիմա
ընդամենը մի հարյուր բայլ էր բաժանում նրանց
փախստականներից, և ասկյարները համողված էին, որ
այժմ արդեն որսը իրենց ձեռքից էլ չի պրծնի:

— Զլատկա, թանկագինս,— շշնջաց Արսենը,— վերցրու ֆերմանը: Լավ պահիր: Կտանես ջոկատ, իսկ էնտեղ հայրդ հնարը կգտնի Ուկրաինա հասցնելու...

— Արսեն, ի՞նչ ես ուզում անել:

— Զիս երկար չի դիմանա... Ինձ համար մի՛ անհանգրստանա... Փախիր,— պինդ համբուրեց աղջկան և ոտքերն ազատելով ասպանդակներից, թեթևությամբ պոկվեց թամբաղեղից ու գլորվեց ճանապարհամերձ ձորակը: Իսկույն էլ ոտքի թռավ և սկսեց վեր մազլցել:

Մի քանի հեծյալներ ձիերից իջան, նետվեցին նրա ետևից: Զվենիգորան լսեց Համիդի ձայնը.

— Կենդանի թե մեռած՝ նրան ինձ մոտ բերեք:

Իսկ ջոկատի մեծ մասը սլացավ Զլատկայի ետևից:

5

Յացկոն բոլորից բարձր էր մազլցել. հեծել էր ուղղաբերձ ժայռին, որտեղից բացվում էր Սլիվենի ու նրա շրջակայքի ընդարձակ տեսարանը: Շողում էր գարնանային սլաձառարևը, և տղան, ձեռքը աչքերին հովանի արած, ուշադիր նայում էր հեռուն:

Հայրուկների ջոկատը կանգ էր առել ներքևում, ճամփից ոչ հեռու ընկած հովտում: Բոլորն էլ լուռ էին: Վոյեվոդա Մլադենը հուզված անցուզարձ էր անում շոր բլրակի վրա, մերթ ընդ մերթ տաղնապալից հայացք գցելով հեռավոր ճանապարհին: Բոլորն էլ գիտեին, որ վոյեվոդան աղջկա համար է անհանգստանում:

Նրա սիրտն էր ցավում: Եվ այնքան սաստիկ, որ վոյեվոդան սեղմել էր ատամները, որպեսզի շտնքաւ նա այդ ցավը կապում էր Զլատկայի համար ունեցած տաղնապի հետ և մտքում նախատում էր իրեն, որ նրան թույլ էր տվել մասնակցելու Սլիվեն կատարած այդ վտանգավոր ուղևորությանը:

Նա մեկը մյուսից սարսափելի տեսարաններ էր սլատկերացնում: Ե՛վ կշտամբում էր իրեն, և՛ անիծում էր իր բուպեական պոռթկումը, որը գուցե թանկ էր նստել աղջկա վրա:

— Գալի՛ս են,— հանկարծ ժայռի վրայից գոչեց Յացկոնս:— Ամբողջ թափով սլանում են... Երեք հոգի են:

Հայդուկները մագլցեցին ժայռի գլուխը: Մլաղենը անշարժացավ, ուշադիր նայեց կապույտ լայնարձակությանը, բայց ոչինչ շտեսավ:

Իսկ Յացկոն աչքը չէր կտրում հեռվում երևացող ձիավորներից: Երբ հետապնդողների խումբը, քաղաքից դուրս սլացավ, նա սկզբում նույնիսկ գլխի շնկավ, թե ովքեր են, ինչ կապ ունեն Ձվենիգորայի և նրա ընկերների հետ: Միայն հետո, երբ սարսափելի ենթադրությունը շանթահարեց ուղեղը, նա զարհուրանքով գոչեց.

— Հետապնդո՛ւմ, հետապնդո՛ւմ: Մերոնք վտանգի մեջ են...

Հայդուկները արդեն իրենք էլ տեսան, որ Դրագանը, Ձվենիգորան ու Ջլատկան փորձում են ազատվել հետապնդողներից, և որ նրանց ու հետապնդողների միջև տարածությունը գնալով փոքրանում է: Վոյեվոդան գունատվեց.

— Ատրճանակներն ու ենիչերկաները լցրեք, պատրաստվեք կռվի, բարեկամներ,— գոչեց նա:— Գրավեք ձեր տեղերը:

Հայդուկները պառկեցին ճանապարհի երկու կողմերում, ժայռերի ետևում: Սպիխալսկին, Ռոմանն ու Գրիվան, գլուխները ժայռի ետևից դուրս հանած, աչքները չէին կտրում փախստականներից:

— Արա՛գ: Արա՛գ: Օ՛, գրողը ձեզ...— դալկացած շուրթերով շնչաց պան Մարտինը:— Օ՛, պան Եզուս, դու փրկիր նրանց...

Երբ Ջլատկայի ձին ընկավ, հայդուկները ախ քաշեցին: Վոյեվոդան գլուխը բռնեց, խուլ, տանջալից հոգոց հանեց:

Ձվենիգորայի ճարպիկ խորամանկությունը նոր հավատ ներշնչեց նրա ընկերներին ու հայդուկներին: Եվ նույնիսկ այն ժամանակ, երբ կաղակը ցած թռավ ձիուց, Ջլատկային փրկվելու հնարավորություն տալով, ոչ ոք չէր կասկածում, որ նրան կհաջողվի խույս տալ ասկյարներից:

Այդ միջոցին Դրագանն ու Ջլատկան արագորեն մոտե-

ցան հայդուկների դարանին: Նրանց հետից կրնկակոխ գալիս էին ասկյարները:

Հայդուկները պառկած էին ժայռերի ետևում: Ոչ մի շշուկ, ոչ մի ձայն... միայն քամու շրշյունը գլխավերևում, մեկ էլ հեռվից լսվող սմբակների դոփյունն էին խախտում մեռելային լուռությունը:

Վոյեվոդա Մլադենը թաքնվել էր ժայռի ետևում, Սպիտալսկու և Ռոմանի հետ: Նրան թվում էր, թե անհանձնաբար թուրս կթռնի տեղից: Ամուր սեղմել էր հրացանը, այնպես որ ձեռքերը ցավում էին, բայց նա չէր զգում: Հայացքով ուղեկցում էր երկու հեծյալներին, սպասելով այն հարմար պահին, երբ նրանք կանցնեն դարանի կողքով, և հնարավոր կլինի կրակ բացել հետապնդողների վրա:

Սպիտալսկու դեմքը ողողվել էր առատ քրտինքով, բեղի սուր ծայրը ցնցվում էր: Երկնագույն, թեթևակի դուրս պրծած աչքերը պողպատակապտավուն գույն էին ստացել:

Ռոմանը գրեթե չէր շնչում: Ձախ աչքը կկոցել էր, իսկ աչքը չէր հեռացնում նշանահատիկից, որի վրա պահում էր առջևից սլացող ասկյարին:

Վերջապես Դրազանն ու Ջլատկան մրրիկի նման սլացան հայդուկների կողքով:

— Կրակ, — գոչեց վոյեվոդան:

Որոտաց համադարկը: Դղրդոցով արձագանքեց լեռներում: Գլխիվայր տապալվելով գետին՝ կատաղորեն վրնջացին ձիերը: Ձիավորները ցած գլորվեցին: Կիրճում ցավի ու սարսափի ճիչեր լսվեցին... Ողջ մնացած հեծյալները փութանակի շուռ տվեցին ձիերի գլուխները:

Դրազանն ու Ջլատկան արագ իջան ձիերից և անմիջապես, սփրթնած, տազնապահար, վազեցին դեպի հայդուկները: Ինչ-որ մեկը նրանից փրփրակալած ձիերին անվտանգ տեղ տարավ:

— Հայրիկ, փրկի՛ր, փրկիր Արսենին, — կանչեց Ջլատկան՝ ընկնելով հոր գիրկը:

Մլադենը կրծքին սեղմեց աղջկան: Նրա ուսերը ցնցվեցին քիչ առաջվա տազնապահից:

Հեծյալները նահանջեցին և խմբվեցին որոշ հեռավորության վրա, որ անհասանելի էր զնդակի համար: Նրանց

մոտ սլացավ Համիդը: Անշտապ մոտեցան և նրանք, ովքեր
ևս էին մնացել: Շուտով վոյեվոդան հաշվեց մոտ հիսուն
ասկյար, որոնք, դատելով ամեն ինչից, պատրաստվում էին
մարտի:

— Մի՛ անհանգստանա, ազջիկս: Ամեն ինչ լավ կլի-
նի,— ասաց վոյեվոդան:— Արսենը քաջ յունակ է և թշնա-
մու ձեռքը չի ընկնի: Գնա հանգստացիր: Իսկ մենք կդիմա-
վորենք հյուրերին ինչպես հարկն է...

Ջոկատը պաշտպանութան համար նպաստավոր դիրք
էր գրավել: Ոչ բարձր բարափները և ճանապարհի վրա
կիտած քարակույտերը հայդուկներին հուսալիորեն պաշտ-
պանում էին գնդակներից: Աջից ու ձախից բարձրանում էին
ուղղաձիգ զառիթափերը, որ նույնպես հայդուկներ էին
զբաղեցնում: Ետևում, Ստարա Պլանինայի ուղղությամբ
փոված էին թփուտներով ու անտառներով ծածկված երկու
հովիտներ, որոնք շատ հարմար էին նահանջելու համար:

Պատկերացում շունենալով հայդուկների թվի մասին՝
ասկյարները չէին շտապում հարձակման անցնել: Նրանք
սպասում էին օժանդակ ուժերի: Սլիվենից մեկ-մեկ սրար-
շավ հեծյալներ էին գալիս: Շուտով ժամանեց Սաֆար բեյի
ենիշերիների ոչ մեծ ջոկատը: Իրիկնադեմին Համիդը մոտա-
վորապես հարյուր զինվոր ուներ: Եվ այդ ժամանակ միայն
նա հարձակման հրաման տվեց:

Ասկյարների մի մասը գնաց ճանապարհի երկայնքով,
թաքնվելով ձերպերում, թփուտներում ու ժայռերի ետևում:
Մյուս, ավելի մեծ մասը մնաց տեղում, երկու տասնյակ
զինվորներ մազլցեցին լանջն ի վեր, որպեսզի թևերից շրջան-
ցեն հայդուկներին:

— Հանգիստ, բարեկամներ: Թշնամուն թողեք մոտենա,
հետո նոր միայն լավ նշան բռներ: Այնպես, որ ոչ մի գնդակ
զուր չանցնի:— Խրատեց վոյեվոդան իր բազեններին:— Մենք
քիչ ենք, բայց արդարությունը մեր կողմն է: Կեցցե՛ Բուլ-
զարիան:

Երկու կողմից էլ որոտացին կրակոցները: Հովիտը ծած-
կվեց թխակապույտ ծխի քուլաններով: Օդում տհաճորեն
բզղացին արձձե գնդակները:

Հայդուկները խնայում էին վառոդը: Ուստի, կատարե-

լով վոյեվոդայի հրամանը, հազվադեպ էին կրակում: Բայց սրատես է լեռնցու աչքը, ամուր է նրա ձեռքը: Մերթ ալստեղ, մերթ ալստեղ ճղավում էին վիրավոր ասկյարները կամ մեռած ընկնում սառը քարերին: Առաջին իսկ գրոհից հետո Համիդը մեկ տասնյակից ավելի զինվոր կորցրեց: Այդքան էլ վիրավորներ կային, որոնց ուղարկեցին Սլիվեն:

Հենց որ խաղաղվեց, Յացկոն մի կողմ դրեց վառոդով լի տոպրակը (նա Ռոմանի ու Գրիվայի հրացաններն էր լցնում), երկու յաթաղան խրեց գոտու տակ և աննկատելի սողոսկեց թփուտները: Զգուշությամբ, որպեսզի ոչ մի ձյուղ չըրշա, ձորի միջով անցավ սարի մյուս կողմը և արագորեն գնաց դեպի թշնամու թիկունքը: Նա շարունակ մտածում էր Արսենի մասին: Որտե՞ղ է նա: Արդյո՞ք նրան հաջողվեց պոկվել հետապնդողներից: Եթե նա ողջ լիներ ու ազատության մեջ, ապա վաղուց հասած կլիներ հայդուկների զիրքերը: Նշանակում է...

Մինչև երեկո Յացկոն ահագին ուրբ-մուրբ ճանապարհ կտրեց լեռներով ու հայտնվեց այն լանջին, որտեղից, ինչպես ասի մեջ, երևում էր Համիդի ողջ ճամբարը: Տղան պառկեց թփերի մեջ, քարերի հտևում, և սկսեց հետևել թշնամու զինվորներին, որոնք, ինչպես շուտով դիխի ընկավ նա, պատրաստվում էին գիշերն այնտեղ անցկացնելու: Բայց ոչինչ չտեսավ, որը կարողանար որևէ բան ասել Զվենիգորայի ճակատագրի մասին:

6

Իսկ այդ նույն ժամանակ Արսենը, կապկպված պառկած էր փոսի մեջ, ժայռի ետևում, որը և նրան ծածկում էր Յացկոյի աչքից: Նրա դիմաց նստած էր մի լողլող ասկյար և գայլի պես հսկում էր գերտան: Արսենը ոչ ձեռքերը կարող էր շարժել, ոչ ոտքերը: Նրան մի բան էր մնում անել միայն՝ մտածել: Եվ նա վերհիշեց վերջին ժամին տեղի ունեցած իրադարձությունները:

Զիուց ցած թռչելով՝ նա արագորեն մազլցեց սարն ի վեր: Աչքի պոչով նկատեց, որ Զլատկան պինդ նստած է թամբին և ամբողջ թափով սլանում է Դրագանի հտևից: Դա ուժ

տվեց նրան: Սողոսկեց անցավ որոճի խիտ մացառուտների միջով և հանկարծ հայտնվեց բարձր քարե պարսպի առաջ: Ինչպե՞ս ինքը առաջուց չէր նկատել: Հասկացավ, որ անհնար է անցնել պատի մյուս կողմը: Ներքևից արդեն մագլցում էին ասկյարները՝ յաթաղաններն առաջ մեկնած:

— Անձնատուր եղիր գյավուր, — գոռում էին:

Արսենը վազեց պատի երկայնքով, ուշադիր զննելով, թե չկա արդյոք մի այնպիսի տեղ, որտեղից հնարավոր լինի վեր բարձրանալ: Այդպիսի տեղ չկար: Դրա փոխարեն թփերի միջից դուրս եկան ևս մի քանի զինվորներ և կրտրեցին նրա ճանապարհը: Նա կանգ առավ ծանր հնալուվ: Ձեռքում սեղմեց ատրճանակը: Սակայն չհաջողվեց կրակել: Խանձոցում վառող չկար, չբռնկվեց:

Միանգամից նրա վրա թափվեցին երեք հոգի: Հետո մոտ վազեցին ևս երկուսը: Արսենը փորձեց դուրս պրծնել նրանց ձեռքից, բայց հարձակվողները ճարպիկ և ուժեղ մարդիկ դուրս եկան. նրան տապալեցին գետին, կապկպեցին:

Գերված կազակին տեսնելով՝ Համիդը ուրախությունից նույնիսկ ֆշշաց: Մոտ վազեց, ձեռքը մտցրեց Արսենի արխալուղի տակ, պրպտեց ծոցը...

Զվենիգորան հեզնանքով ժպտաց.

— Զուր ես փնտրում, աղա:

— Լռի՛ր: Ոչ մի խոսք: Կսպանեմ, — ծղրտաց Համիդը, չցանկանալով, որ զինվորներն իմանան սուլթանական ֆերմանի կորստյան մասին, և շուռ տվեց Արսենի գրպանները: Բայց ֆերմանը այնտեղ էլ չէր:

Համիդը ասկյարներին ուղարկեց առաջ:

— Որտե՞ղ է ֆերմանը, ուռու:

— Պահել եմ, աղա: Տեսնում ես, ինձ մոտ չէ...

— Որտե՞ղ ես պահել: Թե՞ տվել ես ուրիշի:

— Զէ, ոչ որի չեմ տվել: Այ էնտեղ փնտրիր, սարի տակ: Գուցե թև գտնես: — Կազակը ծաղրանքով նայեց նրան:

— Ի՞նչ ես գլուխ տանում: Ծիշտը ասա, թե որ ուզում ես ապրել:

Զվենիգորան շատ լավ էր հասկանում, որ ինքը կենդանի կմնա այնքան ժամանակ, քանի դեռ Համիդը հույս ունի իրենից տեղեկություններ կորզել ֆերմանի մասին: Ուստի

հենց սկզբից իրեն այնպես էր պահում, որ Համիդի սրտում բորբոքվեր իր նպատակին հասնելու հույսը:

— Ես էլ հենց ճշմարիտ եմ ասում: Ֆերմանը թաքցրել եմ: Արի պայմանավորվենք, Համիդ աղա. ես քեզ կվերադարձնեմ ֆերմանը, դու ինձ՝ իմ կյանքը:

Չնայած դրուժյան ողբերգականությանը, նա շկարողացավ զսպել դառը ժպիտը, հիշելով, որ ակամա կրկնում է Համիդի խոսքերը, որ նա ասել էր ընդամենը մի ժամ առաջ Աբդի աղայի խանում...

Այնուամենայնիվ, ի՞նչ բարդ բան է կյանքը: Չես հասցրնում աչքդ թարթել, երբ նա երեսը շուռ է տալիս բեզանից, այնպիսի նենգություններ է մատուցում, որին բոլորովին չես սպասում:

Համիդն իսկույն աշխուժացավ:

— Ես քեզ խոսք եմ տալիս: Տուր ֆերմանը:

— Է-է՛, աղա, անխելք մարդ գտի: Էդպես գործը գլուխ չի գա:

Այդ պահին հնչեց հայդուկների համազարկը: Դրագանի ու Զլատկայի հետապնդումը դադարեց: Հեծյալները ետ սլացան: Իսկ Համիդը, արագ մոտենալով ասկյարներից մեկին, հրամայեց աչքի լույսի պես պահպանել գերուն և սլացավ դեպի զինվորները:

Եվ ահա նա, մի քանի րոպե առաջ ադատ կաղակ, իսկ այժմ անշարժ կռճղ, պառկած է հալվող ձյունից թաց ու սառը փոստում և նայում է ծաղկատար, շեշտ դեմքով պահակին:

— Էյ, աղա ջան,— Զվենիզորան դիմեց նրան,— տեսնում ես, ջուր եմ դառել... Ինձ մի շոր տեղ քաշիր:

— Չես խեղդվի, մի՛ վախենա:

— Բայց կմրսեմ, դմբո: Ինձ կազատեն, հետո քեզ կհիշեցնեմ էս խոսքերը...

Ժամապահը աչքերը ճպճպացրեց: Նա շգիտեր ով է իր դիմաց: Թանկարժեք շորերից երևում էր, որ նա սովորական գերի չէ: Ասենք, ինչ մեղք կլինի, եթե նրան մի շոր տեղ հանի: Եվ ասկյարը գերուն քարշ տվեց վերև: Պառկեցրեց արևին, շեշտ կրաքարի մի մեծ գանգվածի մոտ:

Այստեղից երևում էր ճանապարհը, ճամփի վրա խմբված

հեծյալները և այն զինվորները, որ դեռ շարունակում էին ժամանել: Սլիվենից: Ենիշերիների ջոկատի մեջ Զվենիգորան նվառեց Սաֆար բեյին: Աղան կիտել էր հոնքերը, մտահոգ էր երևում: Զվենիգորային տեսնելով՝ ձին կանգնեցրեց.

— Դո՛ւ,— զարմացավ նա:

— Այո, Սաֆար բեյ: Ես եմ, շնորհիվ քո ողորմածու-թյան...

Սաֆար բեյը լուռ շրջվեց, մտրակեց ձիուն: Սլացավ իր զինվորների ետևից:

Երեկոյան, հայդուկների վրա կատարած անհաջող հար-ձակումից հետո, Համիդը հրամայեց ճամբար դնել և ուժե-ղացված դետրեր կարգել: Բոցկլտացին խարույկները: Սպա-խիան ու ենիշերիները ուշ շղարձրին այն բանին, որ հայ-դուկները մոտիկ են. ուժը իրենց կողմն էր: Սլիվենից ժա-մանեցին նպարեղենով բարձած ձիասայլերը, և քաղցած մարդիկ վրա պրծան ուտելիքին:

Համիդն ու Սաֆար բեյը մոտեցան Զվենիգորային: Խա-րույկի լույսը ընկավ նրանց դեմքերին: Համիդը ազատ ար-ձակեց պահակին:

— Դու ժամանակ ունեիր մտածելու քո ճակատագրի մա-սին, գյավուր,— խոսեց Համիդը:— Ասա, որտե՞ղ է ֆերմանը: Եվ քեզ բաց կթողնե՞մ:

— Ես քեզ շատ լավ եմ ճանաչում, չեմ կարող հավա-տալ քո խոսքերին:

— Դե, ուրեմն, ճոճվիր ճյուղից: Հե՛յ, մարդիկ...

— Կաց, Համիդ աղա,— մեջ ընկավ Սաֆար բեյը:— Կա-խելու համար միշտ էլ ժամանակ կլինի: Կազակը իսկապես հիմք ունի քո խոստումներին չհավատալու: Եվ կարելի է հասկանալ նրան. նա ուզում էր կյանքը փրկել ֆերմանի դիմաց:

— Բայց ախր ֆերմանը իր մոտ չէ: Ես համոզված եմ, որ նա հասցրեց ֆերմանը հանձնել հայդուկներին...

— Այդ դեպքում մենք նրանց կառաջարկենք փոխանա-կել... Կարծում եմ, շարշարանքը արժե: Եթե մենք, ավելի ճիշտ դու չես ուզում բեզլերբեյի հետ անախորժություն ունենալ, քանի որ ես այստեղ գործ չունեմ, ապա ինչ գնով էլ ուզում է լինի, պետք է ձեռք գցենք այդ ֆերմանը: Հայ-

դուկները դեմ շեն լինի այդպիսի փոխանակմանը: Կազակին, ինչպես ինձ հայտնի է, բավական բարձր են գնահատում նրանք, իսկ ֆերմանի բովանդակությունը նրանց համար արդեն գաղտնիք չէ:

Համիդը չպատասխանեց: Չարությամբ նայեց Զվենիգորային: Ի՛նչ հաճույքով կտտանքի կենթարկեր նրան, իսկ հետո օղակը վիզը կգցեր: Բայց թե ուր: Սեփական կաշվի համար ունեցած վախը նրան ստիպեց զսպել իրեն, խոհեմ լինել: Սաֆար բեյի առաջարկը նրան դուր եկավ:

— Լա՛վ,— փնթփնթաց նա խոժոռ,— թող էդպես լինի: Համաձայն եմ... Բայց ինչպե՞ս պիտի անենք: Ես վախենում եմ, որ մինչև առավոտ հայդուկների հետքն էլ չի մնա: Լսու՛մ ես, գյավուր:

— Ոչ մի տեղ էլ չեն գնա,— ասաց Սաֆար բեյը:— Գիտեն, որ Զվենիգորան մեր ձեռքին է, և կաշխատեն փրկել նրան: Արևը դուրս գալուն պես մեկնումեկին կուղարկենք նրանց հետ բանակցելու:

— Լավ,— համաձայնեց Համիդն ու կանչեց պահակին:

Գիշերը ցուրտ էր: Ասկյարները վրաններ զարկեցին, բայց Զվենիգորայի մասին ոչ ոք չմտահոգվեց, և նա, կապկըպված, թաց, ամբողջ գիշերը ցրտից դողաց: Ժամապահն էլ էր մրսում: Մինչև կեսգիշեր, քանի դեռ վառվում էին խարույկները, նա անցուզարձ էր անում, իսկ երբ հոգնեց, նըստեց ժայռի տակ՝ ենիչերկան ոտքերի արանքը դրած:

Երկինքը աստղազարդ էր, բայց լուսինը շէր երևում: Մթության մեջ փնչացնում էին ձիերը, դետքերը ձայն էին տալիս իրար:

Լուսադեմին Արսենին թվաց, որ պահակը քնած է: Լըսվում էր նրա համաշափ շնչառությունը: Բայց ինչ օգուտ դրանից, երբ դու պինդ կապկպված ես, պառկած ես անշարժ կոճղի պես: Եվ կազակը ծանր հոգոց հանեց:

Ճամփեզրի վրանի ետևից գաղտագողի մոտեցող բալլերի ձայն լսեց: Արսենը լարեց լսողությունը: Ինչ-որ մեկը կամացուկ, անձայն գալիս էր իր կողմը: Ո՞վ կարող է լինել: Գուցե Դրագա՞նն է: Ոչինչ չի երևում:

Անծանոթը կանգ առավ իր կողքին, ասես ականջ դրեց: Հետո նրա ձեռքերը շոշափեցին պարանը, որով կապկպված

էր Արսենը, մթության մեջ փայլատակեց յաթազանը, և կազակն զգաց, որ ազատվեց կապանքներից: Շունչն իրեն պահեց, տրորեց ընդարմացած ձեռքերն ու ոտքերը: Շրջվեց, որպեսզի տեսնի իր փրկարարին, բայց տեսավ մի սև կերպարանք, որը արագորեն անհետացավ գիշերային խավարի մեջ:

Զգուշությամբ, որպեսզի աղմուկ չբարձրացնի, Արսենը ետ-ետ գնաց, հեռացավ ժայռից, որի տակ ննջում էր ժամապահը, և սողաց թփերի մեջ: Հանկարծ առջևում ինչ-որ մեկը վեր թռավ տեղից, կամացուկ ճչաց.

— Վա՛յ, էդ ո՞վ է:

Զվենիգորան ճանաչեց Յացկոյի ձայնը: Ակնթարթորեն ձեռքով փակեց տղայի բերանը: Ահա թե ով էր իր ազատարարը:

— Ես եմ, Արսենը: Շուտ փախչենք:

Նրանք սուզվեցին խավարի մեջ: Արսենը հոգու խորքում շնորհակալ էր տղայից իրեն ազատելու համար: Քաջ զինվոր է մեծանում...

Յացկոն վստահ առաջ էր սողում: Խլվլան լորտուի նման ճամփա էր բացում մացառուտների մեջ, ճարպիկ կզաքիսի պես հաղթահարում էր ճանապարհին հանդիպող խոշոր-դոտները: Երբ բավականաչափ հեռացել էին թշնամու ճամբարից, կանգ առան, որպեսզի շունչ քաշեն: Արսենը գրկեց Յացկոյին:

— Շնորհակալ եմ, Յացկո, որ երկրորդ անգամ փրկեցիր ինձ,— շնչաց նրա ականջին,— Զվախեցա՞ր, որ մտար հենց թշնամու որջը... Ի՞նչ պիտի անեիր, եթե հանկարծ ժամապահը արթնանար:

— Ժամապահ՞ը: Ոնց որ թե նրան չեմ տեսել: Համ էլ ես հեռու էի:

— Ինչպե՞ս թե հեռու էիր: Ախր նա քո կողքին էր, երբ կտրատեցիր իմ պարանները...

— Պարաններ՞ըր,— էլ ավելի զարմացավ Յացկոն:— Ես ոչ մի պարան էլ չեմ կտրել...

— Բա ո՞վ ազատեց ինձ:

— Ինչպե՞ս թե՛ ով: Ես էլ կարծում էի, դու ինքդ...

— Հը՛մ...— մտքի մեջ ընկավ Զվենիգորան:— Տարօրինակ է... Մի՞թե...

Նա խոսքը չավարտեց: Անհավատալի ենթադրութիւնը շամփրեց նրան: Մի՞թե Սաֆար բէյն էր:

7

Հայդուկները ջանում էին կտրվել Համիդի ասկյարներից, որոնք կրկին հարձակման էին անցել և կեսօրին գաղանների բացած գաղտնի արահետով պտույտ գործեցին Ստարա Պլանինայի շուրջը: Բայց թաքնվել չհաջողվեց: Համիդը բացառիկ համառութիւն ցուցաբերեց: Առանց հանգստանալու հետապնդեց Մլադենի ջոկատին մինչև Խլադնա լեռը:

Այստեղ թեժ մարտ բորբոքվեց: Հայդուկները ամբացան նեղ կիրճում: Երկու համազարկ տվին հարձակվողների վրա, բայց նրանց կանգնեցնել չկարողացան: Զվենիգորայի փախուստից զազազած՝ Համիդը ամեն գնով ուղում էր ջախջախել ապստամբներին, բռնել նրանց առաջնորդին և Լախլել ֆերմանը: Դրա համար էլ նա իր ասկյարներին քշում էր հարձակման, առանց կորուստները հաշվի առնելու:

Ասկյարները ձեռնամարտի նետվեցին: Օգտվելով այն բանից, որ հայդուկները ենիչերկաններն էին լցնում, նրանք ճիշտ աղաղակով թափվեցին նեղ կիրճը:

— Ալլա՛հ, Ալլա՛հ, — բերանները լայն բացած՝ վայրենաբար գոչում էին նրանք:

— Թրերը մերկացրեք, բարեկամներ, — հնչեց Մլադենի ձայնը:— Բուլղարական հողը շանարգենք: Թրերը մերկացրեք...

Սուրը բարձրացրած՝ նա առաջ նետվեց թշնամու վրա: Նրա հետ ուս-ուսի գնացին Դրագանն ու Զվենիգորան: Գրոհի նետվեցին բոլոր հայդուկները, բացառութեամբ Զլատկայի, Յազուբի ու Յացկոյի, որոնք մնացին վիրավորների հետ և հսկում էին ձիերին:

Մոռայ, ժայռաշատ կիրճում իրար դեմ ելան երկու հեղեղներ: Շաշեց պողպատը... Ընկան առաջին սպանվածները: Լոեցին մարտաշունչ գոչումները: Լսվում էին միայն դինվորների հատուկենա բացականչութիւնները և վիրավոր-

ների հառաջանքները: Կովում էին կատաղորեն, առանց մի քայլ նահանջելու: Գորշ քարերը արյունով ներկվեցին: Զվենիգորան ու Դրազանը անզագար հսկում էին Մլաղենին:

Սպախիաններից մեկը ճանաչեց նրան և, «վոյեվոդա Մլաղենը» գոչելով, թուրը բարձրացրած հարձակվեց հայդուկների առաջնորդի վրա: Դրազանը ետ մղեց հարվածը, իսկ Զվենիգորան վերջ տվեց նրան: Բայց այժմ բոլոր ասկյարները նկատեցին վոյեվոդային, և յուրաքանչյուրը ցանկանում էր զենքը խաշածեղ նրա հետ: Ամեն մեկն ուզում էր վոյեվոդային հաղթողի փառք վաստակել և ստանալ նրա գլխի համար Համիդի խոստացած պարգևը:

Ասկյարներից մեկը, որին իրարանցումի ու հրմշտոցի պատճառով ոչ մի կերպ չէր հաջողվում մոտենալ վոյեվոդային, սրոշեց ուրիշ ճանապարհով հասնել իր նպատակին: Նա հանեց ատրճանակը, և ցատկելով քարի վրա, ընկերների գլխների վրայով նշան բռնեց Մլաղենին ու կրակեց: Մերուների վոյեվոդան ցնցվեց, երերաց... Զվենիգորան հասցրեց բռնել նրա թևատակերից: Հայդուկներն իսկույն պատնեշեցին նրան, և Արսենը կարողացավ վոյեվոդային դուրս բերել մարտի դաշտից:

Զվենիգորայի կանչի վրա վայելով եկավ Դրազանը:

— Այ քեզ դժբախտություն, — տեսնելով արնաշաղախ, գունատված վոյեվոդային՝ բացականչեց նա: — Շուտ հասցրու Յաղուբի մոտ: Դու տար, Արսեն, ես կմնամ էստեղ...

Մլաղենի վերքը լուրջ էր: Գնդակը ծակել անցել էր նախաբազուկը:

Յաղուբը պինդ կապեց վերքը: Զլատկան, արցունքն աչքերին, բռնել էր հոր գլուխը:

Մլաղենը դիմանում էր, բայց ուժերը լքում էին նրան:

— Ինչպե՞ս է վիճակն այնտեղ, — անուժ հարցրեց նա:

— Մերոնք դիմանում են, — պատասխանեց Արսենը:

— Ափսո՞ւ, մենք քիչ ենք, թե չէ այսօր Համիդին կբռնեինք... Արսեն, հաղորդիր Դրազանին, թող ջոկատը դուրս բերի մարտից: Մենք ահագին թշնամիներ սպանեցինք: — վոյեվոդան լռեց, սեղմեց ատամները:

Զվենիգորան ու Յաղուբը նրան նստեցրին թամբին:

Զլատկան կանգնեց կողքին՝ պատրաստ հորը պաշտպանելու: Ոտքի ելան նաև վիրավորները, ովքեր իրենք իրենց կարող էին գնալ:

— Դե շարժվեք, — ասաց Զվենիգորան: — Մենք կհասնենք ձեզ:

Մարտը հանդարտվեց: Հայդուկները, կովի դաշտից դուրս բերելով վիրավորներին, կամաց-կամաց նահանջեցին: Դրագանը հույս ուներ, թե սպախիաները, ղզալի կորուստներ կրելով, այլևս չեն հետապնդի իրենց, սակայն սխալվեցին: Թեև նրանք հիմա ձեռնամարտի չէին նետվում, բայց ետ էլ չէին մնում: Մլաղենի վիրավորվելու լուրը հասավ Համիդին, և նա վճռեց մի հարվածով հաշիվները մաքրել և՛ վոյեվոդայի և՛ նրա ջոկատի հետ:

Այդպես էլ գնացին գարտուղի ճանապարհներով, մութ կիրճով, իրար վրա դիզված ժայռերի ու հողմակործան ծառերի միջով: Առջևից հայդուկները, ետևից՝ սպախիաները, ետ շմնալով, բայց և առայժմ սիրտ շանելով մարտի բռնվել: Համիդը յուրովի էր դատում: Նա գիտեր, որ հայդուկների վիճակը ծանր է: Նրանք հետները տանում էին իրենց վիրավորներին, իսկ ինքը իր վիրավորներին թողել էր կովի դաշտում, Սաֆար բեյի հսկողության տակ, որը հրաժարվեց մասնակցել հետագա արշավին: Բացի դրանից, նա հույս ուներ, որ հոգնած, հալումաշ եղած հայդուկներին հաղթելը հեշտ կլինի:

8

Այդ ծանր, հոգնեցուցիչ նահանջը շարունակվեց երկու օր: Մարդիկ սոված ու ծարավ, քարշ էին գալիս լեռնային կածաններով ու անվերջ ետ էին նայում: Երբ թշնամին վրատվեց, ավելի դիմացկուն, ողջ մնացած ուժերը դարանակալեցին և սկսեցին կրակել ժայռերի ետևից: Դա թուրքերին հարկադրեց կրկին ետ քաշվել անվտանգ տարածության վրա:

Զվենիգորան քայլում էր Դրագանի կողքից: Հիմա ջոկատի ճակատագրի ողջ պատասխանատվությունն ընկած էր ջահել լեռնցու ուսերին:

— Էսպես կարող ենք ամբողջ Պլանինան ոտքի տակ տալ,— ասաց հայդուկը:— Հարկավոր է փրկել Մլադենին և Համիդին հնարավորություն չտալ՝ ֆերմանը հտ ստանալու: Բայց ինչպե՞ս անենք: Իմ կարծիքով մենք պետք է բաժանվենք երկու մասի: Դու, Արսեն, քո ընկերների, Մլադենի, Զլատկայի և Յաղուբի հետ կգնաս դեպի Պլանինայի հյուսիսային լանջերը: Իսկ ես կմնամ ջոկատի հետ, Համիդի ուշադրությունը կշեղեմ ձեզանից, կտանեմ իմ ետևից...

Զվենիգորան լուռ էր: Նա հասկանում էր, որ ծանր վերավոր վոյեվոդային հանգիստ է պետք: Թեկուզ մեկ-երկու օր: Բայց ջոկատը բաժանել... Արդյո՞ք Մլադենը համաձայն կլինի: Արսենը իր կասկածների մասին տեղեկացրեց Դրագանին:

— Նրան ոչինչ էլ չենք ասի,— պատասխանեց Դրագանը:— Ճիշտն ասած, խոսքը վերաբերում է նրա կյանքին, և մենք իրավունք ունենք ինքներս վճռել դա:

— Դե ինչ, ես համաձայն եմ:

Նրանք պայմանավորվեցին ապագա հանդիպման տեղի մասին: Դրագանը ուրախացավ: Նա հավատացած էր, որ վոյեվոդայի ջոկատը կարող է ազատվել հետապնդումից, իսկ ինքը՝ վոյեվոդան կապաքինվի մի խաղաղ վայրում, լեռնական հովիվների խրճիթներից մեկում:

Զվենիգորան Դրագանի մտադրության մասին տեղեկացրեց ընկերներին և Զլատկային: Բոլորը համաձայն եղան: Առանց ժամանակ կորցնելու Արսենը իր ջոկատը տարավ դեպի բուն լեռան խորքը: Ուղիղ դեպի հյուսիս: Դրագանը մնաց դարանում և կարճ ճակատամարտից հետո, սպախիաների աչքի առաջ, թեքվեց ձախ ու լեռներով գնաց դեպի արևմուտք:

Համիդը շարժվեց նրա ետևից: Բայց կես փարսախ էլ դեռ չէր անցել, երբ նրան հասավ շնչակտուր եղած մի ասկյար՝ ոտքից գլուխ ցեխի մեջ կորած:

— Համարձակվում եմ ղեկուցել, աղա, որ հայդուկների ջոկատը բաժանվել է երկու մասի,— հեռսպառ վրա տվեց նա:

— Էդ որտեղի՞ց հնարեցիր,— անհանգստացավ Համիդը:

— Ծս մի քիչ ետ էի մնացել: Զեզ հասնելու համար եկա ձիերի հետքերով: Ախր հայտնի է, որ հայդուկներին ընդա-

մենք երկու ձի է մնացել, որոնցով տանում են իրենց վիրավոր վոյեվոդային: Դե ես էլ էդ հետքը բռնեցի ու գնացի: Բարձրանալով լեռան կատարը՝ հեռվում տեսա մարդկանց մի փոքրիկ խումբ,— ութ հոգի էին,— և երկու ձի: Սկզբում ուրախացա: Դե, մտածում եմ, ուրեմն մերոնք էլ հեռու չեն: Եվ, շրջվելով, հանկարծ դիմացի լանջին երկու ջոկատ տեսա՝ հայդուկներինը և մերը: Հասկացա, որ խաբել են մեզ: Զանում են վիրավոր շուն Մլադենին մի կերպ ապահով տեղ հասցնեն: Ես այդպես եմ կարծում, աղա:

— Իսկ դու համոզված ես, որ նրանք ընդամենը ութ հոգի են:

— Ես տեսա նրանց, ինչպես հիմա ձեզ եմ տեսնում,— հաստատեց ասկյարը:

— Լավ: Շնորհակալ եմ: Դու շատ կարևոր լուր բերեցիր,— ասաց Համիդը և, վերցնելով երկու տասնյակ ասկյար, ետ դարձավ:— Ուղեկցիր մեզ: Արագ:

Նա շտապում էր: Հովտում ինքն էլ համոզվեց, որ ակյարը ճիշտ էր ասում: Հավիած ձյունից կակղած հոգի վրա հրստակ նկատվում էին երկու ձիերի հետքեր: Համիդը դատափետեց ինքն իրեն. «էշակ, անխելք ոչխար, քիչ էր մնում քեզ հիմարացնեին էս խորամանկ բալկանջիները: Ինքս էլ կարող էի գլխի ընկնել, որ նրանք ամենից առաջ ուզում են իրենց առաջնորդին փրկել: Իսկ որտեղ Մլադենն է, էնտեղ էլ երևի ուռուսն է... Դե, հիմա նրանք իմ ձեռքից չեն պրծնի»:

— Արագ, արագ,— շտապեցնում էր նրա ասկյարներին, որոնք նույնպես հոգնել էին հայդուկներից ոչ պակաս, և վհատ, հազիվ քարշ էին գալիս գլուխները կախ:

Այդ միջոցին Զվենիգորայի փոքրիկ ջոկատը բարձրանում էր Ստարա Պլանինայի ամենաբարձր գագաթը՝ ավելի ու ավելի վեր: Ռոմանն ու Գրիվան քաշում էին Մլադենի ու Զլատկայի ձիերի սանձերից: Առջևից գնում էին Յաղուրն ու պան Մարտինը: Յացկոն քարշ էր գալիս վերջից: Տղան շատ էր հոգնել, բայց ոչ մի կերպ չէր ուզում խոստովանել: Մի հարմար, տափակ քար գտնելով, նստեց ոտնամանները հանելու: Ինչպե՞ս կուղենար այդպես նստել արևի տակ, որպեսզի անվերջ քայլելուց փայտացած ոտքերը հանգստանան, որպեսզի կռացած ուսերը շտկվեն, կամ էլ ինչպիսի՞ հա-

ճուլքով կպառկեր բաց երկնքի տակ ու կրներ, որպեսզի մարմնից դուրս բշեր ծանր խոնջանքը: Բայց... Յացկոյի ձեռքերը, որ բռնել էին փաթաթանները, հանկարծ քարացան: Մի ականթարթում գլխից ցնդեցին սին երազները. հայացքը կանգ առավ ներքևի արահետին, որտեղից բիշ առաջ անցել էին իրենք: Արահետով սրընթաց վեր էին բարձրանում ասկյարները: Յացկոն նրանց մեջ իսկույն ճանաչեց Համիդին: Արագ հագավ ոտնամանները, սլացավ ընկերների ետևից: — Արսե՛ն, նայիր,— կանչեց նա:— Գալիս են մեր ետևից: Հիմա կհասնեն:

Բոլորը կանգ առան: Ուղղաձիգ ժայռի ելուստից լավ երևում էին հովիտն ու քարքարոտ լանջը, որ տեղ-տեղ ծածկված էր զաճաճ թփուտներով: Գրանց արանքում երևում ու անհետանում էին թուրքերի գորշ արխալուղները:

— Շան ցեղ: Խուլերա: Մեղնից խորամանկ դուրս եկավ,— բացականչեց Սպիրխալսկին՝ գլխարկը գետին զարկելով:— Հիմա մեր բանը բուրդ է... նրանք հարյուրից պակաս չեն լինի... Եղեն, դվա, տշի... Օհո՛, բսան սրիկաների է բերում իր ետևից էդ աղվեսը: Գրողը տանի դրանց, հա: Իսկ մենք քնդամենը շորս կովող ունենք...

— Հինգ,— վերավորված ուղղեց Յացկոն:

— Ներողություն, հինգ...

Սպիրխալսկին թփթփացրեց տղայի մեջքին.

— Ճիշտ է, ճիշտ, հինգ... Ներող եղիր, պան Յացկու,— և սխուր ձպտաց:

— Ճիշտ որ մեր բանը բուրդ է,— համաձայնեց Զվենիգորան:— Առաջ, բարեկամներ, միայն առաջ: Կարծես թե նրանք դեռ մեղ չեն նկատել:

Սակայն ներքևից հասնող շարագույժ ճիշերն ու սուլոցները տեղնուտեղը փշրեց, խորտակեց այդ հույսը:

Հայդուկները փութով առաջ շարժվեցին:

— Մենք պետք է անցնենք լեռան մյուս կողմը...— ասաց Մլադենը:— Ստուգենա Վողայի շրջանում հայդուկների բնակավայր կա: Այնտեղ միշտ էլ ձիեր են լինում, ղենքի, հագուստի պաշարներ... Գիշերամուտին պետք է այնտեղ լի-

¹ Եղեն, դվա, տշի (լեհ.)— մեկ, երկու, երեք...

նենք... Բայց առջևում ճանապարհի ամենադժվար մասն է. Գիք լեռնանցք...

Նրա համար դժվար էր խոսելը, և նա լռեց: Ծանապարհն իսկապես անանցանելի դարձավ: Ձիերը շարունակ գայթում էին, ոտքերի տակից քարերը պոկվում ու աղմուկով թռչում էին ներքև:

Շուտով արահետը բուրրովին անհետացավ: Աջ կողմում ուղղիձիգ ժայռեր էին, ձախում՝ լերկ, քարքարոտ դիք լանջր: Մնաց միայն նեղ, ժայռերին կից, կտրուկ վեր բարձրացող մի դարավանդ, որով պետք է անցնեին փախստականները:

Արսենը խմբի առջևում կանգնեցրեց Ռոմանին: Համարձակ, ուժեղ, տոկուն՝ նա սանձից բռնած տանում էր Մլաղենի ձին: Զլատկայի ձին գնում էր նրա ետևից, առաջինի թամբին կապված... Արսենը մնաց վերջում: Չորս լիցքավորված ատրճանակները գոտին խրած, թրով ու յաթաղանով գինված՝ նա պաշտպանում էր ջոկատի նահանջը: Նրա սիրտը ճմրվում էր: Լավ էր հասկանում, որ իրենց փոքրիկ ջոկատը, վիրավոր վոյեվոդայի և ռազմերթերի դժվարություններին չընտելացած Զլատկայի հետ, հեշտությամբ կարող է ավար դառնալ Համիդին:

Նկատելով, որ փախստականներն ընթացքը դանդաղեցրին, սպախիաները, դեռևս չիմանալով, թե ինչ ճանապարհով են գնալու, գոչուններով ու հայհոյանքներով առաջ նետվեցին:

— Ուռուս, գյավուրի շուն, ետ տուր այն, ինչ որ ինձ է պատկանում,— գոռաց Համիդը:— Միևնույն է, ձեռքիցս չես պրծնի:

Զվեհիգորան չպատասխանեց, աչքաչափով մոտավորապես որոշեց, թե որքան է մնացել մինչև լեռնանցքին հասնելը, որը նեղ ծեղկով կապտին էր տալիս իրիկնային երկրների հենքի վրա: Թվաց, շատ չի մնացել: Ընդամենը մի վերստից ոչ ավել: Բայց դրանից հետո ի՞նչ է սպասվում իրենց:

Ետևից կրակոց լսվեց: Գնդակը վղզալով անցավ գլխավերևով և զարկվելով զրանիտի սլատին՝ տափակեց: Արսենը ետ նայեց. ասկյարներն ընդամենը երկու հարյուր քայլի

վրա էին: Եթե թույլ տա նրանց բարձրանալ դարավանդ, այն ժամանակ նրանք կարող են կրակի տակ առնել ամբողջ ճանապարհը՝ ընդհուպ մինչև լեռնանցք:

Զվենիգորան հանեց ատրճանակը, հրահանը քաշեց: Զգուշությամբ դուրս նայեց ժայռի ետևից. ասկյարները բարձրանում էին արդեն ոչ թե խմբով, բոլորը միասին, այլ փովել էին շղթայաձև: Ափսոս, որ Համիդը վերջում էր: Նրա պարարտ կերպարանքը լավ նշան կլինեիր գնդակի համար:

Առջևից արագորեն վեր էր մագլցում մի ջահել, հաղթանդամ ասկյար, ձեռքին ենիչերկա, որի փողից ոլոր-մոլոր դուրս էր գալիս ծխի կապտավուն շիթը: Այդ նա էր քիչ առաջ կրակողը:

Արսենը բարձրացրեց ատրճանակը, նշան բռնեց: Ասկյարը, տեսնելով իր վրա ուղղված փողը, աչքերը շոթեց, թափով մի կողմ նետվեց, բայց ուշ էր, որոտաց կրակոցը, և նա վայրենի աղաղակով թռավ ներքև՝ կառչելով քարերից ու դրանք տանելով իր հետ:

Մնացածները վայրկենապես ետ քաշվեցին: Զվենիգորան ևս մի ասկյար կարող էր սպանել, բայց չկրակեց: Գլխավորը ժամանակ շահելն էր:

— Առա՛ջ: Առա՛ջ, — լսվեց Համիդի ձայնը:

Ասկյարները տեղից շարժվեցին: Սարսափով նայեցին անդունդին, ուր անհետացել էր իրենց ընկերը, և քարե ելուստին, որի ետևում թաքնվել էր հայդուկը: Խոսեցին ինչ-որ բանի մասին, բայց կազակը չկարողացավ բառերը ջոկել:

Որոշ ժամանակ անց ասկյարները սկսեցին շորերը հանել: Մի կողմ դրեցին ծանր արխալուղները, մահուդե կաֆտանները: Արսենը սկզբում զարմացավ՝ ինչո՞ւ են հանվում: Բայց երբ նրանք, հագուստները իրար կապկպելով, մեծ ու հաստ վահանի նման ինչ-որ բան սարքեցին, և ասկյարներից մեկը, այդ «վահանն» իր դիմաց պահած, առաջ շարժվեց. Արսենն անհանգստացավ: Գնդակն, անշուշտ, կլուփեր այդպիսի վահանի մեջ, և սպախիսանները գրեթե ընդհուպ կարող էին մոտենալ իրեն:

Երբ ասկյարը մոտեցավ և արդեն մի տասը քայլի վրա էր, Արսենը կրակեց նրա ոտքերին: Ասկյարը ճիչ արձակեց,

բայց ավելի շուտ անսպասելիութունից, քանի որ վախը հաղթահարելով, շարունակեց դանդաղ առաջ շարժվել:

Ժայռի ետևում մնալն այլևս վտանգավոր էր: Առջևի ասկյարի ետևից գալիս էին ուրիշները՝ ենիչերկաները պատրաստ պահած: Արսենը ետ նայեց. ընկերներն արդեն լեռնանցքում էին: Եթե թշնամիներն հիմա ճեղքեին անցնեին, ապա, միևնույն է, նրանց գնդակներն այլևս չէին կարող հասնել փախստականներին:

9

Արևը թաքնվեց ժայռոտ հորիզոնի ետևում: Իրիկնացավ: Այստեղ, լեռնակատարին, սառչ, պոռթկուն բամի էր փչում: Յրտեց: Արսենը շնչով տաքացրեց փայտացած մատներն ու կրկին ամուր սեղմեց ատրճանակի կոթը: Նա կանգնած էր լեռնանցքի կատարին և ներքև էր նայում: Ասկյարները տաք-տաք ինչ-որ բան էին քննարկում՝ նայելով իր կողմը: Համիդը առաջ եկավ ու բղավեց.

— Հե՛յ, ուռուս, մի անգամ էլ եմ առաջարկում. հանձնը՝ վի՛ր: Քեղ կյանք ու ազատութուն եմ խոստանում:

— Առանց բո խոստումի էլ ես ողջ եմ ու ազատ, — ի սպաստասխան ձայնեց Արսենը և ետ նայեց:

Նրա փոքրաթիվ ջոկատը արդեն մազլցում էր դիմացի լեռան լանջն ի վեր:

— Վերադարձրու նամակը և կորի էստեղից, գյավուր, — տաքացավ Համիդը:

Արսենն ուզեց զայրացնել Համիդին, գոռալ, որ դա ոչ թե սովորական նամակ է, այլ սուլթանի ֆերմանը: Բայց ժամանակին ուշքի եկավ: Ո՛չ, ո՛չ, այդ մասին պետք է լռել: Ֆերմանի մասին ոչ մի խոսք: Թող զրա հափշտակման մասին ոչ բեզլերբեյն իմանա, ոչ ինքը՝ սուլթանը, որպեսզի թուրքերը իրենց պլանները չփոխեն: Իսկ ինչ վերաբերում է Համիդին, ապա նա, անշուշտ, նույնպես կյոի:

— Արի, ինքդ վերցրու, Համիդ, — ծիծաղեց կազակը: — Դե, արի, չէ՞ որ դու քաջ ես:

Ասկյարները հավաքվեցին մի տեղ ու առաջ շարժվեցին: Մինչև լեռնանցք ընկած հարյուր քայլը այնքան էլ դժվարին

չէր: Ճանապարհն ավելի լայնացավ և թույլ տվեց, որ թուրքերը բոլորը միանգամից հարձակման անցնեն:

Զվենիգորան կրակեց: Եվս մի թուրք, անօգնական թևերը թափահարելով, ընկավ բերանքսիվայր, բայց դա մյուսներին չկանգնեցրեց: Ասկյարները սայթաքում էին, ընկնում, բայց համառորեն շարունակում էին առաջ խցկվել:

Արսենը մի խոշոր քար վերցրեց ու քարը տվեց լեռնանցքի գաղաթը: Բարձրացավ ողջ հասակով մեկ՝ գլխավերևում, լարումից դողդողացող ձեռքերում պահած վիթխարի սև քարաբեկորը:

— Ով թեկուզ մի քայլ առաջ գա, ես նրա գլուխը կջնջրլսեմ,— ձայն տվեց նա:

Ասկյարները ցնցվեցին, կանգ առան:

— Առա՛ջ: Առա՛ջ: Ի՞նչ եք վախենում գյավուրից, փաղիշահի որդիք: Հիմա կբռնենք նրան,— ասկյարներին քաշալերեց Համիդը և կրակեց:

Արսենը մի բուժ հարված զգաց փորին: «Վիրավորվեցի»,— անցավ մտքով, բայց ցավ չկար: Բոլոր ուժերը լարեց, քարը շարտեց ներքև: Թուրքերը ճղճղոցով դեսուզեն նետվեցին: Օգտվելով թշնամու իրարանցումից՝ Արսենը տնտղեց իրեն: Արյուն չէր երևում: Միայն բեկեշի վրա սևին էր տալիս գնդակի բացած անցքը: Մի՞թե գնդակը լուվել է մահուդե ժուպանի մեջ... կաց... Ինո՞ւ ժուպանի: Իսկ գուցե... իր կյանքը փրկեց գոտի՞ն, որ Սերկոն էր նվիրել իրեն բաժանման պահին: Ինչպե՞ս է, որ իսկույն գլխի շրնկավ: Անկասկած, ոսկե ու արծաթե դրամներով լցված գոտին հուսալի պատնեշ էր ևզել արձձե գնդակի համար:

Զվենիգորան փութով արձակեց, շապկի տակից հանեց լայն, ծանր կաշվեգոտին: Ոսկին, ահա թե ինչը կկանգնեցնի ասկյարներին, կպահի նրանց, մինչև մութը կընկնի, և ընկերները անվտանգ տարածության վրա կլինեն:

Նա բացեց գոտու կափույրներից մեկը, մի բուռ ոսկեդրամ հանեց:

— Ասկյարներ՛ր,— գոռաց նա:— Ինչ-որ թանկարժեք բան կա ինձ մոտ, բոլորը տալիս եմ ձեզ: Ահա՛, վերցրեք:

Նա դրամները շարտեց քարքարոտ լանջն ի վար: Ոսկե անձրևը շողշողաց մայր մտնող արևի ճառագայթների տակ,

Թափվեց զինվորների վրա ու զնգոցով զարկվեց քարերին: Մի պահ ասկյարները քարացան: Հետո բոլորը միասին կոպրան ու, իրարից առաջ անցնելով, նետվեցին փնտրելու ոսկե կլորակները:

— Առաջ: Աստծո կրակը ձեր գլխին թափվի, շեյթանի ծնունդներ, — թնդաց Համիդը: — Ետզարձի ճամփին բոլորը կհավաքեք:

Ոչ ոք չլսեց նրան: Մի քանի ասկյարների բախտը բերեց. նրանք միանգամից երեք-չորս դրամներ գտան: Դա բորբոքեց մնացածների նախանձն ու ազահուլթյունը: Սկսեցին կովշտել: Նրանք, ուլքեր ուղին չէին գտել, պահանջեցին ավարը հավասար բաժանել: Բախտավորները, միմյանց պաշտպանելով, հրաժարվեցին:

Համիդը վազվզում էր մերթ մեկի, մերթ մյուսի մոտ, խնդրում էր, սպառնում, աղերսում: Բայց նրա վրա ուշադրություն չէին դարձնում: Այնժամ նա հուսահատ կատաղությամբ սկսեց ճղճղալ.

— Գարշելի շախկալներ, Հոտած բորենիներ, Ես բոլորիդ կզնդակահարեմ: Կքշեմ տաժանակրության, շներ, խոզեր...

Ասկյարները մռայլված սեկվեցին, բայց ոչ մեկը չցանկացավ հեռանալ այն վայրից, որտեղ մի վայրկյանում կարելի էր հարստանալ հազար դուռուշով: Այդպիսի բան քիչ է պատահում:

Ժամանակն անցնում էր: Արևը մտավ լեռան հեռավոր կատարների ետևը: Հովիտների վրա իջավ խավարը: Միայն երկնքի արևմտյան կողմը վառվում էր բոսորագույն հրացուլով և կատարներին դեռևս լույս էր: Զվենիգորան շարունակում էր հետևել իր ջոկատին. նա արդեն բարձրացավ վերջին ժայռաշատ բլրաշարքը և անհետացավ հորիզոնի ետևում: Լավ կլինեք, եթե կարողանար մի քիչ էլ պահեր թուրքերին, որպեսզի նրանք մթության մեջ չնկատեն, թե ինքն ուր է գնում:

Բայց հանկարծ Համիդը գոչեց.

— Ասկյարներ, ժամանակ մի՛ կորցնեք: Էդ գյավուրը ոսկի շատ ունի: Ես գիտեմ, նրա մոտ է հայդուկների գանձը: Բռնենք նրան, և ամբողջ ավարը ձերը կլինի: Առաջ, կտրիճներ:

Ասկյարները նախ դժգոհությամբ, ապա ավելի ու ավելի արագ սկսեցին վեր մագլցել: Հիմա նրանք էլ շեն նահանջի. նրանց առաջ էր բշում ոսկու հանդեպ ունեցած ազահությունը, հեշտ վաստակի գայթակղիչ միտքը:

— Կա՛նգ առեք, ասկյարներ, — գոչեց Արսենը: — Միևնույն է, դուք ինձ չեք հասնի: Ահա, բոլորը ձեզ լինի, վերցրեք...

Նա կրկին մի բուռ դրամ շաղ տվեց լանջով մեկ:

Սպախիաները նորից կանգ առան: Համիդը զուր էր գողգոռում, սպառնում սարսափելի պատիժներով, հայհոյում. ոչ մի բան չէր օգնում: Նրա զինվորներն ասես խելքները թոցրել էին. փնտրում էին քարերի ու ավազների մեջ, հըրմըշտում էին միմյանց, իրար ձեռքից խլում դեղին, սառը մետաղի կտորը:

Զվենիգորան արագ կապեց գոտին, որ զգալիորեն թեթևացել էր, և շտապեց հասնել ընկերներին:

Շուտով բոլորովին մթնեց: Երբ նա բարձրացավ դիմացի սարն ու ետ նայեց, ետևում ամեն ինչ ծածկված էր թանձր խավարով:

Հայդուկների բնակատեղում փախստականները կարճ դադար տվեցին: Մեր լեռնական հովիվը նրանց պատվեց ընթրիքով: Բոլորի համար թարմ ձիեր թամբեց, սպախիաների զգեստներ բերեց: Ընթրիքի ընթացքում կարճ խորհրդակցություն տեղի ունեցավ:

— Կարժում եմ, շի խանգարի, որ մեր հագուստները փոխենք, — ասաց վոյեվոդան: — Հիմա, բացի Համիդից, Ստարա Պլանինան չափչփում են նաև սպախիաների ու ենիչերիների ուրիշ ջոկատներ, ուրեմն մենք էլ որոշ ժամանակ նրանց մորթու մեջ մտնենք, որպեսզի մոլորեցնենք նրանց: Իսկ սուլթանի ֆերմանը մեզ համար կդառնա հուսալի թեզկերի՝ անցագիր...

— Կավ միտք է, — իսկույն համաձայնեց Արսենը, իսկ գլխում նույն պահին ուրիշ պլան ծնվեց: Զիմանալով, թե վոյեվոդան ինչպես կվերաբերվի դրան, կազակը հեռվից սկսեց. — Սակայն, բարեկամներ, մենք այժմ պետք է բռննարկենք այն հարցը, թե ֆերմանը ինչպես հասցնենք Ուկ-

բախնաւ: Ժամանակն անցնում է, Գարունը բացվեց: Մեկ-երկու ամսից թուրքերը կարող են սկսել պատերազմը...

Նա լռեց՝ ուշադիր նայելով յուրաքանչյուրին:

— Դու ի՞նչ ես առաջարկում,— վերջապես լռությունը խզեց վոյեվոդան:

— Ես բոլորին առաջարկում եմ՝ գնալ Ուկրաինա: Բայց Մլադենին երկար բուժում է պետք: Իսկ Յաղուբը մեզ հետ կլինի: Նա ճանապարհին էլ դեղեր կճարի... Սպախիաների հագուստով, որոնք տանում են սուլթանի ֆերմանը, մենք ճեշտությամբ կարող ենք հաղթահարել ճանապարհը:

— Մլադենի համար դժվար կլինի ձիով գնալ,— ասաց Յաղուբը:

— Դժվարը մինչև Դանուբ հասնելն է,— պատասխանեց Արսենը:— Էնտեղ վալախներից սալ կգնենք...

Նա հարցական նայեց վոյեվոդային: Վերջինս երկար ժամանակ լուռ մնաց: Բոլորը սպասում էին, թե ինչ կորոշի նա: Լռությունը խախտեց Զլատկան:

— Գնանք, տատե,— խնդրեց նա կամացուկ:— Միևնույն է, դու շուտ չես վերադառնա ջոկատ... Իսկ Դրագանը հուսալի յունակ է:

Մլադենը, վերմակով ծածկված, փակ աչքերով պառկած էր լայն թախտին: Յաղուբը նոր վիրակապ դրեց վերքին, և սուր ցավը աստիճանաբար սկսեց մեղմանալ: Վոյեվոդան մտածում էր.

— Ես համաձայն եմ, բարեկամներ,— շշնջաց նա:— Վերջապես մեր ուղևորությունը ոռոսնականների հրամանատարի մոտ մեծ վնաս կպատճառի օսմաններին, իսկ դա Բուլղարիայի օգտին է:

Զվենիգորան թեթևացած շունչ քաշեց: Ահա նա, երկիր հայրենի տանող ճանապարհը:

Դլխում փայլատակեցին, պտտվեցին, իրար հաջորդեցին մտքերը: Տագնապալից դարկեց սիրտը: Մի՞թե մեկ-երկու ամիս հետո ինքը ոտք կգնի հայրենի հողին, մի՞թե կշնչի ափսինթի դառնահամ-աղի բուրմունքը, հասած աշորայի ու գանգրավարս հազրեվարդի բուրմունքը: Սեչի կոշևոյին հաշիվ կտա օտարության մեջ իր դեղերումների մասին, և ընկերների հետ մի շերեփ թունդ օղի կամ մեղրագինի կխմի:

Մի՞թե, վերջապես, կրացի Սուլայի ափին գտնվող խրճիթի ճաճուան դուռը, կրծքին կսեղմի ճերմակած մորը, կպապանձ-վի կրջանկությունից՝ նայելով քրոջ ու պապի հարազատ դեմ-րերին:

Արսենի շնչառությունն արագացավ: Աչքերը փակեց, որ-պեսզի մտքում ավելի երկար պահի իր առջև հասնած հայ-րենի երկրի պատկերները:

— Օ՛ հրկիր հայրենի, դու մոր նման ես: Միակ ու ան-կրրկնելի: Եվ բնավ էլ պարտադիր չէ, որ դու գեղեցիկներից գեղեցիկը լինես: Աշխարհում ուրիշ երկրներ էլ կան՝ լի կա-խարդող գեղեցկություններով, որտեղ ծովային ալեբախու-թյան փայտղ աղմուկը ձուլվում է գունագեղ թռչունների քնքուշ երգեցողությանը: Իսկ դափնու կամ մազնուլիայի բուր-մունքները հագեցած են հարավային քամիների թարմու-թյամբ ու զովությամբ:

է, հետո՞ ինչ:

Թեկուզ համեստ ես դու քո արդուդարդով, թեկուզ քո գեղեցկությունը այնքան էլ աչքի չի ընկնում, և բոլորը չէ, որ նկատում են, բայց դրանից դու պակաս սիրելի ու թանկ չես քո որդու սրտին, երկիր հայրենի: Դու մտել ես նրա մեջ մոր կաթի ու պարտեղի դռնակի մոտ աճած ծեր ուռնու խշշոցի հետ, տափաստանային լճակից բարձրացող ճայերի ճղճղոցի ու գլուզից դուրս փուլած ցորենի արտերի ոսկե ծիանքի հետ, մայրենի լեզվի քաղցր հնչյունների ու աղջիկ-ների իրիկնային երգերի հետ: Այս բոլորով և ուրիշ շատ բաներով, որոնք հաճախ աննկատելի են աչքի համար, դու, հող հայրենի, այնքան ամուր ես խրվել իմ սիրտը, որ աշ-խարհում չկան այնպիսի ուժեր, որոնք ընդունակ լինեն քեզ պոկել ինձանից և փոխարինել ուրիշով...

Եվ ուրախության, և՛ վշտի օրերին մեր բոլոր մտքերն ու ղզացմունքները քեզ ենք նվիրում, երկիր հայրենի, երկիր հարազատ: Երբ ուրախանում ես դու լիակատար երջանկու-թյունից, երբ արյունաքամ ես լինում, երբ կրակների մեջ տապակվելիս ձեռքերդ կարկառում ես երկինք՝ անիծելու թե աղոթելու, մենք միշտ քեզ հետ ենք, որտեղ էլ որ լինենք: Եվ քանի դեռ կրծքներիս տակ տրոփում են մեր սրտերը, մենք չենք դադարի քեզ սիրել, երկիր հարազատ:

Անցավ մեկ ամիս: Ճանապարհին ահագին դժվարութիւններ ու խռընդոտներ հաղթահարելով՝ ձիավորների փոքրիկ ջոկատը մտեցավ Կանևին: Այն ինչ Արսենն ու իր ընկերները տեսան Աջափնյակում, խորապես ցնցեց բոլորին: Ամբողջ երկիրը ամալացել էր: Քաղաքներն ավերված էին, գյուղերը՝ կրակի մատնված: Հաղարավոր տղամարդկանց, կանանց ու երեխաների թաթարները գերի էին տարել: Բնակչության մեծ մասը փախել էր Չախափնյակ: Միայն Դնեպրի ափին, Կանևի լեռների արանքում, այսուայնտեղ մնացել էին խուտորներ, որոնք գեռ ոչ թուրք էին տեսել, ոչ թաթար: Բայց մարդիկ ահուզողի մեջ էին և օր առ օր սպասում էին դրժրախտութեան:

Գրիվան բոլորից անհամբեր էր: Նա ձգտում էր շուտ հասնել Կանև: Այնտեղ էին ապրում նրա ծեր ծնողները, կինը, հինգ փոքրիկ երեխաները: Նրա սրտում ուրախութիւնն ու տաղնապը հաջորդում էին միմյանց:

— Է՛խ, համա թե կհյուրասիրեմ ձեզ, հա՛, եղբայրներ,— բացականչում էր նա, երբ տրամադրութիւնը լավ էր լինում:— Միայն թե շուտ տուն հասնեմ: Ողջ Կանևին կհրավիրեմ: Հինգ հարյուր հոգու համար սեղան կբացեմ: Տասր տակառ արաղ կառնեմ միկիտանից: Մուրացկան կդառնամ, զոնեղուտ կրնկնեմ, բայց բոլորին կհրավիրեմ մասնակցելու իմ ուրախութեանը, որ վերադարձել եմ անօրինների գեթութիւնից:

Բայց անցնելով այրված գյուղերի ու ավանների միջով, նա լռում էր ու սեղմում հսկայական, մուրճի նմանվող բռունցքները: Եվ դրանից հետո երկար ժամանակ էլ նրանից ոչ մի խոսք չէին լսում:

Իրք անցան Ռոսի մյուս ափը, նա շարունակ սուգից էր գնում: Իսկ երբ երկու վերստ էր մնացել Կանև հասնելու, թողեց ընկերներին ու քառատրոփ առաջ սլացավ: Միայն լեռան կատարին, որտեղից երևում էր ամբողջ քաղաքը, կանգ առավ և ձիուց իջավ: Այստեղ էլ ընկերները հասան նրան:

Նա կանգնել էր քար կտրած: Չէր շարժվում, ոչ մի խոսք չէր ասում: Դեմքը այլալվել էր, մարած աչքերով նայում էր

այն բլրակներին, որոնց վրա մի ժամանակ փռված էր Կանկրի Այժմ այնտեղ սեին էին տալիս մոխրակույտերը: Գարշահոտություն էր փշուռ: Երկնքում պտտվում էին ազոավները...
Վերջապես Զվենիգորան ցնցեց Գրիվայի ուսը:

— Գնանք, Ստեպան:

Գրիվան լուռ առաջ շարժվեց, ոչ մի ձայն չհանեց, մինչև իջան ներքև, դեպի Դնեպր տանող ընդարձակ կիրճը: Այնտեղ նա թեքվեց կողքի փոքրիկ փողոցը և շուտով կանգ առավ մի կիսաքանդ բակում, դժվարությամբ ցած իջավ ձիուց:

— Էստեղ իմ խրճիթն էր, — ասաց նա խեղդված ձայնով, ասես ինքն իրեն:

Տնից մնացել էին միայն մրոտված վառարանը, մեկ էլ անկյունների խանձված սյուները: Բակի մեջտեղում երկինք էին կառկառվել ծեր փշակավոր տանձենու ածխացած ճյուղերը: Գրիվան մոտեցավ նրան: Փաթաթվեց, ճակատը հպեց պինդ, ճաքճքված կեղևին: Ծվ անշարժացավ այդպես համբ վշտի մեջ:

Զլատկայի աչքերում փայլեցին արցունքները: Բոլորը կանգնած էին գլխահակ: Ինչո՞վ մխիթարեին իրենց ընկերոջը:

Ետևում անսպասելիորեն կանացի սուր քրքիջ լսվեց.

— Հա՛, հա՛, հա՛: Եկա՞ք, անօրեններ: Էլի՞ եք ուզում թալանել: Ու՛՛՛... հրեշներ:

Արսենը նույնիսկ սարսուռաց: Նա արդեն մեկ անգամ լսել էր նման խելագար քրքիջ, երբ Սերկոյի հրամանով Սելից մեկնում էր Թուրքիա: Նույնպես ավերված, ամայացած մի բակում, նույնպես թաթարների ասպատակությունից հետո: Ահա թե ինչպես էր դիմավորում նրան հայրենի հողը...

Արագորեն շրջվեց: Նրանց էր մոտենում տարիքն առած մի կին՝ նիհար, տառապած դեմքով ու վառվող աչքերով: Հյուսքերն արձակ էին, որոնց մեջ կոռթուկի փշեր կային. երևում էր, որ գիշերել է մուլախոտերի մեջ:

— Նզովյալներ: Ամեն ինչ քանդեցիք, ավերեցիք, բոլորին տարաք, սպանեցիք: Հիմա էլ եկել եք հրճվելո՞ւ մեր վշտով, անօրեններ: — Կինը վեր պարզեց կեռված, կուշ եկած ձեռքերը և ուղիղ գնաց նրանց վրա: — Ինձ էլ սպանեք, հրեշներ, որպեսզի աչքերս էս դժոխքը շտեսնեն...

Արսենը նոր միայն գլխի ընկավ, որ կինը իրենց թուրքի տեղ է դրել: Թուրքի հագուստները մոլորութեան մեջ էին գցել նրան:

— Մենք թուրք չենք, մերիկ,— Արսենն ընդառաջ զնաց նրան:— Մենք յուրայիններ ենք: Թուրքից ենք փախել... Ահա, էս էլ ձեր երկրացին... Գրիվան... վերադարձել է:

Նա մատնացույց արեց ընկերոջ կուշ եկած կերպարանքը: Կինը անվստահորեն նայեց անծանոթներին և մոտեցավ Գրիվային: Սա նայեց հանգած, շտեմնող աչքերով, հետո թափով նետվեց դեպի ծեր կինը.

— Մորքո՛ւր: Մորքուր Կատերինա:

— Ստեպան:

Նրանք գրկախառնվեցին:

— Որտե՞ղ են... մերոնք,— դժվարութեամբ խոսեց Գրիվան:

Կինը տրտում նայեց մոխրակույտին, լուռ կանգնած մարդկանց, և հանկարծ դեմքը այլայլվեց: Շրթունքները ցավագին ծոմովեցին, աչքերը լցվեցին արցունքով:

— Վառեցին, Ստեպան... Ձերոնց բոլորին վառեցին անաստվածները...

— Ո՞վ վառեց:

— Թաթարները:

— էստե՞ղ: Խրճիթո՞ւմ:

— Չէ՛, կանեցիները երկար ժամանակ պաշտպանվեցին: Բայց շղիմացան, ուժ չունեին: Համարյա բոլոր տղամարդիկ ընկան կուլի մեջ: Իսկ հետո...

— Հետո՞:

— Կնանիք, երեխան ու ծերունիները թաքնվեցին եկեղեցում: Դուռ ու լուսամուտ փակեցին... Իսկ թաթարները եկեղեցու շորս կողմը խոտ լցրին ու վառեցին: էդպես էլ ողջողջ բոլորին վառեցին... ձերոնց էլ...

Սարսափելի էր Գրիվային նայելը: Նա դողում էր ամբողջ մարմնով, ասես տենդի մեջ լիներ: Աչքերում փայլում էին հուսահատութունն ու կատաղութունը:

— Գնացինք եկեղեցի:— Եվ առաջ ընկավ:

Բլրի վրա, որտեղ առաջ կանչնած էր Կանևի տաճարը, հիմա մի գորշ մոխրակույտ էր փռված: Գրիվան զգուշորեն,

ասես վախենալով տրորել որևէ մեկին, մոտեցալ, ծնկի իջալի՞
և ևրկար մնաց այդպես, գլուխը խոնարհած: Հետո գրպանից
հանեց թավշյա քիսան, միջի արծաթե դրամները թափեց
գետնին, քիսան մոխիր լցրեց, մարդկային ոսկորների հետ
խառր, և կախեց վզից:

— Հենց սրտիս մոտ կպահեմ ձեզ... — ասաց նա խուլ
ձայնով, դիմելով նրանց, ովքեր հիմա մտքում կանգնած էին
իր առջև՝ իր երեխաներին, կնոջը, ծեր ծնողներին: — Որ-
պեսդի երբեք չմարեն այրող ատելութունն ու վրեժի ծա-
րավը:

Մոտեցավ ձիուն, թռավ թամբին.

— Արսեն, եղբայր իմ, գնանք: Ես էստեղ է՛լ անելիք չու-
նեմ: Կրակն ընկել է սիրտս, վառում է: Միայն արյունը կարող
է հանգցնել այդ անտանելի կրակը, որ այրում, փոթոթում է
ինձ... Գնանք... Մնաս բարով, մորքուր Կատերինա...

Նա մտրակեց ձիուն և փոթորկի նման սլացավ գահավեժ
ճանապարհով, որ տանում էր դեպի Դնեպր: Զվենիգորան
տխուր օրորեց գլուխը և նրա հտևից գնալու նշան տվեց:

ՔՈՒՅՐԸ

1

Տաք, գարնանային առավոտ էր: Օղը հագեցած տափաստանային մուխուտների ու մարգախոտների թանձր բուրմունքով, կանգնած էր, շէր շարժվում: Կապտավուն մառախուղը սրընթաց բարձրանում էր Սուլայի երկարությամբ, լայնարձակ հովտում փոված սպիտակ կավե խրճիթների ծխնելույզներից վեր: Ջրի վրա օրորվում էր վաղորդյան ջինջ, թափանցիկ մառախուղը:

Բարձր, նախշավոր, հյուսկեն ցանկապատ ունեցող մի բակում կանացի ձայներ լսվեցին:

— Ստեշա, աղջիկս, — կանչեց առաջին ձայնը: — Վեր կենալու ժամանակն է: Օրը ցերեկ է դառել:

— Թող ցերեկ լինի, — մարագից լսվեց ջահել աղջկա ձայնը՝ դժգոհ, բայց հաճելի: — Դու ու պապիկը, մերիկ, առավոտից իրիկուն ոտքի վրա եք, հա դեսուդեն եք վաղվում, ուրիշներին էլ շեք թողնում քենն...

Մայրը մոտեցավ մարագին, դուռը կրնկի վրա բացեց.

— Հլա մի նայիր աստծո աշխարհին, հոգիս: Տես արևն արդեն լողանում է Սուլայում, սագերին մարգագետին քշելու ժամանակն է: Ասենք, նախաճաշի ժամ էլ է ախր...

— Հիմա: Գալիս եմ:

Մայրը վերադարձավ խրճիթ: Քիչ անց մարագից դուրս եկավ աղջիկը: Քաղցր ճմլկոտաց, թափահարեց փարթամ, շկկ հյուսքերը, նայեց արեգակին:

— Ճիշտ որ արդեն ցերեկ է, Ստեխա: Իսկ դու, թամբա!, մի գլուխ քնում ես: Էսպես որ գնաց, մեկ էլ տեսար քնով

կանցնես ու երջանկությունն էլ ձեռքից բաց կթողնես,— կըշտամբեց նա ինքն իրեն:

Վազեց անցավ կանաչ խոտով ծածկված բակի միջով, բացեց ուռնու շիվերից հյուսած ու կարմիր կավով ծեփած գոմի դռնակը:

— Ջո՛ւ-ջո՛ւ-ջո՛ւ... — կանչեց սագերին:

Առաջինը դուրս եկավ կորաքիթ, կոկոսն արու սագը: Գոռոզ նայեց շորս կողմը, թևերը լայն բացեց, ուրախ կոռնչաց ու շորորալով գնաց բակի միջով: Նրա հտևից ձգվեց սագերի երամբ: Բակը անմիջապես լցվեց թևերի շափշափյունով, սագերի աշխույժ կռկոցով:

Ստեղան, երկար ճիպոտը ձեռքին, սագերին քշեց մարգագետին, դեպի գետը, իսկ ինքը մինչև ծնկները մտավ սառը ջուրը, հայելու պես նրա մեջ իրեն նայելով:

— Ֆի՛, ինչ քնկոտն եմ,— կատակով՝ բարակ հոնքերը վեր բաշեց ու լեզու հանեց ինքն իրեն:

Սակայն ամեն ինչից երևում էր, որ աղջիկն իրենից գոհ է: Դա հասկանալի էր: Ջրից նրան էր նայում մուգ երկնագույն աչքերով, ջահել ու քնքուշ սիրունիկ մի դեմք: Մագերը դեռ հյուսված չէին և թափված էին ուսերին, ինչպես մետաքսը: Սպիտակ բլուզը ասեղնագործ էր, իսկ շրջադեցուտը կիպ գրկել էր գեղակազմ իրանը:

Ստեղան կուացավ, մի լիքը բուռ ջուր վերցրեց, որից խնկեղեգի ու ջրիմուռների հոտ էր գալիս, շփեց դեմքին: Հետո էլի, էլի... Շուրջը նայեց՝ տեսնի, հո մեկնումեկը թաքոն իրեն չի՞ հետևում: Մոտեցավ ուռնու դեղնականաչավուն թփուտին և շապիկի փեշով երեսը սրբեց:

Աղջիկը, հուանի, ուժեղ ձեռքերը բարձրացրեց և մատնորով, ինչպես սանր, սկսեց մագերը սանրել: Ամեն ինչ երգում էր նրա մեջ: Արյունը եռում էր: Ուզում էր պարել, իր ջահել գեղեցկությունը տանել մարդկանց, որպեսզի բոլորը զմայլվեին իրենով: Ուզում էր ճաշակել մեղրի պես քաղցր այն զգացմունքը, որը երգերի մեջ սեր էր կոչվում... Բայց ավա՛ղ: Խոր տխրությունը Արսեն եղբոր համար, որը կորել, անհետացել էր հայտնի չէ թե որտեղ և ինչպես, ծվատում էր նրա սիրտը մշտաբորբ ցավով: Ինչ սիրելու ժամանակն էր, երբ մայրը մղկտում է, ամեն օր աղի արցունք է թափում,

երբ պապը ման է գալիս ամպի պես մռայլ, ծանր հոգոցնէ՞ր հանելով: Իսկ ինքը այնպե՛ս էր ուզում սիրել...

Ստեշան հոգոց հանեց. խեղճ իմ եղբայր, բեղ ի՞նչ է պատահել: Որտեղ ես դու: Որքա՛ն ժամանակ է անցել այն օրվանից, երբ վերջին անգամ լուր առանք քեզնից... Օ՛յ:

Ծտնում թփերը շրշացին: Ստեշան ցնցվեց: Նույն պահին էլ ինչ-որ մեկը գրկեց նրան և ձեռքի կոշտ ավուով, որից ձիաբորտինքի հոտ էր փչում, ամուր փակեց բերանը: Ստեշան թպրտաց, ինչպես թակարդն ընկած լոր, փորձեց դուրս պրծնել: Մահացու երկյուղը պատեց սիրտը: Բաթարներն են: Ուզեց ճշալ, բայց չկարողացավ. պինդ լաթի խցոցը փակել էր բերանը, մի սև ծածկոց էին քաշել գլխին, վրան մի անցք, որպեսզի շխեղդվի, իսկ ձեռքերն ու ոտքերը կապկպված էին ամուր պարաններով:

Երկու հոգի, — Ստեշան դա գզաց, — վերցրին նրան ու տարան: Ուռիների շրշուներից աղջիկը գլխի ընկավ՝ տանում են դեպի անտառ: Անտառը շատ մոտ էր. ձեռքը մեկնեիր՝ կհասնեիր: Գարնան խիտ, մատղաշ կանաչով պատած անտառը փոված էր լեռների երկայնքով և հենց լեռնալանջերին, որ բարձրանում էին Սուլայի աջ ավան ի վեր:

Ստեշան դեսուզեն էր ընկնում, շուռումուռ էր գալիս, գալարվում, փորձում էր ազատվել, բայց ոչինչ անել չէր կարողանում: Երկար զնացին: Լսվում էր հոգնած մարդկանց ծանր շնչառությունը, նրանց խոսակցության խուլ ձայները:

Վերջապես նրան դրեցին գետնին, իսկ հետո գցեցին ձիու վրա ու կապեցին թամրին: Ինչ-որ մեկը գոչեց՝ «վիյո», և ձիերի սմբակների տակ զրնգաց գետինը:

2

Միայն կեսօրին, երբ Ստեշան ճաշին էլ չերևաց, մայրն ու Օնոպրի պապը վայվույժ դրեցին: Աղմուկի վրա մարդիկ հավաքվեցին: Ամբողջ խուտորը ոտքի ելավ: Մայրը, արցունքն աչքերին, որերորդ անգամ արդեն բացատրում էր, թե ինչպես ինքը արթնացրեց աղջկան և ուղարկեց մարգագետին՝ սագերն արածացնելու, ու էն ժամանակվանից Ստեշան չկա, ասես գետնի տակ է անցել:

— Իսկ գուցե թե նա, հասկանում ես, էն ինքը... Իսկապես խեղճե՞լ է,— ենթադրեց պատիկ-մատիկ, կակազող մի մարդ, որին խուտորում բռնորը կանչում էին ոչ այլ կերպ, քան Հասկանում ես, այդ բառը անմտորեն, տեղի-անտեղի գործածելու համար, կամ Իվանիկ՝ իր կարճ բոյժ պատճառով:— Պետք է Սուլայում փնտրել:

— Ա՛խ, աստված իմ, աղջիկս... Իմ կապույտ աղավնի...— անմխիթար վշտից կսկծում էր մայրը:— Ախր ինչո՞ւ սագերի հետ քեզ ուղարկեցի գետափ... Ախր ինչո՞ւ դու սառը ջուրը մտար, հոգիս...

Ամբոխը արագորեն սլացավ դեպի Սուլա: Ավելի ճարպիկները եկան նավակներով, սկսեցին դեսուղեն նետվել գետի խաղաղ հարթության վրա, ուշադիր դնելով ապակուպե սթափանցիկ ջրի հատակը: Ուրիշները նրա զղեստներն էին փնտրում ափին:

Ոչ մարմինը գտան, ոչ էլ շորերը...

— Հասկանում ես, կարող է նա, էն ինքը... լողալով գետի խորքն է գնացել,— շարունակեց իր միտքը զարգացնել Իվանիկը:— Դե էնտեղ էլ, էն իքը... խեղճվել է...

— Շորերը հագին, հա՞,— հարցրեց Օնոպրի պապը:— Դու էլ չգիտես, ինչ ես դուրս տալիս:

— Բա ի՞նչ եղավ, ո՞ւր կորավ... էն իքը... հասկանում ես Օնոպրի պապը ուսերը վեր քաշեց և, գլուխը կախ, դանդաղ քարշ եկավ դեպի տուն: Նրա ետևից գնացին և մյուսները: Գետափին մնաց միայն Իվանիկը:

Մայրը լացուկոծ դրեց: Կանաչք մխիթարեցին նրան: Ասացին, որ Ստեղան անհնազանդ, նույնիսկ կամակոր աղջիկ է, այնպես որ, գուցե խելքին փշել է անտառ գնալ ու, երևի, այնտեղ էլ մնացել է: Կամ էլ հարևան գյուղն է գնացել: «Պարապ-սարապ քաշ է գալիս»,— կամացուկ ավելացրեցին բամբասկոտներից ոմանք:

— Թե որ Զվենիգորիխան էղքան երես շտար իր աղիղ աղջրկան, այլ գոնե մի անգամ մաղերից բռներ ու ճիպոտով քամակը մի լավ դաղեր, հիմա սուգուշիվան շէր անի: Թե չէ աղջկան շատ երես տվեց, կասես աղնվական օրիորդ էր, ամեն ինչ թույլ էր տալիս նրան, իսկ հիմի լացուկոծ է անում:

Քեկուղ աղի արցունք թափի, օգուտ չկա,— շարախոսեց հաստիկ, կարմրաթուշ մի ջահել կին:

Ամբոխի միջից մեկ ուրիշը առարկեց նրան.

— Զուր ես էդպես խոսում, Զինաիդա: Ստեշան իսկի էլ երես առած աղջիկ չէ: Սիրուն, աշխատող, համեստ: Զվենիգորիխան էլ երբեք նրան Լրես չի տվել: Կարող է, իսկապես, աղջիկը խեղդվե՞լ է...

Այդ ամբողջ աններդաշնակ աղմուկ-աղաղակը, լացը, հառույճանները, բամբասանքը, որ գալիս էր բակից ու կողքի փողոցից, հանկարծ դադարեց: Մարդիկ հույսով ու երկյուղով նայեցին տարօրինակ հազնված ձիավորների ջոկատին, որ դուրս պրծավ անտառից և արշավեց ուղիղ դեպի խուտոր:

— Օ՛հ, մերիկ, թուրքերը,— կանչեց մի կին:

— էդ որտեղի՞ց լույս ընկան:

— Ճիշտ որ թուրքեր են, նայեք:

Ամբոխը ալեկոծվեց: Մարդիկ մոռացան Ստեշային, նրա վշտահար մորն ու պապին: Կանայք ու Լրեսիաները քաշվեցին խրճիթները, իսկ կազակները, որոնք երբեք չէին բաժանվում իրենց թրերից, առաջ նետվեցին:

Մինչ այդ ջոկատը մոտեցավ, նրանից անջատվեց մի հեծյալ ու քառատրոփ քշեց ձին: Մոխրագույն հովատակի սըմբակների տակից փոշի բարձրացավ: Հենց ամբոխի առջև հեծյալը ձին կանգնեցրեց:

— Ժողովուրդ, ի՞նչ է պատահել էստեղ,— կանչեց նա՝ գլխից իջեցնելով ենիչերիական գլխարկը:

— Արսե՛նը: Արսեն Զվենիգորա՛ն: Ողջ է...— աղմկեցին շուրջը:

— Հա՛, էդ ես եմ... Բայց ի սեր բոլոր սրբերի, ասեք՝ մեր տանը դժբախտությո՞ւն է պատահել: Ինչո՞ւ է էսքան շատ մարդ հավաքվել:

Մոծրակը բորելով առաջ եկավ մի տարեց մարդ.

— Դե, հասկանում ես, կաղակ, մենք շենք իմանում՝ դժբախտություն է, թե չէ... Ստեշան է կորել: Քո բույրը... Առավոտը սագերին տարել է մարգագետին, ու մինչև հիմի չկա: Կամ որևէ տեղ է գնացել, կամ խեղդվել է, գուցե... Ո՛չ

մեկը կարգին բան չի իմանում... Մերը լացուկոծ է անում, ձեռից գնում է... Ահա ինքն էլ եկավ:

Ինչ-որ մեկը հասցրեց մորը հայտնել, որ տղան եկել է նա, սիրտը բռնած, դուրս վազեց: Նրա ետևից, շորորալով, արագ-արագ գնաց Օնուպրի պապը: Մարդիկ դուրս թափվեցին բակերից:

— Արսեն,— կանչեց մայրը, և այդ կանչի մեջ ուրախութունն ու վիշտը իրար ձուլվեցին:— Ստեշաս չկա՞...

Արսենը մորը սեղմեց կրծքին: Սկսեց մխիթարել.

— Հանգստացիր, մերիկ: Ես արդեն գիտեմ... Մի բան կանեմ: Կգտնենք Ստեշային... Ասեղ հո չի, որ կորի... Մի՛ լա, հարազատս... Ահա, էս էլ պապը:— Կազակը փաթաթվեց, համբուրեց պապին:— Շատ ես ճերմակել, պապ...

— Գե ոնց չես ճերմակի էստեղ, գիշեր-ցերեկ ձեղ համար ենք դարդ անում:

— Դարդ մի՛ արեք, Ստեշան կգտնվի,— Արսենը հանգրստացրեց հարազատներին, թեև իր սիրտն էլ ահ ընկավ:— Իսկ հիմա ընդունեք հյուրերին... Իմ ընկերներին.. շենք թուրքիայից ենք եկել հասել էստեղ...

Ձիավորները մոտ եկան: Այստեղ էին Զլատկան, Սպիխալսկին, Ռոմանը, Գրիվան, Յացկոն: Երկու ձիերի արանքում, պինդ սթարի վրա, Յաղուրի հսկողությամբ, պառկած էր Մլադենը:

Արսենը ընկերներին երկու խոսքով բացատրեց, թե ինչ դժբախտութուն է պատահել իրենց տանը: Թախիծ իջավ նրանց դեմքերին:

— Կայծակի բաժին դառնաք դուք հա՞,— բամբ ձայնով ասաց Սպիխալսկին:— էստեղ էլ նույն դժբախտութունն է: Ե՞րբ պիտի մարդիկ ազատվեն դրանից:

Ժամանածները ձիերին բակ տարան: Օնուպրի պապը մարագից խոտ բերեց: Մլադենին ներս տարան խրճիթ, պառկեցրին մահճակալին:

Խուտորցիները քիչ-քիչ սկսեցին ցրվել: Միայն երեխաները և ամենահետաքրքրասերները ուշադիր դիտում էին թուխ, մազերն արծաթած թուրքին ու բեղավոր, գոռոզ հըսկային, որը խոսքի մեջ լեհերեն բռուր էր գցում:

Հանկարծ վազելով բակ ընկավ Իվանիկը:

— Գտա՛,— ճղավեց նա: Տեսնելով՝ Զվենիգորային ու անծանոթ մարդկանց՝ շփոթվեց և արդեն կամացուկ ավելացրեց.— Հասկանում ես, էն ի՞քը... հետքը գտա:

— Որտե՞ղ:

Բոլորը նետվեցին դեպի նա: Կիպ շրջապատեցին: Արսենը ձեռքը դրեց նրա ուսին.

— Խոսիր: Որտե՞ղ է Ստեշան, Հետքերն ո՞ւր են տանում:

— է-է՛, հասկանում ես, էն ի՞քը... ես էլ չեմ իմանում...

Մենակ ա-այ, աղջկա ժայավենն եմ դտել... Ա-ահա...

Նա բացեց փոքրիկ բռունցքը: Ափի մեջ կարմրին էր տալիս հյուսքից պոկված մետաքսյա վարդակապը:

— Սա Ստեշայինն է,— բացականչեց մայրը:

Արսենն աչքու աչքով արանեց:

— Շուտ տար մեզ, ցույց տուր, թե որտեղից գտար էս ժայավենը, քեռի Իվան:

Բոլորը թափվեցին մարգագետին:

— Այ էստեղից,— Իվանիկը ցույց տվեց ուռիների տակի տրորված խոտը:

Արսենն ուշադիր դնեց հետքերը: Դրանք պարզ երևում էին թաց տիղմի վրա: Ահա ոչ մեծ, բոբիկ ոտքերի դրոշմը: Դրանք, հարկավ, Ստեշայինն են... Այստեղ նա երկար է կանգնել: Հավանաբար մազերն է սանրել: Իզուր չէ, որ հենց այստեղից էին գտել վարդակապը: Ահա և մի քանի բաց խարտյաշ մազեր ուռնու ճյուղին: Սպասիր, սպասիր, իսկ սա ի՞նչ է: Քիչ այն կողմ սապոգների հետքեր կային...

— Ռոման, նայիր,— ընկերոջը ձայն տվեց Արսենը:

Ռոմանը դուրս եկավ ամբոխի միջից ու պպեց նրա կողքին:

— Աղջկանից բացի երկու տղամարդ էլ են եղել էստեղ,— ասաց նա համոզված: Զապորոժցիների նման Դոնի կազակներն էլ կարողանում էին հետքով որսը գտնել, իսկ եթե հարկ լիներ՝ նաև թշնամուն:— Տեսնո՞ւմ ես, հետքերը տարբեր են. մեկը սապոգի է, նեղ, երկար, ծոմոված կրոնկներով, իսկ մյուսը՝ կարճ, որի վրա պարզորոշ երևում է պայտի դրոշմը...

— Նշանակում է, սրանք թաթարներ չեն, թաթարների կո-

շիկներն էսպիսի հետքեր չեն թողնում, համ էլ երբեք պայտած չեն լինում:

— Անշուշտ, թաթարների չեն... Հապա ո՞ւմն են:

Արսենը շատասխանեց: Ձեռքով նշան արեց Ռոմանին և, ուշադիր զննելով տրորված խոտն ու ուռիների ջարդողված թփերը, անհետացավ մառացուտում: Ռոմանն շտապեց նրա ետևից:

Հետքը շուտով դուրս բերեց անտառ: Կազակները քայլերը դանդաղեցրին: Այստեղ հողը շոր էր և հետքերը չէին մնացել: Միայն քնախոտի կոտրված գլխիկները կամ ջարդված ճյուղերն էին մի կերպ ճանապարհը ցույց տալիս:

Ձորակում, սարի տակ, քնելատեղի հետքեր գտան: Սրմբակներից տրորված խոտը, ձիու թարմ փթիլը և կրծած պաքսիմատի մնացուկները վկայում էին այն, որ այստեղ գիշերել էին մի քանի ձիավոր, և որ նրանք հեռացել էին այսօր առավոտյան:

Դժվար շէր իմանալ, թե որ կողմն էին գնացել նրանք. պայտած ձիերը այնպիսի խոր հետք էին թողել, որ հագիվ թե դրանցից շեղվեին: Սարի տակ Ռոմանը մի պայտ գտավ ու դրեց գրպանը: Դա բախտավոր նշան էր:

Երբ բարձրացան վերև, որտեղ վերջանում էր անտառն ու սկսվում էր տափաստանը, և, տեսնելով, որ այստեղից հետքերը շրջվում են դեպի հարավ՝ Դնեպրի կողմը, կաղակները կանգ առան:

— Ձեռք հասնի,— վհատված ասաց Ռոմանը:

— Հա՛, ոտքով չենք հասնի,— համաձայնեց Ջվենիգորան: — Բայց ձիեր ունենք, չէ՞... Համ էլ, կարծես թե գլխի եմ ընկնում՝ ում գործն է սա:

— Ո՞ւմ:

— Ձեռնորայի: Ես քեզ պատմել եմ նրա մասին... Նա գեղեցիկ աղջիկների առևանգումն ու վաճառքը իր արհեստն է դարձրել: Որոշել է, որ դրանով ավելի շատ կարելի է հարստանալ, քան հաց աճեցնելով ու անասուններ պահելով: Ե՞ն՞ում:

— Իսկ գուցե մեկ ուրի՞շն էլ է էդ ստոր արհեստով զբաղվում:

— Միանգամայն հնարավոր է: Բայց, կարծում եմ, նը-

րանք կապված են մի-պարսնով: Եթե Չեռնորային հուպ տանք, ապա կծիկը կբացվի: Սակայն շգիտեմ ինչու, ինձ թվում է, որ Ստեղան Չեռնորակեան չի անցնի... Ժամանակ չկորցնենք, Ռոման, հայդե, գնացինք տուն...

3

Բացի Ռոմանից, պան Մարտինից, Գրիվայից ու Յացկո- յից, Արսենի հետ Գուբովայա Բալկայից դուրս եկան՝ ևս տասնհինգ կամավորներ: Բոլորն էլ Լուբենյան գնդի փորձ- ված կաղակներ էին: Միայն Իվանիկն էր, որ երբեք վառողի հոտ չէր առել և երբեք չէր լսել թաթարական նետերի շաշ- յունը: Բայց Արսենը շկարողացավ մերժել նրան. այդ պատիկ մարդը շատ խնդրեց:

— Դե լավ, թող գա, — ձեռքը թափ տվեց Արսենը և տեղ- նուտեղն էլ փոշմանեց:

Իվանիկը դեռ չէր հասցրել կոճղի վրայից մագլցել բարձ- րահասակ աշխետ ձիու թամբին, որի բաշին էլ չէր հասնում նրա գլուխը, երբ թափով բակ ընկավ լիք-լիքը մի ջահել կին: Նրա գեմքը վառվում էր բարկությունից, աչքերը փայլում էին, բլուզի կոճակները բաց էին, մազերը դուրս էին թափ- վել օշիպոկի՝ տակից: Տեսնելով Իվանիկին, որը սեղմվել էր ձիու բաշին, որպեսզի աննկատելի մնա, ջահել կինը գայ- րույթով ձեռքերն իրար զարկեց:

— Ա՛յ, սատանի փայ դառնաս դու, մարդ, — ճղավեց նա: — էդ ի՞նչ ճամփի պատրաստությունն էս տեսնում, թա- փառական, քրքրվես դու, քրքրվես... Իրար ետևից երեխեքը շարել էս, հիմա ո՞ւր ես թողնում գնում, կապկտրած: Ո՞ւմ հույսին ես թողնում: Թե՞ ես էնքան ուժեղ եմ, որ համ քո տեղը պտի բեռ քաշեմ, համ՝ իմ, ա՛յ թոկից փախած:

Կապկտրածն ու թոկից փախածը կուշ եկավ: Գույնը գցեց, դրանից ասես ավելի փոքրացավ:

— Զինկա, խ-խնդրում եմ քեզ, մի՛ գոռգոռա, — կամա- ցուկ աղաչեց նա: — Ախր շորս կողմը մարդիկ կան: Ի՞նչ կ-կմտածեն... հասկանում ես:

— Թ՛քել եմ ես էդ մարդկանց վրա: Շուտ ցած իջի ձիուց

¹ Օշիպոկ (ուկր.) — գլխարկ՝ ամուսնացած կնոջ համար:

ու մարշ տուն, թե չէ քանքուլիցդ բռնած քաշ տալով կտանիմ: Անպետք: Ավարա: Սրա՞ն մի տես, նեղացել է, որ հարազատ կնիկը թարս խոսք է ասել, ու փախչում է տնից, երևխեքին թողնում ու հայտնի չէ, թե ուր է գնում: Կովե՞լ է ուզում: Փառքի է ուզում հասնի... Իսկ քամակիդ չիբան չե՞ս ուզում:

— Զինկա:

— Ի՞նչ Զինկա: Վար իջի, աժտում եմ, ու ձին էլ տուն տար: Ինքը գլխապատառ գնում է բիչ չէ, ձին էլ հետն է տանում: Էս ինչ օր է, որ քաշում եմ բո ձեռից, այ ժանտախտի փայ դառնաս դու, հա՛: Հիմի էլ ուզում ես անմարդ թողնես ինձ, հա՞: Չես տեսնի...

Նա հանաք չէր անում, իսկականից կրակ էր կտրել: Իր հղոր կրծքով սեղմվել էր ձիուն, և սա, ականջները տնկած, ետ-ետ էր գնում: Վախեցած Իվանիկը կառչել էր ձիու բաշից, ասես հույս ուներ այդտեղ գտնել իր փրկությունը: Բայց կնոջ ուժեղ ձեռքերը ուր որ է ցած կբերեին: Ի՞նչ անել... Ի՞նչ անել: Մեկ էլ տեսար վզակոթին էլ հասցրեց: Ոչինչ, որ տանը լիներ, էնտեղ գոնե տեսնող չէր լինի: Այդպես շեղավ, ախր, ամբողջ խուտորի աչքի առաջ ուզում է խայտառակել իրեն, գարշելի կնիկ:

— Զինկա, — բարալիկ ձայնով գոչեց նա: — Չեո շտաս: Թե չէ... իբր... հասկանում ես... էն խաչը... ամեն ինչ կթողնեմ... կերթամ Զապորոժիե... կաղակություն կանեմ... Հասկանում ես:

— Ի՞նչ: Դու հլա վախեցնո՞ւմ ես ինձ: — Բարկությունից Զինկան թունդ կարմրեց ու քաշեց մարդու շալվարից. — Հլա մի ցած իջի: Գլխիս զապորոժցի էլ դառավ: «Հասկանո՞ւմ ես»...

Դա արդեն շափից դուրս էր: Միծաղեցին կազակները, ծիծաղեցին կանայք, նույնիսկ երեխաները հռհռացին, հիացմունքից ճղճղացին: Իվանիկը շփմացավ այդ վիրավորանքին և պատյանից դուրս քաշեց թուրը: Թուրը կայծակի պես շողշողաց նրա գլխավերևում: Կինը վախեցավ ու ետ-ետ դնաց: Ամուսինը չհապաղեց օգտվել դրանից. կրունկներով խթանեց ձիու կողերը և մրրկի պես դուրս թռավ ամբոխի միջից:

Զինկան մի պահ շփոթվեց: Դեմքի թունդ կարմրությունը լքացավ, ներքևի շրթունքը սկսեց զոզոզալ:

— Իվանշի՛կ, հոգիս, ախր ո՞ւր ես գնում, է՛: Կաց...

Իվանիկը նույնիսկ ետ էլ շնայեց. սլացավ դեպի դարիվերը, որ դեղնին էր տալիս անտառի կանաչության մեջ: Այնտեղ միայն կանգ առավ ու ձեռքով արեց: Զինկան նույնպես ուզում էր ձեռք բարձրացնել, որպեսզի պատասխաներ, բայց հանկարծ նրան թվաց, թե ամուսինը ծիծաղում է իր վրա: Այբերը նորից շարությամբ փայլեցին, թուխ, սիրունիկ դեմքը թունդ կարմրեց: Նա ձեռքերը կանթեց կողքերին ու գոռաց այնպես, որ զորդոցը տարածվեց անտառով մեկ.

— Մենակ թե վերադարձի՛ր, ավարա: Հերիք եղավ քեզ:

Սպիխալսկին, որ բուրբի հետ միասին հետաքրքրությամբ դիտում էր այդ տեսարանը, վարձանքով գլուխն օրորեց, կտրիճավարի ոլորեց շեկ բեղերը և մշտեց Գրիվայի կողք.

— Համա թե զուլում կնիկ է՛, պան Գրիվա: Հը՞,— և ծտացրեց լեզուն:

— Էդպես է որ կա,— համաձայնեց Գրիվան:— Հո ձեր փափկասուն կնիկների սլես շե՞ն:

Սպիխալսկին շառարկեց և դեռ երկար ժամանակ չէր կառողանում աչքը կտրել այդ ջահել հարսի պինդ, ամրակազմ Ֆերպարանքից: Այն բանից հետո միայն, երբ Արսենը հրաժեշտ տվեց հարադատներին ու Զլատկային և ասաց, որ ճանապարհ ընկնեն, Սպիխալսկին խոր հոգոց հանեց ու հեծավ ձին:

Շուտով ջոկատը հաղթահարեց վերելքը և ծածկվեց անտառում: Իսկ խուտորցիները դեռ երկար ժամանակ չէին ցրվում և տալիս ու առնում էին, թե կաղակին կհաջողվի՞ արդյոք գտնել ու աղատել Ստեշային:

4

Սրբորդ օրվա իրիկնադեմին Զվենիգորան ընկերների հետ հասավ Զեռնորակա:

Փոքրիկ ամրոցի կաղնե դռները փակ էին: Թակոցի վրա ակնատից դուրս նայեց քնաթաթախ ծառան: Տեսնելով շորս Թուրք սպախիաներին (Զվենիգորան, Վոյնովը, Գրիվան և

Սպիտակակին, շտապելուց նույնիսկ շորերը չէին փոխել), նա դանդաղ իջավ ներքև ու, դռնակը բացելով, նրանց ներս թողեց:

— Տերդ տա՞նն է,— հարցրեց Զվենիգորան:

— Հանգստանում է,— պատասխանեց ծառան հորանչելով:

— Տար մեղ նրա մոտ:

— Հե՛: Հեշտ է ասելը՝ տար: Իսկ քոթակը ո՞վ կուտի: Ե՛ս, թե դուք:

— Քոթակ չի լինի,— ժպտաց Զվենիգորան:— Նա այնպես կուրախանա մեր գալու համար, որ անմիջապես կհրամայի նկուղից մի տակառ մեղր հանել:

— Դե որ էդպես է...— Մառան առաջ ընկավ և դեռ տատամսելով շարունակեց.— Ախր նա հեռու ճանապարհից է եկել ու պառկել է հանգստանալու...

Գրիվան մնաց ձիերի մոտ: Նրա նշանով դարանից դուրս եկան մնացած կազակները և անձայն մոտեցան դարպասին, Զվենիգորան, Վոյնովը և Սպիտակակին մոտեցան տանը՝ Բակում ոչ մի շունչ չկար:

— Որտե՞ղ են պան Զեռնոբայի ծառաները,— հարցրեց Արսենը:

— Եփութափի տեղը ա՛յ էնտեղ է, ներքևում, գետի ափին... Սպասավորներն էլ էնտեղ են: Մառաները նույնպես քնած են: Գնացել են գյուղ, իրենց տները...

Անցնելով կիսախավար սրահը՝ նրանք մտան մի ընդարձակ սենյակ, որտեղ դրված էին նախշուն օթոցներ, զբրվազադարդ սնդուկներ, պահարան և մի մեծ կաղնի սեղան՝ ծածկված պինդ գարուսե՛՛ սփռոցով:

Հարևան սենյակի կիսաբաց դռնից բարձր խոմփուց էր լսվում:

— Տերս քնած է,— շշնջաց հրիտասարդը և ոտնաթաթերի վրա գնաց դեպի ննջարան, բայց Զվենիգորան կանգնեցրեց նրան.

— Դու այստեղ մնա, ինքս կարթնացնեմ: Պատկերացնում

¹ Գարուս— բամբակյա կամ բրդյա ոլորաթել:

եմ, թե ոնց կուրախանա քո տերը, երբ քնաթաթախ կտեսնի իր վաղեմի ծանոթին:

Մառան քաշվեց պատի տակ: Սպիխալսկին մնաց ելքի դռների մոտ, իսկ Վոյնովը, ձեռքը ատրճանակին զրած, կանգնեց սենյակի մեջտեղում:

Թեև դրսում տաք գարնանային եղանակ էր, Չեռնոբայը քնել էր շալվարով ու կոնտուշով, կոճակներն արձակել էր և բերանքսիվայր երկարումեկ փռվել էր ճերմակ փետրաներքնակի վրա: Նրա գունատ, անառողջ դեմքը ծածկված էր քրրտինքի մանր կաթիլներով: Թուրը կապված էր կողքից, իսկ գլխավերևում՝ գեղեցիկ դրվագված ատրճանակներն էին:

Արսենը թրի պատյանով թխկթխկացրեց Չեռնոբայի սապոգի ներբանին.

— Վեր կաց, հարյուրապետ: Արթնացիր:

Խոմփոցը դադարեց: Չեռնոբայը պղտոր աչքերով անմտորեն նայեց կազակին և, շուռ գալով ձախ կողին, նորից փակեց աչքերը: Բայց, ըստ երևույթին, ինչ-որ բան հասավ նրա գիտակցությանը. նա անմիջապես ելավ տեղից, նստեց մահճակալին ու հայացքը հառեց անծանոթին:

— Դո՞ւ ով ես: Որտեղի՞ց լույս ընկար:— Նրա ձայնի մեջ տազնապ հնչեց:

— Չե՞ս ճանաչում, Չեռնոբայ, — հարցրեց Արսենը՝ գոտու տակից հանելով ատրճանակն ու հրահանը քաշելով:

— Սա ի՞նչ է նշանակում... Դու էդ ո՞նց ես ընկել էստեղ: է՛յ, ո՞վ կա...

Ձայնը կորավ սենյակներում: Մառան փորձեց վազել տիրոջ մոտ, բայց Սպիխալսկու ձեռքում տեսնելով իր վրա ուղղված սուր յաթաղանը, կրկին ետ քաշվեց դեպի պատը:

Այդ միջոցին Չեռնոբայը իջավ մահճակալից: Դեմքը մեռելի գույն ստացավ: Աչքերում սարսափ հայտնվեց:

— Տե՛ր աստված: Չվենիգորան, — բացականչեց նա:— էս որտեղի՞ց...

— էն աշխարհից, պան Չեռնոբայ: Համենայն դեպս լավ հիշողություն ունես... Շնորհակալ եմ, որ ճանաչեցիր... Հապա մի դուրս արի լույսը, էնտեղ կխոսենք:

Արսենը բռնեց Չեռնոբայի ուսերից և այնպես շարտեց: Որ սա գլուխկոնծի թռավ մինչև դուռը: Այնտեղ նրան բռնեց

Ռոմանը, յաթաղանի մի հարվածով կտրեց կողքից կախված թրի կապը, որը զնգոցով գլորվեց հատակին:

Սառան շշմած մեկ տիրոջն էր նայում, մեկ անժանոթներին, դեռևս չհասկանալով, թե ինչ է կատարվում: Արսենը կանգնեց Չեռնոբայի դիմաց: Նա շատ երկար էր սպասել այս պահին: Համիդի նկուղում անցկացրած անքուն գիշերներին կամ էլ գալերայի թիերին գամված՝ քանի՜-քանի անգամ պատկերացրել էր, թե ինչ է ասելու իր թշնամուն հանդիպելիս... Եվ ահա եկել է այդ պահը:

— Ահա և հանդիպեցինք, պան Չեռնոբայ: Չէի՞ր սպասում:

Չեռնոբայը լուռ մնաց: Արձակ կունտուշի տակ լեռնացավ կուրծքը:

— Ինչո՞ւ չես խոսում: Երևի հիմա սարսափելի՞ է հիշել, թե ինչպես մեր աղջիկներին ծախեցիր թուրքերին: Թե՞ աստոսում ես, որ էն ժամանակ կոկորզս շկտրեցիր:

— Ի՞նչ ես ուզում ինձնից,— խոխոացրեց Չեռնոբայը:

Արսենը թափով մոտեցավ նրան, բռնեց օձիքից, քաշեց դեպի իրեն:

— Ուզում եմ իմանալ, գարշելի արարած, որտեղի՞ց ես եկել այսօր: Դուբովայա Բալկայի՞ց... Որտե՞ղ ես թաքցրել իմ քույր Ստեղային, որին գողացել են քո մարդիկ: Դե, հոսիր...

— Ես էնտեղ չեմ եղել,— շշնջաց Չեռնոբայը, բայց, տեսնելով, թե ինչպես նրա հոնքերը ցնցվեցին և բիբերը լայնացան, Արսենը հասկացավ, որ ստում է: Ստեղան նրա ձեռքում է:

— Մենք քո հետքերով ենք եկել այստեղ, հարյուրապետ: Պոչ մի՞ խաղացնի, սողուն: Տուր քրոջս:

— Քույրդ ինձ մոտ չէ:

— Դու և քո մարդիկ եղել եք Դուբովայա Բալկայում...

— Ոչ:

Ռոմանը, որ դիտում էր այդ տեսարանը, այլայլվեց: Լսելով Չեռնոբայի վերջին պատասխանը՝ նա գրպանից հանեց մի մեծ պայտ և խոթեց հարյուրապետի աչքը:

— Իսկ սա ճանաչո՞ւմ ես, շուն: Մենք սա անտառում գտանք, ձեր դադարքի տեղում... Գուցե ուզում ես քեզ տա-

նենք ձիանոց և ցույց տանք, թե քո ձիերից որն է նալը կորցրել, հա՞...

Չեղծորայր լուռ էր: Վախից ու անզոր կատաղությունից կրծեց շրթունքները:

— Ինչո՞ւ ես լուռ, — թափ տվեց նրան Արսենը:

— Դե ինչ ենք մուլ տալիս սրա հետ, պան եղբայրներ: Զարկ ատրճանակով, Արսեն, թող կորի գրողի ծոցը:

— Իսկապես որ. — ընկերոջը պաշտպանեց Ռոմանը:

Զվենիգորան լուռ նայեց ընկերներին: Նա դեռ տատանվում էր:

— Բա քո՞ւյրս:

— Էս որջը տակնուվրա կանենք, բայց կգտնենք: Մի տեղ թաքցրած կլինի:

— Դե որ էդպես է, մահ սրիկային, — Արսենը բարձրացրեց ատրճանակը:

— Սպասիր, — խոխոացրեց Չեղծորայր: — Թույլ տուր աղոթեմ մահից առաջ... Մի՛ սպանիր առանց ապաշխարելու:

Արսենը նայեց ընկերներին: Սրանք հաստատական գրված լուրեր էին:

Չեղծորայր, անճոռնի կռահալով, գնաց դեպի անկյունը, որտեղ դաստառակի ներքևում մի սրբապատկեր էր կախված: Այստեղ, շոքեց, ձեռքերով հենվեց շներկված տախտակի հատակին և սկսեց ծունր դնել, քթի տակ ինչ-որ բան մոթմոթալով:

Արսենն ու նրա ընկերները կանգնեցին այնպիսի դիրքով, որ Չեղծորային ու ծառային տեսադաշտում պահեն:

Հանկարծ ինչ-որ բան ճոճոց, թրխկաց: Անմիջապես էլ զղրղուն լսվեց, և Չեղծորայր շփացավ: Այնտեղ, ուր նա ծունկ էր շոքել, մի սև խորշ բացվեց:

— Անիծված, — դուրս թռավ Արսենի բերանից:

Բոլորն առաջ նետվեցին: Նայեցին փոսի մեջ: Բայց ոչինչ չտեսան: Ներքևից հագիվ լսելի իշշոց էր գալիս. խորքում, ինչ-որ տեղ հող էր թափվում:

Զվենիգորան ոտքը մտցրեց փոսի մեջ, պատրաստվելով ցած թռչել: Վոյնովը բռնեց նրա ձեռքը:

— Հո չգժվեցի՞ր, Արսևն: Ո՞ւր: Ով գիտի, Չեռնոբայն ինչ անակնկալներ է պատրաստել հետապնդողների համար...

Նա արագ կոացավ ու ատրճանակից կրակեց փոսի մեջ: Դղրդաց արձագանքը, վառողածուխը բռնեց նեղ անցքը:

Նստում շրխկացին դռները. մահու շափ վախեցած ծառան դուրս թռավ սենյակից:

— Կանգնի՛ր, շան ծնունդ,— Սպիխալսկին ընկավ նրա ետևից:

Սակայն ծառան հեռու չգնաց, նախասրահում նրան բռնեց Գրիվան: Սեղմեց պատին: Արսևենը ետ քաշեց ընկերոջ ծանր ձեռքը:

— Սպասիր, Գրիվա, էս գյադեն մեզ պետք է:— Իվ դարձավ ծառային.— Թե ուզում ես ապրել, ճիշտն ասա, ինչպես խոստովանության ժամանակ: Որտե՞ղ է էն աղջիկը, որին այսօր բերեց Չեռնոբայը: Որտե՞ղ եք թաքցրել:

— Տերս ինձ կսպանի: Բաց թող, բարի պան:

— Դմբո, մտածիր էն մասին, որ հենց հիմա չզրկվես կյանքից:

— Նա... գաղտնարաններ ունի:

— Բոլորը ցույց տուր: Մեկը ջաղացում է, ես գիտեմ...

— Երկուսն էլ էստեղ են, ամբոցում: Մեկը պարսպի մեջ է, մուտքը ախոռից... Ես ցույց կտամ: Բայց հիմի էնտեղ ոչ ոք չկա...

— Իսկ երկրորդը:

— Երգվիր, որ կենդանի կթողնես:

— Կթողնեմ: Այ, խաշը վկա:

Տղան իսկույն աշխուժացավ: Թեթևացած շունչ քաշեց.

— Որ էդպես է, կասեմ: Գուցե հոգիս թեթևանա, թե չէ բարի պես ծանրացել է սրտիս: Համա ոչ մեկին չասեք, որ ինձնից եք իմացել... Բակում շան բունը տեսա՞ք: Ախոռի ու ամբարի արանքում... Դա էլ հենց գաղտնարանի մուտքն է: Բնի տակ խորունկ նկուղ կա, իսկ բնի մեջ՝ շունն է... Հասկացա՞ք:

— Հասկացանք: Է՞լ որտեղ կա:

— Մեկն էլ անտառում կա: էստեղից երկու վերստի վրա, կոռնկի մ: Երբք: Աղբյուրի դիմացի թավուտում գաղտնի մտան կա... Բայց դա ձմռան համար է:

— Պարզ է: Անունդ ի՞նչ է:

— Մինկա...

— Ահա թե ինչ, Մինկա. թե որ շես ստում, թե որ ճիշտ ես ասում, մենք քեզ բաց կթողնենք, շնայած, ճիշտը որ ասենք, Չեռնոբայի ամբողջ ցեղը արժանի է մի ճյուղից կախվելու Տար մեզ շան բնի մոտ:

5

Մինկան զսպեց կատաղած շանը և նրան փակեց ամբարում: Բուլնր մի կողմ բաշեց: Նրա տակ հայտնվեց հնարամտորեն սարքված մի լաստակ:

— էստեղ է,— ասաց Մինկան և, վախեցած շուրջը նայելով՝ իմանալու համար, թե Չեռնոբայի մարդկանցից որևէ մեկը հո չի երևում, քաշվեց ամբարի ետևը:

Զվենիգորան ու Ռոմանը բարձրացրին ծանր լաստակը, ծնկի իջան ու նայեցին նկուղի ներսը: Այնտեղից խոնավ հողի ու բորբոսի հոտ փչեց:

— Ստեշա,— կամացուկ կանչեց Արսենը, դեռևս չհավատալով, որ քույրը կարող է այստեղ լինել:— Ստեշա: Քույրի՛կս:

Նրա շուրջը խմբվեցին իր հետ եկած ընկերներն ու համազյուղացիները: Բոլորն էլ սպասում էին անշարժ, շունչները պահած:

Նկուղից կամացուկ շրշյուն եկավ, ապա ծղոտի խշխշոց լսվեց:

— Ստեշա: Դու այստե՞ղ ես: Ես եմ, Արսենը,— ինչքան ուժ ուներ գոռաց կաղսկը:

— Ար-սե՛ն,— ոչ թե ճիշ, այլ կական դուրս թռավ փոսից: Զվենիգորան անմիջապես ճանաչեց քրոջ ձայնը: Հնչեցին ևս մի քանի աղջիկների ճիշեր: Ոտնաձայներ լսվեցին, և ներքևում հենց անցքի տակ, հայտնվեցին չորս աղջկական գեմբեր: Զապորոժցին տեսավ Ստեշայի տանջված աչքերը, զզզված մաղերը: Աղջիկը վեր պարզեց բարալիկ ձեռքերը:

— Ելարա՛ն,— գոչեց Զվենիգորան:

Ելարանը բերեցին, իջեցրին փոսը: Գերուհիները մեկը

մյուսի ետևից վեր բարձրացան: Արսենը Ստեշայի ձեռքերից բռնած դուրս հանեց, սեղմեց կրծքին:

— Քույրի՛կս:

— Ախպե՛րս: Արսե՛ն: էս որտեղի՞ց:

Այդ ժամանակ ներքևում, գետակի մոտ, հնչեց ահագանգը: Զանգի ցածր, կցկտուր հնչյունները տազնապով արձագանքեցին կազակների սրտերում: Բոլորն էլ անմիջապես սակվեցին: Զվենիգորան հայացքով փնտրեց Մինկային, բայց նա ասես երկինքն էր համբարձվել, չբվել էր ինչ-որ տեղ:

— Չեոնորայը կանչում է իր մարդկանց,— ասաց Ռոմանը:

— Այո, ձեռքից բաց թողինք էդ շանը,— խուլ ձայնով արձագանքեց Արսենը:— Հիմա այստեղ մնալը վտանգավոր է... Հեծեք ձիերը, բարեկամներ:

Նրանք փութով դուրս եկան ամրոցի դարպասից, շրջվեցին դեպի դաշտ և քառատրոփ առաջ սլացան: Առջևից արշավում էին աղջիկները: Արսենը գնում էր վերջից: Թեթվելով լայն տափաստանային ճանապարհը՝ փոշու ամպերի միջից նա հասցրեց նկատել, որ դարի ետևից դուրս եկավ ձիավորների մի ջոկատ: Թեև նրանց միջև մոտ երկու հարյուր սաժեն¹ տարածություն կար, բայց Արսենը ճանաչեց Չեոնորայի մորեգույն կունտուշը:

Սկսվեց հետապնդումը:

Մմրակների տակ գվվաց, դողդողաց հողը: Զնգաց կազակների ղենբուզրահը: Աջ կողմում երևացին գյուղի ճեմակ խրճիթները, և երկու ջոկատներն էլ դուրս եկան տափաստան: Առջևինը նկատելիորեն արագացրեց ընթացքը: Արագ ձիավարությանը անսովոր գերուհիները իրենց հազիվ էին պահում թամբերի վրա:

Երբ պարզ դարձավ, որ մինչև մութն ընկնելը չի հաջողվի պոկվել հետապնդումից, Զվենիգորան ձայն տվեց.

— Մուշկետները պատրաստել: Կրակել ընթացքից, համադարկով: Նշան բռնել ձիերին:

Կաղակները ուսերից իջեցրին մուշկետները, ցրիվ եկան:

— Կրա՛կ:

¹ Սաժեն— երկարության չափ, հավասար է 2,134 մետրի:

Թնդաց համազարկը: Հետապնդողներից երեք թե շորս հոգի տապալվեցին գետին: Զիերը ծառս եղան, վրնջացին ահաբեկված: Լսվեցին վիրավորների ճիշ ու հառաչանքները: Հետո ամեն ինչ շքացավ. ծուխը ամպի նման քուլա-քուլա տարածվելով, գնաց հետապնդողների կողմը ու ծածկեց նրանց կաղակների աչքից:

— Առաջ, — ձայնեց Զվենիգորան:

Զիերը, ականջները սեղմած, ամբողջ թափով առաջ նետվեցին: Կրակոցները, ճիշերն ու գոռգոռոցները, ծխի հոտը անհանգրստացրին նրանց, նոր ուժ տվին, և փախստականները արագ սլացան դեպի անտառ:

Երկու-երեք հարյուր քայլ անցնելուց հետո Զվենիգորան ետ նայեց: Սիրտը զարկեց ուրախ. մարտերում փորձված, թշնամական հեծելագորի հարձակումը կասեցնելու զապորոժյան միջոցը այստեղ էլ արդարացրեց իրեն: Չեռնորայի ջոկատը իրար զլխի հավաքված, դոփում էր տեղում: Ըստ երևույթին, մի քանի ընկերների մահը կամ վիրավորվելը կոտրեց հետապնդումը շարունակելու կողմնակիցների տրամագրությունը:

Շուտով թանձրացավ իրիկնային աղջամուղջը և տափաստանը ծածկեց թխակապույտ բողով: Այժմ արդեն Չեռնորայը, եթե նույնիսկ ցանկանար և ուժեր ունենար, միևնույն է, պետք է դադարեցներ հետապնդումը:

6

Իսկապես, կաղակների անսպասելի համազարկը մեծ շփոթություն առաջացրեց Չեռնորայի ջոկատում: Երկու ծառաները վիրավորվեցին, շորս հոգի էլ, զարկված, ձիերից ցած ընկնելով, այնպես ջարդուխուրդ եղան, որ երկար ժամանակ ուշքի չէին գալիս, և մնացածները իրարանցման մեջ նրանց սպանված համարեցին:

Ինքը՝ Չեռնորայը անվնաս մնաց: Նա ուզում էր շարունակել հետապնդումը, բայց ոչ ոք նրա ետևից չգնաց, այդ պատճառով էլ նա, ատամները կրճտացնելով, հրամայեց հավաքել վիրավորներին ու ետ դառնալ:

Ամրոցում, սանձը ծառային նետելով, հրամայեց.

— Գտիր Մինկային ու բեր ինձ մոտ: Մարդ ուղարկիր Միտրոֆանի ու Խոռի ետևից, թող նրանք էլ գան:

Ինքը գնաց իր ննջարանը, պատից իջեցրեց երկու ատլը-ճանակ, խրեց գոտու տակ, նստեց սեղանի մոտ ու մտքերի մեջ ընկավ: Նրա դրուժյունը միանգամից բարդացավ: Զվե-նիգորայի վերադարձը ասես որոտ լիներ պարզ երկնքում: Այսօր նա միայն հրաշքով փրկվեց: Արսենը ուղած օրը կարող էր ետ գալ մեծ ուժերով, կամ մենմհնակ, դարանակալիլ իրեն որևէ տեղ և թիկունքից կրակել: Այո, հարյուրապետը մտածելու շատ բան ուներ:

Գոները շրիկոցով բացվեցին, և ծառաները ներս բերին Մինկային:

Չեռնոբայը բարձրացրեց գլուխը, դաժանորեն նայեց երիտասարդին:

— Մոտ արի: Իսկ դուք կորեք էստեղից:

Երբ ծառաները դուրս գնացին, Չեռնոբայը ելավ տեղից, մոտեցավ Մինկային:

Երիտասարդի ծնկները դողացին:

— էդ դո՞ւ էիր ավազակներին ներս թողել, սրիկա,— ֆշշացրեց տերը:— Դրա համար թեղ ինչքա՞ն են վճարել:

— Բատկո, աստված վկա, ոչինչ էլ չեն վճարել,— մրրմընջաց Մինկան:— Մեռնեմ, թե սուտ եմ ասում... Մտածեցի, որ նեմիրովից են... Յուրի Խմելնիցկու կամ էլ Մնոգորեշնու կողմից... Բայց դուրս եկավ, որ...

— Դու լսեցի՞ր, նրանք ինչ խոսեցին էստեղ:

— Լսեցի...

Տեսնելով, թե ինչպես փայլատակեց Չեռնոբայի աչքերը, տղան հասկացավ, որ իզուր բերանից թոցրեց: Չեռքերն սկսեցին դողդողալ:

— Ո՞ւմ ես պատմել այդ մասին: Միայն ճիշտն ասա:

— Ոչ ոքի: Լեզուս չորանա, թե սուտ եմ ասում:

— Երգվիր:

— Էն աստվածը, ոչ ոքի... Ես հո երեխա չե՞մ, ինչ է:

— Լավ, գնա:

Տղան շուտ եկավ ու գնաց դեպի դուռը: Հենց նույն ակրն-թարթին փայլեց յաթաղանը, և ծառան, չհասցնելով ճիշ արձակել, տապալվեց գետին: Չեռնոբայը կոացավ նրա վրա և

մի անգամ էլ հարվածեց սրտին: Հետո յաթաղանը սրբեց սպանվածի շորերով և նորից նստեց թախտին:

Որոշ ժամանակ անց նախասրահից ոտնաձայներ լսվեցին: Չեռնոբայը տեղից ելավ, վառեց մոմը: Հետո կիսաբաց արեց դուռը:

— Դո՞ւ ես, Միտրոֆան:

— Ես եմ,— լսվեց պատասխանը:

— Խոռը քեզ հե՞տ է:

— Բա ոնց:

— Ներս եկեր:

Մտռաները վախվորած մտան շքասենյակ: Դնեսյրի մյուս կողմը կատարած ուղեորութունից հետո նրանք պինդ քնել էին և հիմա, իմանալով ամրոցի վրա կատարված հարձակման ու հետապնդման մասին, որին իրենք չէին մասնակցել, չգիտեին ինչի է կանչել տերը: Տեսնելով հատակին ընկած դիակը՝ նրանք կանգ առան: Միտրոֆանը խաշակնքեց.

— Էս հո Միսկան է:

Չեռնոբայը շպտասխանեց: Դուռը փակելով՝ նրանց հրեց սենյակի մեջտեղը և կանգնեց դեմդիմաց:

Մտռաները վտանգ զգացին: Միտրոֆանը բխոված ձիու նման անշնորհք ոտքից ոտք էր փոխվում: Խոռը, փոքրիկ, արագաշարժ, փորձեց թաքնվել իր լողլող ընկերոջ թիկունքում: Չեռնոբայը գոռաց նրա վրա.

— Ի՞նչ ես պտույտ գալիս, ոնց որ ճանճը եռման ջրում: Մոռացե՞լ ես, ում առաջ ես կանգնած, ստոր:

Խոռը քարացավ տեղում, զլխի ընկնելով, թե որտեղից է սպասվում դժբախտութունը: Միտրոֆանը ապուշ կտրած նայում էր տիրոջը: Նրա ծանծաղամիտ ուղեղը չէր կարող հասկանալ, թե ինչ է կատարվում: Իսկ Չեռնոբայը իսկույն երկուսին էլ շշմեցրեց անսպասելի հարցով.

— Զվենիգորային ի՞նչ արեցիք:

Միտրոֆանը աչքերը շռեց:

— Ի՞նչ Զվենիգորա:

— Ավելի հիմար մի՛ ձևանա, բան կաս, տխմար,— գոռաց Չեռնոբայը:— Էն կաղակին, որին հրամայել էի ցցի հանել, իսկ հետո լիճը նետել:

— Ա՛-ա՛... — Միտրոֆանը դարձավ հոռի կողմը այնպիսի տեսքով, կարծես ասում էր. «Տեսա՞ր: Ես թեզ ի՞նչ էի ասում»:

Խոռը շողոթորթ ժպտաց: Մեղավորի պես հայացքը խոնարհեց.

— Մենք նրան ծախեցինք Ալուն, տեր իմ:

— Սախեցիք Ալո՞ւն: էդ ինչպե՞ս եք համարձակվել, թշվառականներ:

— Միտրոֆանը դրդեց... Ասաց, մեր տերը լավ վաստակեց, մենք մարդ չե՞նք, ինչ է: Ես իսկի չէի էլ ուզում, համա նա պոկ չեկավ... Սպառնաց...

Միտրոֆանի աչքերն ավելի շուրջեցին: Զայրույթից դեմքը թունդ կարմրեց: Նա շնչահեղձ եղավ, լսելով, թե Խոռը ինչպես է մեղքը իր վրա գցում, և ոչինչ չկարողացավ ասել ի արգարացումն իրեն: Նա սովորաբար գործի էր դնում բռունցքները, ուստի և առանց հրկար մտածելու ուժգին հարվածեց Խոռի ականջին: Սա թռավ դեպի պատուհանը և դուրս քաշեց ատրճանակը: Թնդաց կրակոցը: Միտրոֆանը ճշաց, բռնեց կուրծքը և դանդաղ իջավ հատակին:

Իսկ Զեռնորայը, ատրճանակը ձեռքին, կանգնած էր սեղանի մոտ և միայն ուշադիր հետևում էր Խոռի յուրաքանչյուր շարժմանը: Խոռը նետվեց դեպի Միտրոֆանը, որ պառկած էր Մինկայի կողքը, նայեց դեմքին:

— Վե՛րջ...

— Եվ դու կարծում ես, որ դրանով փրկեցի՞ր քո գարշելի կաշին, — կամաց հարցրեց Զեռնորայը: — Դու կարծում ես, ես էլ հավատացի՞, թե Միտրոֆանն է դրդել թեզ, որ Զվենիգորային ծախես թուրքերին:

Խոռի դեմքը կանաչեց: Ծունկ շոթեց, սողաց դեպի տերը, փորձելով գրկել նրա ոտքերը: Բայց Զեռնորայը կտրուկ ետ հրեց խոլուպին:

— Դու, Խոռ, շատ խորամանկ ես: Բայց վերջդ էլ կգա: Քո խորամանկութունը կարող էր իլել իմ կյանքը:

— Ների՛ր ինձ, բարի տեր, — փղձկաց Խոռը: — Սատանան ինձ մոլորեցրեց: Բայց երդվում եմ աստծով, ես դեռ կծառայեմ... Մենակ թե մի՛ սպանիր... Հիշիր, քանի անգամ եմ փրկել քո կյանքը... Ես միշտ էլ ծառայիլ եմ թեզ հավա-

տարմորեն ու ճշմարտությամբ: Առաջին անգամ մեղք գործեցի: Աչք տնկեցի փողի վրա... Խոստովանում եմ...

Նա կրկին սողաց դեպի տերը և, լաց լինելով, համբուրեց նրա ցեխոտ սապոգները:

Չեոնորայը լուռ էր: Միայն մի քանի բույսեր տևող մտածմունքից հետո բռնեց Խոսի վերնաշապկից և կանգնեցրեց իր առջև, Մոմը, առկայծելով, ծառայի վախից ծամածոկած դեմքը լուսավորում էր դեղին, թափանցիկ լույսով, և դրանից այդ դեմքը թվում էր անբնական կանաչ, անկենդան, անձև: Չեոնորայը զգվանքով ետ հրեց նրան:

— Հավ, Խոս... Ես քեզ խնայում եմ...

Մի ուրախ հառաչ դուրս թռավ Խոսի կրծքից:

— Սակայն մտքովդ չանցնի, թե ներում եմ քեզ... Դու պետք է արժանի լինես ներման: Ուշադիր լսիր... Թաքուն կդնաս Ջապորոժիե, կխցկվես Սեչի եղբայրության մեջ: Իսկ էնտեղ հարմար պահ կգտնես ու վերջ կտաս Չվենիգորային... Նա քեզ դեմքով ճանաչում է:

— Ոչ, չի ճանաչում:

— Այ, դա լավ է: Դա կօգնի մեր մտադրությանը... էլ մի ուշացնի: Քանի դեռ Չվենիգորան ողջ է, ես չեմ կարող մնալ Չեոնորանկալում: Հենց այսօր կմեկնեմ Ղրիմ, Ալու մոտ... Ես քեզանից լուրերի կսպասեմ... Լսում ես...

— Լսում եմ... Ամեն ինչ կլինի այնպես, ինչպես հրամայեցիր, տեր իմ:

ԱՆԱԿՆԿԱԼ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆ

1

Աղջիկներին հասցնելով Դուրսովայա Բալկա, Չվենիգորան Ռոմանի, Սպիրիտալսկու և Գրիվայի հետ թեքվեց հարավարևմուտք, դեպի Ջապորոժիե:

Երրորդ օրը, ուշ երեկոյան, շորս հեծյալները հասան Սեչ և կանգ առան ամրոցի դարպասի առաջ: Չվենիգորան ատրոճանակի կոթով թակեց պինդ կաղնե դարպասը: Խուլ արձա-

գանքը սաստկացրեց դժբախտները: Վերևում, մթության մեջ, ճռուց խլափեղկը, և մի քնկտտ ձայն դժգոհ հարցրեց.

— Մեղա՛ք եզ, տեր, ո՞ր սատանան է էդպես դիակդիակացնում:

Զվենիգորան քիչ մնաց քահ-քահ ծիծաղելու: Սիրտը լիքն էր ուրախությամբ: Օտարության մեջ կրած ծանր ապրումներից հետո, ահա, վերջապես նա կանգնած էր հարազատ Սևշի դռների առաջ և ինքն իրեն չէր հավատում՝ երա՞զ է, թե իրականություն: Ասես չէին էլ եղել ոչ սոսկալի ուղևորությունը դեպի Ղրիմ, ոչ Համիդն ու Սաֆար բեյը, ոչ Մլադենի հայդուկները, ոչ ատելի գալերան, ոչ էլ Բուլղարիայով, Վալախիայով ու ավերված, փլատակների վերածված Աջափնյա Ուկրաինայով կատարած երկարատև ճանապարհորդությունը դեպի խաղաղ Սուլա: Նրան թվում էր, թե երեկ երեկոյան էր դուրս եկել այդ դարպասից, իսկ այսօր արդեն վերադառնում է: Եվ նրան դիմավորում է ոչ այլ որ, քան ինքը՝ բատկո Մետելիցան: Մթան մեջ ժպտալով՝ Արսենը պատկերացրեց, թե ինչպես, գլուխը փոքրիկ պատուհանից դուրս հանած, ծեր կազակը լարված նայում է ներքև, ջանալով տեսնել, թե ով է եկողը: Բայց ոչինչ չի տեսնում և դրանից շարանում է. պատրաստ է պոռթկալ զայրույթից, ընտիր հայհոյանքներ տեղալ:

Նորից թնդաց ձայնը.

— Զլինի՞ թե ականջներդ բռնված են, դդմագլուխ: Ի՞նչ ես դիակդիակացնում, քեզ եմ հարցնում:

Այստեղ արդեն Արսենը շփմացավ և սրտանց ծիծաղեց: Նա գիտեր, սպասում էր, որ ծերունի ուսուցչից հենց այդպիսի խոսքեր է լսելու, ասված հենց նույն տոնով, հատուկ միայն փորձված, շատ բան տեսած զապորոժցիներին, որոնք ոչ աստծուց են վախենում, ոչ սատանայից:

— Հարազատ ձայն եմ լսում, — արցունքների ու ծիծաղի միջից ասաց Արսենը: — Ամոթ է, բատկո Կոռնեյ: Մի՞թե չճանաչեցիր:

Մետելիցան մի պահ լռեց: Հետո ակա քաշեց, ու լավեց, թե ինչպես ետ ցատկեց դիտանցքից: Դարպասի աշտարակից լավեց նրա զիլ ձայնը: Նա արթնացրեց հերթապահ զա-

պորոժցիներին, որոնք, արհամարհելով վտանգը, հանգիստ քնել էին:

— Վե՛ր կացեք: Դե վե՛ր կացեք, սատանաներ: Սեկաչ, Տովկաչ, հերիք քնեք: Արթնացեք: Թանկագին հյուր է եկել:

Փայտե աստիճանների վրա դոփեցին ծանր սապոգները: Ճոճուաց ելարանը, ճոնչաց երկաթե սողնակը, և դարպասը բացվեց: Դարպասից դուրս նետվեց քնատ Մետելիցան: Նրա ետևից, դժգոհ մոթմոթալով, շտապեցին Սեկաչն ու Տովկաչը, այդպես էլ, քնաթաթախ, զլխի շրնկնելով, թե ինչու այդքան շուտ արթնացրին իրենց:

— Արսեն, սատանի ճուտ,— բացականչեց Մետելիցան և արջի նման խտտեց Ջվենիգորային:— Ո՛ղջ ես, թուար եկար, թառլանս: Ա՛խ դու...

Նա Արսենին ամուր սեղմեց կրծքին, համբուրեց այտերը և, վերջապես, չկարողացավ արցունքները պահել:

Զարմացած և ուրախացած Սեկաչն ու Տովկաչը Մետելիցայի հզոր ձեռքերից դռով պոկեցին իրենց բնկերոջն ու սրտակից բարեկամին, որին այլևս հույս չունեին կենդանի տեսնել:

— Արսե՛ն: Ախպե՛րս:

Ուրախության առաջին բուռն պոռթկումներից հետո, երբ լսվում էին հատուկենտ բացականչություններ, Մետելիցան առաջինը հիշեց, որ եկողները հոգնած են և հանգստի կարիք ունեն:

— Առանց դադար առնելու Դանուբից եկել ենք մինչև էստեղ, բատկո,— ասաց Արսենը:— Էնպես որ ես ու իմ բնկերները շենք հրաժարվի հյուրընկալությունից: Վերջին երեք օրը արշավում էինք, ոնց որ թևեր առած լինեինք: Կարոտել էինք Սելի եղբայրությանը, ասենք անհետաձգելի գործ էլ կար... էլի Սերկո՞ն է կոշկոյր:

— Բա էլ ո՞վ: Ճիշտ է, չէր ուզում, հրաժարվեց: Ասում է, ծիրացել եմ: Բայց եղբայրությունը իրենը պնդեց... Ասենք ժամանակն էլ անհանգիստ է:

— Հենց հիմա ուզում եմ նրա մոտ գնալ...

— Կաց, կա՛ց, տղա, դրսում խոր գիշեր է, իսկ դո՛ւ կոշկոյի մոտ... Հո կրակ չի՞ ընկել: Կքնես, քունդ կառնես, հետո ինչ ուզում ես, արա:— Արսենի գլխին սառը ջուր լրց-

րեց Մետելիցան:— Գնացե՛ք... Տովկաչ, ձիերին տար ախոռ, իսկ դու՝ Սեկաչ, մի բան ճարիր կազակների համար: Դե արագ շարժվե՛ք, դանդալոշներ... Ես էլ պահակ կկանգնեմ:

Կուշա բնթրիքից հետո Մետելիցան Ռոմանին, Սպիխալսկուն և Գրիվային ուղարկեց քնելու, իսկ Զվենիգորային ստիպեց պատմել իր թափառումների ու զլխով անցած դրժախտությունների մասին: Ծերունի դապորոժցին և նրա երիտասարդ ընկերները երկար ժամանակ շունչները պահած լսում էին արտասովոր պատմությունները և միայն լուսադեմին հոգնած, խոնջացած Արսենը քնեց:

Առավոտյան ամբողջ Սեչը իմացավ Զվենիգորայի վերագարձի մասին: Յուրաքանչյուրն ուզում էր սեփական աչքերով տեսնել նրան ու լսել նրա կրած տառապանքների մասին: Սակայն Զվենիգորան, վրայից հանելով թուրքի շորերը, գնաց կոշկոշի մոտ: Փոխարենը Սպիխալսկին, Գրիվան ու Ռոմանը հազար ձևերով պատմեցին գերության մեջ իրենց կրած տառապանքների ու թափառումների մասին: Զապորոժցիների մոտ առանձնակի հաջողություն ունեցավ պան Մարտինը: Նա պատմում էր հետաքրքիր, կատակախառն, մերթ-մերթ խոսքի մեջ գցելով լեհերեն բառեր, սուր, կծու, և Արսենին դուրս էր բերում գրեթե որպես հեքիաթային դուրսուցումն ու անպարտելի ռազմիկ: Նրան ունկնդրելիս, կազակները մի զլուխ ուրախ քրքջում էին, քանզի Սպիխալսկին նույնիսկ իրենց կյանքի ողբերգական իրադարձությունների մասին պատմում էր հումորով, ուրախ ու սրամիտ: Այդ ժամանակ պան Մարտինը ինքն էլ հոհոում էր բոլորից բարձր, գլուխը ետ գցած և իր շիկակարմիր բեղ-նիզակները վերստնկած: Ընտո լրջանում էր և սկսում էր իր ունկնդիրներին գվարձացնել նոր արկածներով, որոնցում ճշմարտությունը հաճախ էր զարդարվում անխոնջ պատմողի բուռն երևակայությամբ:

Կողքով անցնելիս Զվենիգորան նայեց պան Մարտինին: Սա կանգնել էր հատակն ի վեր շուռ տված տակառի վրա, որպեսզի բոլորի համար տեսանելի լիներ: Սպիխալսկին խորամանկ ժպտաց, աչքով արեց Արսենին և շարունակեց նույն ոգով:

— Մի անգամ էլ, դա արդեն Գնեստրի վրա էր, պան

Արսենն ինձ ուղարկեց անցատեղ փնտրելու... Ես մտա թրփուտները և ինձ համար գնում եմ գետափով, աչքերս շուտ արած նայում եմ, որպեսզի թաթարներն ինձ չնկատեն, մեկ էլ տեսնեմ գետակի կողմն է վազում մի սիրունիկ թաթարուհի՝ մեծ պղնձե կուժը ուսին դրած: Ես կանգ առաւ Մտածում եմ, տեսնես հետո ինչ է լինելու: Թաթարուհին կուժը դրեց բարին, շուրջը նայեց և, օ՛ տեր աստված, արագ-արագ սկսեց հանվել... Ես աչքերս փակեցի, երբ ձանձրացա կույրի պես երկար կանգնելուց, մի աչքս կամացուկ բացեցի:

— Հա՛-հա՛-հա՛, հա,— հռհռացին զապորոժցիները:

— Նայեմ, տեսնեմ թաթարուհին մնացել է մի ծաղկավոր մետաքսե տաբատով... Ա՛խ, Հիսուս Քրիստոս... Իսկ երբ մյուս աչքս էլ բացի, նա արդեն հասցրել էր...

Զվենիգորան շհասկացավ, թե ինչ էր «հասցրել» թաթարուհին, բայց այն բանից, թե ինչպես հռհռոցի որոտալից ճայթյունը տարածվեց ամբոխի վրա, պարզ դարձավ, որ պան Մարտինը ուրախ խոսք ու կատակով կարողացել է գերել կազակների սրտերը:

Զորական գրասենյակում Զվենիգորային դիմավորեց ինքը՝ Սերկոն: Արսենը առաջին անգամ էր կոշկոյին այդպես տագնապած ու խոռվահույզ տեսնում: Մերունի ատամանը գիրկը բացեց և, թույլ շտալով, որ իրենից կրտսերը կազակական սովորությամբ խոնարհվի մինչև գետին, նրան սեղմեց կրծքին:

— Այնուամենայնիվ վերադարձար: Փառք աստծո: Իսկ ես արդեն հույս չունեի, թե քեզ ողջ կտեսնեմ, և ծանր մեղք էր ընկել խղճիս վրա:

— Վերադարձա, բատկո, համա, դժբախտաբար, առանց ձեր եղբոր: Զգտա...

Սերկոն Արսենին նստեցրեց իր դիմաց: Հոգոց հանեց:

— Տեսնում եմ: Թե որ գտնեիր, նրա հետ կգայիր: Կնշանակի, խեղճին վիճակված չէր հայրենի հողում թաղվել: Սակայն քո գնալը զուր չեղավ: Դու մեծ ծառայություն մատուցեցիր հարազատ մայր Ուկրաինային և ամբողջ Զապորոժյան Կոշին: Զիգիրինի վրա Իբրահիմ փաշայի արշավանքի մասին քո հայտնած լուրը օգնեց մեզ նախապատրաստվել՝ դիմավորելու և ետ մղելու հարձակումը... Իբրահիմ փաշան

և Սելիմ Գիրեյ խանը զուր էին երեք շաբաթ շարունակ գրոհում Ջիզիրիների վրա: Օրվա մեջ մի քանի անգամ նրանք իրենց զորքերը գրոհի էին նետում, քաղաքի պարիսպների տակ փոսեր էին փորում ու վառողի ականներ դնում, բայց նրանց ոչ մի բան չօգնեց: Ջիզիրիներ կանգուն մնաց, իսկ Իբրահիմ փաշան ու Սելիմ Գիրեյ խանը անփառունակ նահանջեցին... Ասենք, մենք էլ էստեղ, Պոնիզովսկում, ձեռքներս ծալած չենք նստել. հարձակումներ ենք կատարել թաթարական ուլուսների¹ վրա, ոչնչացրել ենք Բուգի վրա եղած թուրքական անցատեղերը, դարանել ենք Մուրավյան ճանապարհին ու ոչնչացրել պարենով բարձած գումակները... Այդ ամենի մեջ քո բաժինն էլ կա: Ժամանակին թշնամու մտադրության մասին տեղեկություններ ստանալ՝ դա արդեն նշանակում է կիսով չափ շահել ճակատամարտը:

— Քո խոսքերն ուրախացնում են ինձ, բատկո,— համեստորեն պատասխանեց Ջվենիգորան:— Բայց դա անցած բան է... Թուրքերը չեն հրաժարվել Ուկրաինան զավթելու իրենց մտադրությունից: Սուլթան Մուհամմեդը նորից արշավանքի է պատրաստվում: Ավելի ահարկու, վտանգավոր, քան անցյալ տարվանը:

Սերկոն ուշադիր նայեց կազակին:

— Քո տեղեկությունները վստահեցի՞ ես:

— Այո՛: Ինձ հաջողվեց իմ բուլղարացի բարեկամների հետ ձեռք գցել սուլթանի ֆերմանը:— Այս խոսքերի հետ Արսենը ծոցից հանեց մագաղաթի պինդ փաթեթը և տվեց կոշեռոյին:

Սերկոն բացեց ղեղնավուն թուղթը, որը ծածկված էր թուրքական նախշուն գրերով: Երկար նայեց տողերին:

— Ի՞նչ է գրում սուլթանը:

Ջվենիգորան կարդաց ֆերմանը և բառ առ բառ թարգմանեց: Սերկոն լուռ ականջ դրեց: Նրա բարձր թուխ ճակատին, հոնքերի արանքում խոր կնճիռներ գոյացան: Հավանաբար լսածը խորապես ցնցեց կոշեռոյին, բայց նա ցույց չտվեց: Սերկոյի առնական դեմքը, որին այնքան սազում էին մարուր, ածիլած սուր կզակը պայտի նման օղակող խիտ, երկար բեղերը, մնաց անթափանց:

¹ Ուլուս (թուրք.) — քուլորների բնակատեղ, ափամերձ գյուղ, ավան:

Որոշ ժամանակ նա լռեց: Մագաղաթը փաթաթելով՝ Արսենը նայեց կոշեռոյին և ջանաց գուշակել նրա մտքերն ու զգայմունքները:

— Այ թե ի՞նչ, — ի վերջո կամացուկ մրմնջաց Սերկոն: — Նշանակում է այս ամռանը ոչ պակաս երկու հարյուր հազար թուրք ու թաթար ոտքի տակ պիտի տան մեր տափաստանները, պիտի վառեն մեր գյուղերն ու խուտորները, ավերեն քաղաքները... Իսկ ով կարող է ասել, թե րանի՛-քանի մարդ կսպանեն, հաշմանդամ կդարձնեն, քաշ կտան մահմեդական պիղծ գերության... Թշվա՛ռ իմ Ուկրաինա, ինչ մեղք ես գործել աստծու առաջ, որ աղետ աղետի ետևից է ուղարկում քեզ: Որքա՛ն վիշտ ես դու տեսել և դեռ որքա՛ն նոր ցավեր են թափվելու քո գլխին... Ահա ուղիղ բառասուն տարի է, հետման Յակով Օսարյանինի ժամանակներից սկսած, սուրը ձեռքիցս ցած չեմ գրել... Մասնակցել եմ Մեծ Բողոքանի արշավանքներին... Տարել եմ Վինիցայի գնդապետի մականը... Եղել եմ փառապանծ նիզովյան եղբայրության կոշեռոյ... Մասնակցել եմ թաթարների դեմ մզվող անվերջանալի պատերազմներին... Արդեն զգում եմ, որ էլ առաջվա ուժը չունեմ: Տեսողությունս թուլացել է, դանդաղել են սրտիս դարկերը... Տեր աստված: Քո վերին օգնությունը հասցրու ինձ, պահպանիր իմ ձեռքերի ուժը այնքան, որ պեսզի կարողանամ կանխել իմ սիրասուն հայրենիքին սպանացող վտանգը, պահպանիր աչքերիս լույսը, որ կարողանամ տեսնել, թե Կարա Մուսթաֆան իր զորքի մնացորդներով ինչպես է փախչում մեր երկրից: Իսկ հետո թեկուզ հոգիս առ, տեր աստված:

Արսենը շունչը պահել էր: Երբեք նրան չէր վիճակվել այնքան մոտիկից և այնքան սուր զգալ այդ արտակարգ, հզոր մարդու հոգին, ինչպես այժմ: Արդեն վաղուց էր, ինչ Սերկոն գլխավորում էր զապորոժյան Սեչը՝ թուրքերի ու թաթարների դեմ նրա մղած կենաց ու մահու պայքարում: Տասնյակ մեծ ճակատամարտերը և հարյուրավոր մանր ընդհարումները, որոնցում հազթե՛լ էր, անպարտելի ռազմիկի փառք էին բերել նրան: Թշնամիները վախենում էին Սերկոյի անունից նույնիսկ: Հաճախ էին նրանք թիկունքները ցույց տալիս կաղակներին, առանց կովի բռնվելու, երբ

իմանում էին, որ իրենց առջև Ուոուս-Շեյթանն է, կամ Ռուսական Սատանան, ինչպես անվանում էին նրան թուրքերն ու թաթարները... Հայրենակիցները նրան անվանում էին Հաննիբալ և Ղրիմցի մարդորսների սարսափ: Եվ իսկապես, Ուկրաինայից, Մոսկովյան Ռուսիայից, Լեհաստանից հարյուրավոր ու հազարավոր գերիների էին ազատագրել Սերկոյի կազակները, տափաստաններում ավարով բռնված թաթարական գիշատիչ հեծյալ ջոկատների ճանապարհը կտրելով: Ղրիմում, Նողայի ու Բուզակի հորդաներում նա հրդեհեց ու ավերեց էր տասնյակ ուլուսներ, ավաններ ու ամրոցներ, որպես վրեժ Ուկրաինայի վրա կատարած թալանչիական ասպատակությունների. շատ անգամ արագասահ ճայերով՝ դուրս էր եկել Սև ծովի լայնարձակությունները, գրոհել էր գալերանների ու սանդալների վրա և ազատագրել գերիներին: Դրա համար էլ նրա անունը սարսափով էր լցնում թշնամիների սրտերը, և փառաբանվում ու գովերգվում էր հայրենակիցների դումաներում², ասքերում ու երգերի մեջ: Զապորոժցիները անսահմանորեն հավատում էին իրենց առաջնորդին և անկեղծորեն սիրում: Բոլորն էլ առանց տատանվելու նրա ետևից նույնիսկ դժոխք կգնային:

Կարճ դադարից հետո, ասես ամաչելով իր հոգու պոռթկումի համար, Սերկոն բարկությունից կնճռտվեց ու կոպտորեն ասաց.

— Թո՛ւ՛հ, ինչ ես նվնվոցը դրել, ցնդած ծերուկ... Արսեն, գավակս,— Սերկոն նորից գրկեց կազակին,— շնորհակալություն ամբողջ կոշի անունից այն տեղեկության համար, որը ոչ մի գին չունի: Քո ջանքերը, թո թափառումները հարյուրապատիկ վարձատրվեցին անցյալ տարի և, հավատում եմ, այս ամառ էլ կվարձատրվեն... Մենք ենթադրում էինք, որ կարող է թուրքերը հարձակվեն, իսկ այժմ համոզված ենք և ամեն ինչ կանենք, որ Կարա Մուսթաֆան իր վիզը ջարդի Չիգիրինում, ինչպես Իբրահիմ փաշան ջարդեց... Հարկավոր է անհապաղ այդ մասին տեղեկացնել հետման

¹ Ճայ— երկար, փայտե առագաստանավ, ավելի քան հիսուն թիավարներից բաղկացած անձնակազմով:

² Դումա— ուկրաինական ժողովրդական երգի տեսակ:

Սամոյլովիչին ու վոյեվոդա Ռոմոդանովսկուն: Ես այսօր իսկ սուրհանդակներ կուղարկեմ: Իսկ դու փոքր-ինչ ուշ կգնաս, ինքդ կտանես սուլթանի ֆերմանը: Գուցե թե ժլատ հետմանը քսակը բանա ու մի հարյուր ոսկի ընծայի դժբախտ դապորոժցուն: Ասենք, մեկ էլ տեսար, ինքը՝ հայր թագավորը նվեր կուղարկի, և միանգամից կհարստանաս... Անշուշտ, էլ շենք խոսում մեր նվերի մասին... Կոշից...

— Ի՞նչ ես ասում, բատկո! Առանց այն էլ ես քո փողերը չրիվ բամուն եմ տվել, ոչ մի զլոտի տուն չեմ բերել...

Եվ Զվենիգորան պատմեց, թե ինքն ու իր ընկերները ինչպես են փրկվել Համիդից ու նրա ասկյարներից:

— Կորածը էլ ետ չես բերի,— հանգստացրեց նրան կոշևովյը:— Փողը ձեռքբերովի է: Թող ինքներս ողջ-առողջ լինենք, փողը միշտ էլ կլինի: Իսկ ճանապարհի համար փողը պարզապես անհրաժեշտ է, ինքդ էլ գիտես...

Նա մոտեցավ սեղանին, գզրոցից հանեց թավշե քսակը:

— Էստեղ շատ չէ, բայց կհերիքի մի տասնյակ զապորոժցու, որպեսզի մինչև Չիգիրին, հալա նույնիսկ մինչև Բատուրին ճանապարհին նեղություն չբաշեն... Իսկ հիմա ինձ լսիր: Նախ կգնաս Չիգիրին, ֆերմանը ցույց կտաս օկոլնիչի՝ Ռժևսկուն. նա գիտի ինչ պետք է անել, փորձված գինվոր է... Անցյալ տարվա գրոհից հետո, երբ Չիգիրինը կիսով չափ ավերվեց, նա վերականգնեց պարիսպները, նորոգեց քաղաքային դարպասները, համալրեց պաշարները: Իսկ եթե իմանա, որ շուտով ստիպված կլինի կրկին հանդիպել անկոշյուրերի, ապա ավելի լավ կնախապատրաստվի: Չիգիրինից կսլանա հետմանի զորակայան, Դնեպրից այն կողմ: Կարծում եմ, հենց էստեղ էլ կհանդիպես վոյեվոդա Ռոմոդանովսկուն... Ֆերմանը նրանց մոտ էլ կթողնես. թող ուղարկեն ցարին... Բայց բեզ պիտի ասեմ, որ ոչ առաջինի, ոչ էլ երկրորդի հանդեպ առանձնապես համակրանք չեմ տածում... Հետմանը քնում է և իր ձեռքում, հետմանական մականի կողքին, տեսնում է նաև կոշևոյի մականը: Սակայն բոլորին հայտնի է, որ այդ ձեռքը թույլ է, թեև հափոռը, ագահ. ու

¹ Օկոլնիչի (պատմ.) — բարձրաստիճան պաշտոնյա՝ բոլարական Ռուսաստանում:

կողմնոյի մականը նրա ուժի բանը չէ... Իսկ իշխանի հետ ես հին հաշիվներ ունեմ: Երբ իշխանը, ըստ մոսկովյան սովորույթի, ուզեց հպատակեցնել մեր սլոբոժաններին¹, ես զպորոժցիների ու սլոբոժանների հետ մի փոքր քոթակեցի նրա մարդկանց՝ Բելգորոդի տակ, և նա ոխ պահեց: Նենգությամբ բռնեց ինձ, ձեռուտա շղթայեց ու Սիբիր արտրեց... Այս ամենը քեզ պատմում եմ նրա համար, որպեսզի իմանաս՝ ինչպես պիտի քեզ պահես էդ երկուսի մոտ, որպեսզի պաշտպանենք մեր Սեչը: Քանի դեռ խոսք է գնում թուրքերի ու թաթարների դեմ մղվող պատերազմի մասին, հետմանն ու վոյեվոդան զպորոժցիներին կհամարեն հուսարի դաշնակիցներ, բայց հենց որ պատերազմը դադարի, երկուսն էլ կձրգտեն մեզ իրենց ձեռքը գցել...

— Իսկ ես ի՞նչ պիտի անեմ:

Սերկոն սևեռուն նայեց կազակին:

— Սամոյլովիչը զպորոժցիներին կստիպի միանալ իր գորբին, որպեսզի համատեղ պաշտպանեն Չիգիրինը... Հարկավոր է կամաց-կամաց իշխան Ռոմոդանովսկուն համոզել, որ հետմանի տեսակետը սխալ է, խելացիորեն հասկացնել նրան, որ մենք չենք կարող Սեչը թողնել բախտի քմահաճույքին: Բոլորի համար էլ պարզ է, որ Սեչը հուսարի վահան է Ուկրաինայի համար՝ թուրքերի ու թաթարների դեմ: Եվ քանի դեռ կա հարավից եկող մահացու սպառնալիքը, պետք է ինի և մեր մայր Սեչը... Կնշանակի, էստեղ մենք ավելի շատ օգուտ կտանք գործին, թիկունքից հարձակվելով թուրքական գորբի վրա և սպառնալով Ղրիմին, քան Չիգիրինում:

— Հասկանում եմ, բատկո:

— Դու տանը եղե՞լ ես, — հանկարծ հարցրեց կողմնոյ:

— Ընդամենը մի օր:

— Քիչ է: Բայց ինքզ էլ գիտես, ինչ ժամանակներ են... Ուստի, հետմանին ու վոյեվոդա Ռոմոդանովսկուն տեսակցելուց հետո կվերադառնաս: Էստեղ պետք կգաս: Իսկ հիմա գնա: Քեզ համար հուսարի ուղեկիցներ ջոկիր ու սպասիր: Ես նամակը կգրեմ ու կկանչեմ քեզ...

¹ Սլոբոժան — գյուղի կամ արվարձանի բնակիչ:

լեռան վրայից, Սուբոսինյան ճանապարհի կողմից, Զվենիգորան ու ընկերները տեսան Զիգիրիները և ձիերի սանձերը ձգեցին:

Չախ կողմում՝ ուղղաբերձ ժայռի վրա հասնում էր մռայլ, հինավուրց ամրոցը: Ամրոցն այնքան բարձր էր, որ, թվում էր, լողում է անհատակ կապույտ երկնքում, ինչպես վիթխարի մի նավ: Նրան նավի տեսք էին տալիս և՛ սրաքիթ ձևը, և՛ թնդանոթները, որ սև երախներով դուրս էին նայում նեղլիկ հրակնատներից:

Այ կողմում, Զիգիրիյան լեռան ստորոտում, որին ժողովուրդը Քարոտ լեռ անունն էր տվել, փոփած էր քաշաքը՝ շրջափակված հողապատնեշով ու սոճու ցանկապարսպով: Շատ տների տեղում փլատակներ ու մոխրակույտեր էին: Դրանք անցյալ տարվա թուրքական պաշարման հետքերն էին:

Հեռվում, քաղաքից դուրս, Զիգիրիյան լեռան հտևում ծունկ տալով, կանաչ հովտի միջով նեղ ժապավենի նման գալարվում էր Թյասմինը: Գետակի մյուս կողմում սևին էր տալիս Զիգիրինի թավ անտառը:

Սակայն կազակները այդ գեղեցիկ տեսարանով զմայլվելու ժամանակ շունեին, և նրանք հոգնած ձիերին քշեցին դեպի Ղրիմի դարպասները:

Ամրոցի բակը լեփլեցուն էր զորական մարդկանցով:

Կազակները թամբերից իջան, ձիերը կապեցին պարաններից: Մետելիցան գնաց խոտ բերելու, Սեկաչն ու Տովկաչը վազեցին ուտելիք ճարելու, իսկ Զվենիգորան, Սպիխալսկին, Գրիվան ու Ռոման Վոյնովը գնացին դեպի բերդակալի մեծ բարաշեն տունը: Արսենը մտածում էր, որ ճիշտ չի լինի, եթե միասնական ջանքերով Թուրքիայից բերած ֆերմանը ինքը մենակ հանձնի բարձր պետերին: Ուստի գնացին բոլորը միասին:

Ստրելեցների¹ ջահել, կտրիճ ավագը, որին Զվենիգորան պատմեց իրենց գալու նպատակը, մի պահ մտքի մեջ ընկավ:

¹ Ստրելեց — արտոնյալ զինձառայող հին Ռուսիայում, Մոսկովյան պետությունում:

— Բերդակալ Ռժեսկին հիմա քաղաքում չէ, — վերջապես
ասաց նա՝ շիմանալով ինչ անել: — Գուցե ձեզ գեներալի՞
մոտ տանեմ:

Զվենիգորան մտածեց, որ ինքը հիմք չունի հրաժարվելու
ի վերջո իրենք այնպիսի լուր են բերել, որը հարկավոր է
լայնորեն հայտնի դարձնել զորքին ու ժողովրդին: Ուստի և
վճիռ կայացրեց.

— Տարեք գեներալի մոտ:

Ավագը նրանց տարավ մի մեծ դատարկ դահլիճ: Պատի
տակ երկար ու լայն նստարան էր դրված, որի վրա նստած
էին մի քանի հերթապահ ստրելիցներ՝ ասպարներով զին-
ված: Երկու դուռ տանում էին հարևան սենյակները: Դռներից
մեկի հտակից բարձր ձայներ էին լսվում: Ավագը ուղղեց,
կարգի բերեց կաֆտանն ու անհետացավ այդ դռան ետևում:

— Սուլթանի ֆերմանը: Օ լյա-լյա: Հրաշալի: Տալ ինձ, —
կիսաբաց դռան արանքից լսվեց մի ճղճղան ձայն: — Կամ
սպասել: Իս ինքս դուրս գալ... Պարոն սպաներ, հերաուս՝,
Զապորոժցիներ բերել սուլթանի ֆերման... Ես հենց այս
րուպեին ուզեմ տեսնել նրան... Քոմ, քոմ՝:

Զորական ավագները խմբով թափվեցին դահլիճ: Առջե-
վից գնում էր վարդագույն այտերով գեներալը: Նրա մուգ
երկնագույն աչքերը հետաքրքրությամբ սահեցին կազակնե-
րի վրայով, որոնք զգաստ կանգնեցին նրա առջև:

Գեներալին տեսնելով՝ Ռոման Վոյնովը ցնցվեց և ուզեց
կտ-կտ գնալ, սակայն լուռթյուն իջավ դահլիճում, բոլորը
բարացան տեղերում, և նա շհանդգնեց շարքը խախտել:

— Գեներալ Տրաուերնիխտ, — հայտարարեց ավագներից
մեկը:

Զվենիգորան մի քայլ առաջ եկավ: Խոր գլուխ տվեց, աչ-
քերը գրեթե մինչև գետին հասցնելով:

— Դո՞ւ բերել ֆերման, — հարցրեց Տրաուերնիխտը՝ գո-
հունակությամբ նայելով վայելչատես, ամրակազմ կազակին:

— Այո՛, պան գեներալ: Ֆերմանը ես ու ընկերներս ենք
ձեռք գցել Թուրքիայում: Կոշևոյ Սերկոն հրամայեց տանել:

1 Հերաուս (գերմ.) — ներս:

2 Քոմ (գերմ.) — արի:

հետմանին ու պարոն վոյեվոդային; իսկ ճամփին ցույց տալ
Զիգիրինի բերդակալին, որպեսզի նա փութով ամբողջ նա-
խապատրաստի նոր պաշարման համար:

— Օ-օ՛, դու լսե՞լ: Ինչ ասել այս կոսակ... Սա նորից
պատերազմ նշանակել, — ճղճղաց գեներալը:

— Այո, պան գեներալ, — հաստատեց Զվենիգորան, ծո-
ցից հանելով ֆերմանը և հանձնելով գեներալին:

Սա բացեց փաթեթը, շուռումուռ տվեց աչքերի առաջ:

— Շվայներայ՝, սա թուրքերե՞ն գրել...

— Այո, պան գեներալ: Թույլ տվե՞ք ես կարդամ և թարգ-
մանեմ:

Զվենիգորան արդեն բերանացի գիտեր ամբողջ տերտը և
արագորեն պատմեց բովանդակությունը: Տրտուելնիխտը
աչքը չէր հեռացնում նրանից: Երևում է, նա ապշած էր ոչ
միայն այդ կարևոր լուրից, այլև նրանից, որ սովորական
հասարակ զապորոժցին այդպես ազատ կարդում ու թարգ-
մանում է թուրքերենը:

— Պարոններ, չափասանց հետաքրքիր բան, — ճղճղաց
գեներալը: — Մենք պատերազմ սպասել ենք, բայց համե-
նայն դեպս կասկածեինք... Եվ ահա զապորոժցիներ այսպի-
սի կարևոր նորություն բերեն... Հրաշալի: Հրաշալի, — և
թփթփացրեց Զվենիգորայի ուսին: — Դանքե, մայն լիբեր²:
Ինձ միշտ էլ զապորոժյան կոսակներ հիացմունք պատճա-
ռել... Շաթ լաֆ դոլդաթ, մայնե գերշաֆթեն³... Իշխան Ռո-
մոզանովսկի դիզեր⁴ նորությունից շատ գոհ լինի... Ես նույն-
պես գոհ լինի... Կեսսեր, կոսակներ, — և նայեց Արսենի ըն-
կերներին: — Իսկ սրանք բո բամերադե՞ն⁵:

Նա մոտեցավ Սպիխալսկուն: Սա դուրս գցեց կուրծքը,
ձգվեց: Գերմանացին հովանավորողի տոնով նրա ուսին էլ
թփթփացրեց:

— Օ՛, դյուցազն է, Հերկուլես... Իսկ սա... վա՛հ, վա՛հ: —
Հանկարծ գեներալը պապանձվեց, աչքերը շովեցին, դեմքը

1 Շվայներայ (գերմ.) — խողովություն:

2 Դանքե, մայն լիբեր (գերմ.) — շնորհակալություն, սիրելիս:

3 Գերշաֆթեն (գերմ.) — պարոն:

4 Դիզեր (գերմ.) — այս:

5 Բամերադեն (գերմ.) — ընկերներ:

կաս-կարմիր կարեց:— Դոններվեթեր¹, Ախր սա խոլոպ
Ռոմկա Վոյնոֆն է, որ կա: Ռոյբեր², Թալանչի:— Նա շնչա-
հեղձ էղավ, շարությունից կապտեց:— Զոլզատեն: Վերցնել
այս ֆերֆլուխտեր հունդ³, նա ոչ մի կոսակ: Սա իմ ճորտ.
Պլոսկի գյուղից, Տուլայի մոտ... Խոռվարար, հրդեհիչ... Վա-
ռել իմ կալվածք... Շաթ լաֆ կալվածք... Եվ փախչել, ֆերֆ-
լուխտեր... Ահա: Հիմա, տես, դարձել զապորոժյան կո-
սակ... Իսկ որտե՞ղ եղել: Ստենկա Ռագինի մո՞տ... Ախաֆ-
նյակս, քո տեղ ախոռ: Այնտեղ ես ցույց տամ, ինչպես վա-
ռել իմ տուն... Զոլզատեն, բռնել նրան, շղթաներ դնել
Բանտ գցել:— Տրաուերնիխտը թուք շաղ տվեց, թափահա-
րեց ձեռքերը, ոտքերով դոփեց:

Ստրելեցները բռնեցին Ռոմանին, խլեցին թուրր, որ նա
փորձում էր հանել պատյանից, բարշ տվեցին դեպի դուռը:

— Մնաս բարով, եղբայր Արսեն, մնաք բարով, բարե-
կամներ,— գոչեց նա՝ դիմադրելով:— Այ թե ինչ ազատու-
թյուն գտա հայրենիքում: Նզովյալներ...

Արսենը նետվեց դեպի ստրելեցները.

— Սպասեք, էղ ի՞նչ եք անում:— Ապա նետվեց դեպի
գեներալը.— Մենք էսպիսի կարևոր լուր ենք բերել թուր-
քիայից, իսկ դուք նրան բա՞նտ եք գցում: Դա՞ է վարձատ-
րությունը:

— Ինչի համար կոսակ այդպես գոռա: Թե՞ նա կարծել,
այստեխ Զապորոժյան Սել լինի,— հեղանքով ասաց Տրաու-
երնիխտը:

Զվենիգորան դողաց զայրույթից: Ո՛ր, նա այդպիսի ըն-
դունելություն չէր սպասում Զիգիրինում: Չեոքր ակամա
ձգվեց դեպի սուրը: Բայց անմիջապես էլ Սպիխալսկին ուսով
ետ հրեց նրան, իսկ Գրիվան ուժեղ սեղմեց արմունկը:

Պան Մարտինը կանգնեց գեներալի առաջ, բեղերը ցցեց,
նրա դեմքը սփրթնեց, իսկ աչքերը քիչ էր մնում դուրս թրո-
չելին կապիճնեթից: Զայնը դողողաց:

— Պան գեներալ, վայել չէր էդպիսի լկտի օյին խաղալ

1 Դոններվեթեր (գերմ.)— որտա ու կայծակ

2 Ռոբեր (գերմ.)— ափազակ

3 Ֆերֆլուխտեր հունդ (գերմ.)— անիծված շուն

մեր ընկերոջ հետ, որ հենց նոր սարքեցիք նրա գլխին: Նույնիսկ եթե ճիշտ է, որ Ռոմանը վառել է պանի կալվածքը, մեկ է, չի կարելի նրան բռնել, որպես վերջին ավազակի, անբանի, քանզի պան Ռոմանը դեռ մի բան էլ ավելին է վերադարձրել, մեծ ծառայութուն մատուցելով հայրենիքին: Բացի դրանից, նա այլևս խոլոպ չէ, խնդրեմ, այլ զապորոժյան կազակ: Իսկ դա արդեն ուրիշ բան է:

Տրաուերնիխտը փորձեց ինչ-որ բան ասել, բայց Սպիխալսկին այնպես էր տաքացել, որ ոչինչ չնկատեց և շարունակեց խոսել, դուրս պրժած աչքերը կատաղորեն շուրջը հածելով:

— Ես նոր միայն հասկացա, թե ինչ ասել է ճորտ լինել: Պատկերացնում եմ, թե պանը ինչպես է վարվում իր ճորտերի հետ, եթե նույնիսկ պան Ռոմանի նման բարի ու զգայուն մարդը ձեռք է բարձրացրել ձեր կալվածքի վրա: Երևում է. նա պանի անասուններից էլ վատ է ապրել... Սակայն, պան գեներալ, խոլոպն էլ մարդ է, գրողը տանի... Նա էլ նույն միս ու արյունից է, ինչ-որ մեկը՝ շլյախտիչներս: Նա էլ զվարճանում է, տիրում, սիրում, և ուրախանում է ճիշտ մեզ նման: Ուրեմն ո՞վ է իրավունք տվել մեզ՝ ծիծաղելու նրանց վրա: Բնությո՞ւնը: Թե՞ պան Եղուսը: Հը՞: Ձեզ եմ հարցնում...

— Խոլոպը խոլոպ է, մայն լիբեր,— աչքերը Սպիխալսկու վրա շոնց Տրաուերնիխտը:— Իսկ եթե դուք շլյախտիչ, ինչպես հայտարարեք, ապա ինձ համար տարօրինակ լինի ձեզանից նման խոսք լսել... Նիխտ վա՞ր¹, պարոններ:

— Ծիշտ է, ճիշտ, պարոն գեներալ,— ձայնեցին մի քանիսը:—
— Դուք բոլորդ լսել... Սրանով խոլոպի հետ վերջանալ... շնորհակալութուն, կոսակներ, ֆերմանի համար, շաթ կարևոր տեղեկություն... Կարծում եմ, իշխան Ռոմանովսկին դրա համար լաֆ ընծա տալ ձեզ:

— Մեզ ոչ մի ընծա էլ հարկավոր չէ,— նորից առաջ եկավ Զվենիգորան:— Ազատիր, սյան գինեբալ, մեր ընկերոջը: Այլապես ինքներս կազատենք:— Եվ նա ձեռքը դրեց սրի դաստակին:

¹ Նիխտ վար (գերմ.)— ճիշտ չէ՞:

— Վա՞ս¹, Դա ի՞նչ նշանակել, մենշ², Սպառնալի՞ք...
Հե՛յ, գոլդատեն, որւրս հանել էս անպատկառ կոսակ:

Զայրույթից ու վիրավորանքից արյունը խփեց Արսենի գլուխը: Նա, իրեն կորցրած, առաջ նետվեց: Տրաուերնիխտը վախեցած ճղճղաց ու ետ-ետ գնաց: Բայց այդ պահին նրա և զապորոժցու արանքում բուսեց դաժան տեսքով, շիկակարմիր մի գեներալի լողող կերպարանք, որը Զվենիգորայի առջև բարձրացրեց ձեռքը:

— Կա՛ց, — գոչեց նա որոտածայն: — Նրա խոսքի մեկ նույնպես զգացվում էր օտարերկրացու առողանությունը: — Պարոններ, ձեր վեճը շատ հեռուն գնաց: Խնդրում եմ, վերջ տաք: Հանգստացեք: Պարոն զապորոժցին պետք է շափավորի իր խոսքերը, իմանա ում հետ գործ ունի. թաթարի կամ ենիչերիի առաջ չի կանգնած... Դուք էլ, գեներալ, պետք է ամաչեք այն բանի համար, որ ձեզ թույլ եք տալիս ձերբակալել զապորոժյան սուրհանդակներից մեկին: Իսկ այն, որ նա ութ թե ինը տարի առաջ ճորտ է եղել և հանցանք կատարել, գործը չի փոխում: Հիմա հաշվեհարդար տեսնելու ժամանակը չէ:

— Գեներալ Գորգոն, — ծղրտաց Տրաուերնիխտը: — Զմոռանալ, որ այստեղ դուք ստորին չին: Ես վիրավորանք չհանդուրժել: Խնդրեմ ինձ շտովորեցնել, թե ինչպես վարվել իմ ձորտերի հետ...

— Զեր կալվածքում դուք ազատ եք նրանց հետ վարվելու այնպես, ինչպես թելադրում է ձեր խիղճը: Բայց այստեղ, գորջի մեջ ճորտ չկա: — Գեներալ Գորգոնը խոսում էր առողանությամբ, բայց բավական ճիշտ: — Թույլ տրված սխալը հարկավոր է ուղղել, որպեսզի վնաս չհասցնենք Զիգիրինի պաշտպանությանը:

— Գեներալ, դուք շափազանցել:

— Բնավ: Կարծում եմ, խոհեմ կլինի հավաստիացնել զապորոժցիներին, որ նրանց ընկերոջը ոչ մի վատ բան չի պատահի: Նրա ճակատագիրը պետք է վճռի գլխավոր հրամանատար իշխան Ռոմոզանովսկին... Իսկ մինչ այդ ես

¹ Վաս (գերմ.) — ինչ:

² Մենշ (գերմ.) — մարդ:

երաշխավորում եմ նրա անվտանգութունը: Ձեր անունից, գեներալ, ես խոսք եմ տալիս զապորոթցիներին, որ դուք բռնութիւն չեք գործադրի իրենց ընկերոջ նկատմամբ:

Տրաուերնիխտը ոչինչ չպատասխանեց: Լուռ ծածկվեց դռան ետևում:

Գներալ Գորգոնը դարձավ Ձվենիգորային: Նրա մանր, թննախույզ աչքերը կազակին նայեցին բարյացակամորեն, բայց անհողզող: Երևում է, որ այս մարդը սովոր էր հրամայելու և իր նպատակին հասնելու:

— Իմ բարի խորհուրդը ձեզ, երիտասարդ, եթե ուզում եք փրկել ձեր ընկերոջը, անհապաղ սլացեք կամ շէշխանի, կամ էլ հետմանի մոտ: Միայն նրանք կարող են ստիպել գեներալին՝ բանտից ազատելու նրան... Իսկ սուլթանի ֆերմանի համար մեծ շնորհակալութիւն Ձիգիրինի ողջ կայազորի կողմից: Բարի ճանապարհ:

Ձվենիգորան լուռ գլուխ տվեց և ուղղվեց դեպի դուռը: Սպիխալսկին ու Գրիվան շտապեցին նրա ետևից:

Գնում էինք արագ, վրդովված, հուզված, բունցքները սեղմած: Ձենիգորան ու Գրիվան լուռ էին, իսկ Սպիխալսկին անեծքներ ու հայհոյանքներ էր տեղում: Վերջապես դա նրան ձանձրացրեց, ու նա էլ լռեց:

Մետելիցան դեռ հեռվից նկատեց, որ Ռոմանը չկա, իսկ նրա ընկերները ինչ-որ բանից հուզված են:

— Ի՞նչ է պատահել:

Արսենը կարճ պատմեց Ռոմանին պատահած դժբախտութիւն մասին: Կշտամբեց իրեն այն բանի համար, որ ընկերներին քարշ էր տվել իր հետևից: Եթե մենակ ինքր տաներ այդ ֆերմանը, ամեն ինչ լավ կգնար: Իսկ հիմա՝ խնդրեմ: Ռոմանը բանտում է, և նրան մտրակ է սպասում, հա, մեկ էլ տեսար՝ կախաղան...

Տարարյուն Սեկաչը պատյանից դուրս քաշեց սուրը:

— Եղբայրներ, էլ ի՞նչ ենք սպասում: Մեզ խփում են, իսկ մենք հիմարի նման ծիծաղում ենք: Շուտ գնանք: Թրեքով ճամփա բացենք մեզ համար ու ազատենք մեր ընկերոջը: Ամբողջ Ձապորոթիեով մեկ կխայտառակվենք, եթե էնտեղ իմանան, որ մենք ոչինչ չենք արել Ռոմանին ազատելու համար:

— Կա՛ց, կա՛ց,— նրա գլխին սառը ջուր լցրեց Մետեփ-
ցան ու ճակատը կնճռտեց:— Տես է, ինչ տաքգլուխն է...
Թրից բացի մարդուս մի բիշ էլ խելք է պետք... Տես ինչքան
դինվոր կա էնտեղ: Մինչև հասցնենք թրերը դուրս բաշել,
նրանք մեր վիզը կոլորեն: Ինչ կշահենք... Համ էլ մտածիր,
թե ում ենք կոտորելու՝ ստրելեցներին ու սերդյուկներին՝
Մեր մարդկանց, ոչ թե ենիչերիներին... Ձէ, մենք էդ ձևով
չենք ազատի Ռոմանին: Հարկավոր է ուրիշ բան մտածել...—
Եվ ծերունի կազակը ձեռքը թափ տվեց Սեկաչի թթի տակ:

— Բատկոն ճիշտ է ասում,— ծոր տալով վրա բերեց ուր-
բաթախոս Տովկաչը:

— էստեղ ի՞նչ կա մտածելու,— տաքացավ Սեկաչը:

Բոլորի հայացքները դարձան Զվենիգորային:

— Մի քանի ճանապարհ կա,— ասեւ մտքերով տարված
խոսեց Արսենը:— Կարելի է հենց հիմա հարձակվել պա-
հակների վրա և Ռոմանին ազատելու փորձ անել: Սկզբում
հենց էդպես էլ ուզում էի անել: Բայց բատկո Մետեփցան
ճիշտ է ասում էդ միջոցը բանի պետք չէ: Մի քանիսին մենք
կսպանենք, մեղանից էլ մի քանիսը կզոհվեն: Իսկ զլխավորն
այն է, որ, հայտնի չէ, կհաջողվի՞ Ռոմանին ազատել, թե
չէ... Կա և մեկ ուրիշ ճանապարհ՝ օրենքով: Խնդրել իշխան
Ռոմոզանովսկուն ու հետման Սամոյլովիչին: Մի քանի օր
հետո մենք նրանց մոտ կլինենք: Նրանց մի խոսքը բավա-
կան է, որպեսզի մեր ընկերը նորից աղատություն ստանա:
Կա և երրորդ հնարավորությունը...

Արագորեն զապորոժցիների փոքրիկ խմբին մոտեցավ մի
անծանոթ ստրելեց, և Զվենիգորան ձայնը կտրեց: Ստրելեցը
կլիներ մոտ երեսուն տարեկան, բայց փոքրիկ մուգ շիկա-
վուն մորուքը և նույնպիսի մուգ շիկավուն, փակազծի ձևով
կտրված բարուլը, որ կախվել էր զլխարկի տակից, նրան
ավելի մեծ, պատկառելի տեսք էին տալիս: Նա բարեկց ու
դիմեց Զվենիգորային:

— Ես որոշ բաներ եմ ուզում հայտնել ձեր ընկերոջ մա-
սին...

¹ Սերդյուկ (պատմ.) — հետիոտն կազակական հետևակ գնդի զինվոր,
որ սոճիկ էր ստանում:

— Ռոմանի՞: Ո՞վ ես դու և ինչո՞ւ ես հոգ տանում նրա
չամար:

— Մի՞ դարձացեք, Եղբայրներ,— սիրալիր ժպտաց ան-
ձանոթը:— Ինձ Կուզմա Ռոժկով կն ասում... Ծս ուղեկցում
էի գեներալ Գորդոնին ու տեսաւ, ինչպէս բռնեցին ձեր ըն-
կերոջը և, պարզվում է, իմ երկրացուն՝ Ռոման Վոյնովին...
Ծս, իմացած լինեք, նույնպէս տուլացի եմ:

— Դու առա՞ջ էլ էիր ճանաչում Ռոմանին:

— Ոչ, մի՞թե դա կարևոր է: Ծս ճանաչում եմ Տրաուեր-
Եխտին, նրա մասին լսել եմ դեռ տանը... Կատաղած շուն
է: Իսկ երբ իմացա, որ Ռոմանը վառել է նրա տունը, ինքս
ինձ խոսք տվեցի՝ ամեն ինչ անել երկրացուս օգնելու հա-
մար:

Ձապորոժցիները կիպ շրջապատեցին ստրելեցին: Արսե-
նի աչքերը վառվեցին, Անսպասելի օգնականը շատ ժամա-
նակին էր:

— Հիմա որտե՞ղ է Ռոմանը:

— Գցեցին նկուղ: Ա՛յ, էնտեղ, բակի ծայրին:

— Պահա՞կ էլ են դրել:

— Բա ո՞նց:

— Ինչպե՞ս կարելի է նրան աղատել:

— Առայժմ չգիտեմ: Հարկավոր է մի լավ նայել, մտա-
ծել...

— Բայց մինչ մենք մի բան մտածենք, գերմանացին
կտանջի Ռոմանին:

— Ձի տանջի: Դուք լսեցի՞ք ինչ ասաց իմ գեներալը:

— Գորդոնը:

— Այո: Արդարամիտ շտապագացի է և լավ էլ զորական
է: Նա կպաշտպանի Ռոմանին:

— Հը՛մ,— Ջվենիգորան մտքերի մեջ ընկավ:— Բայց...
բանն այն է, որ մենք անհասպաղ պիտք է գնանք: Ի՞նչ անենք:
Գուցե ես մնամ, դուք գնա՞ք,— նա նայեց ընկերներին:

— Ո՛չ, ո՛չ, դու պիտի գնաս, Արսեն,— աղմկեցին կա-
ղակները:— Դու ես ֆերմանը ձեռք գցել, դու ես թուրքերին
կարդում: Համ էլ շատ բան կարող ես պատմել... Իսկ էդ բո-
ւորից բացի, վոյեվոդային կխնդրես Ռոմանի համար: Գու-
ցե կհրամայի աղատել:

— Եթե մեզանից մեկը պիտի մնա, թող էդ մեկը ես լինեմ,— ասաց Գրիվան։— Ստրելեցն ինձ կօգնի, ու մենք մինչև ձեր գալը որոշ բաներ կիմանանք։

— Ինչ կա որ, դա լավ է,— հաստատեց Կուզմա Ռոսկովը։ Բոլորը համաձայնեցին։

Պայմանավորվելով հաջորդ հանդիպման տեղի մասին՝ զապորոժցիները հրաժեշտ տվեցին Գրիվային ու ստրելեցին, հեծան ձիերն ու ուլացան դեպի Թյասմինի վրա գցած Կալինովյան կամուրջը։

3

Մանր մտքերը համակել էին բոյարին Գրիգորի Գրիգորեվիչ Ռոմոզանովսկուն, Բավական էր, որ նա մենակ մնար իր շքեղ երթային վրանում, մի միտք հանգիստ չէր տալիս նրան՝ որդին, որը բանի տարի է արդեն տառապում էր թասուրական գերության մեջ։ Նրան փրկագնելու բոլոր փորձերն ու ջանքերը ոչ մի շրջունք չէին տվել։ Եվ բոյարինը ոչ առանց հիմքի կասկածում էր, որ իր տղային պահելու հարցով շահագրգռված են ոչ թե թաթարները, որոնք դեմ չէին լինի նշանավոր գերու համար խոշոր փրկագին ստանալ, այլ թուրքերը։ Հավանական է, ինքը՝ սուլթանը։

Ձեռքերով գլուխը բռնած, արմունկներով երթային փորիկ սեղանին հենված՝ բոյարինը լուռ նստած էր կիսախավարի մեջ։ Նա ուզում էր հանգստանալ, ջանում էր չմտածել իշխան Անդրեյի մասին, բայց ի զորու չէր իրենից վանելու անմեկին, դառն մտքերը։

Վարագույրի ետևում աղմուկ լսվեց, ներս մտավ պահակապետը։

— Պայծառափայլ իշխան, ժամանել է հետման Սամոյլովիչը։

Ռոմոզանովսկին շփեց դեմքը, ասես քշելով այնտեղ բարացած թախիժը, շտկեց ուսերը։

— Ներս հրավիրիր։

Վրան մտավ Սամոյլովիչը՝ ամրակազմ, բարձրահասակ, շքեղ մորեգույն ժուպանով, գեղեցիկ ջայլամի փետուրով ու թանկարժեք քարերով զարդարված կնգումենու փափախով։

Զախ ձեռքով բռնել էր սուրբ, որ շողշողում էր արծաթից ու գույնզգույն քարերից:

— Ողջուն, բոյարին Գրիգորի Գրիգորևիչ՝ Ուրախ եմ, քեզ ողջ ու առողջ տեսնելուս համար:

— Շնորհակալութուն: Շնորհ արա, պայծառափայլ հետման: Նստիր, հյուրը աստծունն է— Հետմանը ծանրորեն փլվեց բազմոցին:

— Հյուրընկալվելու համար շեմ եկել, իշխան... Ստիպված ենք նորից կռվել: Սերկոն սուրհանդակներ է ուղարկել: Զապորոժցիները բերել են սուլթանի շատ կարևոր ֆերմանը. թուրքերը կրկին գալիս են, որպեսզի զրավեն Չիզիրինը...

— Մենք դա կռահում էինք:

— Իսկ հիմա ավելի ստույգ գիտենք: Իշխան Գուլիցինը պեզում է, որ զորքը շարժենք դեպի Կիև: Նա ենթադրում է, թե այս անգամ թուրքերն իրենց զլխավոր հարվածը հենց այնտեղ կուղղեն...

— Բայց մենք, պան Իվան, հեռատես գուրս եկանք:

— Այո, Չիզիրինը ամբողջ Ուկրաինայի բանալին է: Ամենից առաջ՝ Աջափնյակի: Մենք լավ արինք, որ վերականգնեցինք քաղաքի պարիսպները, ուժեղացրինք կայազորը: Հիմա մեր ամրոցում քառասունհինգ թնդանոթ կա, բավականաչափ վառող ու ռումբ, ինչպես և այլ գինամթերքներ: Այսօր ես հրամայեցի Վելիկի Սորոչինցևից ուղարկել զումակը: Միրզորոզից և Պոլտավայից քշել անասունները, փոխադրել ռորեն, ալյուր, ապխտած միս... Դնեպրի ամրոցները մեր ձեռքում են: Մենք միշտ էլ կարող ենք օժանդակ ուժեր հասցրնել պաշարվածներին: Այս տարի մարդիկ ավելի շատ ունենք, քան անցյալ տարի: Ես հիսուն հազար կաղակ ունեմ:

— Ինձ հայտնեցին, որ այստեղ է գալիս իշխան Բուլատը՝ կալմիկների ու Դոնի կազակների հետ: Այդ դեպքում տերունական զորքը ավելի քան յոթանասուն հազար մարդ կլինի: Իսկ կազակների հետ միասին՝ հարյուր քսան հազար...

— Կարծում եմ, դապորոժցիներին էլ պետք է մտեցնել Չիզիրինին: Սերկոն, կայազորը թողնելով Սեչում, կրերի հարձակման ու պաշտպանության մեջ փորձված տասը հազար ռազմիկներ: Եթե թուրքերը նույնիսկ երկու հարյուր հազար

զինվոր ունենան, ապա այդ դեպքում էլ, մենք աստօժ օգնութեամբ, կարող ենք դեմ կանգնել նրանց:

— Պատերազմը խաղ է, պան հետման: Եվ կշահի նա, ով հենց սկզբից ավելի շատ հաղթաթուղթ ձեռք կզցի...

— Դրանցից մեկը մեր ձեռքում է, իշխան, և սպասում է վրան մտնելու թույլտվութեան:

— Զապորոժցիներ են:

— Այո:

Ռոմոզանովսկին ծափ տվեց: Ներս մտավ ավազը:

— Ներս բերեք զապորոժցի սուրհանդակին, — ասաց Սամոյլովիչը:

Վրան մտավ Զվենիգորան: Գլուխ տվեց.

— Ողջույն քեզ, իշխան: Ողջույն, պայծառափայլ հետման:

— Կաղակ, բոյարին ցույց տուր սուլթանի ֆերմանը: Կարգա, — հրամայեց հետմանը:

Զվենիգորան հանեց ֆերմանը: Թարգմանեց: Ռոմոզանովսկին ուշադիր լսեց: Հետո թափով ելավ տեղից, գրկեց կաղակին:

— Շնորհակալություն, կտրիձ: — Ապա դարձավ հետմանին: — Արտակարգ հաջողություն է: Ես կկարգադրեմ այս նամակը անհապաղ ուղարկել ցարին. նրանից ի՞նչ տեղեկացանք մենք: Առաջին. մեր անցած տարվա ծանոթներ իբրահիմ փաշային ու Սելիմ Գիրեյ խանին հանել են իրենց բարձր պաշտոններից և աքսորել են Ռոզոս կղզի: Երկրորդ. մեծ վեղիր է նշանակվել Հասան Մուսթաֆան, որին Կարա Մուսթաֆա են ասում: Սա իսելացի ու դաժան ռազմիկ է: Անշուշտ, նա չի կամենա իբրահիմ փաշայի բախտին արժանանալ և բոլոր ջանքերը կգործադրի հաղթանակի հասնելու համար: Երրորդ. ինչպես և անցյալ տարի, թուրքերը գալիս են Չիզիրինի վրա: Մեզ համար շատ կարևոր էր սույն տեղեկություններն իմանալ: Եթե մինչև այժմ տատանվում էինք և չգիտեինք որտեղ կենտրոնացնենք ուժերը, ապա հիմա, շնորհիվ այս տեղեկությունների, մեր անելիքները պարզ են, և մենք պետք է գործենք անվրեպ: Սակայն անցյալ տարվա համեմատությամբ ընդլայնվում են պատերազմի ընդհանուր նպատակները: Սուլթանը ոչ միայն Չիզիրինի վրա աչք

ունի, այլև ուզում է զավթել Կիւեր և նույնիսկ Աջափնյա Ուկրաինան: Սակայն Մուսթաֆա փաշան դրան կարող է հասնել միայն այն դեպքում, եթե նրան հաջողվի ոչնչացնել մեր զորքերը Ջիզիրինում: Ուստի մեր խնդիրն է՝ թույլ չտալ քաղաքը հանձնել կամ էլ, ծայրահեղ դեպքում, պահպանել մեր զորքերի մարտունակութունը... Վերջապես սուլթանը մինպատակ ևս ունի՝ ոչնչացնել Զապորոժյան Սելը: Վերջին ժամանակներս թուրքերի ու թաթարների թիկունքում զապորոժցիների կատարած հարձակումները, պետք է ենթադրել, լրջորեն անհանգստացրել են սուլթանին:

— Անկասկած մեր բախտը բերեց, — համաձայնեց Սամոյլովիչը: — Եվ ես արդեն պարզևնիր եմ տվել զապորոժցիներին:

Ռոմոզանովսկին գոտուց արձակեց իր թանկարժեք սուրը և մեկնեց Արսենին:

— Շնորհակալութուն, կազակ: Հետմանից իմացել եմ, որ դու մենակ չես բերել ֆերմանը... Ես կկարգադրեմ, որ հինգ ոսկի շերվոնեց տան ամեն մեկին:

Զվենիգորան արժանապատվությամբ խոնարհվեց:

— Զափազանց շնորհակալ եմ, իշխան: Սակայն, եթե հնարավոր է, ոսկի շերվոնեցների փոխարեն մենք խոնարհարար խնդրում ենք մեր ընկերներից մեկի համար... Նա է ինձ հետ այս ֆերմանը բերել թուրքիայից:

— Ի՞նչ է պատահել:

— Գեներալ Տրաուերնիխտը բանտ գցեց նրան:

— Ինչպե՞ս թե: Տրաուերնիխտը կամայականութուն է արել... Ինչի համար է բանտարկել:

Արսենը համարձակ նայեց բոյարինի աչքերի մեջ: Նա հասկացավ, որ պետք է ճշմարտութունն ասել: Քանզի միայն ճշմարտութունը կարող էր օգնել Ռոմանին ազատելուն:

— Նա գեներալի ճորտն է եղել... Մի քանի տարի առաջ նրա մոտից փախել է Դոն:

Ռոմոզանովսկին հոնքերը կիտեց: Զախ ձեռքով բռնեց մորուրն ու սկսեց փաթաթել ցուցամատի վրա: Դա նշան էր այն բանի, որ վոյեվոդան հույժ դժգոհ է ինչ-որ բանից:

— Այդ դեպքում էլ խոսքն ինչի՞ մասին է: Գեներալը պարզապես ետ է վերցրել այն, ինչ պատկանում է իրեն:

— Բայց նա, ախր, մարդ է, և ոչ թե իր... Նիզովյան եղ-
բայրությունը նրան իր մեջ է ընդունել, նա դարձել է դապո-
րոժյան կազակ:

Հետմանը, նայելով Ռոմոզանովսկուն, հեզնանքով ժրպ-
տաց. վատ թաքցրած գայրույթ ու վրդովմունք հայտնվեց
իշխանի դեմքին: Չսպասելով, թե ինչ կպատասխանի վոյեվո-
դան, Սամոյլովիչը գլուխ տվեց ու դուրս գնաց:

Ռոմոզանովսկին մոտեցավ Զվենիգորային, կանգնեց նրա
առջև, հոնքերը խոժոռեց.

— Եթե ամեն մի փախստական ճորտ իրեն հայտարարի
Դոնի կամ գապորոժյան կազակ, ապա մենք՝ կալվածատե-
րերս, շուտով կմնանք առանց բանող մարդկանց, առանց
ճորտերի... Իսկ նրանք էլի հավաքվում են, խմբեր են կազ-
մում, և նրանց մեջ սկսվում է ազատախոհությունը: Կհայտ-
նրվի մի ոմն Ստենկա Ռազին, և կհեղվի ազնվական արյու-
նը... Ո՛չ, ո՛չ, կազակ, մի՛ խնդրիր, որ ես պաշտպան կանգ-
նեմ այդ թափառաշրջիկին... Ես էլ Տրաուերնիխտի տեղը լի-
նեի, նույն բանը կանեի:

Արսենը հասկացավ, որ խնդրելն այլևս անօգուտ է ու
վտանգավոր վոյնովի համար: Հո չէ՞ր շահի վոյեվոդայի հա-
մակրանքը, եթե պատմեր, որ Ռոմանը մասնակցել է Ռազի-
նի ապստամբությանը: Բայց չէր կարելի հեռանալ, հարկա-
վոր էր դեռ Սերկոյի պատվիրանն էլ կատարել: Ուստի զա-
պորոժցին նորից խոր գլուխ տվեց:

— Հը, է՞լ ինչ կա, — դժգոհ ասաց բոյարինը:

— Պայծառափայլ իշխան, — ձայնը իջեցրեց Զվենիգո-
րան, — ուզում եմ հաղորդել կոշևոյի դաղտնի խնդրանքը...

— Խոսիր:

— Կոշևոյը վախենում է, որ հետմանը զապորոժցիներին
կստիպի գնալ Չիգիրին... Իսկ դա թուրքերին ու թաթարներին
հնարավորություն կտա գրավել Սեչը, հետո էլ մեր երկրի
ամբողջ հարավը: Սերկոն ենթադրում է, որ մենք Պոնիզո-
վում ավելի շատ օգուտ կտանք, քան Չիգիրինում: Հարմար
ժամանակ զապորոժցիները կհարձակվեն Ղրիմի կամ Բու-
ջակյան հորդայի վրա և խանին կստիպեն ետ քաշվել Չիգի-
րինից: Մենք թույլ չենք տա, որ ուղամամթերքով բարձած
թուրքական նավերը անցնեն Դնեպրով: Թշնամու թիկունքում

Սեչի ամրոցը, ունենալով մի քանի հազար զապորոժցիներ, կարա Մուստաֆայի աչքին սուր փուշ կլինի: Մենք կիմանանք թուրքերի բոլոր մտադրությունները, նրանց զորքի տեղաշարժերն ու քանակը...

Ռոմոդանովսկին մտքերի մեջ ընկավ: Չէ՛, ինչ ուզում ես, ասա, արժանին պետք է մատուցել այս զապորոժցուն. խելացի է, բաջ, ոնց որ սատանա: Եվ մտածում է հասուն, փորձված զինվորի նման, ինչ անենք, որ ջահել է... Ինքը շտապե՞ց արդյոք, որ մերժեց ընկերոջն ազատելու նրա խնդրանքը, — մտածեց վոյեվոդան: Բավական էր մի խոսք ասեր Տրաուերնիխտին, և նա բաց կթողներ իր նախկին ճորտին: Բայց այստեղ մտքերը մի քանի տարի ետ սլացան... Մահասարսուռ հրացուլքը լուսավորում էր Դոնի ու Վոլգայի ափերը: Ռազինի խոտվարարներն էին անցնում... Ապստամբության հրդեհը գնալով մեծանում էր, ընդարձակվում և Ռուսական պետության նորանոր մարզեր էր ընդգրկում: Քիչ մնաց հասներ Մոսկվա: Այդ հրդեհի արձագանքները դեռ երկար ժամանակ ցնցում էին երկիրը, և հարկովի ու Բելգորոդի շըրջաններում բռնկված հուզումների օրերին քիչ էր մնում ինքն էլ կյանքին հրաժեշտ տար: Իշխանը հիշեց նաև, որ այն ժամանակ էնտեղ առաջնորդը Սերկոն էր... Սերկո: Կարված փոխհարաբերություններ առաջացան վոյեվոդայի ու Սերկոյի միջև: Ռոմոդանովսկին գիտեր, որ կոշի ատամանը չի մոռացել, թե ում մեղքով իրեն Իրտիշ քշեցին հարկովի խոտվությունը ճնշելուց հետո... Բոյարինը հասկանում էր, որ Սերկոն սովորական մարդ չէ, միայն նա իր զոպորոժցիներով կարող էր ետ մղել թաթարների արյունահեղ ասպատակությունները և ի պատասխան՝ հաջող արշավանքներ կատարել Ղրիմի վրա: Ուստի և վոյեվոդան կոշևոյին վերաբերվում էր հարգանքով, բայց սառը: Նա չէր հիշում ծերունուն, սակայն չէր մոռանում և այն, որ Սերկոն չի հանդուրժում ոչ միայն թաթարների ճնշումն ու հալածանքները, այլև՝ ցարական աստիճանավորների... Վոյեվոդան հասկանում էր, որ կոշևոյը չի ուզում իր զորքը բերել Չիզիրին, որպեսզի այստեղ չհանդիպի իրեն... է, ինչ արած, թող մնա Պոնիզովում: Այնտեղ նա իր թոկից փախածների հետ ավելի մեծ օգուտ կտա... Իսկ Տրաուերնիխտին ոչինչ չի ասի ինքը՝ իշխանը, բոյարինը,

պաշտպան չի կանգնի մի ստոր խոլոպի, որը գուցե վաղն իր վրա էլ ձեռք կբարձրացնի...

Մինչ բոյարինը իր մտքերի հետ էր, Զվենիգորան, անշարժ կանգնած, հետաքրքրութեամբ դիտում էր, թե ինչպես է փոփոխվում վոյեվոդայի դեմքի արտահայտությունը: Վերջապես Ռոմոդանովսկին հայացքը բարձրացրեց նրա վրա:

— Ես կգրեմ կոշկոյին: Վաղը իմ նամակը քեզ կտան, կտանես Սեչ: Բայց բոլոր դեպքերում հիշիր. զապորոժցիները կմնան Սեչում. ուժերի մի մասը թող հարձակումներ գործի թշնամու թիկունքի վրա, կտրի Ղրիմ տանող ճանապարհները, հսկի Մուրավյան ճանապարհը: Մյուս մասը թող հարձակվի Կրղւ-Քերմենի վրա: Լավ կլինի ամրոցը գրավեն: Հարկավոր է թունդ վախեցնել թաթարներին, որպեսզի նոր խան Մյուրադ Գիրեյը Զիգիրինի մոտ իրեն զգա, ինչպես ծածանը ուռկանի մեջ... Դու ինձ հասկացա՞ր:

— Հասկացա՛, պայծառափայլ իշխան:

— Դե ուրեմն գնա: Աստված քեզ հետ:

Զապորոժցիներն անհամբեր սպասում էին Արսենին:

— Հը, ի՞նչ եղավ, — բոլորը նետվեցին դեպի նա:

— Է՛, էլ մի՛ք հարցնի: Շունը շան թաթ չի կծի... Պարոնները ամեն տեղ էլ նույնն են, տարբերություն չկա, ոչուփուռ լինեն դրանք: Բոյարինը մերժեց...

— Բայց չէ՞ որ ձեռքերիս դեռ թուր կա, — բացականչեց տաքարյուն Սեկաչը, — ուժի զոռով կազատենք Ռոմանին: Գնանք հենց հիմա:

— Կամ էլ, եղբայրներ, հայդե, գնանք Սեչ, — նրան պաշտպանեց ոչ պակաս տաքարյուն Սպիխալսկին: — Կես կուրեն կազակ վերցնենք, — վերադառնանք Զիգիրին ու ցույց տանք էդ շվարին...

Վե՛ճը բորբոքվեց: Մետելիցան և Տովկաչը առարկեցին Սեկաչին ու Սպիխալսկուն:

— Ոնց որ երեխա լինենք, — բարկացավ Մետելիցան: — Թրերո՛վ: Իսկ ինչ կլինի դրանից հետո, մտածե՛լ եք: Պայմանավորվեցինք, չէ՞: Գրիվան ու Ռոժկովը ամեն ինչ կիմանան, ուշադիր կհետևեն, կհոտոտեն, իսկ հետո էլ մենք գործի կանցնենք: Մենք պետք է ավելի խորամանկ լինենք էդ Տրաուավեր... Տրաեր... Թո՛ւհ, սատանա, լեզուդ կջարդես,

մինչև էդ անունը դուրս բերես... Տրավերնիխտին, կրակ թափի գլխին, հա՛:

— Բատկոն ճիշտ է մտածում,— ասաց Զվենիգորան:— Յարախտի հարձակվենք, փորձանքի մեջ կընկնենք: Ուրիշ միջոց գտնենք, ավելի խելացի: Միշտ չէ որ կարելի է բոլոր գլխին բռունցքով խփել: Բայց սա հետո: Կվերադառնանք վաղը: Ճամփին ուղում եմ մի կեսօրով տուն մտնել, թե որ դուք համաձայն լինեք...

4

Սուլա գետն անցնելով զապորոժցիները դեռ հեռվից նկատեցին, որ խուտորում արտակարգ եռուզեռ է տիրում: Ամբոխը հավաքվել էր խուտորի կենտրոնում: Հավում էր անհանգիստ ձայների զվվոց, որի միջից երբեմն դուրս էին թռչում առանձին ճիշեր ու հառաչանքներ:

— Տեսնես, էլի ի՞նչ փորձանք է եկել,— հարցրեց պան Մարտինը:

Արսենն անհանգստացավ: Կանգնեց ասպանդակների վրա, ջանալով տեսնել, թե ինչ է կատարվում հրապարակում, բայց կանացի խայտարղետ շորերից մորթե գլխարկներից բացի, ուրիշ ոչինչ չտեսավ:

Առանց երկար մտածելու, ձեռքը բռնեցին ուղիղ մարդագետնի միջով և քիչ անց խուտոր տանող նեղ կաժանով դուրս եկան ընդարձակ արոտատեղ:

Դուրովայա Բալկայի բնակչության դրեթե կեսը այստեղ էր: Բավական էր մի հայացք գցել վշտահար, լացակումած կանանց, սակված երեխաներին, հուզված ծեր տղամարդկանց ու ճերմակահեր պապիկներին, մանավանդ զինված կազակներին, որպեսզի գլխի ընկնեին ինչ է կատարվում. տղամարդկանց պատերազմ էին ճամփում:

Բոլորի ուշադրությունը սեևովեց զապորոժցիներին: Իսկույն, ամբոխը ճեղքելով, Զվենիգորային մոտեցավ լացակումած մի կին, բռնեց ասպանդակից: Արսենը գուսպ բարեվեց:

Կինը բարձրացրեց արցունքից ուռած դեմքը:

— Արսեն, հոգիս, դու ասա իմ էս անաստվածին, միգու-

ցի քեզ լսի: Էն օրվանից, ինչ եկար քրոջդ հետ, ոնց որ փոխել են էդ մարդուն. մի գլուխ իրեն գինվոր է ձևացնում: Փոխանակ քաղ անի, կալ կալսի, հեծնում է ձին ու քշում տափաստան: Էնտեղ մոլախոտերի գլուխներն է թրատում, կրակում է մուշկետով... Շարունակ կազակների մեջ է խրցկվում... Էսօր էլ, վա՛յ տամ իմ գլխին, բոլորի հետ մեկտեղ, ինքն էլ է գինվոր գնում... Որր ու անտեր է թողնում ինձ էլ, երեսերին էլ: Ը-ր-ը...

Նա սեղմվեց Արսենի ոտքին ու հեկեկաց:

«Անաստվածը» քաշվել էր մի կողմ, տիտուր նայում էր մեկ կնոջը, մեկ զապորոսցիներին: Դա Իվանիկն էր: Նրա կողքից կախված էր թուրը, իսկ ձեռքին մուշկետն էր: Կազակական ժուպանը ծալ-ծառ կախ էր ընկել նրա նեղ ուտերից, գլխարկը իջել էր ականջները, բայց մարդուկը դրանք չէր նկատում և կտրիճավարի ոլորում էր ցանցառ բեղերը:

— Զինկա, հերիք Լղավ քեզ: Կացեցիր պրծար, բավական է: Մեկ է, իմ ասածն է լինելու, հասկանո՞ւմ ես... Ոնց որ մտքիս դրել եմ, էդպես էլ կանեմ... Թուրքերը գալիս են, իսկ ես վառարանի վրա պտի նստեմ մնա՞մ, ինչ է: Հլա տես թե ինչ է անցել մտքով... Զէ՛, ես կոխվ պիտի երթամ: Ով դիտի, մեկ էլ տեսար մի փաշա բռնեցի ու, պարանը վիզը զցած, քաշ տվի քեզ մոտ...

— Այ դետնի տակ անցնես դու, հա՛, նդովյալ սատանա: Կլանքս կերար, հերիք չեղա՞վ:— Զահել, հազթանդամ կինը ասպանդակը բաց թողեց ու հարձակվեց ամուսնու վրա.— Մե լինեք էն օրը, որ ես քեզ հետ պսակվեցի, ցնդած թափառական...

Զվենիգորան խոռվահույզ կնոջ լացին ու անեծքներին ականջ դնելու ժամանակ շուներ, և ձին խթանեց: Դեռ հեռուից նա տեսավ Ստեշային ու Զլատկային, որոնք, մարդկանց զետուղեն հրմշտելով, վազում էին իր կողմը:

— Արսեն:

Երկուսով սլանում էին կողք կողքի, բայց հենց կազակի ձիու առջև Զլատկան հանկարծ անվճռականորեն կանց առավ, իսկ Ստեշան փաթաթվեց Լղբորը: Արսենը կռաչավ ու համբուրեց քրոջ վառվող այտերը, ապա ձեռքը մեկնեց Զլատկային, ասես քաշալերելով նրան: Զլատկան շուրջը նայեց: Այդ

պահին հարյուրավոր աչքեր նայում էին իրեն, հետևում էին նրա յուրաքանչյուր շարժումին ու հայացքին:

Տեսնելով, որ աղջիկը դեռևս տատանվում է, Արսենը հավասարվեց նրան: Եվ հանկարծ բոլորի, ու ամենից առաջ հենց Ջլատկայի համար անսպասելի, բռնեց նրա թևատակերից, բարձրացրեց ու նստեցրեց թամբին:

— Օ՛յ, սիրելիս, էս ի՞նչ ես անում,— վախեցած շշնջաց աղջիկը:— Մարդիկ նայում են ախր:

— Թող նայեն: Թող իմանան, որ դու իմն ես... էստեղ հո քեզ չի՞ն նեղացնում:

— Չէ՛:

— Իսկ վոյեվոդան ինչպե՞ս է:

— Արդեն քիչ-քիչ ապաքինվում է: Երեկ առաջին անգամ մենակ պտտվեց խրճիթում:

Նրանք դանդաղ գնում էին խուտորի երկայնքով. առջևից՝ Ջվենիգորան, Ջլատկայի ու Ստեշայի հետ, որոնք բռնել էին նրա ասպանդակներից, իսկ ետևից՝ դապորոժցիները:

Հենց բակի դռան մոտ Ստեշան բաշեց եղբոր թևքից: Արսենը շրջվեց նրա կողմը: Աղջկա աչքերում թաքնված հարցում կար:

— Քեզ ի՞նչ է պատահել, քույրիկս:

Ստեշան կասկարմիր կտրեց:

— Արսեն, քեզ մի բան եմ ուզում հարցնել...— անվճռականորեն սկսեց նա:

— Խոսիր:

— Ո՞ւր է քո ընկերը:

— Ո՞ր մեկը:

— Դե. էն շեկ մազերովը... Ռոման էր անունը...

Արսենը ուշադիր նայեց Ստեշային: Այս անգամ նրա հայացքից չվրիպեցին և՛ շփոթմունքը, որ համակել էր աղջրկան, և՛ կարմիրը, որ ավելի թունդ պատեց այտերը: Ա-ա՛, այ թե ինչ: Մի ժամն էլ բավական է եղել, ուրեմն, որպեսզի Ստեշան նկատեր և՛ Ռոմանի փարթամ ցորնագույն հերսփունջը, և՛ ձիգ վայելչակազմ կերպարանքը, և՛ նրա ամբողջ հանդիստ կապտաշ գեղեցկույունը:

Դոնցի կաղակի մասին հիշելիս Արսենի դեմքը մոռավեց: Ստեշայի աչքից դա չվրիպեց:

— Սպանվե՞լ է: Վիրավո՞ր է,— տազնապահար բացա-
կանչեց նա:

— Է՞դ որտեղից հնարեցիր,— պատասխանն ուշացրեց
Արսենը:— Ողջ է նա: Մնաց Չիգիրինում...

— Չուզեց թեզ հետ էստեղ գալ, հա՞:— Ստեշայի ձայնի
մեջ վիրավորված հպարտութուն նկատվեց:

— Դե չէ, ի՞նչ ես ասում: Էնտեղ... նա... կարևոր գործ
ունեիր... Իսկ քո ինչի՞ն է պետք: Դու, չլինի՞ թե, էն իբր...

Ստեշան հանկարծ ասպանդակը բաց թողեց և, առանց
պատասխանելու, վազեց դարպասը բացելու: Արսենը, նայե-
լով պլախտայի՝ տակից փալլող նրա դեղեցիկ, բարեկազմ
ոտքերին, հրաշագեղ ոսկե հյուսքերին, տխուր ժպտաց: Զրույ-
ցը նրան հիշեցրեց այն վտանգի մասին, որի մեջ հայտնվել
էր իր ընկերը, այն մասին, որ ինքը իրավունք չունի երկար
մնալու Դուբովայա Բալկայում:

Զապորոժցիները մտան բակ: Ստեշայի կանչի վրա առա-
ջինը խրճիթից դուրս թռավ Յացկոն: Նրա ետևից դուրս վա-
զեց մայրը: Վերջապես, Յազուրի ու Օնոպրի պապի օգնու-
թյամբ, արտասանդուղքից դուրս եկավ վայելողա Մլազենը:

Արսենը գրկից գիրկ անցավ: Սպիխալսկին նույնպես,
հին ծանոթի իրավունքով, ողջագուրվում էր, համբուրվում
բոլորի հետ, բակը լցնելով իր հղոր, հաղթ ձայնով: Մետե-
լիցան, Սեկաչն ու Տովկաչը պատկառանքով, զապորոժցիներ-
ի սովորության համաձայն, խոնարհ գլուխ տվեցին:

Մայրը անմիջապես սկսեց սեղան զգել: Ստեշան ու Զլատ-
կան օգնում էին նրան: Տղամարդիկ նստեցին գերաններին ու
աշխույժ գրույց բացին: Ամեն մեկն էլ հարցնելու ու պատ-
մելու բան ուներ: Իսկ պան Սպիխալսկին երկու կողմին էլ
հասնում էր. օգնում էր կանանց՝ բերում էր ուտելիքները,
բալի ու սալորի թրմօղիով լի սափորները, և ընդհանուր
զրույցի մեջ անակնկալ ծիծաղելի խոսքեր էր գցում:

Երբ բոլորը սեղան նստեցին, պան Մարտինը, հաճույթից
լեզուն ծտտացնելով, սկսեց համտեսել ըմպելիքներն ու ոչ
պակաս համեղ կերակուրները: Նրան բոլորն էլ դուր եկան. և՛

¹ Պլախտա— տանը գործած պինդ քաթանի կտոր, որ փաթաթում էին
գոտու շուրջը, շրջազգեստի փոխարեն:

թարմ կանաչիով եփած յուղալի բորշը, և՛ ճարպով ու սրխտորով ցորնաբլիթները, և՛ կաթնասերով հնդկացորենի բլիթները, և՛ խաշխաշով ու մեղրով բլիթները...

— Օ՛, էս ինչ առատութիւնն է, եղբայրներ, — բամբ ձայնով ասաց նա՝ բերանը դնելով հնդկացորենի փմփուխ բլիթը, որի վրա ձուկնի պես ճերմակին էր տալիս սառը, թանձր էաթնասերը: Իսկ երբ ուտելիքի վրայից խմեց բուրավետ սալորոզին, հիացմունքից աչքերը կկոցեց, շրթունքները շպպացրեց ու կատվի պես մոռաց. — Ը՛մ-մ-մ: Կյանքիս մեջ սրանից լավ բան խմած չկամ:

— Մի՛ շտապիր, պան Մարտին, — ասաց Օնոսյրի պապը ու վեր կացավ սեղանի մոտից: — Մեր կողմերում դրանից էլ լավ բան կա:

Նա շոգորալով գնաց մառան և շուտով ետ եկավ, բերելով մի մեծ փայտե աման՝ պոնկեպոունկ լցված ոսկեգույն բմպելիքով: Մի լիբր գալաթ տվեց պան Մարտինին:

Սպիտակակին ներշնչեց խմիչքի սուր, բայց հաճելի բուրմունքը և մի կում արեց: Նրա դեմքը երանութլամբ ժպտաց, աչքերը թռան ճակատը:

— Օ՛, պան Եղուս, էս ի՞նչ հրաշք է: — Եվ մի շնչով գալաթը դատարկեց: — Սա ի՞նչ բան է, պան Օնոսյրի:

— Մեղր է, պան Մարտին... Եփած մեղր:

Ճաշից հետո, որը, ճիշտն ասած, կարելի էր իրիկնահաց անվանել, քանի որ այն ձգվեց մինչև մթնշաղ, պապորոծցիները, նրանց հետ էլ Սպիտակակին, ստները բարձր տալով գնացին մարագ, խոտի վրա բնելու, իսկ Լեւսենը դեռ երկար դրուցեց հարադատների, Մլադենի, Յաղուրի ու Զլատկայի հետ:

— Ուրեմն նորի՞ց պատերազմ, Արսեն, — հարցրեց վոլովողան: — Այսօր սուրհանդակ էր եկել. բոլորին, ուլբեր ղեկը ունեն, զորակոչի ենթարկեց:

— Շուտով սպասում ենք Կարա Մուսթաֆային:

— Նրա հետ, երևի, Համիդն էլ կհայտնվի: Ափսոս, որ ես դեռ չեմ կարող ձի հեծնել: Թե չէ կգանեի նրան ամբողջ թուրքական բանակի մեջ:

— Քեղ համար, վոյելովողա, դեռ վաղ է էդ մասին մտա-

ծել... Թե աստված տա, ես ինքս էլ կգտնեմ նրան: էն ժամանակ արդեն պարզ է, ինչ կանենք:

— Գուցե թե նենկոն էլ Ուկրաինա գա,— վրա բերեց Յազուրը:— Իսկ ի՞նչ կլինի, որ ես էլ գնամ Չիգիրին:

— Ո՛չ, ո՛չ,— տաքացած առարկեց Արսենը:— Գու, Յազուր, պետք է մնաս Դուրովայա Բալկայում... Ուրիշ էլ ո՞վ պիտի բուժի վոյեվոդային... Բացի դրանից, ես ու ընկերներս էլ, թե որ բան է վիրավորվենք, հույս ունենք օգտվել: քո ծառայությունից: Մենք մեր զլխի տերը շենք, ու թե որ մի բան պատահի, սողալով կհասնենք խուտոր, ինչպես արչն է սողում իր հարազատ որջը:

— Արսենը ճիշտ է ասում,— համաձայնեց Մլադենը:— Ինձ ու քեզ համար, Յազուր, դեռ շուտ է Դուրովայա Բալկայից դուրս գալ... Բայց հենց որ ես ամուր ոտքի կանգնեմ, կգնամ Բուլղարիա: Ես հավատում եմ. իմ արծիվները ոչ բուրն են ղոհվել: Թեկուզ մեկնումեկը կենդանի մնացած լինի, մենք նորից մարդկանց ոտքի կհասնենք ստրկացնողների դեմ: Նորից կցնցվի Պլանինան, կխշշա լեռնային վտակը, կալեկոծվի ողջ բուլղարական հողը: Թող որ սկզբում քիչ լինենք, բայց մենք կչերմացնենք բուլղարների սրտերը հույսի շողերով, նրանց մեջ կարթնացնենք քնած ուժերը և ազատության ձգտումը:

Թեև Մլադենը հալումաշ էր եղել, նիհարել ու գրեթե լրիվ ճերմակել էր, հիմա նա ավելի լավ տեսք ուներ, քան ճանապարհին, երբ անցնում էր վալախիայով: Իսկ երբ խոսք էր բացվում օսմանցիների դեմ մղվող պայքարի մասին, նրա թուխ աչքերը կայծկլտում էին անմարելի կրակով ու երիտասարդական կորովով:

Զվենիգորան ակամա հիանում էր վոյեվոդայով. նրա լաչն, բաց ճակատով, արծաթած մազերով, որ նա ետ էր գցում սովոր շարժումով, հիանում էր նրա ողջ հպարտ ու առնական կերպարանքով:

Ուշ գիշեր էր, երբ պառկեցին քնելու:

Գիշերը տաք էր, լուսնկա: Ուղիղ հենց բակի դիմաց սևին էր տալիս լեռնալանջին քնած անտառը, իսկ մարագի ևտեփում, Սուլայի ափին, իրենց համերգն էին զլել անխոնջ գորտերը: Նրանց խուլ, հազարերանգ կոկոսցր բռնել էր ողջ հո-

վիտը, ուր փոված էր խուտորը, և արձագանքում էր հինա-
վուրց անտառում:

Արսենը անցավ բակի միջով և կանգ առավ արտասան-
ողոզքի մոտ: Այստեղ, ասես, սպասում էին իրեն: Ետևա-
պահի դուռը ճռռաց, խավարի միջից հայտնվեց փոքրիկ
սպիտակ մի կերպարանք:

— Զլատկա:

Աղջիկը արտասանողոզքից ճախրեց, ինչպես թռչնակը:
Նուրբ, ճերմակ ձեռքերը կրծքին ծալած՝ լուռ կանգնեց կա-
զակի առաջ: Արսենը քնշորեն գրկեց աղջկան, զգալով, թե
ինչպես հուզմունքից նրա շունչը կտրվում է:

— Զլատկա:

— Ինչպե՞ս էի սպասում քեզ, Արսեն:

— Ես էլ, հոգիս, շատ էի սպասում էս պահին:

— Բայց դու վաղը գնո՞ւմ ես:

— Պետք է, սիրելիս: Պատերազմ է սկսվում:

— Ես դարձյալ կսպասեմ քեզ:

Արսենը քնքշորեն բռնեց նրա ձեռքը, էլ ավելի ամուր
սեղմեց իրեն և դանդաղ տարավ բակի միջով: Փողոցում
թեքվեցին աջ և սառը, մատղաշ կանաչի միջով անշտապ
գնացին լուսնին ընդառաջ:

5

Զապորոժցիները Զիգիրին մտան Զերկասի ճանապարհով,
Կալինովյան կամրջի վրայով:

Ինչպե՞ս էր փոխվել քաղաքն այդ մի քանի օրվա ըն-
թացքում: Հազարավոր ոռու ստրելեցներ և ուկրաինացի կա-
զակներ հեղեղել էին փողոցներն ու հրապարակները: Պատ-
նեշների վրա ետում էր աշխատանքը. նորոգում էին ցցազե-
րանները, հողով լցված պարկեր էին դարսում իրար վրա պա-
պարիսպների ճեղքերը փակելու համար, տեղադրում, հար-
մարեցնում էին թնդանոթները: Դեպի Կալինովյան կամուրջ
էին շտապում քաղաքացիները՝ կահկարասիներով. նրանք,
ովքեր չէին կարող գեներ ձեռքին բաղաբը պաշտպանել,
շտապում էին Դնեպրից այն կողմ: Դեսուղեն էին սլանում
ձիավոր սուրճանդակները: Լսվում էին ավագների հրաման-

ներն ու կարգադրութիւնները, որոնք մերթ-մերթ համեմտում էին թունդ խոսքերով: Մտտված վիթխարի կաթսաների տակ բոցկլտում էր խեժահոտ արձակող փայտը, որ բերված էր Սե անտառից. խոհարարները ճաշ էին պատրաստում: Աղմուկ, աղաղակ, ճղալոց: Բայց բոլորի վրա տագնապի ու անհանգրստութեան կնիք էր դրված: Այդ աղմուկ-աղաղակի մեջ ուրախ կահույքի տուփերն ու ծիծաղ գրեթե չէին լսվում:

Չիզիբեհն: Ետ լավ էր հիշում անցած տարվա պաշարումը, դրա համար էլ լրջորեն ու տագնապով էր պատրաստվում նորին:

Ձապորոժցիները Գրիվային գտան գնդապետ Կորովկայի սերդյուկների մեջ: Մյուս ղինվորների հետ միասին նա աշխատում էր բերդապատնելի վրա. հողի պատերի մեջ ամուր կաղնի ցցեր էր խփում Գրիվային, հաղթանդամ լուսկադ, սերդյուկի կապույտ համադրիստով, դժվարութեամբ բարձրացնում էր ծանր կաղնի թակը ու թափով ցած իջեցնում: Տեսնելով ընկերներին՝ անշտապ սրբեց քրտնած ճակատն ու դանդաղ ցած իջավ:

— Հը՛, ի՞նչ նորութիւն: Ինչպե՞ս է Կուզմա Ռոժկովը.— հարցրեց Չիզենիգորան՝ սեղմելով կազակի ձեռքը:— Ռոմանը դեռ բանտում է:

— Էլ որտե՞ղ պիտի լինի: Տրաուերնիխտը էնպես չի հրուկում նրան, որ հնար լինի աղատելու:

— Էլի էն նույն նկուղում է:

— Հա: Դոան առաջ միշտ երկու պահակ են կանգնում:

— Չե՞ք փորձել նրանց հետ խոսել:

— Բան դուրս չի գալիս: Ոչ մի կերպ խոսքի չեն բռնվում:

— Չեն խոսում՝ թող շխոսեն, սատանան նրանց հետ: Ռեբեմն հարկավոր է կաշառել:

— Ախր ասում եմ, չէ՞: Կապովի շներ են, ոչ մի խոսք չեն ասում: Էլ ո՞նց կկաշառես:

— Ռոմանին ոչ մի տեղ չե՞ն տարել: Չե՞ն հարցաքննել:

— Չգիտեմ: Հո չէի՞ կարող առաջնորդից իրիկուն նստել էնտեղ: Որպեսզի Չիզորինից շլոնդեն, ստիպված եղա սերդյուկական գունդ մտնել: Լավ էր, որ ծանոթներ պատահեցին, օգնեցին: Հիմա էլ հարկավոր է հրամանները կատարել, բացակայել չի կարելի:

— է՛, էնքան էլ շատ բան չեք արել,— հիասթափված սասց Արսենը:— Ռոժկովին որտե՞ղ գտնենք: Գուցե նա մի բան մտածե՞լ է:

Գրիվան հեղացած ուները վեր քաշեց:

— Ռոժկովն էլ էնքան գիտի, ինչքան ես... Ասենք հրեն ինքը:

Կուզմա Ռոժկովը հեռվից նկատեց ձիավորներին և դեռ նեղից ճանաչեց զապորոժցիներին: Սիրալիք ժպտալով՝ շտապեց նրանց մոտ: Բոլորին ձեռք տալով և նկատելով, որ Գրիվան սովորականից ավելի է հոնքերը կիսել՝ Ռոժկովը խկույն հասկացավ սլատճառը:

— Ի՞նչ է, եղբայր Գրիվա, արդեն հասցրե՞լ եք կովեր:

— Հասցրել ենք,— մոռյլ պատասխանեց նա:— Արսենը կարծում է, թե մեզ համար հեշտ է եղել էստեղ:

— Ես էդպես չեմ կարծում,— առարկեց Զվենիգորան ջղայնացած:— Բայց դուք մինչև հիմա հո կարո՞ղ էիք մի բան մտածել:

— Շտապելու կարիք չկա,— սասց Ռոժկովը:— Կշտապես, մարդկանց վրադ կծիծաղեցնես: Քանի դեռ Ռոմանը Զիգիրինում է, կարծես թե նրան վտանգ չի սպառնում: Ես խնդրեցի գեներալ Գորգոնին, նա խոսեց Տրաուերնիխի հետ: Գերմանացին հրաժարվում է իր ճորտին ազատել, բայց չի էլ տանջի, շտապանդացուց վախենում է:

— Նա ուզած ժամանակ կարող է էստեղից դուրս տանել նրան, էն ժամանակ, արի ու գտիր: Մի որևէ տեղ թաքուն կտանջի, նույնիսկ չենք էլ իմանա...

— Է՛, ինչ կարող ենք անել, գլուխներս հո պատին չենք սա...

Զվենիգորան ջղային սկսեց թխկթխկացնել թրի կոթին:

— Ախ, գրողը տանի: Ես էլ կարծում եմ, թե բան եք հասկանում: Մենք հո չենք կարող օրերով Լուսեղ նստած մնալ: Հարկավոր է անմիջապես սլանալ Սև: Առանց հետաձգելու, հենց այսօր մենք պիտի ապատենք Ռոմանին, թեկուզ ստիպված լինենք թրերը գործի դնել:

— Դա կարելի է անել միայն իրիկունը, ոչ շուտ,— սասց ստրելիցը:— Մտքներսովդ էլ շանցնի էդ բանը ցերեկով անել:

Մեզ կբռնեն, ոնց որ կաքազներին են բռնում: Համ մենք կկորչենք, համ էլ Ռոմանին օգուտ չենք տա:

Անսպասելիորեն ամբողջից հարվածեց թնգանոթը: Կրակոցն այնպես ուժղին էր ու անակնկալ, որ բոլորին համակեց շփոթմունքը: Առաջին կրակոցին հաջորդեց համազարկը բոլոր թնգանոթներից: Հողը ցնցվեց, դողաց, Ակսնջները զնգացին: Չիերը տազնապահար վրնջացին, դոփեցին, ետևի ոտքերի վրա ծառս եղան:

— Օ՛, տեր սստված, է՛ս ի՞նչ պատահեց:

— Թուր-քե՛-րը: Թուր-քե՛-րը, լսվեց մեկի զիլ ձայնը— Դարպասը փակի-ի՛ր...

Զապորոժցիները թափվեցին հողապատնեշի վրա: Այդտեղից երևում էին հարավից, արևելքից, արևմուտքից բազաբ մտնող բոլոր ճանապարհները: Մի թռուցիկ հայացք գցելով շրջակայքին՝ Զվենիգորան սեղմեց ատամները:

Հեռվից, ամբողջ գաշտով մեկ, առաջ էր շարժվում մի սև ամպ: Հեծյալ ջոկատների վիթխարի զանգվածները, փոշի բարձրացնելով, զլորվում էին դեպի Չիգիրին: Անցնելով Թյասմինը՝ Սուբոտովոյից, նիդինայից գալիս էին ենիչևեյները:

— Ահա, ուրեմն, սկսվեց, — ասաց Մետելիցան:

— Հա՛, սկսվեց: Շուտով նրանք քաղաքի պարիսպների տակ կլինեն: Եվ որպեսզի շրջապատման մեջ չընկնենք, մենք անմիջապես պետք է փախչենք էտեղից, — ասաց Զվենիգորան, մտքում նախատեսելով իրեն, որ գնացել էր Դուրովայա Բալկա: Հիմա հենց այդ մի օրն էր պակասում Ռոմանին աղատելու համար: — Ի՞նչ պիտի անենք, եղբայրներ...

— Ո՞նց թե ինչ, Հարկավուր է գնալ Զապորոժի, — բոլորի փոխարեն պատասխանեց Մետելիցան:

Զվենիգորան ինքն էլ էր հասկանում, որ պաշարված քաղաքում մնալ չի կարող, իրավունք չունի: Հետմանի և վնասվողա Ռոմոդանովսկու համակներն իրեն պարտավորեցնում էին անհապաղ սլանալ Մեչ: Բայց թե Ռոմանին էլ չէր կարելի բախտի բմահաճալքին թողնել: Ո՞րն է էյրը:

— Բարեկամներ, — դարձավ նա Ռոժկովին ու Գրիվային, — ինձնից մի՛ նեղացեք: Տեսնում եմ, որ հիմա միայն դուք կարող եք օգնել Ռոմանին... Ահա, վերցրեք էս փողը,

կծախսեր, ոնց որ հարմար կգտնեք... Իսկ ես կաշխատեմ չուտ վերադառնալ: Ու թե բան է, Ջիգիրինը բոլոր կողմերից պաշարված լինի, միևնույն է, ես հնար կգտնեմ ձեզ մոտ հասնելու: Մնաք բարով: Ամենայն հաջողություն ձեզ:

Ձապորոժցիները հեծան ձիերը և սլացան դեպի Ղրիմյան դարպասը, հույս ունենալով սրբնթաց անցնել թուրքական բանակի միջով և Թյասմինի վրայով գնալ մինչև Պավլիչ:

ՋԱՊՈՐՈԺՅԻՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

1

Արտակարգ լուրը կայծակի արագությամբ մի վայրկյանում տարածվեց ամբողջ կուրենով՝ մեկ: ՍԵՂ են ժամանել թուրքական սուլթանի դեսպանները:

— Էսպիսի բան դեռ տեսած չկայի,— լացականչեց շվարած Մետելիցան:— Էստեղ ի՞նչ ունեն էդ անհավատները: Հը՞, Եկեք, տղերք, գնանք մոտիկից տեսնենք դրանց: Մեկ էլ տեսար նրանցից մեկնումեկը ճանաչեց Մետելիցային ու բորեց հին սպին: Հա՛, շատերի վրա եմ նշան թողել իմ թրով:

Ամբողջ կուրենը դուրս թափվեց բակ: Բոլորի համար էլ հետաքրքիր էր մոտիկից կենդանի թուրք տեսնել. և՛ նրանց համար, ովքեր երբեք թուրք չէին տեսել իրենց կյանքում, և՛ նրանց համար, ովքեր զենքը ձեռքին շատ անգամ էին հանդիպել նրանց դաշտում ու ծովում: Միայն Ջվենիգորան ու Սպիխալսկին չէին աճապարում. քայլում էին անշտապ, դանդաղ մոտենալով հրապարակում հավաքված խայտարղետ ամբոխին:

Դեռ հեռվից, զապորոժցիների գլխների վրայով, նրանք տեսան սպախիաների ճերմակ շալմաները: Թուրքերը քիչ էին. նրանք կանգնած էին լուռ, իրար ղլխի հավաքված և

¹ Կուրեն (պատմ.) մեծ խրճիթ— գորանոց, որ տեղավորվում էին մի քանի հարյուր զապորոժցիներ: Այստեղից էլ առաջացել է գինվորական ստորարժանման անունը (մոտ 500 մարդ):

լարված, վեհերոտ նայում էին զապորոժցիներին ու նրանց ամբողջին, որի փառքը տարածվել էր աշխարհով մեկ:

Թուրքերի ու զապորոժցիների միջև նեղ շերտով ազատ տարածություն էր գոյացել: Այնտեղ կանգնած էին պարթևա՝սասակ կտրիճ երիտասարդներ՝ կոշեռյի անձնական պահակախմբից:

Չնայած արտասովոր իրադրությանը, զապորոժցիները զուսպ ու հանգիստ էին պահում իրենց: Ամբոխը շարունակ դեսուդեն էր շարժվում, խուլ աղմկում էր, բայց ոչ զոռոռոցներ էին լսվում, ոչ հայհոյանքներ, ոչ էլ՝ ծիծաղ:

Ուներով զապորոժցիներին դեսուդեն հրմշտելով Սպիտալսկին առաջ անցավ: Նրա հտեից խցկվեց նաև Զվենիգորան: Այժմ մի տասը քայլից նրանք հանգիստ կարող էին դիտել այդ արտասովոր տեսարանը. թուրքերը Սեչում: Եւզգերի են, ոչ էլ վաճառականներ, այլ զինվորներ են՝ թրերով ատրճանակներով ու ենիչերկաներով: Արժեր տեսել... Բայց հետաքրքիր է, ի՞նչ նպատակով են սրանք էստեղ եկել:

Հանկարծ ոնց որ Արսենին շամիրեն. սուլթանի պատվիրակների մեջ նա ճանաչեց Համիրին:

— Պան Մարտին, նայիր: Կամ ես քնած եմ, կամ աչրիս է երևում: Համիրը:

Սպիտալսկին շմեց. թվաց թե շունչը բռնվում է:

— Շան ցեղ: Սե ցավ: Ծիշտ որ նա է, Համիրը, — որոտաց լեհր: — Սատանի փայ դառնամ, թե ճիշտ շեմ ասում... Ահա թե որտեղ հանդիպեցինք, գրողը տանի նրան: — Եվ ինչքան ուժ ունի գոռաց. — Հե՛յ, Համիր:

Թուրքերը իրար անցան, հապճեպ ինչ-որ խոսքեր փոխանակեցին, իսկ Համիրը, ճանաչելով Սպիտալսկուն, ապա և Զվենիգորային, սփրթնեց ու ակամա ձեռքը բարձրացրեց, ասես ուզում էր պաշտպանվել հարվածից:

Արսենը պոկվեց տեղից, ետ հրեց պահակներին ու մի ակնթարթում հայտնվեց Համիրի առջև. Սպախիան վախից ճշայ: Իսկ Արսենը քմծիծաղ տվեց.

— Ահա թե որտեղ մեզ բախտ վիճակվեց հանդիպել, Համիր աղա: Զուր չի ասված, թե սարը սարին չի հանդիպում... Ո՞նց ես, ոնց շես, աղա: Սալամ:

— Սալամ, — շփոթված քրթմնջաց Համիրը:

— Քեզ ի՞նչն է էստեղ բերել, աղա:

— Գործը:

— Գու չվախեցա՞ր, որ եկար Սեչ: Գիտեիր չէ՞, որ ողջ եմ:

— Ես սուլթանի դեսպանն եմ: Իմ անձր անձեռնմխելի է,— արագ պատասխանեց Համիդը՝ սպառնալիքի հոտ առնելով կաղակի խոսքերից:

Զապորոժցիները սսկվեցին՝ ականջ դնելով օտարականի խոսքերին: Թուրքերը նույնպես լռեցին. չէ՞ որ նրանցից ոչ մեկը չգիտեր, թե ինչ արյունոտ իրադարձություններ են կապում այս երկու մարդկանց: Միայն Սպիրալսկին, լարված ֆսֆսացնելով Արսենի թիկունքում, հարցրեց. «Ինչ ասաց նա, Արսեն»: Բայց Արսենը շպատասխանեց, անթարթ նայում էր Համիդին՝ ցասումնալից խոսքեր շարտելով նրա երեսին:

— Ես նույնպես մեր կոշիկի դեսպանն էի, և աղային հայտնի է, թե ինչ պատահեց ինձ, և ինչ ձախորդություններ կրեցի, մինչև որ տուն հասա... Բայց աղան թող չվախենա. մենք էստեղ, Զապորոժիեում, հարգում ենք դեսպաններին: Եվ քանի դեռ աղան Սեչում կլինի, ես նրան մատով էլ չեմ դիպչի: Բայց տափաստանում... — Արսենը դադար տվեց, որը խոսքերից ավելի պերճախոս էր: — Բայց տափաստանում, թե աստված տա հանդիպենք, մեր թրերը կխաշաձեկներ:

— Ես նույնպես ձեր տափաստաններն եմ եկել ոչ նրա համար, որ վտանգից փախչեմ,— աքլորացավ Համիդը, հասկանալով, որ հիմա Զվենիգորան իր համար սարսափելի չէ:

— Համիդ աղա, իսկ չէի՞ր կամենա իմանալ, թե ինչ եղան վոյեյոդա Մլադենը, Զլատկան ու Յադուրը,— խոսքը փոխեց Արսենը:

— Իհարկե, ուզում եմ: Թեև ատանց քեզ էլ գլխի եմ բնկնում, թե ինչ է պատահել Մլադենին. նա զոհվել է,— շարունակյալ գոչեց սպախիան:

— Սխալվում ես, աղա, բոլորն էլ ողջ ու առողջ են: Եվ բոլոր շարագործությունների համար քեզ հետ հաշիվները մաքրելու հույսը չեն կորցնում:

— Այ թե ի՞նչ, Գուք բոլորդ միասին և առանձին-առան.

ձին արդեն շատ անգամ եք փորձել գլուխս ուտել, բայց ալ-
լահը պահպանում է իր հավատարիմ որդուն...

— Իսկ նենկոն որտե՞ղ է հիմա, աղա:— Արսենը դիտ-
մամբ Սաֆար բեյի անունը շտվեց, որպեսզի Համիդի ուղե-
կիցները գլխի շրնկնեն՝ ում մասին է խոսքը:

— Նա փաղիշահի զորքի մեջ է: էլ որտե՞ղ պիտի լինի:
Ողջ-առողջ է և ցանկանում է ջարդ տալ գյավուրներին:

— Մի՛ մերժիր, աղա, բարի եղիր. բարև հաղորդիր նեն-
կոյին, ասա, որ բոլորս էլ ողջ-առողջ ենք ու հիշում ենք
իրեն:

Ի պատասխան, Համիդը ինչ-որ անհասկանալի փնթփըն-
թաց: Բայց այդ պահին ամբոխը ալեկոծվեց, ճեղքվեց. զո-
րական գրասենյակից գալիս էին երկու կուրենի ատամաննե-
րը և գանձապետը: Զվենիգորային տեսնելով՝ գանձապետը
մատով մոտ կանչեց ու ասաց.

— Արսեն, անմիջապես գնա կոշեոյի մոտ: Նա գրույց է
ունենալու սրանց հետ...

Ատամանները ողջունեցին թուրք պատվիրակներին:

— Ողջույն ու մեծարանք: Պատիվ ու հարգանք: Զապո-
րոժյան փառապանժ զորքի կոշի ատամանը սպասում է ձեզ՝
դեսպաններիդ:

2

— Արսեն, ներս արի,— լսվեց կոշեոյի ձայնը: Զվենիգո-
րան ներս մտավ ու կանգ առավ շեմին. սեղանի մոտ, որ
գրված էր մեծ սենյակի խորքում, նստած էին երկու հոգի՝
կոշեոյ Սերիկոն և Սվիրիդ Մնոգոգրեշին: «Համա թե օր է
այսօր, հա՛,— մտածեց զապորոժյին:— Մենակ Սաֆար
բեյն է պակասում»:

Նա սևեռուն նայեց իր վաղեմի ծանոթին: Սա արդեն
առաջվա Մնոգոգրեշին չէր, որին ճանաչում էր թուրքիա-
յում: Առաջվա թուլակազմ ու հյուժված Սվիրիդը չկար: Նա
յգվել էր, գիրացել, և ասես նույնիսկ ջահելացել: Հազել էր
մահուղից կարված կարմիր ժուպան, որ շատ էր սազում
նրան, իսկ ոտքերին փայլում էին փափուկ սապոգները:

— Ողջունքն քեզ, բատկո կոշկոյ: Ողջունքն, քեռի Սվիրիդ:
էս ո՞ր քամին է բերել:

Սերկոն ի պատասխան գլխով արեց: Մնոգոգրեշինն ելավ
տեղից ու գոռոզ, ամբարտավանորեն խոնարհվեց:

— Ողջունքն, կազակ: Համընթաց քամին է բերել ինձ. Ուկ-
րաինայի իշխան Գեորգ Գեդեոն Վենզիկ հմելնիցկուց նա-
մակ եմ բերել բատկո կոշկոյին, համ էլ զապորոժյան կա-
զակների մոտ եկած թուրքական սուլթանի դեսպանութեանն
եմ ուղեկցում: Ինձ պան խորունժի անվանիր, կազակ, ոչ թե
քեռի Սվիրիդ:

Զվենիգորան հաղիվ զլուխ տվեց, բայց շկարողացավ
թարցնել զսրմանքը այն բանից, թե ինչքան էր փոխվել քեռի
Սվիրիդը. տեսնելով լկտի ամբարտավանութունը, որ ար-
տացուված էր նրա աչքերում և ինքնագոհ տարածվել էր կլոր
կերպարանքին, կազակը ակամա քթի տակ ծիծաղեց: Զա-
պորոժցիներին հայտնի էր, որ Բոգդան հմելնիցկու դժբախտ
որդին՝ Յուրին, բազում տարիներ թաթարական ու թուրքա-
կան գերութեան մեջ դեգերելուց հետո, ենիշխրիներին ճնշման
տակ համաձայնեց իրեն հռչակել Ուկրաինայի իշխան և նույ-
նիսկ մասնակցել Չիգիրինի պաշարմանը: Ծիշտ է, նրա զոր-
քը բաղկացած էր թաթարներից, որոնք թուրք Ազեմի զխա-
վորութեամբ այնքան Չիգիրինի վրա շէին գրոհում, որքան
հետևում էին, որպեսզի իրենց «իշխանը» չփախչի ուսնների
կողմը: Նրա ձեռքի տակ կային նաև ութսուն կազակներ
թուրքական այն գերիներից, որոնք, իրենց կյանքը փրկելու
համար համաձայնել էին ծառայել փազիշահի բանակում:
Հիշելով, որ Ստամբուլի Յոթնաշտարակ ամրոցում հենց Մնո-
գոգրեշին գերիներին համոզեց ծառայութեան մասնել թուր-
քերի մոտ, Զվենիգորան հասկացավ, թե ինչպես է նա հայտ-
նրվել Յուրի հմելնիցկու զորքի մեջ: Բայց Սվիրիդը ի՞նչ
նպատակով է եկել Սեչ:

Սերկոն խախտեց Արսենի մտքերի ընթացքը, կոշկոյը,
հավանաբար, շարունակեց ընդհատված գրույցը:

— Աստված է վկա, երբեք ես իմ զորքով չեմ գնացել
Ուկրաինա, որպեսզի ամերեմ իմ հայրենիքը: Առանց պար-
ծենալու, աղնվորեն կասեմ. իմ բոլոր հոգսերն ու ջանքերը
ուղղված են եղել այն բանին, որ վնաս պատճառեմ մեր

րուն վաղեմի թշնամուն՝ անօրեններին: Եվ հիմա, իմ կյանքի մայրամուտին, ես մտածում եմ՝ ոչ իշխանության ու պատվի, ոչ էլ ոսղմի սիրանքների մասին, այլ այն մասին, որ մինչև կյանքիս վերջին օրերը ամուր կանգնեմ մեր նույն թշնամիների՝ անօրենների դեմ... Այդպես էլ հաղորդիք բռնի իշխան Յուրիին... Ասա նաև. թուրքերն ու թաթարները այնքան վշտեր ու շարիքներ են պատճառել մեր ժողովրդին, այնքան շատ են կոտորել մեր մարդկանց, շատերին էլ պարանո՛վ կապկպել, բաշ են սվել գերության, որ Յուրասի հմելնիչենկոն նրանց հետ չպիտի գնար, իր սրապերի ժառանգությունը՝ Սուրուտովն ու փառապանծ Զիգիրին քաղարը ետ խլելու համար: Ժողովուրդը չի հասկանա ու չի պաշտպանի նրան... Եվ դապորոճցիների օգնության վրա նույնպես թող հույս չդնի:

Մնոգոգրեշին գունատվեց: Սերկոյին ականջ դնելով՝ նա անհանգիստ հայացրր դեսուդեն շրջեց սենյակում ու ձեռքերի մեջ ճմովեց թավշե երեսով մորթե գլխարկը: Երևում է, նա այդպիսի կտրուկ մերժում չէր սպասում, ինչպես, հավանաբար, չէր սպասում նաև ինքը՝ Յուրի հմելնիցկին:

Զվենիգորայի համար պարզ դարձավ Մնոգոգրեշնու գալու նպատակը. նա էլ ավելի մեծ հետաքրքրությամբ սկսեց հետևել «դեսպանի» դեմքի արտահայտությանը և սպասեց, թե ինչ կստատասխանի կոշեռոյի՝ հպարտ ու արժանապատվությամբ լի խոսքերին:

— Շնորհակալություն անկեղծ պատասխանի համար, պան կոշեռոյ,— կամաց ասաց Մնոգոգրեշին,— չեմ թարցընում, որ դա տխրեցրեց ինձ, իսկ պայծառափայլ իշխան հետմանին խորապես կվշտացնի... Նա հիշում է, թե պանը ինչպես էր սիրում ու հարգում իր հորը՝ Բոգդան հմելնիցկուն, և հույս ուներ, որ իր հանդեպ էլ նույն սերն ու հարգանքը կտածի: Բայց ահա թե ինչ դուրս եկավ...

— Պան դեսպան,— Սերկոն կտրուկ ընդհատեց Մնոգոգրեշնուն,— ահա արդեն քառասուն տարի է թուր եմ բռնում իմ ձեռքում և միշտ մտածել եմ, որ դրանով ծառայում եմ ոչ թե անհատ մարդկանց, նույնիսկ այնպիսի մեծ մարդուն, ինչպիսին էր մեր հանդուցյալ հետման Բոգդանը, այլ մեր սիրասուն մայր Ուկրաինային և միայն ու միայն նրան...

էղպես էլ հաղորդիր իշխանին... Իսկ հիմա՝ գնա: Ծա լսում
եմ, սուլթանի գեսպաններն են գալիս; իսկ նրանց չի կարե-
լի երկար պահել Սեչում:

Մնոգոգրեշնին լուռ գլուխ տվեց և փութկոտ քայլերով
դուրս գնաց: Սերկոն անցուդարձ արեց սենյակում, շտկեց
լայն ուսերը և ժպտաց կազակին:

— Դե, ահա, մի գեսպանից պրծանք... Հետաքրքիր է,
թուրքե՞րն ինչի համար են եկել: Ներս հրավիրիր դրանց,
Լևոսեն:

3

Հենց նույն օրը, երբ գանձապետն ու Զվենիգորան սուլ-
թանի գեսպաններին առաջնորդեցին Սեչի արվարձանը, որ-
տեղ բարձրանում էր գեղեցիկ գեսպանատունը կամ, ինչպես
շապորոժցիներն էին ասում, հունաց տունը, և նրանց տեղա-
փորեցին հանգստանալու: Անսպասելիորեն Սեչի դովբիշը՝
ամբողջ ուժով սկսեց զարկել թուլումբասը: Խուլ, տազնա-
պահույզ ձայները սլացան Սեչի վրայով՝ զապորոժցիներին
հրավիրելով խորհրդի:

Նրանք փութացին կուրեններից, սլացան եկան թնդանոթ-
ների մոտից, զինանոցից, աճապարեցին նավահանգստից,
որտեղ կանգնած էր կազակական նավատորմը, Սկարբնիցա-
յի² մտակա կղզիներից և կիսաշրջանաձև շարվեցին հրա-
պարակում դրված վիթխարի կաղնե սեղանի շուրջը, որի մոտ,
արծաթյա մեծ թանաքամանի առջև, արդեն նստած էր գրա-
գիրը: Զորական եսաուլը եկեղեցուց դուրս բերեց քլեյնոդնե-
րը³— մորեգույն խաչվառն ու բունչուկը⁴: Ավագները կանգ-
նեցին բունչուկի տակ: Ապա զորական գրասենյակից դուրս
եկավ Իվան Սերկոն, կանգ առավ սեղանի մոտ, գոտու տա-
կից հանեց մականը, բարձրացրեց վեր:

¹ Դովբիշ (ուկր.) — թմրկահար:

² Սկարբնիցա (ուկր.) — ամրացված կղզիների խումբ Դնեպրում,
որոնք պաշտպանում էին Սեչի մատույցները: Այստեղ, թիփոտների մեջ
զապորոժցիները թաքցնում էին զորքի զանձը (սկարբ) և ուրիշ թանկար-
ժեք իրեր:

³ Քլեյնոդ (ուկր.) — իշխանության նշաններ:

⁴ Բունչուկ — հետմանական մական:

Զապորոժցիները, որ շարվել էին կուրեն առ կուրեն, հետզհետե հանդարտվեցին: Վերջապես հրապարակում լուծյուն տիրեց, ևսվում էին միայն Մետելիցայի բարձր ֆլուֆրսոցը, մեկ էլ ծեր Շևչիկի հաղը:

Կոշևոյը մի քանի քայլ առաջ եկավ, կանգնեց հազարավոր զինվորներից կազմված կիսաշրջանի կենտրոնում:

— Եղբայրներ, ատամաններ, քաջեր, զապորոժցի ռազմիկներ, — հնչեց նրա զորեղ ձայնը: — Ձեզ հրավիրել եմ խորհրդի, որպեսզի հայտնեմ. թուրքի սուլթան Մուհամմեդ Զորորդը իր դեսպանների ձեռքով նամակ է ուղարկել մեզ: Ուշագիր ունկնդրեք և ինքներդ վճռեք, թե ինչ պատասխան տանք... Իսկ մինչև այդ կկամենայի ասել. ես չեմ կասկածում ձեր պատասխանին, եղբայրներ, բայց, համենայն դեպս, հիշեցնում եմ. գուցե կան մարդիկ, որ մոռացել են՝ ովքեր ենք մենք և ինչու այստեղ, Նիզայում ենք բնակվում...

Դարեր շարունակ թաթարական արնախում խաներն ու մուրզաները, ինչպես նաև թուրք փաշաներն ու սուլթանները ավերել են մեր երկիրը, սպանել են ժերունիներին ու մանկանց, իսկ ուժեղ ու առողջ մարդկանց ստրկության են բռնել:

Դարեր շարունակ զապորոժյան զորքը ջախջախել է թաթարական ջոկատներին ու հազարավոր մարդկանց ազատել գերությունից, հարձակվել է Ղրիմի և Թուրքիայի գյուղերի ու քաղաքների վրա, մուրզաներից ու փաշաներից վրեժ է լուծել մեր մարդկանց անմեղ արյան համար: Ասենք, ինքը՝ Սեչն էլ ծնունդ առավ նրա համար, քանզի հարկավոր էր պաշտպանվել հարավի վայրադ նվաճողներից: Եվ կապրի Սեչը այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունի այդ մահացու սպառնալիքը... Իսկ այժմ, ինչպես ձեզ հայտնի է արդեն, եղբայրներ, թուրքի անօրեն սուլթանը անհամար դորքով գալիս է Ուկրաինայի վրա: Սև մեզ է իջել մեր տափաստաններին: Վեզիր Մուսթաֆան երդվել է մարզարևի մորուքով՝ ձիերի ոտքի կոխան անել մեր ողջ երկիրը, Կամենեցից մինչև Պոլտավա, Զապորոժիեից մինչև Կիև: Եվ ահա, այժմ սուլթանը առաջարկում է մեզ... Բայց ավելի լավ է ինքներդ լսեք, թե ինչ է գրում այդ անհավատը: Գրագիր, կարդա՛:

Գրագիրը ելավ սեղանի մոտից, առաջ եկավ, բացեց մա-
զաղաթե գլանակը, սկսեց կարդալ.

— «Ես՝ սուլթան Մուհամմեդ Չորրորդս, եղբայր Արեգա-
կի ու լուսնի, փոխանորդ և թոռ աստծո, տիրակալը Մակեդո-
նիայի, Բարեւոնի, Երուսաղեմի, Մեծ ու Փոքր Եգիպտոսնե-
րի, արքայից արքա, իշխանաց իշխան, ոչ ոքից չզերագանջ-
ված ու չպարտված ասպետ, Հիսուս Քրիստոսի գերեզմանի
աննահանջ պաշտպան, աստծո ընտրյալ, հույս ու մխիթա-
րանք բոլոր մուսուլմանների, սարսափ և միևնույն ժամա-
նակ մեծագույն պաշտպան բոլոր քրիստոնյաների,— հրա-
մայում եմ ձեզ՝ զապորոժյան կազակներից, հոժարակամ
հանձնվեք ինձ, առանց ամենափոքր իսկ դիմադրության, և
ձեր ասպատակություններով այլևս իմ բարկությունը չշար-
ժեք: Թուրքական սուլթան Մուհամմեդ Չորրորդ»:

Գերեզմանային լուսթյունը, որ տիրում էր, բանի դեռ
գրագիրը կարդում էր նամակը, նրանից հետո էլ շարունակեց
ինչ-որ մի պահ: Հետո հրապարակը ժայթքեց հրաբուխի
նման: Ասես երկինքը ճաք տվեց, պատառ-պատառ եղավ
կայծակից ու զղրդոցով տարածվեց որոտը:

Ի՛նչ տեղի ունեցավ Սեչում:

Ամբոխը,— կազակները մի ակնթարթում խախտեցին
շարքերը,— փոթորկվեց, ալեկոծվեց: Անասելի աղմուկ-ա-
ղաղակ բարձրացավ, բոլոր կողմերից տեղացիին ցասումնա-
լից բացականչություններ, հայհոյանքներ ու սպառնալիքներ:
Ոչ որ ոչ ոքի չէր լսում: Ամեն մեկը աշխատում էր այնպես
զոռալ, որ անպայման իրեն լսեին Բոսֆորի ափերին:

Բայց զայրույթը հետզհետե փոխվեց զարմանքի, իսկ
զարմանքը՝ զղրդալի մի հոհոցի:

Առաջինը որոտածայն ծիծարեց ալևոր Մետելիցան:

— Հա-հա-հա, հա՛,— տարուբերվեց նա՝ տուուզ փորը
բռնած,— Համա թե խնդալս բերիր, հա՛, նզովից արմատ,
անօրեն: Այ թե բան ասացիր, հա՛, խոզի դունչ... Հա՛-հա՛-
հա՛, հա՛:

Շեշիկ պապը կռացել էր մինչև գետին, դարձել էր կծիկ.

— Հի-հի-հի, հի... Օ՛յ, ախպերտիք, մի թաս արագ տվեք
ինձ, թե չէ էլ չեմ դիմանա, ծիծաղից կմեռնեմ... Հի՛-հի՛-հի՛,
հի՛, հի...

— Հո՛-հո՛, հո՛, հո՛,— ինչպես տակառի մեջ, բամբ ձայնով դիկդիկացրեց Տովկաչը:

Որոտաձայն ծիծաղում էր ուրախ Սեկաչը:

Շուրջը մոնչում, եռում, փոթորկվում, ծփում էր մարդկային ծովը:

Բայց շուտով անդուսպ ծիծաղին հետզհետե նորից փոխարինեցին դայրալից բացականչությունները: Զվենիգորան բուռնցրով թիկթիկացրեց թրի կոթին, գոշեց շարացած.

— Մի ատես, թե ուր է խփում թուրքի շեյթանը, էդ սատանի ախպերն ու ընկերը, հենց իր՝ կյուցիֆերի քարտուղարը: Հանձնվե՛լ: Չէ մի չէ՛...

— Առհա՛ բեղ,— վրա բերեց Սեկաչը:

— Բարեկոնի խոհարար ես, արարական խող ես դու, ոչ թե ասպետ,— վիթխարի բուռնցքները թափահարեց Մետելիցան:

— Կամենեցի դահիճ:

— Պողոլիայի գող:

— Իժի ծնունդ, և աշխարհում հայտնի ծաղրածու:

— Խողի գունչ:

— Արնախում շուն:

Բոլոր կողմերից տեղում էին բացականչություններ, ծիծաղ, հայհոյանք: Ամեն մեկն աշխատում էր ավելի խոր վիրավորանք հասցնել հեռավոր, բայց այնքան ատելի սուլթանին: Սերկոն, ուրախ փայլեցնելով ատամները, ձայնեց գրագրին.

— Գրի՛ր: Շուտ բոլորը գրի ա՛ռ: Սա էնպիսի պատասխան կլինի, որ սուլթանի սիրտը դրանից կխառնի: Հա՛-հա՛-հա՛, հա՛: Տես է՛, մենք էլ գլուխ էինք ջարդում, թե ոնց պատասխանենք:

Գրագիրը ձեռքն առավ ճերմակ փետուրը և արագ-արագ սկսեց գրել: Իսկ բոլոր կողմերից թռչում էին ձայները՝ հայհույով, շվիցներով, կծու խայթոցներով ու սրախոսություններով:

— Մակեդոնացի կառապան:

— Անմեռոն շուն, գրողի ծոցը գնաս դու:

— Խողի գունչ: Հա՛-հա՛-հա՛, հա՛:

— Հո՞-հո՞-հո՞, Հա՛-հա՛-հա՛, Հի՛-հի՛-հի՛, Հե՛-հե՛-հե՛, —
բոլոր եղանակներով ծիծաղում էին կազակները:

Սերկոն բարձրացրեց մականը: Աղմուկն սկսեց հան-
դարտվել: Կոշեւոյը, դեռևս ցնցվելով ծիծաղից, աչքերից սըր-
ւէղ արցունքները, ասաց.

— Շնորհակալ եմ, եղբայրներ: Ա՛յ թե պատասխան տվիր:
Գրագիր, գրեցի՞ր:

— Գրեցի, բատկո:

— Հապա մի կարդա: Տեսնենք ի՞նչ դուրս եկավ:

Կրկին սլայթեց հո՛հոոցը: Իսկ գրագիրը կանգնեց, փետու-
ր գրեց ականջի ետևը, ձևոքը բարձրացրեց, ամբոխը հետզ-
հետե խաղաղվեց:

— Զուպորոժյան կազակները՝ թուրքի սուլթանին, — կար-
ուց գրագիրը: — Դու թուրքի շէյթան, նոյվից արմատ, սա-
տանի ախպեր ու բնկեր ե հենց իր՝ Լյուցիֆերի բարտաղար:
Դու էլ ի՞նչ ասպետ ես, թե որ բաց քամակով իսկի ոսնի էլ
լեւ կարող սպանել: Դու արժանի շես լինի Քրիստոսի որդի-
ներին իշխելու: Մենք քո դորրից վախեցող շենք, մեր հոգ ու
ջրով քո գեմ կկռվենք: Բարելունի խոհարար, մակեդոնացի
բառապան, Երուսաղեմի միկիտան, Ալեքսանդրիայի մա-
գործ, Մեծ ու Փոքր Եզրիպտոսների խողարած: Դու արար աշ-
խարհում հայտնի խեղկատակ, տխմար ու ապուշ, խողի
դունչ, արնախում շուն, անմեռոն ճակատ: Կորի գրողի
ձոցը: Ա՛ռ քեզ կազակների պատասխանը, բոստի մեկը...
Ամիս-ամսաթիվը շփտենք, քանդի օրացույց շունենք: Լու-
սինը երկնքում է, իսկ տարին՝ գրքում, օրն էլ էնպիսին է
մեզ մոտ, ինչպես որ ձեզ մոտ, շորս դին լույս է ճերմակ,
դու էլ եկ ու պաշիր մեր ք...կը»:

Վերջին բառերը խեղդվեցին կատաղի, բուռն հո՛հոոցների
մեջ, որ դուրս թռան հազարավոր հազթանդամ կազակների
կոկորդներից:

Աշտարակների ժամապահները, թնդանոթաձիղները, շի-
մանալով ինչ է կատարվում խորհրդում, պարմանքով ու
տաղնապահար նայում էին գոռոռացող ամբոխին: Սակայն,
տեսնելով, որ ոչ մի վտանգավոր բան չկա, այլ բնդհակա-
ռակը, բուռն ուրախություն է համակել Սեչին, իրենք էլ սկը-
սեցին ծիծաղել: Ծիծաղն էլ հիվանդություն պես վարակիչ է:

Տեսնելով, թե ինչպես են բոլորը կուշուծիգ գալիս հռհռոցից ժամապահներն ու թնդանոթաձիգները նույնպես փորնէք բռնեցին, Ծիծաղը ցնցեց ամբողջի պարիսպներն ու աշտաբակները: Սպիտալսկին, հեռավոր անկյունում, թնդանոթ մոտ կանգնած, ննջում էր արևի տակ: Ծիծաղի հանկարծակյան պոռթկումը արթնացրեց նրան: Գլխի շրնկնելով ենչ ինչոց է, կարծելով թե թաթարներն են հարձակվել Սեչի վրա նա վերցրեց իսանձողն ու մոտ վազեց թնդանոթին:

Կրակոցը մի ակնթարթում բոլորին ուշքի բերեց: Սերկոն մականով սպառնաց թնդանոթաձիգին:

— Էդ ո՞վ է էնտեղ հիմարություն անում: Շուն շանորդ չլինի՞ թե ուղում ես մականով քամակդ դաղեմ:

Սպիտալսկին կարմրեց, աչքերը ճպճպացրեց: Թնդանոթաձիգները պաշտպանեցին նրան.

— Էդ մենք ուրախությունից արեցինք, բատկո: Սուլթանին բարև ենք ուղարկում:

— Թող էդպես լինի,— փափկեց կոշկոյը և դարձավ գրագրին.— Ստորագրիր. կոշի ատաման Իվան Սերկոն՝ ոչ Կոշի հետ միասին: Ստորագրեցի՞ր:

— Ստորագրեցի, բատկո:

— Այ հիմա լավ է: Մաքուր արտագրիր ու հանձնիր սուլթանի դեսպանին: Թող տանեն ողջությամբ:

— Բատկո, իմ ոխերիմ թշնամի Համիդը դեսպաններին մեջ է: Թույլ տուր բռնենք նրան դաշտում ու սպանենք,— կոշկոյին դիմեց Զվենիգորան:

— Ոչ, ոչ, մենք թաթարներ չենք,— արգելից Սերկոն:— Մեկ ուրիշ տեղ կհանդիպես նրան՝ արա ինչ ուղում ես, իսկ հիմա ձեռք չտաս: Դեսպանի անձը անձևոնմխելի է:

Զվենիգորան դժգոհ ծոծրակը բորեց, բայց չհամարձակվեց կոշկոյին հակառակվել:

Սերկոն բարձրացրեց մականը: Նրա արևառ, սպիներով ու կնճիռներով ակոսված գեմքը միանգամից դաժանացավ: Խիտ հոնքերի աղեղների տակ արտահայտիչ մուգ մոխրագույն աչքերը փայլեցին պողպատի պես:

— Եղբայրներ, ատամաններ, քաջեր, իսկ հիմա լսիր հրամանը. գործով հաստատենք մեր պատասխանը սուլթանին: Քանի դեռ Կարա Մուսթաֆան կանգնած է Զիգիրինի

տակ, թուրքերին ու թաթարներին մի լավ կքոթակենք ծովի
մոտ... Կիրիլովի, Դոնի, Կանևյան և Պոլտավյան կուրենները
ստաման Ռոզի հետ կգնան Տյագին: Կորսունյանն ու Չեր-
կասյանը Մուրավյան շլյախում՝ կդարանեն թաթարներին:
Իսկ ես Բատուրինի, Ումանի, Պերեյասլավի, Իրակլիևի կու-
րենների հետ կգնամ Դնեպրն ի վեր: Հողով ու ջրով կկուվենք
ճգովյալ անհավատների դեմ...

4

Զապորոժյան նավ-ճայերի տորմիդը, վերցնելով մոտ եր-
կու հազար կազակ,— յուրաքանչյուր նավում կեսհարյու-
րակ,— մոտենում էր Քավան կղզուն:

Թիերի ուժգին թափահարումով ճայերը արագորեն լո-
ղում էին Դնեպրի անհամար բազուկներից մեկով: Շուրջը
պատած էր վաղորդյան մշուշով: Զապորոժցիներն շտապում
էին, որպեսզի մինչև արևի դուրս գալը աննկատելի մոտե-
նային թուրք-թաթարական Կըզըլ-Քերմեն ամրոցին:

Առջևի նավակում կանգնած էր Սերկոն և սևեռուն նայում
էր հազիվ նշմարվող ափերին: Նավեզրին ծփում էր տաք,
փափուկ ջուրը, որից պրտուի ու հարսնեմատի բուրմունք էր
տարածվում: Հանդարտ իջնում ու բարձրանում էին երկար
թիերի կանոնավոր շարքերը:

Ճայերը լողում էին կիպ շարքով, միմյանց գրեթե կպած,
որպեսզի շմուռվեն բազուկների ու վտակների մեջ: Ցուռկին
կանգնած էին ատամանները. նրանց սրատես հայացքից
ոչինչ չէր վրիպում:

Ահա կոշտոյը նշան տվեց, և առջևի ճայը դանդաղեցրեց
ընթացքը:

— Թիավարելը դադարեցնե՛լ,— լավեց մի խուլ ձայն:—
Շրջան կազմել:

Թիավարները սեղմեցին նավակողերին: Նավակները
դանդաղ դուրս եկան վարդագույն մշուշի միջից և խիտ
շրջանով շարվեցին լայն գետախորշում: Ո՛չ խոսակցություն,
ո՛չ հազ, ո՛չ լեներների զնգոց: Զապորոժցիները հմուտ ուղ-

1 Շլյախ (ուկր.)— ճանապարհ: Մուրավյան շլյախը Ղրիմից Խարկով
& Մոսկվա տանող ճանապարհն էր:

միկներ էին և գաղտագողի մոտեցան թշնամու ամրոցի
ինչպես փորձված որսորդն է զգուշությամբ մոտենում իր
որսին:

— Եղբայրներ,— ասաց Սերկոն կամացուկ:— Մեր դիմաց,
ա՛յ էն բլրի ետևում կըզըլ-Քեմենն է, Հզոր ամրոց է, ասու-
են, անառիկ: էնտեղ շատ թնդանոթներ կան, մեծ կայազոր:
Պարիսպները բարից են, բարձր, էնպես որ դրանց վրայի:
չենք կարող անցնել... Ուրեմն, որպեսզի ամրոցն առնեն,
հարկավոր է ոչ թե գլխով պատը ծակել, ոչ էլ բզի գլխի:
բռունցքով խփել, այլ ուղեղը շարժել...

Նավակների վրա վազորդյան հովիկի նման շնկշնկա-
համընդհանուր հավանությունը: Կազակները հավատում էին
Սերկոն մի բան կմտածի:

Իսկ կոշևոյր շարունակեց.

— Կտրիճ եղբայրներ, մենք պետք է խաբենք թշնամուն:
Մեր մարդիկ իմացել են, որ բացի բերդի աշտարակների
վրա եղած ժամապահներից, թուրքերը պահակներ են կար-
գել նաև մերձակա կղզիներում: Այդ թվում երեք թաթա-
հակում են այս կղզին, որ մեր առջև է, հենց ամրոցի գլխա-
վոր դարպասի դիմաց: Մինչև դրանց շվերացնենք, հաջող հար-
ձակման մասին չենք կարող մտածել: Բայց նրանց հարկա-
վոր է վերացնել անաղմուկ էնպես որ շթպրտան իսկի Մե-
տելիցա, շարժվիր...

Ճայերից մեկը կամացուկ դուրս լողաց շրջանից և, բաշե-
լով ետևից կապած ոչ մեծ, բայց բարձրակող մի մակույկ-
գնաց հոսանքն ի վար: Շուտով նա թեքվեց դեպի ուռիներով
ծածկված հրվանդանը և անհետացավ տեսողությունից:

Հայացքով նրան ուղեկցելով՝ Սերկոն շարունակեց պար-
զաբանել իր մտահղացումը:

— Եթե Մետելիցան հաջողությամբ վերացնի պահակնե-
րին, դա միայն բարի սկիզբ կլինի: Գլխավորը դարպասը
գրավելն է... էստեղ արդեն Զվենիգորան կաշխատի իր
տղերբի հետ...

Բոլորը ակամա նայեցին թաթարական կայուկին¹: Կա-
զակական ճայերի մեջ միակը, որի մեջ նստած էին իրենց

¹ Կայուկ (թուրք.) — փոքրիկ նավակ՝ հարթ, տափակ հատակով:

ընկերները՝ թաթարական բեշմետներով ու մալախայ փա-
փախներով: Իսկ Զվենիգորան ենիչերիի շորեր էր հագել. գըլ-
նին աչքի էր ընկնում սպիտակ շալման, իսկ կողքից կախ-
ված էր թանկարժեք, արծաթով ու գաղտակուրով դրվագված
թուրր: Միայն հիմա հասկանալի դարձավ, թե ինչու էին
նրանք այդպես պճնվել և ինչ վտանգավոր գործ էր սպասում
ուանց:

5

Մետելիցայի հետ պետք է գնային ընդամենը հինգ կա-
շակ՝ Սեկաչը, Տովկաչը, Շեչիկը և Պիվնենկո Եղբայրները:
Պիվնենկո Եղբայրները, որոնց կազակները հարմարութեան
ամար անվանում էին Պիվեն և Կոզուտ¹, հենց այն դապո-
տոցիներն էին, որ հետախուզել էին Կըզըլ-Քերմենի մա-
տուցները:

Բոլորն էլ լուռ նստած էին կողք-կողքի, և լարված նայում
էին թանձր մառախուղին: Երբ ճայր անցավ ավազուտ հր-
վանդանի թեք ոլորանը, Պիվենը ղեկակալին նշան արեց՝ մո-
տենալ ափին:

— Հենց էս թփերի ետևից սկսվում է նեղ ավազուտ ցա-
մարայեզվակը: Առաջ գնալ չի կարելի, թաթարները կնկա-
տեն:

Ճայր փափուկ խրվեց ափամերձ տիղմի մեջ: Թիավաւր-
ները ցած դրեցին թիերը, մակույկը արձակեցին, մոտ քա-
շեցին և, թռչելով ջրի մեջ, շուռ տվին հատակն ի վեր: Հետո
ջրից վեր բարձրացրին և զգուշութեամբ իջեցրին այնպես, որ
ոչը դուրս չգա նավերի տակից:

— Սուղաքարերը տուր, — շնչաց Մետելիցան:

Ճայից մի քանի խոշոր ծանր բարեր իջեցրին, գույգ-
գույգ իրար կապված, և կազակները դրանք ամրացրին թաղ
հատակի վրա: Մակույկը սուզվեց ջրի տակ:

— Պատրաստ է: Հանվեք, տղերք, — հրամայեց Մետելի-
ցան:

Նա առաջինը հազից հանեց շորերը: Սեկաչը, Տովկաչը,
Պիվնենկո Եղբայրները և Շեչիկը իսկույն հետևեցին նրան:
Կազակի հասարակ շորերը թողնելով ճայի մեջ, միայն յա-

¹ Պիվեն և Կոզուտ (ուկր.) — Աբլոր և Աբաղազ:

Թաղանները ձեռքներին մտան ջուրը, երեք-երեք կանգնեցին ջրասույզ մակույկի շուրջը և զգուշությամբ մակույկը քաշեցին ափի երկայնքով:

Սուր ցամաքալեզվակից, որտեղից բացվում էր Դնեպրի և Թավան կղզու ընդարձակ տեսարանը, երևում էր զառիկոդ ավազուտ ափը: Ոչ քար կար, ոչ թուփ: Մետելիցան ու Պիվենը զգուշությամբ բարձրացրին զլուսնները: Իրենցից մոտ հարյուր մետրի վրա երևում էր մի փոքրիկ սև կայուկ: Այնտեղ մի թաթար էր նստած, դեմքը դեպի հյուսիս, որտեղից կարող էին հայտնվել զապորոժցիները:

— Մի հոգ է,— շշնջաց Մետելիցան՝ վազորդյան ցրտից կուշ եկած:

— Երկու հոգի քնած են կայուկում,— արձագանքեց Պիվենը,— ասենք սա էլ ոնց որ թե դանթում է...

— էլ զուր ժամանակ չկորցնենք:

Կազակները սուզվեցին ու մտան մակույկի տակ: Այստեղ մութ էր գերեզմանի պես, թաց փայտի հոտ էր գալիս: Յաթաղանները խրելով առաջուց նախապատրաստած կաշվե պատյանների մեջ, զապորոժցիները շարվեցին իրար ետևից, բռնեցին մակույկի միջնորմից և առաջ շարժվեցին:

Մետելիցան գնում էր առջևից ու հաշվում էր քայլերը. ինչպես նաև հետևում էր խորությանը: Միայն այդ ձևով կարելի էր ջրի տակ պահպանել ճիշտ ուղղությունը, որպեսզի չհեռանային և չվախենային ժամանակից շուտ կամ ուշ սուզվելուց: Ոտքերի տակ պինդ ավազ էր, դրա համար էլ հեշտ էր քայլելը:

Շեչիկը հաղաց:

— Սուս մնա,— ֆշշաց Մետելիցան:— Թաթարները կլսեն...

— Թող լսեն: Կկարծեն, թե շեյթանն է ջրի տակ հազում,— կատակի տվեց Շեչիկն ու բռբռաց:

— Ձենդ կտրի,— կամացուկ սաստեց Մետելիցան, հաշիվը խառնելով, և շարունակեց շշնջալ.— Երեսուներկու, երեսունհինգ...

Զապորոժցիների ստորջրյա նավակը դանդաղ, բայց վրստահ առաջ էր շարժվում: Շեչիկը դժվարացավ, Կազակները սկսեցին ծանր ֆսֆսալ: Զգալով որ ոտքերը հատակին չեն

հասնում՝ Մետելիցյան մակույկը ձախ թեքեց, մինչև որ հասան անհրաժեշտ խորության:

Հարյուր քայլ հաշվելով՝ նա շնչաց.

— Արդեն մոտիկ ենք, գոուշ...

Կազակները դանդաղեցրին ընթացքը: Հիմա մակույկը հազիվհազ էր առաջ շարժվում: Մետելիցյան ձեռքն առաջ մեկնեց, աշխատելով շոշափել թաթարական կայուկի հատակը: Հասավ վճռական պահը, որից, գուցեև, կախված էր ամբողջ այդ արշավանքի հաջողությունը: Կազակները հանեցին յաթաղանները: Լարվածությունը էլ ավելի մեծացավ:

Հանկարծ Մետելիցյան, ինչքան ուժ ուներ, ոտքերը դնւ տվեց ավազին: Մակույկը կանգ առավ:

— Հասանք: Դուրս եկեք: Յա՛ տեր աստված,— շնչաց ձերունին:

Կազակները դուրս թռան նավակի տակից:

Եթե քնատ աչքերով Դնեպրի լայնարձակ ջրերին նայող թաթարի առջև հայտնվեք ինքը՝ շեյթանը, այնքան շէր վախենա, որքան վախեցավ, երբ հանկարծակի երևացին Մետելիցյայի թաց գլուխն ու բեղերը: Թաթարը սարսափից պապանձվեց: Նա բերանը բացեց, աչքերը ճպճպացրեց և նույն պահին էլ, երկու կողմից խոցված, շրմփաց ջրի մեջ: Նրա բնկերները, որ քնած էին կայուկի մեջ, չհասցրին նույնիսկ վեր կենալ: Պիվենն ու Կոզուտը դիպուկ, ուժգին հարվածներով իսկույն մաքրեցին նրանց հաշիվը:

Արևը դուրս եկավ: Մշուշը արագորեն ցրվեց, և Դնեպրի դիմացի ափին երևաց բերդի ատամնավոր պարիսպների աղոտ գծագրությունը:

Հարկավոր էր աճապարել: Զուրը գցելով սուղաքարերը, որոնք այլևս հարկավոր չէին, կազակները շուռ տվեցին մակույքը, միջի ջուրը դուրս թափեցին և ափի երկայնքով արագորեն սլացան դեպի ճայր:

6

Սերկոն բարձրացրեց մականը, և հարյուրավոր աչքեր սևեռվեցին նրան: Բոլորը պատրաստ էին հարձակումը սկսելու. թնդանոթները տեղագրված էին ճայրի ցուկներին,

մուշկետներն ու ատրճանակները լցված էին վառոդով ու արճըճ գնդակներով: Թրերը կախված էին կողքերից:

Կոշևոյը վերջին կարգադրություններն արեց.

— Արսեն, բո խնդիրն է դրավել դարպասը և դիմանալ մինչև մեր դալը: Իսկ այնժամ, զավակներս, — դիմեց նա բոլորին, — շարդեք, փշրեք, կոտորեք անհավատներին: Թող Բախչիսարայում ու Ստամբուլում իմանան, թե ինչպես ենք վրեժ լուծում թշնամուց մեր մարդկանց արյան ու արցունքի համար: Ահա արդեն արևը ուր որ է դուրս կգա, նրա հետ էլ Մետեղիցյան նշան կտա, որ ճանապարհը բաց է... Դե, տղերք, աստված օգնական: Արսեն, բարեկամս, ամբողջ հույսը բեկ վրա է:

— Մի՛ կասկածիր, բատկո, — մեղմորեն պատասխանեց Զվենիգորան: — Կանենք ամեն ինչ, ոնց որ պետքն է: — Եվ դարձավ կայուկում գտնվող իր մարդկանց. — Դե, բարեկամներ, առաջ, դեպի զուլալ ջրեր... Ինչքան որ ուժ ունեք, գոռացեք, մենակ թե ոչ մեր լեզվով, այլ թաթարերեն: Ոչ մեկը ոչինչ չմոռանա: Թրերը ջուրն իջեցրեք:

Կայուկը օրորվեց և արագորեն սլացավ վտակի խաղաղ ու հանդարտ մակերեսով: Նրա ետևից շարժվեց ամբողջ նավախումբը, որը, սակայն, չկարողացավ հասնել թևթևասահ մակույկին և նկատելիորեն ետ մնաց:

Կայուկը շրջանցեց հրվանդանը և դուրս եկավ Դենպրի գլխավոր հունի լայն հարթությունը:

Մշուշի համարյա ցրվել էր: Դիմացի ափին, կայուկից մոտավորապես մեկ մղոն հեռու, ղեղնին էին տալիս Կըզըլ-Քերմենի շեշոտ պարիսպները, որ շարված էին խեցեքարով: Բարձր աշտարակի վրա ծուլորեն փողփողում էր թուրքական սպիտակ դրոշը՝ կարմիր եզրաշերտով, բոսորագույն կիսալուսինը մեջտեղում:

Ափին, ամրոցի առջև, չնայած վաղ ժամին, խմբվել էին մի քանի թաթար, հավանաբար ձկնորսներ: Հեռվից նկատելով կայուկը՝ նրանք անշարժացան ու պարանոցներն առաջ ձգեցին, ջանալով ճանաչել նավի մեջ եղած մարդկանց:

— Պինդ կպեք թրերին, տղե՛րք: Ուժե՛ղ, — կազակներից քաջալերեց Զվենիգորան: — Մեկ-երկու, մեկ-երկու:

Թրերը արագ-արագ սկսեցին իջնել ու բարձրանալ:

Կայուկը սլացաւ դեպի կղզին: Հանկարծ առափից դուրս եկան մի քանի զապորոժյան ճայեր: Նրանց ետևից հայտնը-վեցին նորերը, էլի ու էլի...

Ափին հավաքված թաթարները վայրենի ճղավոցներով սլացան դեպի ամրոց: Պարիսպների վրա իսկույն ասկյարներ հայտնվեցին: Որոտաց թնդանոթը: Գնդակը սուլոցով անցավ կայուկի վերևով ու շրմփաց ջրի մեջ:

Ձկնորսները լցվեցին ամրոց, և նրանց ետևից փակվեցին ծանր երկաթակուռ դարպասները:

— Ձեն տվեք, տղերք, գոռացե՛ք: Թե չէ էդ ցնդած սատաները մեզ յուրայինի տեղ չեն դնի,— ասաց Արսենը և առաջինն ինքը գոչեց թաթարերեն.— Օյե՛, ուղղափառներ: Դարպասները մի՛ փակեք: Մենք Շայահմեդովի մարդիկ ենք: Փրկե՛ք մեզ:

Բայց գեռ հեռու էին, և նրանց ձայնը, հավանաբար, չլսեցին, քանի որ թնդանոթը նորից որոտաց:

— Խո՛ո, բղավիր, գրողը տանի: Չէ՞ որ սուր ձայն ունեւ: Թե չէ երբորդ անգամ էլ որ թրխկացրին, ոտով-գլխով կկորչենք,— Ձվենիգորան ձայն տվեց երիտասարդին, որը վերջերս էր գրանցվել Սեչի ծխամատչանում ու թեև Աջափից էր եկել, խնդրել էր, որ իրեն վերցնեն Պերեյասլավյան կուրեն:— Ձեն տուր, որպեսզի դադարեցնեն կրակը: Իբր յուրայիններ ենք:

— Օյե՛, օղլան ջան՛: Մի՛ կրակիր: Ձերոնցից ենք, ձերոնցի՛ց:

Պարիսպների վրայից ձեռքով արեցին: Լսվեցին բացականչումներ: Այդ միջոցին կայուկը մոտեցավ ափին, և թաթարի շորեր հագած զապորոժյաները աղմուկ-աղաղակով նետվեցին դեպի ամրոց և հասնելով դարպասին, կատաղորեն սկսեցին թակել: Նրանք, ովքեր լավ դիտեին թաթարերեն, իրար ընդհատելով օգնություն էին աղերսում:

Բայց դարպասը չբացվեց: Միայն վերևում, աշտարակի վրա, դիտանցքից դուրս ցցվեց թաթարի կլորավուն, սափրած գլուխը:

— Օյե, օղլան ջան,— գոռաց խոռը:— Բաց արա: Ալլահը

1 Օյե, օղլան ջան (թուրք.)— էհեյ, տղա ջան:

քո լավությունը շի մոռանա: Մի՛ թողնի, որ մեռնենք անհավատների ձեռքով:

Թաթարը աչքերը ճպպացրեց:

— Սպասիր, բեյին հարցնեմ՝ կարելի՞ է դարպասը բացել, թե չէ:

— Ա՛խ դու, խելքի պուտուկ, մինչև քո բեյին գտնես, թող ալլահը երկար կյանք տա նրան, կազակները մեզ կկոտորեն անօգնական ոչխարների պես:

Սակայն թաթարը շտապեց դարպասը բաց անել: Աշտարակի վրա սկսեցին վիճել. պահակները, երևում է, չգիտեին ինչ անել: Իսկ զապորոժյան ճայերը արդեն դուրս եկան գետի մեջտեղը: Թնդանոթային համազարկը չկանգնեցրեց նրանց: Երկրորդ համազարկը ճայերից մեկը տաշեղների վերածեց: Կարմիր բծեր հայտնվեցին ջրի երեսին: Բայց դա էլ չկանգնեցրեց զապորոժցիների մուկեզին ընթացքը:

Տեսնելով, որ ամրոցի վախեցած պաշտպանները չեն համարձակվում դարպասը բացել, Զվենիգորան սկսեց հայհոհել, բռունցքներով սպաննալ:

— Հե՛յ, դուք, վախկոտ շներ, էշի գլուխներ: Ծս մեծ վեզիր Մուսթաֆա փաշայի պատվիրակն եմ: Վեզիրից նամակ եմ տանում արևափայլ սուլթանին. թող օրհնյալ լինի նրա անունը... Անմիջապես բացեք դարպասը, կեղտոտ խոզեր: Կամ էլ դիտմամբ ուզում եք ինձ, իմ բերած կարևոր լուրերով, ուսաների ձեռքը տալ: Ալլահի պատիժը թափվի ձեր գլխին, հա՛...

Մի կլորերես թաթար, հրակնատից ցած կախվեց ու հարցրեց.

— Դու ո՞վ ես:

— Սաֆար բեյը: Մուսթաֆա փաշայի պատվիրակը: Դարպասը բացեք:

Ադան ձեռքերն իրար զարկեց.

— Սաֆար բե՞յը: Տե՛ր աստված, էս ո՞ր քամին է բերել: Սպասիր, ես հիմա:

Աշտարակի փայտե աստիճաններից քայլերի ձայն լսվեց: Մեկը արագ-արագ թխթխկացնելով ցած իջավ: Զրխկացին փականքները: Ճոնչացին փայտե լծակները, և դարպասը բացվեց:

Զապորոժցիները լցվեցին ամրոց:

— Շուտ-շուտ, — գոչեց կլորատես աղան: — Սաֆար բեյ, այս կողմ: Ես Մեհմեդ Այիթյուրն եմ... Հիշո՞ւմ ես ինձ...

— Իհարկե, հիշում եմ, — պատասխանեց Զվենիգորան՝ պատյանից դուրս քաշելով թուրն ու իջեցնելով իրեն անծանոթ Մեհմեդ Այիթյուրի գլխին:

Աղան տապալվեց գետին: Դարպասի մոտ կանգնած թափարի ժամապահները վայրի կազկանձյունով թափվեցին Զվենիգորայի վրա: Բայց զապորոժցիները կտրեցին նրանց ճանապարհը:

Ժամապահների գոռգոռոցների վրա բոլոր կողմերից վազելով եկան կիսահանգնված ասկյարներն ու խանի սեյմենները¹:

— Խոռ, մերոնց իմաց տուր, թող շտապին: Թե չէ չենք դիմանա, — գոչեց Արսենը նորեկին, որը ամբողջ ժամանակ պտտվում էր նրա շուրջը:

Խոռը սլացալ կատարելու ատամանի հրամանը: Մտադիր լինելով սպանել Արսենին՝ նա առայժմ ջանում էր օղնել կազակներին, քանի որ նրանց հաղթանակից էր կախված իր սեփական կյանքը: Դարպասից չհեռանալով, որպեսզի թափարական նետին կամ ենիչերիների գնդակին չհանդիպի, նա ձեռքերը թափահարեց:

— Արա՛գ, եղբայրներ: Արա՛գ:

Զապորոժցիները ճայերից ցած թռան ու սլացան դեպի ամրոց: Սերկոն, շնայած իր ալևոր հասակին, բոլորի հետ միասին վազեց առաջ: Զահել կազակները նրանից առաջ անցան:

— Գրավեք պարիսպները, բացեք նկուղները, — գոչեց կոշևոյը: — Անձնատուր եղածներին շսպանել: Նրանց դիմաց մենք գերությունից ետ կառնենք մեր մարդկանց:

Կազակական սրընթաց հորձանքը ներխուժեց ամրոց, որտեղ Արսենը իր մի բուռ կտրիճներով հաղիվ էր դիմանում թշնամու ճնշմանը: Որպեսզի կովի թեժ սլահին իրենց մարդկանց օտարի տեղ չղնեն, նրանք դեն էին գցել թափարական

¹ Սեյմեն (թաթար.) — խանական կանոնավոր բանակի հրածիզ զինվոր:

մալախյաները և միմյանց ճանաչում էին երկար քաքուլներից, որ ծածանվում էին նրանց ածիլած զլուխների վրա:

Զվենիգորային թարմ ուժեր օգնության հասան՝ Մետեղիցյան, Սպիրալսկին, Սեկալը, Տովկալը, Պիվնենկո եղբայրները: Ճնճդուկի պես ուտոտում էր ծեր, բայց ժիր, արագաշարժ Շեշիկ պապը, և նրա թուրը անտեղի չէր շաշում օդի մեջ:

Ամբոցի ողջ կայադորը արդեն ոտքի վրա էր: Թուրքերն ու թաթարները կատաղորեն դիմադրում էին: Թնդանոթաձիգները աճապարանքով շուռ տվեցին հրանոթները, որպեսզի հարվածեն ամբոց ներխուժող կազակներին: Բայց գաղտագողի նրանց մոտեցան քաքուլավոր դապորոժյիները և դիպուկ հարվածներով պարիսպներից ցած գցեցին:

Գրոհողների ճնշումն այնքան անսպասելի էր ու հզոր, որ թուրքերը գոռում-գոչյունով դարպասից ևտ քաշվեցին դևպի ներքին մինջաբերդի պարիսպները: Այնտեղ զարհուրելի ձևանամարտ սկսվեց, որը հետզհետե առանձին օջախներ ընդգրկեց, բորբոքվեց ամենուրեք:

Արսենը կռվի բռնվեց մի ենիչերիի հետ: Վերջինս, երևվում է, քաջ սրամարտիկ էր և հաջողությամբ ետ էր մղում կաղակի բոլոր հարվածները:

Իսկ խոռը այդ միջոցին, կռվի մեջ շմտնելով, թարուն հետևում էր Արսենին: Զորս կողմից լսվում էին ճիչեր, գոռում-գոչյուն, վիրավորների հառաչանքները միախառնվում էին մեռնողների խոխոցին, կաղակական «փա՛ռք» և թուրքական «ալլա՛հը» ձուլվում էին սահմուկեցուցիչ, երկարածիզ «ա-ա-ա՛»-ի մեջ:

Այդ ամբողջ դժոխքի մեջ խոռը աչք չէր կտրում դապորոժցու հաղթանդամ կերպարանքից... Կավածեփ պատի վրայից անցնելով մյուս կողմը, որտեղից, նրա կարծիքով, կարելի էր առանց վտանգվելու հետևել կռվին, խոռը անսպասելիորեն ընդհարվեց մի ալևոր թաթարի, որ դուրս թռավ խրճիթի ցածիկի դռնից՝ նետերով չի կապարճն ու աղեղը ձեռքին: Խոռը գոտուց դուրս քաշեց ատրճանակն ու կրակեց ծերունու կրծքին: Սա ընկավ: Խոռը վերցրեց աղեղը, կապարճից մի նետ հանեց, ճերմակ փետուրով, գողի նման թաքուն նայեց պատի ետևից: Զվենիգորան թաթարին սեղմել էր միջնա-

բերդի պատին և ջանում էր անվրեպ հարվածով վերջ տալ նրան կամ զինաթափ անել:

Խոռը աչքաշափով մոտավորապես որոշեց հեռավորութունը, բարձրացրեց աղեղը: Աղեղնալարը զնգաց, ասես նվագեց, և նետը կայծակի արագությամբ սլացավ հրապարակով...

Բայց Խոռը շտեսավ՝ նետը արդյո՞ր կպավ իր դոճին, թե ոչ: Այդ նույն պահին մի սուր ճիչ լսվեց նրա թիկունքից: Նա ահաբեկված ետ նայեց: Սպանված ծերունու վրա խոնարհված՝ լացուկոծ էր անում նիհար, եղեգնի պես բարալիկ մի թաթար աղջնակ՝ ուսերի վրա ծածանվող բարակ հյուսքերով:

Խոռը հասկացավ, որ այդ կողմից իրեն վտանգ չի սպառնում, և նորից թաքուն դուրս նայեց պատի հատից: Նա հույս ուներ, թե Զվենիգորային կտեսնի զետին տապալված, նետը մեջքին ցցված, Բայց դրա փոխարեն նկատեց Սեկաչին, որ թուրը բարձրացրած, հրապարակի միջով սլանում էր իր կողմի, իսկ Զվենիգորան գրկել էր մի զապորոժցու, որը փորձում էր իր իսկ կրծքից դուրս հանել արյունոտ նետը:

— Նզովյալ լինես,— հայհոյեց Խոռը ու նևտվեց աղջկա կողմը:

Թաթար աղջիկը սարսափից ճլաց, ձեռքերը վեր պարզեց, ասես ուզում էր պաշտպանվել հարվածից կամ գթություն էր աղերսում: Սակայն Խոռը չկարողացավ ձեռքը ետ պահել, և հատակը կարմրեց աղջկա արյունից:

— Ի՞նչ ես անում: Աղջկան ինչո՞ւ սպանեցիր,— լսվեց Սեկաչի ձայնը:

Խոռը հանգիստ թուրը սրբեց թաթար ծերունու շորերի վրա, թքեց:

— Օ՛ձ: Նետահարում էր մերոնց... Ստիպված էի նախ հոր հաշիվը մաքրել, հետո՝ սրա:

— Ահ, այ թե ինչ... Կեցցե՛ս: Ուրեմն էս լե՞շն էր նշան բռնել Արսենին... Լավ էր, որ Կոզուար ժամանակին նկատեց ու իր մարմնով ծածկեց ընկերոջը... Հիմա նրա վերքից արյունը հոսում է առվի պես: Յավալի բան կլինի, թե որ մեռնի: Քաջ կազակ էր... Գնանք, եղբայր, դեռ շատ գործ ունենք անելու:

Սեկաչը վազեց դեպի զապորոժցիները, որոնք արդեն բո-

լոր կողմերից նեղում էին հուսահատութեամբ բռնված ամրոցի պաշտպաններին: Իսկ խոռը, սարսափից դեռ ուշքի չեկած և մտքում անիժելով Չեռնորային, որն իրեն գցել էր այդ գժոխքը, իսկ ինքը ծրկել էր Ղրիմ՝ Ալու մոտ, մտավ խրճիթ որպեսզի տիրանա թաթարի ունեցվածքին:

Արսենի ու վիրավոր Կոզուտի շուրջը հավաքվեցին մտերիմ ընկերները: Արսենը զգուշութեամբ ընկերոջ կրծքից դուրս քաշեց նետը: Մետելիցան շավարի խոր գրպանից հանեց օղու տափակ շիշը, վառողամանից շշի մեջ վառող լցրեց, թափահարեց ու այդ այրող խառնուրդը լցրեց վերքի վրա: Հետո մաքուր լաթի կտորով կապեց:

— Տղերք, սրան տարեք նավակ,— կարգադրեց Զվենիգորան:

Ավագ Պիվնենկոն եղբորը գրկեց և Տովկաշի հետ միասին տարավ դեպի Դնեպր: Իսկ զապորոժցիները կրկին նետվեցին կովի ամենաթեժ տեղը:

Երբ միջնաբերդն էլ ընկավ, Կրգ-Քերմենի բեյը մի խումբ զինվորների հետ փակվեց մեշիդում: Պատուհաններից, տանիքից, մինարեից նրանք կրակով պաշտպանվում էին կազակներից:

Մեկուսի, անջատ-անջատ, ենիչերիական ջոկատները ճեղքեցին, դուրս եկան մեշիդի մոտ և իրենց հրաձիգների պաշտպանութեամբ կատաղի դիմադրութուն ցույց տվին կազակներին:

— Զարկեք դրանց, զավակներս: Զարկեք անհավատներին,— որստում էր Սերկուն:— Զթողենք, որ էդ նզովյալները ուշքի գան:

Եվ «Հավակները», որոնցից շատերը ալեհեր զինվորներ էին, արհամարհելով մահը, անզուսպ հորձանքով սեղմում էին թշնամուն: Մեկը մյուսի ետևից ընկնում էին ենիչերիները, արյունով ողողում սանդուղքի քարի սալերը, վայրի կատաղութեամբ ճչում, ճղավում էինք թուրք ազաններն ու թաթար մուրզաները:

Բայց նրանք այլևս ուժ չունեին, որպեսզի կարողանային կասեցնել կազակների գրոհը, մարտական թափը:

Զվենիգորան ու Սպիխալսկին առաջինը ներխուժեցին մեշեդ: Դեռ հեռվից, կարճահասակ թաթարների գլխների վրայից,

Արսենը տեսավ այտուսկրոտ բեյին: Նրան շրջափակել էին թիկնապահները: Բեյը կուզենար շփվել, գետնի տակ անցնել կամ թեկուզ վերածվեր շարքային զինվորի, սակայն, կուշտ, լավ խնամված դեմքը, մանավանդ թավշյա բեշմետը մատնում էին նրան:

— Բեյ, անձնատուր եղիր, — կանչեց Արսենը՝ թուրը թափահարելով: — Պատիվ ունես իրեն՝ Սերկոյին անձնատուր լինել:

Կողքին շաշեց Սպիրալսկու ծանր թուրը: Թաթարները ետ-ետ գնացին՝ բեյին սեղմելով պատին: Նեղվածքում նրանք չկարողացան զենք բանեցնել, խանդարեցին մեկը մյուսին: Նրանցից մեկը կազկանձեց.

— Ուռուս, Շեյթա՛նը: Ուռուս Շեյթա՛նը:

Այդ կազկանձից մեղեդի պաշտպանները ցնցվեցին: Զվենիգորան մի քանի ուժգին հարվածներով իր ճանապարհը բացեց զեպի բեյը: Սպիրալսկին պաշտպանում էր նրան թիկունքից:

Բեյը շողշողուն պատյանից դուրս քաշեց թուրը, սոր էրևում է, այսօր դեռ չէր բանել: Բեյի ու կազակի թրերը խաչաձևվեցին:

Արսենն այժմ արդեն ոչինչ չէր տեսնում, րացի թաթար մուրզայի փայլուն, թմբիկ դեմքից: Վայր ընկնող աստղի պես գլխում առկայծեց հիշողութունը Կաֆայի գերիների շուկայի մասին. պաղ արև, մռայլ ծով, կիսամերկ գերիներ և մտրակների շաշուն, որ իջնում էին նրանց թիկունքին... Ատելութունը հոսապատկեց նրա ուժերը: Մեղեդի կիսախավարի մեջ կուրացուցիչ կայծեր էին ցայտում սրերի հարվածներից: Բեյը այլևս նահանջելու տեղ չունեի և պաշտպանվում էր խելահեղ կատաղությամբ: Նրա սուրը ճարպկորեն ետ էր մղում կազակի բուրբ հարվածները, բայց, երևում է, սարսափը կայեց-կապեց այդ խանական մեծատոհմիկ պարոնի սիրտը, նրա ճակատը ծածկվեց բրտիքի թանձր կաթիլներով:

Արսենը մի քայլ նահանջեց և ամբողջ մարմնով ետ թերվեց, կամենալով իր կողմը քաշել բեյին: Թաթարը ակամա շարժվեց նրա հետքերով, ձեռքն առաջ մեկնած: Արսենը ներքևից անսպասելիորեն ուժգին հարվածեց: Հակառակորդի սուրը փայլկտաց օդում, թռավ կազակի գլխավերևով ու

զրնգոցով զարկվեց քարե հատակին: Բեյը մեռելի պես գունատվեց, ետ թեքվեց ու մեջքով հենվեց պատին: Փայլփլուն մետաղի սառը շեղբը դեմ առավ նրա կոկորդին: Բայց վերջին պահին Զվենիգորան ձեռքը ետ քաշեց:

— Բե՛յ, հրամայիր բո մարդկանց՝ դադարեցնեն դիմադրությունը: Փոխարենը կյանքդ բեզ կբաշխենք: Դե՛,

— Ով ուղղափառներ: Այլահը երես է դարձրել մեզնից,— խուպոտ ձայնով կոնշաց բեյը:— Հրամայում եմ զենքերը ցած դնել: Անձնատուր եղեք... Վա՛յ մեզ, վա՛յ Մուհամեդի որդիներին...

Նախ բեյին մտերիմ սեյմեններն ու ասկյարները թրերը ցած գցեցին: Հետո, երբ բեյը բարձրաձայն կրկնեց իր հրամանը, մյուսներն էլ հանձնվեցին:

Մեղեդում լուսթյուն տիրեց: Հսկում էին միայն բազում հոգնաբեկ մարդկանց ծանր շնչառությունը, մեկ էլ վիրավորների հառաչանքները:

Արսենին մոտեցավ Սերկոն: Գրկեց կաղակին:

— Շնորհակալ եմ, դավակս: Ես ամեն ինչ տեսա... Հավթույն ես բռնել: Խոսք չկա: Կեցցես,— և նորից սեղմեց կրծքին:

...Միջօրեին, թնդանոթներով, ենիչերկաներով, վառոգով, գերիներով բարձված կաղակական նավատորմը հեռացավ Թավանից: Ամրոցի տեղում մնացին բարակույտեր, դիակներ: Գարշահոտ, թանձր ծխի սև սյուները երկինք էին բարձրանում:

7

Նավարկելով դեպի Սեյ՝ Զվենիգորան մտածում էր այն մասին, թե թուրքական ու թաթարական առաջապահ զորամասերի և հեծյալ պարեկների միջով ինչպես պետք է թափանցի Զիգիրին: Սիրտը անհանգիստ էր: Վախենում էր Ռոմանին չգիտնի: Այդ ընթացքում Տրաուերնիխտր կարող էր տեղափոխել նրան կամ տանջամահ անել: Թուրքերը կարող էին քաղաք ներխուժել և բոլոր գերիներին կոտորել կամ քշել ստրկության, ինչպես արեցին Կամենեցում երեք տարի առաջ: Իսկ գուցեև պարզապես շրջապատել են քաղաքը, այնպես որ մուկն էլ չի կարող ներս խցկվել:

Տասնյակ մտքեր էին խոնվել գլխում: Տասնյակ ամենա-
տարբեր ենթադրություններ էին ծնվում: Բայց հենց որ նա-
վախումբը կառանվեց հյուսիսային նավակայանում, այդ
բոլորը մի ականթարթում հողմացրիվ եղան:

Ձվենիգորան նոր էր ոտքը ափ դրել, երբ նրան կանչեցին
հոշոտի մոտ, որը քիչ առաջ էր ժամանել:

Սերկոն շրջապատված էր մի քանի ատամաններով,
որոնք իրենց կուրեններն էին առաջնորդում դեպի Բուգ: Նրա
առջև ծնկաչոք քարացել էր մի ջահել ևնիշերի, որի աչքերում
էրկյուղ ու աղերսանք կար:

— Արսեն, հարկավոր է մանրամասն հարցուփորձ անել
էս թուրքի լամուկին,— ասաց կոշեոյր:— Նա, երևում է,
չատ բան գիտի... է՛յ, տղա,— Սերկոն դարձավ թուրքին,—
դու գիտես արդեն՝ ով եմ ես, և համոզվեցիր, որ քեզ հեռ
կատակելու միտք չունեմ: Ճշմարտությունը կասես՝ ողջ կմը-
նաս, կստես ձկների կեր կզանոսս Դնեսպրում: Հասկացա՞ր:

Արսենը թարգմանեց:

— Հասկացա, փաշա:

Սերկոն, լսելով թե ինչպես է իրեն մեծարում թուրքը,
սխալաց.

— Դե, եթե հասկացար, ուրեմն ասա. քո ջոկատը, վիրա-
վորների ու հիվանդների գումակի հետ ո՞ր էր գնում Չիզիրի-
նեց: Ինչո՞ւ դուք Աջիդեր չգնացիր, այլ թերվեցիր դեպի Դնե-
սպր:

Թուրքը վախեցած հայացքը գցեց Սերկոյի ու ատաման-
ների վրա, որոնք խոժոռ նայում էին իրեն:

— Մեծ վեզիրի հրամանն էր, փաշա,— մոթմոթաց նա:

— Ի՞նչ հրաման:

— Մենք պետք է հասնեինք Դնեսպր ու Լնտեղ սպասեինք
մեր նավերին...

— Հետո՞:

— Նավերը պարեն ու վառոդ էին բերելու մեծ վեզիրի
գործի համար, փաշա: Իսկ մենք պետք է հանձնեինք վիրա-
վորներին և հիվանդներին, վերցնեինք ամբողջ բեռն ու
հասցնեինք Չիզիրին:

— Առաջ, որքան դիտեմ, գնում էիք դեպի Աջիդեր կամ Օչա-
կով:

— Այո: Բայց դա կրկնակի հեռու է...

— Ուրեմն, Կարա Մուսթաֆան պաշարի պակասութիւնը զգում, որ անհամբեր դրան է սպասում:

— Զգում է, փաշա: Զորքը շատ է, պաշարը՝ քիչ... Հույս ունեինք, թե Ուկրաինայում կգտնենք, բայց անցյալ տարի Իբրահիմ փաշան էնպես է թալանել երկիրը, որ մեզ ոչինչ չի մնացել:

— Ասել է, ինքը օգտվել է, ինչպես շոբանի շունը, իսկ իր հաջորդին կրակի մեջ է գցել,— մոռաց ժպտաց կոշկոյը:— Քանի՞ նա՞վ պետք է գա:

— Զեմ իմանում, փաշա... Բայց ելնելով այն բանից, թէ բանի սալը են ուղարկել մեզ հետ, պետք է որ շատ լինեն:

— Է, ինչ արած, էլի գործ կլինի... Թուրքերը կվառվեն Ուկրաինայում, ինչպես մեղավորները դժոխքում:

— Սակայն, բատկո կոշկոյ, ես անպայման պետք է գնու՞մ Զիգիրին, դա շատ-շատ անհրաժեշտ է,— բացականչեց Արսենը:

— Գիտեմ: Լսել եմ: Գովելի է, որ այդպես հոգ ես տանում ընկերոջդ մասին: Բայց էստեղ էլ դու շատ պետք ես Գուցեկ ավելի շատ:

Դա հրաման էր, և Զվենիգորան ոչինչ ասել չէր կարող:

— Տարեք տղային,— կարգադրեց Սերկոն:— Երևում է, ճշմարիտ ասաց... Պատրաստվեք նոր արշավանքի. նավակներում լրացրեք զնդակներին, վառոդի, պաքսիմատի, սալամախի՝ պաշարները: Արևածագին դուրս կգանք:

8

— Դրուժե, տես, գալիս են,— բացականչեց Սեկաչը, ու նստած էր բարձր ու ծեր ուռենու հաստ ճյուղին:

Տավկաչը աչքերը կկոցեց արևից:

— Ոնց որ թե շեմ տեսնում... Դու, մեր մեջ ասած, հո չես գառանցում:

— Աստված վկա, գալիս են... էդ ո՞ւր ես նայում, է՛... Ա՛յ, հրեն, Կրասնոյակովի դիմաց: Կարծես շուտ են գալիս

1 Սալամախ (սալամատա)— ալյուրով ու ճարպով եփած ջրիկ շիւտ:

դեպի Կորաբելնայայի գետաբերանը... Վա՛յ մերիկ ջան, ինչ-
թան էլ շատ ե՛ն:

Այժմ արդեն Տովկաչն էլ նկատեց թուրքական նավատոր-
միդը:

Ոլորանի ետևից, Գնեպրի լայն, արևի տակ շողշողացող
հարթության վրա հայտնվեցին նավերը: Մեկ, երկու, երեք...
հինգ... տասը... քսան... հիսուն... — Տովկաչը հաշիվը կորց-
րեց:

— Նրանք են: էլ մլուլ շտանք: Շուտ վազենք կոշևոյի
նոտ,— կանչեց Սեկաչը՝ արագ-արագ ցած իջնելով:

Գետաբերին ունկնդրելով՝ Սերկոն գլխարկը հագցրեց սրի
ձայրին ու վեր բարձրացրեց: Դա պայմանական նշանն էր:
Եթե սրահին տասնյակ ճայեր դուրս լողացին եղեգների,
ուսենու թփուտների ետևից և սլացան թուրքական նավերի
հետևապարհը կտրելու: Արագաթև թռչունների նման նրանք
լողացին Կորաբելնայայի հանդարտ ջրերի վրայով և բոլոր
նշողմերից շրջապատեցին թշնամու նավատորմը:

— Աստված օգնական, քաջ եղբայրներ,— թնդաց Սեր-
կոյի ձայնը:— Դաղեք գակիվնիցաներով: Կրակեք մուշկետ-
ներով: Գրոհե՛լ: Կեռչանս իր պատրաստեք: Գրոհե՛լ:

Գետի վրա տարածվեց թնդանոթների որոտը: Զապորոժ-
յան գակիվնիցաները, որ ամրացված էին ցուկներին, հար-
ձածեցին կարտեչով: Թուրքերը պատասխանեցին ումբերով:
Հասողի ծուխը սև բուլաներով բարձրացավ, ծածկեց նավերն
ու գետի կանաչ ափերը:

Երկու խփված ճայեր իջան հատակը: Նրանցից փրկված
զապորոժցիները թպրտացին ջրում, վրաներից դեն գցեցին
հագուստները և, փնչացնելով, շուռ եկան դեպի ափ:

Սերկոն, իր ճայի մեջ կանգնած, նայում էր Կորաբելնա-
յայի գետաբերանին, որտեղ բորբոքվել էր մարտը: Թուրքա-
կան նավերը կանգ առան, խախտեցին շարքերը: Ենիշերինե-
րն իրար անցան, գոռգոռացին, սաստկացրին թնդանոթա-
յին կրակը:

— Խփե՛ք կրակի խողովակներով, դարկեք էդ շների
մոռթներին,— գոչեց Սերկոն, տեսնելով, որ ումբի հար-
վածից ևս մի ճայ շուռ եկավ ու իջավ հատակը:

Յուրաքանչյուր ճայի վրա կար վառողով լցված երկուս-

կան թնդանոթ, որ պատրաստված էին Սելի արհեստանոցներում: Դա գապորոծցիների հոյակապ գյուտն էր: Խողովակ մի ծայրը պինդ փակում էին, իսկ մյուսը բաց էին թողնում: Բաց կողմից վառող էին լցնում, բորակով թրջած պատրույզ էին դնում մեջը, Թնդանոթի փողից խողովակի մեջ էին հրույժառողի ոչ մեծ լիցքը և վառում էին պատրույզը: Հենց խողովակի ներսում բռնկվում էր վառողը, խողովակը սրընթաց թոցնում էր դեպի նպատակակետը, որտեղ նա պայթում էր ասեղի դղրոցով ու կրակ շաղ տալիս...

Լսելով կոշեռոյի հրամանը՝ Զվենիգորան խողովակը դրեց թնդանոթի երախը, մեջը վառող լցրեց ու մոտեցրեց ջանքի: Հրե խողովակը մարտադաշտի վրա փռված թխակապույտ ծխի մեջ պայծառ հետք գծեց ու պայթեց թշնամու՝ առջևից ընթացող նավի պարանասարքերի մեջ: Կրակի խուրձը կուրացրեց աչքերը... Թուրքերը վայրի աղաղակներ բարձրացրին ու նետվեցին կրակը հանգցնելու:

Ճայլ կողքանց հպվեց նավեղրին:

— Կեռանները գցե՛լ, — գռչեց Զվենիգորան:

Սուր ճանկերով երկաթե ծանր կեռերը վեր թռան: Կախվեցին ամուր պարանասանդուղքները: Տախտակամածին փայլատակեցին թուրքական կեռ թրերը: Նրանցից մի բանիսին հաջողվեց կտրատել երկու-երեք պարանասանդուղք, բայց ճայերից որոտացին կազակական մուշկետները, և մի բանի ենիշերիներ ճիչ ու վայնասունով շրմփացին ջուրը:

— Գրոհե՛լ: Գրոհե՛լ:

Արսենը բռնեց անցագերանից, ցնցեց. կեռիկը արդյոք պի՞նդ է կառչել նավեղրից: Պինդ էր: Թուրք ատամների արանքը դրած, ատրճանակը աջ ձեռքում բռնած, արագ-արագ վեր մագլցեց: Ոտքը գցեց նավեղրի վրայով... Նրա վրա հարձակվեց մի ենիշերի՝ թուրք գլխավերևում թափահարելով: Արսենը դիմահար կրակեց: Թուրքը անձայն բերանը սիվայր տապալվեց: Արսենը անցավ նրա վրայով և սրով ետ մղեց կարճիկ, հաստամարմին թուրքի հարձակումը:

Իսկ նրա հոտից արդեն բարձրացան Մետելիցան, Սպիխալսկին, Սեկաշը, Պիվենը: Տախտակամածին կարճ, բայց դաժան մարտ բորբոքվեց: Լուել էին ատրճանակներն ու մուշկետները: Կոտորում էին սրերն ու յաթաղանները:

— Զարկե՛ք դրանց, տղերք: Զարկե՛ք էդ հրեշներին,— որոտաց Մետեւիցան՝ իր հզոր ձայնով խլացնելով ճիշ ու աղմուկը:— Զխնայեք նզովյալներին: Նրանք մեր եղբայրներին չեն խնայում:

Արսենը կոպում էր անձայն: Փոխարենը Սպիխալսկին, որ միշտ նրա կողքին էր, շէր լռում:

Նրա թուրը չզիտեր ինչ բան է խոնջանալ: Նա Սեկաչի ու Տովկաչի հետ ենիշերիներին սեղմեց նավախելին ու այնտեղից թափեց ջուրը: Շեշիկը պատվում էր նրա շորս կողմը, բոտի նման խայթելով նրանց, ուլբեր խույս էին տալիս Մեւեւիցայի հարվածներից:

Արսենը կոպում էր անձայն: Փոխարենը Սպիխալսկին, չեւանալով նրա կողքից, անբնդհատ խոսում էր:

— Ախ, խուլերի փայ դառնաս դու, առ ինձնից քեզ նվեր, անհավատ,— խոսեց ինքն իրեն՝ երկար թուրը իջեցնելով ենիշերի գլխին:— Կորի գրողի ծոցը:

Նրա գիլ հնչեղ ձայնը, ինչպես և Մետեւիցայի ձայնը, սարսափ էր ազդում թշնամուն:

— Դե արի, խնդրեմ,— որոտաց նա ողջ տախտակամաւով:— Լիբը գավաթով կհյուրասիրեմ:

— Պան Մարտին,— կանչեց Զվենիգորան,— մի տես ինչ բոշնակ է մեր առջև: Ինքը՝ փաշան է: Լարկավոր է կենդանի բռնել:

Կաղակներից պաշտպանվող ենիշերիների ամբոխի մեջ այբի էր զարնում ձյունաճերմակ շաւմայով փաշան:

— Ա՛, սսածու կրակը դրա գլխին թափվի,— շաշեց Սպիխալսկին:— Այ սա, խնդրեմ, իսկական հանդիպում է:— Եվ բոշեց թուրքի գլխների վրայով:— Հե՛յ, փաշա, հանձնվի՛ր:

Լողող, նիհար փաշան հայացքը բարձրացրեց. մի շարադուծ ժպիտ տարածվեց նրա շոր, դարչնագույն դեմքին: Ծերմակ այծի մորուսը գողգողաց, կարծես ինչ-որ մեկը ներքեից ձիգ տվեց:

— Հանձնվի՛ր, փաշա,— դոշեց Արսենը:

Փաշան շարությամբ նայեց կաղակին և գոտուց դուրս բաշեց ատրճանակը:

— Մարտին, զգուշացի՛ր,— գոռաց Արսենը:

Բայց ուշ էր: Որոտաց կրակոցը: Սպիխալսկին մի ճիշ

արձակեց ու ձեռքից բաց թողեց սուրբը: Գնդակը կպել էր կրծքին:

— Ա՛խ, շան ցեղ...— Նա կուշ եկավ, ձեռքով փակեց վերքը և դանդաղ սկսեց ընկնել արյունով ներկված տախտակամածին:

Տեսնելով, որ ընկերոջ մատների արանքից առատորեն արյուն է ծորում, Արսենը գրկեց Սպիրտալսկուն, պահեց նրան, որպեսզի գազազած ուղմիկների ոտքի տակ չընկնի:

— Եղբայրներ, դրանց վերջը տվեք,— ձայնեց կազակներին:— Փաշային կենդանի բռնեք:

— Դրուժե, թող ինձ... Սա իմ վերջն է,— տնքաց պան Մարտինը:— Ա՛խ, շան ցեղ: Էլ բախտ չեմ ունենա մի անգամ էլ տեսնեմ իմ Պոլսկան¹... իմ սիրասուն հայրենիքը:

Արսենը նրան քաշեց նավակողի մոտ: Հանձնեց կազակներին, որ մնացել էին ճայի մեջ, որպես պահեստայիններ: Արսենի սիրտը կծկվում էր զայրույթից ու ցավից: Մտածում էր փաշային գերի շվերցնել: Վրեժխնդիր լինել պան Մարտինի համար:

Բայց մարտն արդեն ավարտվել էր: Լեմենուրեք թափված էին սպանվածներն ու վիրավորները: Փաշան, ձեռքերը կրծքին ծալած, կանգնած էր վերնահարկի պատի մոտ: Կնճռապատ աչտերն ի վար գլորվում էին արցունքները:

Նրա շուրջը խմբված կազակները ոչ մի կերպ չէին հանգարտվում: Ծակատների քրտինքն էին սրբում շարունակ:

Զվենիգորան բարձրացրեց թուրը:

— Քավթառ շուն: Ինձնից գութ չսպասես:

Կազակները բռնեցին նրան:

— Ուշքի արի, Արսեն: Զէ որ ինքդ հրամայեցիր կենդանի վերցնել... Համ էլ անգին է նա...

Արսենը գլուխը կախեց: Արցունքները խեղդում էին, չէին թողնում շունչ քաշել: Մեծ ճիգով նա դուրս բերեց կսկծա նոզ, սիրտ տոշորոզ բառերը:

— Պան Մարտինին... սպանեց նա... էդ շունը... Ա՛խ:— Նա չգիմացավ, տարավ-բերեց ու ամբողջ թափով շրմփացրեց փաշայի դեմքին:— Սրիկա՛:

¹ Պոլսկա— Լեհաստան:

Սա չարութեամբ աչքերը խուլորեց:

— Ես զինվոր եմ: Գու կարող ես սպանել ինձ, գյավուր, բայց շհամարձակվես վիրավորել: Ես ազնվորեն եմ կռվել:

Արսենը մի կողմ քաշվեց:

Դենպրի վրա կռիվը հանդարտվեց: Մի քանի առաջաստանով վառվել էին: Ծուխը թխակապույտ մշուշով փռվել էր ջրի վրա ու արցունք էր քամում աչքերից: Լսվում էին ռապորտօցիների ուրախ բացականչութունները և հատուկենտ կրակոցները այն նավերի վրա, որոնցում դեռևս դիմադրում էին թուրքերը:

... Իրիկնադեմին վիթխարի նավատորմը, բաղկացած երկու հարյուր կազակական ճայերից և գրեթե հարյուր թուրքական սանդալներից ու ֆելյուզաններից, հացահատիկով, վառողով, ռումբերով և այլ մթերքներով բեռնավորված, դուրս էկավ Կորաբելնայայի գետաբերանից և դանդաղ լողաց Դենպրն ի վեր:

Ճոնչում էին թիակայները, աղմկում էին թիակները, ճրգփում էր ջուրը: Գետի վրա տարածվել էր հույտախուտի, ջրի մուռների ու արծաթասաղարթ ուռենիների թանձր բուրմունքը:

Սպիտակսկին պռոկած էր թուրքական սպիտակ սավանների վրա: Շևշիկը կռացել էր նրա վրա ու շշնջում էր անատամ բերանով:

— Ով տիրամեր, երկնավոր թագուհի, օգնիր կաղակին, դու պահիր-պահպանիր նրան: Արյունը դադարեցրու, վերքը առողջացրու, ուժ տուր սրտին, որպեսզի կազակի մարմինը էլ չցավի, որ հոգին պնդանա, ձեռքը թուր բռնի, ոտքերը ամուր կանգնեն հողին, աչքերը լույս աշխարհ տեսնեն... Իսկ դու, պիղծ ոգի, կենդանի մարմինը մի՛ սպանի: Թո՛ի գնա բեղ համար, շրջիր մարգագետիններում, գետի ընդարձակ ափերին, անանցանելի մութ թավուտներում, խորունկ քարանձավներում, որտեղ Մարիշչեն¹ է թափառում, որտեղ մահն է թրև գալիս, ծանծաղուտում խեղդվիր, ճահիճների մեջ թաղվիր... Թո՛ւհ, շքվիր աչքիցս, կորի՛, սատանա, ջահնամի ծոցը գնաս:

¹ Մարիշչեն (ուկր.) — տեսիլք, ուրվական:

Շեշիկը թքեց նավակողի վրայից ու թնքով սրբեց բերանը:

Մինչ նա խոսում էր, Մետեւիցան արհամարհանքով նայում էր իր հին, սրտամոտ բարեկամին: Հետո վճռականորեն ձեռքով մի կողմ հրեց նրան:

— Քո տիմարությունները ավելորդ են, թող, ես նրան կրուժեմ: Իմ իմացածով:

Նա նորից անտակ գրպանից հանեց շիշը, մի քիչ գործիկալցրեց կոտոշի մեջ, որը արշավների ժամանակ նրա համար փոխարինում էր գավաթին: Վառոդ ավելացրեց, այդ բոլորը խառնեց ատրճանակի փողով և տվեց պան Մարտինին:

— Առ, որդիս, կեսը խմիր, — և քիչ բարձրացրեց նրան:

Սպիրտալսկին խմեց: Թուլացած, անզոր, սառը բրտիչ մեջ, նա գլուխը ծանրորեն իջեցրեց փափուկ բարձին:

Մետեւիցան երկրորդ կեսը լցրեց նրա վերքին և մարաթանով պինդ կապեց:

— Ա՛յ, էսպես: Դե հիմա հանգստացիր:

Տեղից ելնելով՝ նա կրկին կոտոշը գործիկալցրեց: Նա դեղնած Սպիրտալսկուն:

— Դե, կենացդ, կազակ:

Կոտոշը մոտեցրեց շուրթերին, բայց այդ պահին լսեց Զվենիգորայի հազր. տեսավ նրա խիստ, դատապարտող հայացքը: Մեր կազակի ձեռքը բարացավ օդում... Հետո դանդաղ, ախտասանքով ցած իջավ և գործիկան ցողեց Գնեպրի մեջ:

— Ըհ՛ր, ըհ՛ր, — կռնչաց նա և ափով սրբեց շոր բեղերը:

Շեշիկ պապր նայելով շին, որի մեջ մի քիչ գործիկա է մնացել, և ախորժակով լիզեց շուրթերը:

Սպիրտալսկին կոպերը բարձրացրեց, ծարավից շորաքած շուրթերով կլանեց իրիկնային ղով օդը:

— Արսեն, դրուժե... Ինձ թաղիր մի բարձր լեռան կատարին, որտեղից երևա ողջ Պողոտիան... Եվ նրանից էն կողմ... Իմ հարազատ երկիրը... Պոլսկան...

Նա խոսում էր դանդաղ, ցածրաձայն, մեծ ճիգերով, բայց հասկանալի, պարզ: Երևում էր, որ յուրաքանչյուր բառը անտանելի ցավ է պատճառում նրան: — Իսկ բան է, թե պատահի... լինես Զակոպանիում... Փնտրիր, գտիր պանի Վանդային: Ասա, որ ես նրան... ամեն բան ներում եմ... Նույնիսկ

դավաճանությունը... էն ճիճու մարշալեկի հետ... Ներում եմ... կակ բոգա կոխամ¹:

Արսենը շրջվեց, որպեսզի պան Մարտինը շտեմնի իր արցունքները: «Ահա և դու քո կռիվը կովեցիր, պան Մարտին: Կովեցիր... Եվ էլ չես տեսնի քո հայրենիքն ու քո անհավատարիմ Վանդային, որին, այնուամենայնիվ, հակառակ ամեն ինչի, սիրում էիր... Դու տեսքից այնքան էլ բարեհամբույր չէիր, բայց բարի, մանկական բնքուչ սիրտ ունեիր: Դու շլյախտիչ էիր, բայց այն շլյախտաներից, որոնց ժողովուրդն անվանում է բացբամակ, և որոնք ոչինչ չունեն, բացի արժանապատվությունից: Դրա համար էլ դու չէիր խորշում հասարակ ժողովրդից և նրան ավելի մոտիկ էիր կանգնած, բան բարձրաստիճան աղնվականներին, որոնք նողկում էին քեզանից և օգտագործում ինչպես կարող էին... Ա՛խ, պան Մարտին, պան Մարտին»...

Իսկ բարձրաձայն ասաց.

— Հույսդ մի՛ կորցնի, եղբայր Մարտին: Դու չես մեռնի... Այ, գիշերը կհասնենք Սեչ, ձիեր կվերցնեմ ու կսուրանք Դուրովայա Բալկա... Իսկ էնտեղ Յաղուրն ու Օնոպրի պապը կնպիսի դեղ ու դարման կանեն, որ տեղնուտեղը ոտի կկանգնեցնեն քեզ: Դեռ տրտինգ կտաս հովատակի պես... Դեռ շատ կապրես անհոգ, բախտավոր: Մինչև հարյուր տարի:

Սպիխալսելու դալուկ, սառը քրտինքով պատած դեմքին մի թույլ ժպիտ շողաց:

— Բարի մարդ ես, Արսեն... Դու ինձ համար իսկական ախպեր ես:

Նա աչքերը փակեց և, թուլացած, ուժասպառ լուց:

ՉԻԳԻՐԻՆ

1

Երկրորդ շաբաթն էր արդեն, որ Չիգիրինը պաշարված էր: Թուս-ուկրաինական զորքերը Բուժինայի մոտ անցել էին Դենպրի աջ ափը, վճռական մարտերում թուրքերի ու թա-

¹ Կակ բոգա կոխամ (լեհ.) — ևստված վկա:

Թարներին ետ էին բշել թյասմինից, գրավել էին Կալինով-
յան կամուրջը և կապ հաստատել պաշարվածների հետ: Բայց
չնայած որ թուրքերը կորցրել էին քսանութ թնդանոթ, վա-
ռողով լի բազմաթիվ սայլեր, անասունների նախիր ու ձիերի
երամականեր, չնայած որ փաղիշահի հարյուրավոր զինվորներ
մնացել էին տրորված, ոտնատակ արված մոլախոտերի մեջ,
մեծ վեզիր Մուսաթաֆան դեռևս բավականաչափ ուժեր ուներ
իր տրամադրության տակ, որպեսզի շուսահատվեր և շկրկ-
ներ իբրահիմ փաշայի անցյալ տարվա սխալը՝ առանց գըլ-
խավոր ճակատամարտ տալու լքել դիրքերն ու փախչել:

Երբ գորքը կանգ առավ թյասմինի ամրացված աջ ափին,
իսկ, «ուռուսները», ինչպես լագութչիկները զեկուցեցին,
մտադիր չէին կովով գետն անցնել ու ընթացքից հարձակվել
թուրքական դիրքերի վրա, Կարա Մուսթաֆան բոլոր փաշա-
ներին հրամայեց հավաքվել ռազմական խորհրդի:

Վեզիրի ընդարձակ շքեղ վրանը հագիվ տեղավորեց բոլոր
բարձրաստիճան զորականներին:

Կարա Մուսթաֆան նստած էր մռայլ, խոժոռ, սև ամպի
պես մթնած: Փաշաները լուռ իրար էին նայում՝ կրած սար-
տության համար թունդ շշպոռցի սպասելով: Միայն զոռոզ ու
խորամանկ Մուրադ Գիրեյ խանն էր անկախ պահում իրեն,
բոլորին հասկանալ տալով, որ իր փուլքը չէ: Նրա թիկուն-
քում հիսուն հազար հեծյալ էր կանգնած:

Բայց վեզիրը խոսեց իր համար անսովոր տոնով՝ մեղմ,
առանց բարկության.

— Ով փաղիշահի քաջակորով զինվորներ, ալլահը պատ-
ժեց մեզ այն բանի համար, որ մենք այստեղ, սարմատների՝
այս վայրի տափաստանները քիչ ատելություն բերեցինք մեր
սրտերում առ անհավատները, քիչ քաջություն ու ցանկություն
ունեցանք՝ փառաբանելու օսմանների մեծ տերությունը,
արևափայլ խանդքարին ու ինձ... Ահա արդեն շորրորդ շա-
բաթն է սկսվում պաշարման, բայց մենք, ոչ մի կերպ չենք
կարողանում այս անիծված քաղաքը զրավել: Իսկ երեկ ու
այսօր հարկադրված եղանք մեր թիկունքները ցույց տալ

1 Սարմատներ— իրանալեզու ցեղեր, որ Մերձսևծովյան տափաստան-
ներում հաջորդեցին սկյութներին մ. թ. ա. I դարում:

հետման Սամոյլովիչի ու Ռոմոդան փաշայի զորքերին... Ամո՛հ մեզ... Եվ հիմ ես ուզում եմ հարցնել ձեզ, փառաբանված զորավարներ. և՛ քեզ, Ահմեդ՝ փաշադ Եգիպտոսի, և՛ քեզ, Սուլալ՝ փաշադ Կոստանդնուպոլսի, և՛ քեզ Կուր փաշա, և՛ քեզ, Զուրում փաշա, և՛ ձեր բոլորին, զորականներ, որոնց քաջությանը երբեք չեմ կասկածել. ինչո՞ւ մենք, որ երկու անգամ ավելի շատ զորք ունենք, քան ուռուսները, այսօր հարկադրված եղանք խայտառակ կերպով փախչել մարտի դաշտից: Հը՞:

Ծանր լուսթյուն իջավ:

Կարա Մուսթաֆան քարացավ սև արձանի պես:

Առաջինը տեղից ելավ Ահմեդ փաշան: Մետաքսյա վզնոցով սրբեց ճակատի քրտինքը: Սկսեց ցածր ձայնով.

— Մեծ վեզիր, և դուք, փառապանծ զորականներ, երկար խորհելուց հետո ես եկա այն եզրակացության, որ ինձ անհայտ պատճառներով ալլահը երես է դարձրել մեզնից և այլևս ողորմածության չի արժանացնում իր պաշտպաններին... Ուրիշ ոչ մի բանով ես չեմ կարող բացատրել Իսլամի բազու գինվորների մահն ու թնդանոթների կորուստը... Իմ զորագունդը պակասել է մեկ երրորդով: Իսկ ուռուսներին թարմ ուժեր են օգնության եկել հյուսիսից... Ես այլևս հնարավորություն չեմ տեսնում շարունակելու այս երկարատև ու մեր փառքին վտանգ սպառնացող պատերազմը: Ես երբեք վախկոտ չեմ եղել, բայց հիմա ահը սողոսկել է իմ սիրտը: Ալլահը երես է դարձրել մեզնից, և անհավատները կարող են հաղթել... Ուստի առաջարկում եմ անհապաղ պատվով նահանջել, այլապես և՛ մեր անպարտելի բանակը կկործանվի, և՛ բոլոր թնդանոթներից կզրկվենք: Կխորտակվի մեր տերության փառքը, ընդհուպ մինչև մեռելների հարուսթյուն առնելը, իսկ դրա համար մեզ կնզովեն հավիտյանս հավիտենից:

Ահմեդ փաշան գլուխ տվեց ու նստեց:

Բոլորը լուռ էին, մոռյլ, ընկճված: Ամեն մեկը հասկանում էր, որ եթե մինչև օրս երկու հարյուր հազարանոց բանակին չի հաջողվել գրավել Զիզիրինը, որի պատնեշների վրա մնացել են ոչ ավելի քան յոթ-ութ հազար վերջնականապես ուժասպառ եղած, հալից ընկած ստրելեցներ ու կապակներ, ապա այժմ, այն բանից հետո, երբ ուռուսները դուրս

Լն եկել Թյաոմիսի ձախ ափը և ազատ մուտք ունեն դեպի քաղաք, միայն հրաշքը կարող է օգնել թուրքերին ու թաթարներին՝ հաղթանակի հասնելու:

Վերջապես լուսթյունը խախտեց Կուր փաշան: Մեծ դրծփարությամբ բարձրացրեց իր ծանր, սարարտ մարմինը, խոր շունչ քաշեց, ասես մագլցել էր բարձր լեռան կատարը:

— Մեծ վեզիր, զորքի ուժերը սպառվել են: Ոչ ականներ փորելիք, ոչ խրամուղիները, ոչ թնդանոթային անընդմեջ գնդակոծումը, ոչ էլ հենց պարիսպների վրա ծավալված մարտերը, ոչ մի բան չօգնեց Մուհամմեդի որդիներին՝ գրավելու պաշարված քաղաքը: Մենք ամեն ինչի պակասություն ունենք՝ չի բավականացնում հացը, չի բավականանցնում փառոզը, ումբերն ու գնդակները հազիվ մեկ-երկու գրոհի համար հերիքեն: Փոխարենը շատ են սպանվածները, վիրավորները ու հիվանդները...

— Իսկ ի՞նչ է առաջարկում Կուր փաշան, — հարցրեց վեզիրը:

— Պատվով նահանջել:

— Ինչպես անցյալ տարի՞: Այն ժամանակ մենք պատվով նահանջեցինք...

Մյուսադ Գիրեյ խանը ջղաձգորեն ելավ տեղից: Սև, շիլ աչքերը շարությամբ խուլորեց Կուր փաշայի վրա:

— Մեծ վեզիր, Մուհամմեդի փառարանված ու քաջարի զինվորներ: Մեր հավատի ու մեր տերության պատիվը, ինչպես նաև փաղիշահի պատիվը մեղանից մի բան են պահանջում՝ հաղթանակ... Ես հիշում եմ, թե ինչպես անցյալ տարի, գրեթե այս նույն ժամանակ, հենց այս նույն տեղը, իմ նախորդը՝ Սելիմ Գիրեյ խանը, Իբրահիմ փաշայի մոտ հրավիրված խորհրդում նույն բանն ասաց, ինչ-որ հիմա ասացին Ահմեդ փաշան և Կուր փաշան: Եթե ուրիշները մոռացել են, ևս լավ եմ հիշում: Ահա նրա խոսքերը. «Իսլամական դորքը, որ գտնվում է ճամբարում ու խրամատներում, այժմ չի կարող չպարտվել անհավասանից: Եթե պաշարումը ևս երկու օր շարունակվի, ապա և՛ մեր հաղթական դորքը, և՛ արևիկան ու թնդանոթները, բոլորը կոչնչանան, իսկ մենք կխայտառակվենք: Ամենից խոհեմը այն կլինի, որ զորքը զուրս բերենք խրամատներից և, պահպանելով ուժերը, ետ դառնանք

նահանջի փրկարար ճանապարհով»։ Միթե այսօր նույնը չեն ասում փառաբանված փաշաները, Բայց ձեզ հարցնում եմ. որտե՞ղ են հիմա Սելիմ Գիրեյ խանն ու վեզիր Իբրահիմ փաշան։

Բոլորը լուռ էին։ Գլուխները կախած, հայացքները խոնարհած։ Խանը բացեիրբաց նրանց հիշեցրեց անցած տարվա զորավարների ծանր և բնավ էլ ոչ նախանձելի ճակատագրի մասին։

Իսկ Մյուրադ Գիրեյը շարունակեց խոսել էլ ավելի բորբոքվելով։

— Նրանք, խայտառակված ու անարգված, որպես սրտուկներ, նետված են անմարդաբնակ կղզիին... Զրկված են իրենց հարստությունից, աստիճաններից ու պատվից, սատկում են սովից ու համընդհանուր արհամարհանքից... Մի՞թե դուք, հարգարժան փաշաներ, դուք էլ եք ուզում նույն բախտին արժանանալ... Ոչ, ես չեմ ուզում։ Իմ գինվորները և՛ վաղը, և՛ մյուս օրը, և՛ որքան որ հարկ լինի, պատրաստ են կրելու պատերազմի դժվարությունները, որպեսզի փառավոր հաղթանակ ձեռք բերեն... Ալլահը թող մեզ լինի օգնական։

Խանի խոսքերը մեծ տպավորություն գործեցին։ Այժմ արդեն ոչ մեկը չէր համարձակվում ձայն տալ պատվով նահանջելու օգտին։ Բոլորն էլ լուռ էին։

Կարա Մուսթաֆան, չոր, երկար մատներով, որոնց վրա շողշողում էին մատանիների արնագույն սուտակները, տկտրկացրեց սրի պսպղուն երախակալին.

— Ես ուշադիր ունկնդրեցի բոլորիդ։ Ձեզանից շատերը հոգ են տանում ոչ թե օսմանյան տերությունների հզորության ու պատվի, ոչ թե ալլահի ու իսլամի փառքի մասին, այլ իրենց հանգստության, իրենց ապահովության, իրենց սեփական գլուխների փրկության մասին, մի բան, որ վայել չէ փառաբանի գինվորներին։ Ձեր ուղղի ոգին թուլացել է, բայց նա կարթնանա, ոտքի կենի կռիվների ու հաղթանակների մեջ։ Ուստի փառաբանից ինձ տրված իշխանությամբ հրամայում եմ անհապաղ նախապատրաստվել Ձիգիրիների վրա կատարելիք գլխավոր գրոհին։ Այդ բաղաբը ես կջնջեմ երկրի երե-

սից, իսկ Չիգիրինի ամրոցի վրա իմ սեփական ձեռքով իսլամի դրոշը կբարձրացնեմ...

Փաշաները հասկանում էին վեզիրի հոգեկան կացութունը: Երկու տարի շարունակ Թուրքական զորքը չկարողացավ գրավել Չիգիրինը, էլ չենք խոսում ուսաների ու ուկրաինացիների դեմ վերջնական հաղթանակ տանելու մասին: Արև-վելքի ու Արևմուտքի մյուս պետությունների աչքում աղետալի կերպով ընկեր էր օսմանյան կայսրության հեղինակությունը: Սուլթանը մոլեգնել էր: Եվ կարա Մուսթաֆան, լավ հիշելով Իբրահիմ փաշային բաժին ընկած դառն ճակատագիրը, միայն հաղթանակ էր փափագում, Հաղթանակ, ինչ գնով ուզում է լինի: Միայն Չիգիրինի անկումը կարող էր փրկել նրա դիրքը բանակում և կառավարության մեջ, իսկ գուցե և զլուխը: Թե ինչ կլիներ հետո, Բարձր Դոնանը կհաջողվե՞ր արդյոք իր ձեռքում պահել Ուկրաինայից խլած հողերը թե ոչ, դա բոլորովին չէր հետաքրքրում ու չէր անհանգստացնում նրան: Խոսքը վերաբերում էր նրա համար ամենակարևորին՝ սեփական կյանքին ու սեփական բարեկեցությանը: Իսկ այստեղ, — փաշաները լավ գիտեին դա, — վեզիրը երբեք չէր տատանվել: Դեռ ավելին, նա գիտեր, որ Չիգիրինի անկումը, սուլթանի հույսերին հակառակ, բնավ էլ ցանկալի հաղթանակ չի բերի, բայց կփրկի զորքի պատիվը և իր սեփական պատիվը: Դրա համար էլ այդպես հաստատակամորեն իրենն էր պընդում:

— Ես կկամենայի իմանալ, մեծապատիվ Մյուրադ Գիրեյ, — որոշ դադարից հետո ասաց վեզիրը, — թո նորարները՝ Ռոմոզան փաշայի որդուն բերե՞լ են արդյոք Բախչիսարայից:

— Բերել են, մեծ վեզիր:

— Թող ինձ մոտ բերեն նրան... Իսկ հիմա բոլորդ գնացեք և նախապատրաստվեք նոր հարձակմանը, ալլահը ձեզ օգնական:

Փաշաները լուռ զլուխ տվեցին և, ետ-ետ գնալով, դուրս եկան վրանից:

¹ Նորար (թաթ.) — ծառա:

Շրջանցելով թաթարների կողմից գրավված Պավլիշը, գերված փառային հետման Սամոյլովիչի մոտ տանող գալստ-րոժցիների ջոկատը թեքվեց դեպի հյուսիս-արևմուտք: Զվենիգորայի ժուպանի տակ խշխշում էր թարմ գալարաթուղթը՝ Սերկոյի նամակը հետմանին:

Զալորոժցիները արագ էին գնում և հույս ունեին, որ հաջորդ առավոտյան կլինեն Չիգիրինում: Երկու ձիերի արանքում, բարձերով ծածկված բրեզենտե սթարին պառկած էր Սպիխալսկին: Արսենը նրան տանում էր Դուբովայա Բալկա, որտեղ, ինչպես հույս ունեի, Յաղուբը կարող էր կազակին ոտքի կանգնեցնել:

Ամենուրեք երևում էին թուրք-թաթարական ասպատակութիւնների հետքերը: Ամայացած ու մոխրացած գյուղեր: Տրորված, ոտնատակ արած արտեր: Ճանապարհներին թափված ձիերի ու կովերի կմախքներ, մարդկանց դիակներ: Վայրենացած շները ոռնում էին գայլի պես, մոտեցող ձիավորներից թաքնվելով չոր մացառուտների մեջ:

Զվենիգորան դետքեր ուղարկեց առաջ. թշնամու շրջիկ պահակախմբերը միշտ էլ շափշփում էին տափաստանը:

Իրիկնադեմին դետքերից մեկը, որ գնացել էր ձախ, հանկարծ ձիու գլուխը շրջեց և քառատրոփ սլացավ ետ դեպի ջոկատ:

— Թուրքերը, — դեռ հեռվից գոռաց նա, — էս կողմն են գալիս:

Զվենիգորան հասկացավ, որ թուրքերը իրենց նկատել են: Հիմա միակ հույսը կազակական արագուտն ձիերն էին: Բայց նրանք առանց դադարի ահագին տարածութիւն էին կտրել՝ Զերտովիկից գրեթե մինչև Թյասմին: Եվ այնուամենայնիվ...

— Առաջ, — տազնապահար գոչեց նա:

Ձիերի սմբակների տակ գվվաց, զրնգաց հողը: Շրջաց, խշխշաց չոր սիզախոտը: Կազակները շրջվեցին դեպի հեռավոր անտառ, որ երևում էր հորիզոնում:

Իսկ թուրքերը սլացան առաջկտրուկի: Նրանք մոտ հիսուն հոգի էին: Զվենիգորան ճանաչեց սպախիանների սև հագուստ-

ները: Բոլորն էլ, մեկ մարդու պես, ճերմակ ձիերին հեծած, գեղեցիկ ու ահեղ տեսք ունեին: Ասես սև ուրվականներ էին թռչում:

Զապորոժցիները դուրս քաշեցին սրերը, տափակ կողմով ձեռեցին ձիերի գավակները: Խեղճ կենդանիները սեղմեցին ականջները, պարանոցները երկարացրին ու էլ ավելի արագ սլացան: Բայց տարածությունը հետապնդողների միջև գնալով կրճատվում էր: Թուրքական վարդաձիերը համառորեն հասնում էին փախչողներին:

— Բատկո Կոռնեյ, քշեք դեպի անտառ: Փրկեք պան Մարտինին: Տարեք ուղիղ Դուբովայա Բալկա... Իսկ փաշային՝ հեռմանի մոտ,— ընթացքից գոչեց Զվենիգորան: Ես մի քանի մարդկանցով կպահեմ թշնամուն:

— Կկորչես Արսեն:

— Ճակատագրից ձիով էլ չես փախչի, մեկ է... Քշեք... Ով ուղում է՝ թող մնա ինձ հետ:

Զոկատի մեծ մասը դանդաղեցրեց ընթացքը:

— Ետ դարձեք ամբողջ թափով, սրընթաց: Զարկեք ոսոխին, տղերք: Առա՛ջ:

Զապորոժցիները սրընթաց հորձանքով նետվեցին սպախիաներին ընդառաջ, մորմի նման ընկան նրանց վրա: Մեկ րոպե անց երկու ջոկատները դարկվեցին միմյանց: Ծառուկան ձիերը, վրնջացին ձիգ ու տագնապալից: Փայլկտացին սրերը: Ընկան առաջին սպանվածներն ու վիրավորները: Արսենը ոգևորեց ընկերներին.

— Տղերք, կաղակի ղենքը ամոթով շթողենք: Կովենք մինչև վերջին մարդը...

Սպախիաները շատ էին: Յուրաքանչյուր կաղակի վրա երկու-երեք թուրք էր հարձակվում: Որոտում էին ասորձանակները, շաշում էին սրերը: Ցայտում էր արյունը, ճոթճոթում էին ոսկորները: Փոխադարձ ատելությունն այնքան մեծ էր, որ նույնիսկ վիրավորները, ձիերից ցած ընկնելիս, հարձակվում էին հակառակորդների վրա, թամբերից ցած բերում նրանց, և մեռնում էին ձիերի սմբակների տակ:

Արսենը կոպում էր դատապարտյալի մոլեգնությամբ ու ինքնամոռացությամբ, ետ էր մղում իր վրա տեղացող հարվածները, ինքն էլ մահացու հարվածներ էր հասցնում թըշ-

Նամուն, պաշտպանում իր ընկերներին: Նրա հզոր ձին, սան-
ն ամենաաննշան շարժումին հնազանդ, հեծյալին տանում
և կովի ամենավտանգավոր տեղը, կրծքով նետվում էր
Ֆինամինների վրա ու ատամներով պատաստոտում նրանց: Իսկ
չոր միջոցին Արսենի թուրը անխոնջ ու անդադար փայլատա-
րում էր թշնամիների գլխավերևում: Քանի՞-քանի սպախիա-
ներ նրա թրի համբ տեսան:

— Շեյթան, Շեյթան,— ճղավում էին նրանք, ջանալով
Նովից կամ թիկունքից մահացու հարված հասցնել կազա-
նին: Սակայն Արսենը հաջողութեամբ խույս էր տալիս նրա-
նից: Եվ հայտնի չէ, թե ինչն էր փրկում նրան. բա՞խտը, թե
հորձն ու քաջությունը:

Բայց ուժերը խիստ անհավասար էին, և դապորոժցիները
էկր մյուսի ետևից ցած էին ընկնում ձիերից: Ահա մնացին
— ողեն հինգ հոգով: Փախչել չէր կարելի, ասենք փախչելու
տեղ էլ չկար: Բոլոր կողմերից նրանք շրջապատված էին թրշ-
նամիներով: Դեռ ավելին. տափաստանից օգնության հասավ
սպախիաներին. ևս մի ջոկատ եկավ սրընթաց, և նոր ժա-
նանած դինվորները հենց ընթացքից մարտի մեջ մտան:
Իրեր կազակ էլ ընկան: Մնացին երկուսով՝ Արսենն ու Պիվե-
նը: Նրանց մոտենալ չէին կարողանում: Երկուսն էլ հսկա, գո-
բեղ ուժի տեր, անխոնջ ու խիղախ, թրերով ասես օղակ էին
դժում իրենց շուրջը, որից ներս մտնել ոչ մի սպախիա չէր
համարձակվում:

Մի քանի նոր ժամանած դինվորներ վրա տվեցին Արսե-
նին, բայց շղիմանալով նրա հուժկու հարվածներին, փախան
օանուցիր:

Նրանց կանգնեցրեց գեղեցիկ, մոխրագույն հովատակին
հեծած աղայի ձայնը:

— Ո՞ւր եք փախչում, վախկոտ շներ: Կտոր-կտոր արևք
էդ գյավուրին:

Արսենը նույնիսկ ասպանդակների վրա բարձրացավ. ճա-
նաչեց շամիդի ձայնը:

Ահա թե ում ջոկատն էր օգնության եկել սպախիաներին:
Բոլոր ճոճելով աղան ևտ դարձրեց փախչողներին և քաջախե-
րեց մյուս դինվորներին՝ իրենց բախտը փորձելու երկու կա-
զակների դեմ:

— Հե՛յ, Համիդ աղա, կեղտոտ շուն: Դուրս արի կովէն՝
երկուսով: Երես առ երես: Մի՛ թաքնվիր գինվորների թիկուն-
քում, — ձայն տվեց Արսենը:

Համիդն էլ ճանաչեց կազակին: Նրա ուռած դեմքը կա-
կարմիր կտրեց, դեղնավուն սպիտակուցներով դարչնագույն
աչքերը քիչ մնաց կապիճներից դուրս ընկնելին:

— Զվենիգորա: Անհավատ խոզ, — աղան շնչահեղձ եղաւ
իրեն համակած շարությունից և ուրախությունից: — Անձնա-
տուր եղիր:

— Դուրս արի, ուժերս չափենք, Համիդ: Ինչպես վայել է
խսկական գինվորներին: — Արսենը հույս ուներ կպչել Համի-
դի ինքնասիրությանը, ազգակիցների առջև վիրավորել նրա
հպարտությունը, որպեսզի հարկադրի նրան՝ մենամարտ
բռնվել: — Թեև վաղուց գիտեմ, որ դու վախկոտ ես, ինձ հե-
կովի դուրս չես գա, բանի որ հույս շունես քեղ վրա: Վաղու-
դու էլ գինվոր չես, այլ՝ ճարպակալած ներքինի: Այն էլ չախ-
կալի պես նենգ ու խարդախ:

Սպախիաները, շփոթմունքի մեջ ընկած, օղակաձև շրջ-
պատելով կազակներին, մի պահ դադարեցրին հարձակու-
մանը: Սպասում էին, թե ինչ կպատասխանի Համիդը: Ճշմարիտե-
ասած, նրանք ուրախացան, որ բանն այդպիսի ընթաց-
ստացավ. ոչ ոք չէր ուզում այդ շեյթանի թրի բերանն ընկ-
նել:

Բայց Համիդն ուրիշ բան էր մտածում:

— Օղապարանները գցեք: Կենդանի բռնեք դրան, — գո-
ուաց նա գինվորներին: Եվ դիմեց առաջին ջոկատի հրամա-
նատարին. — Ջաբար աղա, սա՛րո սվարն է, բայց ի սե-
ալլահի, ինձ տուր նրան: Էդ գլավուրը իմ նախկին ստրուկն է:

— Հաճույքով քեղ եմ տալիս, Համիդ աղա, — պատաս-
խանեց ջահել, գեղեցկատես Ջաբար աղան:

— Շնորհակալ եմ, Ջաբար աղա: Ալլահը թող կատարի բ-
թուր ցանկությունները... Հե՛յ, ասկյարներ, առաջ: Բռնեք էդ
գլավուրին:

Մի բանի օղապարաններ շաշեցին կազակների գլխավերե-
վում: Սրանք թրերով կտրատեցին պարանները: Այնժամ Հա-
միդը գոտուց դուրս քաշեց ատրճանակն ու կրակեց Պիվենե-
վրա:

— Օ՛, նզովված շուն, — բացականչեց երիտասարդ կա-
շակն ու ձիուց ցած տապալվեց:

Արսենը մեն-մենակ մնաց հարյուրավոր թշնամիներին
չէմ: Շրջափակված, ծուղակն ընկածը պես: Նորից նրա գըլ-
նավերևում գալարվեցին օղապարանները: Դրանցից մի քա-
նիսր նա հասցրեց կտրատել: Բայց հանկարծ աչքերը մթնե-
րին. մի զարհուրելի ուժ կոկորդը սեղմեց ու պոկեց թամբից:
Պուրը ձեռքից բաց թողնելով՝ կազակը ծանրորեն տապալվեց
չէտին:

Իսկույն օղապարանը թուլացրին և ոտքի կանգնեցրին
նրան:

Համիդը ձիուց ցած թռավ ու կանգնեց Արսենի դիմաց.

— Այնուամենայնիվ դու շագատվեցիր ինձնից, ստորուկ:

Արսենը շպատասխանեց: Ինչ կարիք կար: Մի՞թե ինքը
առաջին անգամ էր նայում մահվան աչքերին: Սովոր էր... Մի
միտք էր անհանգստացնում. ընկերները կկարողանա՞ն արդ-
յոք հասնել անտառ: Նայեց անտառի կողմը: Հեռվում, իրիկ-
նախին մութի մեջ մի փոքրիկ, հազիվ նկատելի փոշու ամպ
տեսավ: Կփրկվե՞ն: Նույնիսկ եթե հիմա սպախիաներն ընկ-
նեն նրանց ետևից, միևնույն է, կփրկվեն... Բայց թուրքերը
կամ չնկատեցին փախչողներին, կամ էլ բավարարվեցին ար-
տունտ հաղթանակով և շաճապարեցին ձի հեծնել: Ոմանք
փրավորների վերքերն էին կապում, մյուսները վերջ էին
բախիս դեռ կենդանի մնացած կազակներին, երրորդները,
Համիդին ու գերված գապորոժցուն շրջապատված, հետաքըր-
բրրությամբ նայում էին, թե ինչ է լինելու:

— Կախեք շանը, — առանց երկար-բարակ մտածելու
նրամայեց Համիդը՝ մատնացույց անելով բլրակի ստորոտում
կանգնած մենավոր ծառը:

Դա բոլորի սրտով էր:

— Կախե՛լ, կախե՛լ, — լսվեցին չորս կողմից:

Երկու առավել ժիր սպախիաներ պարանները ձեռքներին
սլացան դեպի ծառը: Մյուսները նրանց ետևից քարշ տվին
կազակին: Ինչ-որ մեկը բոթեց Արսենի մեջքին, մյուսը, առաջ
անցնելով, այնպես ուժգին քաշեց նրա ժուպանից, որ կո-
նակները պոկվեցին ու թռան դեսուղեն:

Սպիտակ մագաղաթը ցած ընկավ ծոցից:

— Աղա, սրա մոտ նամակ կա,— ձայնեց մի ջահել, անբեղ ասկյար, գետնից վերցնելով մագաղաթը:

— Նամա՞կ:— Համիդը խլեց թուղթը, բացեց և, տեսնելով, որ թուրքերեն չի գրված, հայացքը հռոնց Զվենիգորային:— Ո՞ւմ է գրված:

— Մեծ վեզիր Մուսթաֆային, ավազը թող պահի-պահի: պանի նրան,— առանց երկար-բարակ մտածելու պատասխանեց Արսենը:

— Ի՞նչ,— Համիդը ակներև շշմեց: Թուղթը շուտուտուտվեց ձեռքերի մեջ, անմտորեն նայեց Զարար աղային, որ Համիդից ավելի պակաս չէր ապշած:— Ո՞ւմից է:

— Կոշի ատաման Սերկոյից: Ուուու Շեյթանից, ինչպե՞ղուք եք ասում:

Սպախլանները լուռ իրար նայեցին: Նրանց շփոթության մեջ գցեց նամակը, որն այնպես անսպասելիորեն փոխեց ողջ իրադրությունը, զարմացրեց մանավանդ այն, որ կազակ: հրաշալի թուրքերեն էր խոսում: Արդյո՞ք ճակատագրական սխալ չկատարեցին, որ ջախջախեցին կազակական ջոկատը և բռնեցին հենց Ուուու Շեյթանի պատվիրակին: Դրա համար Կարա Մուսթաֆան դաժանորեն կպատժի: Փառք ավահին, որ գոնե վերջին բռնակին նամակի մասին իմացան և հիմա կհանձնեն՝ ում որ պետք է:

Ե՛վ Համիդը, և՛ Զարար աղան լուռ էին: Զարար աղան սփրթնած էր. ինքն էր հրամայել հետապնդել և ոչնչացնել զապորոժցիների ջոկատը: Ինքն էլ պիտի պատասխան տար վեզիրին:

Վերջապես Համիդը խայտոեց լուռթյունը:

— Ի՞նչ է գրում Ուուու Շեյթանը:

Նրա ձայնը զողաց: Համիդին լավ հայտնի էր, որ սուլթանը ուզում է իր կողմը գրավել զապորոժցիներին, և որ նրանք պատասխանել են մերժումով: Բայց, գուցե, զապորոժցիները փոխել են իրենց որոշումը: էդ կապկտրածներից ամեն ինչ կարելի է սպասել: Համիդն անմիջապես գլխի բնկավ, որ Զվենիգորան նորից դուրս է պրծնում իր ձեռքից: Ա՛խ, ինչո՞ւ ինքը էն մյուսին սպանեց, այլ ոչ թե էս անիծված գյավուրին... Վախն ու շարունթյունը ծվատում էին Համիդին, և նա չգիտեր, թե դրանցից որը կհաղթի:

— Դե, ուրեմն, ինչ է գրո՞ւմ Ուոուս Շեյթանը:

— Ես իրավունք չունեմ ձեզ համար կարդալ վեզիրին սեղված նամակը, — կարճ կտրեց Արսենը, զգալով, որ մինչև շաոն ընկած տարածությունը, որից ուղում էին կախել իրեն, հավականին մեծացել է: — Դրա համար վեզիրը կհրամայի էտրեկ և՛ իմ, և՛ ձեր գլուխները: Զապորոժցիները որոշել են շաոայել պայծառափայլ սուլթանին, և կոշկոջը, հավանաբար, այդ մասին տեղեկացնում է մեծ վեզիրին:

Համիզը կռնչաց: Նրա լեզուն կապ ընկավ, իսկ շարուբյունից ասես խելքը թոցրեց:

— Դու ցնդել ես, զյավուր: Թե որ էզպես էր, հասլա էլ ինչո՞ւ էիր փախչում: Ինչո՞ւ էիր կոպում մեր դեմ:

— Բա էլ ինչ պիտի անեինք: Ոչ թե մենք, այլ դուք հարձակվեցիք մեզ վրա: Մենք միայն պաշտպանվում էինք:

— Ես ինքս նամակը կհանձնեմ վեզիրին, — հանկարծ հաստատ հայտարարեց Համիզը՝ վճռելով հանդուգն արառքի շունկու: — Իսկ դու, շոն, կհատուցես էսքան դինավորների մահգան համար, որոնց սպանեցիր քո շեյթանների հետ: Հե՛յ, էսրգդի, սրան կախեք ծառից: Եվ լավ վերև կձգեք, որ շուտ, էներկայանա արևահին:

— Զեռք չտաք, — առաջ եկավ Զաբարը: — Համիզ աղա, շեյթանը խելքդ գլխիցդ առել է, թշվառական: Մտքինդ ի՞նչ է: Առանց այդ էլ վեզիրը բարկացած է մեզ վրա: Ի՞նչ կասի ես. երբ հատնի դառնա, որ մենք, իմանալով էս կաղակի ով լինելը, կախել ենք նրան... Հեժնե՛լ ձիերը... Հեժնե՛լ ձիերը: Եվ ուղիղ դեպի վեզիրի գորակայան: Հույսներս դենք նրա որորմածության վրա, և թող արևհը մեզ օղնական լինի:

3

Կարա Մուսթաֆան հուսահատության մեջ էր: Զիդիրինի վրա կատարած ես մի «գլխավոր» գրոհ անհաջող էր անցել: Մուհամմեդի հաղարարի որդիներ այդ օրը բնկել էին խոր քամատներում, պարիսպների տակ փորված խանդակներում և նեց քաղաքի պարիսպների վրա: Այլևս հարկ չկար մտածելու կիևի և Աջափնյակի վրա կատարվելիք արշավանքի

մասին, որ հոգում խորքում փայտացում էր վեզիրը: Չգիտե
ինչու գումակը չէր վերադառնում Կորաբելնայա գետակից:

Նզովյայ քաղաք: Մնացել են միայն ավերակները, մեկ էլ
ամրոցը՝ բարձունքի վրա, բայց էլի դիմանում է: Կարծում
էր այսօր էլ ոչ մի հրաշք չի փրկի նրան կործանումից... Բայց
չէ, դիմացավ... Գլավուր ուռուսները մեռնում են, բայց չեն
հանձնվում: Ռոմոդան փաշան և հետման Սամոյլովիչը կա-
րող են ուրախանալ իրենց հաղթանակով... Ուրախանան, Չլ.
դեռ շուտ է: Ինքը վեզիրը հարված կհասցնի նրանցից մեկի
սրտին, այնպես տանջալից ու ահավոր հարված, որից ինքը
շեյթանն էլ կսարսռա:

Վեզիրը ծափ զարկեց: Ներս մտավ բարապանը:

— Իշխան Անդրեյին՝ Ռոմոդան փաշայի որդուն, բերե՛լ
են արդեն:

— Այո, մեծ վեզիր: Խանի նոքարները հենց նոր ժամ-
նեցին գերի իշխանի հետ:

— Բերեք այստեղ:

Երկու ասկյարներ ներս բերին շղթայակապ, դեղնած, հա-
լումաշ եղած գերուն: Գրեթե տասը տարի առաջ պատանի
Ռոմոդանովսկին գերի էր ընկել թաթարներին: Խանը Ստամ-
բուլի ճնշման տակ բաց շթողեց նրան, թեև վոյեվոդա Ռո-
մոդանովսկին որդու դիմաց առաջարկեց բավականին մեծ
գումար, կամ էլ իր մոտ գերության մեծ գտնվող զրիմցի
մուրզաներին:

Վեզիրը հոնքերը վեր քաշեց. ասկյարները, գլուխ տալով,
դուրս գնացին:

— Դու թաթարերեն հասկանո՞ւմ ես, իշխան:

— Մի քիչ, — թեթևակի խոնարհվեց իշխան Անդրեյը:

— Գիտե՞ս, որ քո աթան՝ Չիզիրինում է:

— Գիտեմ:

— Վաղվանից դու ազատ կլինես, եթե հորդ գրես, որ Չի-
զիրինը հանձնի... Այսինքն՝ ազատություն կստանաս այն
բանից հետո, երբ վոյեվոդան քաղաքը կհանձնի:

— Ես այդպիսի բան չեմ գրի, մեծ վեզիր:

— Քեզ կստիպեմ, որ գրես:

1 Աթա (թուրք.) — հայր:

— Նույնիսկ այլահը չի կարող ստիպել:

— Այդ դեպքում դու կմեռնես զարհուրելի մահով:

— Կմեռնեմ: Մենք բոլորս էլ մահկանացուներ ենք:

Վեզիրը ապշանքով նայեց գերուն: Խեղապահա՞ս է, թե ֆ:սնատիկոս:

Այդ ժամանակ վրանի վարագույրը թափով բացվեց, ներս մտավ աղան: Գլուխ տվեց:

— Մեծ վեղիր, սպախիտների ջոկատի գերի է վերցրել սպառոժցի մի կազակի, որի մոտ գտել են Ուռուս Շեյթան Սերկոյի կարևոր նամակը:

— Նամակն ինչի՞ մասին է:

— Ասում են այն մասին է, իբրև թե զապորոժցիներն ուղում են ծառայել պայծառափայլ սուլթանին:

— Ներս բեր կազակին... Կաց, ո՞վ է նրան գերի վերցրել:

— Զաբար աղան ու Համիդ աղան:

— Նրանք էլ թող ներս գան:

Աղան ծափ զարկեց. ասկյարները ներս բերին Զվենիգորային: Հետո ներս եկան Համիդն ու Զաբար աղան և խոնարհվեցին վեզիրի առաջ: Զվենիգորայի ձեռքերը կապկրպված էին, ուստի նա վեզիրին ողջունեց թեթևակի գլուխ տալով:

— Պատվիրակն ինչո՞ւ է կապկրպված,— հոնքերը կիտեց վեզիրը:

Զաբար աղան ուղեց ինչ-որ բան ասել, բայց Համիդը կանխեց նրան, որովհետև ինքն էլ պնդել, որ կազակին կապկպեն:

— Ես սրան չեմ վստահում, մեծ վեզիր: Սա իմ նախկին ստրուկն էր, գերին, որ խռվություն բարձրացրեց, վառեց իմ դաստակերտն ու փախավ: Ուղղափառների մեծ տիրակալ, խնդրում եմ հետո սրան ինձ տաս, որպեսզի ես ճշմարիտ դատ տեսնեմ,— ասաց Համիդը էլ ավելի խոնարհվելով:

Կարա Մուստաֆան ցրված լսեց նրան:

— Որտե՞ղ է նամակը:

Զաբար աղան նրան մեկնեց սպիտակ գալարաթուղթը:

— Բայց ո՞վ կկարդա սա: Կանչեք դրագոմանին¹:

¹ Դրագոման (ֆրանս.) — Արևելքում դեսպանատանը կից թարգմանիչ:

— Ես կկարդամ,— առաջ եկավ Զվենիգորան:

— Օ՛ր, ուրեմն դու թուրքերեն էլ գիտես:

— Այո, մեծ վեղիր:

— Զեռքերն արձակեք:

Յաթաղանը փայլեց, և պարանն ընկավ ցած:

— Կարդա,— հրամայեց Կարա Մուսթաֆան:

Զվենիգորան վերցրեց թուղթը, մի պահ հապաղեց, մտորելով, թե ինչ անի: Թարգմանի՞ իսկական տեքստը, թե՞ վեզիրին էլ խաբի, ինչպես Համիդին ու Ջաբարին խաբեց, Եթե առաջինն անի, ապա, անկասկած գլխից կզրկվի, բայց փոխարենը ծանր հարված կստանա վեզիրը, երբ կիմանա, Կրզը Քերմենի անկման և թուրքական նավատորմի ջախջախման մասին... Եթե երկրորդն անի, ապա մահապատիժը կարճ ժամանակով կհետաձգվի, մինչև որ կգա դրագոմանը և ստույգ կթարգմանի նամակը... Իսկ հետո՞... Հետոն, միևնույն է, մահ է... է-է՛, ինչ լինում է, թող լինի: Կարդա մեջ որ կա, Արսեն:

Նա բռնեց մազաղաթը և սկսեց բարձրաձայն թարգմանել, հետևելով վեզիրի դեմքի արտահայտությունը: Սկզբում Կարա Մուսթաֆան ունկնդրում էր տարակուսանքով, հետո սկսեց կարմրատակել: Կրզը-Քերմենի անկո՞ւմը: Զինամթերքով ու պարենով բարձած նավատորմը: Դա արդեն զարհուրելի նորություն էր, ինչպես որոտը պարզ երկնքում...

— «... Հուլիսի 12-ի ցերեկը Կրասնյակովի դիմաց,— շարունակեց Զվենիգորան,— Կորարելնայայի գետաբերանում, հանկարծակի վրա տվինք թուրքական նավերին ու գրավեցինք դրանք, միայն մի նավ փրկվեց մեր ձեռքից՝ առաջատաներով ու բազում թիավարներով... Աղատեցինք բոլոր գերիներին, վերցրինք հինգ հարյուր գերի, խլեցինք յոթ թրնդանոթ, երեսուն դրոշակ և ամբողջ պարենամթերքը: Գնրի վերցրինք նմանապես նավապետ փաշային... Եսիրը, որ նախատեսված է պայծառափայլ հետմանիդ համար, թողեցին: Կարդիշինում, հսկողություն տակ... հավատարիմ մարդկանց հետ փաշային քեզ եմ ուղարկում այն նպատակով, որպեսզի ընծայես Մոսկովի ողորմած թագավորին... Իսկ ես եղբարությունյան հետ գնում եմ Բուզ՝ թուրքական կամրջի և ուղեկա-

լի վրա, որը, թե աստված տա, կջախջախենմ... Կոշի ատա-
ման Սերկո»:

— Ի՞նչ է նշանակում սա,— գոռաց վեզիրը:— Դու ինձ
խաբեցիր, գյավուր:

— Ոչ, մեծ վեզիր: Ես խաբեցի ոչ թե քեզ, այլ իմ ոխե-
րիմ թշնամի Համիդին: Իսկ քեզ համար կարդացի կոշուոյի
խկակսն նամակը:

— Իսկ դու գիտե՞ս քեզ ինչ է սպասվում:

Համիդը առաջ եկավ:

— Ուղղափառների մեծ տիրակալ, թույլ տուր ինձ վեր-
ջույնս էս շան հաշիվը մաքրեմ: Խնդրում եմ այդ շնորհն
անես ինձ, երեք աշխարհամասերի վեհապետի իմաստուն
խորհրդական:

Ջայրացած Կարա Մուսթաֆան կարծես նոր միայն հի-
շեց, թե վրանում կողմնակի մարդիկ կան, որոնք շպետք է
իմանային այդ դառն լուրերը: Եվ գոռաց.

— Դո՛ւրս կորեք բոլորդ էլ: Եվ մոռացեք, ինչ-որ լսեցիք
այստեղ:

Համիդը, Ջաբար աղան, ինչպես նաև պահակները, ետ-
ես գնալով ու շարունակ գլուխ տալով, անձայն դուրս եկան
վրանից:

Իշխան Անդրեյը հավեց Արսենի ուսին և կամացուկ ասաց.

— Շնորհակալութիւն բարի լուրերի համար, կադակ:
Ուրախացրիր ինձ:

— Ո՞վ ես դու,— Արսենը կարեկցանքով նայեց շղթա-
յակապ գերուն:

— Իշխան Անդրեյ Ռոմոդանովսկին:

— Ի՞նչ,— բացականչեց Արսենը:— Դու բոյարին Ռոմո-
դանովսկու տղա՞ն ես:

— Այո: Դու ճանաչո՞ւմ ես հորս:

— Էն էլ ո՞նց: Ես մի քանի օր առաջ եմ հանդիպել նրան
ու խոսել հետը:

Վեզիրը լուռ հետևում էր նրանց զրույցին: Չէր ընդհա-
տում, լսում էր օտար խոսակցութիւնը և լարված մտածում
ինչ-որ բանի մասին: Նրա աչքերը վառվում էին: Խոր կնճիո-
ներ էին հավաքվել բարձր, թուխ ճակատի վրա:

Նա անպատասխան ծափ գարկեց: Ներս մտավ բարապանը:

— Տարեք գերուն:

Իշխան Անդրեյին վրանից դուրս տարան:

Վեզիրը տեղից ելավ, մոտեցավ Աթսենին: Իբ նեղ, սև աչքերի շամփրող հայացքով երկար, լուռ նայեց նրան: Վերջապես ասաց:

— Դու բախտավոր աստղի տակ ես ծնվել, գյավուր, Փառք տուր ալլահին:

Արսենը տարակուսանքով նայեց վեզիրի ծակող աչքերին, չհասկանալով, թե նա խոսքը ուր է ծռում: Իսկ վեզիրը շարունակեց.

— Դու գիտե՞ս, ով է այս գերին:

— Գիտեմ: Վոյեվոդա Ռոմոդանովսկու դժբախտ որդին է:

— Այո, Ռոմոդան փաշայի որդին է... Այսօր նրա ճակատագիրը սերտորեն կապվեց քո ճակատագրի հետ:

— Ինչպե՞ս:

— Հիմա ես նամակ կգրեմ Ռոմոդան փաշային, իսկ դու կտանես:

— Ուրե՞մն...

— Այո: Դու ազատ կլինես: Իմ մարդիկ քեզ կտանեն մինչև ուռուների բանակատեղը:

Կարա Մուսթաֆան անցավ վրանի խորքը: Մոտեցավ երթային փոքրիկ սեղանին, որտեղ աշտանակի մեջ վառվում էր մոմը: Վերցրեց երկար ճերմակ փետուրը, մտախոհ դուրս նայեց փոքրիկ քառակուսի լուսամուտից, հետո փետուրը թափով շարտեց սեղանին և շուռ եկավ կազակի կողմը:

— Ոչ, չեմ գրի: Ռոմոդան փաշային բերանացի կհաղորդես... Բառ առ բառ... Լսիր ուշադիր:

4

— Անհավատալի է,— բացականչեց բոյարին Ռոմոդանովսկին՝ վեր թռչելով նրբագեղ կարմիր թավշյա աթոռի վրայից: Բռյարինը հետմանի մոտ էր, իսկ վերջինս սիրում էր ճոխություն ու հարմարավետություն. նույնիսկ արշավանքների ժամանակ նա իր հետ տանում էր թանկարժեք իրեր՝

բաղկաթոռներ, մահճակալներ, զգեստներ:— Անհավատալի է: Դու տեսա՞ր որդուս: Հենց իր՝ Կարա Մուսթավայի վրան՞: Ուրեմն թաթարները այնուամենայնիվ տեղի են տվել թուրքերի համառ պնդումներին, իշխան Անդրեյին հանձնել են նրանց: Իսկ ի՞նչ ասաց վեզիրը:

Ռոմոդանովսկին հուզված էր: Նյարդայնորեն բաշքշում էր մորուքը, ծանր էր շնչում: Մոտեցավ, ձեռքը դրեց Արսենի ուսին.

— Խոսիր, բոլորն ասա, ոչինչ մի՛ թաքցրու: Ես գլխի եմ ընկնում, որ դու այսօր ծանր լուր ես բերել ինձ: Բայց դառը ճշմարտությանը ավելի լավ է, քան բաղցր սուտը:

— Բոյարին, ինձ համար նույնպես դժվար է հաղորդել վեզիրի խոսքերը, բայց պարտավոր եմ: Էնպես որ ի սեր աստծո ներող կլինես, եթե իմ խոսքերը ցավ պատճառեն քեզ,— հայացքը խոնարհած ասաց Զվենիգորան:

Ռոմոդանովսկին լուռ գլխով արեց, իսկ Սամոյլովիչը, ալեհեր հոնքերը խոժոռած, խստորեն նետեց.

— Դե խոսիր:

— Վեզիրն ուզում էր նամակ գրել, բայց փոշմանեց: Խորամանկ մարդ է: Վախեցավ իր մտքերը թղթին վստահել: Ուստի որոշեց ամեն ինչ բանավոր հաղորդել: Եվ հենց դա էլ ինձ փրկեց մահից: Վեզիրն ասաց. «Հաղորդիր Ռոմոդան փաշային, որ իր տղան իմ ձեռքում է: Դու նրան տեսար և կարող ես հաստատել բոյարինի մոտ, որպեսզի նա հավատա ինձ... Իշխան Անդրեյը գեռ երիտասարդ է և ապրել է ուզում: Ռոմոդան փաշան հնարավորություն ունի փրկելու իր որդուն, եթե սիրում է նրան... Բայց դրա համար նա պետք է հանձնի Զիզիրին: Ես չեմ պահանջում, որ Ռոմոդան փաշան ու հետմանը իրենց ղորքերով անձնատուր լինեն: Գիտեմ, որ նրանք երբևր այդ բանը չեն անի: Դա չափազանց մեծ հատուցում կլիներ, նույնիսկ երեք որդիների գլխի համար: Սակայն Զիզիրին, որտեղ այլևս ոչինչ չկա պաշտպանելու, կարող են հանձնել, առանց իրենց վնասելու: Իսկ ինձ հարկավոր է գրավել թեկուզև քաղաքի փլատակները, քանզի ես չեմ ուզում Իբրահիմ փաշայի բախտին արժանանալ...» Այսպես ասաց վեզիր Մուսթաֆան:

Արսենը լռեց: Ռոմոզանովսկին դժվարությամբ բարձրացրեց գլուխը:

— Է՞լ ինչ ասաց վեզիրը: Ամեն ինչ ասա:

— Նա ասաց. «Յթե վաղը կհսօրին ես Չիզիրին շմտնեմ, ապա կհրամայեմ ողջ-ողջ քերթել իշխան Անդրեյի գլուխը, մաշկը լցնել խոտով և ուղարկել ծերունի Ռոմոզան փաշային որպես նվեր... Ներիր, բոյարին, ես կրկնում եմ նգովյալ անօրենի խոսքերը:

Ռոմոզանովսկին սեղմեց քունքերը, ծանր տնքաց.

— Տեր աստված, ինչի՞ համար ես այսպիսի փորձության ենթարկում ինձ:

Սամոյլովիչը գրկեց նրա ուսերը, նստեցրեց մահճակալին և մի դավաթ գինի մատուցեց:

— Գրիգորի Գրիգորեիչ, հանգստացիր, սիրելիս: Ամեն ինչ լավ կլինի: Դու միայն խորամուխ եղիր վեզիրի խոսքերին և կզգաս, որ նրանք կօրցրել են հաղթանակի նկատմամբ ունեցած հավատը: Կարա Մուսթաֆան հենց այսօր էլ կնահանջեր, բայց վախենում էր սուլթանի զայրույթից: Նրան հարկավոր է թեկուզ մեկ օրով մտնել Չիզիրին: Դե ուրեմն թող վերցնի:

Չվենիգորայի դեմքին դարմանք ու տարակուսանք նկատելով՝ հետմանը ձեռքով հասկացրեց նրան, որ դուրս գնա. ապա, իջեցնելով ծանր վարագույրը, շարունակեց իր միտքը:

— Չիզիրինը հիմնովին ավերված է: Օրեցօր նրա պաշտպանությունն ավելի է դժվարանում:

— Միևնույն է, թուրքերը գրավել չեն կարողանում, — առարկեց իշխանը: — Այսօրվա գրոհն էլ նախորդների պես անհաջող վերջացավ... Ի դեպ ավերված է միայն բաղաբը, իսկ ամրոցը գրեթե անվնաս է: Այնտեղ շատ թնդանոթներ, վառող ու պարենամթերք կա...

— Սակայն որդուդ մի՞ մոռանա, բոյարին... Իմ սրտից էլ արյուն է գնում հենց միայն այն մտքից, որ Չիզիրինը հարկավոր է հանձնել, բայց ինչ կարող ես անել... Չիզիրինը ոչ Ուկրաինա է, ոչ էլ Մոսկվա: Ամրոցը կպայթեցնենք, բաղաբը կայրենք, և այն ժամանակ Կարա Մուսթաֆան, ճերմակաթույր ձին հեծած, թող բարձրանա Չիզիրինի լեռը: Դա այնքան էլ պատվաբեր չի լինի նրա համար:

— Իսկ ցա՞րն ինչ կասի,— բացականչեց բոյարինը:
Երևում է, հոգու խորքում նա համամիտ էր հետմանի
փաստարկներին այն հարցում, որ թուրքերի կողմից Չիզիրի
նրանք կնվաճեն Ուկրաինան, առավել ևս՝ Ռուսաստանը: Բայց նա վախենում
էր, թե Չիզիրիի հանձնումը, որը կփրկեր իշխան Անդրեյի
կյանքը, և՛ Ուկրաինայում, և՛ Ռուսաստանում կգիտվեր որ-
պես ուսական և ուկրաինական դորբերի պարտութուն:

— Իսկ ի՞նչ կասի ցարը, եթե թուրքերը նահանջին,—
իրենը պնդեց Սամոյլովիչը:— Որ նրանք կնահանջին՝ ես հա-
մոզված եմ: Հիմա էլ նրանք միայն ձիու մսով են սնվում:
Չապորոժցիները կտրել են բոլոր ճանապարհները, գրավել
են նավատորմը, և համարյա ոչ մի մատակարարում չկա:
Մենք ունենք հարյուր քսան հաղարանոց գորթ, ունենք մեծ
բանակությամբ վառող, ռումբ, պարենամթերք... Վեղիբը դի-
տի այդ մասին: Նրան մի ճանապարհ է մնում միայն՝ փախ-
չել դեպի հարավ, Թուրքիա: Իսկ դա վերջիվերջո մեր հաղ-
թանակն է: Եվ գործն էլ դրա համար շնորհակալ էլինի, քան-
զի դրանով հաղարավոր ստրելեցների ու կազակների կյանք
կփրկենք: Դե, վճռիր, Գրիգորի Գրիգորևիչ:

Ռոմոդանովսկին երկար ժամանակ լուռ էր: Հետո հոգոց
հանեց և խոսեց խուլ ձայնով, ասես արտասվում էր.

— Հետման, ես գնահատում եմ իմ հանդեպ ունեցած քո
բարյացակամութունը: Սակայն քեզ հետ համաձայնել չեմ
կարող... Վաղը կամ մյուս օրը Կարա Մուսթաֆան նոր գրոհ
կսկսի, և մենք պետք է պատրաստ լինենք դրան, որպեսզի
կարողանանք ետ մղել: Ուստի այսօր ես ստրելեցների թարմ
գունդ կբերեմ Չիզիրին, իսկ դու, խնդրում եմ, սերդյուկների
գնդով ամրացրու կայազորը:

Սամոյլովիչը ասես թնաթափ եղավ: Այդ հրամանը իշ-
խանորդի Անդրեյի մահվան դատավճիռն էր: Հետմանը տխուր
օրրեց ալիհեր գլուխը, ապա մոտեցավ, գրկեց բոյարինին:

Ռոմոդանովսկին երկար ժամանակ մնաց անշարժ, ղեմ-
բր ձեռքերով ծածկած, հետո դառը հոգոց հանեց ու խուլ
ձայնով մրմնջաց.

— Ներիր ինձ, որդյակ իմ...

Վոյեվոդայի վրանից դուրս գալով՝ Արսենը որոշ ժամանակ կանգնած մնաց ավազաբլրին, որտեղից երևում էին Չիգիրինը և Թյասամինի մյուս ափին գտնվող թուրքական խրամատները: Հովիտներից բարձրանում էր իրիկնային կապույտ մշուշն ու դանդաղ պարուրում ողջ շրջակայքը: Տիրում էր արտասովոր լուսթյուն: Ոչ մի կրակոց չէր լսվում: Իսկ ընդամենը մեկ ժամ առաջ գետինը զղրգում էր թնդանոթների համազարկերից ու ունբերի պայթյունից, բազմահազար զինվորների ոտնաձաններից ու աղաղակներից:

Զվենիգորան ջանում էր մշուշի միջից տեսնել քաղաքի պարեաի տունը: Ռոմանն այնտեղ էր: Տեսնես ո՞ղջ է... Երբ գնում էր իշխան Ռոմոդանովսկու մոտ, ուզում էր մի անգամ էլ նրան խնդրել ընկերոջ համար: Բայց ծերունի վոյեվոդան հիմա դրա սիրտը չունեք...

Կարճ ճանապարհով, թեք ավազոտ բլրալանջով, Զվենիգորան գնաց դեպի Կալինովյան կամուրջ:

Չիգիրինն այն ժամանակներում բավականին մեծ քաղաք էր: Նա լայն ու արձակ փոված էր Չիգիրինի կամ Կամեննայա լեռան փեշերին ընկած թեք հարթության վրա: Հողապատենը ձգվում էր Թյասամիից մինչև Կամեննայա լեռան հարավային փեշը: Հենց լեռան վրա էլ բարձրանում էր հզոր ամրոցը՝ կառուցված շեկ ավազաքարից:

Չնայած կեսգիշերին, քաղաքում աղմուկ էր: Վառվում էին խարույկները: Դեսուդեն էին վազվզում ստրելեցներն ու կաղակները: Երբեմն-երբեմն ձիավորներ էին սլանում:

Զվենիգորան Գրիվայի և Կուզմա Ռիժկովի հետ կանգ առավ ուղիղ հրապարակի մեջտեղում վառվող խարույկի մոտ: Խարույկի շուրջը զինվորներ էին հավաքված: Կենտրոնում, սոճու կոճղի վրա նստած էր կոբզարը: Կրակի կարմրավուն ցուլքերն ընկել էին թուխ կնճիռներով ակոսված դեմքին, «պուտուկաձև» խուզած սպիտակ մազերին: Կոբզարը հանդարտ զարկում էր կոբզայի լարերին, և դուրս էին լողում բնուշ, քաղցրալուր հնչյունները, որոնք կախարդել էին ունկնդիրներին: Զինվորները քարացել էին: Ոմանք նստած էին գետնին,

ոմանք՝ գերաններին, ոմանք էլ կանգնած էին՝ մտախոհ,
գլուխները ձեռքներին հենած:

Հանդարտ, մղկտացնող ցավով և տաղնապալից թախի-
ծով, մութ գիշերվա մեջ սավառնում էր տխուր երգը:

Կամենայա լեռան գլխին
Աղավնիներ են սուրում
Երջանկութուն շճաշակած՝
Տարիներն են իմ հավում...

Զինվորները մտածմունքի մեջ էին: Մեկը, բեղը քաշ-
քշելով, անթարթ նայում էր մորեղույն բոցին, մյուսը մտքե-
րով սլացել էր հեռուն, մտածում էր ամենանվիրականի մա-
սին, երրորդը աննկատելիորեն մոտենում էր կորգարին: Իսկ
նրանց գլխավերևում, անփայլ աստղալից երկնքի կապույտում
երևում էր դիք Կամենայա լեռը:

Արդյո՞ք այդ լեռան կատարին չէին սուրում աղավնիներ-
ը: Եվ երբ Զիգիրինը դարձավ Ուկրաինայի մայրաքաղաքը,
այստեղ, հմելնիցկու պալատում չէ՞ր ապրում արդյոք այն
կույր գուսանը, որ սրտաբուխ մի երգ հորինեց, երգ, որին
վիճակվեց ևրկար ապրել և իր մեղմ թախիծով ու խորունկ
իմաստությամբ մինչև այսօր էլ մարդկային սրտեր է հու-
ղում: Արդյո՞ք Թյասմինի այս նույն կամրջի վրա, փոշնենու
խիտ ու անանցանելի թփուտներով ծածկված ավերի արան-
քում չէր, որ մեկը սևաթույր ձիով փորձում էր հասնել իր
զուր ապրած տարիների ետևից, թախանձում էր նրանց վե-
րադառնալ թեկուզ և կարճ ժամանակով:

Կալինովյան կամրջի մոտ
Հասա ես իմ տարիներին:
Վերադարձեք, տարիներ իմ,
Ինձ հյուր եղեք թանկագին:

Արսենը, Կուզմա Ռոժկովի և բարձրահասակ, ա՛հոտնի
Գրիվայի հետ միասին կանգնած էր կրակի կողքին: Եկանջ
էր դնում ու զարմանում, ի՞նչ ուժ ունի երգը: Չնայած արև-
ուրությանը, որ համակում էր մարդկանց սրտերը, երգը, հո-
գիններ է թևավորում, արթնացնում, տակնուվրա է անում

խորքում թաքնված ուժերը, ինչպես երկար ժամանակ սառը բարաբեկորներով փակված ստորգետնյա ջրերը, հանկարծ ժայթքելով գետնի երես են դուրս գալիս ու փոթորկվում հզոր հորձանքով:

Երգը նրա մեջ հուշեր արթնացրեց Զլատկայի մասին: Կապակին էին նայում մութ կապույտ կայծկլտուն աչքերը, սոսես սատղալից երկնքի մի փոքրիկ պատառ լինեին լուսնի դուրս դալուց առաջ, միայն թե թախժոտ էին ու հեռո՛ւ-հեռավոր... Ինչո՞ւ... Արսենը ցնցվեց: Մի՞թե հիմա, երբ ընդամենը մի քայլ է մնացել մինչև երջանկություն, անողոր պատերազմը խորտակելու է այն, իր ու Զլատկայի միջև սահմանագիծ է բաշելու, որի վրայից ոչ մի մահկանացու ի դորու չէ անցնելու: Զլատկա, Զլատկա, երբ դու այդքան մոտիկ ես ու միաժամանակ այդքան հեռու, դարձել ես ավելի ցանկալի, ավելի հարազատ: Դու մտել ես իմ սիրտը որպես երգ, որպես երգ էլ այնտեղ կմնաս հավիտյան:

Իսկ կորզարի երգը արդեն նոր մտքեր ու զգացմունքներ էր արթնացնում:

Ինչ-որ տեղ, խավարում, քաղաքի պարիսպների ետևում թաքնվել է գիշատիչ թշնամին և, զուցե, հենց այս րոպեին ական է փորում, որպեսզի թափանցի քաղաք, թնդանոթները վառող է լցնում, որպեսզի արևածագի հետ մահ սփռի ու սպանի այս երգը... Մարդկանց հոգիների հետ միասին տրորի, թաղի հողի մեջ, իսկ այդ հողը հետագայում իրենը համարի:

Ո՛ր, չի կարելի թույլ տալ: Զի կարելի թույլ տալ, որ սպանեն երգն ու կենդանի խոսքը, քանդի և՛ երգի, և՛ խոսքերի մեջ զրված է ժողովրդի հոգին, նրա անցյալը, ներկան և ապագան: Իսկ ի՞նչ է մարմինն առանց հոգու: Կենդանի դիակ: Անբան անասուն: Ազր, որով պարարտացնում են ուրիշի արտը: Կամ ավելի վատթարագույնը, մարմին, որի մեջ ստոր մարդիկ դավաճան-ենիշերի թունավորված հոգի են ներարկում:

Արսենի մեջքով սառը մրջյուններ վաղվդեցին: Ոչ, Զի կարելի թույլ տալ: Սուլթանի հորդաներին չի կարելի թույլ տալ, որ Կարպատներից հասնեն մինչև Դոն ու իրենց ճանապարհին ոչնչացնեն ամեն մի կենդանի շունչ: Հարկավոր է

հենց այստեղ, Չիզիրիների լեռան տակ կանգնեցնել նրանց ու
ես շարտել ծովից այն կողմ:

Նա նայեց գինվորների դաժան դեմքերին: Մազմորուքի
մեջ կորած, հյուժված ու մրոտված՝ նրանք ասես քարից կամ
փայտից էին տաշված: Սրանց նմանները երբեք չեն նահան-
չի: Չեն հանձնվի:

Ահա մոսկովյան զրազունները: Վայելչակազմ, ջահել
տղաներ են: Որտեղի՞ց են նրանք: Բուն Մոսկվայի՞ց, Տու-
լայի՞ց, թե Սմոլենսկից: Գուցեև Վոլգայի հեռավոր ափերի՞ց,
որ ինքը երբեք չի տեսել, և որը, ինչպես ասում են, երկու
անգամ լայն է Դնեպրից:

Այնտեղ ստրելեցներն են, մոխրագույն կապաներով,
լրնհակաշավի սապոդներով: Նստած են գերաններին, շիկա-
հեր գլուխները քաշ գցած: Թաքցրած ախրությամբ նրանք
ականջ են դնում ուկրաինացի կորզարին, և շատերի աչքե-
րում, արցունքների մեջ, արտացոլվում են կրակի բոցերը:
Եվ կարևոր չէ, որ մի քիչ այլ կերպ են խոսում, հոգով իրենցն
են. հարազատ... Վաղը նրանք կաղակների հետ միասին
կրծքով կկանգնեն ընդհանուր թշնամու դեմ, և գուցե նրան-
ցից շատերը իրենց արյունը կտան հանուն այն բանի, որ-
պեսզի միշտ ազատ հնչի այս գեղեցիկ, այս սքանչելի երգը:

Ահա և կաղակները: Կարմիր ժուպաններով, որ գիշերով
սեին են տալիս, լայն շալվարներով, բրոնզագեմ, ու թխաշյա,
նրանք մեջեմեջ նստած ու կանգնած են զրազուների և
ստրելեցների՝ գեների ու ճակատագրի իրենց եղբայրների հետ:

Արսենի սիրտը թեթեացավ: Ոչ, թուրք հրոսակները չեն
տրսրի Դնեպրի կանաչ ափերը: Թաթարական ձիերը Դնեպրի
ջրերը չեն խմի, թշնամին չի հազթի Մոսկովի և Ուկրաինայի
միացյալ ուժերին:

Լուց, հանգավ երգը: Գուռանը նստել էր՝ ճերմակահեր
գլուխը կորզային հենած, իսկ ստրելեցները, զրազուները և
կաղակները լուռ կանգնած էին շուրջը: Նրանց սրտերում գեռ
գրնգում էին կորզայի հինավուրց, սրտակեղև հնչյունները...

Զվենիգորան, Ռոժկովը և Գրիվան կամացուկ զուրս եկան
չրջանից, գաղտագողի անցան ետնաբակերով, մոխրակույ-
տերի ու փլատակների միջով, և մոտեցան պարետի տանը:
Թերվեցին գեպի հարևան կայատեղը և շուտով հայտնվեցին

Հրաշքով անվնաս մնացած խրճիթի ու ուռմբի պայթյունից ավերված մարագի արանքում:

— Այստեղ է, — շնչաց Ռոժկովը՝ մատնացույց անելով նկուղի թեք մուտքը:

Դուռը կրնկի վրա բաց էր: Ներքևից նեխած օդի, փտած փայտի ու խոնավ հողի հոտ փչեց:

Երեքն էլ անձայն իջան նկուղ: Եվ իրենց ետևից ծածկեցին դուռը: Ռոժկովը վառեց մոմը: Անկյունում, հողե հատակին, կավի մի մեծ կույտ էր թափված: Պատերից մեկի մէջ մի սև անցք էր երևում: Կողքին ընկած էին հողոտ քլունզն ու բահը:

— Մոտավորապես կեսը փորել ենք, — ասաց Ռոժկովը: — Մի հինգ-վեց կանգուն դեռ կա:

— Այս գիշեր կհասցնե՞նք:

— Կհասցնենք, եթե փոխնիփոխ աշխատենք:

— Ուրեմն ժամանակ չկորցնենք, — շտապեցրեց Արսենը և, բահն ու քլունզը վերցնելով, խցկվեց նեղ անցքի մեջ:

Առաջին իսկ հարվածներից նա հասկացավ, որ աշխատանքը դժվար է լինելու: Կավը շոր էր ու քարի նման պինդ: Նեղվածքում ազատ շարժվել չես կարող: Քլունզով ինչպես պետք է շես հարվածի: Իսկ փորած կավը հարկավոր է լցնել զամբյուղը և, հտ-հտ գնալով, դուրս հանել բնից:

Բայց ինչ կարող ես անել: Այստեղ, շատ մոտիկ, բանտում տառապում է Ռոմանը, և ինչ գնով էլ ուզում է լինի հենց այսօր պետք է նրան ազատել:

Խուլ թրխկում էր քլունզը: Թխկթխկացնում էր բանտի խշխշում էր կավը: Ճոթճոթում էր ճարպամոմը՝ անձավը լցնելով ծխացող գարշահոտությամբ:

Դանդաղ, տանջալիորեն դանդաղ էր անցնում ժամանակը: Զվինիգորային փոխարինում էր Գրիվան, իսկ Գրիվային՝ Ռոժկովը: Ինչքան առաջ էին գնում, այնքան ավելի շուտ շուտ էին փոխարինում մեկը մյուսին: Քրտինքը լցվում էր աչքերը: Օդ չկար շնչելու: Հողափորները լարել էին բոլոր ուժերը:

Վառվեց մի մոմ, հետո երկրորդը:

Քրտնած, հոգնած, հողոտված՝ նրանք հարձակվում էին պինդ, դեղին կավի վրա, ինչպես մահացու թշնամու վրա:

Կազմե պատը դժվարությամբ, քիչ-քիչ նահանջում էր, նահանջում... Երբ շնչելը բուրբուխն դժվարացավ, դուռը բացեցին, և նկուղ ներխուժեց թարմ, զով օդի հոսանքը, որը հոգացրեց նրանց կրակված մարմինները:

Բայց շուտով ստիպված եղան դուռը փակել: Լուսանում էր արդեն: Եվ այդ ժամանակ վերջապես բաճը քարին առավ:

— Հասանք,— ընկերներին հայտնեց Զվենիգորան:— Բանդում եմ պատը:

Նա քլունդով փորփրեց, գտավ շարվածքը, մի քանի աղտոսներ տեղահան արեց: Գրանք խուլ թրխկոցով թափվեցին գետին, և նույն պահին էլ ճեղքի միջով, հարևան նկուղի կավարից երևացին մոմի թարթող կրակից լուսավորված Ռոնանի աչքերը:

Գոնցին առաջ պարզեց ձեռքերը:

— Արսեն, եղբայրս:

Նրանց ձեռքերը ամուր հշուսվեցին միմյանց:

6

Ռոժկովը, Գրիվան, Ռոմանը և Զվենիգորան, ետևում թողնելով կիսաքանդ քաղաքը, թեք ճանապարհով բարձրացան Զիգիրինյան լեռը, դեպի ամրոցի գլխավոր դարպասը: Ոչ առանց հիմքի նրանք կարծում էին, որ Տրաուերնիխտը շուտով կբացահայտի փախուստը, բայց հազիվ թե գլխի ընկնի Ռոմանին ու նրա ընկերներին փնտրել պատնեշի վրա, ամրոցի պաշտպանների մեջ: Չնայած վաղ ժամին, այստեղ արդեն սկսվել էր ազմուկն ու իրարանցումը: Գնդապետ Կոբովկայի սերզյուկները և գեներալ Գորգոնի ստրելեցները կռվի էին պատրաստվում. ոմանք հապճեպորեն ուտում էին, մյուսները գնդակներ, ռումբեր ու վառոդ էին կուտակում թնդանոթների մոտ, երրորդները շարք էին կանգնել, որպեսզի գնային, իրենց տեղերն զբաղեցնեին պարիսպների մոտ:

Ոչ որ ուշագրություն չդարձրեց հոգնած ու անտանելի կեղտոտված ընկերների վրա, որոնք արագորեն անցան ամրոցի բակով ու կանգ առան բխոված ձիերի մոտ:

— Եղբայրներ, նախ եկեք լվացվենք,— ասաց Ռոժկովը,

ձիերին ջրելու տաշտից մի լիքը բուռ սառը ջուր վերցնելով—
Թե չէ դժոխքի սատանաների հնք նմանվում:

Նրանք լվացվեցին, հետո քարե ջրհորի մեջ իջեցրին կոռն-
կին կապված փայտե դուլը, մի կուշտ համեղ ջուր խմեցին
թափ տվին հազուստները և դրանից հետո միայն նստեցին
տաք կուլեշով լի հսկա դազանի՝ շուրջը: Այստեղ էլ նրաչ
տեսավ գեներալ Գորգոնը:

— Կուզմա, էս որտե՞ղ ես թափառում: Դու դիշերը պա-
հակակետում պիտի լինեիր:

Ռոժկովը վեր թռավ տեղից, մեղավորի նման աչքերը
ճպճպացրեց: Զվենիգորան, Վոյնովը և Գրիվան նույնպե-
տեղներից ելան, կանգնեցին իրենց ընկերոջ կողքին՝ պա-
րաստ պաշտպանելու նրան:

Գեներալը ուշադիր նայեց կազակներին, և՛ նկատեց կավի
հետքերը նրանց շորերին, և՛ Ռոմանի նիհարած, կոշտ մա-
զերով ծածկված դեմքը, և՛ գղզգված ցորնագույն մազեր՝
դեզը: Այդ դեզից էլ նա ճանաչեց դոնցուն:

— Վա՛հ, վա՛հ, վա՛հ: Հիմա հասկանում եմ, Կուզմա. թե
ուր էիր կորել,— բացականից շոտյանդացին:— Ընկեր-
համար կյանքը չինայե՞լ, ինչպես դուք եք ասում: Հա՛-հա՛-
հա՛: Գովում եմ, գովում եմ:

Ռոժկովը թեթևացած շունչ քաշեց. անդա՛վ: Կազակների
սրտերն էլ տեղն ընկան: Բայց Գորգոնն իսկույն դաժանա-
ցավ:

— Դե, ահա թե ինչ, կտրիճներ, այսօր արտակարգ թեժ ու
է լինելու: Կարա Մուսթաֆան երդվել է մարգարեի մորուրով
որ իրիկնադեմին իր բունչուկը կբարձրանա Զիզիրին լեռան
վրա: Նա քաղաքի պարիսպների տակ հավաքել է քառասուն
հազար զինվոր և համարյա բոլոր թնդանոթները: Գրոհն ար-
դեն սկսվել է: Իսկ դուք, տեսնում եմ, անգեն եր...

— Զինվելը դժվար գործ չէ,— մոռյլ ասաց Գրիվան:—
Պատենշների վրա ինչքան ասես գեներ կա՛ և՛ մերը, և՛ թուր-
քերինը: Միայն ասացեք, թե ուր պիտի գնանք:

— Ռոժկովը կգա ինձ հետ: Իսկ դուք իմ գնդից չեք...

1 Ղազան (թուրք.) — կաթսա:

— Մենք կուզենայինք միասին լինել,— ասաց Ռոմանը
— Իսկապես, խմբով նույնիսկ բատկոյին էլ հեշտ է քո-
թակել,— մոայլ վրա բերեց Գրիվան:

— Ինչո՞ւ բատկոյին,— քմծիծաղեց գլներալը:— Թուրքե-
տն քոթակեր, կտրիճներ, թուրքերի՛ն... Իսկ Լթի ուզում եք
Հասին լինել, այդ դեպքում ինձ մոտ կմնար: Բայց իմա-
նեք. ես միշտ ամենադժվար տեղում եմ լինելու: Առայժմ
չուք ազատ թռչնականեր եք, մտածեք:

— Մտածելու ինչ կա,— ասաց Արսենը:— Մահից շենք
գաիսնում: Առանց աստծո կամքի, ծառից տերև էլ չի ընկ-
նում:

— Հա՛-հա՛-հա՛, հրաշալի է ասված: Հրաշալի՛: Ուրեմն
եմ ետևից, կտրիճներ: Երեկվա կորուստներից հետո ամեն
մի բան գինվոր թանկ է ինձ համար: Իմ ետևի՛ց:

Չորչրուկ, բարձրահասակ գլներալը, բարակ սուսերը
բռնած, որ զարկվում էր ոտքին, արագ-արագ դեպի ամբոցի
աշտարակը շնացու նրա ետևից աճապարկեցին Ռոմկովն ու իր
շնկերները:

Չորս կողմն արդեն դղրոց էր, որոտ, ճարճատ-
ուն: Գլխավերևներից սուրացին զնդակներն ու ոտմերքը:
Ենպիսի պարիսպները վազեցին ուշացած դինվորները, սան-
տոզքներով ու սոճու կոճղերով ամբողջված հողե աստիճան-
ներով վեր բարձրացան: Այստեղ էլ ընկան այսօրվա առաջին
սառնվածներն ու վիրավորները: Առավօտյան հովիկը ծխի
առբյան հոտ էր բերում:

Գլներալ Գորգունը արագ-արագ բարձրացավ պարսպի
տա և նայեց թուրքական դիրքերի կողմը: Երամատներով
հոճկված գորշ դաշտի միջով քաղաքին էին մոտենում Լեի-
շիբիների խիտ շարքերը: Օդում նորից տարածվեց հազարու-
նայն «ալլահ»:

Գլներալի կողքին կանգնած՝ թշնամու հորդաներին էին
ճալում Ռոմկովը և նրա զապորոժցի բարեկամները:

Իշխան Ռոմոզանովսկին իր շրախմբով կանգնած էր
Բլատմինի ձախ ափին ընկած ավազաբլրին, Չիգիրինի դի-

մաց: Բոպեն մեկ նրա մոտ էին գալիս սուրհանդակները, տեղեկություններ հաղորդելով ճակատամարտի ընթացքի մասին:

Բոյարինը խիստ հոգնած տեսք ունի: Գունատ, նիհարած աչքերի տակ սև օղակներ: Սովորաբար խնամքով սանրված հարգարված բեղն ու մորուքը այսօր զզզված էին, ինչպէս լինում է տենդով հիվանդի մոտ: Շքախմբի անդամներից որ չգիտեր, թե ինչն է գլխավոր հրամանատարի այդ վիճակի իսկական պատճառը:

Սակայն իշխանի հրամանները, ինչպես միշտ, հստակ էին, մտածված, իսկ ձայնը՝ հաստատուն, վճռական: Անքնությունից ուռած աչքերը նայում էին ուշադիր, տեսնու՞ էին հեռուն՝ ողջ մարտադաշտը՝ մաքսիմովյան մարզագետիներին, մինչև սուբոտինյան դահավանդակը:

Թյասմինի երկայնքով թշնամու հարձակումն սկսվեց Չիգիրինի վրա կատարած գրոհի հետ միաժամանակ: Արև դուրս գալուն պես զարկեցին թուրքական ու թաթարական թուլումբասները՝ կռվի կոչելով, նվազեցին դուռնաները, փռեցին հղջերաշեփորները: Հազարավոր սմբակների ու մարդկանց ոտքերի դոփյունից տնքաց հողը, ենիշերինների, սպախիանների, արաբ և քուրդ հեծելակների խայտաբղետ ջուկատները սև ամպերի նման անցան Թյասմինը և ընթացքից հարձակվեցին ստրելեցների խրամատների ու ռեզուտների վրա:

Չախ թևում դրիմյան հորդան՝ հեծելակարգով գրունդ կազակական զնդերի վրա:

Օսմանյան ամբողջ վիթխարածավալ բանակը անցավ վճռական հարձակման: Ափամերձ մարզագետիներում ու Թյասմինի ձախափնյա ավազաբլուրներում, Չիգիրինյան թավուտներում ու Սևանտառի բացատներում վաղ առավոտից ծանր մարտեր էին սկսվել:

Թուրքերը հատկապես ուժեղ ճնշում գործադրեցին Չիգիրինի և նրա ծայրամասերի վրա: Ռոմոզանովսկին հասկացավ որ հակառակորդը ամենից առաջ մտադիր է իրենց հտ շարտել Չերկասյան ճանապարհից, դրանով իսկ կտրել Չիգիրինից և բոլոր կողմերից շրջապատել: Այնժամ քաղաքի

¹ Ռեզուտ — դաշտային հողե ամրություն:

բախտը պարզ կլինեիր. ստիպված կհանձնվեին հաղթողներին օգորմածութիւնը: Թշնամու ձեռքը կընկներ մեծ քանակութեամբ վառող, ռումբ, գնդակ, պարենամթերք: Այդ պատճառով էլ վոյեվոդան վաղ առավոտից այստեղ նետեց Բելգո-բոդյան ստրելեցիների գունդը՝ իր հույսն ու հպարտութիւնը:

Մտազբազ ու վշտաբեկ Ռոմոդանովսկին սկզբում չնկատեց սուրհանդակին և, այն բանից հետո միայն, երբ իր առջև հայտնվեցին երեք թաթար մուրզաներ, նա սենոււն նայեց հազակին.

— Հետմանի՞ց է:

— Այո, ձերդ պայծառափայլութիւն: Հետմանը հրամայեց հանձնել նամակը և գերիներին:

— Մեզ մոտ էլ գերիներ շատ կան, — նամակը բացելով՝ ասաց բոյարինը:

Հետմանը գրում էր. «Իշխան Գրիգորի Գրիգորևիչ, ուղարկում եմ երեւելի թաթար մուրզա Սաֆերելիչին: Սույն մուրզիկը Մյուրադ Գիրեյ խանին փեսա է գալիս... Մի լավ ահտուր դրան: Ասա, որ նրա պիղծ գլուխը կկտրես ու ընծա կուղարկես աներոջը, այսինքն՝ խանին, քանի որ նա վեզիր Մուստաֆային թույլ է տվել իշխան Անդրեյի վրա բռնութիւն գործ դնել... Նրա հետ ուղարկում եմ էլի երկու խղճուկ մուրզաների: Ինքը Սաֆերելիչը անմիջապէս թող նրանց ուղարկի իւանի մոտ, որպէս իր պատվիրակներ: Երկուսին էլ, ավելի մեծ վստահութեան համար...»

— Ահա թե ի՞նչ, — բացականչեց բոյարինը և դարձավ սուրհանդակին. — Շնորհակալութիւն, կապակ, դու ինձ հուսադրեցիր...

Նա արագ մոտեցավ կարճահասակ Սաֆերելիչին, որը, ձեռքերը մեջքին կապած, շոքել էր իր առաջ, և կամացուկ, բայց հաստատուն ձայնով ասաց.

— Մուրզա, Մյուրադ Գիրեյ խանը անխոհեմ վարվեց՝ իմ որդի Անդրեյին հանձնելով թուրքերին: Վեզիր Մուսթաֆան մահով է սպառնում նրան: Նա հաղորդել է, որ ողջ-ողջ կքերթի իշխան Անդրեյի գլխի մաշկը, կլցնի ծղոտով և կուղարկի ինձ, եթե այսօր Չիդիրինը չհանձնեմ... Ես պետք է պաշտպանեմ այս քաղաքը, քանի դեռ ուժերս կբավականացնեն: Նշանակում է վեզիրը կարող է իրագործել իր գարշելի սպառ-

ևալիբը... Բայց երդվում եմ, միջոց կգտնեմ իմ մինուճար որդու համար վրեժ լուծելու խանից, և առաջին զոհը կլինես դու, մուրզա: Այնժամ կհրամայեմ հանեն քո գլխի մաշկը, լցնեն ծղոտով և ուղարկեն խանին...

Սաֆերելյը գունատվեց: Բերանը չորացավ: Նա խոպոտ ձայնով ասաց.

— Օ՛, ալլահ, դու փրկիր իշխան Անդրեյին:

— Դո՛ւ պիտի օգնես ալլահին, մուրզա:

— Ե՛ս:

— Եթե ուզում ես գլուխդ ուսերիդ վրա մնա, քո ազգակիցների միջոցով,— Ռոմոդանովսկին գլխով ցույց տվեց երկու գերի մուրզաներին,— խանին հաղորդիր, որ փրկի իշխան Անդրեյին: Այլապես...

— Յախշի, յախշի,— արագ-արագ բլբլացրեց Սաֆերելյը:— Ես կանեմ այնպես, ինչպես հրամայում է ուսուսներե՛ վեզիրը... Սակայն ամեն բան աստծո ձեռքին է...

— Անշուշտ: Եվ ամենից առաջ քո կյանքը, մուրզա:

Ռոմոդանովսկին հեռացավ, իսկ Սաֆերելյը սկսեց բացատրել մուրզաներին, և նրանք համերաշխ գլխով արեցին.

— Յախշի, յախշի:

8

Թուրքական թնդանոթները լուսաբացից սկսեցին գնդակով ջրգիրիներ և ամբողջ օրը կրակը շղաղարեցրին: Բոցավառվող ումբերն ու շիկացած գնդակները, ծխածածկ երկրներում կրակի հետքեր գծելով, բոլոր կողմերից թռչում էին դեպի քաղաք, ավերում նախորդ գրոհներից փլված տները, այրում էին այն ամենը, ինչ որ կարող էին այրել:

Պայթյունները ցնցում էին խոշտանգված, խանձված, այրյունով ներծծված հողը, պատառ-պատառ էին անում: Մուխր, փոշին, տաք մոխիրը բարձրանում էին վեր, բարձր-բարձր, օդը հագեցնելով տաք դարշահոտությամբ:

Կամենեայ լեռան կատարից ամբողջ արձագանքեց քառասուն թնդանոթների համադարկով՝ մահաբեր թուշն ումբերն ու գնդակներ ուղարկելով դեպի դաշտ: Թնթանոթաձիգները, գհներալ Գորդոնի հրամանով, մեկուկես անգամ ավելի շատ վառող էին լցնում թնդանոթների մեջ, նրանց հետ միասին

պայթելու վտանգին ենթարկվելով: Բայց թնդանոթները դի-
մացան: Փոխարենը թուրքական բանակատեղում բոցավառ-
վեցին վրանները, սանձերը կտրելով, սարսափից կուրացած,
ծառչ էին լինում ձիերը, ահասարսուռ նոռում, մոնչում էին
ուղտերը, տներում, հառաչում էին վիրավորները:

Չիգիրինը պարուրվել էր ծխի սևագորշ ամպերով, որոնց
միջից դուրս էր նայում ահեղ, արնակաբմիր արևը:

Թուրքերն ամբողջ օրը գրոհում էին առանց դադարի: Հա-
զարավոր ենիչերիներ, սպախիաններ, թաթարներ, վալախներ,
արաբներ, ճիչ ու գողգողոցով, կատաղությունից, սարսափից
ծոմոված, այլանդակված դեմքերով, թրերը, տեղերն ու
դրոշները թափահարելով, զուռնաների ոռնոցից, թմբուկների
դղրդյունից քաջալերված, գրոհում էին ու գրոհում:

Կեսօրին հօդս թռավ Արիմյան դարպասի պահակային
աշտարակը: Ժամանակին շհայտնարերված ականը զարհու-
րելի ավերածություն պատճառեց՝ ահագին անցք բացելով
պարսպի մեջ: Ենիչերիների հոծ շարքերը այդ անցքից հերս-
լցվեցին: Շուտով երկրորդ պայթյունը ցնցեց ամբողջ ներ-
քին բաղաբը: Թյասմինի ցածրադիր փին ընկած արևելյան
պարիսպները հողմացրիվ եղան: Վարարած գետի նման այս-
տեղ հորդեցին Ասփյան փաշայի շորս հաղար զինվորները:

Պարետատունը, նախկին Դորոշենկոյան բովբերկը՝
ավերվել էր ումբի զիպուկ հարվածից: Պարետ Ռժեսկին,
ամբողջ ժամանակ պարիսպների վրա էր, ստրելեցների կող-
քին: Նկատելով, որ թուրքերը ճեղքից ներս են խուժում, նա
մի բուռ զինվորների զլխավորությամբ նետվեց առաջ, որ-
պեսզի թշնամուն դուրս շարտի ամբոցից: Բայց այդ պահին
առջևում փայլատակեց կրակը: և շիկացած բեկորը մխրձվեց
ներս դեմքը: Արնաշագախ, ուշագնաց՝ նա ընկավ մոխրի պես
տաբ հողի վրա:

Այդ պահից սկսած ներքին բաղաբի պաշտպանները, ղկա-
շողանալով ետ շարտել ենիչերիներին ու հողով փակել պա-
րսպի ճեղքը, փոզոց փոզոցի էտեից սկսեցին հանձնել թրշ-

1 Բովբերկ — ամբոթյուն բերդի ներսում, հարակից սարածոր լրջանոձե
գեղակոձելու համար:

նամուն: Իրիկնադեմին պարզ դարձավ, որ Զիգիրինը չի դիմանա... Եվ այնժամ կատարվեց ամենասարսափելին. սորբյեցների ու սերդյուկների գնդերի մնացորդները ետ քաշվեցին դեպի Կալինովյան կամուրջ: Նրանք քիչ էին, բայց, մի տեղ հավաքվելով որոշ ժամանակ դեռ կարող էին պահել թշնամուն: Սակայն սարսափն ու հուսահատությունը արդեն համակել էր զինվորների սրտերը: Բացի դրանից, բոլոր հրամանատարները, այդ թվում պարետ Ռժեսկին, գնդապետ Ռուբանն ու Կորովկան, կամ սպանված էին, կամ ծանր վիրավորված: Հարյուրավոր մարդիկ, կորցնելով հավատը, թե Զիգիրինը դեռ կարող է դիմանալ, նետվեցին դեպի կամուրջը: Ենիշերիները ընկան նրանց ետևից: Հին, փտած կամուրջը շրիմացավ հսկայական բեռնվածությանը, նեղվածքին ու սրընթաց փախուստին, ճարճատյունով փուլ եկավ՝ իր բեկորների տակ Թյասմինի խորքում թաղելով նրանց, ովքեր հենց նոր գտնվում էին կամրջի վրա: Ցավի ու սարսափի ճիշեր լսվեցին... Մարդիկ նետվեցին գետը և փորձեցին լողալով հասնել մյուս ափը: Ոմանց դա հաջողվեց, մյուսները, մանավանդ վիրավորները և նրանք, ովքեր լողալ չգիտեին, սուզվեցին ջրի տակ: Սակայն այդ սահմուկելի տեսարանն էլ չկարողացավ կանգնեցնել ետևի շարքերին. ենիշերիներից ունեցած սարսափն ավելի ուժեղ էր, քան ջրի մեջ մեռնելը:

Գնենրալ Գորդոնը իր գնդից ողջ մնացած զինվորների և գնդապետ Կորովկայի սերդյուկների հետ միասին (սրանք Կորովկայի վիրավորվելուց հետո անցել էին իր հրամանատարության տակ), երկյուղ կրելով շրջապատվելուց, թողեց վերին քաղաքը և փակվեց ամրոցում: Սկսվեցին Զիգիրինի հերոսական պաշտպանության վերջին ժամերը:

9

Վոյեվոդա Ռոմոդանովսկին հեռագրատակով տեսավ, թե Զիգիրինի պաշտպանները ինչպիսի՜ արիություն և ինչպիսի՜ ճիգերով ու արյան գնով առաջնորդ մինչև իրիկուն ևտ էին մղում Լենիշերիական գնդերի նորանոր հարձակումները: Թվում էր, թե կենդանի մարդիկ, որոնք ի դեպ մի բանի անգամ ավելի բիշ էին, քան հարձակվողները, շեն կարող դիմանալ

այդպիսի լարվածութիւնն: Օդ էին թռչում պարիսպները, խորտակվում էին տները, պայթում էին թուրքական ուժերն ու ականները՝ սև հողը ծառս հասնելով երկինք, ծուխը գալար-գալար վեր էր բարձրանում, աշնան մատախուղի պես ծածկելով ամեն ինչ... Ընկավ ներքին քաղաքը, դոճվեց նրա պաշտպանների մեծ մասը... Բայց Չիգիրիները չհանձնվեց: Կանգուն մնաց: Ամբողջից շարունակ որոտում էր հրանոթների ու գակիվնիցների համազարկերը, ճարճատում էին մուշկետոնները և Տուլայում պատրաստված պիշչալները, աշտարակներին փողփողում էին դրոշակները. մորեզույնը կաղակակալան էր, երկնագույնը՝ սուրբ Գևորգի պատկերով, Գորգոնի դիվիզիայինը:

Իրիկնադեմին թուրքերը մոտ բերեցին թնդանոթները, սկսեցին գնդակոծել ամրոցը: Գարպասի առջև հայտնվեց բարանը, և նրա խուլ հարվածները, որ հասնում էին նույնիսկ մինչև Թյասմին, ցնցեցին հզոր պարիսպները: Հաղաբավոր ենիչերիներ մագլցեցին դիք Կամեննայա լեռն ի վեր, դեպի ամրոց:

Բայց Չիգիրիներ կանգուն էր:

Սակայն մի անորոշ տագնապ էր սողոսկել վոյեվոդայի սիրտը: Այդ տագնապը շնվազեց նաև այն բանից հետո, երբ ամենուրեք, բացի Չիգիրիներից, մարտերը դադարեցին, և զորահրամանատարները գեկուցեցին, որ բոլոր դիրքերը իրենց ձեռքում են, Ուրախանալ էր պետք. այդպիսի կատաղի գրոհին դիմանալու և ետ մղելը ինքնըստինքյան մեծ հաղթանակ էր... Բայց որտեղի՞ց էր այդ տագնապը: Մի՞թե իշխան Անդրեյին դժբախտութիւնն է պատահել: Մի՞թե խանը խաբեց իրեն՝ սուրհանգակի միջոցով լուր ուղարկելով, թե վեզիրի հետ պայմանավորվել է վերացնել իշխանորդի Անդրեյի մահապատիժը: Մի՞թե Կարա Մուսթաֆան այնուամենայնիվ ի կատար է ածել իր ահապոր սպառնալիքը և ուր-որ է կհայտնվի սև բոթաբերը՝ խուրջինը ուսին:

Ոչ, որդու մասին նա դադարեց մտածել դեռ կեսօրից, այսինքն՝ այն ժամից, որ վեզիրը նշանակել էր քաղաքը հանձնելու համար: Ատամները պինդ սեղմեց և իրեն հարկադրեց

հետեւի մարտի քնթացքին: «Ամեն ինչ աստծո ձեռքին է.—
շնչոց նա— Քեզ եմ աղալիւնում, տեր աստված»:

Նա այդ տաղնապի սլառճառը հասկացավ այն բանիդ
հետո, երբ եկավ Սամոսլովիչը: Սա պատմեց, որ թաթարնե-
րը հանդուգն փորձ են արել՝ շրջանցելու ձախ թեր և թիկուն-
քից հարվածելու սարելեցների ու կազակների դնդերին:

Թիկունք:

Ահա թե ինչն էր անհանգստացնում վոյեվոդային այն
պահից, երբ Չիգիրինի պաշտպանները սկսեցին փախչել
ներքին բաղաքից: Քանի ղեռ վեզիր Մուսթաֆան գործադրում
էր բոլոր ճիգերը, որպեսզի գրավի Չիգիրինը. բանի
ղեռ նրա գորքի կեսը շրջապատում էր քաղաքը, թիկունքի
համար կարելի էր շանհանգստանալ: Բայց ի՞նչ կլինի, ելև
Չիգիրինը ընկնի: Ամենից առաջ թուրքերը կձգտեն ուսու-ուկ-
րախնական զորքերը կտրել Դնեպրից, կփակեն զինամթերք
ու պարեն փոխադրելու բոլոր ճանապարհները, իսկ հետո
աստիճանաբար կսեղմեն մամլակը: Մանավանդ, որ ուժերի
կրկնակի առավելութունը նրանց թույլ է տալիս այդ բանն
անել:

Երեկոն իջավ, բայց ղեռ բավականաչափ լույս էր՝ տես-
նելու համար Չիգիրինի ողջ համայնապատկերը: Հիմնահա-
տակ ավերված բաղաքը ամբողջովին պարուրված էր ծխի
բուլաներով: Քանզված կամուրջի մոտ մի բանի հարչուր
կազակներ ու սարելեցներ կասեցնում էին թշնամու հարձա-
կումը, այն ժամանակ, երբ նրանց ընկերները լողալով անց-
նում էին Թյասմինը: Կասկած չկար, որ մեկ-երկու ժամ հետո
ենիշերիները նրանց գետը կլցնեն կամ կոչնչացնեն, և այն-
ժամ ամբողջը ամբողջովին կշրջապատվի ու կկտրվի զորքից:
Հարկավոր է մի բան ձեռնարկել:

— Ի՞նչ ես կարծում, հետման, ամբողջ ղեռ երկա՞ր կզի-
մանա, — մեղմ ձայնով հարցրեց վոյեվոդանը:

— Կարծում եմ՝ ոչ: Բայց գլխավորը հիմա ամբողջը չէ:
Հարկավոր է մտածել գորքի մասին: Ինձ անհանգստացնում
է մեր զիրքերի անհուսալիութունը: Քանի ղեռ Չիգիրինը դի-
մանում էր, մենք ամուր էինք: Իսկ հիմա...

— Այո, հիմա հարկադրված ենք նահանջել դեպի Դնեպր, —
շարունակեց բոյարինը:

— Բուժինյան բարձունքներում, մեր նախկին դիրքերում հաջողութեամբ կարող ենք դիմադրել թուրքերին:

— Իսկ ամբողջը: Տեր աստված, մի՞թե դու, իշխան, մտադիր ես բախտի բմահաճույթին թողնել ամբողջը: Ինչքա՞ն գինվորներ ունենք այնտեղ, ինչքա՞ն դինապաշար:

— Ամբողջը հարկավոր է պայթեցնել, իսկ մարդկանց դուր: Բերել այնտեղից: Եվ դա պետք է անել անհապաղ, վաղը ուշ կլինի...

— Ուրեմն շուտ սուրհանդակ ուղարկիր:

— Հեշտ է ասելը, ամբողջի շորս կողմը թուրքեր են: Ասենք էթե սուրհանդակը թափանցի սարի գագաթ, ո՞վ դարպասների կբացի նրա առջև:

Հետմանը մի պահ մտքի մեջ ընկավ:

— Գաղտնի մուտք կա: Այնտեղից ներս կմտնի:

10

Ամբողջի պաշտպանները նույնիսկ չնկատեցին, թե ինչպես իջավ երեկոն: Լուսինը դեռ դուրս չէր եկել, բայց պարիսպների վրա լույս էր, ինչպես ցերեկը: Հրդեհները ու հրե պայթյունների արնակարմիր ցուլքը պայծառ լուսավորում էր ողջ շրջակայքը:

Մարտը ոչ մի բույս չէր դադարում, Ռուսերի պայթյուններից, թնդանոթների համազարկերից, որ արձակում էին ստրելեցներն ու կազակները, հազարավոր կոկորդիների մորչոցից, սրերի շաչյունից ու գնդակների սուլոցից անլույսի գվիոց ու զորդյուն էր կանգնել Կամեննայա լեռան վրա: Գողում էին ամբողջի պատերը, ցնցվում էր հողը:

Գեներալ Գորդոնը կանգնած էր հարավային աշտարակի վրա: Բարակ, երկար սուսերը ձեռքին, գույնզգույն վզնոցը վզին, Բարձրահասակ ու ձողի պես շիփշիտակ՝ նա չէր կուռնում թուրքական գնդակների առաջ, որ անվերջ սուլում էին դիսամբերում: Գլխաբաց էր, — կովի մեջ կորցրել էր գլխարկը, — և բամին գզգզում էր նրա շեկ մազերը:

Նրա շորերը կեղտոտ էին, մրտաված, շատ տեղերից պատռոտված: Բայց իրեն՝ գեներալին, ոչ սպախիականների թուրն էր դիպել, ոչ հնիշերիական գնդակը:

Արտաքուստ նա հանդիստ էր: Ուշագիր հետևում էր թուրք ասկյարներին զանգվածներին, որ ահեղ հորձանքով խավարի միջից գլորվում էին դեպի ամրոցի պարիսպները, դիտում էր ներքին քաղաքում բռնկված հրդեհները և նայում Թյասսմինի մյուս ափին ընկած ռուսական ճամբարի հեռավոր կրակներին: Նա համոզված էր, որ ամրոցը կարող է դիմանալ ոչ պակաս մեկ շաբաթ, որովհետև ամուր պարիսպները հուսալիորեն են պաշտպանում թշնամուց, իսկ նկուղներում դեռ բավականաչափ վառող, գնդակ ու պարենամթերք կա: Քարի մեջ փորված ոչ խոր ջրհորը ամրոցի ամրոցջ կայազորին ապահովում էր աղբյուրի սառնորակ ջրով: Ուրիշ էլ ինչ էր պետք պաշտպանության համար:

Գեներալի երկու կողմերում, նեղլիկ հրակնատների մոտ կանգնած, թշնամուն էին հետևում նաև Կուզմա Ռոժկովը, Զվենիգորան, Ռոման Վոյնովը և Գրիվան: Ինքնրստինքյան, առանց որևէ մեկի հրամանի, առանց պայմանաւորվելու, նրանք այդ օրը դարձան գեներալի անձնական թիկնապահները: Սկզբում, վախենալով Տրաուերնիխտի մարդկանց հետապնդումից, մնացին գեներալ Գորգոնի մոտ, հույս ունենալով, որ նա կպաշտպանի իրենց: Իսկ հետո, շտաբանդուցու խիղախությամբ հիացած և իրենց գործից կտրված լինելով, որոշեցին մինչև վերջ մնալ նրա կողքին: Դա այնքան էլ հեշտ բան չէր: Գեներալը իր տարիքի համար անհավատալի արագությամբ առաջ էր սլանում պարիսպների վրայով և միշտ հայտնվում էր այնտեղ, ուր ամենից դժվար էր: Իր հայտնվելով նա ամենուրեք բարձրացնում էր զինվորների ոգին, նրանց կրկին տանում գրոհի: Բարակ շողշողուն սուսերը կայծակի նման շանթահարում էր էնիշերիններին:

Չորս ընկերները ետ չէին մնում գեներալից, որը արհամարհում էր վտանգը, և իրենց սրերով շատ անգամ նրան փրկեցին ստույգ մահից:

Թուրքերը շարունակում էին գրոհել ամրոցի վրա: Ներքին քաղաքը գրավելուց հետո նրանք իրենց բոլոր թնդանոթները բարձր տվին Զիգիրինի լեռան մոտ և կատաղորեն սկսեցին զնդակոծել հարավային աշտարակն ու ամրոցի գլխավոր դարպասը: Ամրոցը նույնպես պատասխանեց ուժգին կրակով: Թնդանոթային կատաղի մենամարտը մեկ ժամից ավել տևեց:

Ռումբերի պայթյունից վառվեց ախոռը. վառողի կծու ծուխը խառնվեց հրդեհի թանձր ծխին ու կսկծացրեց աչքերը:

Թնդանոթային կրակի պաշտպանության տակ ենիչերինները դարպասի մոտ բարձր տվին բաբանը: Ծանր, երկաթակուռ բաբանը բոմբյունով զարկվեց կաղնե դարպասին: Փայտը ճարճատեց, դողդողաց դարպասավերի բարձր աշտարակը:

Գեներալ Գորգոնը սուսերը մեկնեց ներքև.

— Ստրելեցներ, զարկեք էդ շներին:

Որոտացիին մուշկետներն ու պիշլալները: Բարանի մոտ եղած ասկյարների մի մասը գետին տապալվեց: Մնացածները մի ակնթարթում թաքնվեցին հաստ գերանի ետևում կամ ետ-ետ գնացին դեպի ամրոցի ու դաշտի արանքում փորված խոր խանդակը:

Բաբանը անշարժացավ: Պարիսպների վրայից ուրախ բացականչություններ լսվեցին:

— Ահա, դե կորեք, շներ:

— Խաշխաշով բլիթ անուշ արեք:

— Դե, է՞լ ով է ուզում: Թող գա:

Գրիվան բարձրացրեց նիհար, ծխից մրոտված դեմքը, արյունալից աչքերով մռայլ նայեց ենիչերինների դիակներին: Չարախինդ ժպիտը ծոմոնեց նրա շորացած շուրթերը:

— Քիչ է: Շատ քիչ է, — շնչաց սա՛ վառողամանից մուշկետի մեջ վառող լցնելով:

Գեռ Կանեի մոխրակույտերում նրա սրտում բռնկված դժոխային կրակը ոչ մի կերպ չէր հանդարտվում: Թավշյա բսակը, որի մեջ, ինչպես թվում էր նրան, իր երեխաների մոխրացած ոսկորներն էին, անդիմադրելի ցավով այրում էր կուրծքը, վրեժի կոշում: Չիզիրինի պաշարման բոլոր օրերին կազակը շատ մահեր էր տեսել, բայց դրանից, միևնույն է, չէր մխիթարվել:

— Շատ քիչ է... մոլեգնած՝ ատամները կրճտացրեց նա:

Եթե կարողանար, առանց փոքր իսկ խղճահարություն, մեկ առ մեկ կչարդիր թշնամու ամրողջ բանակը, թեև զգում էր, որ աչքի ղեպում էլ իր սիրտը փոթոթոց բոցը չէր հանգչի: Անշափ մեծ էր հողու ցավը և վրեժի ծարավը:

Եվ կազակը նետվում էր կովի ամենաթունդ տեղը՝ իր սրի համար որս վնասրելով: Իր հսկա հասակով մեկ նա ընդ-

առաջ էր դնում թշնամուն, չմտածելով, որ մի տաք գնդակ կարող է խոցել իր կուրծքը կամ թուրքական կեռ յաթաղանը գլուխը կճեղքի: Իսկ դուցեև նա փրկարար մա՞հ էր փնտրում

Մուշկետը լիցքավորելով՝ նա սեղմվեց հրակնատին: Երկար նշանակեա ընտրեց և էլ ավելի երկար նշան բռնեց: Վերջապէս հրահանը քաշեց: Մարտի դղրդունի մեջ կրակոցի ձայնը դրեթե շսեց, բայց դատելով աչն բանից, թե ինչպիսի շարախինդ ժպիտ փայլեց նրա տանջահար, մրտալուծ դեմքին. դժվար չէր գլխի ընկնել, որ ամբողջ պարիսպների տակ մի ենիչերի էլ պակասեց:

— Մեկն էլ էն աշխարհը դնաց,— բացականչեց Զվենիգորան՝ ցանկանալով քաջալերել ընկերոջը և գոնե մի բիշքրել նրա մոայլ տրամադրությունը:

Բայց սա գլուխն օրորեց:

— Քիչ է: Տես, թե էլի ինչքան շատ են դալիս մեր կողմը:

Մթության միջից ենիչերիների նորանոր ալիքներ հայտնրվեցին: Նրանք գալիս էին զանդաղ, ծանրաբեռնված դեմքերով, գրոհային սանդուղքներով, ծղոտի ու խաշամի խրձերով, որ նախատեսված էին զնդակներից պաշտպանվելու համար: Երկարածիգ, կատաղի «ալլահ» գոչելով՝ նրանք ընդարձակվում էին, ծավալվում, նետվում դեպի ամբողջ, շրջապատելով աչն բոլոր կողմերից: Դրանից քաջալերված՝ շարժվեցին նաև սարսպակործան մեքենայի մոտ եղած ասկյարները, որ ողջ էին մնացել ու մտել էին թաքստոցները: Նրանք դժկալությամբ դուրս սողացին իրենց թաքստոցներից և, հրամանատարի վայրենի գոռգոռոցից հալածված, քարշ եկան դեպի բարանը: Ահա բարանը ճոճվեց, օրորվեց, մեկ, երկու, և ահեղ հարվածը կրկին ցնցեց դարպասը:

Այդ ընթացքում թուրքական թնդանոթները շարունակում էին կրակը: Արկերը ճարճատյունով զարկվում էին ամբողջի բարե պարիսպներին, աշտարակներին, հրակնատներին մանր բեկորներ շաղ տալիս:

Որոտալից դղրդունով պայթում էին կլոր թուջե ումբերը՝ մահ ու ավեր սփռելով շորս կողմը:

Գնեերալ Գորդոնը հրամայեց թնդանոթները լցնել կարտեչով, մոտեցնել քարերով լցված ուռենու կողովները և պատրաստվել ձեռնամարտի:

Երբ թշնամու հոծ գանգոյաձեւերը մոտեցան թնդանոթա-
յին կրակի տարածքին, նա թափահարեց սուսերը և կտրուկ,
բարձր ձայնով գոչեց.

— Կրա՛կ:

Հարավային դարպասի տասը թնդանոթները համազարկ
տվեցին, նրա կոտորակը կրակե ցայտերով ընդառաջ սյա-
ցավ ենիչերիներին և շատերին շարքից հանեց: Բայց դա թըշ-
նամու խուժանին չկանգնեցրեց: Սպանվածներին ու վիրա-
վորներին տեղնուտեղը ուրիշներն էին փոխարինում, խլում
էին ելարաններն ու վազքով սլանում առաջ:

Թնդանոթաձիգները անվերջ, տենդորեն լիցքավորում էին
թնդանոթները: Նրանք հասցրին ևս երկու անգամ հարվածել
կարտեշով: Հետո, երբ ենիչերինները հայտնվեցին մեռյալ տա-
կավոր շէին, և վերցրին գակիվնիցաները, պիշչալներն ու
մուշկեանները, զիրքեր գրավեցին քարերով լցված կողովների
կողքին, որպեսզի հետեակի հետ միասին ետ մղեն թշնամու
գրոհը:

Թուրքերը նույնպես զազարեցրին թնդանոթային կրակը,
որպեսզի յուրայիներին շիփեն: Փոխարենը բաբանն ավելի
հաճախ, ավելի ուժգին էր գզրդում: Իսկ ենիչերինները արդեն
բարձր սանդուղքները հենում էին պարիսպներին և, միմ-
յանց օգնելով, մագլցում էին վեր: Շարվում էին նեղ քիվի
վրա ու կրակում էին՝ նշան բռնելով հրակնատների, մատ-
ների ծայրերով նրանք կառչում էին ամենաանշան ելուտ-
ներից, որպեսզի բարձրանան պարսպի վրա, և, պոկվելով,
ցած էին գլորվում: Սակայն նրանց փոխարեն անվերջ մա-
գլցում էին ուրիշները:

— Քարերով, քարերով դարկեր, — գոչեց գեներալ Գոր-
դոնը, սուսերը ասկյարի կուրծքը խրելով, որ պուխր դուրս էր
հանել պատի հտեից: — Սանդուղքները շուտ տվեր: Համար-
ձակ, բարեկամներ, համարձակ:

Պարիսպների վրա տոթ էր: Հրդեհների հրացայրով լուսա-
փորված՝ ենիչերինները, սև ուրվականների նման թրերն ու
լաթադասները փայլեցնելով, վեր էին մագլցում, տաշտի մեջ
բարձրացող խմորի պես: Ստրելեցներն ու կազակ սերդյուկ-

ներք չէին հասցնում նրանց ցած շարտել, երբ սանդղղրնէրով արդեն բարձրանում էին ուրիշները և իսկույն մարտի մէջ մտնում:

Ռոման Վոյնովը վերցրեց բարերով լի ծանր կողովը և շուտ տվեց հարձակվողների գլխին: Մի բանի ենիչերիններ պոկվեցին աստիճաններից ու ճղավոցով թռան ներքևում գտնվողների վրա: Ինչ-որ մեկը դուչլով ալաղը ուղղակի շոյ տվեց ասկյարների սև, սարսափից չոված աչքերին, բաց մնացած բերաններին. որ գոռում էին իրենց ահագարձո՞ւ «ալլահ»։ Զվենիգորան ցատկեց քարե բաղրիքին և սկսեց թրատել նրանց ածիլված գլուխները, ձեռքերը՝ կեռ յաթազաններով:

Կուլմա Ռոժկովն ու Գրիվան վերցրին երկճեղ ծայրով փայտե բրերը, դրանցով կառչեցին սանդղղքին և տասնյակ ենիչերինների հետ միասին ետ հրեցին պարսպից: Սանդղղքը վիթխարի կիսաշրջան գծեց և զորոցով տապալվեց գետին: Արչունոտ կիսախավարից ցավի ու սարսափի միչելլվեցին...

Պարիսպների վրա ամենուրեք անողոք կռիվներ էին գնում: Կովում էին ով ինչով կարող էր՝ թրերով, տեղերով, յաթաղաններով, կրակում էին ատրճանակներով ու մուշկետներով, բարեր էին շարտում, ավազ էին ցանում, ետաքրած տաք ձյութ էին թափում, ծանր բրերով խփում էին գլխներին, ձեռքերին, թիկունքներին: Մեռնողների ճիշերը, հայտնայանքները, հառայանքներն ու խոխոցները, թրերի շաչունը բաբանի խուլ հարվածները անկարգ կրակոցները՝ այս բոլորը, մի անմարդկային ոռնոցի ու մոնչլունի մեջ միախառնված, Զիգիրինի սարից ցած էր գլորվում, տարածվում տագնապալից մութ գիշերվա մեջ:

Թուրքերի իրար հետևող գրոհներից արդեն պարզ երևում էր, որ Կարա Մուսթաֆան նպատակ էր դրել հենց այսօր գրավել ոչ միայն քաղաքը, այլև ամրոցը: Զխնայելով մարդկանց՝ նա շարունակ նորանոր գրոհային ջոկատներ էր քշում դեպի ամրոցի պարիսպները:

Պաշտպանները կորցրել էին ժամանակի ու իրականության զգացողութունը: Նրանց թվում էր, որ մարտը շատ երկար էր տևել, ամբողջ գիշերը, թեև դեռ կեսգիշեր էլ չկար:

ԲՎՈՒՄ էՐ, թե այդ դժոխքի վերջը չի գալու: Մարդիկ ոչ հոգ-
նություն էին գգում, ոչ վախ: Մուլեգին պոռթկումը, ամեն
հոգ հարազատ պատերը պաշտպանելու ցանկությունը զին-
արներին նոր ուժ ու անհավատալի տոկոսնություն էին տա-
լիս: Նույնիսկ ծանր վիրավորները, ուլքեր դեռ կարողանում
էին ոտքի վրա մնալ և թշնամուն կոտորելու համար առողջ
նեղքեր ունենին, կուլում էին բուլորի հետ հավասար:

Ամենից ծանրը հարավային աշտարակի պաշտպանների
փիճակն էր: Թուրքերը գլխավոր հարվածը նրա դեմ էին ուղ-
ղել: Արդեն թշնամու հարյուրավոր զիակներ էին փռվել ար-
տենով ողողված հողին, և ենիչերիները նրանցից աստիճան-
ներ էին սարքում ու դրանց վրայով մագլցում վեր: Նրանց
թրատում էին, զնդակահար անում: Ենիչերիները ցած էին
անկնում այդ աստիճաններից և ողջ մնացած ընկերները
արքում, կոխկրտում էին նրանց դեռ կիսակենդան, տաք
ծարմիրները:

Թե՛մ ընդհարումներից մեկում, երբ թուրք սակյարներին
հաջողվեց մագլցել պարսպի վրա և անողոր մարտ բորբոք-
վեց, Ռոման Վսյնովը վիրավորվեց: Կուլում էին այնպիսի
նեղվածքում, զրեթե իրար կսլած, որ մեռածները չէին կա-
րողանում ընկնել և տարուբերվում էին կովոզների միջև,
ասևս կենդանի լինեին: Այդպիսի մի սպանված ենիչերի հտե-
վից ընկավ Ռոմանի վրա, և կաղակը, մտածելով, թե թուրքը
ուզում է բռնել իրեն, մի պահ շրջվեց, թողնելով հակառա-
կորդին, որի հետ ձեռնամարտի էր բռնված: Սա անմիջապես
եզտվեց զրանից և սուրն իջեցրեց կաղակի գլխին:

Ռոմանը մի ճիշ արձակեց ու երերաց: Արյունը լցվեց աշ-
քերը:

Զվենիգորան բռնեց նրան, ետ քաշեց: Արսենի սիրտը
կծկվեց ցավից, երբ տեսավ, թե ինչպես ընկերոջ դեմքը ճեր-
մակ րաթանի գույն ստացավ:

— Ռոման, ախպերս, — ինչքան ուժ ունեք գոչեց նա:

Ռոմանը թույլ ժպտաց:

— Դո՞ւ ես, Արսեն... Ինչո՞ւ քեզ շեմ տեսնում:

Զվենիգորան նրա դեմքից սրբեց արյունը: Ռոմանի պղզ-
տորված աչքերը փայլեցին ուրախությունից. նա տեսավ Ար-
սենին, որ կոացել էր իր վրա:

— Կապիր վերքս, — շնչաց նա: — Ու ես ոտքի կելնեմ:

— Սպասիր, սպասիր: Ո՞ւր: — Արսենը պատուեց իր շապիկը, պինդ կապեց Ռոմանի գլուխը: — Գնանք ներքև: Ես կօղնեմ... Դնանք:

Բայց Ռոմանը հրաժարվեց:

— Դու կգնալի՞ր... Չէ, Արսեն, մեր տեղը էստեղ է: Տես, ինչպես են հուպ տալիս անիծվածները:

Թուրը ձեռքում պինդ սեղմած՝ նա դանդաղ բարձրացավ տեղից: Քայլեց առաջ: Զվենիգորան գլուխն օրորելով գնաց նրա ետևից...

Կեսգիշերին պարզ դարձավ, որ թուրքական գրոհը թուլանում է: Ավելի ուժգին որոտացին կրակոցները, ենիչերինները, բարձրացան պարիսպների վրա, հրդեհների արնագույն լույսի տակ շողշողացին սրերը, խոխուացին մեռնողները, բայց արդեն թշնամին առաջվա թափը չունեւր: Մարդիկ հոգնել էին: Ասկյարները նույն արագությամբ չէին բարձրանում սանդուղքներով, մի տեսակ ծուլ ու ալարկոտ էին կռվում և, որ առավել ապշեցուցիչ էր, իրենց վայրենի, ծորուն ալլալի՞ր՝ չէին գոռում այլևս:

Այդ պահին գեներալ Գորգոնիձ մտտեցավ մի ջահել սերդյուկ: Նա քրտնած էր, շնչասպառ, գլխաբաց:

— Պարոն գեներալ, պարոն գեներալ:

— Հը, ի՞նչ ես ուզում, — նրա կողմը դարձավ Գորգոնի:

— Հրաման գլխավոր հրամանատար իշխան Ռոմոզանովսկուց...

— Ի՞նչ: Զորակայանի՞ց: Դու ինչպե՞ս ընկար այստեղ:

— Գաղտնի մուտքով: Հազիվ խցկվեցի...

— Ի՞նչ ուրախ լուր ես բերել, կադա՛վ:

— Գլխավոր հրամանատարը հրամայում է անհապաղ գործը դուրս բերել Թյասմինի մյուս ափը, իսկ թնդանոթներն ու ամրոցը պայթեցնել, պարոն գեներալ: — Եվ նա հանձնեց ծրարը:

— Ի՞նչ, — գոռաց գեներալ Գորգոնի: — Խելքդ գլխավոր է կազմել:

Մեքդյուկը տարացավ:

— Եւ գլխավոր հրամանատարի հրամանն է...

Բայց կատաղած շոտլանդացին այլևս ուշադրություն

չդարձրեց նրա վրա: Արագ պոկեց մոմե կնիքը, աչքի անց-
կացրեց Ռոմոդանովսկու նամակը: Զայրույթից տեղում
ծառս եղավ:

— Ո՛վ սուրբ Մարիամ: Ախր սա խելագարություն է: Մենք
դեռ երկար ժամանակ կարող ենք դիմադրել թուրքերին: Ինչ-
պե՞ս կարելի է հանձնել ամբողջ, որի համար այնքա՛ն ար-
յուն է թափվել: Հը՞... Ախր մեր ընկերների դիակները դեռ
տաք են, Ենիշերիներն ամենուրեք հտ են մղված... Ո՛չ, ո՛չ,
չեմ հավատում: Սա սխալ է:

Մոլոր հայացքով նա գնեց իրեն շրջապատողներին:

Սերգյուկը մռայլ նայեց նրան, նորից կրկնեց.

— Դա գլխավոր հրամանատարի հրամանն է: Եվ իշխա-
նը խնդրեց շուշացնել, գեներալ:

Գորգոնը լուեց: Լսածից ապշած՝ լուեցին նաև ամբողջ
պաշտպանները: Ռոմանը, թրին հեծված, մոտեցավ Արսե-
նին, գրկեց նրա ուսերը: Սպիտակ վիրակապի վրա սևին էր
տալիս արյան բիծը:

— Էս ո՞նց կլինի, Արսեն, — շշտաց Ռոմանը: — Բերզը
հանձնե՞նք: Էսքան բանից հետո...

Զվենիգորան նույնպես ամբողջ մարմնով դողաց զայ-
րույթից:

— Բա՞նք մենք չենք... Սրտիցս արյուն է գնում. կորավ
Զիգիրինը: Քաղաքից ոչինչ չմնաց, թուրքերը ամեն ինչ վա-
ռեցին, ամեն ինչ ավերեցին: Հիմա էլ բերզը... Մեր ձեռքե-
րով... հօդս ցնդեցնենք... Հանձնենք... Տե՛ր աստված. մար-
դիկ ի՞նչ կասեն:

Բոլորն էլ վհատ, ընկճված տեսք ունեին: Ռոժկովը սեղմել
էր բոտեղիները: Գրիվան շարությամբ նայում էր աչքի տա-
կով:

Սպառու՞ էին, թե ինչ կասի գեներալը:

Վերջսուպես գեներալը գլուխը բարձրացրեց, ասաց.

— Է՛հ, ինչ արած, մտածելու բան չկա: Հրամանը հրա-
ման է... Հաղորդեք պարիսպներին. թնդանոթներն անհապաղ
շարրից հանել ու շարտել ենիշերիների գլխներին: Բոլորը հտ
քաշվեն դեպի հյուսիսային աշտարակ... Վտտողի նեղուղը պաշ-
թեցնել, երբ բոլորը դուրս կգան ամբողջից: Նա մի հայացք
գցեց գլխավորների մրտաված դեմքերին: — Ռոժկով, այդ գործը

քեզ եմ հանձնարարում... Մի անգամ էլ ծառայիր հայրենիքին, աղա՛վնջակա: Սակայն, եթե չես ուղում...

Ռոժկովը առաջ եկավ: Խուլ ձայնով ասաց.

— Շնորհակալություն, գեներալ:

Ռոժկովի կողքին կանգնեց Գրիվան, մռայլ փայլեցնելով աչքերը:

— Ինձ էլ թույլ տվե՛ք Կուզմաջի հետ գնամ, պարոն գեներալ... Մեկը լավ է, իսկ երկուսը՝ ավելի լավ. ամեն ինչ կարող է պատահել...

— Լա՛վ, գնացե՛ք:

Ռոժկովն ու Գրիվան լուռ սեղմեցին ընկերների ձեռքերը. արագորեն անհետացան պարիսպների ներքին ճաղաշարի ետևում:

Ամբոցը հանձնելու և Թյասմինի մյուս կողմը Նահանջելու մասին հրամանը կայծակնային արագությամբ տարածվեց ամբոցի պաշտպանների մեջ: Սերդյուկների և կազակների ջոկատները թողեցին իրենց դիրքերը և շտապեցին դեպի հյուսիսային աշտարակը, որի տակ արդեն ականներ էին դրված:

Տարօրինակ էր թվում, որ պարիսպների վրա չէին որոտում թնդանոթները, չէին ճարձատում մուշկետներն ու փրշտովները, չէին ոռնում հազարավոր կոկորդները: Միայն դարպասներն էին ցնցվում բաբանի հզոր հսրվածներից դրանք թուրքերն էին, որոնք, սրտապնդված այն բանից, որ ռուսները համարյա չեն կրակում պարիսպների գլխից, ուժեղացրել էին ճնշումը:

Թնդանոթածիգները խցեցին թնդանոթներն ու շարտեցին մուշկետները, հանդուգն ասկյարների գլխերին, որոնք դեռ համառորեն շարունակում էին մագլցել պարիսպների վրա: Ի պատասխան զարհուրելի վայնասուն լավեց:

Ականների պայթյունից օդ թռավ հյուսիսային աշտարակը և նրա կողքին պարսպի մի մասը: Ստրելեցների ու կազակների խումբը նետվեց բաց անցքից ներս, ճամփին ոտնատակ տալով պայթյունից շջմած ու սարսափահար եղած երիշերիներին, զառիկող լանջով գլորվեցին ցած, դեպի կալինովյան կամուրջը:

Այդ նույն ժամանակ ճարճատեցին հարավային աշա-
տակի դարպասները: Ամուր կաղնե բառակող շորսուները շփ-
յացան բարանի հոտը հարվածներին, տեղի տվեցին: Զարդ-
ված, տեղահան արված դարպասները տապալվեցին գետին:
Հարձակվողների սև հորձանքը ներխուժեց ամրոց:

Արսենը բռնեց թուլացած Ռոմանի թեառակերից, քարշ
տվեց դեպի անցքը: Կհասցնե՞ն արգոյք: Նա շուրջը նայեց.
Քուրբերը լցրել էին հրապարակը, տարածվել էին ամրոցի
մութ անկյունները: Կոտորում էին մենակ մնացած ստրելեց-
ներին ու կազակներին, որոնք դանդաղել էին ու չէին հասցը-
-ել հեռանալ:

Վառվող ախոռը լուսավորում էր շորս կողմը:

Հրդեհի զոդգոջուն-արնավառ լույսի տակ Զվենիգորան
նանկարծ նկատեց գեներալ Գորգոնին: Լողլող, նիհար շոտ-
յանդացին արագ վազում էր դեպի վառողի նկուղը:

«Խելագար: Կկորչի», — փայլատակեց Արսենի գլխում, և,
Ռոմանին թողնելով անցքի մոտ, ամբողջ թափով վազեց նրա
հանապարհը կտրելու:

Նկուղին հասան գրեթե միաժամանակ: Գեներալը կիսա-
բաց դռնից ներս բնկավ: Ներքևում տնտնում էին երկու սև
էրպարաններ:

— Կուղմա, հնչ: Ես մյուլ տալիս: Շո՛ւտ, — մոնչաց գեներ-
ալը: — Ուր որ է ենիչերինները վրա կտան:

Նկուղում կապույտ կայծեր բռնկվեցին, դա Գրիվան էր
խփում կայծքարին, բայց արեթր ոչ մի կերպ չէր կաշում:

Գորգոնը հայհոյեց և սլացավ դեպի բոցավառվող ախոռը:
Արսենն ուղեց կանգնեցնել նրան, բայց շհաջողվեց: Գեներա-
լը կրակի միջից խլեց վառվող փայտը և նույն արագությամբ
եւ վազեց: Ենիչերինները նկատեցին նրան: Մեծ բազմությամբ
անկան նրա ետեից:

Գոնեց ներս բնկելով՝ գեներալը բղավեց.

— Փախե՛ք: Վառում եմ: Թուրքերը մոտիկ են:

Նրան ընդառաջ նետվեց Գրիվայի դարհուրելի սև կերպա-
բա՛ն ըր:

— Զհամարձակվես, — մոնչաց գապորոժցին: — Տուր
սատեղ, Կուղմա, էս խելագարին դուրս տար այստեղից: —
Գրիվան գեներալի ձեռքից խլեց վառվող փայտը:

Գորդոնը անսպասելիությունից շշմեց, բայց Ռոժկովը առանց բաշվելու բռնեց նրա ուսերից ու զոռով հրեց դեպի գուռը: Զվենիգորային տեսելով՝ գոչեց.

— Արսեն, սար սրան: Փախեք, շո՛ւտ:

Մինչ այդ ամբողջի բակը լիքը լցվեց ենիչերիներով:

Զվենիգորան գեներալին քարոշ տվեր դեպի պատի մեջ բացված լայն ճեղքը, որտեղ երևում էր Ռոմանի միայնակ կերպարանքը:

Ռոժկովին ուզեց ետ դառնալ նկուղ, բայց Գրիվան փակեց նրա ճանապարհը.

— Փախիր, քանի շուտ է: Ինչո՞ւ գուր տեղը երկուսս էլ կորչենք: Ես իմ հաշիվներն ունեմ թուրքերի հետ... — Տեսնելով, որ Ռոժկովը տատանվում է, Գրիվան վառվող ձողով բռթեց նրա ուսը. — Փախիր, սատանա...

Թուրքերը արդեն մի քանի քայլի վրա էին, ևս մի ակրն-թարթ, և իսկապես ուշ կլինեիր: Ռոժկովը մրրիկի նման սլացավ Արսենի ետևից: Նա տեսավ, թե ինչպես դապորոժցին, գեներալ Գորդոնին հրեց անցքի մեջ, խտտեց Ռոմանին ու նրանց հետ գլուխկոնժի գլորվեց թեք լանջն ի վար:

Այդ միջոցին Գրիվան, ջահը ձեռքում պինդ սեղմված, ետ վազեց դեպի նկուղ: Նրա ետևից, շհասկանալով, թե ուր են խցկվում, սլացան կովից տաքացած ենիչերիները:

Իր ետևում բաղմամբիվ ոտքերի զոփյուն լսելով՝ Գրիվան աստիճաններով ցած վազեց և կանգ առավ դիմացի նեղ անցումի մոտ, որի երկու կողմերում փայտե խոր ամբարների մեջ սեին էր տալիս վառողը:

Մի քանի տասնյակ ենիչերիներ, սայթաբելով, վազեցին դեպի Գրիվան: Նրանք դեռ գլխի չէին ընկնում, թե ուր են ընկել: Իրենց առջև տեսնելով կազակին և, մտածելով, որ ծուղակն են զցել, սրերն առաջ մեկնած նետվեցին նրա կողմը: Գրիվան առդեն էր, միայն ջահն էր ձեռքին, դրա համար էլ նրանք մտածեցին, որ հեշտությամբ կբռնեն:

Նրանց կանգնեցրեց կազակի գրեթե խելագար, դիվային ծիծաղը: Այդ անսպասելի ծիծաղից շշմած՝ առջևից զնաղող ենիչերիները հանկարծ նկատեցին վառվող կույտերը: Հուսահատ մի ճիչ տարածվեց նկուղի ցածրիկ բարև կամարների տակ:

— Հա՛հա՛հա՛հա՛հա՛, — ահաստարտուո հոհոաց Գրիվան: —
Հա՛հա՛հա՛հա՛հա՛: — Եվ նրա դեմքը, կրակի կարմրավուն
ցուրթով լուսավորված, լարվածությունից ծոմոված, շարա-
խնդորեն այլայլվեց:

Առջևի ենիչերինները ետ-ետ գնացին, շուտ եկան և փոր-
ձեցին փախչել: Բայց փախչելու տեղ չկար. նեղ անցումը լի-
քը լցված էր զինվորներով:

— Հա՛հա՛հա՛հա՛հա՛, — էլ ավելի բարձր հոհոաց Գրիվան
և վառվող ջահը շարտեց ամբարի մեջ...

Ահավոր պայթյունը ցնցեց Կամեննայա լեռը: Հողը երե-
րաց: Պայծառ բոցը ծառս եղավ դեպի երկինք, լուսավորեց
ողջ քաղաքն ու նրա շրջակայքը: Ցնցվեցին ամբողջ հզոր
պարիսպներն ու աշտարակները և իրենց ամբողջ ծանրու-
թյամբ փուլ եկան անվնաս մնացած տների ու ախոռի վրա:

Եվ նույն պահին էլ սկսվեց հրդեհը: Նրա հրացուլքը լու-
սավորեց ողջ շրջակայքը, հեռո՛ւ, հեռու...

Մի զարհուրելի ուժ Ռոժկովին վեր բարձրացրեց ու
շարտեց անհատակ խավարի մեջ, դեպի Կամեննայա լեռան
ստորտար... նա թափով ընկավ փշաթփերի մեջ ու ցած գոր-
վեց: Փուշը ծակծկեց նրան, շանգոնեց, բայց փրկեց մահից:
Ներքևում ինչ-որ մեկի ուժեղ ձեռքերը բռնեցին Ռոժկովին,
ոտրի կանգնեցրին: Դա գեներալ Գորգոնն էր: Նրա կողքին
կանգնած էր Զվենիգորան: Ռոման պառկած էր գետնին:

— Ռոժկո՛ւ, Ո՞ղջ ես, — բացականչեց գեներալը և, ուրա-
խացած, կրծքին սեղմեց ստրելեցին:

— Ողջ եմ, — մեղմ ձայնով պատասխանեց Ռոժկովը և
դանդաղ ավելացրեց. — Իսկ... Գրիվա՞ն...

Բոլորը խոնարհեցին գլուխները, լուեցին, վերջին տուրքը
տալով նրան, ով արգեն իրենց հետ չէր: Ապա զանդաղ,
գլխահակ քայլեցին դեպի Թյասմին:

Կալինովյան կամրջի տեղում միայն դերաններ էին ցրց-
ված մնացել: Ջրի մեջ սեխն էին տալիս շորսուններն ու տախ-
տակները: Դրանց արանքում թալրտում էին զինվորները:
Ռոմանը լողում էին դեպի հակադիր ափը, մյուսները, լպրբ-
ծուն գերաններից կառչած, նախանձով ու հուսահատու-
թյամբ նայում էին նրանց, ովքեր լողալ գիտեին: Երբորդնե-
րը շուր կուլ տալով, հուսահատ թալրտում էին՝ օգնություն

աղերսելով, և, պատասխան շատանալով, իջնում էին ջրի հատակը:

Տեսնելով, թե ինչպես անփառունակ կերպով են կործանվում իր գինվորները, գեներալ Գորգոնը մտավ ջուրը, գոչելով:

— Եղբայրներ, ո՞ւմ եք սպասում: Օգնեցեք նրանց: Մի՞ թույլ տվեք, որ խեղդվեն:

Ոչ ոք չսեց նրան: Ետևում ավելի ու ավելի մոտիկից էր լսվում ենիչերիների կանչվառուքը, որոնք ամբողջ պայթյունից հետո ուշքի էին եկել և սկսել էին հետապնդումը: Ջրի մեջ, խեղդվողների արանքում, շրմփացին առաջին շիկացած գնդակները: Թուրքերն սկսեցին գնդակոծել անցումը:

Գորգոնը հուսահատ բռնեց գլուխը: Մի՞թե դեռ մի ժամ առաջ նա կարող էր մտածել, որ իր և Կորովկայի գնդերը կկործանվեն ոչ թե կովի մեջ, այլ Ռյասմինի սառը ջրերում: Անտանելի հուսահատությունը ասես արցանի պես սեղմեց նրա կոկորդը: Բազում տարիների գինվորական փորձից նա գիտեր, որ ոչ մի հրաման, ոչ մի աղերսանք չեն օգնի հիմա խուճապահար զորքին: Բայց դա արգեն, ճիշտն ասած, այլևս, զորք չէր, այլ անասնական վախով և փրկվելու միակ ցանկությունը բռնված մարդկանց ամբոխ, առանց լինելի, առանց ավագների, որոնք կորցրել էին իրենց գինվորներին: Այդ զարհուրելի խառնաշփոթի մեջ: Հիմա ամեն մեկը հողում էր միայն իր մասին և ձգտում էր միակ նպատակին՝ հասնել դիմացի ափը:

Նրան շշմեցրեց մի անսպասելի միտք. մի՞թե իր առջև այն նույն մարդիկ են, որոնք ընդամենը մի ժամ առաջ կոփում էին քաջարար, անձնազոհ կերպով պաշտպանում էին ամբողջը, մարտնչում էին թշնամու դեմ, ատելությունը էին նայում մահվան աչքերին... Այո, նույն մարդիկ էին: Բայց նրանք կորցրել էին մարտական ոգին, հաղթելու հավատը, կորցրել էին, վերջապես, ընկերոջ արմունկի զգացումը և դրա համար էլ կործանվում էին անփառունակ...

— Իսկ ո՞վ է մեղավոր:

Մտքում նա նախատում, հայհոյում էր բոլորին ու արար աշխարհին. Ռոմոզանովսկուն՝ նրա անխոհեմ, հապճեպ

հրամանի համար. թուրքերին, մթությանը, թյասմինին, որ խոչընդոտ եղավ իրենց...

Մոտակայքում պայթեց ուսմբր, հուր ու կրակ շաղ տվեց, լուսավորեց ողջ շրջակայքը: Գորդոնը օրորվեց և ընկավ ջրի մեջ: Կուզմա Ռոժկովը բռնեց նրան, օգնեց վեր կենալ: Բարեբախտաբար, գեներալը նույնիսկ չէր վիրավորվել:

Դեմ առնելով զարդված ցցագերաններին, ջրի մեջ, լողացող քանդված կամրջի տախտակներին, խեղդվածների սառած մարմիններին, նրանք միասին լողացին դեպի հակադիր ափը...

Նրանց ետևից ջուրը մտան նաև Արսենն ու Ռոմանը:

Ափին հայտնվեցին ենիչերիները. նրանց սուր կոկորդա- լին ճիչերը դրնգոցով տարածվում էին գետի սև-արնադույն ալիքների վրա: Նրանք ընդամենը մի քանի քայլ էին հեռու փախտականներից, բայց ոչ մեկը չցանկացավ նրանց ետևից ջուրը նետվել: Միայն նրանք, որոնց հրացանները լիցքավորված էին, մի քանի անգամ կրակեցին: Գնդակները ճողփյունով զարկվեցին ջրին:

Ռոմանին բռնած՝ Զվենիգորան ուժգին թիավարում էր աջ ձեռքով, իր ողջ ուժը և փրկության հույսը նրա մեջ դնելով: Շորերը անմիջապես ծանրացան ու քաշեցին ներքև: Գոտուց ամբացված թուրն ընկնում էր ոտքերի արանքն ու խանդա- րում: Հաղարավոր ձեռքերից ու ոտքերից պղտորված, ալե- կոծված ջուրը բերանն էր լցվում: Ռոմանը շատ արյուն էր կորցրել, թույլ էր ու, չնայած ոտքերը շարժում էր, բայց հա- զիվ էր մնում ջրի երեսին: Արսենը կամաց-կամաց բաշում էր նրան իր ետևից, անցնելով ուժասպառ եղած լողորդների կողքից, որոնք կորցնելով հույսը շարունակում էին թուր- տալ եղջերատերևներին, տիպով ծածկված ցցագերանների ու լպրժուն, սառը մարդակների միջև:

Թյասմինը լայն շէր, բայց խորն էր և շատ ստրելեցների ու կաղակների համար գերեզման դարձավ: Շատ մայրերի գլուխներ էին արծաթվել վաղաժամ վշտից, հարյուրավոր փոքրիկ երեխաներ էին որբացել, շատերն էին բաժանվել իրենց սիրելիներուց...

Ռոմանը բոլորովին ուժասպառ եղավ: Նույնիսկ էլ չէր կարողանում Արսենի շորերից բռնել: Արսենին էլ լքում էին վերջին ուժերը. Ափը հեռու չէր: Այնտեղից ուռնու և աղնր-

վամորենու ճյուղեր իջեցրին ջուրը: Թվում էր, բավական է ձեռքդ երկարացնես և կբռնես դրանցից: Բայց ուր է ևյստեղ, գետադալարում, հոսանքը ուժեղ էր և զշում էր մի կողմ, իսկ հորձանուտը բաշում էր հատակը:

Չնայած, որ գիշերվա ջուրը սառն էր, Արսենը տոթ զգաց: Մի՞թե խեղդվելու էն: Եվ ոչ ոք ոչ մի ժամանակ չի պատմի Ջլատկային, թե ուր կորավ իր սիրելին, ցույց չի տա իր գերեզմանը: Ոչ ոք չուր չի տանի մորը՝ որդու վերջին բուպենների մասին:

Նա սեղմեց ատամները և մոլեգնորեն ձեռքերն ու ոտքերը թափահարելով շնալող տվեց: Ուրիշ կերպ այլև չէր կարող: Վախենում էր, որ եթե մի պահ ոտքերը ցած իջեցնի, ապա այլևս չի կարող լողալ առաջ, երկուսն էլ կսուզվեն սառը անդունդը, մութ, տղմոտ հատակը:

Ափը դանդաղ էր մոտենում: Ամբողջ երկայնքով, ինչքան աչքը կարող էր տեսնել, դեպի ափ էին ձգվում թաց չոված ձեռքերը նրանց, ովքեր իրենցից առաջ էին տեղ հասել: Բայց ոչ բոլորին էր հաջողվում ափ դուրս գալ: Արսենը տեսավ, թի՛նչպես այդ ձեռքերից մի քանիսը անդոր թայրտացին օդում, փորձելով հասնել որևէ փրկարար ճյուղի, իսկ հետո սուզվեցին ու այլևս ջրի երես դուրս չեկան:

Նա մեծ դժվարությամբ ափ հասավ, փայտացած մատներով կառչեց փոշնենու պոկված ճյուղից ու շկարսդացավ դուրս գալ: Ոտքերը հատակին չէին հասնում: Զառիկադ ափը իր խորուստներով, որոնց մեջ, հավանաբար, խեցգետիններ էին վխտում, թեբությամբ ցած էր գնում: Արսենը ինչքան ուժ ուներ, կառչեց փրկարար ճյուղից ու ետևից բաշեց Ռոմանին: Շունչ առավ, բերանից դուրս թքեց տղմոտ ջուր: Ծնկով շոշափեց հոսանքի բացած նեղ սանդղախորշը ու կանգնեց նրա վրա: Սիրտը թայրտում էր կրծքի տակ, ինչպես տենդով բռնված հիվանդ: Զվենիգորան այնպես ընկճված էր ու հոգնած, որ նույնիսկ փրկվելու ուրախությունը չզգաց: Ինչոր մեկը ձեռքը մեկնեց նրան: Նա նախ Ռոմանին բարձրացրեց, հետո արդեն ինքը դուրս եկավ: Ռոմանին պառկեցրին ափին, և նա ուժասպառ ծանր հառաչեց, իսկ Զվենիգորան նստեց ուսենու տակ, մեջքը հենեց խիլավոր բնին ու խոր վշտով նայեց Զիդիրինին: Տեսավ, թե ինչպես արյունոտ

ցութերը խավարից դուրս կորզեցին ներքին քաղաքի փլատակներն ու Կամեննայա լեռան վիթխարի մոայլ գանգվածը:

Հրդեհի բոցերի մեջ դեսուզեն էին վազվզում ենիչերիների մութ կերպարանքները:

Արսենը ծանր հառաչեց: Յնցվեց հանկարծահաս սարսուռից, որ համակեց նրա կուրծքը և ասես մամլիչով սեղմեց սիրտը: Մի՞թե այս բոլորը կատարվում է իրականում: Մի՞թե ինքը սեփական աչքերով տեսնում է Չիզիրիսի զարհուրելի ավերակներն ու նրա կործանումը: Արսենը ափով շփեց թաց դեմքը, սրբեց մթության մեջ անտեսանելի արցունքները և առաջին անգամ ափսոսաց, որ այսօր թշնամու գնդակը չսպանեց իրեն կամ ջրապտույտ չքաշեց իր սառը անդունդը:

11

Սամոյլովիչն ու մոմողանովսկին ղորքին հրաման տվեցին նահանջել դեպի Բուժինյան նավահանգիստը, որ Դնեպրի վրա էր:

Վաղորդյան թանձր մշուշի քողի տակ հարյուրհզարանոց ոռոս-ուկրաինական բանակը անաղմուկ դուրս եկավ Թյասմինի ձախ ափին ընկած դիրքերից: Բոլորն ընկճված էին. Լտևում, թուրքերի ձեռքում, մնացել էին Չիզիրիսի փլատակները. մնացել էր ուկրաինական հողի կեսը՝ Աջափնյակը: Ութևեկ գորապետները, շարքային կազակներն ու ստրելեցները հասկանում էին, որ դա դեռևս պարտություն չէ, որ, քանի դեռ գոյություն ունի մարտունակ զորք, կա պատերազմը հաջողությամբ ավարտելու հույսը, այնուամենայնիվ այդ նահանջի համար յուրաքանչյուրն իրեն մեղավոր էր դգում հայրենիքի առջև, գոհված ընկերների առջև:

Վաղ առավոտ Մյուրադ Գիրեյ խանը իսկույն տեղեկացավ, որ ուռուսները նահանջել են: Ղրիմյան ու նողայական հորդանների հետ ընկավ նրանց ետևից և, հեշտ ավարի հույս ունենալով, հարձակվեց կազակների գնդերի աջ թևի վրա: Բայց, հանդիպելով մուշկետների ու ատրճանակների փոթորկալից կրակին, թաթարները, որ գլխաված էին առավելապես ազնվաներով ու սրերով, արագ թափով ետ գլորվեցին, կորցնելով մեծ քանակությամբ զինվորներ, ինչպես նաև հակառակորդի հարուստ զուսակից օգտվելու հույսը:

Շուտով խանին օգնութեան հասան սպախիաները, վա-
լախները և արարական թեթև հեծելագործի ջոկատները:
Անսպասելի հարձակումով նրանք լավ թափ տվեցին նա-
հանջող գործի վերջապահին: Մերթ աշտեղ, մերթ այնտեղ
կարճ, արշունահեղ ընդհարումներ բռնկվեցին: Երկու կող-
մերն էլ զգալի կորուստներ կրեցին: Թյասմիներից մինչև Գնե-
պըր ընկած ամբողջ ճանապարհը դիակներով էր ծածկված:

Վերջից գլխավոր ուժերով շտապում էր Կարա Մուսթա-
ֆան: Զիգիրիների դրավումով ոգևորված՝ նա հույս ուներ գրյ-
խովին ջախջախել ուռուսներին և հաղթական ավարտին
հասցնել ղեպի հյուսիս կատարած այդ ծանր արշավանքը:
Ստամբուլից արդեն շտապեցնում էին նրան, ստիպում, բանի
որ շուտով սկսվելու էր ավստրիական պատերազմը:

Երեկոյան երկու բանակներն էլ կանգ առան: Ռուս-ուկ-
րաինականը, թևերով Գնեպրի ափին հենվելով, արագորեն
սկսեց խրամատավորվել բարձր բլուրների վրա: Թուրքերը
փորձեցին ընթացքից ուսներին գետը լցնել, բայց, վճռա-
կան հակահարված ստանալով, հարկադրված եղան կանգ
առնել, նույնիսկ փոքր-ինչ նահանջեցին: Մթնշաղի հետ մար-
տական գործողութունները դադարեցին:

Երկու բանակատեղերում էլ լարված լռութուն տիրեց:
Թիկունքում բոցավառվեցին խարույկները. խոհարարները
սկսեցին ընթրիք պատրաստել և միաժամանակ նախաճաշ՝
առավորով: Համար: Փոնգտում էին հոգնած ձիերը: Բար-
ձուներների վրա երևում էին ժամապահները:

Ստրելիցները, դրաղունները, կաղակները և ողջ դինվո-
րական անձնակազմը՝ ձիավարները, կերապանները, մար-
կիտանտները¹, սափրիչները, ամբողջ գիշեր շանեցներ² փո-
րեցին, թնդանոթները տեղադրեցին բարձունքներում, շանեց-
ների առջև, դեսնի մեջ սուր ցցեր խփեցին, որպեսզի խափա-
նեն թշնամու հեծելագործի գրոհը, վառող ու գնդակներ կու-
տակեցին խրամատների մոտ: Ոչ մի դինվոր չպատկեց բն-
լու: Այն թեև ոչ ոք ոչ մեկին չէր ստիպում, բոլորն էլ աշխա-
տում էին քափ ու քրտինք մտած: Գիտեն, որ յուրաքանչյուրի՝

¹ Մարկիտանտ — բանակի սպանապաճառ, միկիտան:

² Շանեց (գերմ.) — խրամատ, ժամանակավոր դաշտային ամրություն:

բախտը կախված է նրանից, թե որքանով կհաջողվի ամրացնել իր բանակատեղը:

Կազակները բացի այդ ամենից, իրենց սովորության համաձայն, դաշլագուրներ փորեցին, իսկ շանեցների ետևում իրար կպած շարեցին սայլերը՝ առեղներն ու քեղերը դեպի առաջ: Այրուծիու համար դա գերթն անհաղթահարելի ամբողջուն էր: Ասենք հետևակի համար էլ դժվար էր դրա վրա գրոհել:

Լուսադեմին բանակատեղը վերածվեց հզոր ամրության:

Արևի դուրս գալուն պես թուրքական բանակը հարձակման անցավ: Բուժինյան դաշտը և մերձդնեպրյան գահավանդակները երերացին թնդանոթների դղրդոցից: Սև ումրերը վառվող պատրույգներով ծանրորեն ընկնում էին գետին ու պայթում զարհուրելի դղրդոցունով, կրակի ու ավազի սյուների հանելով երկինքն ի վեր:

Կարա Մուստաֆան գլխավոր հարվածն ուղղեց Լուբենյան գնդի դեմ, որ կանգնած էր ուսական բանակի կողքին, մտադրվելով հենց այստեղից ճեղքել ատելի ուռուսների պաշտպանությունը:

Թշնամու հազարավոր հետևակայիններ վայրի կոնչյունով գրոհի նետվեցին հողային ամրությունների վրա:

Լուբենցիները երեք շարքով պառկեցին շանեցներում. վերջին շարքը լցնում էր մուշկետները, միջին շարքը դրանք փոխանցում էր առաջինին, ինչպես նաև հետզհետե փոխարինում էր սպանվածներին ու վիրավորներին, իսկ առջևի շարքը անընդմեջ կրակ էր բացում հարձակվողների վրա: Ենիշերիներին փովում էին զնդակներից հնձված, գլորվում էին դաշլագուրերը, ընկնում էին սուր ցցերի վրա, ջղաձգում հոգևարքի տառապանքներից:

Բայց ետևից ճնշեցին նոր հրոսախմբեր: Արևի տակ պրսպղացին սրերն ու յաթաղանները, քամուց փողփողացին, ծփացին դրոշները, մարտի կոչ անելով՝ վնգստացին եղջերափողերն ու զուռնաները, տազնապալից դղրդացին թուլումբասները: Իսկ այդ բոլորի վրա տարածվեց անմարդկային մոնչոցը՝ «Ալլահ! Ալլահ-հ!»:

Ռոմանին թողնելով գնդի բուժարանում, որ տեղավորված էր ներքևում, Դնեպրի ափին, Զվենիգորան միացավ իր հայեր

բևեակիցներին՝ Լուրենցիներին, և հիմա պատկած էր առջևի շարքում, հենց Գորգոնի դիվիզիայի ծայրին: Նրա հարևաններն էին ձախից՝ քեռի Իվանիկը, իսկ աջից՝ Կուզմա Ռոժկովը: Ռոժկովը ազատագրումը և Գրիվայի հերոսական մահը մտերմացրել էին զապորոժցուն ու ստրելեցին, և նրանք, օգտվելով իրենց գորամասերի հարևանութունից կողք-կողքի պառկել էին շանեցում: Լավ է, որ կովի մէջքաջ ու հավատարիմ ընկեր ունես կողքիդ:

Քուրքերի առաջին գրոհները ձախողվեցին: Քողնելով սպանվածներին ու վիրավորներին՝ ենիշերիները ետ բաշվեցին:

Իվանիկը ձեռքերը շփեց, ուրախացավ:

— Այ գորդը ձեզ տանի, մի տես ո՞նց են փախում, համա թե տուր տվինք, հա՛, հասկանում ես: Փորձեր մեկ էլ քթներդ էստեղ խոթել, կնդած սատանք: Էստեղ էլ ձեր վերջը կգա:

Զվենիգորան ու Ռոժկովը բարեհոգարար ծիծաղեցին կովարար կազակի վրա: Հայտնի չէր դեռ, թե նվազ Իվանիկը իրեն ինչպես կդրսևորեր ձեռնամարտում, բայց շիտակն ասած, վատ չէր կրակում:

Կարճ գաղարից հետո թուրքերը նորից անցան հարձակման: Գլորային թուլումբասները, և թշնամու սև հորդաները կատաղած նետվեցին դեպի սերդուկական շանեցները, վրաբնկան մոլիգին շարությամբ, ինչպես փոթորկված ծով: Մուշկետների համազարկը չկանգնեցրեց նրանց: Սկսվեց ձեռնամարտը:

Դադանացած ենիշերիները ճղավոցներով, գոռում-գոչունով թափվեցին սերդուկների վրա: Շանեցներում, բլուրների վրա, սալերի արանքում հազարավոր մարդիկ մուշկետները մի կողմ շարտելով, սրերով կոտորում էին միմյանց: Լուրենցիները զիմացան քաջաբար, ոչ մի քայլ չնահանջեցին: Նրանց կողքին էլ՝ Գորգոնի ստրելեցիները:

Արսենի սիրար վառվում էր կատաղությամբ ու վրեժով: Նրա թուրը անխոնջ վեր ու վար էր անում: Նա իր առջև տեսնում էր թշնամիների, որոնք անշուր, տոթ տափաստանում, օղտպարանով կապած քաշ էին տալիս իրեն, ծաղրում էին ու ծեծում անասունի պես: Հիմա նրանք եկել են աչտեղ,

որպեսզի այդ նույնն անեն իր բոլոր մերձավորների, իր ողջ ժողովրդի հետ... Այ, ավելի շատ է ինքը կոռուպի այս լերկ ուրերների վրա, բան տեսնի, թե թաթարական հում կաշեփոկերով ինչպես են կապկալում Զլատկայի ու Ստեղայի ձեռքե-

72

Ճակատամարտը ետևում էր ամբողջ դաշտով մեկի Բայց ամեն մի գինավորի թվում էր, թե հենց իր վրա են հարձակվել ամենակատաղի ենիչերիները, որ հիմա հենց ինքն է պաշտպանում ամբողջ զորքի պատիվը:

Արսենի կողքին կալում էին Իվանիկն ու Կուղմա Ռոժկովը: Փոքրիկ կազակը շտեննված անվախ մարդ դուրս եկավ: Ես իր թրով չէր կարողանում հասնել թշնամիներին, բայց այնպիսի ճղեգնությամբ ու անձնուրացությամբ էր հարձակվում նրանց վրա, որ վերջինները, ապշած անսպասելի բուռն գոհից, մանավանդ նրա սուր ճղճղոցից, որով «Պստի Շեյթանը» հարձակվում էր նրանց վրա, նահանջում էին: Սակայն նրանք չէին կարողանում ազատվել Զվենիգորայի սրից: Դեռ երբեք այդպիսի կատաղությամբ չէր կովել զապորոժցին, ինչպես այսօր: Ամբողջ բլրակը, որտեղ թուրքերը շրջապատել էին այդ երեքին, ծածկված էր սպանված ու վիրավոր ենիչերիների դիակներով:

— Արսեն, զգուշացի՛ր, — հանկարծ դռաց Իվանիկը: Զվենիգորան ետ նայեց: Աչքերը սարսափազդու շոժ՝ նրա վրա նետվեց մի ենիչերի: Երկար կեռ թուրը բարձրացրել էր վեր և պատրաստվում էր հարվածելու: Մի ակնթարթ ես և կճեղքեք Արսենի գլուխը: Իսկ դիմացից հարձակվում էին միանգամից երեք հոգով... Փրկություն չկար: Իվանիկն էլ դա հասկացավ: Նրա պատիկ մարմինը պինդ զսպանակի նման սեղմվեց ու գլուխկոնժի նետվեց թուրքի ոտքերի տակ: Թուրքը սայթաքեց ու ընկավ: Երկուսն էլ գլորվեցին գետին: Փայտատակեց Ռոժկովի սուրը և Իվանիկին փրկեց անխուսափելի մահից:

Իվանիկը ոտքի ելավ, մի քացի տվեց թուրքի դեռ տաք ձարմնին:

— Հերիք է քեզ, թ-թուրքո՛ւկ: Քո կոնիվը կովեցիր պրծար, ասկանում ես — Եվ նորից, թուրք խլելով, նետվեց թշնամու վրա:

Լուրենցիներին օգնության եկավ միրզորոտյան գունդը՝ հետմանի գլխավորութեամբ: Միրզորոտցիները շրջանցեցին Սամոյլովիչին, խուժեցին լուրենցիների գիրքերը և հարվածեցին ընթացքից... Հողը երևաաց հազարաձայն «ուռայից»: Ենիշերիները ցնցվեցին: Նահանջեցին: Փորձեցին մնալ ամրացված գիրքերում, բայց ճնշումն այնքան ուժգին էր, որ փախան շանեցիներից:

Երկրորդ և երրորդ օրը Կարա Մուսթաֆան իր բոլոր թրդանոթների կրակն ուղղեց կուրսկյան ու մոսկովյան ստրելեցիների զնդերի վրա: Կատաղի հրաձգությունից հետո, որտեղ լուսաբացից մինչև նախաճաշ, Ենիշերիները, սպախախները, թաթարները հետևակ և հեծելակ շարքերով անընդմեջ մինչև իրիկուն, դրոհեցին, այդ զնդերի վրա, փորձելով ճեղքել նրանց պաշտպանութունը, բայց այստեղ էլ հաջողություն չունեցան: Բոլոր շանեցիները լցրին սպանվածներով և վիրավորներով, շեկ գառիկոզ բարձունքները ցողեցին առաջարյունով ու կրկին նահանջեցին...

1678 թ. օգոստոսի 18-ի գիշերը ռուս-ուկրաինական բանակը ամբողջ Բուժինյան դաշտով մեկ վճռական հարձակման անցավ:

Մարտը սկսվեց բոլոր ուղղություններով միաժամանակ Ստրելեցիներն ու սերդուկները աննկատ մոտեցան թշնամու գիրբերին և հոծ զանգվածով ներխուժեցին թուրքական շանեցիները: Կաղակական հեծելազորները ձախ թևում ընթացքի սեպի նման խրվեցին ղրիմյան և բուշակյան հորդաներ՝ արանքի:

Խաղաղ, լուսնկա գիշեր էր: Անամպ, մուգ կապտավուն երկնքում, ինչպես թռչող լուսատուիկներ, առկայծում էին հսկա աստղերը: Ներքեում, բլրակների ստորոտում, լուսնիները երկնագույն կալթկտուրով փայլում էր Դնեպրը:

Ե՛վ գիշերը, ե՛վ մերձդնեպրյան բլրակները մի ակնթաթում ցնցվեցին զոփյունից, ճղավոցներից, թնդանոթների որոտից ու մուշկետների կրակոցից: Հսկա պատի նման, մի քանի վերստի վրա փոթորկվեց, եռաց խելահեղ, արյունալի կոտորածը:

Մինչև լուսաբաց փոփոխական հաջողությամբ մոլեզվեց ճակատամարտը: Թուրքերն ու թաթարները կատաղորեն դի-

ձագրում էին: Հակառակորդների ուժերը գրեթե հավասար էին:

Այնժամ Սամոյլովին ու Ռոմոգանովսկին երկու թարմ հետևակ գունդ մտցրին մարտի մեջ: Ուժասպառ եղած թուրք ասկյարները չդիմացան սրենթաց հարվածին, սասանվեցին ու ետ գլորվեցին: Ստրելեցներն ու սերդյուկները թափով անցան թշնամու շանեցների վրայով, մխրճվեցին փախստա-
կանների աճբոխի մեջ՝ սարսափի ու խուճապի մատնելով նրանց:

Ձվենիգորան Ռոժկովի ու Իվանիկի հետ հայտնվեց կովի բուն կենտրոնում: Ստրելեցների և սերդյուկների պահեստա-
յին զնդերը անցան հենց նրանց դիրքերի վրայով և իրենց նտեից նրանց էլ տարան թուրքական պաշտպանությունում շոյացած ճեզբվածքի մեջ: Նրանք վազում էին բոլորի հետ, գողոտում էին, սրերը թափահարում ու թրատում վազորդ-
յան մշուշի միջից հայտնվող մութ կերպարանքներին:

Իր բարձրացան բլուրը, տեսան որ աջ ու ձախ կողմերում թուրքերը շատ ետ էին մնացել: Նրանց առջևում երկու հար-
յուր բայի վրա, բլրակին երեսոց մի մեծ վրան, որի կողքին, բարձր հաստ ձողի վրա ծածանվում էին բունչուկի սպիտակ ձուկերը: Վրանի առջև մեծ բազմութուն էր հավաքվել: Գորշ մշուշի մեջ հնարավոր չէր ջուկել, թե ովքեր էին, բայց հնչ-
ոք նախազդացում հուշեց Արսենին, որ իրենց առջև վեղիր նարա Մուսթաֆան է իր շքախմբով: Նրան զերի վերցնելու
ի՞նչ հրաշալի առիթ էր: Եվս մի բայ, և...

Բայց այդտեղ դապրոժցու մտրով ուրիշ բան անցավ: Հիշեց ձերտնի Մետելիցայի խոսքերը, որ նա հաճախ էր կրկնում. «Թե որ ուզում ես քիչ ուժերով հաղթել ուժեղ թրշ-
նամուն, էնպիսի մի բան հնարիր, որ սիրտը աճ գցես: Նրա
Մեջ մեղցրու հաղթանակի հավատը»: Իսկ ժամանակը հիմա
չստ հարմար էր ենիչերիների մարտական ոգին սասանելու
նամար:

Արսենը կանգ առավ: Ափերը շեփորի ձեով դրեց բերանին
և բարձր, որպեսզի խլացնի մարտի ազմուկը, թուրքերեն գո-
ռաց նախ մի, ապա մյուս կողմի վրա.

— Օյե՛, ուղղափառնե՛ր, ուռուսները շրջապատել են մեզ:
Մուրազ Գիրեյ խանը, թող հավիտյանս նդովլի նրա անու-
նը, խայտառակ ձեով փախավ կովի դաշտից: Օյե՛, վա՛յ-

վա՛յ: Փաղիշահի հավատարիմ որդիներ, կմեններ սարմատների հողի վրա, բայց ոչ մի քայլ չենք նահանջի: Այլահը մեզ օղնական...

Կաղակի սրտալից ձայնը խուլ արձագանքով դուրվեց գետնի վրայով, անցավ մահացու կովի հորձանուտի մեջ մուլուցքով բռնված անթիվ-անհամար հրոսակների գլխավերևով: Այդ սարսափելի խոսքերը նահանջի ու խանի փախուստի մասին, այն մասին, որ ուռուսները շրջապատել են իրենց և որ որ է կխփեն թիկունքից, անվերջ կրկնվելով տասնյակ, գուցեև հարյուրապատիկ բերաններում, ականթարթորեն տարածվեցին թուրքական բանակում: Թող որ ոչ բոլորը հավատացին, թող որ ազաններն ու փաշաները հերքեցին, դրանք իրենց գործը արեցին: Այդ խոսքերը թրթուրի նման կկրծեն գինւորների մարտական ոգին, սառը, կպչուն սարսուռով կսողոսկեն նրանց սրտերը, կսասանեն ենիչերիներ ի մինչև այժմ գիմացկուն, կայուն շարքերը:

Իսկ հիմա՝ առա՛ջ:

Արսենը հասկավ Կուղմային ու Իվանիկին:

Նրանք մի փոքր ձախ թեքվեցին, որտեղ վաղորդյան երկրնքի հենքի վրա երևում էր ոսկեղօծ բունչուկը՝ կիսալուսինը վրան: Տասնյակ զինվորներ նետվեցին այնտեղ: Նրանց առջև, աղմուկ-աղաղակով, անկարգ, խառնիխուռն նահանջում էին նոսրացած թուրքական հարյուրյակները: Վեզիրի շքախմբից մի քանի ենիչերիներ, նկատելով, որ ստրելեցների ու կազակների ալիբր անդուսպ հորձանքով առաջ է մղվում, զիլ ճղճղան ձայնով գոռացին.

— Ուռուսները:

Նրանց գոռոցից վեզիրն ու իր շքախումբը իրար անցան: Ասկյարները փութանակի հեծան ձիերը:

— Ուռա-ա՛, — հանկարծ ամբողջ կոկորդով մեկ գոռաց Կուղմա Ռոժկովը: — Տղերք, Կարա Մուսթաֆային բռներ:

Ստրելեցները, որոնք ավելի ու ավելի շատ էին մխճվել՝ բաղված ճեղրի մեջ, նետվեցին դեպի վրանը: Նրանց դեմադեմ կարուկ էտ շրջվեց ձիավորների հեղեղը: Փայլատակները սրերը: Եվս մի ականթարթ, և բլրալանջը արյունով ներկվեց:

Բայց վեզիրի շքախումբը և թիկնապահները մարտը չհեղունեցին: Ինչ-որ մեկի զիլ կանչը ասկյարներին ստիպեց

չըջել ձիերի գլուխը և, ձիավորի պիսին սպիտակ շալմա գնելով, սրբնթաց հեռացան:

Զվենիգորան վաղեց դեպի վրանը, թրատեց ձողը, որի կատարին ծածանվում էին բունչուկի ծոպերն ու հյուսքերը, ժապավենները: Մշուս կողմից թրատում էր Կուղմա Ռոսկուվը: Զողը երեբաց ու կոտրվեց: Բունչուկը թռավ դեպի դալուկ-կապտավուն երկինք ու ընկավ դետին:

— Հե՛հե՛հ, բիշ էր մնացել վեղիբրի մորուքից բոնևի էն իբբը, հասկացնում ես,— խանդավառված գոչեց Իվանիկը:— Այ թե հերոս կլինեսի, հա՛, թե որ նրան տանևի հետմանի մոտ ու ասեսի. «Ահա, պայծասութայլ պան հետման, ինքը՛ թուրքական վեղիր Մուսթաֆան: Հարդ ու պատվով բեղ եմ հանձնում»։ Հետմանը հաճույքից աչքերը կկոցեր ու կսպեա կասեր. «Շնորհակալություն, հերոս, ինչո՞վ վարձահատույց լինեմ»։ Էն ժամանակ ես կասեսի. «Ինչ որ կբարեհաճես, պան հետման»։ Իսկ նա պատասխան կտար. «Յոթ լուծ եզ եմ պարզեվում քեզ»։ Իսկ ես նրան. «Յոթ լուծ եզն ինչի՞ս է պետք, ինձ մեկն էլ հերիք է իմ արտից գլուխ հանելու համար... Ավելի լավ է հրամայիր, պայծասութայլ հետման, հավատարիմ ծառայության համար թող ինձ մի վահան ու մի սաղավարտ տան»։ Նա կզարմանար. «Էլ քո ինչի՞ն են պետք»։— «Էդ ոնց թե, պան հետման,— կբացատրեսի ես,— դրանցով կպաշտպանվեմ կնկաս փայտից: Հենց որ ինձ վրա դա, ես կհագնեմ դրահս, սաղավարտը կղնեմ գլխիս էն ժամանակ թող էնքան խփի անիծածը, մինչև հալից բնկնի...»:

Ստրելեցները հռհռացին: Նրանք, ովքեր ավելի ճարպիկ էին, մաքրազարդեցին վեղիբրի վրանը: Զվենիգորան ու Ռոսկուվը կուրգանի բարձունքից դիտում էին մարտի դաշտը:

Արևելքը շառագունեց:

Ահազարհուր, տազնապալից կանչերը ցնցեցին թուրքական զորքին: Վեղիբրի վրանին բունչուկը շտևնեելով՝ ասկյարներն ու ենիչերիները սարսռացին մահվան սարսափով բռնված: Ուրեմն ճիշտ է, որ ուռուտները շրջապատել են իրենց: Ժիշու է, որ թաթարները փախել են: Թուրքական զորքը խուճաղի մասնավեց:

Ռոսկույան դաշտի վրա քուլա-քուլա սև ծուխ էր բարձրանում, վրնջում էին ձիերը: Տնքում էին վիրավորները: Գնալով

սաստկանում էին երկարածիգ հաղթական կանչերը՝ «Ուոա՛».
«փա՛ռք»:

Թուրքերը նահանջեցին: Բախտի բմահաճույքին թողնելով վիրավորներին, թնդանոթները, սայլերը, վրանները, անասունների նախիրները՝ նրանք տափաստանով ավելի ու ավելի արագ նահանջեցին դեպի հարավ, դեպի Թյասմին: Եվ փաղիշահի զորքը, ինչպես անցյալ տարի, կրկին փախագնահանջի փրկարար ճամփեքով»:

Դա լիակատար հաղթանակ էր:

Արսենը ուրախությունից գլխարկը գետին դարկեց, երխայի նման պտտվեց մի ոտի վրա, գրկեց Իվանիկին ու Ռոժկովին, պինդ սեղմեց կրծքին:

— Հաղթանա՛կ, եղբայրներ, Հաղթանա՛կ, շո՛-հո՛, հո-հո՛... Թուրքերը փախչո՛ւմ են, փախչում են նգովյալները:

Նա շուրջը նայեց: Որքան աչքը կտրում էր՝ մարդկանց ու ձիերի վիթխարի ալիքները մերձդնեպրյան բարձունքներէջետ էին գլորվում ու հավվում լուսաբացի կապտավուն մշուշում: Աչքից արդեն անհետացավ ճերմակ շալմայով ձիավորը՝ վեզիր Կարա Մուսթաֆան, անհետացավ նրա շքախումբը: Փաշաները իրենց ջոկատներով ինչքան ուժ ունենին ջանում էին ետ շմնալ վեզիրից:

Զվենիգորան պատկերացրեց, թե նվաճողների այդ բաղմագույն ու բաղմաղեմ խաժամուժի մեջ ինչպես են փախչում Համիդն ու Սաֆար բեյը, Սվիրիդ Մնոգոգրեշնին և թուլակամ, ապաբախտ Յուրաս հմելնիչենկոն, եթե դեռ ողջ են... Իրենց կյանքով ու մահով կապված լինելով վեզիրի գործհետ՝ նրանք հիմա առանց ետ նայելու սլանում են դեռևս անհայտության գորշ մառախուղը... Արսենին չէին հետաքրքրում հիմա, ոչ Սաֆար բեյը, որ Մնոգոգրեշնին... Համիդ Ահա թե ում հետ կուզենար հանդիպել, որպեսզի թրոխաշաձևեին: Մինչև օրս նրա սրտում չէր մեղմացել դաժան ու նենգ սպախախի հանդեպ ունեցած դառը զայրույթը: Ասենք որտեղից: Մի՞թե այդ հորձանապտույտի մեջ նրան կգտնես: Հիմա, հավանաբար, ընդմիշտ բաժանվեցին իրենց ճանապարհները, և ճակատագիրն այլևս երբեք չի հանդիպեցնի իրենց այս անծայրածիր աշխարհում:

Նրա մտորումներն ընդհատեց Իվանիկի ձայնը.

— Արսեն, հայդե, գնացիր: Տեսնում ես, թուրքերը լքել են գումակը: Մի բան կընկնի ձեռքներս:

Նա առաջինը արագորեն վազեց բլուրն ի վեր և սլացավ դեպի թշնամու կողմից լքված բանակատեղը:

ԿԱՊՐԵՆՔ, ԵՂԲԱՅՐՆԵՐ

1

Արսեն Զվենիգորան տուն դարձավ իր խուտորցիների հետ: Ետևում մնացին Զիգիրիների փլատակները, Բուժինյան շաշտը: Առջևում, կապույտ մշուշի մեջ փայլվում էին Սուլայի արծաթե ժապավենը, թեթևակի դեղնած մարգագետինը, և լեռան փեշերին փոված ծանոթ անտառը: Զին, զգալով մոտալուս հանգիստը, ականջները խլշկոտում էր ու արագ առաջ լեռվում: Բայց Արսենը զսպում էր նրան: Զեր ուղում հեռանալ սալից, որտեղ պառկած էր վիրավոր Ռումանը:

Մի քանի ջահել կազակներ բառատրոփ սլացան դեպի խուտոր: Բուրն էլ շտապում էին, մտրակում էին հոգնած ձիերին: Հատկապես անհամբեր էր Իվանիկը: Նա կյանքում առաջին անգամ երկար ժամանակով բացակայել էր տնից և կարոտել էր երեխաներին: Ասենը, ինչ թարցնելու բան կար, նաև կնոջը: Թուրքական բանակատեղում նա այնուամենայնիվ հասցրել էր որոշ բաներ ձեռք գցել. շորեր, ամաններ, էռշիկներ, մի քանի թուր ու լաթաղան, և ուղում էր շուտափույթ այդ բոլորը դնել իր Զինկայի առաջ: Գնում էր հպարտ, շոտոգ տեսքով ու ամբողջ նանապարհին համազյուղացիներին պատմում էր, թե ինչ անողորթությամբ է դարկել թուրքերին: Սկզբում կազակները ծիծաղում էին նրա վրա, բայց երբ Զվենիգորան հաստատեց, որ Իվանիկը իսկապես իրեն փրկել է մահից ու վեգիրի կապտորգան՝ անձամբ հանձնել զրնշապետին, սսկվեցին: Ոմանք դարմացան, մյուսները հարգանքով լցվեցին: Մի քանի ջահել կազակներ նույնիսկ դա-

1 Կապտորգա (թուրք.) — թանկարժեք բարերով զարդարված տուփ, որի մէջ պահում էին Ղուրանից վերցրած իմաստուն խոսքեր, ասույթներ:

դարեցին նրան Իվանիկ կանչել և սկսեցին հորջորջել բեռի Իվանիկ:

— Մեկ էլ նայեմ, ինչ տեսնեմ, հինգ թուրք գալիս են ինձ վրա, — մոպոնեց նա, մոռանալով, որ երեկ շորան էին եղել, իսկ նախանցյալ օրը՝ ընդամենը երեք: — Վա՛յ, մերիկ ջան: Բոլորն էլ սև, զմփո, ոնց որ բուղա... Թրեքը ցից-ցից առաջ մեկնած, ուղիղ մարդու փորին են նշան բռնում... իսկ ես էլ՝ հլա աչքս պիտի Չվենիգորայի ու Ռոժկովի վրա պահեմ, տեսնեմ նրանք ինչպես են գլուխ հանում, շիտակը որ ասեմ, պակաս չէին այդ ցուլերից: Ախր աչքաթող անես, աստված մի արասցե, մեկնումեկին կսպանեն, ու ամբողջ կյանքում խիզճդ կտանջի... Հենց էդ ժամանակ ես էն պես թափ առա ու մի գարկով...

— Հինգի՞ն էլ. — լուրջ տոնով ընդհատեց մեկը:

— Դե չէ, սկզբում մեկնակ երկուսին: Հետո մեկի հախի էլ եկա: Իսկ էն երկուսը տեսան, որ ինձ հետ հանաք անել չի լինի, կծիկը գրին: Միայն փոշու սյուն բարձրացավ ետևներից... Իսկ ես օգնության հասա Չվենիգորային... Նայում եմ... Նույնիսկ...

Արսենը ականջի ծայրով լսելով Իվանիկին, որը քանիեւրորդ անգամ կրկնում էր իր պատմությունը, ներողամտաբար ժպտաց փորրիկ թուխ բեղի տակ, որ պատերազմի ընթացքում էր թողել և սլացավ դեպի զումակի գլուխը: Հիմա, հենց որ սարից ցած իջնեն, Դուրովայա Բալկան է: Նրա հտինց սլացան և մյուս կազակները: Վերջից աճապարում էին գրաստավարներն ու հետիոտան սերգյուկները:

Գյուղի եզրին արդեն մեծ բազմություն էր հավաքվել: Տեսնելով անտառից սլացող ձիավոր կազակներին՝ բազմությունը ափեկոծվեց ու ընդառաջ զնաց: Կովեցին բացականություններ: Ինչ-որ մեկը հեկեկաց, լաց եղավ. նախօրոք տեղ հասածներն արդեն հաղորդել էին ով է վիրավոր, ով՝ սպանված:

Չվենիգորան իսկույն ճանաչեց հարազատներին: Բոլորն էլ այնտեղ էին, բացի պան Մարտինից: «Մի՞թե մեսել է», սիրտը ճմլվեց. բայց Արսենն իրենից վանեց այդ տազնապաշի միտքը ու խոխանեց ձին:

Չլատկան ու Ստեշան պոկվեցին բազմության միջից ու

ընդառաջ վազեցին: Միծեռնակների պես նետվեցին դեպի նա: Արսևներ իսկույն Լրկուսին էր գիրկն առավ, համբուրեց նրանց ձիգ, արևավառ այտերը:

— Միրելինե՛րս...

Այդպես էլ նրանց հետ գնաց մինչև բազմությունը, զգալով, թե ինչպես սիրտը լցվում է ուրախությամբ: Միայն այն ժամանակ, երբ Յացկոն բռնեց ձիու սանձից, իսկ մայրը ծղրտալով առաջ նետվեց, աղջիկներին իջեցրեց գետին, ցած թռավ ձիուց ու հայտնվեց հարազատների գրկում: Պապը, վոյեվոդա Մլադենը, Յազուբը խոնվեցին նրա շուրջը, թըփփփացրին ուսին, սեղմեցին ձեռքը:

Եթե աշխարհում լինում է մեծ երջանկություն, ապա ամենամեծ երջանկությունը կովից տուն դառնալն է, հանդիպումը ամենաթանկ ու սիրելի մարդկանց հետ: Հենց այդպիսի երջանկություն էր ճաշակում հիմա Զվենիգորան: Իր շուրջը տեսնելով ուրախ, թանկագին զեմբեր, նա մտածում էր, որ հանուն այդ պահի արժեք ամեն ինչի դիմանալ՝ և՛ գերության մեջ կրած փորձություններին, և՛ պատերազմական դժվարություններին, և՛ վերքերին, և՛ տապանքներին:

Մի բան դառնացրեց նրան. բոլորը չէ, որ մասնակից են այդ ուրախությանը, այդ երջանկությանը: Նա, ով պատերազմում կորցրել է որդուն, հորը, ամուսնուն կամ եղբորը, չամբացել է անտանելի ցավից, խեղդվում է վշտի արցունքներից: Այդ պատճառով էլ հիմա գյուղի հրապարակում լըսվում էին տխուր բացականչություններ, լացուկոծ: Ճիշտ է, դրանք հետզհետե հանդարտվեցին, քանզի մարդիկ սովոր են թարցնելու իրենց վիշտը, մենակ տառապելու Գրա համար էլ ամեն ոք, ով իմացել էր իր մերձավորի զոհվելու մասին, շտապեց տուն և այնտեղ, հարազատ պատերի մեջ, աղափություն տվեց իր վշտին:

Բոլորովին անսպասելի եղավ Իվանիկի հանդիպումը կնոջ հետ:

Նա ահուգոգով մոտեցավ հավաքված բազմությանը: Արդևն սարից իջնելիս նա վերջ տվեց շաղակրատանքներին, իսկ ներքևում բոլորովին սսկվեց, տխրեց: Քոթակ էր սպասում Զինկայից: Թե ինչի համար, ինքն էլ չէր իմանում: Սակայն համատեղ կյանքի տարիները սովորեցրել էին, որ

կնոջ սիրտը երբեք չես հասկանաւ: էն էլ Զինկայի նման կնոջ...
Վախենում էր, որ էլի առաջվա պես իրեն ծաղրատեղ կզոտու-
նի ամբողջ խուտորում, իսկ հիմա ինքը՝ հերոսը, կազակնե-
րի աչքը առաջ այդ բանին չի դիմանաւ: Դրա համար էլ սանձը
ձգեց, որպեսզի մի քիչ ուշացնի հանդիպումը: Իսկ աչքերով
փնտրում էր մարդկանց մեջ՝ ո՞ւր է Զինկան: Չնայած Զին-
կան բավականին հաստիկ էր ու կանգնած էր աչքի առաջ,
երեսաներով շրջապատված, Իվանիկը սաստիկ հուզմունքից
այդպես էլ չնկատեց նրան, մինչև որ հանկարծ մի ճիչ լսվեց.

— Ի-վա-նի-կ:

Այդ նույն ակնթարթին ինչ-որ մի ուժ թեթևորեն պո-
կեց նրան ձիուց ու գրկեց երեսայի նման: Վախից խեղճ
Իվանիկի սիրտը փորն ընկավ: Նա աչքերը փակեց ու սպա-
սեց ուժգին ապտակի: Բայց անսպասելիորեն մի այնպիսի
տաք համբույր զգաց, որպիսին ծնված օրից չէր տեսել,
նույնիսկ հարսանիքից հետո: Իսկ բռնեքը շոյեցին լսողու-
թյունը.

— Իվանի-կ: Հարազա՛տս, սիրելի՛ս...

Բացեց աչքերը. նրան ժպտում էր Զինկան: Իսկ իներ
նրա գրկում էր, ինչպես մի ժամանակ, վաղուց, շատ վաղուց,
մոր գրկում էր եղել... Ներքեից նրան էին մեկնվել մանկա-
կան թաթիկները, զրնգուն ձայները ուշադրութունն և հայրա-
կան քնքշանք էին պահանջում:

Ուրախացած՝ նա չպայացրեց Զինկայի վարդագույն, արև-
վառ այտը, աղատվեց նրա հաղթ գրկից ու ձիուց ցած թռավ:

— Ո՞րք է,— նրանից ետ շմնաց կինը, դեռես չհավատա-
լով իր երջանկությանը:— Թուրքերը շեն սպանել, փառք
ասածու:

— Քիչ էր մնում սպանեին,— ասաց Իվանիկը, դուրս
ցցելով վտիտ կուրծքը:— Ութը թուրք, որ վրա չպրծան ինձ...
Վայ, մերիկ ջան: Ի՞նչ անեմ: Բոլորն էլ ս՛կ-սե, զմփո բա-
նեք են... Թրերն էլ ուզիդ հենց փորիս են նշան բռնել...

— Օ՛յ,— սփրթնեց Զինկան:

— Դե ես էլ հո մենակ չէի: Ինձ հետ էին Զվենիգորան,
Ռոժկովը... Հարկավոր էր նրանց վրա էլ աչք պահել, որ-
պեսզի, աստված մի՛ արասցե, մեկնումեկին շտապենեն,—
քիչ-քիչ դերի մեջ մտավ Իվանիկը, հասկանալով, որ իր բո-

Փոքրիկ սենյակում կյանքի ու մահու կռիվ էր գնում: Կյանքի կողմը կանգնած էին պան Մարտինի հզոր առողջությունը, Յաղուբի ու Օնուպրի պապի գիտելիքներն ու հմտությունները, Զլատկայի, Ստեշայի ու Յացկոյի խնամքը, Մլադենի հայրական օգնությունը և Զվենիգորիխայի մայրական սիրտը: Մահվան կողմում մեն-միակ, սիսեռահատիկի նման փոքրիկ, կլոր արճճ մի գնդակ էր, որ լուվել մնացել էր պան Սպիխալսկու կրծքի խորքում և համառորեն նրան հրում էր դեպի գերեզման: Այդ երկու ուժերը նետված էին կշեռքի նժարին. ո՞րը ցած կբաշի, Պան Մարտինի վիճակը շատ ծանր էր, կոկոդից հաճախակի արյուն էր գալիս: Որպեսզը շտնբա անտանելի ցավերից՝ նա այնպես էր կրծում շրթունքները, որ ուղղակի սևացել էին: Նրան անվերջ ցնցում էր դողն ու տանջում ծարավը: Յացկոն մի գլուխ մառանից ստոր կվաս էր բերում, և պան Մարտինը, ատամները կավ գավաթին շիկշիկացնելով ու ծանր շնչելով, աղահորեն խմում էր: Համարյա ոչինչ չէր ուտում, միայն խմում էր:

— Ա՛, գրողը տանի, ո՞նց է ապրում մարդը, — փորձում էր կատակել նա օրվա ընթացքում երկու-երեք գդալ ձավարի ջրիկ շիլա ուտելով:

Ստեշան ու Զլատկան ոչ մի բույս նրա մտախց չէին հետանում: Ամբողջ օրը փոխնիփոխ նստում էին կողքին փոփոխացնում էին բարձերը, փոխում էին արչունոտված կեղտոտ շապիկներն ու սավանները: Յացկոն գիշերն էր հերթապահում:

Օնուպրի պապն ու Յաղուբը ման էին գալիս Սուլայի Կաթերին, անտաններում ու ձորակներում, բուժիչ խոտեր ու արմատներ էին հավաքում: Հետո դրանից բուրավետ թուրմ էին եփում, օրը երեք անգամ խմեցնում էին վիրավորին, բույր էին պատրաստում:

Բայց դրանք քիչ էին օգնում: Պան Մարտինը զնալով օրեցօր վատանում էր: Մեջքին, թիակի տակ, մի մեծ վերք էր բացվել: Ակորում վերքը կարմիր էր, հետո կապտեց, վերջապես դարձավ կարմրակապույտ: Նրան սոսես այրում էին, կրակով, և պան Մարտինը, անտանելի ցավերից զսոգար շու-

նենալով ոչ ցերեկը, ոչ գիշերը, վերջնականապես հալումաշ էր եղել:

Արսենի գալու հաջորդ օրը, համբերութիւնը կորցնելով, նա աղերսեց.

— Ով բարեգութ պան Եզուս, կամ փրկիր ինձ, կամ շուտ հոգիս առ: Աղաչում եմ, էլ հերիք է տանջես: Ախր տեսնում ես. մարդը էնպիսի ծանր վիճակի մեջ է, որ ավելի լավ է մեննի պրծնի...

Յաղուբը երկար զննեց վերքը, հետո սկսեց լուռ փորփրել իր իրերը: Կաշվե տոպրակի միջից հանեց նուրբ փայլուն դանակ՝ ածելու նման սուր շեղբով:

— Հարկավոր է կտրել,— ասաց նա կամացուկ:

Օնոպրի պապը տխրութեամբ օրորեց ճաղատ գլուխը:

— Վա՛խ-վա՛խ-վա՛խ,— ախր դա փտած կոճղ չի, այլ կենդանի մարմին, Յաղուբ: Սպասենք մինչև ինքր կծակի դուրս կգա... Կտրել միշտ էլ կարելի է: Խնդրեմ: Իսկ հետո կկարե՞ս: Սպասենք, ասում եմ քեզ:

Յաղուբը տատանվեց, բայց Սպիլսալսկին տենդից դողալով շնջաց.

— Կտրիր, Յաղուբ: Կտրիր, գրողը տանի: Մեկ է, մեննելու եմ:

— Բայց դա շատ ցավոտ է, բարեկամս,— սկսեց համոզել նրան Օնոպրի պապը:

— Էսպես էլ հեշտ չէ... Արդեն բոլոր ուժերս սպառվել են, էլ չեմ դիմանում... Բայց հույս ունեմ, որ մի րոպեով էդ դաժան ցավին կդիմանամ, գրողը տանի:

Արսենը գրկեց նրան, դուրս բերեց բակ: Այստեղ արև էր, տաք: Մեղվանոցում բզզում էին մեղունները, Սուլայից փչում էր սշնանային անուշաբույր հովիկը: Պան Մարտինը շնչեց ամբողջ կրծքով ու սկսեց հաղալ: Արջան կաթիլներն ընկան փայտե լայն թախտին, որի վրա նստած էր նա Արսենին հենված:

Պան Մարտինը ոչինչ չասաց: Միայն հյուծված, տանջահար, դեղին այտն ի վար մի մենավոր արցունք գլորվեց ու անհետացավ վաղուց շխուղված, կախ ընկած բեղերի մեջ:

Յաղուբը հանեց վիրակապը: Վիրավորի մեջքին շարա-

գույժ ու կարմրատակած փայլեց սալորի մեծության թարա-
խապալարը:

— Դե, դիմացիր, Մարտին: Ալլահը քեզ ուժ ու գորություն
տա:

Կանայք տուն փախան: Յացկոն, դեմքը կնճռոտեց ու
շուտ-շուտ աչքերը թարթելով, նայում էր դռան ետևից: Ար-
սենը պինդ բռնել էր Սպիրալսկուն: Օնուպրի պապը ձեռքում
պատրաստ պահել էր մի կտոր ճերմակ քաթան, ու մի պու-
լիկ՝ մեջը քսուր: Յաղուբը սեղմեց ատամները, դանակը
ամուր քսեց վերքին, Սպիրալսկին ճշաց: Վերքից թանձր, սև
արյուն հորդեց: Ինչ-որ բան խուլ թրխկոցով ընկավ թախտին:

— Ալլահ Աքբեր: Գնդակն է,— զարմացած և ուրախ բա-
ցականչեց Յաղուբը:— Սա հո շտեսնված բան է, Մարտին
աղա: Գնդակը դուրս եկավ, տե՛ս:

Նա փալասով մաքրեց արյունոտ գնդակը, տվեց Սպի-
խալսկուն: Ուրախ ժպիտը չէր իջնում Յաղուբի դեմքից: Սպի-
խալսկին էլ ժպտաց: Վերցրեց գնդակը, բոլոր կողմերից զըն-
նեց, ապա պինդ սեղմեց բուռնցքի մեջ:

— Այ դու անիծված: Հիմա արդեն իմ ձեռքում ես, ոչ թե
կրծքումս: Թե ապրեմ, սլանի Վանձյային նվեր կտանեմ...
Կասեմ. «Առ, կնիկ ջան, թուրքի սուլթանից քեզ նվեր, ոչ ու
փուչ լինի նա: Սա է բոլորը, ինչ ևս վաստակել եմ թուրքա-
կան տաժանակրություն մեջ...»: Օ՛Ֆ, ինչ լավ թեթևացա:
Թիակիս տակ էլ չի վառվում... Ձենկույու բարձո՞, պան Յա-
ղուբ... Հիմա որ մեռնեմ էլ, ցավ չէ... Որովհետև կարգին թեթե-
վացավ մի՛ճակս: Դեռ կապրենք, եղբայր, կապրե՛նք:

— Փա՛ռք աստծո, վերջապես հանգստացավ,— մրմնջաց
Օնուպրի պապը, դարչնավուն դարմանը քսելով քաթանին,
դրեց վերքին:

Սպիրալսկին լիզեց շորացած շրթունքները և ձեռքով սր-
բեց քրտնած ճակատը: Նա ճիշտ որ անմիջապես հանգստա-
ցավ: Եվ բազում օրերի ընթացքում առաջին անգամ նրա
սրտում վառվեց հույսի կայծր: Նա խնդրեց, որ իրեն ներս
տանեն: Հանկարծ քնելու ցանկություն ունեցավ:

1 Ձենկույու բարձո (լեհ.) — շատ շնորհակալ եմ:

Խաղաղ Սուլայի ափին ընկած ճերմակ խրճիթում բնակութիւն հաստատեց անդորրը, ուրախութիւնը և սիրահարութեան ոգին: Երկու վիրավորները՝ Ռոմանը, և՛ պան Մարտինը, քիչ-քիչ ապաքինվեցին: Զինչ մեղրաբույր աշունը՝ ոսկեկարմիր անտառներով, վճիտ ու տաք աշնանամուտով, խուրճի, տտիպ փոշնենու և բանջարանոցների վրա փոխած հաճելի, դառնավուն բուրմունքներով, երկար ժամանակ տաք էր, շոր, և նպաստեց հիվանդների ապաքինմանը: Ռոմանը շուտ ոտքի կանգնեց, իսկ պան Մարտինը դեռ մինչև Ֆիլիպովկան՝ պառկած մնաց. և՛ աչքերի աշխույժ փայլը, և՛ գլխավորը, բեղերը, որոնք շփտես ինչ ուժով սկսել էին ձեռք բերել նախկին կրակի գուլնն ու ճկունութիւնը, անհերքելիորեն վկայում էին, որ քաջասիրտ լեհի գործերը աջ են գնում: Նա նույնիսկ սիրահարվեց Ստեշային: Նա լավ գիտեր, որ անհույս է, բայց իրեն խոսք հասկացնել չէր կարող: Ակամա քնրուշ հայացքով նայում էր աղջկան, կուրծքը դուրս էր գցում, բեղերը ոլորում: Ստեշայի գեղեցկութիւնը լրջորեն խոռովում էր զգայուն ու հեշտութեամբ սիրահարվող շլայախտիչին: Սակայն աղջիկը ասես չէր հասկանում այդ բոլորը և, ինչպէս թվում էր պան Մարտինին, չէր նկատում նրա բոցավառ հայացքները: Ստեշայի աչքերը փնտրում էին Ռոմանի բաց կապույտ աչքերը և ուրախութեամբ էին հանդիպում նրանց:

Այնժամ պան Մարտինը, նեղացած, երեսը շուտ էր տալիս Ստեշայից և սկսում էր դրուցել պառավ Զվենիգորիխայի ու Օնոպրի պապի հետ: Նրանց դրուցների նախասիրած թեմաներից էին Արսենի արկածները Ռուրբիայում, և այլ հեռավոր աշխարհներում: Դրանց մասին Սպիխալսկին կարողանում էր պատմել գեղեցիկ ու առինքնող: Իհարկե, երբ Արսենը տանը չէր լինում:

— Զեր տղան, պանի մայրիկ, աշխարհում ամենատառջին ասպետն է,— գոչում էր պան Մարտինը:— Մի անգամ թուրքական Կըզըլ-Իրմակ գետի ափին, կովի մեջ մենք եր-

կուսով համարյա հարչւր ենիշերի փոեցինք: Արսենը նետ-վում էր նրանց վրա, ոնց որ առյուծ, ոնց որ վագր. բրդում էր, փշրում, խփում, թրով ճեղքում, երկու կես էր անում, մեռնեմ թե սուտ եմ ասում: Բա ծովում ի՞նչ արեց: Օ՛, եթե միայն կարողանայիք տեսնել, թե ինչպես նա հաղթեց մոլեգ-նած տարերքին: Երեք օրուգիշեր նա ձեռքից բաց չթողեց դե-կը, մինչև որ նավը մոտեցրեց ափին... Հետո մեզ բուրիս ազատեց թուրքի պիղծ գերութունից, բերեց հայրենի երկիր էստեղ էլ, Զիգիրինի մոտ, Դնեպրի վրա, բաջաբար կովեց անօրենների դեմ, ընկերության մեջ փառաբանվեց որպես ան-պարտելի գինվոր: Ճիշտ եմ ասում, ոնց որ ասածու առաջ:

Զվենիգորիխան հեկեկում էր՝ ուրախանալով և միաժա-մանակ սարսափելով որդու համար: Օնուպրի պապը շփում էր հուզմունքից կարմրած ճակատը: Իսկ Ստեշան փայլում էր հիացմունքից՝ տես ի՞նչ եղբայր ունեմ:

Բայց հենց որ Սպիրիալսկին նորից քնքուշ հայացք էր գցում նրա վրա, աղջիկը շուտ էր գալիս կամ նույնիսկ սեն-յակից դուրս էր գնում:

Ռոմանն էլ էր շրջվում, որպեսզի պան Մարտինը շնկատի իր աչքերում փայլող ծիծաղի ուրախ կայծերը: «Վա՛յ, պան Մարտին, պան Մարտին,— մտածում էր դոնցին:— Դու հրա-շալի մարդ ես, ամեն բանում հաջողակ. և՛ թշնամուն խփել գիտես, և՛ տեղը եկած ժամանակ բարի խոսք ասել... Բայց ա՛յ, աչք գցել Ստեշային... էդ մեկն արդեն չի կարելի, պան Մարտին: էստեղ խոփոք բարին կառնի, աստված վկա: Հենց որ լրիվ լավանամ, անմիջապես խնամախոսներ կուղարկեմ Ստեշայի մոտ... Եվ Սուլայից այլևս ոչ մի տեղ էլ չեմ գնա. ոչ Դոն, որտեղ ոչ մի շոփ էլ չունեմ, ոչ Տուլայի մոտ գանվող իմ հարազատ գյուղը, որտեղ Տրաուերնիխտը ողջ-ողջ կաշիս կբերթի»: Եվ նա թաքուն, քնքշորեն նայում էր Ստեշային: զմայլվելով նրա գեղեցկութամբ՝

Արսենը ժամանակի մեծ մասն անցկացնում էր Զլատկայի ու Մլադենի հետ: Մլադենն արդեն լիովին կապուրովել էր, և Բուլգարիան ձգում էր նրան: Բայց բազմաթիվ պատճառներ միշտ խանգարում էին. նախ՝ վերքը, հետո սպասեց մինչև Արսենը վերադառնա կովի դաշտից, հիմա էլ բոլորով միտտին որոշել էին, որ կգնա այն ժամանակ, երբ Արսենն ու Զլատ-

կան կպտակվեն ու հարսանիք կանեն: Իսկ հարսանիքը հետաձգել էին Սպիրխալսկու հիվանդության պատճառով:

Սակայն երբ Մլաղենը էլ ավելի սաստիկ թախճեց Բուլղարիայի համար, իր հայրուկների համար և որոշեց ճանապարհ ընկնել, Արսենն ասաց.

— Վոյեվոդա, դեռ կհասցնես թուրդ խաշաձեել Համիդի հետ:

— Դե դու խաշաձեցիր, էլի,— ի պատասխան խայթեց Մլաղենը:

— Ամեն ցանկություն չէ, որ կատարվում է:

— Ես քեզ չեմ նախատում, Արսեն: Նույնիսկ ուրախ եմ, որ Համիդը ողջ մնաց: Նրանից վրեժ առնելը իմ իրավունքն է:

Նրանք երկար խոսում էին Զլատկայի սուլթանի մասին, Մլաղենին նորից հանդիպելու հնարավորության մասին: Ծերունի վոյեվոդան խոստացավ, որ մի քանի տարի հետո, երբ ձեռքն ալլես ուժ չի ունենա ենիշերկա բռնելու, ընդմիջտ կվերադառնա Գուբովայա Բալկա, սրբ շատ է դուր եկել իրեն: Հիշում էին նենկոյին և ամեն մեկը ակամա մտածում էր այն մասին, թե արդյո՞ք նա կենդանի է մնացել Զիգիրինի վրա բաղմիցս կատարած գրոհներից հետո, կամ, գուցե, գլուխը ցած է դրե՞լ:

Զլատկայի ու Արսենի համար դրանք երջանկագույն օրեր էին: Անցյալի գիրկն էին թաղվել այն փորձություններն ու վտանգները, որ հանդիպել էին նրանց ճանասլարհին: Ամպրոպարեր գիշերվա նման անցավ, վերջապես ամայացնող, արյունահեղ պատերազմը... Զգացմունքները՝ քնքուշ, ուժեղ, դեղեցիկ, որ չէին թարցնում նրանք, տագորել էին ջահել սրբտերր: Զլատկան է՛լ ավելի էր ծաղկել: Նրա աչքերը՝ տաք, կապույտ, ինչպես ծովը ամառվա, որոնում էին Արսենի աչքերը և, հանդիպելով, ալլես չէին կարողանում կտրվել նրանցից: Աղջիկը կատակով ու տխրությամբ սպառնում էր իր սիրեցյալին, թե կգնա Սեշ և նրան դուրս կդրի զապորոժյան օձևատրից¹, որպեսզի նա միշտ իր կողքին լինի:

— Կանանց չեն թողնում Սեշ,— ժպտաց Արսենը:

— Աշինչ, ոչինչ, ևս կոշեոյի մոտ էլ կհասնեմ:

¹ Ուկրաինա — ցուցակ, դրանցման մատչան:

Բայց Ձապորոթիե գնաց, իհարկե, Արսենը, և ոչ թե Ջլատկան, այն էլ շատ շտապ: Անսպասելիորեն սուրհանդակ եկավ խուտոր և հայտնեց, որ բոլոր զապորոթցիները պետք է մեկնեն Սեշ՝ ռադային՝ մասնակցելու:

— Դա երկար չի տևի,— մխիթարեց Արսենը Ջլատկային:

— Հանկարծ նորից մի փորձանք չպատահի:

— Ինչ փորձանք պիտի պատահի: Նոր կոշկոյ ենք ընտրելու: Հաստատ նորից Իվան Սերկոն կլինի, եթե հանկարծ ծերունին չհիվանդանա: Ուրախության առիթով մի քանի տական մեղրագինի կիմենք ու, հայդե, տուն:

Ջլատկան ոչինչ չասաց, միայն աչքերը մշուշվեցին սիրեցյալի համար ունեցած տազնապից:

Մի քանի օր անց Դուբովայա Բալկա եկան լուբենցի և լոխվինցի զապորոթցիները, և Արսենն ու Ռոմանը նրանց հետ մեկնեցին: Սպիրտակին նույնպես ուզում էր գնալ, բայց դեռ թույլ էր: Հաղիվհաղ էր ման գալիս խրճիթում: Թախծու հայացքով նա ուղեկցեց ձիավորներին, տխրեց:

— Նայ բի մենե շլյակ արաֆիվ, տես թե ինչ ցավ բաժին ընկավ մարդուն: Ոչ դես, որ դեն: Դե, պան Մարտին, արի ու ամբողջ օրը նստած մնա թախտին, ոնց որ շունը կապի վրա, թո՛ւհ:

ԿՈՏՈՐԱՄ ՍԵՉՈՒՄ

1

Ձապորոթցիների նամակը հասավ սուլթանին: Զիգիրինի անհաջող արշավանքից գաղազած՝ Մուհամմեդ Զորրորդը պարզապես գժվեց ինչ-որ թափառաշրջիկների, բրջոսաներ՝ շլսված անպատկառությունից, որոնք հանդգնել էին ձեռ առնել իրեն՝ երկրի վրա ալլահի փոխանորդին: Նա հրամայեց անհապաղ մահապատժի ենթարկել զրագոմանին՝ նախկին՝ զերի կապակին, որը կարգաց ու թարգմանեց նամակը, իսկ դեղնավուն պինդ թղթի փաթեթը գցեց ոտքերի տակ, կատաղորեն տրորեց, հետո այրեց մոմի վրա:

¹ Ուղա— խորհուրդ, համաժողով:

— Ես կջնջեմ զապորոժցիներին... — գոռաց նա մոլիգնած։ Գոռգոռոցը հասավ սուլթանի հսկայական պալատի անկյունները։ Սարսուռաց պալատական պահակախումբը, Գունատվեցին գահադահլիճում գտնվող փաշաներն ու շաուշները։ Բոլորը երանիվար փռվեցին՝ սպասելով իրենց վեհապետի դուրս գալուն։

— Հողին հավասարեցնել էդ կեղտոտ Սեչը, — էլ ավելի բարձրաձայն կողկանձեց սուլթանը և ցատումից մթնած աչքերով նայեց հպատակների կռացած մեջքերին։

Վեզիրը, փաշաները, մեծ մուֆթին¹, գիտուն մուլաները, շաուշները միաբերան արձագանքեցին։

— Կամքը խանդբարի՝ կամքն է ավլահի։

Դեկտեմբերի վերջին, ձմեռային բբաշունչ մի գիշեր, Արիմի խանը քառասուն հաղարանոց հրոսակախմբով և Թուրքիայից ուղարկված ենիշերիների ու սպախիանների տասնհինգ հաղարանոց բանակով, միայն փորձված ուղեկցորդներին հայտնի գաղտնի ճանապարհներով մոտեցավ Սեչին։

Դեռ Բախչիսարայում նա մուրզաների և էնիշ-աշերաս² Մուրաս փաշայի հետ քննարկել էր այն հարցը, թե ինչպես ոչնչացնել գյավուր ավազակների բույնը՝ ղապորոժյան Սեչը։ Բոլորն էլ համաձայնության էին եկել, որ հարկավոր է հանկարծակի բերել ղապորոժցիներին, երբ նրանք քիչ կլինեն Սեչում և հարձակման շին սպասի։ Հայտնի էր, որ ձմռանը ղապորոժցիները ցրվում էին տները, ամբողջ պահպանելու համար մնում էր ընդամենը վեց-յոթ հարյուր մարդ։ Ուստի խանը որոշեց հարձակումն իրագործել ծննդյան երկրորդ օրվա գիշերը, հույս ունենալով, որ ղապորոժցիները տոնի առթիվ կհարբեն, մեռելի պես կքնեն, և հեշտ կլինի նրանց կոտորել խողբերի նման։

Խանը, տաք բուրբի մեջ փաթաթված, կուշ էր եկել թամբին, բայց սառնամանիքը դադում, ծակծկում էր քիթն ու այտերը, հյուսիսային կատաղի ջամին խցկվում էր մահուգե բաշլուղի տակ ու բրբրում մարմինը։

Հորդան անադմուկ մտավ տավաաստան։ Վերջին դադարի նրանք կուշտ կերակրեցին ձիերին, որպեսզի շխրխնջան,

¹ Մուֆթի — մահմեդական բարձրագույն հոգևորական։

² էնիշ-աշերաս (թուրք.) — ենիշերիական կորսուտի հրամանատար։

հարմարեցրին, կապկպեցին բոլոր զենքերը, որպեսզի չխկոց-
թխկոց շլավի: Միայն հազարավոր սմբակների խուլ աղմուկն
էր տարածվում: Բայց դա էլ քամին քշում տանում էր Սելից
հեռու, դեպի նոդայական տափաստան:

Խավարի միջից դուրս լողացին երկու ձիավոր: Մոտեցան
խանին, խոնարհվեցին: Խանը ձգեց սանձը: Կանգ առավ: Ճա-
նաչեց մուրգա Ալուն Շիրինբեյ ուլուսից: Երկրորդ ձիավորը
փոքր-ինչ ետ մնաց:

— Մեծ խան, — ասաց Ալին, — երկու փարսախի վրա Դնեպրն
է: Ինեպրի մյուս կողմում Սելչն է: Մեր բարեկամ Զեռնորայն
ասում է, որ էնտեղ կազակական պահակակետ պետք է լինի:
Ես առաջապահ ջոկատին հրամայեցի կանգ առնել...

— Լավ: Բայց մենք հո անվերջ էստեղ կանգնած չեն մնալու:
Վերցրու հիսուն զինվոր, աննկատելի առաջ գնա, գտիր պա-
հակակետ: Էնպես կանեք, որ ոչ մի շունչ կենդանի բաց չլի-
նա: Մենք աննկատելի կմտենանք Սելչին: Թող Զեռնորայն
ցույց տա ճանապարհը:

— Հնազանդ եմ, մեծ խան:

Հեծյալները շրջեցին ձիերի գլուխները, սուրացին գիշնո-
վա սառը խավարի մեջ:

Շուտով ամբողջ դորքը կուտակվեց մի խոր ձորի մեջ: Ալին
ու Զեռնորայնը ջոկեցին ամենաճարպիկ զինվորներին, ձիերի ո-
րչան և անձայն, իրար ետևից առաջ գնացին ու դուրս եկան
բլրի գագաթը: Սողալով, օշինդրի շորացած, կիսով չափ ձյան
տակ ծածկված մացառուտներում թաքնվելով, նրանք դուր-
սեկան բլրի գագաթը: Այնուհետև Զեռնորայնը մենակ առաջ
գնաց:

Չյունը լցվում էր թևքերի, սրնքապանների մեջ: Բուրբ դա-
դում էր պեմբր: Բայց նա դրան ուշադրություն չէր դարձնում:
Գիշտախիչ տղվեսի պես սուր դնչով ետ էր տանում մացառու-
նը: Հոտոտում էր սառած օդը: Հանկարծ քարացավ. ծխի հոտ
առավ: Գլուխը բարձրացրեց, դննեց շորս կողմը: Հովտում երե-
վում էր սև պահակատունը: Նրա կողքին, թխագորշ երկնի
հենքի վրա, ուրվագծվում էր եռասուր աշտարակը:

Բեկեան է՛: Զապորժցիների փառակալը:

1 Բեկետ (ուկր.) — պահակային աշտարակ՝ գետնատնակով:

Չեռնորայը կամացուկ սուլեց: Սողալով մոտեցավ Ալին: Նրա ետևում, ձյունով ծածկված խոտի շոր ծղոտների մեջ սևին էին տալիս թաթարների փրշոտ մալախայները:

— Ալի, ուղեկալն է... — շշնջաց Չեռնորայը՝ մատնացույց անելով պահակատունը: — Աշտարակի վրա ոչ ոք չկա: Ցուրտ է, բոլորը թաքնվել են: Գուցեև քնած են... Վերցրու երեք ուժեղ բատիրների: Մենք նրանց հետ միասին կգնանք առջևից, մյուսները թող գան մեր հետքով:

Հինգ կերպարանքներ ուղղվեցին դեպի պահակատուն: Յաթազանը ձեռքում բռնած՝ Չեռնորայը սողում էր առջևից: Գեռ հեռվից նա նկատեց ժամապահին, որ, ծանր ոչխարենու քուրբը հագին, ննջում էր շարգախի տակ: Այնտեղից ձիու մեղմ վրնջոց էր լսվում:

Չեռնորայը նշան արեց Ալուն, որպեսզի նա իր սեյմենների հետ կանգ առնի, իսկ ինքը շրջանցեց պահակատունը հակառակ կողմից: Զգուշությամբ դուրս նայեց անկյունից, շամոզվեց, որ ժամապահը քնած է: Այնժամ ետ-ետ դնալով, մոտեցավ շարգախին, բռնեց կաղակի օձիքից ու յաթազանը մեջքը խրեց: Ժամապահը խոխոացրեց ու երեսնիվար ընկավ ձյան վրա:

Մի բռպեում թաթարները շրջապատեցին պահակատունը: Չեռնորայը բացեց դռնակը, կոացավ ու շեմքից ներս մտավ: Նրա հատից խցկվեցին Ալին ու իր բատիրները: Ներսից ջերմության, հացի ու սխտորի հոտ փչեց: Գռնից աջ, տախտակչա նստերի վրա, կողք կողքի քնած էին շորս կաղակ: Չախ կողմում ոչ մեծ վառարանի մեջ մլմլում էր ալ կարմիր կրակը:

Կաղակներից մեկը բարձրացրեց գլուխը:

— էդ դո՞ւ ես, Պրոկոպ:

— Ես եմ, — պատասխանեց Չեռնորայը լուռ գալով:

— Բա հետի՞նդ ով է:

— Կուրենի ատամանը փոխարինող է ուղարկել...

— Փոխարինո՞ղ, — կաղակի ձայնի մեջ դարձանք նկատվեց: — Ինչի՞ համար: Մենք ինքներս էլ մինչև առավոտ կհերբապտհեինք:

Կաղակը աչքերը բացեց, նայեց մարդկանց, որոնք հալոլում էին նեղ դեռնատնակը: Ինչո՞ւ են այդքան շատ... Հանկարծ, երևի բաց դռնից խուժող թարմ օդի հոսանքից, վառա-

րանի մեջ բռնկվեց բոցը և լուսավորեց պահակատունը: Կազակը սարսափից աչքերը շոնեց, ետ ցատկեց դեպի պատը և փորձեց դուրս քաշել թուրը:

— Եղբայրնե՛ր, թաթարնե՛րը, — գոռաց նա և տեղնուտեղը փլվեց հատակին. Չեռնոբայը յաթաղանով կտրեց նրա կողորդը:

Թաթարներն ընկան գլուխները կորցրած կազակների վրա, որոնք այդպես էլ չհասցրին հասկանալ, թե որտեղից և ինչ դժբախտություն թափվեց իրենց վրա:

— Կենդանի վերցրեք, — հրամայեց Ալին:

Կազակներին քշեցին անկյուն, ինչ-որ մեկը կրակը շարտեց շոր մացառների մեջ: Բոցը լուսավորեց գետնատնակի սև, ծխոտված պատերը: Արնագույն ցուլքերն ընկան գերվածների դեմքերին:

Չեռնոբայը բոթեց նրանցից մեկի ուսը.

— Խոտ, դո՞ւ ես:

Սա ցնցվեց, կուշ եկավ, բայց ճանաչելով իր նախկին տիրոջը, պոկվեց տեղից ու շոթեց նրա առաջ:

— Պան Չեռնոբայ: Պան Չեռնոբայ, — կմկմաց նա: — Մի՞թե զու էս: Աստված ինքն է քեզ ինձ մոտ ուղարկել...

— Վեր կաց, վեր կաց, Խոտ:

Խոտը ոտքի ելավ:

— Դու արե՞լ ես, ինչ որ հրամայել եմ:

— Չէ, բայց... Աստված որ հաջողի, կանեմ...

— «Հաջողի, հաջողի»... Դարշելի վախկոտ... Դու արդեն կես տարի է Զապորոժիեում ես... Դե լավ, ես հետո կխոսեմ քեզ հետ... Ասա, ինչպե՞ս մտնենք Սեչ:

Գլխի բնկնելով, որ փոթորիկն առայժմ անցավ, Խոտը իսկույն աշխուժացավ:

— Սրանց հե՞տ, — գլխով ցույց տվեց թաթարներին, որ յաթաղաններն ու սրերը մերկացրած, լուռ կանգնած էին դիդիմացը:

— Բա ո՞ւմ...

— Մի անցք կա... Մեծ չէ, դադտնի մուտք է, որով դասորոժցիները ջուր են բերում Դնեպրից: Դա չի փակվում...

— Խոտ, — գոռաց մի կազակ, որ կանգնած էր դավաճանի աջ կողմում: — էդ ի՞նչ ես անում: Անիծյալ Հուդա:

հոռը արհամարհական բաժիժադեց.

— Զենդ կտրի, Տովկաչ:— Եվ, դառնալով Չեռնորային, ավելացրեց.— Պան, դու մենակ չես գտնի էդ մուտքը: Ես ցույց կտամ:

Խոռը վախեցավ, որ գաղտնիքը բացելուց հետո այլևս պիտանի չի լինի Չեռնորային, և նա կմորթի իրեն հենց այս գետնատանը: Բայց խոռը չգիտեր, որ այդ պահին էլ իր կյանքը մադից է կախված: Սովորաբար ծանրաշարժ Տովկաչը կայծակային արագությամբ նետվեց նրա վրա, սեղմեց կոկորդը: Խոռը խոխոացրեց: Այստեղ էլ նրա վերջը կզար, եթե Չեռնորայր յաթաղանով չհարվածեր Տովկաչի ձեռքին: Տովկաչը ճշաց ու բաց թողեց իր դոհին: Սարսափահար խոռը մտավ նախ: Ետևի Գեանատնակում ծայր տոավ անհավասար մարտը: Վիրավոր Տովկաչը առողջ ձեռքով Չեռնորային ետ հրեց ու խեց պատից կախված թուրը: Ցածկիկ գետնատնակում հնարավոր չէր թուրը վեր բարձրացնել, թափ առնել, խփելու համար, և նա խոցեց մտակ դտնվող թաթարին: Սա ճղավոցով ընկավ իր ընկերնների ստերի տակ: Թաթարները նետվեցին Տովկաչի վրա:

— Սավկա, զարկ էդ անիծված շներին,— մռնչաց Տովկաչը՝ հարվածելով առջևից եկողի դեմքին:

Սավկան նետվեց ընկերոջն օգնության: Նա սլաաից պոկեց թարեքը, որից գետին թափվեցին ցորենով լցված կավե կճուճներ, ամաններ ու գդալներ, դրանով ուժգին հարվածեց մի հաստամուրթ բատիրի գլխին: Սա աչքերը ճղճպացրեց ու մեջքի վրա փռվեց՝ փակելով դեպի կաղակները տանող ճանապարհը:

Օգտվելով թշնամու իրարանցումից՝ Տովկաչը էլի մի հարված հասցրեց մտակ կանգնած թաթարին: Պարզվեց, սր դա մուրգա Ալին էր: Հատու թուրը սահեց բուրբի խիա բրդի վշալով ու իրվեց կոկորդը: Մուրդան խոխոացրեց և ամբողջ մարմնով փրվեց իր սեյմենի գիրկը:

Հենց նույն պահին ընկավ նաև Տովկաչը. Չեռնորայի արտուաշաղախ յաթաղանը խոցեց նրա կուրծքը:

Կաղակ Սավկան էլ ընկերոջից հետո երկար շապրեց: Գաղազած իրենց մուրդայի մահից՝ թաթարները ամբողջ սհամակով, գալերի նման թափվեցին նրա վրա: Մի բանի յաթաղաններով

ու թրերով գամված փայտե պատին՝ նա այդպես էլ մեռավ կանգնած, թարեքը ձեռքին:

— Օ՛յ, վա՛յ, վա՛յ,— մուրզայի վրա ողբացին թաթարները:— Ի՞նչ կտրիճ բատիր զոհվեց էդ անհավատ շների ձեռքով, ալլահի ցասումը դրանց գլխին թափվի:

— Ի՞նչ ասենք խանին, երբ նա իմանա, որ չենք պահպանել իր մուրզային: Օ՛, վա՛յ, վա՛յ:

— Հերիք է լացուկոծ անեք,— ծղրտաց Չեռնորայը, Տովկաչի շորերի վրա յաթաղանը մաքրելով:— Մեծ խանը կարծես հենց միայն գրան է սպասում: Մենք մեր գործն արեցինք, ուղեկալը ոչնչացրինք, ուղեցույց գտանք, որը կօգնի մեզ Սեչ թափանցելու... Դրա համար խանը չի պատժի: Իսկ մուրզան արդեն ալլահի եղեմական պարտեզներում է... Ինչ կարիք կանրա համար լացուկոծ անել:

Եվ ճիշտ որ, խանը Ալու մահվան լուրը բավական հանգիստ ընդունեց: Երբ Չեռնորայն ասաց, որ գերված կազ: կր, իր նախկին ծառան, գիտի Սեչ տանող գաղտնի մուտքը, նա ուրախացավ՝ դա համարելով հաջողութուն և բախտավոր յախանշան: Տեղեւտեղը որոշվեց փոխել հարձակման նախկին պլանը: Խանն առաջարկեց. Սեչի վրա գրոհելու փոխարեն Լնիչերիներն ու սպախիաները աննկատելիորեն կմտնեն այնտեղ և հանկարծական հարվածով կոչնչացնեն բոլոր զապորոժյիներին: Հորդային հանձնարարվեց շրջապատել ամրոցն այնպես, որ մուկն էլ չկարողանա արանքից անցնել:

Մուրաս փաշան համաձայնեց խանի հետ, և զորքը լիակատար լռության մեջ առաջ շարժվեց:

Կեսգիշերին Խոռը թուրքերին անցկացրեց Գնեպրի վրայով և շուտով գտավ բոլորակված անցքը, որի միջով կազակները մեկ-մեկ զնում էին Գնեպրից ջուր բերելու:

Մուրաս փաշան հավաքեց ջոկատների պետերին:

— Առաջինը ամրոց կմտնի Սաֆար բեյը իր զինվորներով,-- կարգազրկեց նա:— Եթե կազակները ժամանակից շուտ չհասնեն արեւին մեզ, մարտ չսկսել. թող բոլոր ջոկատները ներս մտնեն: Ես ինքս հարձակման նշան կտամ... Հայդե: Մա՛հ գլավորներին: Թող փառավորվի անունը մարգարեի:

Խոռը և Չեռնորայը առաջինը ներս մտան անցքից: Համոզվելով, որ Սեչում ոչ մի շունչ չկա, կազակները քնած են կու-

բննելուամ, նշան տվեցին: Սաֆար բեյը առաջ տարավ իր զին-
վորներին:

Ներս մտան մեկ-մեկ, ղենքերը զգուշությամբ բռնելով, ոռ-
պեսդի շղնգան:

— Արա՛գ, արա՛գ, — շտապեցրեց Սաֆար բեյը:

Նրան մոտեցավ Համիդը, գեր, տաք բեկեշով ու պոպողավոր
բաշլուղով փաթաթված, նա ավելի շատ վաճառականի էր նման-
վում, քան զինվորի: Նրան ուղարկել էին արշավանքի այն պատ-
ճառով, որովհետև մի անգամ եղել էր Սելում, իսկ դա կարող
էր օգտակար լինել հարձակողների համար: Նրա տրամադրու-
թյան տակ էր ոչ մեծ, բայց լավ վարժեցրած սպախիանների ջո-
կատը:

Համիդը արտաբուստ հուզված էր երևում: Նրա փքված սև
ղեմքը լուսնի լույսի տակ փայլում էր հին բրոնզի պես, շար-
ժումները փութկոտ էին, անվստահ: Հավանորեն, նրա համար
դժվար էր խոսել Սաֆար բեյի հետ, որը, հակառակ սպախիայի
ջանքերին, վճռականորեն հաշտության ոչ մի քայլ անել չէր
ցանկանում: Բացառված չէր, որ իրոք Համիդը վախենում էր:
Համենայն դեպս ստիպված էր խցկվել ուղիղ դժոխք, Ուտուս
Շելթանի մոտ: Հակասակ խանի և էնիշ աշերասի՝ հեշտ հող-
թանակ ձեռք բերելու հույսերին, շարքային հրամանատարներն
ու ասկյարները հոգու խորքում կասկածում էին. թե կկարս-
զանան հեշտությամբ առանց մեծ կորուստների կոտորել ու
ոչնչացնել դապորոժցիներին իրենց իսկ Սելում, որտեղ կա-
զակներն զգում են, ինչպես ձուկը ջրում: Ճիշտ է, ամեն ինչ
այնպես դասավորվեց, որ դապորոժցիներին հարողատ պա-
տերն էլ չէին կարող օգնել: Բայց, այնուամենայնիվ, հենց միայն
այն մտքից, որ ընկնելու էին այդ լավ հայտնի թոկից փախած-
ների, անուղղա կովարարների և, պետք է արժանին մատուցել,
փառաբանված ու խիզախ ասպետների որջը, ալլահը նրանց
բոքը կտրի, հենց միայն այդ մտքից հարձակվողները սարսուժ
էին: Գրա համար էլ Համիդի տրամադրությունը շատ վատ էր:

— Սաֆար բեյ, իմ աչքի լույս, արի մոռանանք փոխադարձ
վիրավորանքներ, — ասաց նա ցածրաձայն: — Հիմա դրա ժա-
մանակը չէ... Ինձ դուր չի գալիս էս ծուղակը, որի մեջ քշում
են մեզ խանն ու էնիշ աշերասը: Ես չեմ հավատում էն երկու
գյավուրներին...

— Ես էլ շեմ հավատում, բայց նրանց հավատում են այն մարդիկ, ովքեր մեզանից բարձր են կանգնած: Մենք ինչ կարող ենք անել:

— Հարկավոր է զգուշ լինել: Թե որ մի բան պատահի, փրկենք մեկս մեկիս:

— Մի՛ վախենա, աղա, ամեն ինչ լավ կլինի: Մենք տասնհինգ հազար ենք, իսկ կազակները՝ ընդամենը վեց-յոթ հարյուր: Բացի դրանից, ինչպես տեղեկացրին հետախույզները, նրանք հարբած են... Մենք բոլորին հավի պես կմորթենք: Լուսաբացին ամեն բան վերջացած կլինի: Ալլահը մեզ օգնական,— շոր պատասխանեց Սաֆար բեյը:

Համիդը հասկացավ, որ էլի հաշտություն չկայացավ: Եվ ցավ դգաց, քանզի հավատացել էր Սաֆար բեյի բախտավոր աստղին, հավատացել էր, որ ջահել ու վճռակուն աղաւ բարձր դիրքի կհասնի կայսրության մեջ և շատ բաներում օգտակար կլինի իրեն:

— Լավ է, թե որ էդպես լինի,— թթված փնթփնթաց Համիդը:— Ալլահը թող մեզ ողորմա... Բայց, անկեղծ ասած, սիրտս անհանգիստ է...

Սաֆար բեյը չպատասխանեց, լուռ գնաց դեպի անցրու Համիդը կուշ եկավ, խոր շունչ քաշեց և սկսեց հետևել, թե ինչպես են նրա մարդիկ մեկը մյուսի ետևից անհետանում մութ անցքի մեջ:

Եվ ահա վերջապես էնիշ աշերասի բոլոր զինվորները Սելում էին: Խանը հորդաչի կեսի հետ մնաց Դնեպրի ափին, մյուս կեսը շրջապատեց ամրոցը Չերտոմուլիկի ու հովտի կողմից:

Չարագույժ լուծություն էր կախվել Սեչի վրա: Չէր լսվում նույնիսկ բազմահազար ասկյարների շնչառությունը: Չէին ձրխում կուրենների կավածեփ, լայն ծխնելույզները: Բարձր աշտարակում, տաք բուրբերով ծածկված, քնած էին ժամասույճ կազակները:

Ենիշերիները բռնեցին Սեչի ողջ հրապարակը և հոծ խմբերով տարածվեցին կուրենների միջև: Նրանք այնքան շատ էին, որ կանգնած էին մեկը մյուսին կիպ սեղմված: Սպասում էին հրամանի կուրենները ներխուժելու: Բայց չգիտես ինչու հրամանը ուշանում էր: Նեղվածքում հրամանատարները կորցրել էին կապը: Ամեն մեկը վախենում էր թեկուզ մի խոսք արտա-

բերել, որպիսզի զապորոժցիներին շարժնուցնեն: Էնիշ տաւրու-
սը չգիտես ուր էր կտրել:

Սաֆար բէյը իր մարդկանցով հայտնվեց երկար, սպետու-
կեցրած կուրենի դիմաց: Այնտեղ, ուռնու ճյուղերից հլուս-
ված և կավով ծեփած հաստ պատերի ետևում, չկասկածելով
մահացու վտանգի մասին, քնած էին կազակները: Սաֆար բե-
յը ենիշերիների առաջին շարքում էր, որը հազիվ էր զսպում
ետեից ճնշող զինվորներին:

Սաֆար բէյի կողքին կանգնած էին նրա հավատարիմ թիկ-
նապահները՝ Կազամիկին ու աժդահա Աբդագուլը: Նրանք ոտ-
քերով ամուր խրվել էին ձնակույտի մեջ՝ իրենց վրա ընդունե-
լով բազում մարմինների ճնշումը և պաշտպանելով աղային:

Սաֆար բէյը հուզվում էր: Նզովյալներ: Ե՞րբ պիտի վեր-
ջապես մարտի ազդանշան տան...

2

Պերեյասլավլյան կուրենում բոլորը քնած էին: Մի քանի
կազակներ, նրանց մեջ էլ Զվենիգորան, Վոյնովը, Մետելիցան
և Սեկաչը, քաշվել էին հեռավոր անկյունը, կտավի լաթերը
զցել էին մեջքներին, վառել էին մոմը և թուղթ էին խաղում:
Սեղանին փոխարինող թախտի վրա պսպղում էին արծաթն ու
ոսկին:

Շնչիկ պապը նրանց հետ չէր: Դեռ երեկվանից նրա բախտը
չէր բերում: Ունեցած-չունեցածը տարվեց և ջղայնացած ըն-
կավ կողքի ու քնեց: Բա պե՞տք էր. նույնիսկ քնելու տեղի հար-
ցում բախտը չբերեց: Նա սիրում էր կուշ գալ վառարանի վրա
կամ կողքի թախտին, որպեսզի տաքացնի ձեր ոսկորները:
Բայց այսօր ասեղ զցելու տեղ չկար. բոլոր կողմերից, — հե-
ռավոր ձմեռանոցներից, Աջափից, Զախափից մինչև Սլորու-
ժանշիկնա, — եկել հավաքվել էին զապորոժցիները, որպեսզի
կոշևոյ ընտրեին: Բոլոր նառերի վրա, տակառի մեջ լիթը լցված
տառեխի նման, պառկած էին կազակները: Նրանցից ոչ մեկը
խմած չէր, բոլորն էլ սթափ էին, թեև Սեչի գանձարանի հաշ-
վին նախօրոք ահապին արապ, գարեջուր ու մեղր էին բերել,
որպեսզի քեֆ անեին, բայց ընտրություններից հետո:

Շնչիկը յորոշ ժամանակ պտտվեց վառարանի ու թախտի շուր-

ըր, բայց ոչ մի ճեղք չգտավ, որպեսզի խցկվեր սոսկալի ձայնով խոմփացնող կաղակների արանքը: Մերունին ստիպված պատկեց լուսամուտի մոտ: Հնամաշ քուրքը քաշեց գլխին, կուռեկավ ու քնեց:

Կեսգիշերն անց Շեշիկ պապը հանկարծ արթնացավ: Նա մի գարհուրելի երազ տեսավ:

Իբր թե ինքը կայուկով գնում է Չերտոմլիկում ուռկան դրենլու: Եվ լողաց հեռու, այնտեղ, ուր ձկներին թիվ ու հաշիվ չկար, բայց ամեն կազակ շէ, որ համարձակվում է որս անել: Միայն կոշեռոյ Սերկոն է այստեղ հասնում: Նրան ինչ, սատանայից էլ չի վախենում: Փորձված, ծեր կաղակները պատմում էին, որ երբ ստամանը գեռ ջահել էր և ընկերների հետ միասին տեղ էր փնտրում նոր Սեչի համար, մի անգամ Դնեպրից լողում է դեպի ինչ-որ անծանոթ գետակ՝ մութ, խորունկ խորխոր: աներով, զառիկող ափերով և հարսնեմատի խիտ թփուտներով: Գուր է գալիս նրան էդ տեղը: Մակույկից դուրս է գալիս ափ, որպեսզի ավելի լավ տնտղի, թե որտեղ կառուցեն բերդը: Իսկ էդ ժամանակ եղևգների միջից դուրս է թռչում մի ահագին սողաձոր սատանա ու քշում ուղիղ նրա վրա: Ժանիբները ծնգժնգացնում է, պոզերը ցցում, ուզում է ոտքերի տակ տրորել կազակին կամ վախեցնել, որպեսզի, ուրեմն, սա կծիկը դնի: Համա թե սա ուրիշ պտուղ էր: Սերկոն գոտուց դուրս է քաշում ատրճանակն ու որ չի թրխկացնում, սատանեն տեղնուտեղ շրը՝ մփ, ընկնում է ջուրը: Ղլղացնում է ու իջնում հատակը: Իսկ Սերկոն բերում է կազակներին և կառուցում է Սեչը հենց այնտեղ, ուր Դնեպրի մեջ էր թափվում այն անանուն գետակը, որն, ի հիշատակ սատանայի դեմ տարած հաղթանակի, այդ օրվանից կոշվեց Չերտոմլիկ՝... Ահա երազի մեջ Շեշիկը միտք է անում... «Սերկոն շվախեցավ սատանից, երբ էստեղ ոչ մի քրիստոնյա շունչ չկար, ես ինչի՞ց պիտի վախենամ հիմի: Կգնամ ուռկան կղնեմ էնտեղ, ուր դեռ ոչ մեկը չի դրել: Առավոտվա կողմը մակույկը լիքը ձուկ կլցնեմ»: Լողաց վմիտ ջրերից գեպի խաղաղ գետախորշը, հարմար տեղ բնտրեց, բայց հենց որ ուռկանը ջուրը գցեց, խորքից դուրս եկավ ինչ-

¹ Ռուսերեն ՎЕРТ և ПУК բառերից. բառացի՝ սատանի երես: Այսինքն՝ այն տեղը, ուր երևացել է սատանան:

որ այլանդակ հրեշ, բռնեց կազակի աջ բեղից ու քաշեց ջրի տակ...

Քրտինքի մեջ կորած Շեշիկն աչքերը ճպճպացրեց: Եվ իսկապես. ինչ-որ մեկը պինդ ձգում է նրա աջ բեղը: Էս ո՞ր սատանան է: Կարծես թե ինքը արդեն քնած չէ... Եվ երեկ էլ բոլորովին չէր խմել...

Ձեռքով կողքերն ափսոսանքով՝ ծերունին հասկացավ, որ իր երկյուզը զուր է: Պարզապես երկար սպիտակ բեղը սառել կպել էր լուսամուտագոգին ու պահում էր նրան, ոնց որ կապ դրած լիներ:

Ոչ առանց ափսոսանքի Շեշիկը կտրեց բեղի ծայրը, երեսին խաչ հանեց ու նստեց տեղում, ձեռքով հենվելով սառցակալած լուսամուտագոգին: Կուրենում մութ էր: Միայն անկյունում մլմլում էր մոմը. խաղամոլները դեռ չէին պառկել քնելու: Իսկ դրսում լուսնկա գիշեր էր: Վերևի շառած ապակու միջով ներս էր բնկել լուսնալույսի կապտավուն ցուլքը:

«Երևում է, առավոտը հեռու չէ,— մտածեց Շեշիկ պապը:— Ոնց որ թե լուսինը պահակային աշտարակի հտեն է իջնում», Եվ որպեսզի համոզվի, որ շուտով լույսը կբացվի, պատուհանից դուրս նայեց:

Սկզբում ծեր կազակը մտածեց, թե ինքը կամ քնած է, կամ խելքը թոցրել է:

Ուղիղ լուսամուտի դիմաց, կուրենից բնդամենը երեք-չորս քայլի վրա, կանգնած էր ենիչերիների հոծ պատր: Իր երկար կյանքի բնթացքում կազակը ենիչերի շատ էր տեսել, սխալվել չէր կարող:

Ծերունի Շեշիկն իր կյանքում առաջին անգամ իսկականից վախեցավ: Երեսին խաչ հանեց, մի անգամ էլ բեղը քաշեց, համոզվեց, որ իսկապես քնած չէ, ու նորից կպավ պատուհանին: Ենիչերիներն են... Անիծվածները կանգնել են հանդիստ, հրեում է մարտի են պատրաստվում: Իսկ առայժմ աչքերն են ճպճպացնում:

Շեշիկը ցած թռավ նաոից, նետվեց դեպի թուղթ խաղացողներն ու մոմը հանգեցրեց:

— Ենիչերիները Սեչում են,— վախեցած վրա տվեց նա: Մետեղիցան, անակնկալի եկած, թղթերը ձեռքից ցած գցեց:

— Դու ինչ է, հո չե՞ս գժվել, Շեշիկ,— գոչեց նա:

— Կայծակի բաժին դառնամ, թե սուտ եմ ասում: Ինքնւրդ նայեր:

Զվենիգորան նետվեց դեպի պատուհանը ու տեղում բարացավ: Շեշիկը չէր ստում. Սեչը լցված էր ենիչերիներով:

— Ընկերութեանն արթնացրեք: Մենակ թե կամաց... Բատկո Կոռնեյ, դոները փակիր, որպեսզի ոչ մի շուն ներս չխցկւրվի... Մուշկետներն ու վառոդը պատրաստեք...

Մեկ ըոպե անց ամբողջ կուրենը ոտքի վրա էր: «Ենիչերիները Սեչում են» սարսափելի խոսքը մի ակնթարթում բոլորի քունը փախցրեց: Կուրենի ատամանը խորհրդից առաջ գիշերը մնացել էր կոշկոյի մոտ, դրա համար էլ բոլորն ակամա սկսեցին անել այն, ինչ Արսենն ասում էր.

— Վառողամաններն ու փամփուշտների արկղերը դրեր սեղանների վրա,— կարգադրեց նա:— Ով լցնելու է, թող կանգնի սեղանների մոտ: Ով կրակելու է՝ պատուհանների մոտ: Կրակել առանց դադարի: Դե, արագ, եղբայրներ:

Կազակները արագորեն գրավեցին իրենց տեղերը: Մի մասը մուշկետներն էր լցնում, մյուսները դրանք փոխանցում էին հրածիգներին, իսկ սրանք արդեն պատրաստ էին, սպասում էին հրամանի:

— Կրակ,— գոչեց Զվենիգորան:

Թնդաց համազարկը: Ասլա՛ երկրորդը, երրորդը: Կուրենը ծածկվեց ծխով: Դրսից դարհուրելի անմարդկային ռոնոց լրսվեց: Ենիչերիները ընկրկեցին՝ տասնյակ սպանվածներ ու վիրավորներ թողնելով ձյան վրա: Բայց փախչելու տեղ չկար: Նստում տարուրերվում էր կենդանի պատը:

Կազակները նշան բռնելու կարիք չունեին. ենիչերիները այնպես խիտ էին կանգնած, որ ամեն մի գնդակը միանգամից խոցում էր երկու, երբեմն էլ երեք հոգու:

Առաջին իսկ համազարկերից հետո ամբողջ Սեչը անմիջապես ոտքի ելավ: Անընդմեջ որոտում էին համազարկերը: Աշտարակներից հարվածեցին թնդանոթներն ու գակիվնիցաները: Գնդակների ու սուսերի հորդ անձրևը ձաղկում էր Սեչի հրապարակը, որտեղ կուտակվել էր թշնամին, և տասնյակներով ու հարյուրներով հնձում էր նրանց:

Սարսափից խելագարված՝ ենիչերիները վազվւտում, գետուղեն էին նետվում, թպրտում էին, ինչպես թակարդն ընկած

գազան: Նրանք, ուղքեր մոտ էին դարպասին, փորձեցին բացել: Բայց իզուր: Ոչ մեկը չգիտեր գաղտնի լծակների մասին, որոնք բացում էին: Իսկ այդտեղ էլ դարպասների աշտարակից սկսեցին հարվածել թնդանոթները, և հարձակվողների ամբոխը վայնասունով շեշտակի ետ գլորվեց:

Այլևս ոչ ոք ոչ ոքի հրամանը չէր լսում: Ամեն մեկը մտածում էր միայն իր մասին: Տեսնելով, որ զապորոժցիների անողոք կրակը ամենուրեք հասնում է իրենց, վերջնականապես խելքները թոցրած ենիշերիներն ու սպախիաները հիշեցին սողանցքի մասին, որի միջով թափանցել էին Սել: Այնտեղ: Դեպի ելքը: Շուտ փախչել այս դժոխքից, որտեղ ավազների տուներ, զորական գանձարանը, յուրաքանչյուր կուրեն և նույնիսկ եկեղեցին, թեև նրա գույնզգույն ապակիները արտացոլում էին միայն գնդակոծութան կրակը, մահ էին սփռում:

Անհամար ամբոխը նետվեց դեպի անցքը: Բայց այն շատ նեղ էր: Այնտեղ միայն մեկ-մեկ կարող էին խցկվել: Եվ ամեն մեկը ջանում էր ինքը լինել այդ բախտավորներից առաջինը: Մի քանիսը արդեն ճանապարհ էին բացում թրերով, կտրում էին իրենց հավատակիցների զուխները:

Ետևից եկողները ճնշում էին առաջիններին: Բոլորն էլ գոգոտում էին, հայհոյում, փրփրում, անիծում: Մեռնողների խրուխրոցը, վիրավորների տնքոցը, մենակ մնացած ավազների գոռգոռոցը, որոնք փորձում էին գտնել որոշ կարգուկանոն հաստատել, կրակոցների անընդմեջ ճարձատյունը այս բոլորը խառնելով էին անզուսպ, աներևակայելի գվվոցի ու աղմուկի մեջ:

Հանկարծ այդ որոտի ու մոնչոցի մեջ ներխուժեց թուլումբասների տազնապալից դղրոցը, ապա՝ կազակական մարտական շեփոռների կանչը, որոնք գրոհի էին կոչում:

Ձայնից գալիս էին ավազների կուրենից:

Հրաձգությունը քիչ-քիչ հանգարավեց:

Եվ այնժամ հնչեց կոշկոյ Սերկոյի հզոր ձայնը.

— Թրերո՞վ, կտրի՞ճ եղբայրներ: Թրերո՞վ: Կրակը դադարեցնել: Դուրս գալ կուրեններից: Ձա՛րկ նզովյալներին, Մա՛հ անօրեններին...

Հրաձգությունը դադարեց:

Կուրենների կրնկի վրա բացված դռներից, լուսամուտներից դուրս թափվեցին զապորոժցիները՝ թրերը, յաթաղաններից

րը, քելեպները¹ ձեռքներին: Մարտական կանչերով նրանք ընկան սարսափով բռնված, վաղորդյանի սառը մշուշի մեջ զետուղեն նետվող թշնամու վրա:

3

Երբ կուրեններից համազարկ տվեցին և շատ ենիչերիներ փովեցին ձյան վրա, Սաֆար բեյն զգաց, որ մի տաք բան ցայտեց իր զեմքին ու ձեռքերին: «Վիրավորվեցի», — անցավ նրա մարով: Ինքնապահպանման բնազդը նրան ստիպեց ընկնել գետին, բերանը սիվար փովել ձյան վրա: Երբ համոզվեց, որ ողջ ու անվնաս է, իսկ գնդակները թռչում են իր վրայով: Նա փոքր-ինչ գլուխը բարձրացրեց, նայեց շուրջը: Կողքին խրոխոում էր Կազամլիկը: Նրա սև, լայն բացված աչքերը, որ բոլորից շուտ էին տեսել ջոկատին և հենց իրեն՝ Սաֆար բեյին սպառնացող վտանգը, հիմա սառել էին, մշուշապատվել: Նայելով երկնքում փայլող սլայծառ լուսնին՝ նրա աչքերը կարծես օգնություն էին աղերսում: Բայց սառը լուսինը անտարբեր էր նայում նրան, ով իր ամբողջ կյանքում պաշտել էր իրեն, երկրպագել, պատկերել իր դրոշի վրա:

Մյուս կողմում անշարժ պռկած էր աժդահա Աբդագուլը: Նրա կրծքից արյուն էր ժայթքում:

Փոքր-ինչ ուշքի գալով՝ Սաֆար բեյը մտածեց այն մասին, թե ինչ անի: Փախչել՝ Բայց ո՞ւր: Չես էլ հասցնի վեր կենալ, կաղակական գնդակը կխոցի քեզ... Չայն տա դինվորներին, որպեսզի, հակառակ մահացու, ոչնչացնող կրակին, գրոհեն կուրենների վրա: Իզուր է: Ոչ ոք քեզ չի լսի: Ասենք, ով սիրտ կանի ներս խցկվել դռներից ու պատուհաններից, որտեղից անընդմեջ որսատում էին կրակոցները, ասես ամեն մի կուրենում ոչ թե քսան-երեսուն կազակներ կային, ինչպես ենթադրում էին իրենք, այլ երեք հարյուր... Գտնել Մուրաս փաշային ու հարցնել, թե ինչպիսի կարգադրություններ են լինելու: Այդ մասին մտածելը նույնիսկ անմտություն է: Այս իրարանցման մեջ մի՞թե կգտնես նրան: Գուցե նա սպանված է կամ արդեն փախել է...

¹ Վելեպ (ուկր.) — տապաքամուրճ. սառը զենք՝ կրթին մուրճ և սուպար:

Սաֆար բեյը ոչ մի վճիռ ընդունել չկարողացավ և որոշեց, որ ամենից առաջ ինքը պետք է փրկվի: Սողալով ետ քաշվեց լուսամուտի տակից, ոտքի ելավ ու արագորեն անհետացավ կուրենների միջև ընկած նեղ անցումում: Գնդակներն այստեղ էին հասնում: Որոշ ժամանակ անց գլուխը դուրս հանեց ակյունից ու շուրջը նայեց: Եկեղեցու առջև սմբողջ հրապարակը ծածկված էր ենիչերիների դիակներով: Սաֆար բեյը նույնիսկ տնքաց ցավից ու հուսահատութունից: Ամեն ինչ կորավ: Զորքը, պատիվը, ապագան, նույնիսկ կյանքը... Ալլահ աբդեր, ինչո՞ւ ես դու գլավուրներին օգնում: Ինչո՞ւ ես կործանում փաղիշահի փառապանծ ղավակներին, իսլամի հավատարիմ պաշտպաններին: Փրկիր դու նրանց, ով ալլահ... Կամ, զուցե, բո մեծութունն ու ամենակարողութունը հորինված բան է միայն, սին խաբկանք...

Սաֆար բեյը արագ վազեց անցավ իրեն բերդապարսպից բաժանող կարճ տարածութունը: Այստեղ լուռ էր: Նույնիսկ զնդակները չէին վզզում: Այդ նեղ, մեռյալ տարածութունը, որից էլի մի քանի տասնյակ ենիչերիներ էին անցել իրենից բացի, փրկեց նրան ստույգ մահից: Բայց արդյո՞ք երկար ժամանակով:

Սաֆար բեյը կողմնորոշվեց, թե ուրտեղ է սողանցքը, և պարսպի վրայով դանդաղ, գաղտագողի գնաց դեպի այն կաղմ:

Հանկարծ հրաձգութունը դադարեց, և կուրեններից դուրս թափվեցին կաղակները, ով ինչպես որ կար՝ բուրբերով, ժուպաններով, սվիտկաներով, մեծ մասը միայն սպիտակ շապիկով էր, մի քանիսը նույնիսկ մինչև գոտկատեղը մերկ: Երեվում է, ինչպես անկողնուց վեր էին թռել, այդպես էլ զենք էին վերցրել, առանց ժամանակ կորցնելու:

Սաֆար բեյը կանգ առավ: Չէ, մինչև սողանցք չի կարող հասնել: Ասենք այնտեղ էլ, երևի, այնպիսի հրմշտոց կլինի, որ չի կարող ճեղքել անցնել: Բացի դրանից, մեծ քանակությամբ կաղակներ սլացան այն կողմ, մահ սփռելով ենիչերիների մեջ, որոնք արդեն զրկվել էին դիմագրելու բոլոր կարողութուններից... Հուսահատութունը պատեց Սաֆար բեյին: Դեռ երբեք այդպես բացեիրաց, այդպես սշկարա չէր կանգնել մահվան դեմդիմաց, ինչպես այժմ: Եվ ինչպիսի՞ անհեթեթ մահ: Չէ՞ որ զոհվելու է ոչ թե կովի մեջ, ոչ թե թշնամու գեմ

երես առ երես, այլ ստիպված է թիկունքը ցույց տալու Ամո՞թի
հայտառակությո՞ւն...

Նա կուշ էր եկել անկյունում մեն մենակ: Բուրբ ենիշերինե-
րը, որոնք իր հետ միասին քիչ առաջ թաքնվել էին կազակա-
կան գնդակներից, փախել, անհետացել էին ինչ-որ տեղ. հավա-
նաբար, ինչպես հազարավոր ուրիշներ, նրանք ձգտում էին
դեպի բաղձալի սողանքը... Սաֆար բեյը քրտնած ճակատը
հենեց սառը պարսպին և, ասես ինչ-որ անիրական բանի, նու-
յեց հրապարակում իրար վրա թափված դիակների կույտին՝
լուսնի լույսի տակ պսպղացող կազակական սրերի արտացոլ-
քին, արնաշաղախ ձյունին և դեսուդեն նետվող, թայտացող
ենիշերինների ամբոխին, որը հալվում էր աչքի առաջ, ինչպես
մոմը կրակից:

Հանկարծ նրա առջև երևաց Համիդի ծանոթ բեկեշը: Թուրք
մի ձեռքում, ատրճանակը՝ մյուս, սպախիան շնչակտուր վա-
զում էր մի կուրենից մյուսը, հույս ունենալով, հավանաբար,
աննկատելիորեն հասնել գաղտնի անցքին և դուրս պրծնել Սե-
չից: Սաֆար բեյը, մոռանալով իր սեփական վիճակը, հեղ-
նանքով ծիծաղեց թթի տակ: Հետաքրքիր է, մինչև ո՞ր կարող
է գնալ Համիդը: Ախր նրա պարարտ կերպարանքը շատ է
աչքի ընկնում:

Համիդը չնկատեց Սաֆար բեյին, թեև ընդամենը մի տու-
սր-տասնհինգ քայլ էր հեռու նրանից: Իսկ Սաֆար բեյը ոչ մի
ցանկություն չունի իր մասին հիշեցնելու Համիդին և նայում
էր միայն, թե հետո ինչ է անելու սպախիան: Մի՞թե նա կհան-
դրվի դուրս գալ թարսուողից և հարյուրավոր կազակների աչքի
առաջ վազելով անցնել ընդարձակ հրատարակը: Իսկ մինչև
գաղտնի անցք միայն այդ միջոցով կարելի է հասնել:

Սակայն Համիդը ակնհայտորեն չէր շտապում: Սեղմվեց
պատին, թուրը փոխանցեց ձախ ձեռքը, ատրճանակը՝ աջ: Սպա-
սում էր ինչ-որ մեկին... Ահա հա ամբողջովին լարվեց, ան-
շարժացավ, բարձրացրեց ատրճանակի փողը: Նմանվեց պա-
րարտ սև կատվի, որը պատրաստվում է ցատկելու իր դո՛շի
վրա: Ո՞ւմ էր նշան բռնել սպախիան:

Ատրճանակից ճալթբեց հուրբ, որոտաց կրակոցը: Նույն
պահին էլ Համիդը շեղակի վաղեց հրապարակով, թուշելով
սպանվածների ու վիրավորների վրայով: Կուրենի անկյունից

դուրս թռան երկու կազակներ ու սլացան նրա ետևից: Իսկ սրանց ետևից դուրս եկան ևս երկուսը: Կանգ առան:

— Ա՛խ դու սատանա,— բացականչեց հաղթանդամ ծեր կազակը:— Խրտվիլակ: Ախր նա քեզ վրա էր նշան բռնել, բատկո կոչեոյ:

— Ես էլ էդպես եմ կարծում,— պատասխանեց ճերմակաբեղ, ամբակազմ կազակը:— Գնդակը հենց ականջիս տակ վզզաց... Կես վերջով մոտիկից անցներ, աստծու ծառա ի վանը հոգին կփչեր:— Եվ հանկարծ բարձր ձայնով գոչեց.— Տղերք, կենդանի բռնեք դրան: Չսպանեք... Այ էդուես... Գնացինք եղբայր Մետեիցա:

— Ա՛հ, արդեն բռնեցին: էստեղ են քարշ տալիս,— գոհունակությամբ թավ ձայնով խոսեց Մետեիցան ու գնաց կազակներին ընդառաջ:

Անկյունից դուրս եկան երեք հոգի. առջևից, գլուխը կախ, դանդաղ ու ծանր քարշ էր գալիս Համիդը, նրա ետևից գալիս էին երկու զապորոժցիներ:

Սաֆար բեյը քիչ մնաց ձեն տար նրանցից մեկին՝ Արսեն Զվենիգորային:

Համիդին բերեցին Սերկոյի մոտ: Կոչեոյը երկար զննեց նրան, հետո հարցրեց.

— Դու ճանաչո՞ւմ ես ինձ, թուրք:

Արսենը թարգմանեց հարցը:

— Դու Ուռուս Շեյթանն ես... Ես իսկույն ճանաչեցի քեզ,—

խուլ պատասխանեց Համիդը:

— Ճանաչեցի՞ր: Մի՞թե տուաջ ինձ ճանաչում էիր:

— Ճանաչում էի: Ես եղել եմ Սեչում, որպես դեսպան...

Ու լավ եմ հիշում քեզ:

— Հը՞մ... Եվ ուրեմն, որոշել էիր սպանե՞լ:

Համիդը լռեց: Հալածված գայլի նման հայացքը շրջեց կազակների վրա:

— Սեկաշ, սրան բանտ տար,— ասաց Սերկոն:— Երևում է, կարևոր թոշուն է: Սրա փոխարեն մենք մեր մարդկանցից շատերին կազատենք:

— Բատկո,— գեպի կոչեոյը նետվեց Արսենը:— Չի կարելի էդ շանը կենդանի բաց թողնել: Թե որ իմանաս ով է նա, ինքդ նրա գլուխը կկտրես, առանց մի բուրբ մլուլ տալու:

— Իսկ ո՞վ է նա:

— Համիդն է: Իմ նախկին տերը: Ես քեզ պատմել եմ նրա մասին: Չարագործ դե է... Թույլ տուր սրա հաշիվը ես մտաբերեմ:

Համիդը նոր միայն ճանաչեց Արսենին: Անեղանելի վիճակը, կատաղությունն ու հուսահատությունը ձուլվեցին մի գաղանային մոնչոցի մեջ, որ դուրս թռավ նրա կրծքից: Բոլորի համար էլ անսպասելի նա հարձակվեց կազակի վրա ու կառչեց նրա կոկորդից: Բայց Արսենը ուժգին հարվածով ետ շարտեց նրան: Համիդը շկարողացավ հավասարակշռությունը պահել և փովեց ձյան վրա:

— Ճիշտ որ շարագործ է,— ասաց Սերկոն:— Բայց ոնց որ թե խիղճս չի տանում անդեն մարդուն սպանել:

Արսենը Համիդին մեկնեց նրանից խլած թուրը:

— Վերցրու Պաշտպանվիր:

— Ի սեր աստժո, Արսեն,— գոչեց Մետելիցան:— Մեկ էլ տեսաք վիրավորեց քեզ:

— Փոխարենը, երբ կընկնի իր ալլահի կամ սատանայի մոտ, չի ասի, թե մենք անազնվորեն ենք վարվել իր հետ:

Սկզբում Համիդը չհասկացավ, թե ինչ են ուզում իրենից: Մահվան սարսափը մթագնել էր նրա ուզեցը: Հետո, տեսնելով իրեն մեկնած սրի դաստակը, ուշքի եկավ, վերցրեց ու ոտից թռավ: Մի ակնթարթում արձակեց բաշլուղը, վրայից դեն դրե: Բեկեշը: Շտապում էր, կարծես վախենում էր, թե կազակնեկը կփոշմանեն:

Փայլկտացին, խաչածնվեցին սրերը: Ծոնչաց ամուր, սառը պողպատը: Համիդը իսկույն անցավ հարձակման և մի փոքր նեղեց Արսենին: Հուսահատությունը ուժ էր տալիս նրան: Նահասկանում էր, որ կորցնելու ոչինչ չունի. այսպես թե այնպես, իր վերջը եկել էր: Միակ բանը, որ մոլեգնորեն փափագում էր, այն էր, որ ուզում էր իր հետ այն աշխարհ տանել իր ռիսկի՝ թշնամուն՝ դապորոժցուն, որին համարում էր իր կրած բոլոր ձախորդությունների ու դժբախտությունների պատճառը:

Սերկոն, Մետելիցան ու Սեկաչը կանգնել էին մեկտղով վրա ու հանգիստ դիտում էին մենամարտը: Նրանցից ոչ ոչ չգիտեր, որ ևս մի մարդ, որ իր ճակատագրով սերտորեն կապված էր և՛ Համիդի, և՛ Զվենիգորայի հետ, նույնքան ուշադիր, թեև ոչ այնքան հանգիստ, հետևում էր այդ մենամարտին: Սա-

Քար բեյը նույնիսկ չէր շնչում: Նա հասկանում էր, որ Համիզը դատապարտված է, բայց չէր խղճում նրան: Ընդհակառակը, վախենում էր, թե անսպասելի, կատաղի հարվածով նա մահացու վերք կհասցնի Զվենիգորային, և Զլատկան այրի կմնա օտարության մեջ: Որոշ ժամանակից ի վեր նա ընտելացել էր այն մտքին, որ ինքը բույր ունի, և սկսել էր եղբայրական սիրո նման ինչ-որ բան գգալ:

Մենամարտը շարունակվում էր փոփոխական հաջողությամբ: Արսենը ջահել էր, ուժեղ, արագաշարժ և լավ զպրոջ էր անցել ծերունի Մետելիցայի մոտ: Փոխարենը Համիզը հարձակվում էր նրա վրա նեղն ընկած, հալածական գազանի անողորմությամբ և դրա համար էլ շատ վատնդավոր էր: Սակայն ձեր զինվորների փորձված հայացքը նկատեց, որ կողակեր կովում է ոչ թե լրիվ ուժերով, այլ խաղ է անում ճարպակալած ու դանդաղաշարժ սպախիայի հետ:

Վերջապես Սերկոն մրսեց մի շապիկով այդ ստոնամանի-ւնում երկուր մնալուց, ձոնձրացավ և ձայն տվեց.

— Արսեն, վերջացրու:

Զվենիգորան իսկույն զգաստացավ ու անցավ հարձակման: Նրա սուրբ սկսեց փայլկտալ կայծակնային արագությամբ: Համիզը հազիվ էր հասցնում ետ մղել կապակի հարվածները և ավելի ու ավելի էր նահանջում գեպի ենիչերիների զիակներով ծածկված հրապարակի կենտրոնը: Գա ավելի բարգաջրեց մենամարտողների դրությունը: Անհրաժեշտ եղավ, առանց մի բույս մարտը դադարեցնելու, հետևել նաև այն բանին, որպես-զի շտապարեն, քսնդի ամենափոքր սխալն իսկ, անմիտ պատահականությունը կարող էր ճակատագրական լինել:

— Գլավո՞ւր Ծո՞ւն, — առամների արանքից մոլորում էր Համիզը՝ կասեցնելով իր նախկին սարուկի սրբնթաց հարձակու-մբ: — Սարուկ: Հիմա դու կլինես ալլահի մոտ երես առ երես:

— Գուցե դո՞ւ կլինես, Համիզ, — քմծիծաղեց Արսենը, ցատկելով երկու ենիչերիների զիակների վրայով: — Գու ավելի շատ հնարավորություն ունես այսօր նրան հանդիպելու:

Նա թափով հարձակվեց և զգաց, որ սուրբ զվարտությամբ խրվեց սպախիայի կուրծքը: Համիզը անբաց ու ետ թերվեց: Բայց, երևում է, վերքը խոր չէր. նա հախարեց բոլոր ուժերը և թուրը տեղի նման շղթաեց Արսենի վրա: Վերջին պահին Ար-

սենր կոահեց թշնամու նենգ մտադրությունը և հասցրեց մի կողմ թերվել: Թուրը սուչոցով անցա՛վ ականջի մոտով ու խըր-վեց ձյան մեջ:

Ձապորոժցու պատասխան հարվածն անկասելի էր: Համիզը գլուխը ետ գցեց, բերանը բացուխուփ արեց և ծանրորեն փլվեց տրորված, գորշ ձյան վրա:

— Դե, եղբայրներ, գնացինք: էդ ավազակների վերջը տանք:— Սերկոն, Մետեղիցան, Սեկաչը վազեցին դեպի արև-վելյան պարիսպը, որտեղ դեռ լսվում էին ճիչ ու աղաղակ ն գենքերի շաշյուն:

Ձվենիգորան սրբեց թուրը և նայեց իր մեռած հակառակորդի անշարժացած դեմքին: Համիզի բանը վերջացած էր: Նա պառկած էր մեջքի վրա, խոշոր, ծանր, և բոլորովին էլ սարսափելի չէր: Սառած աչքերով նա նայում էր օտար երկրն-քին, որն ուզում էր իրենը դարձնել:

Ետևում ձյան ճոճոց լսվեց: Արսենը թափով շրջվեց. դան-դաղ իրեն էր մոտենում մի թուրք: Կուրենի սավերը ծածկում էր նրա դեմքը: Արսենը նորից բարձրացրեց թուրը, բայց թուրքը ձեռքերն առաջ մեկնեց ու կամացուկ մրմնջաց.

— Սալամ, Արսեն: Չե՞ս ճանաչում:

— Նենկո՞:

— Այո, ես եմ, Սաֆար բեյը... Դժբախտ Սաֆար բեյը, որի ճակատին գրված է, որ պետք է մեռնի այսօր, քո ձեռքով, հենց որ Համիզը մեռնի... Արսեն, խնդրում եմ, սպանիր ինձ: Իմ ձեռքը չի զորում, որ վերջին հարվածը հասցնեմ ինձ:

— Նենկո, էդ ի՞նչ ես խոսում: Մոռացիր քո սարսուփելի Սաֆար բեյ անունը: Չէ որ էս հրեշի մեղքով ես դու ենիչերի դարձել,— Արսենը մատնացույց արեց Համիզի դիակը:

— Դրանից իմ վիճակը չի թեթևաւորո՞ւմ: Ես պետք է մեռնեմ...

— Խե՞ղճ Նենկո: Ինչու բախտը քեզ գցեց էստեղ,— բացա-կանչեց Արսենը:— Մի՞թե նրա համար, որպեսզի աչքերդ բաց-վեն... Դե լավ: Գնանք:

— Ո՞ւր:

— Գնանք, գնանք: Ես քեզ կփրկեմ: Հիմա անհնար է Սե-լից դուրս գալ: Քեզ փակի տակ կդնեմ: էդպես քեզ համար ապա-հով կլինի: Իսկ վաղը կտեսնենք:

Նա բռնեց Նենկոյի ձեռքից ու տարավ:

Ռոման Վոյնովը երկու մութ կերպարանք նկատեց: Նրանք անջատվեցին ենիշերիների ամբոխից, վազելով անցան փողոցը և առաջին իսկ կուրենի բաց դռնից ներս ընկան: «Ովքե՞ր են գրանք: Թուրքե՞ր: Չէ, նման չեն: Իսկ եթե մերոնք են, ինչո՞ւ պիտի փախչեն ու թաքնվեն», — մտածեց նա, ու աննկատելիորեն գնաց նրանց ետևից: Թաքնվեց ստվերում, ականջ գրեց կուրենից լավոզ խուլ շշուկներին:

— Ահա քեզ հարմար ժուպան, շորերդ փոխիր, շուտ, — լավեց առաջին ձայնը: — Եկվոր կազակների տեղ կանցնեն, կրարձրանանաք հողապատնեշը, էնտեղից էլ՝ ցած, մչո՛ս կողմը: Դե արի ու գտիր:

— Չէ՛, ես ուրիշ բան եմ մտածել, հոռո, — պատասխասնեց երկրորդ ձայնը: — Մենք պետք է բացենք դարպասը: Խանը իր գորքով կներխուժի Սեչ: Նրանց թիվը քառասուն հազարի է հասնում:

— Սատանեն խելքդ զլխիցդ առել է, պան Չեռնոբայ, — ֆշաացրեց հոռո, — Ջապորոժցիները մեզ ավելի շուտ կբռնեն, բան մենք կբացենք դարպասը: Փափախդ խոր քաշիր աչքերիդ, ու, հաչդա, գնացի՛ր հողապատնեշ:

— Հիմար, էնտեղ ավելի շուտ կբռնեն: Լսիր, ինչ որ ասում եմ: Հողապատնեշից ցած կզլորվես՝ ոտքերդ կջարդես, էն ժամանակ զապորոժցիների ճանկը կբռնեն... Չէ՛, մեզ մի բան է մնում միայն՝ թաթարների ձեռքով ոչնչացնել Սեչը: Նա մեզ համար ոնց որ աչքի փուշ: Քանի դեռ ենիշերիները մի կերպ դիմանում են, հարկավոր է շուտ թաթարներին ներս թողնել: Դնացի՛նք:

Ռոմանը գոտուց դուրս քաշեց ատրճանակը. հրահանք բարձրացրեց, մի քայլ դռնից հտ գնաց... Այ թե ինչ թռչուններ են չվել մեզ մոտ: Ինքը՝ Չեռնոբայն է՝ իր մեղսակիցների հետ:

Դուռը լայն բացվեց, և շեմքին հայտնվեց մի մութ կերպարանք:

Որոտաց կրակոցը, առջևինը, — դա հոռոն էր, — մեջքի վրա բնկավ իր ուղեկցի գիրկը: Սա էտ նետվեց և սեղանի ու նառե-րի արանքով վազեց դեպի կուրենի խորքը:

— Կանգնի՛ր: Կանգնի՛ր, հուգա,— գոռաց Ռոմանը և վազեց նրա ետևից:

Չեոնորայը թոսով նաոի վրա, կռացավ ու հանկարծ անհետացավ ջարդված պատուհանի մեջ:

— Չեոքիցս շես պրծնի, շուն,— գոչեց դոնցին, թռչելով բարձերի, փալասների ու բուրբերի վրայով, որ զապորածցիները տազնապի ժամին թողել էին այդպես թափթփված:

Նա վազեց մինչև պատուհանը և ընթացքից դուրս ցատկեց: Ետևում ինչ-որ մեկը ուխ արեց, ասես ցից էր խփում: Շաշեց թուրը: Պատուհանից դուրս թռչելով Ռոմանը գլուխկոնծի գլորվեց ձյան վրայով: Դա էլ նրան փրկեց: Չեոնորայը նպատակ ուներ նրա գլուխը թոցնել, թուրը կտրեց օդը և շեղրը ամբողջ լայնությամբ խրվեց լուսամուտագոգի մեջ: Մինչև Չեոնորայը թուրը դուրս կբաշեր, Ռոմանը ոտքի ելավ: Թրերը շաշեցին՝ կայծի խրձեր շաղ տալով շորս կողմը: Մարտը նրանց միջև կարճ էր, բայց կատաղի: Չիգիրինում ստացած վերքը դեռ հիշեցնել էր տալիս իրեն, և Ռոմանը զգալով, որ գեաինը երերում է իր ոտքերի տակ, կամաց-կամաց սկսեց նահանջել: Դրանից սիրտ սուսած Չեոնորայը ուժեղացրեց ճրնշումը, որպեսզի շուտափույթ մաքրի կազակի հաշիվը:

Մի բան հաշվի չէր առել Չեոնորայը: Ռոմանը համորեն էր տիրապետում թրին: Իմանալով՝ որ ինչը երկար լարվածությանը չի դիմանա, Ռոմանը անսպասելիորեն մի կողմ նետվեց և թրի բութ կողմով կտրուկ հարվածեց հակառակորդի թրին, սրը պնդաց ու ջարդվեց: Չեոնորայը քար կտրեց: Ռոմանի համար դժվար չէր խոցել նրան, բայց այդպիսի թռչունին հարկավոր էր կենդանի բռնել, դրա համար էլ թրի ծայրը դեմ արեց Չեոնորայի կոկորդին ու նրան ետ-ետ քշեց դեպի կուրենը, մինչև որ սեղմեց պատին:

Այդպես էլ կանգնած մնաց դոնցին, վախենալով թույլ տալ թշնամուն թեկուզ շատ քիչ պատից կտրվելու, սրովհետև գիտեր, որ եթե նա փախչի, ապա ինքը նրա ետևից չի կարող հասնել:

— Ռոման, էստեղ ի՞նչ ես անում,— լսվեց Չվենիգորայի զարմացած ձայնը:

— էստեղ, Արսեն, էստեղ արի,— կանչեց Ռոմանը առանց շրջվելու.— Տես, ում եմ բռնել:

Նա միայն աչքի պոչով նկատեց, որ Արսենը ինչ-որ թուրքի հետ մոտեցավ իրեն:

Չեոնոբայը փորձեց գլուխը կախել, որպեսզի լուսնի լույսը չընկնի դեմքին, բայց Ռոմանը ծակեց նրա կզակը, ստիպելով գլուխը ետ գցել:

— Չեոնոբայ՞, — գոչեց Արսենը: — Սեչո՞ւմ: Ո՞նց ես ընկել էստեղ...:

Չեոնոբայը ձայն չհանեց:

— Թուրքերի ու թաթարների հետ է եկել, — բացատրեց Ռոմանը, — Իսկ հիմա էլ ուզում է հորդային ներս թողնել Սեչո՞ւմն ինչ անենք սրա հետ: Տեղում վերջացնե՞նք էս շանը:

Ձվենիգորան սեղմեց ատամները: Գանդաղ խոսեց:

— Ո՛չ, թող ընկերութունը դատի: Մինչև առավոտ կփակենք նկուղում:

— Արսեն, դու իրավունք ունես դատելու, ուրեմն ինքդ էլ դատիր: Ես հենց բեզ համար էլ բռնել եմ սրան:

— Շնորհակալ եմ, եղբայր: Բայց իմ դատաստանը նույնն է, ինչ ինքնադատաստանը: Իսկ էս ճիվաղը ամբողջ ժողովրդի առաջ է մեղավոր, ուրեմն թող ամբողջ համայնքը դատի... Դե, շարժվիր, Չեոնոբայ: Առավոտը կխոսենք, սատանի ծնունդ:

Չեոնոբայը գլուխը կախեց ու դանդաղ քարշ եկավ կուրենի երկայնքով: Ռոմանը, Արսենն ու Սաֆար բեյը գնացին նրա ետևից:

Նուսրեմին Սեչում ճակատամարտը ավարտվեց: Միայն մեկուկես հազար ենիչերիներ ու սպախիաններ դուրս պրծան ծուղակից, որ իրենք էին սարքել իրենց համար: Առաջին փախըստականները դեռ լույսը չբացված խանին լուր բերեցին իրենց ընկերների սարսափելի կոտորածի մասին: Մոռանալով իր բարձր դիրքը և հազարավոր հասարակ զինվորներին, որ սեղանավածով հեծելակարգով կանգնած էին շուրջը, խանը ձեռքերը կարկառեց երկինք ու զարհուրելի, կատաղորեն ոռնաց՝ սուր, ճերմակ սեպերը ցույց տալով լուսնին:

— Ու-ու-ո՛ւ, Շեյթան... Ուոուա Շեյթան... Վա՛յ մեզ...
Ու-ու-ո՛ւ...

Նա խթանեց ձիու կողերը ու սլացավ դեպի տափաստան,

Դնեպրից հեռու: Խանի Լաեից, ձիու սմբակներից սառած հողը ցրիվ տալով, շարժվեց նաև հորդան:

Մերկոյի ուղարկած զապորոժցիների հեծյալ ջոկատը շկարողացավ հասնել թշնամուն: Անցնելով Դնեպրը և սլանալով դեպի պահակային ուղեկալ՝ ջոկատը կանգ առավ բլրակի վրա: Արևը դուրս եկավ: Ներքևում փոված էր լերկ, ամալի տափաստանը: Այնտեղ, Պերեկոպի ուղղությամբ, մի վերստ լայնությամբ փոված էր տասնյակ հազարավոր սմբակների հեփը: Հեռվում, ճերմակ ձյունածածկ անապատով, հետզհետե փորրանալով, գործում էր մի սև կետ: Դա դրիմյան հորդան էր, որ փախչում էր մահացու սարսափով բռնված:

Զվենիգորան մոտեցավ կաղակական ուղեկալին: Գետնափորից նա հազիվ լսելի տներոց լսեց:

— Եղբայրներ, այս կողմ եկեք: Մերոնց կոտորել են էստեղ,— գոչեց Արսենը:

Գետնափորում ծխի ու արյան հոտ էր կանգնած: Դիակների վրայից անցնելով՝ Արսենը մոտեցավ թախտին: Այնտեղ գետնին նստած էր Տովկաչը: Նրա կրծքից դուրս էին թռչում խուլ, ծանր հառաչանքներ: Արսենը շարձրացրեց ընկերոջ գլուխը, նայեց կիսափակ սառչող աչքերին:

— Եղբայր...

Տովկաչը ցնցվեց: Կոպերը դանդաղ էտ տարավ, ևրկար, ասես մշուշի միջից, նայեց իր վրա խոնարհված դնձրին:

— Դո՞ւ ես, Արսեն:

Զվենիգորան սեղմեց կաղակի սառչող ձեռքը:

— Ես եմ:

Հարելով բոլոր ուժերը՝ Տովկաչը շշնջաց:

— Ինչպե՞ս է... էնտեղ...

Նրա ձայնը հազիվ էր լսվում, բայց Արսենը հասկացավ, թե նա ինչ է ուզում:

— Ամեն ինչ լավ է, Ենիշերիներին կոտորեցինք: Խանը արանքը ճղեց: Մերոնցից երեսուն մարդ զոհվեց, հիսուն հոգի էլ վիրավորվել են:

— Փառք աստծո... հիմա... կարելի է... հանգիստ մեռնել...

Նա աչքերը փակեց: Բայց հանկարծ վեր թռավ, կարծես մի այրող միտք շամփրեց նրա ուղեղը:

— Արսեն... Խո՞ւր... Խո՞ւր... դավաճան է... զսուշացեք:

Այդ խոսքերը Արսենին շղարմացրին. նա արդեն գիտեր հոռի դավաճանության մասին: Նրան ուրիշ բան ապշեցրեց. դավաճանի մասին միտքը Տովկաշին ապրեցրել էր, ուժ էր տվել նրան՝ դիմանալու մինչև լուսաբաց: Նա չէր կարող, իրավունք չուներ մեռնել, առանց ընկերներին նախազգուշացնելու: Յաթաղանը մի կողմից ծակել, մյուս կողմից դուրս էր եկել, և նա առջևից վերքը փակել էր ձևորով, իսկ մեջքը սեղմել էր թախտին ու այգպես նստել էր ամբողջ գիշերը, որպեսզի արնաբամ չլինի, որպեսզի ընկերությունն իմանա այն մասին, թե ով է թշնամուն առաջնորդել Սել: Հիմա, երբ վերջապես ազատվեց սարսափելի գաղտնիքից, Տովկաշը ձգվեց, խոշոր, ուժեղ ձևորները տարածեց և հավիտյանս լռեց:

Հապորոժցիները հանեցին գլխարկները: Նրանք արժանիորեն գնահատեցին կազակի անձնազոհության ողջ վեհությունը:

5

Չոհված ընկերներին պատվով հողին հանձնելուց հետո զապորոժցիները հավաքվեցին զորական գրասենյակի առաջ որպեսզի գատեն Չեռնոբային:

Երեք կազակներ նրան դուրս բերին նկուղից ու կանգնեցրին առմուտքում, ընկերության առջև: Նա ցրտից ձեռքերը թաքցրեց թևքերի մեջ, սուր կզակը բաշեց քուրքի օձիքի տակ, պղտոր հայացքը հառեց դետնին: Մի անգամ միայն վերև նայեց և, նկատելով ենիչերիների սառած, կուչ եկած դիակները, որ ընկած էին արյունից մուգ կարմիր ներկված ձյան վրա, սարսուռաց ու ձեռքերով երեսը ծածկեց:

— Ծշմարտությունից չես փախչի, Չեռնոբայ, չես թաքնրվի,— ասաց Սերկոնու:— Հասել է ժամանակը, որպեսզի ես նայես քո գարշելի կյանքին ու պատասխան տաս ժողովրդի առաջ: Մեր ժողովուրդը բարեսիրտ է և հաճախ է ներում հանցանքները իր գավակների, ուղիղ ճանապարհի է բերում նրանց, ովքեր սխալվում են, ովքեր սայթաքում ընկնում են դժբախտության կամ կարիքի մեջ: Բայց նրան, ով մեր մարդկանց արյունն է թափել, ով ի սեր արգահատելի շահի, ի սեր օտար ու սին փառքի, մուսուլմանական արծաթի ու ոսկու ծախել է մեր երեխաներին, նրանց մատնել է անօրին-

ների գերութեանը, ով թուրքերի ու թաթարների հետ միասին ուղում էր ոչնչացնել փառահեղ Զապորոժյան Սեչը՝ մեր հայրենի հողի վաղնջական պաշտպանին, ներում չկա՛ւ Քեզ կըգատի ամբողջ ընկերութիւնը: Բացի դրանից, դու երևիլի կազակ ես եղիլ. քո հայրը գնդապետ էր, ու ինքդ հարչուրուպետ ես, ուրեմն թող ոչ մեկը շատի, թե Սերկոն մենակ է դատել քեզ: Ոնց որ ընկերութիւնը կասի, էդպես էլ կլինի: Զվենիգորա, պատմիր բոլորը, ինչ որ գիտես նրա մասին:

Զվենիգորան բարձրացավ աստիճանների վրա: Սկսեց այնտեղից, երբ առաջին անգամ հանդիպել էր Չեռնոբային հին ջրադացում, երբ փորձել էր ազատել ազգիկներին, որոնք առկանգել էր հարչուրուպետը՝ թուրքական ու թաթարական հարեմներին ծախելու համար: Եվ ինչքան շատ էր պատմում, այնքան Չեռնոբայը ցած էր կախում գլուխը: Չնայած կատաղի սառնամանիքին, գոլորշու սյուն էր բարձրացել նրա գլխավերևում, իսկ ճակատը ծածկվել էր սառը քրտինքով: Երբ Զվենիգորան պատմեց և այն մասին, որ Չեռնոբայը իր կամակատարների հետ միասին թաթարներին առաջնորդել է Սեչ և ուղում էր դարպասը բացել նրանց առաջ, հարչուրուպետը փլվեց ծնկների վրա: Հրապարակում աղմուկ-աղաղակ բարձրացավ:

— Էլ ինչ հարկ կա երկար-բարակ խոսելու: Սպանել էդ շանը: Մահակներով էնքան ծեծել, մինչև սատկի, — գոռացին զապորոժցիները: — Կապել ձիու պոչից ու բաց թողնել տափաստան:

— Կախել շորացած ուտենուց:

— Տցի հանել, ցցի: Չէ՞ որ ինքը ուղում էր Արսենին ցցի նստեցնել:

— Քառատե՛լ:

Եվ ոչ մի խոսք, ոչ մի ծպտուն հօգուտ նրա պաշտպանութեան: Ամբոխը եռում, բլթբլթում էր զայրույթից: Ավելի տաք գլուխները դուրս բաշեցին սրերը՝ ուղեցին տեղնուտեղը դատաստան տեսնել դավաճանի հետ:

Այնժամ Սերկոն բարձրացրեց մականը: Աղմուկը դադարեց: Լուռութիւն տիրեց:

Կոշեռչն առաջ եկավ, հանեց գլխարկը: Նրա ձայնը դաժան հնչեց: Ամեն մի խոսքը ասես պղնձից էր ձուլված.

— Եզրայրնե՛ր, ատամաննե՛ր, քաջե՛ր, փառապանձ րն-
կերություն, նշանավոր օր է այսօր մեզ համար: Շնորհիվ կա-
զակ Շեշիկի և ձեր բաջության՝ մենք փառահեղ հազթանակ
տարանք ու փրկեցինք մեր մայր Սեչը: Ե՛վ թուրքերին, և՛ թա-
խարներին ցույց տվինք, որ մենք անպարտելի ենք, որ հայրե-
նիքի հավատարիմ զավակները՝ զապորոժյան կազակները,
այս անգամ էլ, ինչպես միշտ եղել է անցյալում, շինայելով
իրենց կյանքը, պաշտպանեցին հողը հայրենի և պատիվը իրենց,
իսկ զավթիչներին պատմեցին ու հավիտենական անարգանքի
ենթարկեցին: Եվ ձեզանից ոչ մեկը չփախավ մահվան վտան-
գից, չթաքնվեց վառարանի ետևում, այլ քաջարար կռիւց թըշ-
նամու դեմ: Փառք ու պատիվ ձեզ հավիտյանս հավիտենից,
ասպետնե՛ր անհաղթ:

— Փա՛ռք ու պատիվ մեր բատկո կոչւոյին:

— Փա՛ռք Սերկոյին: Մենք ուզում ենք, որ այսուհետև էլ
դու լինես կոչւոյ: Սերկո՛, Սերկո՛, Փա՛ռք ու կրահնական Հա-
նիրային:

Կրկին կոչւոյը բարձրացրեց մականը, որպէսզի հրապա-
րակում լուծւուն հաստատի:

— Շնորհակալ եմ պատվի համար, Եզրայրներ: Բայց կո-
չւոյ ընտրելու համար ավագների խորհուրդը նշանակված է
վաղը չէ մյուս օրը: Այ, էն ժամանակ էլ դուք կրնտրեք նրան,
ու՛մ արժանի կհամարեք: Իսկ հիմա խոսքը դրա մասին չէ: Մեզ
համար այսպիսի Երջանիկ օրը դժվար է գիտակցել, որ դեռ
հանդիպում են Չևոնոբայի նման վիժվածքներ: Չէինք կամե-
նա մեր պայծառ օրը մթազնել սրա դատաստանն անելով:
Սակայն ստիպված ենք: Որպեսզի մեր հոտի մեջ ոչ մի քոստ
ոչխար չլինի... Տեսնում եմ, բոլորս էլ մի կարծիքի, մի մտքի
ենք՝ մահ ստոր շանը, հավիտենական անարգանք դալածանին:
Զապորոժցիները նորից միաձայն գոչեցին.

— Մա՛հ:

— Ամո՛թ... Վերջացնել դրան...

Շատերը նորից ձևորերը տարան թրերին, որոնք պսպղացին
պայծառ, սառը սրևի տակ:

Սերկոն ձայնը բարձրացրեց.

— Ո՛չ, Եզրայրներ, այդպես վայել չէ: Երևի Շեշիկը ճիշա-
րան է մտածել, ա՛յ նա ինչ-որ բան է փսփսում: Մեր պատ-

վով ու կյանքով այսօր նրան ենք պարտական, ուրեմն թող լինի այնպես, ինչպես նա կասի... Առաջ արի, Շեչիկ, ասա ընկերությունն ինչ-որ մտածում ես, հերոս:

Շեչիկ պապը կանգնեց կոշկոշի կողքին: Փոքրիկ, կարկատած սվիտաշով, ոչխարենու մեծ փափախը գլխին: Գլուխը նման էր շորացրած տանձի՝ դարչնագույն ու կնճռտոված: Ուրիշ ժամանակ նա կարող էր ծիծաղելի թվալ, բայց հիմա կազակներից ոչ մեկի մտքով այդպիսի բան չէր կարող անցնել: Շեչիկը հազադ փոքրիկ ափի մեջ, գլուխը բարձրացրեց ու ասաց.

— Եղբայրներ, Սեչի փառաբանված կազակներ, ահա թե իմ անխելք գլուխը ինչ է մտածել: Լավ լսեք... Դեռ երբեք չի եղել, որ մենք դավաճանին ներենք, իսկ Չեռնոբայի նմանը մեր հողում դեռ չի եղել: Նա անօրեններին է ծախել մեր ժողովրդի ծաղիկը՝ մեր աղջիկներին: Նա ուղեցել է սարսափելի մահով սպանել դապորոժյան հայտնի ասպետ Արսեն Զվենիգորային: Իսկ հիմա է՛լ ավելի շար մտադրություն ունեք՝ թուրքերի ու թաթարների հետ միասին ոչնչացնել մեր մայր Զապորոժյան Սեչը և բոլորիս կոտորել... Ուրեմն իր ընկերների հետ միասին թող գնա դժոխք, նրանց հետ, որ հիմա, մեր սրերից զարկված, պառկած են ձյան վրա... Մենք նրանց պցելու ենք Դնեպրը, սառույցների տակ... Թող ինքն էլ նրանց հետ լող տա, հասնի մինչև ծով, իսկ էնտեղ, թե շար ոգին կընդունի նրան, թեկուզ սուլթանին հյուր թող գնա: Նրան կապենք որևէ ենիչերուց ու պցենք սառցանցքը...

— Այ բեղ Շեչիկ: Ծիշտ է մտածել:

— Այ բեղ պապիկ, Համա թե գլուխ ունի, հա՛:

Շեչիկը իր երկար, բայց ձախորդություններով լի ողջ կյանքի ընթացքում սովոր չէր այդպիսի համընդհանուր ուշադրության, այդպիսի գովասանքների, և նա շփոթվեց ու թաքնվեց ամբոխի մեջ:

Չեռնոբայը շեկ հոներերի տակից շարունակաժ փայլեցրեց աչքերը: Նրա ձեռքերը դողացին, շրթունքները կրճեց սրյունոտելու չափ: Նա փորձեց ինչ-որ բան ասել, բայց չկարողացավ բացել ջղաձգորեն սեղմված ատամները, և դրանց արանքից խուլ մոնշոց դուրս թռավ: Նա դանդաղ հոտեա գնաց, մինչև մեջքով հենվեց պատին: Կազակների ուժեղ, ամուր ձեռքերը բռնեցին նրան ու քարշ տվին դեպի հրապարակ:

Զվենիգորան մատնացույց արեց Համիդի սառած դիակը: — Հենց սրանից էլ կապեք: Դրանք մեկը մյուսին արժեն: Զեռնորայր շուք արշուճով լցված աչքերը, ինչքան ուժ ունեւր ոտքերը դեմ տվեց սառած, կոշտ ձյանը: Մետեղիցան ուժդին հարվածով նրան գետին գցեց, ծնկով սեղմեց սպախիաչի փայտացած մարմնին: Կազակները ամուր պարանով կենդանի մարդուն արագորեն կապեցին մեռածի հետ: Սրարշավ եկավ մի ջահել կազակ՝ քարշափուկը ձիուց կապած: Սեկաչը բռնեց փոկակալը, պարանի օղակը գցեց կեռին, գոչեց. — Վիյո՛ւ:

Զին ձգեց, ճարճատյունով պոկեց Համիդի սառած, գետնին կպած դին, նրան կապված դավաճանի հետ միասին, քարշ տվեց դեպի դարպասը: Զեռնորայր մի կերպ պարանի սակից ազատեց ձեռքն ու փորձեց բռնել կոշկոռած ձյուններից: Մաշկը պլոկվեց, արշունլիկ եղավ: Ու գոռաց վայրենի ձայնով. — Խ-ա-ա՛...:

Մետեղիացան խաչ հանեց երեսին, թքեց.

— Շանը՛ շան մահ:

* * *

Անցավ երեք օր: Դուրս եկավ ձմռան սառը արևը: Սեչի խորհրդից հետո, որը կրկին կոշեոյ ընտրեց Իվան Սերկոյին, գապորոժցիները մինչև կեսգիշեր թունդ իմեցին, քեֆ արին, բարխուսացան և հիմա մետեղի պես քնել էին կուրեններով: Առափուտվա անդորրի մեջ աղմուկով ճոնչացին ամբողջ դարպասները և դանդաղ, ասես տհաճությամբ բացվեցին: Դարպասից դուրս եկան երեք ձիավոր՝ Զվենիգորան, Ռոմանը և Նենկոն: Այո, Նենկոն... Նա ընդմիշտ հրաժեշտ էր տվել Սաֆար բեյ անվանը և գնում էր նոր կյանք սկսելու: Նենկոն լավ չէր պատկերացնում, թե դա ինչպես կլինի, սակայն լավ գիտեր, որ վերադարձը հեին անհնար է, ինչպես անհնար է վերադառնալ անցած օրվան:

Զիավորները անցան Սեչի սլոբոդկան¹, որը ծածկվել էր վաղորդայնի թեթև մշուշով, անցան ընդարձակ հրապարակը, որտեղ բարձրանում էր հոյակապ դեսպանատունը, և Զերտովիկի թեք ափերով սլացան դեպի ճերմակ, անծայրածիր տափաստանը...

¹ Սլոբոդկա — մեծ գյուղ, ավան, արվարձան:

ՎԵՐՋԱՐԱՆ

Ահա և շրջեցինք զրբի վերջին էջը: Թվում էր, թե երջանիկ վախճանը պետք է վերացներ այն հսկայական լարվածության գագաթումը, որով կարգացվում է վեպը սկզբից մինչև վերջ: Վլադիմիր Մալիկի խիզախ ու աղնիվ հերոսները, անցնելով անհավատալի տառապանքների բուրայով, մարտական փառքով պսակված՝ կյանքի ամենաողորբոգական պահերին էլ հավատարիմ մնալով պարտքին, բարեկամությունը, տված խոսքին, ի վերջո վերադառնում են խաղաղ կյանքի:

Եվ, այնուամենայնիվ, ինձ համար, ինչպես, հավանաբար, ձեզ համար, սիրելի ընթերցողներ, մի տեսակ տխուր է բաժանվել սրտիս անսահմանորեն հարազատ դարձած մարդկանցից՝ Արսեն Զվենիգորայից Ռոման Վոյնովից, Մարտին Սպիխալսկուց, հայդուկների վոյեվոդա Մյադենից ու նրա դուստր Զլատկայից, Թուրք Յաղուբից և նույնիսկ Նենկո-Սաֆար բեյից, որը միայն վեպի վերջում է գտնում վերադարձի ճանապարհը դեպի հարազատ ընտանիք, դեպի Թուլյարիա:

Սրանում է Վլադիմիր Մալիկի (Սիշենկո) գեղարվեստական տաղանդի ուժը: Ուկրաինացի արձակագիրը և բանաստեղծ Վլ. Մալիկը (ծնվ. 1921 թ.) առաջին անգամ մամուլում հանդես է եկել 1957 թվականին: «Ուռուս Շեյթանի դեսպանը» վեպը Ուկրաինայում լույս է տեսել երկու գրքով. առաջինը՝ «Ուռուս Շեյթանի դեսպանը» խորագրով, 1968 թ., երկրորդը՝ «Սուլթանի ֆերմանը», 1969 թ., երկու գիրքն էլ վառ արձագանք գտան ընթերցողների շրջանում, այդ գրքերը շատ ջերմ բնդունեց նաև քննադատությունը, ոչ առանց հիմքի դրանք

համեմատելով Ալեքսանդր Գյումայի պատմական վեպերի հետ, Ի դեպ, ինձ թվում է, որ ուկրաինացի գրողի տաղանդը առանձնահատկությունը, որպես պատմական վեպերի հեղինակ, մոտ է Հենրիկ Սենկևիչի գրողական վարպետությանը: Սակայն, հասկանալի է, բանը համեմատության մեջ չէ:

Վլադիմիր Մալիկի վեպը իսկապես գրված է փայլուն պատմա-արկածային ոճով: Իրադարձությունները հաջորդում են մեկը մյուսին անհավատալի արագությամբ: Ողբերգական տեսարաններին, որպես կանոն, հաջորդում են կարճատև լիցքաթափումները, որոնք էլ իսկույն փոխարինվում են պայքարի ու տառապանքի նոր պատկերներով: Շնորհիվ այն բանի, որ պատումը գրեթե չի ընդմիջվում հեղինակային շեղումներով, ընթերցողն ամբողջ ժամանակ գտնվում է լարվածության մեջ: Հեղինակը ձգտում է այն բանին, որպեսզի XVII դարի պատմական իրականությունն ընթերցողն ընկալի ոչ թե իր՝ հեղինակային դատողությունների, ոչ թե պետական գործիչների ու զորավարների ծրագրային հայտարարությունների միջոցով, այլ անմիջականորեն հերոսների՝ հասարակ մարդկանց, պատմական իրադարձությունների շարքային մասնակիցների արարքների ու խոհերի միջոցով: Պատմական անցյալը, որ ներկայացված է այդ հասարակ ու աղնիվ մարդկանց աչքերով ու վերապրված ընթերցողների կողմից, ընկալվում է որպես իսկական մարդկային ճշմարտություն և ոչ թե հիմնված է գիտական սխեմայի փաստերի վրա:

Դա չի նշանակում, թե վեպի գեղարվեստական ճշմարտությունը հակասում է պատմական ճշմարտությանը: Վլադիմիր Մալիկը լավ գիտե ժամանակաշրջանը՝ ըստ աղբյուրների: Նույնիսկ Արսեն Զվենիգորայի կերպարը իրական է: Այդ հետախույզ կազակը (դժբախտաբար պատմությունը նրա անունը չի պահպանել) իսկապես եղել է, ինչպես եղել է նաև Չիգիրինի պաշարումը թուրքերի կողմից և Բուժինյան դաշտի ճակատամարտը 1678 թ., որն ավարտվել է ռուս-ուկրաինական զորքերի հաղթանակով:

Տվյալ դեպքում խոսքը վերաբերվում է ոչ միայն գեղարվեստական ու պատմական ճշմարտությունների ձևական համապատասխանությանը: Գրողն ազատ է պատմական աղբյուրներից վերցրած տեսարանը լրացնել երևակայությամբ, ներ-

մուծել մտադաժին, բայց ժամանակաշրջանի համար տիպական դործող անձեր, նկարագրել տիպական, թեպետև սկզբնադրյուններում շարձանագրված իրավիճակներ: Մալիկի վեպի գլխավոր արժանիքը, որպես պատմական ստեղծագործություն, այն է, որ գրողը ճիշտ է հասկացել դարաշրջանի ոգին, իր նկարագրած պատմական մեծ իրադարձությունների իմաստն: Ու նշանակությունը: Հեղինակը բնավ էլ չի շափազանցում թուրք-թաթարական ասպատակությունների կոշտանարար հետևանքները Ուկրաինայի, Ռուսաստանի և Հեհաստանի պատմական զարգացման գործում: Գրեթե ամեն տարի տասնյակ հազար առողջ և ուժեղ մարդիկ էին կորցնում այդ երկրները, որպես հետևանք դրիմցիների ավազակային ներխուժման: Ոչ մի շափազանցում, գույների միտումնավոր խտացում չկա նաև թուրքիայում տառապող գերիների ճակատագրի նկարագրության մեջ: Թուրքերի կողմից Բալկանները նվաճելու, Դանուբյան իշխանությունները՝ Մոլդավիան ու Վալախիան ստրկացնելու ողբերգական հետևանքները բավականաչափ մանրամասն ուսումնասիրված են պատմական գրականության մեջ: Թուրքական նվաճումները արգելակում էին ոչ միայն նրանց բնականոն պատմական առաջընթացը, այլև ձևափոխում էին նրանց տնտեսական ու քաղաքական կառուցվածքը, այն ենթարկելով Օտտոմանյան կայսրության կարիքներին, այդ երկրները վերածելով մայրաքաղաքին ու բանակին պարենամթերք և այլ ապրանքներ մատակարարողներ, հպատակեցրած բնակչությունից դաժան մարդկային հարկ՝ անշափահաս տղաների հավաքելով Լեհիշերիական կորպուսը համայրելու համար: Դրանից ամենից շուտ տուժում էր հեղինակի կողմից ջերմորեն սիրված Բուլղարիան, որ Հարավարևելյան Եվրոպայում դարձել էր թուրքական տիրապետության զլխավոր հենարանը:

Հանուն ճշմարտության չի կարելի շնչել, որ, նկարագրելով սարսափելի, բայց տիպական, պատմականորեն միանգամայն հիմնավորված թուրք-թաթարական բռնության պատկերները, հեղինակը դրա հետ միասին չի սքողում ռուսական իշխանների ու բոյարների ճորտատիրական հայացքները, չի խնայում դաժան, աշխատավոր մարդուն արհամարհող լե՛ մաղնատներին, չի թաքցնում, որ թուրք-թաթարական դավթիչների դեմ պայքարողների մեջ էլ կան զզվելի մատնիչներ,

մանր ու ստոր հոգիներու Մալիկի պատմական օրչեկտիվությունը թերևս էլ ավելի մեծ չափով դրսևորվում է վեպի հերոսների ընտրութեան մեջ: Հեղինակի ջերմ սերը Ուկրաինայի ու Ռուսիայի հանդեպ, իր ազատութեան համար բուլղար ժողովրդի մղած հերոսական պայքարի նկատմամբ ունեցած համակրանքը չեն խանգարել նրան՝ ուկրաինացիների, ռուսների ու բուլղարացիների հետ միասին վեպի հերոսները դարձնել յե՛հ Ապիխալսկուն և թուրք Յադուրին: Կարելի էր ասել նույնիսկ ավելին. Վ. Մալիկի վեպի իսկական հերոսներ են բոլոր ընչազուրկներն ու ճնշվածները, անկախ նրանց ազգային պատկանելութունից: Եվ դա, հավանաբար, ճշմարիտ կլիներ: Թերևս մի վերապահութեամբ միայն, ընչազուրկներ ու ճնշվածներ են, բայց հպարտ են ու առնական, այլ ոչ թէ նապաստակի սրբտով, անկեղծ են ու բարի, այլ ոչ թէ վախկոտ ու վատհոգի: Հենց այն պատճառով, որ հեղինակը անսահմանորեն հավատում է միասնութեանն ու եղբայրութեանը բոլոր նրանց, ովքեր պայքարում են ազգային ազատագրութեան համար, ընդդեմ սոցիալական անարդարութեան, վեպի շատ էջեր շնչում են իսկական ինտերնացիոնալիստական պաթոսով: Գրքում դա խոսքի պաթոս չէ, այլ պայքարի, տառապանքների: Վերևում արդեն նշվել է, որ գրողի ստեղծագործական մեթոդի առանձնահատկությունը հրաժարումն է հեղինակային շեղումներից, բարձրագույն պետական ու ռազմական գործիչների երկարաբան, ծրագրային ճառերից:

Ինչպես արդեն ասվել է, այդ մեթոդը առանձնահատուկ համոզականություն է տվել վեպին:

Հնարավոր է, սակայն, Վ. Մալիկը այնուամենայնիվ զլացել է պատմական միջավայրը նկարագրելու Վեպում չկան, կամ գրեթե չկան, թվական տվյալներու: Ընդգծելով Բարձր Դոսն վիթխարի հզորությունը, հեղինակը միայն հպանցիկ հիշատակում է Լեհ-Լիտվական պետությունը՝ Ռեչ-Պոսպոլիտան և Ավոստրիան՝ շարքերգների միապետությունը: Այդ երկրների կապը Ուկրաինայի համար մղված պայքարի հետ ընթերցողի համար լիովին հասկանալի չի դառնում: Հենց այդ պատճառով էլ, այնուամենայնիվ, վերջաբանի մեջ անհրաժեշտ է համառոտ պատմական տեղեկություն տալ, որք վեպում նկարագրվող

իրադարձութիւնները կրացահայտի բնոյճանուր արեկա- կենտ-
րոնական Եփրոպայի շրջանակների մէջ:

Վեպի սրբնթաց գործողութիւններն բնոյգրկող ժամանա-
կաշրջանը բնութագրվում է երկու իրադարձութիւններով՝
Կամենեց-Պոգոլսկի անկումով (1672) և 1677—1678 թվական-
ների Զիգիրինյան արշավանքներով: Այսպէս ուրեմն, խոսքը
վերաբերում է երեք հարչուր տարվա վեպեմութիւն ունեցող
դեպքերին:

Կամենեցի անկումը թուրքական հորդաների համար նանա-
սարհ բացեց դեպի Աջափնյա Ուկրաինա: Պատահական չէ, որ
Կամենեցը հաճախ է հիշատակվում Մալիկի վեպում:

Քայց Կամենեցը այն ժամանակ պատկանում էր Ռեչ Պու-
սլոյիտային: Նրա անկումը, հետեաբար, կապված էր լե-
թուրքական պայքարի հետ, որի մասին այստեղ հարկաւոր է
մի քանի խոսք ասել:

1667 թվականին, Անդրուսովյան գինադադաք բնոյճանուր
Ռուսաստանի և Ռեչ Պոսպոլիտայի պայքարը Ուկրաինայի
համար: Թեև դա որոշ չափով պայմանավորված էր լեւոր-լեւ-
թարական ագրեսիայի ուժեղացումով, այնուամենայնիւ Ռու-
սաստանի և Ռեչ Պոսպոլիտայի միջև համաձայնեցված գոր-
ծողութիւնների շահագեցրեց: Լեհական մայնասները, ինչ
ունենալով վերադարձնել Ուկրաինայի իրենց կալվածքները,
մերժեցին ռուսական արքունիքի առաջարկը՝ գինադադարը
վերածելու ամուր ու հավերժական հաշտութիւն: Հե-
տեանքը եղավ այն, որ երբ 1672 թվականին սկսվեց լեհ-թուր-
քական պատերազմը (Ղրիմի թաթարները 1666 թվականից
մշտապէս թալանում, ասպատակում էին Ռեչ Պոսպոլի-
տան), ներքին խռովութիւններից թուլացած երկիրը մնաց
մեն-մենակ: Նույն թվականին հարչուր հազարանոց թուրք-լե-
թարական բանակը պաշարեց ու դրովեց Կամենեցը և շարժ-
վեց դեպի Լվով: Լվովի պաշարումը Ռեչ Պոսպոլիտայի կառա-
վարութիւնն ստիպեց կնքելու Բուչաչի խայտառակ հաշտու-
թիւն պայմանագիրը, որի համաձայն Քարձր Դոան իշխանու-
թիւն տակ անցան Պոգոլսկի և Աջափնյա Ուկրաինայի մեծ
մասը, իսկ Ռեչ Պոսպոլիտան պարտավորվում էր ամենամշա-
տուրք վճարել թուրքերին:

Ճիշտ է, Ռեչ Պոսպոլիտայի սեյմը հրաժարվեց վաճառեցնել

Բուչաչի պայմանագիրը, և 1673 թ. լեհ-թուրքական պատերազմը վերսկսվեց: Մեծ թագակիր հետման, ապա թագավոր Յան Սորեսկիի առանձին հաջողությունները ամբողջությամբ վերցրած քիչ բանով փոխեցին իրերի վիճակը: Առանց Ռուսաստանի, — իսկ նրա հետ Սորեսկին չէր ուզում համաձայնություն գալ, — թուրք-թաթարական ուժերի վերջնական ջախջախումը անհնար էր: Եվ 1676 թ. Ռեչ Պոսպոլիտայի ու Թուրքիայի միջև կնքվեց նոր՝ ժուրվանինի հաշտության պայմանագիրը: Պողոթան ու Կամենեցը մնացին թուրքերի ձեռքում:

Հենց դրանից էլ շտապեց օգտվել Բարձր Դուռը, որպեսզի ուկրաինական ավազանու մատնիչների օգնությամբ դավթի լեհափնյա Ուկրաինան, այն վերածի վասալ իշխանության, իր կողմից դաժանորեն շահագործվող Գանուբյան իշխանության նման: Պայքարը Զիդիրինի համար 1677—1678 թվականներին և ձակառամարար Բուժինի դաշտում, որը ձախույցեց Կիևի վրա հարձակվելու թուրքերի փորձերը, բնդմիշտ ջնջեցին ուկրաինական ժողովրդի համար սարսափելի և՛ Ռուսաստանի, և՛ Ահապտանի համար վտանգավոր թուրք ֆեոդալների այդ պլանները: Ինչ վերաբերում է Կամենեցին, թուրքերը նրանից հրաժարվեցին միայն 1698 թվականին, երկարատև Արևելյան պատերազմից հետո, որին 1683 թվականից մասնակցում էին Ավստրիան ու Ռեչ Պոսպոլիտան, իսկ 1686 թվականից՝ Ռուսաստանը: Այդ նույն թվականին Ռեչ Պոսպոլիտան հարկադրված եղավ «հավերժական» հաշտության պայմանագիր կնքել Ռուսաստանի հետ: Վիեննայի մոտ 1673 թվականին Յան Սորեսկիի տարած փաշտուն հաղթանակը, ինչպես նաև Արևելյան պատերազմի ողջ ընթացքը թուլացրին, բայց չջախջախեցին Թուրքիային: Նա մնաց որպես հզոր ռազմական տերություն: Գրեթե ամբողջ XVIII և նույնիսկ XIX դարում Թուրքիան բնավ էլ թույլ հակառակորդ չէր:

Մեր պատմագրության մեջ 1677—1678 թվականների Զիդիրինյան պատերազմի բախտը չի բերել: Նրանով գրեթե չեն դրադվել հայրենական պատմաբանները, թեև նրա վիթխարի, բեկումնային նշանակությունը Ուկրաինայի պատմության համար կասկած չի հարուցում: Այս տեսակետից առավել մեծ է Մալիկի ծառայությունը, որը կարողացել է այնքան վառ ու պատկերավոր պատմել նրա մասին:

Բայց մի երկիր էլ կա, որը մեծ տեղ է զբաղեցնում վեպում․
Գա Բուլղարիան է։ Հեղինակը սիրում է այդ երկիրը, նրա մարդ-
կանց, նրա բնությունը։ Նա խանդավառվում է բուլղար ժողո-
վրդի ազգային ազատագրության համար մղած հերոսական
պայքարով։ Սակայն ոչ XVII, ոչ էլ XVIII դարում բուլղարա-
ցիներին չհաջողվեց անկախություն ձեռք բերել։ Օտտոմանյան
կայսրությունը, ինչպես բիշ առաջ ասացինք, դեռևս չափա-
զանց ուժեղ տերություն էր։ Չիզիբիսյան արշավանքից երկու
հարյուր տարի անց 1877—1878 թվականների ուս-թուրքա-
կան ծանր ու արյունահեղ պատերազմից հետո միայն բուլղար
ժողովուրդը դուրս եկավ ինքնուրույն պետական ու ազգային
զարգացման ուղի։ Մալիկի վեպի հերոսի՝ վոյեվոդա Մլադենի
երազանքը իրականացավ։

Պատմական գիտությունների դոկտոր Վ. Գ. ԿՈՐՈՒՅՈՒՆԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԳՆԻՆՆ

Առաջին մաս

Արցունքի ճամփաներով	6
Կղրլ-Իրմակի աիերին	54
Սելավ	107
Պարտություն	127
Ֆելյուզան ծովում	162

Երկրորդ մաս

Ընդամենը խրճիթը	179
Ընդամենը	198
Սաֆար բեյ	212
Նենկո	242
Նորից զերության մեջ	269

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՄՈՒԹԱՆԻ ՖԵՐՄԱՆԸ

Առաջին մաս

Կատարգա	284
Մայր և որդի	214
Ֆերմանը	337

Երկրորդ մաս

Քույրը	389
Սնանկեղզի բարություն	411
Չապորոժինների պատասխանը	417
Զիզիրին	481
Կասրենք, Լղրայր	543
Կատարած Սեչում	554
Վ ե ռ ջ ա բ ա ճ	584

Վլադիմիր Մալիկ

ՌԻՌՈՒՄ ՇԵՅՔԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ

Վեպ

Դպրոցական միջին և բարձր տարիքի նամակ

Владимир Малик

ПОСОЛ УРУС-ШАИТАНА

Роман

Для среднего и старшего школьного возраста

(На армянском языке)

Издательство «Аревик»

Ереван, 1987

Խմբագիր՝ Էդ. Ս. Ավագյան

Նկարիչ՝ Ա. Կ. Կարազյան

Գեղ. խմբագիր՝ Ս. Գ. Սաֆյան

Տեխ. խմբագիր՝ Ս. Գ. Շահվերդյան

Վերստուգող սրբագրիչներ՝ Ե. Ա. Ազատյան, Ե. Ե. Մինասյան

ИБ 5524

Հանձնված է շտրվածքի 20. 11. 86: Ստորագրված է տպագրության 23. 01. 87: Ֆորմատ 84×108¹/₃₂: Թուղթ՝ № 2: Տառատեսակ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր 31,08 պայմ. տպ. մամ., 27,8 հրատ. մամ.: Տպարանակ՝ 50000: (Երկրորդ թողարկում 25001—50000): Պատվեր 2035: Գինը՝ 1 ս. 10 կ.:

«Արևիկ» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Аревик», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի տոևարի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Ալավերդյան 65:

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-10, ул. Алавердяна, 65.